

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:




ԳՐՔԻՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

ԵՐԲ • ԶԵՆՈՆ ԿՈՄԻՏԵՆԿՍԿԻ •


ԱՐԵՎԸ ԱՍՏՎԱԾ ԷՐ





ԵՐԲ • ԶԵՆՈՆ ԿՈՍՄՈԴՈՎՍԿԻ •

ԱՐԵՎԻԷ
ՄԱՏԿԱՍԵՐ



ԵՐԵՎԱՆ, «ԱՐԵՎԻԿ»

1987


Կոսիդովսկի Ջ.


Կ—751 Երբ արևը աստված էր: Գիտագեղարվեստ. ակնարկներ:
[Դպր. միջին և բարձր տարիքի համար /Զենոն Կոսիդովսկի:
Ռուս. թարգմ. Ս. Հայրապետյանը և Մ. Բլբուլյանը: Նկ.՝ Ֆ.
Աֆրիկյան].— Եր.: Արևիկ, 1987.— 344 էջ: Նկարներով:


Հայ ընթերցողին հայտնի «Բիրլիական ավանդապատումների»
հեղինակ լեհ գրող Զենոն Կոսիդովսկին այս գրքում պատմում է հին
քաղաքակրթությունների և հնագիտական հայտնագործությունների
մասին, ցույց տալիս, թե ինչպես են քաղաքակրթությունները դա-
րերի լռին խորքերից ձեռք մեկնում միմյանց:

Կ 4804010000 (95) 87
707(01) 87

ԳՄԴ 84.41—4







Միջագետքի Կաճարների ու այգիների մեջ

Նեապոլի տխտավորը

XVII դարի առաջին տարիներին Իտալիայում հռչակվեց նեապոլիցի վաճառական Պիետրո դելլա Վալլեն: Նա շատ էր ճանապարհորդում հեռավոր, տարաշխարհիկ երկրներում, և հայրենակիցները նրան ուխտավոր էին անվանում:

Պիետրոն, սակայն, ճանապարհորդում էր ո՛չ թե թանկարժեք համեմունքներ ու մետաքսե գործվածքներ որոնելու համար, ինչպես կարելի էր ենթադրել: Նրան թափառումների էր մղել մի ազելի ռոմանտիկ պատճառ՝ երիտասարդ ժամանակ ապրած դժբախտ սերը: Հետո թափառաշրջիկությունը դուր եկավ նրան, և նա, շարունակ ծարավի նոր տպավորությունների, մեկնեց հեռավոր երկրներ, ուր հաղվազեպ էր ոտք դնում եվրոպացին:

Ճակատագրի տարօրինակ քմահաճույքով այդ ռոմանտիկ վաճառականի արկածները հետք թողեցին հնագիտության պատմության մեջ, ռուսախ և հարկ է մի քանի րուպե ուղադրություն նվիրել նրան:

Մրևախաչության ուժով գիտաազդվեմք նեապոլի Եան Մարչեղինո կեղեցու՞մ արտասարապ է, որը պատվիրել է Պիետրոն: Եկեղեցին լեփ-լծցուն

է. բամբասողները քաղաքով մեկ խոսում են Պիետրոյի վշտի և նրա վճռի մասին: Տասներկու տարի նա նշանված էր վաճառականական ընտանիքից մի սիրունատես աղջկա հետ, և հանկարծ, ինչպես կայծակի հարված՝ ծնողներն իրենց դստերն ամուսնացրին ուրիշի հետ:

Պատանին, որի լավագույն զգացմունքները խոցված էին, որոշեց մոռացություն փնտրել թափառումներում: Սակայն նա գաղտնաբար չի հեռանում քաղաքից: Մեծաշուք տեսարանների նկատմամբ ունեցած սիրով, որ բնորոշ է հարավցիներին, նա շատ թատերայնորեն հրաժեշտ է տալիս հայրենակիցներին: Պատարագի ավարտից հետո քահանան նրա վզից կախում է ուխտավորի ցուպ պատկերող մի ոսկե համայիլ: Քաղաքացիները բարձրանում են ոտքի մատների վրա, որ այդ տեսարանից ոչ մի բան բաց չթողնեն, իսկ Պիետրոն հանդիսավոր երգվում է Նեապոլ շվերադառնալ այնքան ժամանակ, մինչև շայցելի տիրոջ գերեզմանը:

Ճանապարհորդությունը դեպի Երուսաղեմ դարձավ նրա՝ ճանապարհորդի, վառ ու արկածալի կյանքի սկիզբը: Նա շահամանափակվեց միայն ուխտագնացությամբ դեպի Սուրբ երկիր, այլ այցելեց Վենետիկ, Կոստանդնուպոլիս և Կահիրե, նավեց դեպի այն ժամանակ դժվարամատչելի Լեանտի կղզիները, ծայրեծայր անցավ Միջագետքն ու Սիրիան, նույնիսկ հասավ Իրան:

XVII դարում այդպիսի ճանապարհորդությունը կատակ բան չէր: Հարկավոր էր ամիսներ շարունակ ուղտի կոշտ սասլատի վրա օրորվելով, կտրել անցնել տափաստաններ ու անապատներ, լեռներ ու ճահիճներ: Առագաստանավերը հարմար չէին, հաճախ խորտակվում էին փոթորիկների ժամանակ, մշտապես գտնվում էին ծովահենների հարձակումների վտանգի տակ: Ճանապարհորդը պետք է դիմանար ցրտին ու տապին, քաղցին ու ծարավին, մակաբույծ միջատներին, կեղտին ու ամեն տեսակ հիվանդություններին: Ճանապարհներին տեր ու տնօրինություն էին անում ելուզակները, իսկ մահմեդական բնակչությունը եվրոպացիներին վերաբերվում էր անսքող թշնամանքով:

Իր ճանապարհորդությունների ընթացքում Պիետրո դելլա Վալլեն կապը չէր խզում հայրենակիցների հետ: Նա կանոնավորապես նամակներ էր ուղարկում, որոնք հաճախ կրում էին «Անապատում խփված իմ վրանից» վերնագիրը: Նամակներում նա անսպասելիորեն գրողի տաղանդ դրսևորեց: Փայլուն ոճը, նուրբ հումորը, դիտումների դիպուկությունն ու նկարագրությունների գունագեղությունը, և ամենից առաջ՝ զվարճալի իրավիճակներով ու խիստ հետաքրքրական դիպվածներով լի արկածների առատությունը կարճ ժամանակում նրան արժանացրին հայրենակիցների համընդհանուր ճանաչմանը:

Պիետրո դելլա Վալլեն, ինչպես որ վայել էր եռանդուն խառնվածքի տեր իտալացուն, շուտ ապաքինվեց սիրային անհաջողությունից: Այդ են վկայում նրա բազում արկածները, որ նկարագրում է ճաշակով ու հու-

մորով: Գանվելով Քիոս կղզում, նա նետվեց տեղի թեթևաուլիկ հասարակության գվարճությունների հորձանուտը: Գիշեր ու ցերեկ միմյանց հաջորդեցին պարերը, երգերն ու թովիչ խաղերը տեղացի գեղուհիների հետ, և Պիետրոն իրեն զգաց հարազատ տարերքում: Խորամանկ պարծենկոտությամբ նա նկարագրում է, թե ինչպես են հունական մի քաղաքում տեղի մենաստանի միանձնուհիները զգացված գրկել ու համբուրել իրեն այն բանի համար, որ ինքը ըմբերանել է մի թուրք մեծատոհմիկի, որը նրանից պահանջել էր հարգանք և ընծաներ:

Կոստանդնուպոլսում նա լսեց, որ սուլթանն ունի Լիվիոսի ստեղծագործությունների այն ժամանակ միակ լրիվ տեքստը, որը նրան էր անցել բյուզանդական կայսեր մահից հետո: Պիետրոն համակվեց այդ հազվագյուտ մատյանը ձեռք բերելու ցանկությամբ և դրա համար 6500 ֆունտ ստեռլինգ առաջարկեց: Թուրք տիրակալը, սակայն, մերժեց անպատկառ եվրոպացու առաջարկությունը: Այդ ժամանակ Պիետրոն փորձեց կաշառել սուլթանի գրադարանավարին, խոստանալով 12500 ֆունտ ստեռլինգ տալ, եթե նա գողանա հին ձեռագիրը: Սակայն գործարքն ավարտվեց անարդյունք, որովհետև ծախու պաշտոնյան գրադարանում չկարողացավ գտնել գրական թանկարժեք մասունքը:

Միջագետքում Պիետրոն սիրահարվեց երկրորդ անգամ: Նրա ընտրյալը մի տասնութամյա աղջիկ էր: Բայց դաժան ճակատագիրը այս անգամ էլ չգթաց Պիետրոյին: Ամուսնությունից շատ շանցած երիտասարդ կինը հիվանդացավ խորհրդավոր հիվանդությամբ ու մահացավ:

Պիետրոն երրորդ անգամ բախտը փորձեց՝ ամուսնացավ մի վրացուհու հետ, որը մահացածի ընկերուհին էր և հիվանդության ժամանակ խնամում էր նրան: Այս անգամ ամուսնությունը երջանիկ էր. ամուսնության արդյունքը ևղան տասնչորս որդիները:

Իր թափառումներում Պիետրոն հասավ նաև հարավային Պարսկաստան: Շիրազ քաղաքից վաթսուն կիլոմետր հարավ-արևելք նրա առջև հաննեց իր վեհությունը ապշեցնող ու սարսափազդու մի տեսարան: Դրանք վիթխարի փլատակներ էին, որոնց մասին նա մինչ այդ ոչինչ չէր լսել: Ժայռոտ բարձունքներով շրջապատված գոգահովտում երևացին երկարավուն սանդղավանդներ՝ դեպի վեր ձգվող աստիճաններով, խորտակված սյուներ, քանդված պատեր, իսկ ամենից առաջ՝ վիթխարի շքամուտքերը հսկող հսկայական առյուծներ:

Դիտելով փլատակները, Պիետրոն չէր կարողանում ուշքի գալ զարմանքից: Նրան թվում էր, թե ավազը, որ դարերի ընթացքում անապատի տաք քամիները քշել բերել էին այդտեղ, ութոտնուկի պես իր ազահ շափուկների մեջ է առել պատերը, շքամուտքերը և սյուները: Ամայի տեսարանի խոր լուռությունը սաստկացնում էր սարսափն ու խորհրդավորությունը:

Մի քանի հարյուր մետրի վրա տարածված վեհասքանչ փլատակները հազանորեն հեռավոր ժամանակներում հայակերտ պալատ են կոչել: Ո՞վ էր այդ մտեռամենտալ կերտվածքների ստեղծողը: Շրջակայքի բնակչութունը, բացի ոգիների մասին առասպելներից ու հերիաթներից, որոնք, իբր թե, բնակվում են այդ ավերակներում, ոչ մի բացատրություն չէր կարող առել նանասարհորդին: Տեղացիների ավանդությունները հասնում էին միայն մինչև VIII դարում Բաղդադի խալիֆա, «Հազար ու մեկ գիշեր»-ի հերոս Հարուն ալ Ռաշիդի ժամանակները: Այնինչ փլատակները շատ ավելի հին էին:

Թափառելով բնկարների կույտերի մեջ, Պիետրոն աղյուսների վրա տաքօբինակ, սոսիզմածային նշաններ նկատեց: Սկզբում կարծեց, թե մի ժամանակ թռչունները դեռևս խոնավ աղյուսների վրա դեսուդեն են ցատկոտել ու թռչել իրենց մազիկների հետքերը: Ավելի ուշադիր-նայելով նկատեց, որ նշանները կազմված են մի շարք ուղղահայաց ու հորիզոնական գծիկներից: Բոլոր գծիկներն ունեին սեպի ձև, անկասկած, այն բանի շնորհիվ, որ անհայտ նկարիչը, փայտիկը հպելով խոնավ կավին, ամեն անգամ սկզբում ավելի մեծ ջանք էր գործադրել:

Երբ Պիետրոն այդ նշանների դրոշմները բերեց Նվրոպա, կրթոտ վեճ բորբոքվեց դրանց իմաստի և նշանակության մասին: Ոմանք պնդեցին, թե նշաններն ինչ-որ հնագույն գիր են, մյուսներն ապացուցեցին, որ տարօրինակ գծիկներն ընդամենը պարզունակ նախշեր են, որոնցով զարդարվել են իրանական շինությունների պատերը: Պիետրոն արտահայտվեց առաջին ենթադրության օգտին: 1621 թվականին գրած նամակներից մեկում նա հայտնում է, որ հաշվել է հարյուր տարբեր նշաններ և որ դրանցից յուրաքանչյուրը, իր ենթադրությամբ, մի ամբողջ բառ է նշանակում: Զարմանքի արժանի խորաթափանցությամբ նա կարծիք հայտնեց, որ սեպագիրը պետք է կարդալ ձախից աջ, որովհետև հորիզոնական սեպիկների սուր ծայրը միշտ ուղղված է դեպի աջ:

Բոլորին սաստիկ հետաքրքրեցին նաև բուն փլատակները: Ճիշտ ենթադրություն արվեց, որ Պիետրո դելլա Վալլեն գտել է պարսկական աշխարհակալության մայրաքաղաք Պերսեպոլսի ավերակները, որ մ. թ. ա. VI դարում հիմնել էր Կյուրոսը՝ Բաբելոնը նվաճողը: Կյուրոսի հաջորդներից Դարեհը Պերսեպոլսում փառահեղ պալատ է կառուցել, որն ունեցել է հարյուրավոր դահլիճներ ու սենյակներ: Այդտեղ նա ապրել է շացուցիչ պերճանքի մեջ, միշտ հագած ոսկեկար ծիրանի հանդերձներ: Երան սպասարկել են արքունի տասնհինգ հազար ծառաներ, անձնական թիկնազորի հազար հեծյալներ և տասը հազար հետևակայիներ:

Պարսկական պետությունը դիմացել է լոկ էրկու հարյուր տարի: Երա գոյության հիմքերը շափազանց խարխուլ էին: Նա հենվել է բռնակալի ռազմական գերազանցության և սարկացված ժողովուրդների շահագործման վրա: Արքունիքի և բանակի հսկայական ծախսերը ծածկելու

համար թագավորական աստիճանավորները գնալով ասիելի ու ասիելի մեծ հարկեր ու տուրքեր են դրել աշխատավորների, հատկապես հագագործների վրա: Այդ պատճառով էլ Ալեքսանդր Մակեդոնացին, ջախջախելով Դարեհի բանակը, շատ հեշտ իրեն է ենթարկել պարտված Պարսկաստանի կազմի մեջ մտած ժողովուրդներին և ցեղերին:

Հաղթական Ալեքսանդրը գրավել է Պերսեպոլիսը, և այդ նույն ժամանակ էլ թագավորանիստ պալատն այրվել է: Կան այդ հրդեհի պատճառների տարբեր բացատրություններ: Հույն պատմիչ Դիոդորոսը հաստատում է, որ պալատը սեփական ձեռքով Ալեքսանդր Մեծն է հրկիզել «գինարբուքի ժամանակ, եբբ կորցրել է ինքնատիրապետումը»: Մեկ ուրիշ պատմիչ՝ Կլիտարքոսը, նկարագրելով նույն գինարբուքը, պատմում է, որ աթենացի վարձակ Տալիսը պարելիս բացավառ ջահը խրել է պալատի փայտի սյուների արանքը: Այդ տեսնելով, մակեդոնացի հարբած ռազմիկների բազմությունը սկսել է ճանկել ջահերն ու շարժել ուր պատահի: Պալատի գլխավոր մասը Բանկարժեք գործվածքներով, անդրիներով ու սկահակներով հանդերձ մի ակնթարթում սկսել է այրվել: Մտռաներին միայն մեծ դժվարությամբ է հաջողվել փրկել շինության մի քանի կողային թևերը:

Պալատի անվնաս մասերը գեո երկար դարեր մնացել են կանգուն: Որոշ ժամանակ այնտեղ են հաստատվել մահմեդական խալիֆաները, ապա սկսվել են մոնղոլների ու թուրքերի, ավերիչ ներխուժումները, և պալատից միայն փլատակներ են մնացել: Փլատակները շուտով ծածկվել են աղքատիկ բուսականությամբ, արաբ հովիվներն այնտեղ իրենց ոչխարներն են արածեցրել: Փլատակների ծագումը լիովին մոռացվել է: Եվ միայն XVII դարում Ռիտորո դելլա Վալլեն իր հայտնագործություններով Եվրոպային հիշեցրեց Պերսեպոլիսի վաղեմի վեհությունը:

Իտալացի ճանապարհորդը թեև չէր կարող ենթադրել, որ ուղղահայաց և հորիզոնական գծիկներում թաքնված է շումերների, բաբելոնացիների, ասորեստանցիների և Մերձավոր Արևելքի այլ ժողովուրդների քաղաքակրթությունների մասին գիտելիքների մի հսկայական գանձարան, բայց նրա անվիճելի վաստակն այն է, որ առաջինը Եվրոպա բերեց սեպագրի նմուշները և, բազմաթիվ գիտնականների կարծիքին հակառակ, ապշեցուցիչ խորաթափանցությամբ կռահեց, որ այդ գծիկները հնագույն գիր են և ոչ նախշեր: Ահա թե ինչու նրա անունն ընդմիշտ պահպանվեց հնագիտության պատմության մեջ:

Անպագիթն ակում է խոսել

XIX դարի առաջին տարիներին Գերմանիայի Գյոթինգեն համալսարանական քաղաքում, տեղական լիցեյում դասավանդում էր հունարենի և

լատիներենի ուսուցիչ Գեորգ Ֆրիդրիխ Գրոտեֆենդը: Նրան փոքր-ինչ տարօրինակ մարդ էին համարում, որովհետև սիրած զբաղմունքը ամեն տեսակ բառահանելուկներ ու ուրուաններ լուծելն էր և այդ գործում նա արտասովոր խելամուռություն ու հնարագիտություն էր դրսևորում: Բարեկամները և ծանոթները Գրոտեֆենդի համար որոնում գտնում էին ամենախրթին առաջադրանքներ, բայց ոչ մի անգամ չէին կարողանում նեղը լծել նրան:

1802 թվականին այդ հանելուկասերի ձեռքն ընկավ Պերսեպոլսի տեքստերից մեկը, որի վերծանման վրա ապարդյուն գլուխ էին կոտրել բազմաթիվ գիտնականներ: Առեղծվածային սեպածև նշաններն այնպես շարժեցին նրա հետաքրքրությունը, որ նա շկարողացավ գիշերները քնել: Մի անգամ գարեջրատանը, որտեղ սովորաբար երեկոներն անց էր կացնում ընկերների հետ գարեջուր խմելով, Գրոտեֆենդը ոչ առանց պարծենկոտության հայտարարեց, թե կկարողանա կարգալ սեպածև գիրը:

Բարեկամներն այդ հայտարարությունն ընդունեցին ուրախ թերահավատությամբ: Սեպածև գիրն այն ժամանակ ամենաուշագրավ պրոբլեմներից մեկն էր, և բոլորին հայտնի էր, թե ինչպես անհաղթահարելիորեն դժվար է այդ գրի վերծանումը: Նույնիսկ կային գիտնականներ, ովքեր պնդում էին, թե պրոբլեմն ընդհանրապես անլուծելի է: XVIII դարի երկրորդ կեսին Պերսեպոլսում եղավ դանիացի գիտնական Քարսթեն Նիրուրը: Նա արտանկարեց բազմաթիվ սեպածև նշաններ, բայց և ոչ մեկը չկարողացավ կարգալ: Չբերեց նաև գերմանացի Տիխսենի և դանիացի Մյունտերի բախտը, թեև նրանք բազմաթիվ դիպուկ դիտողություններ արեցին:

Ուստի զարմանալի չէ, որ դարեջրատանը ծիծաղ լսվեց, կծու խոսքեր տեղացին: Բոլորը գնահատում էին Գրոտեֆենդի ունակությունները, բայց ճանապարհը անմեղ ուբուսի լուծումից մինչև սեպածև գրի վերծանումը, որի վրա ապարդյուն ճիգ էին թափել ականավոր մասնագետները, շատ էր երկար: Թերահավատների ծաղրը վիրավորեց Գրոտեֆենդին: Նա առաջարկեց դրադ դալ, որին ընկերները սիրով համաձայնեցին:

Չեոնամուխ լինելով դժվարին խնդրին, Գրոտեֆենդը նկատեց, որ Պերսեպոլսից բերված արձանագրությունը բաժանվում է երեք հստակորեն սահմանազատված սյունակների: Չլինի՞ այն պատճառով, որ արձանագրությունն արված է երեք լեզվով: Կարգալով հնագույն գրողների երկերը, Գրոտեֆենդն ուսումնասիրել էր հին պարսկական պետության պատմությունը և գիտեր, որ մ. թ. ա. շուրջ 540 թվականին պարսից թագավոր Կյուրոսը նվաճել է Բաբելոնը: Արձանագրությունը բերվել էր Պերսեպոլսից, ուստի վստահ կարելի էր ենթադրել, որ սյունակներից մեկը հին պարսկերեն լեզվով տեքստ է բովանդակում: Բայց հատկապես ո՞րը: Գրոտեֆենդը դատեց հետևյալ կերպ. պարսկերենը եղել է հաղթանակած ժողովրդի լեզու, այդ պատճառով պետք է զբաղեցնի գլխավոր

տեղը: Այդ գլխավոր տեղը, անշուշտ, կենտրոնական սյունակն է: Իսկ կողմնայինները: Հարկ էր ենթադրել, որ դրանք բովանդակում են արձանագրության թարգմանությունը հպատակեցված երկու ամենամեծաթիվ ժողովուրդների լեզուներով:

Ընդունելով այդ զարմանալիորեն պարզ և դրա հետ միասին դիպուկ հիպոթեզը, Գրոտեֆենդն ուշադրությամբ զննեց միջին սյունակի սեպածև նշանները: Շուտով նա նկատեց մի շափազանց բնորոշ առանձնահատկություն, որից էլ անմիջապես կառչեց: Սեպածև նշանների մեջ երկու անգամ կրկնվում էր թեք գծիկով բաժանված, ուրեմն ինչ-որ բառ նշանակող գծիկների միևնույն խումբը կամ համակցությունը: Իրեն հատուկ խորաթափանցությամբ Գրոտեֆենդը ենթադրեց, որ տեքստը հայտնում է պարսից թագավորական տան ինչ-որ դինաստիական հաջորդականության մասին և որ երկու նման տեքստերը կարող են ենթադրաբար նշանակել թագավորական տիտղոս: Համաձայն այդպիսի ենթադրության, տեքստը կունենար հետևյալ տեսքը.

Արքայի անուն—արքա—Ա անհայտ բառ—արքայի անուն—արքա—
Ա անհայտ բառ—Բ անհայտ բառ:

Ա անհայտ բառի նշանակությունը կարծես ինքնին թելադրվում էր: Ա տառով նշված սեպածև նշանների այդ խումբն, անտարակույս, նշանակում էր «որդի» բառը: Այդ կերպ լրացված տեքստն այսպիսի տեսք ստացավ.

Արքայի անուն—արքա—որդի—արքայի անուն—արքա—որդի—
Բ անհայտ բառ:

Թագավորական տիտղոսի բացակայությունը նախադասության վերջնամասում (Բ անհայտ բառի դեպքում) խիստ բարդացնում էր գործը:

Ենթադրությունը, որ տեքստը թագավորներին թվարկում է այն հաջորդականությամբ, որով նրանք գահակալել են, թվում էր, թե սասանված է: Բայց Գրոտեֆենդը տեղի շտվեց կասկածներին: Նա դատեց հետևյալ կերպ: Եթե Բ անհայտ բառը (որն, անկասկած, ինչ-որ պարսիկի անուն է), ի տարբերություն նախորդ երկու անունների, թագավորական տիտղոս չունի, այստեղից պետք է հետևություն անել, որ.

ա) այն մարդը, որը կրել է այդ անունը, թագավոր չի եղել,

բ) այդ մարդը եղել է երկու թագավորների ազգականը, որովհետև նրա անունը գտնվում է թագավորների անունների կողքին,

գ) նա, ինչպես որ այդ է վկայում երկու անգամ կրկնված «որդի» բառը, նրանց հայրն է ու պապը:

Այդ դեպքում տեքստը պետք է նշանակի.

Արքայի անուն—արքա—որդի—արքայի անուն—արքա—որդի—
պարսիկի անուն:

Գրոտեֆենդը զգաց, որ պոնովում է ճիշտ ուղու վրա: Եթե պարսից թագավորների պատժութեան մեջ նրան հաջողվեք գտնել դինամիտի անվտանգ մի այնպիսի իրավիճակ, որի դեպքում ինչ-որ պարսիկ, թագավոր չլինելով, ունեցել է, սակայն, որդի և թոռ, որոնք բազմել են թագավորական գահին, հարցը լուծված կլինի: Այդ դեպքում սեպտեմբերի շաբաթը դացված խմբերը կարելի էր փոխարինել պատմական անուններով:

Գրոտեֆենդն սկսեց աչքի անցկացնել հին պատմիչների տեքստերը և գտավ որոնելի իրավիճակը: Պարսիկ իշխան Վշտասպն ունեցել է Գարեհ անունով որդի, որը պարսից արքա է եղել մ. թ. ա. 521-ից մինչև 486 թվականները: Իսկ Վշտասպի թոռը՝ Դարեհի որդի Քսերքսեսը, որը հայանի է Հունաստանը նվաճելու իր փորձերով, գահակալել է մ. թ. ա. 486 թվականից մինչև 465 թվականը: Հետևաբար, արձանագրության տեքստը վերջնականապես ընթերցվում էր այսպես.

Քսերքսես արքա, որդին Դարեհ արքայի՝ որդու Վշտասպի:

Իրականում այդ ամենն այնքան էլ հեշտ չէր, ինչպես որ այստեղ է պատկերվում: Թագավորների անունները Գրոտեֆենդը գտավ Հերոդոտի երկերում, որը դրանք մեջ էր բերել հունական հնչմամբ: Սեպտեմբերի շաբաթը նշանի հնչակազմությունը որոշելու համար հարկավոր էր իմանալ, թե թագավորների անուններն ինչպես են հնչել հին պարսկերեն:

Խնդրի լուծման բանալին Գրոտեֆենդը փնտրեց Ավեստայի՝ պարսիկների սուրբ գրքի տեքստում, որի լեզուն առավել մոտ էր հին պարսկերենին:

Վշտասպի անունն այնտեղ գրվել է տարբեր ձևով (Հոշուպ, Քիստապ, Հուստասպ, Վիշտասպ), սակայն Գրոտեֆենդը շափաղանց խորաթափանց հետևությունների ճանապարհով կարողացավ վերծանել հին պարսկերեն սեպտեմբերի այբբենական ինը նշաններ: Գերմանացի Լասենը, ֆրանսիացի Բյուրնուֆը և անգլիացի Ռաուլֆսոնը միայն երեսուն տարի անց, 1836 թվականին կարգացին մնացած այբուբենը:

Մեհավոր ժայռի արձանագրությունը

Մեծ Բրիտանիայի և Հնդկաստանի միջև երթևեկող անգլիական առաջատանավի վրա որպես փոքրավոր (կրտսեր նավաստի) էր ծառայում Հենրի Ռաուլֆսոնը: Խելամիտ պատանին ուշադրությամբ ականջ էր դնում սուլեղների խոսակցությանը, որոնք տախտակամածում նստած և արևի տակ տաքանալով, միմյանց ռմեն տեսակ տարօրինակ հրաշքներ էին պատմում Հնդստանի այն երկրների մասին, ուր գնում էին որպես վաճառականներ կամ աստիճանավորներ: Այդ պատմությունների տպավորության տակ նա սկսեց երազել հեռավոր ճամփորդություններ ու ար-

կածներ: Մովսյին ծառայութիւնը հանկարծ նրան դժնդակ գերութիւն թվաց, և նա լոկ առիթի էր սպասում, որպէսզի այդ գերութիւնից գուրտ պրծներ լայնարձակ աշխարհ:

Ուղերթերից մեկի ժամանակ նա կարողացավ արժանանալ Բոմբեյի նահանգապետ սրբ Ջոն Մալքոլմի բարեհաճությանը, և Մալքոլմը նրան առաջարկեց ծառայել Արևմտա-Հնդկական ընկերության զորամասերում: Ռաուլինսոնն ուրախությամբ ընդունեց առաջարկութիւնը, և 1826 թվականին, երբ լրացավ նրա տասնվեց տարին, ծառայության անցավ այդ համբավվոր բաժնետիրական ընկերութիւնում, որը հսկայական շահույթներ էր ստանում Հնդկաստանը թալանելուց և հնդիկ ժողովրդին շահագործելուց:

Ռաուլինսոնը, երևի, շատ ջանադրաբար ծառայեց իր տերերին, որովհետև շուտով սպայական ուսադիրներ ստացավ: 1833 թվականին նա, որ արդեն մայրի աստիճան ուներ, դարձավ պարսկական բանակի հրահանգիչ: Եվս վեց տարի անց բրիտանական կառավարութիւնը նրան նշանակում է քաղաքական գործակալ Աֆղանստանում: Հետագա տարիներին նա հյուպատոս էր Բաղդադում, բրիտանական պառլամենտի անդամ և, վերջապէս, բրիտանական դեսպան Քեհրանում՝ պարսկական արքունիքում:

Համեստ փոքրավորից մինչև մեծ կայսրության դիվանագիտական ներկայացուցիչ դառնալը արտասովոր կարիերա էր: Իր հաջողութիւնների համար Ռաուլինսոնը ո՞ւմ էր պարտական: Հիմա մենք՝ գիտենք, որ նա անզիական հետախուզության գործակալ էր: Նրա ձեռքում էին կենտրոնացված Մերձավոր և Միջին Արեւելքում կատարվող քաղաքական բանասարկութիւնների բոլոր թելերը: Մառայելով բրիտանական իմպերիալիզմին, Ռաուլինսոնը ասիական ցնդերին և ժողովուրդներին լարում էր Ռուսաստանի դեմ, երկպառակութիւն սերմանում սլարսիկների ու աֆղանների միջև, նույնիսկ դավադրութիւն կազմակերպեց պարսկական կառավարութիւն դեմ, թեև որպէս զինվորական հրահանգիչ ոտճիկ էր ստանում այդ կառավարութիւնից:

Չարժեր իրոսել Ռաուլինսոնի մասին, եթե նա զգալի շտփով նպաստած չլինէր սեպածև գրի ընթերցմանը: «Բնտելիչինս սերվիսի» գործակալներն իրենց լրտեսական գործունեութեանը բավական հաճախ քողարկել են գիտական հետազոտութիւնների և հնագիտական որոնումների երեսփախանությամբ, սակայն Ռաուլինսոնը մնացած բոլորից տարբերվում էր նրանով, որ հիրավի սեպագրի ջանադիր հետազոտատը էր և այդ բնագավառում հաստի գիտական լուրջ արդյունքների: Աչինչ շիմանալով Գրասեֆենդի որոնումների մասին, նա նման եղանակով ոչ միայն կարողաց պարսիկ վերոհիշյալ երեք տիրակալների անունները, այլև վերժանեց հին պարսկական սեպագիր այբուբենի ևս մի քանի նշաններ: Երբ 1838 թվականին Ռաուլինսոնը ծանոթացավ Գրասեֆենդի աշխատանքին,

համոզվեց, որ իր սեփական հետազոտությունների արդյունքները շատ առումներով զգալիորեն ավելի լավ են:

Կատարելով իր տերերի գաղտնի հանձնարարությունները, Ռաուլինսոնը հաճախ տեղից տեղ էր փոխադրվում: Այդ տեղափոխությունների ժամանակ լինում էր նաև Բագհաստանայում:

Մի անգամ, գտնվելով Քերմանշահից քսան կիլոմետր հեռավորության վրա, նա ապշած կանգ առավ հարթավայրում հազար մետր վեր խոյացած, ճաքճքած ուղղաբերձ ժայռի առջև: Ժայռին, անդունդից մոտ հարյուր մետր բարձրության վրա, երևում էր Բագհաստանայի նշանավոր արձանագրությունը: Ժայռին ամրացված սալերին պարսկական երկար շորեր հագած մորուքավոր մարդիկ պատկերող հարթաքանդակներ էին և սեպագիր արձանագրությունների սյունակների մի ամբողջ շարք:

Հսկայական հարթաքանդակը հայտնի էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում ապրած մարդկանց տասնյակ սերունդներին: Անցյալում Բագհաստանայի ժայռի ստորոտով է ճանապարհն անցել դեպի Բաբելոն, իսկ այն ժամանակ այդտեղով էր ձգվում Քերմանշահը Բաղդադի հետ կապող առևտրական լայնահուն աշխույժ ճանապարհը: Անհիշելի ժամանակներից այդ ճանապարհով դնացել են ծանրորեն բեռնված վաճառականական քարավաններ, թափառել են միայնակ ճանապարհորդներ: Առեղծվածային ժայռափոր քանդակները ճամփորդների և շրջակայքում ապրող տեղացիների սիրտը սնտախի ահ են գցել:

Հարթաքանդակը Ռաուլինսոնի վրա հսկայական տպավորություն թողեց: Նա բազմիցս ժամերով հեռադիտակով ուշի ուշով դիտում էր այն: Պատմական տեղեկությունների ինչպիսի՜ անսպառ հարստություն էր թաքնված ուղղահայաց և հորիզոնական սեպածև նշաններից բաղկացած այդ արձանագրություններում: Սյունակների դասավորությունը պարզորոշ ցույց էր տալիս, որ տեքստը գրված է երեք լեզվով: Եթե, մտորեց Ռաուլինսոնը, հին պարսկերեն այբուրենն արդեն ընթերցված է, դուցե իրեն՞ն բախտ վիճակվի բացահայտելու մյուս երկու լեզուների գաղտնիքը: Մինչ այդ ոչ ոք դրա մասին նույնիսկ չէր էլ կարող մտածել, որովհետև համեմատական նյութը շատ սուղ էր, բաղկացած էր Պերսեպոլիսի արդեն հիշատակված արձանագրության մեջ եղած ընդամենը քսան նշաններից: Իսկ Բագհաստանայի ժայռի արձանագրությունն այդ տեսակետից անգնահատելի հարստություն էր, այն բովանդակում էր, ինչպես Ռաուլինսոնը հաշվեց հեռադիտակի օգնությամբ, սեպածև գրի քսան մետրանոց ավելի քան չորս հարյուր տող: Նյութի այդպիսի առատության դեպքում կարելի էր փորձել կարգալ անհայտ լեզուներով արված արձանագրությունները:

Սակայն դա ամենևին էլ հասարակ գործ չէր: Ամենից առաջ հարկավոր էր մագլցել ուղղաբերձ ժայռը և, անդունդի վրա կախված, ճշտորեն, դիժ առ դիժ պատճենահանել ամբողջ արձանագրությունը: Նման

ձեռնարկման համար անհրաժեշտ էին երկար սանգուղքներ, պարաններ և կեռիկներ՝ պիտուլքներ, որ դժվար էր ճարել հետամնաց երկրում:

Բայց այդ ժամանակից սկսած հարթաքանդակին հասնելու միտքը հանգիստ չէր տալիս Ռաուլինսոնին: Նա շաբաթներով մանրազնին ուսումնասիրում էր ժայռի յուրաքանչյուր ելուստը և մտածում գլխապտույտ վերելքի տարբեր եղանակներ: Մի անգամ հուսադրող բան հայտնաբերեց: Նա նկատեց, որ արձանագրության տակ՝ դրա ամբողջ լայնքով մեկ, ժայռի մեջ հարթակ է փորված, որը քանդակագործի համար փայտամածների հենարան է ծառայել: «Միայն թե հասնեմ այնտեղ, — մտածեց Ռաուլինսոնը, — և այն ժամանակ արդեն դժվար չի լինի պատճենահանել ամբողջ տեքստը»: Կյանքը վտանգելով, ճոպանների ու կեռիկների օգնությամբ նա, վերջիվերջո, հասավ նպատակին և, ճոպանով իրեն կապելով ժայռի ելուստներից, սկսեց նշաններն արտագրել հաստ տետրի մեջ: Աշխատանքը շարունակվեց մի քանի ամիս: Ամեն օր Ռաուլինսոնը մագլցում էր ժայռը և, շարժվելով հարթակի երկարությամբ, այդ կերպ պատճենահանում արձանագրության ներքևի տողերը: Սակայն պարզվեց, որ հարթակից չի երևում արձանագրության վերևի մասը, որովհետև հարթաքանդակի բարձրությունը կազմում էր յոթ մետր: Այդժամ Ռաուլինսոնը ճոպանով սանդուղքը բարձրացրեց վերև և դրանով ավելի ու ավելի վեր մագլցելով, կարողացավ ընդօրինակել հաջորդ տողերից ևս մի քանիսը: Մնացածը դուրս էր տեսանելիության սահմաններից:

Ռաուլինսոնը չկարողացավ ավարտել իր աշխատանքը: Հետ կանչվելով ղեկավարության կողմից, նա ստիպված ընդհատեց այն ու շտապեց Աֆղանստան: Միայն 1848 թվականին նա վերադարձավ Բազհաստանա և շարունակեց սկսած գործը: Այս անգամ անհրաժեշտ էր հասնել արձանագրության դժվարամատչելի մասերին: Ինքը Ռաուլինսոնն արդեն վախենում էր կյանքը վտանգի ենթարկել և այդ գործի համար վարձեց մի պատանի քրդի: Ժայռի դագաթից կախված ճոպանով կապկպված խիզախ պատանին պատի երկայնքով փայտի սեպեր խփեց: Այնուհետև սանդուղքը սեպից սեպ կախելով և դրանով վեր բարձրանալով, քուրդը խոնավ ստվարաթուղթը սեղմում էր արձանագրության առանձին հատվածներին ու այդ ձևով ստանում դրանց ճշգրիտ դրոշմը: Մի քանի շաբաթ անց Ռաուլինսոնը դարձավ դիտական անդնահատելի նյութ ներկայացնող հսկայական սևպաղիր արձանագրության միակ տերը աշխարհում: 1848 թվականին, տասնմեկամյա աշխատանքից հետո, նա արձանագրությունը ներկայացրեց Լոնդոնի Ասիական թագավորական ընկերությունը:

Բազհաստանայի արձանագրությունը, ինչպես արդեն նշել ենք, բովանդակում էր երեք տարբեր լեզվով տեքստեր: Միջին սյունակը գրված էր հին պարսկերեն: Գիտնականների նախորդ աշխատանքների շնորհիվ դա կարդալն այլևս այնքան էլ դժվար չէր: Մնացած երկու սյունակներից 2 երբ արևը աստված էր

մեկը գրված էր վանկային եղանակով, այսինքն ոչ թե այբուբենի առանձին տառեր, այլ ամբողջ վանկեր արտահայտող սեպագրի նշանների օգնությամբ և պարսկերեն տեքստի թարգմանությունն էր Իրանի ելամական ժողովրդի լեզվով: Ելամացիների պետությունն արգեն վաղուց գոյություն չունեի, բայց նրանց լեզուն լայնորեն տարածված է եղել Պարսկաստանում, որով էլ բացատրվում է ելամերեն տեքստի առկայությունը Բագհաստանայի ժայռին: Դանիացի Նիլս Վեստերդաարդը գտավ ելամերենը հասկանալու բանալին: Դրա շնորհիվ Ռաուլինսոնը և մեկ այլ անգլիացի՝ Նորիսը, շուտով կարգացին այդ սյունակի երկու հարյուր նշանները:

Մնաց վերծանել երրորդ սյունակը, որը տեքստի ասուրա-բաբելերեն թարգմանությունն էր: Քրտնաշան ու խրթին համադրություններից հետո Ռաուլինսոնը գործը բարդացնող հայտնագործություն արեց՝ գիրք ամեն տեսակ տրամաբանությունից զուրկ ասորիական խառնաշփոթ էր: Եթե հին պարսկերեն գրում յուրաքանչյուր սեպածև նշան այբուբենի առանձին տառ էր նշանակում, իսկ ելամերեն գրում՝ վանկ, ասուրա-բաբելերեն գրում ամեն ինչ զգալիորեն ավելի բարդ էր: Այդպես միևնույն նշանը կարող էր նշանակել թե՛ առանձին վանկ և թե՛ մի ամբողջ բառ:

Շարունակելով ուսումնասիրել այդ գիրքը, հետազոտողը հայտնաբերեց ևս մեկ բարդություն՝ միևնույն նշանն այդտեղ կարող էր նշանակել միանգամայն տարբեր վանկեր և նույնիսկ մի քանի տարբեր բառեր:

Եվ հակառակը՝ տարբեր, իրար միանգամայն ոչ նման նշանները հաղորդել են միևնույն վանկը կամ միևնույն բառը: Այսպես, օրինակ, «ո» տառը պատկերվել է վեց տարբեր նշաններով, նայած թե որ վանկի մեջ է մտել: «Ռա», «Ի», «ոու», «աո», «իո», «ուո» վանկերում «ո» բաղաձայնը յուրաքանչյուր դեպքում պատկերվել է սեպածև այլ նշանով: Ավելին, այն դեպքում, երբ այդ վանկերին միացել է մի քորիչ բաղաձայն, օրինակ՝ «ոա + մ», այլ խոսքերով, երբ առաջացել է «ոամ» նոր վանկը, «ո» տառը արդեն պատկերվել է այլ նշանով:

Լիովին հասկանալի նկատառումներով մենք այստեղ չենք կարող խորաճալ հետազա մանրամասնությունների մեջ, բայց որպեսզի ընթերցողը կարողանա պատկերացնել այն աներևակայելի գծվարությունները, որոնց հանդիպեց Ռաուլինսոնը, նշենք այդ գրի մի առանձնահատկությունը ևս: Այսպես, օրինակ, Նաբուգոդոնոսոր թագավորի անունը, ըստ հնչյունական բաղադրիչ մասերի, պետք է հնչեր Ան-պա-սա-դու-սիս, այնինչ արտասանվել է Նաբուգոդոնոսոր:

Երբ Ռաուլինսոնը հրապարակեց իր մեղվաշան աշխատանքի արդյունքները, գիտնականները կարծեցին, թե նա իրեն թույլ է տվել անտեղի կատակել: «Ինչպե՞ս,— ասում էին նրանք:— Մի՞թե որևէ մեկը երբևէ կարող էր գրի այդպիսի անիմաստորեն խճճված համակարգ հորինել: Զէ՞ որ սոչն պետք է մարդկանց համար կապի միջոց ծառայեր»: Իսկ երբ

համոզվեցին, որ Ռաուլինսոնը ոչ մի խաբեություն էլ թույլ չի տվել, որոշ գիտնականներ վճռեցին, թե այդ գիրը երբեք չի կարդացվի:

Գործն իր էությամբ անհուսալի էր թվում: Բայց ինչպես հաճախ է պատահել հնագիտության պատմության մեջ, հանգամանքների երջանիկ զուգահեռությունը հենց այդ ժամանակ կատարվեց ևս մեկ նշանավոր հայտնագործություն: Փրանսիացի հնագետ Բոտան, որի մասին կպատմենք հաջորդ գլխում, նինվեի ավերակներում գտավ շուրջ հարյուր սեփազիր կավե սալիկներ, որոնք վերաբերում էին մ. թ. ա. VII դարին՝ Այդ սալիկները լեզվաբանների համար խիստ արժեքավոր գտածոներ էին, որովհետև բովանդակում էին հանրագիտական մի շարք տեղեկություններ: Հիմա գտնում են, որ դա մարդկային պատմության մեջ հնագույն հանրագիտարանն է: Սալիկների վրա իրար տակ դասավորված էին տարբեր առարկաների պատկերներ, իսկ երկու կողմից՝ դրանց անվանումները բաբելերեն և սեպագիր, որը հաղորդում էր անվանումների հնչումը: Այդ սալիկները, հավանաբար, պատրաստվել էին գրագիրների վարժարանի սաների համար այն ժամանակաշրջանում, երբ պատկերագիրն ու վանկագիրը պարզեցվել են, վերածվելով այբբենական գրի:

Աշխարհի հնագույն հանրագիտարանը, ճիշտ է, պահպանվել էր սոսկ սակավաթիվ հատվածներով, այնուամենայնիվ, գիտնականներին օգնեց վերծանելու ասուրա-բաբելերեն գրի երկու հարյուր նշան:

Բազմաթիվ գիտնականների ընդհանուր ջանքերի շնորհիվ ընդամենը մի քանի տարվա ընթացքում ասուրագիտությունն այնպիսի հաջողությունների հասավ, որ երևան եկան ասուրերենի քերականության առաջին գրքերը: Ռուս գիտնական Գուլենիշչևը 1888 թվականին հրատարակեց ասուրերենի աշխարհում առաջին բառարանը, որը սլարոնակում էր խնամքով ընդօրինակված ու մեկնաբանված սեպագիր հաղարավոր նշաններ:

Ռաուլինսոնի ծառայությունները չի կարելի անտեսել, սակայն նա դիտությունը անշահախնդրորեն նվիրված դիտնական չէր այդ բառի բուն իմաստով: Նա Բագհաստանայի արձանագրության վերծանմամբ զբաղվեց բնավ ոչ գիտական մղումներով: Ավելի շուտ, նա առաջնորդվեց մի այնպիսի բնագավառում ռեկորդը գերադանցելու և դրանով իսկ հռչակվելու ցանկությամբ, որն այն ժամանակ ընդհանուր հետաքրքրության առարկա էր: Դափնիների ետևից ընկած լինելով, նա անվարան սեփականացրեց նույնիսկ այլոց աշխատանքի պտուղները: Քիչ ազմուկ շառաչացրեց նրա վեճը ասուրագետ Հ. Հինքսի հետ, որը հին պարսկերենին վերաբերող մի քանի շատ կարևոր հայտնագործություններ էր արել: Զարտուղի ճանապարհով իմանալով այդ մասին, Ռաուլինսոնն անհասպաղ նամակ ուղարկեց Լոնդոն, ուր այն ժամանակ տպագրվում էր իր աշխատությունը, և Հինքսի նվաճումները ներկայացրեց որպես սե-

փական հայտնագործութիւն: Երբ նրան մեղադրեցին բանագործական մեջ, նա կեղծած փոստային կնիքի օգնութեամբ փորձեց ապացուցել, թե նամակն ավելի շուտ է ուղարկել, քան կարող էր իմանալ Հինքսի հայտնագործութեան մասին: Խայտառակութիւնը սկզբում կոծկվեց, բայց մի քանի տարի անց Ռաուլինսոնի բանագործական և նրա կողմից փոստային կնիքը կեղծելու փաստերը լիովին ապացուցվեցին:

Ռաուլինսոնի հետ միաժամանակ ասուրական գրի վերծանմամբ զբաղվում էին նաև մի քանի այլ գիտնականներ: Սակայն դեռևս կասկած գոյութիւն ունէր, թե արդյո՞ք ճիշտ է վերծանվել այն: Երբ Ռաուլինսոնը սկսեց հրապարակավ պարծենալ, որ կկարողանա կարդալ նույնիսկ ամենադժվարին սեպագիր տեքստերը, Լոնդոնի Ասիական թագավորական ընկերութիւնը որոշեց դիմել գիտութեան պատմութեան մեջ շլտված մի քայլի: Չորս ամենաերևելի մասնագետների ուղարկեց կրնքված ծրարներ, որոնք պարունակում էին նոր գտնված ասուրերեն միևնույն տեքստը, խնդրելով կարդալ այն: Ռաուլինսոնը, Թալբոտը, Հինքսը և Օփերտը վերծանեցին տեքստը, յուրաքանչյուրն ինքնուրույն, իր սեփական եղանակով, և թարգմանութիւնը, նույնպես կնքված ծրարներով, ուղարկեցին այդ նպատակով ընտրված հանձնաժողովին:

Բոլոր չորս թարգմանութիւններն էլ գրեթե միատեսակ էին: Ճիշտ է, մի քանի գիտնականներ դժգոհ էին ընկերութեան ընտրած եղանակից, այն համարելով գիտութեանը ոչ վայել, սակայն համազոր պատասխաններն այլևս կասկածի տեղ չթողեցին՝ ասուրական դժվարին տեքստի ընթերցումը կատարված փաստ էր: 1857 թվականին հիշյալ թարգմանութիւնները հրապարակվեցին «Ասորեստանի թագավոր Թալատպալասարի արձանագրութիւնը՝ Ռաուլինսոնի, Թալբոտի, դ-ր Հինքսի և Օփերտի թարգմանութեամբ» վերնագրով:

Բազմաստանայի հնագույն արձանագրութեան բովանդակութիւնից հետևում էր, որ մ. թ. ա. 530—521 թվականներին Պարսկաստանում գահակալել է Կամբյուսեսը: Հպատակեցված և դաժանորեն կեղեքվող ժողովուրդների ընդվզումներն ու ապստամբութիւնները մշտապես ցնցել են նրա պետութեան հիմքերը: Բացի այդ, բուն թագավորական տանը ծագել են վեճեր, պայքար է մղվել դահի համար, որոնք լրջորեն թուլացրել են միապետի իշխանութիւնը և ավարտվել թագավորի եղբոր՝ Սմերդիսի սպանութեամբ: Երկրի տարբեր ծայրերում հայտնվել են ինքնակոչներ, թագավորական դահի հավակնորդներ: Նրանցից ամենավտանգավորը եղել է մոգ, այսինքն զրադաշտական կրոնի քուրմ, Գաումատան: Ներկայանալով որպէս Ամերդիս, որն իբր թե մահապատժից առաջ փախել է զնդանից, նա կողմնակիցների մի հզոր բանակ է հավաքել:

Մ. թ. ա. 521 թվականին թագավորն անսպասելի մահացել է, իրենից հետո անմիջական ժառանգորդներ չթողնելով: Գահը ժառանգելու իրավունքն անցել է Աքեմենյանների կողմնային ճյուղի արքայորդիներից

մեկին՝ Պերսեպոլսի արձանագրությունից մեզ արգեն հայտնի Վշտասպին: Այդ ապաշնորհ, վախկոտ մարզը, սարսափելով երկրում տիրող հուզումներից, գերագասել է գահից հրաժարվել հօգուտ իր որդու՝ Գարեհի:

Գարեհ I-ը եղել է եռանդուն տիրակալ, խիզախ ռազմիկ և հերթով արագ հաշիվ է տեսել ըմբոստների հետ: Նա կամեցել է առհավետ հիշատակ թողնել իր հաղթանակների մասին, որպեսզի սերունդները չմոռանան, որ ինքը՝ պարսից թագավոր Գարեհն է վերականգնել պետութայան միասնությունը և եղել Կամբյուսեսի միակ օրինական հետնորդը:

Նա հրամայել է իր քաջագործությունների ամբողջ պատմությունը փորագրել քարին մի այնպիսի տեղում, որ ամեն ոք կարողանար կարդալ արձանագրությունը, բայց դրա հետ միասին այնքան անմատչելի տեղում, որ հնարավոր չլիներ ոչնչացնել արձանագրությունը: Նա վճռել է այդ, թվում է, անիրագործելի մտահղացումն իրականացնել դեպի Բաբելոն տանող աշխույժ ճանապարհի վրա իշխող ժայռի ուղղաբերձ պատին: Անդունդի վրա պարաններից կախված ստրուկները, մրրիկների դեմ անպաշտպան և սարսափելիորեն կիզիչ արևի տակ, ժայռի մեջ փորել են արդեն հիշատակված հարթակը, որի վրա հետո փայտամածներ են կառուցել: Հարթաքանդակներով ծանր սալերը բարձրացվել են վերև և ամրացվել ժայռին:

Այդ աշխատանքների ժամանակ շատ ստրուկներ են կորցրել հավասարակշռությունն ու գահավիժել անդունդ:

Երկուսուկես հազար տարի հարթաքանդակը մնացել է անձեռնմխելի: Հարթաքանդակի առաջին պլանում, լայնալիճ աղեղին հենված, կանգնած է Գարեհը: Նա աջ ոտքը դրել է պարտված Գաումատայի վրա, որը հանդըգնել էր թագավորական գայիստներ զավթելու փորձ անել: Թագավորի հետևում կանգնած են մեծատոհմիկ երկու սլալատականներ՝ կապարճով ու նիզակով: Թագավորի առջև նվաստաբար խոնարհվում են ոտքերը կապված և թուկը վզներին «ստի ինը թագավորները», ինչպես որ արձանագրությունն է հայտնում: Երկու կողմից և այդ խմբի տակ երևում են Գարեհի հաղթանակները երեք լեզվով փառաբանող սեպագիր տեքստի տասնչորս սյունակները:

Ահավասիկ մի հատված այդ տեքստից.

Մինչ ես Բաբելոնում էի, այս երկրներն են, որոնք այստամբելով հեռացան ինձնից՝ Պարսկաստան, Շոշաստան, Մարաստան, Ասորեստան, Եգիպտոս, Պարթևաստան, Մարգիանե, Սաատագիրգացիք, Շակի: Եվ ահա քե ես ինչ կատարեցի Ահուրամազդայի ողորմածուրյամբ: Այն տարի, երբ սկսվեց իմ գահակալությունը, ես տասնինը ճակատամարտ տվեցի: Տվեցի շնորհիվ Ահուրամազդայի և ինը քաղավոր գերեցի: Նրանց մեջ կար մեկը, որ Գաումատա էր կոչվում: Ստում էր նա: Որովհետև այսպես էր ասում.

«Ես Սմէրգիսն եմ, Կյարոսի որդին»: Նա խոսվարչամ էր բարձրացրել Պարսկաստանում: Մեկն էլ կար, Արախա էր սնունք, Աւմինացի, որը սակց, այսպէս ասաց. «Ես նաբուգոզոսն եմ, նաբունիտայի որդին»: Նա Բաբելոնը ապստամբեցրեց¹:

Սալերը զետեղելով Բագհաստանայի ժայռի վրա, Դարեհը համոզված է եղել, որ իր քաջագործութիւնները պատմական անանց նշանակութիւն ունեն: Սակայն մեզ համար նրա հաղթանակները երկրորդ պլան մղվեցին այն փաստի համեմատութեամբ, որ նա հրամայել է արձանագրութիւնը փորագրել երեք լեզվով: Տեքստի եռալեզվութիւնը դարձավ այն կախարդական փայտիկը, որը մեր առջե կրեկի վրա բացեց Շումերի, Բաբելոնի և Ասորեստանի հնագույն քաղաքակրթութիւնների դարպասը, օգնեց մի քանի հազար տարի թափանցելու մարդկային սլաւութեան խորքը:

«Հագար ու մեկ գիշեր»-ի երկրորդ

Մինչև XVIII դարի վերջը շատ քիչ բան էր հայտնի Միջագետքի (կամ հունարեն՝ Մեսոպոտամիայի) մասին, որն ընկած է Տիգրիսի և Եփրատի միջև: Այդ երկրի բուն ու հարուստ անցյալի մասին մշտապատ տեղեկութիւնները քաղվել են Աստվածաշնչից և հին ճանապարհորդների իրարամերձ նկարագրութիւններից: Համաձայն Հին կտակարանի, այնտեղ՝ Նինվեում և Բաբելոնում, իշխել են աշխարհակալ թագավորներ, որոնց Եհովան իր ցառումով պատժել է կուսպաշտութեան համար: Սակայն շատ եվրոպացիներ Աստվածաշունչը համարել են զրույցների և առասպելների ժողովածու, իսկ մարգարատ քաղաքների, Ասորեստանի ու Բաբելոնի մեծադար թագավորների մասին պատմութիւնները՝ անվազն խիստ շահագանցված: Այդ անհայտ քաղաքակրթութիւնների մասին պատկերացումները սահմանափակվել են Բաբելոնի աշտարակով և Շամիրամի կախովի այգիներով:

Այսօր հին Ասորեստանի և Բաբելոնի տեղում դռնվում է Իրաքը՝ Բաղդադ մայրաքաղաքով: Երկիրը հյուսիսում սահմանակից է Թուրքիային, արևմուտքում՝ Հորդանանին և Սիրիային, հարավում՝ Սաուդյան Արաբիային, իսկ արևելքում՝ Իրանին (անցյալում՝ Պարսկաստանին): Հինավուրց Միջագետքի մասին քիչ թե շատ արժանահամար տեղեկու-

¹ Տեքստը տրվում է ըստ 1901 թվականին Վիեննայում Վ. Սանտալճյանի թարգմանութեամբ հրատարակված «Ասորեստանյա և սյարսիկ սեպագիր արձանագրութիւնը» աշխատութեան Մ. 2. Բ.

թյունները մեղ հասել են միայն մեք թվականության առաջին դարից։
Հայսնի է, որ շնայած անընդմեջ պատերազմներին, ներխուժումներին ու
տիրակալների փոփոխությանը, Միջագետքը մնացել է սրպես մարգաշատ
և հարուստ երկիր, որ այնտեղ ծաղկել են առևտուրն ու արհեստները,
արվեստն ու ճարտարապետությունը։

Քանի դեռ այդ տարածքում լավ վիճակում պահպանվել են ոսոքման
ջրանցքները, ոչ մի պատերազմ և ներխուժում չեն կարողացել ամլացնել
արգավանդ հողերը։ Ջրանցքների այդ հոյակապ համակարգը, որը Տիգ-
րիսի ու Եփրատի ջրերը բաշխել է ըստ լայնարձակ դաշտերի և կարգա-
վորել գետերի ամենամյա հորդացումները, եղել է Միջագետքի բնակչու-
թյան բարեկեցության գլխավոր ու միակ աղբյուրը։ Ոչ ոք չի հիշել, թե
ով է ջրանցքները կառուցել այնպես մտածված և հեռատեսորեն։ Ոչ ոք
չի էլ ենթադրել, որ այդ ջրանցքների շինարարներն ապրել են մեր թվա-
կանությունից մի քանի հազարամյակ առաջ Ուրում, Բաբելոնում և Նին-
վեում։

Միջագետքում փոխվել են տիրակալները, ժողովուրդները, մշակույթ-
ները։ Շումերներից, աքքադացիներից, ասորեստանցիներից ու քաղզեա-
ցիներից հետո եկել են պարսիկները, պարսիկներից հետո՝ հույները,
հույներից հետո՝ պարթևները, բայց՝ երկրագործներն ապրել են իրենց
սեփական կյանքով, նորոգել են ջրանցքները, ցանել ու հնձել բերքը։
Նրանց անվթորեն շահագործել են, հարստահարել, զինվոր տարել, քշել
դեպի հանքհորերը։ Այդ նրանք են իրենց ծանր աշխատանքով ստեղ-
ծել երկրի բալոր հարստությունները։ Նրանց տաժանակիր աշխատանքի
շնորհիվ հառնել են բազմաթիվ հարուստ քաղաքներ, տաճարներ ու զրդ-
յակներ, ծաղկել են ճարտարապետությունը և արվեստը, գրականու-
թյունն ու գիտությունները, ստեղծվել է այն շքեղությունը, որով թա-
գավորներն ու ավագանին շրջապատել են իրենց։

Միջին դարերում Միջագետքը կրկին է ծաղկման շրջան ապրել։ Երբ
մահմեդականները նվաճեցին երկիրը, իսլամի կենտրոնը Դամասկոսից
տեղափոխեցին այնտեղ։ Խալիֆաները հիմնեցին և մայրաքաղաք դարձ-
րին Բաղդադը, որի ճոխությունը, գեղեցիկ ճարտարապետությունն ու
հեքիաթային շքեղությունը առասպել դարձան։

Երբ սելջուկների առաջնորդությամբ թուրքերը նվաճեցին երկիրն ու
ստեղծեցին Բաղդադի մեծ տերությունը, այնտեղ քիչ բան փոխվեց։
Ջրանցքների և ջրարգելակների ցանցը պահպանվեց անխաթար, դրա
շնորհիվ հողը շարունակեց առատ բերք տալ։ Միայն Հուլավուի և Լենկ-
թեմուրի գլխավորությամբ մոնղոլների հերթական ավերիչ ներխուժում-
ները երկիրը վերածեցին մոխրակույտերի։ Ոսոքման ջրանցքներն աժեր-
վեցին, ջրազուրկ հողը դարձավ անբերրի, ճաքճքեց, հողմահարվեց կիզիչ
արևի տակ և, վերջապես, վերածվեց թեթև սորումն փոշու ծավի։ Միջա-

գետքը դարձավ անապատների և խորհրդավոր բլուրների, տափաստանների և վաչկատուն ցեղերի երկիր:

Այդ ժամանակվանից շատ դարեր ի վեր վաղնջական Միջագետքը մոռացվեց: Սակայն ժամանակ առ ժամանակ այնտեղ հայտնվում էին եվրոպացի ճանապարհորդներ: Նրանցից մարդիկ իմացան ամալի հարթավայրում այս ու այնտեղ վեր խոյացող խորհրդավոր բլուրների մասին: Միայն ավազամրրիկներն են սուրացել դրանց ստորոտներով, շիկակարմիր ավազի կույտեր դիզելով միմյանց վրա: Իրենց ուղտերն այնտեղ արածեցնող բեղվիները պատկերացում չունեին, թե ինչ տարօրինակ բլուրներ են դրանք: Ճիշտ է, բլուրներին ընկած էին աղյուսի, խեցամանների կտորներ, բազալտե հարթաքանդակների բեկորներ, բայց ոչ մի տեղ չէին երևում նույնիսկ մեծ շինությունների մնացորդներ, որոնք բացահայտեին երկրի հարուստ անցյալը: Այնտեղ չէին երևում կանգուն սյուներ, կոթողներ, սֆինքսներ ու բուրգեր՝ ինչպես Եգիպտոսում, կամ տաճարների փլատակներ, աստվածների անդրիններ, ասպարեզներ ու ամֆիթատրոններ, ինչպես Իտալիայում և Հունաստանում: Անապատի հոծ ծածկույթը թաքցրել էր Միջագետքի պատմությունը:

Միջագետքում կատարված ճանապարհորդության մասին առաջին հաղորդման համար Եվրոպան պարտական է դանիացի Քարսթեն Նիբուրին: Դանիայի թագավոր Ֆրիդրիխ V-ի հանձնարարությամբ Նիբուրը գլխարշավ կազմակերպեց դեպի Մերձավոր Արևելք: Այն ավարտվեց սղբերգականորեն: Մեկ տարի էլ չէր անցել, երբ արշավախմբի բոլոր մասնակիցները մահացան հյուժվածությունից կամ վարակիչ հիվանդություններից: Միայն Նիբուրը ողջ մնաց ու գործը միայնակ հասցրեց մինչև վերջ: Նրա «Արաբիայում և կից երկրներում կատարված ճանապարհորդության նկարագրությունը» գիրքը, որը երկրի, մարդկանց և հինավուրց քաղաքակրթությունների գտնված հետքերի հանդամանալից բնութագրությունն է, երկար ժամանակ Մերձավոր Արևելքի մասին գիտելիքների միակ աղբյուրն էր: Նապոլեոնը դեպի Եգիպտոս կատարած արշավանքի ժամանակ այդ գիրքը միշտ ձեռքի տակ է պահել:

Նիբուրը առաջիններից մեկը փորձեց վերծանել սեպագիրը: Բայց գիտության այն ժամանակվա մակարդակի պայմաններում փորձը վաղորոք դատապարտված էր անհաջողության: Դանիացին ոչ մի նշան չկարողացավ կարդալ: Սակայն նա բացահայտեց մի բան, որը քիչ պատիվ չի բերում նրան, որ սեպագիր արձանագրություններում հարկավոր է տարբերել գրի երեք համակարգ՝ նկարային կամ պատկերային, վանկային, ինչպես նաև այբբենական, որն ունի քսանչորս տառ:

XIX դարի սկզբին Միջագետքը հանրածանոթ դարձավ Եվրոպայում «Հազար ու մեկ գիշեր» արաբական հեքիաթների շնորհիվ: Այն ժամանակ գա ամենահայտնի գրքերից մեկն էր: Կլանված այն կարդում էր նաև անգլիացի Լրիտասարդ փաստաբան Օսթին Հենրի Լեյարդը: Շահարա-

զագեի ստեղծած կախարգական աշխարհն այնպես էր թուվել ու գերել նրան, որ նա վճռեց ճանապարհորդել գեպի Բաղգադ, Դամասկոս և Պարսկաստան:

Լոնդոնում, փաստաբանական գրասենյակում, ամեն օր աշխատանքից հետո նա խորասուզվում էր գրքերի մեջ, խնամքով նախապատրաստվելով առաջիկա ճանապարհորդութեանը: Սովորում էր անկյունաշափ և կողմնացույց գործածել, աշխարհագրական քարտեզներ կազմել, առաջին օգնութեանը ցույց տալ գծախտ դեպքերի ժամանակ, պայքարել արևադարձային հիվանդութեանների դեմ, բառարանները ձեռքին խորամուխ էր լինում Իրանի և Իրաքի ժողովուրդների լեզուների գաղտնիքների մեջ:

1839 թվականին քսաներկուամյա փաստաբանը թողեց գրասենյակում կատարած աշխատանքը և ընկերոջ հետ ուղևորվեց Մերձավոր Արևելք: Չի հեծած նա գնում էր գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, գիշերելով մերթ ասպնջական թուրքմենների հյուղերում, մերթ արաբ հովիտների վրաններում: Իր անպահանջկոտութեան և մարդկանց հետ վարվելու հմտութեան շնորհիվ նա շուտով նվաճեց տեղացիների համակրանքը և մեծ հետաքրքրութեամբ սկսեց ուսումնասիրել նրանց սովորույթները:

Լեյարգն օրեցօր գրի էր առնում իր արկածները, ընդամին դրսևորելով գրողի արտասովոր տաղանդ: Այդ գրառումներից հետագայում ծնվեց արտակարգ ճանաչում գտած «Նինվեն և նրա ավերակները» վերնագրով երկհատոր գիրքը:

Հիացմունքով ու երախտագիտությամբ եմ հիշում այն երանելի օրերը, — գրել է Լեյարդը, — երբ մենք ազտա ու անհոգ, լուսաբացին հեռտնում էինք որևէ խղճուկ հյուղից կամ վրանից: Գնում էինք ուր աչքներս կտրեք, շմտածելով ժամանակի և տարածության մասին, որպեսզի մայրամուտին կանգ առնենք գիշերելու ինչ-որ փլատակների ստորոտում, ուր վաշկատուն արաբները խփել էին իրենց վրանները...

1839 թվականի ապրիլին Լեյարդը ժամանեց Մոսուլ, որը գտնվում է Տիգրիսի վերին հոսանքում: Այդտեղից նա ձիով գնում էր շրջակա անապատի խորքերը, որտեղ առաջին անգամ տեսավ մարդկային հնագույն բնակավայրերի ավերակները թաքցնող առասպելական բլուրները: Այդ պահից Լեյարդը դարձավ դրանց կրթոտ հետազոտողը: Ամենից առաջ նրա հետաքրքրութեանը գրգռեց մի բարձունք, որի տակ, ինչպես տեղի ավանդութեաններում է ասվել, գտնվելիս են եղել իբր թե աստվածաշնչյան նեբրովթի՝ Նոյի հետնորդի, հիմնադրած քաղաքի ավերակները: Արաբները հսկա են պատկերացրել նեբրովթին և սրբորեն հավատացել, որ նրա ոսկորները գտնվում են ավերակների մեջ: Այդ հավատալիքի աղբյուրը Հին կտակարանն էր:

Մննդոց գրքում ասվում է.

Նա տիրոջ առջև գորավար որսորդ էր, դրա համար էլ ասվում՝ Տիրոջ առջև Ներուլթի պես գորավար որսորդ: Եվ իր թագավորության սկիզբը Բաբելոնը և Արեֆը, Աֆհադը և Քաղանեն էր Սենասաբեկում: Այն երկրից Ասորեստան գնաց և Նինվեն ու Ռոբովթ ֆաղաֆը և Քաղան շինեց, Նինվեի ու Քաղայի միջև Ռեսենն էլ շինեց, սա մեծ ֆաղաֆ էր:

Լեյարդը եկավ այն եզրակացության, որ արաբական ավանդությունները որոշ իրական հիմքեր ունեն: Եթե անգամ Նեբրոպթի հետ կապված ավանդությունները, մտածեց նա, անտախ երևակայության արդյունք են, այդ դեպքում ևս չի բացառվել այն բանի հնարավորությունը, որ բլուրն իր մեջ ամփոփել է մարդկային պատմության մեջ եղած ամենահին բնակավայրերից մեկի մնացորդները:

Բլրի դիրքից, — գրում է Լեյարդը, — դժվար չէր կռահել, որ դա հենց այն բլուրն է, որ նկարագրել է Քսենոփոնը և որի մոտ «տասը հազար զորքերը» նամբար են խփել: Իսկ ավերակներն այն նույն ավերակներն են, որ ֆսաներկու դար առաջ հույն զորավարն իր աչքով է տեսել: Արդեն այն ժամանակ դրանք եղել են ինչ-որ հինավուրց ֆաղաֆի ավերակներ:

Ձննելով բլուրը, Լեյարդը շարունակ դեմ էր առնում խեցե ամանների փշուրների, աղյուսի կտորների, բազալտե հարթաքանդակների բեկորների: Արաքների մեջ լուրեր էին պտտվում, թե հողի տակ թաքնված են սև քարից կերտված ինչ-որ հրեշներ: Լեյարդը հետզհետե համոզվեց, որ բլրի տակ թաքնված են հնագիտական անսպառ հարստություններ:

Հետաքրքրությունից հալված, — գրում է նա իր նոթերում, — ես որոշեցի առաջին խակ հնարավորության դեպքում մանրազնիմ հետազոտել իր տեսակի մեջ եզակի այդ պատմական հուշարձանը:

Առժամանակ, սակայն, նա ստիպված էր ընդհատել ճանապարհորդությունը, որովհետև գրեթե սպառվել էին այն սուղ միջոցները, որոնցով նա մեկնել էր Լոնդոնից: Նա ուղևորվեց Կոստանդնուպոլիս, որտեղ հույս ուներ օգնություն ստանալ տեղի բրիտանական գեոլոգիկ սըր Ստրաթֆորդ Քանինգից:

Դեսպանին բնավ չէր հետաքրքրում հնագիտությունը, այդուհանդերձ, նա բարեհաճությամբ վերաբերվեց Լեյարդի խնդրանքին: Նրա բարեհաճությունը բացառվում էր նրանով, որ այն ժամանակ Մերձավոր Արևելքի տարածքում տեղի էին ունենում քաղաքական լուրջ հուզումներ: Նժան դեպքերում Մեծ Բրիտանիան, ինչպես միշտ, հետախուզության գործակալների օգնությամբ բանասարկություններ էր կազմակերպում և երկպառակություն սերմանում տեղի հարստահարվող ժողովուրդների

միջև, որպեսզի դրանով իսկ ավելի հեշտ հասնել իր դավթողական նպատակներին: Իր նավթով և այլ հանածոների հարստութեամբ Իրաքը, որ, ի լրումն, գտնվում էր դեպի Հնդկաստան տանող ճանապարհի վրա, բրիտանական կապիտալիստների համար շատ համեղ պատառ էր:

Եվրոպական պետութիւնները հաճախ են գիտարշավներն օգտագործել քաղաքական և լրտեսական նպատակներով: Քանինզն իսկույն հասկացավ, որ Լեյպրոզի մտադրութիւնները կարելի է հիանալի օգտագործել: Միջագետքի բլուրների հնագիտական պեղումների պատրվակով կարելի էր ուսումնասիրել երկիրը, տեղեկութիւններ հավաքել նրա հանքային հարստութիւնների մասին և անմիջական կապեր հաստատել ըմբոստացող արաբական ցեղերի շեյխերի հետ: Լեյպրոզը տիպիկ բախտախնդիր և արկածներ որոնող մարդ էր, ուստի առանց մազաչափ տատանվելու համաձայնեց անցնել ծառայութեան «Ինտելիջենս սերվիսում» և այդ կերպ միջոցներ ստացավ պեղումների համար:

Համաձայնութիւն կնքելով, Քանինզն ու Լեյպրոզը դեկավարվում էին նաև այլ նկատառումներով: Նրանք երկուսն էլ, թեկուզ և միանգամայն տարբեր պատճառներով, լրջորեն անհանգստանում էին, որ այդ նույն ժամանակ Ֆրանսիացի Պոլ էմիլ Բոտան Միջագետքում կատարում էր աշխարհով մեկ աղմուկ հանող հնագիտական հայտնագործութիւններ: Լեյպրոզը պարզապէս նախանձում էր նրա փառքին և ձգտում նրանից խլել առաջնութեան դասինին: Իսկ Քանինզը, ոչ առանց հիմքերի, ենթադրում էր, որ Բոտան Ֆրանսիական հետախուզութեան գործակալ է և պեղումների պատրվակով ձգտում է այդ տարածքները միացնել Ֆրանսիային:

1842 թվականին Բոտան սկսեց Քուլտուրիք բլրի պեղումները: Նա բանվորներ վարձեց և մի ամբողջ տարի փորեց առանց որևէ լուրջ արդյունքների: (Հետագայում այդ նույն վայրում Լեյպրոզը հայտնաբերեց Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի ավերակները): Անհաջողութիւնից հուսախաբված Բոտան պեղումները շարունակեց Խորսաբադի բլրում: Այդտեղ աշխատանքներն սկսելուց արդեն մի շաբաթ անց բախտը ժրպտաց նրան: Բանվորները փորելով բացեցին ինչ-որ նախաշաղարդ պատեր, բաղմամբիվ հարթաքանդակներ, մարդու դիակով և թևավոր ցուլի մարմնով ըարակերտ հսկայական հրեշներ:

Այդ հայտնագործութեան լուրը Փարիզում մեծագույն սենսացիա առաջացրեց: Խանդավառութեամբ համակված Ֆրանսիան նվիրատւութիւնների հանգանակութիւն կազմակերպեց, որպեսզի Բոտան հետաքուքութիւն ունենար շարունակելու որոնումները: 1843—1846 թվականների ընթացքում պեղվեց պալատական շէնքերի մի հսկայական համալիր՝ գավիթ, շքամուտքեր, ծխական դահլիճներ, միջանցքներ, հաքեմի սենյակներ և մի մեծ բուրգի մնացորդներ: Ավելի ուշ հնագետները որո-

շեցին, որ դա եղել է Ասորեստանի թագավոր Սարգուր II-ի ամառային նստավայրը՝ կառուցված մ. թ. ա. 707 թվականին:

Բոտան կրթությամբ հնագետ շէր և շէր կարողանում հնության հուշարձանները պահպանել կործանումից: Նա պեղումները կատարում էր չափազանց պարզունակ եղանակով: Որոնելով վեհասքանչ արձաններ, որոնք կարող էին տպավորություն գործել եվրոպացիների վրա, նա ուշադրություն չէր դարձնում, որ բանվորների քլունգներն անվերադարձ ոչընչացնում են ավելի մանր առարկաները, թեև երբեմն դրանք զգալիորեն ավելի մեծ արժեք ունեին: Անապատի կիզիչ արևի տակ ալեքաստրե արձանները փոշի էին դառնում, հենց որ հանվում էին հողի տակից: Բարեբախտաբար, Բոտային օգնելու եկավ Ֆրանսիացի հայտնի նկարիչ էժեն Նապոլեոն Ֆլանդենը: Նա իր հետ բերած ստվարաթղթերի վրա նկարեց հնագիտական բազմաթիվ գտածոներ, որոնք այնուհետև ընդմիջտ ոչնչացան անապատում: Այդ համագործակցության արդյունքը եղավ հնագիտության մեջ այժմ դասական դարձած «Նինվեի կոթողները՝ հայտնաբերված ու նկարագրված Բոտայի, չափագրված ու նկարված Ֆլանդենի կողմից»¹ աշխատությունը:

Բոտան փորձեց մի քանի արձան ուղարկել Փարիզ: Նա դրանք բարձեց լաստերին, մտադրվելով վերջիններս քաշելով տանել Տիգրիսի հոսանքն ի վեր: Բայց այդ հատվածում գետն իրենից ներկայացնում էր լեռնային մի սրընթաց ու խոր հեղեղատ՝ սահանքներով ու ջրապտույտներով: Հաստը թեքվեց, և անգնահատելի ամբողջ բեռը ջրասույզ եղավ: Երկրորդ լաստը, որ Տիգրիսի հոսանքն ի վար ուղարկվեց դեպի Պարսից ծոց, բարձվեց օվկիանոսային նավին և բարեհաջող հասավ Ֆրանսիա: Երկարամորուք տղամարդկանց արձաններն ու մարդու գլխով թևավոր ցուլերը տեղադրվեցին Լուվրի սրահներում:

Բոտայի պեղումների շնորհիվ Եվրոպան իր աչքով առաջին անգամ տեսավ Ասորեստանի արտասովոր գլուխգործոցները:

Բռնակալի քմահաճույքը: Հեղափոխությունը և պեղումները

Նոյեմբերին Լեյարդը մեկնեց Մոսուլ, փոքրիկ մակույկով լողալով Տիգրիսն ի վար: Անսպասելիորեն նրա մտադրությունները դեմ առան լուրջ խոչընդոտների: Ապստամբությունների ալիքն ընդգրկել էր Միջագետքը: Հարթավայրը լուսավորում էին վառվող գյուղերի բոսոր հրացուքերը, զինված ապստամբները հսկում էին բոլոր ճանապարհները:

¹Այն ժամանակ Բոտան կարծում էր, թե գտել է Նինվեն:

Միջագետքն այն ժամանակ թուրքերի իշխանության տակ էր: Լեյարդի ժամանումից քիչ առաջ սուլթանը Մոսուլում նոր նահանգապետփաշա էր նշանակել, անունը՝ Քերիթի-օղլի: Դա տիպիկ արևելյան բրունակալ էր, կարելի է ասել՝ տիպիկ արևելյան եղեռնագործ, ողջ-ողջ վերցված արաբական հեքիաթից: Նա նույնիսկ այնպիսի տեսք ուներ, որ նրանով կարելի էր վախեցնել սահմուկելի պատմություններ լսած երեսաներին՝ կարճահասակ էր, արտակարգ ճարպակալած և շար, միակնանի ու միականջանի, թուխ, ծաղկատար դեմքով:

Նոր փաշայի կառավարման եղանակները նույնքան նողկալի էին, որքան նրա արտաքինը: Ամենից առաջ նա բնակչության վրա ատամի հարկ դրեց, ծաղրաբար ասելով, թե դա տուրք է իր ատամների մաշվածության համար, որոնք ինքը փչացնում է «այդ երկրի գարշելի սննդով»:

Ծաղրական տուրքը շուտով սկսված մղձավանջային «հեքիաթի» նախաբանն էր միայն: Փաշան սկսեց պարզապես անգթորեն թալանել ահաբեկված արաբներին ու թուրքմեններին: Իր կամակատարների գլուխն անցած նա խուժում էր գյուղերը, թալանում ձեռքն ընկածը, իսկ տները հրամայում հրկիզել:

Մի անգամ ուրախալի լուր տարածվեց, որ ալլահը մահվամբ պատժել է անագորույն բռնապետին: Փաշան առիթից օգտվեց մի այնպիսի գարշելի ներկայացում սկսելու համար, որտեղ սադիզմը մրցակցում էր անդրշիրիմյան հումորի հետ: Նա ձևացրեց, թե պալատում խոր սուգ է: Պալատի տանիքին փողփողում էին կայմի մինչև կեսն իջեցված դրոշներ, փակ դարպասի հետևից լսվում էին եղբրամայրերի և ներքինիների լացն ու կոծը:

Ընչազուրկ ժողովուրդը ոգի առավ: Ցնծացող ամբոխները հավաքվեցին դարպասի առջև, որպեսզի իրենց աչքով տեսնեն ու հավաստիանան, որ նահանգապետը մեռել է: Փողոցային իրարանցման մեջ լսվում էին «Փա՛ռք ալլահին, փաշան մեռել է» բացականչություններ: Հանկարծ դարպասը կրնկի վրա բացվեց, դուրս թողնելով զինվորների սրամերկ մի բազմություն: Ահ ու սարսափի տնքոցների և վայնասունի մեջ թռչում էին կտրված գլուխները, վտակներով արյունը հոսում էր փողոցներով:

Այդ ահավոր կոտորածից հետո փաշան բռնագրավեց արդարների ու մեղավորների ունեցվածքը այն պատրվակով, որ նրանք վիրավորել են իշխանությանը, լուրեր տարածելով իր մահվան մասին: Վերջիվերջո, հալածանքները ժողովրդին հուսահատության հասցրին: Արաբ և թուրքմեն ցեղերը դիմեցին զենքի և պայքար սկսեցին բռնակալի դեմ:

Հետամնաց, տգետ բնակչությունը ընդունակ չէր կազմակերպված դիմադրություն: Տեղացիների ցասումն ու հուսահատությունը ընդունում էին տարերային խոռվության ձև՝ նրանք հրկիզում էին տներ և ամբողջ գյուղեր, թալանում ու սպանում ոչ միայն փաշայի զինվորներին, այլև իրենց իսկ նմաններին:

Մանթիանաւով իրաւորութեանը, Լեյարդը նախընտրեց դադարնի պահել իր հետադիտական ժրագիրը: Քողարկվելու համար նա ձեռք բերեց խաշոր արամաշապի մի հրացան ու լուրեր տարածեց, թե մտադիր է վարազների որս անել: Հետո նա վարձով հեծկան ձի վերցրեց և մեկնեց Ներքովթի բլուր: Յովա վերջին հայտնվեց արաբական մի գյուղակի մոտ, որը սղբալի տեսարան էր ներկայացնում: Շինություններից մնացել էին մոխրակույտեր, ավերակների վրա կախվել էր հրդեհի ծանր ճեւճահոտը:

Կիսավեր պատի ճեղքից Լեյարդը նկատեց հանգչող խարույկի ցուքեր: Մարմրող խանձողների կիտուկի շուրջը վշտալի լռութեան մեջ նրստած էր մի ընտանիք՝ ճերմակ չալմայով ու երկար բուռնուսով մի արաբ տղամարդ, սև չադրաներով երեք տանջահար կանայք և մազաթափ գամփրոններին սեղմված մի խումբ գրեթե մերկ երեխաներ:

Արաբի անունը Ավադ Արդ-Ալլահ էր, նա եղեջ ցեղի շեյխն էր: Փաշայի դինվորները քիչ առաջ վառել էին գյուղը, բնակչութեանը փախել էր սարերը: Մարող խարույկի մոտ նստած, Լեյարդը Ավադին հազարգակից դարձրեց իր ծրագրերին և նրանից օգնութիւն խնդրեց: Հարուստ նվերներ ստանալով, Ավադը հենց նույն գիշերը գնաց հարևան գյուղը՝ Ներքովթի բլուրում պեղումներ կատարելու համար բանվորներ վարձելու:

Նրա վերադարձին սպասելով, հուզախոռով Լեյարդը գրեթե անք չկրպցրեց:

Վաղուց փայփայած հույսերս, — գրեց նա իր նոթերում, — կամ հիմա կիրականանան, կամ ի դերև կելնեն: Աչքերիս առաջ երևում էին ստորգետնյա սլալատներ, վիթխարի հրեշներ, մարդկանց անդրիններ և անհամար արձանագրություններ: Ես արդեն ծրագրեր էի կազմում, թե հողի տակից ինչպես հանեմ այդ գանձերը: Եվ երագում տեսնում էի, որ դեգերում եմ սենյակների լաբիրինթոսում, որտեղից շեմ կարողանում եմ գտնել:

Լուսաբացին Ավադը վերադարձավ վեց արաբների հետ, որոնք փոքր վարձատրութեան դիմաց համաձայնել էին ձեռնամուխ լինել աշխատանքի: Բոլորն անհապաղ բարձրացան բլուրն ու սկսեցին փորել: Լեյարդը դողում էր անհամբերութեանից ու կասկածներից: Սակայն արդեն մի բանի ժամ անց բանվորները բացեցին ինչ-որ վիթխարի պատերի մնացորդներ: Ալեբաստրե հռչակալ ծոխորները, դարմանք հարուցող հարթաբանդակները կառեպածի տեղ չէին թողնում, որ պեզվել է թագավորական մի վեհասրանչ պալատ: Ապշեցուցիչ էին մանրամասների ոչ միայն ոճական առանձնահատկութեանները, այլև ռեալիստական ավարտավածութեանը, որի շնորհիվ գլխապառույտ առաջացնող այն հեռավոր ժամանակների գործերը Լեյարդին ներկայացան առես հայելու մեջ:

Ալեբաստրե սալեքին երևաթ էին արշավանքների ու որսի, պալատական կյանքի և կրոնական ծեսերի ցայտուն տեսարաններ: Ահա մար-

տակառքերում, որ թաքնում են քառասորոյ սլացող երիւկարները, կանգնած են մորուքավոր զորականներ: Նրանք լարում են լայնալիճ ազեղները և նետահարում խուճարպահար դեսուղեն փախչող թշնամական ռազմիկներին: Մարտակառքերն ու նծույցները ճզմում են վիրավոր և սպանված ռազմիկներին: Մեկ այլ տեղ պատկերված է ուղղաբերձ ժայռի դագաթին կառուցված ամրոցի գրոհը: Պաշարվածները քարեր են նետում, նետերի տարափ տեղում պաշարողների վրա: Մերթ ալատեղ, մերթ ալատեղ վիրավոր ռազմիկը ընկնում է անդունդը: Իսկ մյուս սալին, քանդակագործի ձեռքը պատկերել է որսի տեսարան: Մարտակառքով սլացող թագավորը խոցել է մի ամենի առյուծ: Վիրավոր գաղանը արյունաքամ լինելով, կատաղի մոռնում է:

Հարթաքանդակներում ամեն մի մանրուք կատարված է զարմանալի վարպետությամբ ու ճշգրտությամբ: Այնտեղ կարելի է տեսնել հագուստ, օղադրահներ ու սրածայր սաղավարտներ, մարտակառքեր ու շքեղ նախշերով զարդարված լծասարք: Ամենուրեք անզսպելի ուժով հորդել է բուռն կյանքը: Գատաղի ճակատամարտերում, մուլգին հեռաթնդման, կոխվաների և որսորդության խառնաշփոթում արտացոլվել է թագավորների, ռազմիկների ու որսորդների գիշատիչ, անսանձ, տաքարյուն խառնվածքը:

Լեյարդը նայում ու շէր հավատում իր աշքերին: Հայտնագործությունից շքած, նա անհամբերությամբ շտապեցնում էր բանվորներին: Նա շտապում էր բացել պալատի բոլոր սրմերը, որպեսզի որքան կարելի է շուտ բացահայտի անցյալի այդ անսպառ գանձերի վերջին գաղտնիքը:

Տենդագին աշխատանքի ետուն պահին հանկարծ մի թուրք սպա հայտնվեց զինվորների փոքր ջոկատով: Նա քաղաքավարի ողջունեց Լեյարդին, նայեց շուրջը և հանձնեց փաշայի՝ հետագա պեղումներն արդելող հրամանը:

Ասես երկինքը փլվեց Լեյարդի գլխին: Նա ցատկեց ձիու վրա ու սլացավ Մոսուլ՝ փաշայի հետ անձամբ խոսելու: Փաշան Լեյարդին ընդունեց ընդգծված սիրալիրությամբ, շատ ափսոսեց, բայց հրամանը շեղյալ համարել չկարողացավ:

— Մի՞թե դուք չգիտեք, որ մահամեղական բնակչությունը վրդովված է այդ բլրին գտնվող ուղղահասակատների շիրիմների անարգումից:

Լեյարդը քարոցավ. նա այնտեղ ոչ մի գերեզման էլ չէր տեսել: Նա սլացավ հեռ ե, օ՛, հրաշք, այնտեղ ու այնտեղ սլարգորոշ սպիտակին էլին սալիս շիրմաքարեր, որ առաջ չկային: Դրանք ասես կախարդանքով էին հայտնվել: Երեք օր նա թափառում էր բլրում՝ ընկճված, թվում է, թե անելանելի վիճակից: Երրորդ օրը Լեյարդը զրույցի բռնվեց փաշայի հրամանը բերած սպայի հետ:

— Երդվում եմ, ես առաջ այնտեղ ոչ մի գերեզման չեմ տեսել... Չեմ կարողանում հասկանալ, թե դա ինչպես է տեղի ունեցել:

— Ա՛խ, այդ դերեզմանները... մենք շատ շարշարվեցինք դրանց պատճառով:

— Չարշարվեցի՞ք... Ինչպե՞ս դա հասկանալ:

Սպան ժպտաց և շրթունքը կծեց, ապա նայեց շորս կողմն ու ասաց.

— Ամբողջ երկու գիշեր քարե սալերը տեղափոխում էինք մոտակա գյուղերի գերեզմանոցներից ու տեղադրում այս բլրին: Չեզ մեղադրում են մահամեղականների շիրիմները պղծելու մեջ: Եթե դուք տեսնեիք, թե մենք ինչքա՛ն շիրիմներ ոչնչացրինք, որպեսզի տապանաքարերը քարշ տանք այստեղ:

— Բայց ինչի՞ համար է այդ ամբողջ կատակերգությունը:

— Մոտուլում բոլորը խոսում են, որ դուք գիտեք այստեղ թաղված ոսկե գանձերի մասին, դրա համար էլ պեղումներ եք կատարում: Այդ իմանալով, փաշան որոշել է ազատվել ձեզնից: Նա ինքն է ուզում սկսել որոնումները...

Նախքան Լեյարդը կորոշեր, թե ի՛նչ է պետք ձեռնարկել, գործն անսպասելիորեն ինքն իրեն լուծվեց: Թուրքական կառավարությունն իմացավ գավառական բռնակալի սանձարձակությունների մասին և նրան բանտ նետեց:

Հիմա Լեյարդը կարող էր նորից ձեռնամուխ լինել պեղումներին:

Մի անգամ առավոտյան, երբ նա դուրս եկավ վրանից ու գնաց դեպի փորվածքը, բանվորները հանկարծ սկսեցին թափահարել բահերը և բարձրաձայն բղավել: Երկու արաբ ցատկեցին ձիերի վրա ու քառատրոփ մոտեցան նրան:

— Շտապիր, օ՛, բեյ, շտապիր: Փորոզները գտան ներքովթին: Օ՛, ալլահ: Դա խելքին մոտ բան չէ, բայց դա ճիշտ է... Մենք նրան մեր աչքով տեսանք: Ի՛լ ալլա՛հ...

Այդ բղավելով, նրանք սլացան Մոսուլի ուղղությամբ: Լեյարդը վազեվազ մոտեցավ փորված խանդակին: Հողի տակից դուրս էր ցցվել ալեբաստրե մի հսկայական մարդկային գլուխ: Միայն այդ գլուխը ալեի մեծ էր, քան բնականոն հասակով մարդը, և, ինչպես հետո պարզվեց, կսլած էր թևալ՞որ առյուծի իրանին: Քանդակը հիանալի էր պահպանվել: Մորուքավոր դեմքի արտահայտությունն ապշեցնում էր վեհապանձ հանգրստությամբ, իսկ մանրամասների մշակումը վկայում էր հին արվեստագետի այնպիսի նրբին վարպետության մասին, որ հազվագեպ է հանդիպում նման քանդակներում:

Ներքովթին՝ «աշխարհի ամենափառապանծ որսորդին» և Նինվեի հիմնադրին գտնելու լուրը շատ արագ տարածվեց սնտոփապաշտ արաբների մեջ: Շուտով բլրին ամբոխվեցին մոտակա գյուղերից վազեվազ եկած մարդիկ: Նրանք խոնվեցին խանդակի կզրին և սարսափով դիտում էին ալեբաստրե հսկայական գլուխը:

Լեյարդը շեյխերից մեկին դժվարութեամբ համոզեց իջնել խանդակը և հավաստիանալ, որ դա ընդամենը քարե քանդակ է:

— Մե՛կ է,— բացականչեց շեյխը,— սա ոչ թե մարդկանց ձեռքի գործն է, այլ այն պիղծ հսկաների, ում մասին մարգարէն, հանգիստ նրա ոսկորներին, ասել է, թե նրանք ամենաբարձր արմավենուց էլ բարձր են եղել: Սա մեկն է այն կուռքերից, որոնց Նոյը, հանգիստ նրա ոսկորներին, նզովել էր շրհեղեղից առաջ:

Ավագի խորհրդով Լեյարդը տոնախմբութուն կազմակերպեց գտածոն նշելու համար: Նա հրամայեց մի ցուլ մորթել ու թափառական նվագածուներ վարձեց: Բոցկլտացող խարույկների վրա շամփուրներով միս էին խորովում: Ճղավում էին շվիները, թնդում դափերը, անապատի երջանկացած զավակները մինչև առավոտ երգում, պարում ու հրճվալից աղմկում էին:

Գտածոյի մասին կայծակնային արագութեամբ իմացան Մոսուլում: Քաղաքն ալեկոծվեց, շուկան լցվեց գրգռված ամբոխներով: Տեղի դադիներն ու մուֆտիները շտապեցին թուրք փաշայի մոտ, որպեսզի հանդիսավոր բողոք հայտնեն Ներքովթին հողի տակից հանելու դեմ, քանզի դա հակասում էր Ղուրանի օրենքներին: Նոր նահանգապետ Իսմայիլ փաշան Լեյարդին կանչեց իր մոտ և խորհուրդ տվեց որոշ ժամանակ դադարեցնել պեղումները, մինչև որ բնակչութունը խաղաղվի: Այդ պատճառով անգլիացին թողեց միայն երկու բանվոր և իր որոնումները կատարեց թաքուն, ավելի դանդաղ թափով:

Ժամանակի ընթացքում, երբ զայրույթը հանդարտվեց, Լեյարդը վարձեց ևս մի քանի բանվոր և սկսեց բլուրը պեղել տարբեր մասերում: Արդյունքները շտապեցին երկար սպասել: Կարճ ժամանակում հողի տակից հանվեցին մարդու գլխով վաթսուն թևավոր ցուլեր ու առյուծներ: Այդ հրեշներից մի քանիսը հնգական ոտքեր ունեին: Սկզբում Լեյարդը չկարողացավ հասկանալ, թե ինչու է այդպես: Բայց մի անգամ թևավոր ցուլի մոտով անցնելիս նա ապշած կանգ առավ: Ցուլը ցնցվեց և մի քայլ առաջ գնաց: Դա տեսողական խաբկանք էր, որ հարուցել էր այդ հինգերորդ ոտքը: Ցուլերը, երևի, հսկել են պալատի մուտքը և այդ ձևով պետք է մարդկանց մոտ սնտտի վախ առաջացնեին:

Իր նոթերում այդ արձանների մասին Լեյարդը գրել է.

Քսանեինգ հարյուրամյակ նրանք թափնված էին մարդկանց աչքերից և անա հիմա կրկին կանգնած են մեր առջև՝ իրենց հնօրյա վեհության ամբողջ փայլով: Բայց ինչպե՞ն է շրջապատում ամեն ինչ փոխվել: Այնտեղ, ուր երբէք, շեղութեան մեջ, ծաղկել է մեծագուր մի ժողովրդի քաղաքակրթությունը, հիմա մենք անհուն ենք աղքատություն և կիսաբարբարոս ցեղերի խավարամտություն: Որտեղ առաջ վեր են խոյացել հոյակերտ մեհյաններ ու կյանքը

եռացել է հարուստ, մարդաշատ բաղաժնեքում, նիմա լոկ ավերակներ են ու տձև բլուրներ: Այս արձանների պահպանած ապարանների ընդարձակ դահլիճների վրա հիմա դանդաղ բայում են գուքտնին լծված եզները, և խշշում են արտերը: Ազիպտոսը կարող է հպարտանալ նույնքան հին և ոչ օլախա վեճաբանչ կոթողներով, բայց եզիպտական հուշարձանները միշտ եղել են մարդկանց աչքի տուաչ, ազդարարելով իրենց հայրենիքի փառքի և եզարուքյան մասին: Իսկ մեր օուղև կանգնած արձանները հենց նոր հայանվեցին մոռացուքյան խավարից...

Երկու տարվա ընթացքում Լեյարդը բացեց մ. թ. ա. IX և VII դարերի միջև ընկած ժամանակաշրջանում ասորեստանյան թագավորների կառուցած հինգ պալատ: Պեղված առաջին շինությունը, ինչպես հետագայում հաստատվեց, Ասորեստանի՝ մ. թ. ա. 885—859 թվականներին դահակալած Աշուրնասիրպալ II թագավորի նյալատն էր: Միայն մեկ առումով Լեյարդը հուսախարություն ապրեց՝ ներքովթի բլուրը թաքցրել էր ոչ թե նինվեի, ինչպես ինքն էր ենթադրում, այլ Քալաք քաղաքի փլատակները:

XIX դարի կեսին հնագիտությունը տակավին գիտություն չէր բառի բուն իմաստով: Այն ժամանակ դեռևս չկային պեղումների խստիվ գիտական եղանակներ: Այժմյան հնագետները բոլոր գտածոները շափում և լուսանկարում են այն վայրերում, որտեղ դրանք գտնվում են, որովհետև իրերի տեղադրությունից և այն բանից, թե դրանց ինչեր են շրջապատում, հաճախ կարելի է պատմական զգալիորեն ավելի կարևոր տեղեկություններ ստանալ, քան բուն գտածոներից: Երբեմն որեէ բեկոր կամ ուլունք կարող է ավելի շատ տեղեկություններ տալ, քան խոշոր քանդակը, այդ պատճառով հնագետները ջանադրաբար մաղում են ավազը, հողը, հավաքելով ամեն բան, նույնիսկ մանրագույն մնացորդները: Հմտորեն կատարված վերականգնման ու պահածոյացման շնորհիվ առանձին բեկորներից վերստին ծնվում են հույակապ սկահակներ կամ արձանիկներ, իսկ այն առարկաները, որոնք կարող են փշրվել, ամրացնում են քիմիական միջոցներով:

Լեյարդի կիրառած եղանակները գիտության նույնիսկ այն ժամանակվա մակարդակի պայմաններում շափազանց կոպիտ, կործանարար էին: Ընկած լինելով զգայացղենց գտածոների հետեից, որոնք կարող էին իրեն փառք բերել, նա պալատի պատերից պոկում էր ալեբաստրե սալերը, առանց հետազոտելու հողածածկ անում ավերակների առանձին հատվածներ, իրաք խառնելով խեցեբեկորներն ու աղյուսի կտորտանքը, իսկ սեպագիր սալիկներին գրեթե ուշադրություն չէր դարձնում: Ուստի զարմանալի չէ, որ ասուրական նյութական մշակույթի բազմաթիվ արժեքավոր նմուշներ՝ զենք ու ոսղմի հանդերձանք, ապակե և բրոնզե

ամանեղեն, սկահաղիներ և արվեստի այլ ստեղծագործություններ, ոչնչացվել են քլունդների ու բահերի հարվածներից:

Ներքուլթի բլրում պեղումները շարունակվեցին մոտ երկու տարի: Այդ ժամանակամիջոցում Լեյարդը շարունակ կոնդոն էր առաքում մանր դրածոներ: Սակայն դերջում նա համարձակ որոշում ընդունեց՝ ուղարկել երկու թեև փոքր, բայց ավելի լավ պահպանված մարդու գլխով թևավոր հրեշներ: Գրա համար Մոսուլում շինել տվեց ամրապինդ անիվներով մի հսկայական հենահարթակ: Գոմեշներ լծած ծանր սայլը, որ հրում էին արաբները, մոտեցավ բլրին: Ճոպանների ու լծակների օգնությամբ վիթխարի կոթողները դրեցին հենահարթակին:

Մինչ այս, մինչ այն վրա հասավ գիշերը, և դուրս եկավ լիալուսինը: Լուսնի լույսի տակ ճերմակ, հեկայական թևավոր հրեշները նայում էին իրենց անծանոթ աշխարհին, ասես քնից նոր արթնացած: Լուսաբացին սկսվեց դրանց փոխադրումը գետի ափը, ուր արդեն սպասում էին լաստերը, որոնց ջրի երեսին էին պահում օդով լցված վեց հարյուր տիկեր: Արաբների ցնծալից գոռում-գոչյունի և անիվների ճոռոցի ուղեկցությամբ ծանրաշարժ սայլը ցնցվեց ու շարժվեց դեպի գետը:

Արշավը գլխավորում էր ինքը Լեյարդը: Նրա հետևից պարաբայլ՝ գնում էին նվազածուները, դժոխային աղմուկ ստեղծելով իրենց շվիներով ու դափերով: Հենահարթակը քարշում էին երեք հարյուր արաբներ, որոնց շտապեցնում էին պահնորդները: Նրանց հետևից ամբոխվել էին կոկորդով մեկ բղավող կանաչք ու երեխուսները: Եվ այդ մրջնանոցում պտտվում էին արաբ ձիավորները, տարուբերում իրենց նիզակները, շտապեցնում հենահարթակը քարշող բանվորներին:

Լաստերին, իսկ հետո նավին բարձած քանդակները բարձհաշող հասան Կոնդոն:

Լեյարդը հայտնաբերում է կործանված Նիմֆեն

Ներքուլթի բլրում պեղած գտածոները ուղարկելով Կոնդոն, Լեյարդը վերադարձավ Կոստանդնուպոլիս, ուր երան սպասում էին հետախուզական ծառայության նոր առաջադրանքներ: Միայն երկամյա ընդմիջումից հետո, այսինքն 1849 թվականին նա կրկին հայտնվեց Մոսուլում: Այս անգամ նա պեղումները սկսեց Քուլունջիքի բլրում, շատանվելով այն բանից, որ ժամանակին Բոտան ապարդյուն որսնումներ էր կատարել այնտեղ:

Եվ դարձյալ նրա բախտը պարզապես անհավատալիորեն բերեց: Արդեն առաջին իսկ օրերին փորվածքը դեմ առավ ինչ-որ շինության հաստ պատերի: Ավազի և խճաքարի հսկայական փլվածքների տակից

նախ երևացին վիթխարի շքամուտքեր և դրանք հսկող մարդու գլխով թևավոր հրեշներ, ապա դահլիճներ, սենյակներ, միջանցքներ, գավիթներ: Հարթաքանդակներով ալեբաստրե սալերը, ծոփորները, սև, դեղին և երկնագույն հախճասալիկներով երեսապատված պատերը վկայում էին շինության նախկին շքեղության մասին և կասկածի տեղ չէին թողնում, որ դա ասորեստանյան թագավորների պալատ է:

Փլատակները կրում էին հրդեհի և բարբարոսական ավերածության ակնհայտ հետքեր: Միահարված և կտոր-կտոր արված ալեբաստրե սալերն ընկած էին գետնի երեսին, այս ու այնտեղ երևում էին ածխացած փայտի մնացորդներ: Հաստ պատերն անգամ չէին դիմացել անհայտ ավերիչների վայրագությանը: Այդ ավերածություններն ավելի քան պերճախոս էին. դաժան պայքարից հետո թշնամական զորքերը գրավել են պալատն ու դրան հարած քաղաքը, ամբողջ բնակչությանը սրի են քաշել, քաղաքն ավերել:

Սակայն կրակն ամեն ինչ չէ, որ ճարակել էր: Փլատակներում լեյարդը գտավ արվեստի բազմաթիվ ստեղծագործություններ՝ հարթաքանդակներ, արձանիկներ, կնիքներ, սեպագիր սալիկներ: Այդ առարկաներից առանձնահատուկ ուշադրության է արժանի հին քանդակագործության գլուխգործոցը՝ վիրավոր էգ առյուծ պատկերող հարթաքանդակը: Երեք նետով խոցված առյուծը մոնչում է հուսահատ ու անզոր կատաղությամբ, գետնի վրա քարշ տալով հետևի անդամալույծ վերջույթները: Քանդակը ոչ միայն վկայում է հեղինակի կողմից անատոմիան իմանալու մասին, այլև բացառիկ ռեալիստականությամբ, արտահայտման ուժով, որին միայն ոգեշնչված դերասանն է ընդունակ, իր վրա է բեռում մարդկանց հայացքը: Թեև գազանի վահապանձ գլխին արդեն ընկել են մահառաջի թախծի ստվերները, պրկված մկաններում զգացվում է նրա ապրելու ջերմ, տարերային, սարսափազդու ցանկությունը: Սալի վրա այդ դրամատիկ տեսարանը պատկերելով, հին վարպետն օգտագործել է առյուծի լակոնիկ, գրեթե ոճավորված մարմնաձևեր, տեսարանի հորինվածքը չափազանց ներդաշնակ է:

Առաջ ջարժվելով դեպի Քույունջիք բլրի խորքը, լեյարդը երկու արտասովոր սենյակ հայտնաբերեց: Դրանց հատակը ծածկված էր ամենաատարբեր ձևի և գույնի կավե բեկորների կեսմետրանոց շերտով: Ավելի ուշադիր զննելիս պարզվեց, որ աղբի շերտի տակ գտնվում են շարդված սեպագիր սալիկներ: Լեյարդն իսկույն հասկացավ, որ չափազանց կարեւոր հայտնագործություն է արել: Կասկած չկար, որ այդ սենյակներում գտնվել է ասորեստանյան թագավորների գրադարանը, մարդկային պատմության մեջ ամենահին գրադարանը: Կավե հազարավոր սալիկները, որ երբևէ շարված են եղել թարեքներին, իսկ հիմա շարդված, թափված էին հատակին, անգնահատելի գանձ էին, գուցե, Միջագետքի

ամբողջ պատմութիւնը բովանդակող գանձ: Լեյարդը բեկորները բահերով լցնել տվեց արկղերի մեջ և ուղարկեց Լոնդոն: Լոնդոնում, Բրիտանական թանգարանի նկուղներում, սալիկները սպասեցին այն գիտնականին, ով կկարողանար կարգալ դրանք:

Կատարված պեղումները հաստատեցին Լեյարդի սկզբնական ենթադրութիւնը, որ ինքը հայտնաբերել է Ասորեստանի կործանված և վաղուց որոնվող մայրաքաղաք Նինվեն: Պեղված պալատը կառուցել էր ինչպես ապացուցեցին հետագա հետազոտութիւնները, Սինաքերիբ թագավորը, որը գահակալել է մ. թ. ա. 704 թվականից մինչև 681 թվականը:

Սակայն ամենակարևոր գտածոն գրադարանն էր, որտեղ կար երեսուն հազար սեպագիր սալիկ: Գրադարանի հիմնադիրն էր Ասորեստանի ամենազորեղ թագավոր, Շումերի, Ասորեստանի և Բաբելոնի գրավոր հուշարձանների սիրահար ու հավաքող Աշուրբանիպալը (մ. թ. ա. 669—626 թվականներ), իր ժամանակի առավել լուսավորյալ մարդկանցից մեկը: Բոլոր անհրաժեշտ վավերագրերը իր պալատում ժողովելու համար նա պատճենահանողների մի ամբողջ բանակ է ստեղծել, նրանց ուղարկել երկրի տարբեր կողմերը և, նամակագրութիւն պահպանելով նրանց հետ, ղեկավարել որոնումները: Այդպես է նա ստեղծել գրադարանը, որը պահպանվել է մինչև մեր ժամանակները և մեզ տվել ասուրաբաբելական պատմութեան բանալին:

Երբ սեպագիրը վերծանվեց, գիտնականների ձեռքն ընկավ հին ժողովուրդների մասին գիտելիքների մի անհատնում գանձարան՝ քաղաքական տրակտատներ և դիվանագիտական գրագրութիւն, զործնական հաշիվներ և աստղագիտական աշխատութիւններ, ավանդութիւններ, առասպելներ, կրոնական հիմներ և բանաստեղծական ստեղծագործութիւններ, որոնց մեջ էր գտնվում նաև մարդկային պատմութեան մեջ հնագույն վիպերգութիւնը:

Ասորեստանյան պետութիւնը, որի մայրաքաղաքը սկզբում Աշուրն էր, իսկ հետո Նինվեն, ստեղծվել է Բաբելոնի ավերակների վրա, մ. թ. ա. 1250 թվականին: Թվատպալասար III-ի (մ. թ. ա. 745—727 թվականներ) գահակալութեան ժամանակ Ասորեստանը դարձել է ռազմական մեծ պետութիւն, իսկ հզորութեան գագաթնակետին է հասել Աշուրբանիպալի օրոք: Նրա մահից հետո պետութիւնը, որը հենվում էր նվաճված ժողովուրդների դաժանագույն կեղեքման վրա, սկսել է ներսից կազմալուծվել: Դրանից օգտվել են քաղղեացիները: Իրանական ցեղերի հետ դաշնակցած, նրանք գրավել են Բաբելոնը և ստեղծել նոր Բաբելոնյան պետութիւնը: Ասորեստանի թագավորը զավթիչների դեմ մի բանակ է ուղարկել Նաբոպալասարի առաջնորդութեամբ: Սակայն Նաբոպալասարը, որ ժագումով քաղղեացի էր, անցել է թշնամու կողմն ու Բաբելոնի քրմերի և ավագանու օգնութեամբ իրեն թագավոր հռչակել:

Մարերի հետ դաշնակցած, նա մեկը մյուսի հտեից հաղթանակներ է

տարել ասորեստանցիների նկատմամբ և, վերջապես, մ. թ. ա. 612 թվականին գրավել ու կործանել է Նինվեն:

Ասորեստանյան պետությունը փաստորեն դադարել է գոյություն ունենալ մ. թ. ա. 605 թվականին, Եփրատի ափին գտնվող Կարթեմիշ քաղաքի մերձակայքում տեղի ունեցած ճակատամարտից հետո:

Հնագույն ավանդապատումն այսպես է նկարագրում Նինվեի գրավումը.

Խորտակիչ կռան բարձրացավ քա վրա, Նինվե: Փողոցներով սլանում են մարտակառվերը, դղրդում հրապարակներում: Նրանցից լույս է հորդում, ինչպես հրդեհներից: Նրանք շողշողում են փայլակների պես: Զրարգելակները բացվում են, ապարանքը փարուփանդ է լինում: Վերցրե՛ք ոսկի, վերցրե՛ք արծաթ, չէ՞ որ այստեղ անհաշիվ արծեֆներ կան ու ամեն տեսակ բազում գույք: Նինվեն ավերված է, ոչնչացված, դատարկված: Վա՛յ արյան մեջ սուզվող ֆաղափին, որտեղ շատանում են նենգությունն ու սպանությունները, չի դադարում թալանը: Լսվում են խաբազանների շրխկոցներ, անիվների դղրոց, ձիերի վրնջյուն և սուռացող մարտակառվերի որոտ:

Հրդեհից սևացած ու արյամբ հեղված ավերակներում տիրել է մահվան լուռություն: Մրրիկների բերած ավազը, փարթամորեն աճած մուխոտերը ծածկել են տեսանելի վերջին հետքերը:

Այն ժամանակից ի վեր Ասորեստանի հզոր մայրաքաղաքը քսանհինգ դար անհետացել է հողի հաստ շերտի տակ, և միայն 1849 թվականին Լեյարդը բացեց նրա խարխլված, բայց տակավին փառահեղ պատերը:

1854 թվականին Լոնդոնի Բյուրեղապակյա պալատում անգլիացի հնագետը կազմակերպեց իր գտածոների ցուցահանդեսը: Բրիտանացիները տեսան աստվածաշնչական Նինվեի հարստություններն ու շքեղությունը: Անծպտուն զարմանքով նրանք դիտում էին վերականգնված սենյակները, արարողությունների դահլիճները, ասորեստանյան թագավորների արձաններն ու հարթաքանդակները, իսկ ամենից առաջ այնպիսի բազմագույն ջնարակապատ աղյուսներից շարված պատը, որը չի կիրառվել հնագարյան որևէ այլ ճարտարապետության մեջ:

Շումերները ներխուժում են պատմության մեջ

Շումերների պատմությունը հիմա մենք բավականաչափ լավ գիտենք: Հնագետները հարավային Միջագետքում բաց արեցին քաղաքներ, պալատներ և տաճարներ, իսկ շումերերեն գրված, առանց որևէ դժվարու-

թյունների ընթերցվող սեպագիր սալիկները մեզ հաղորդում են նրանց բուն կյանքի նորանոր մտնրամասնություններ:

Բայց դեռևս XIX դարի կեսին, երբ արդեն բավական շատ բան էր հայտնի ասորեստանցիների ու բաբելոնացիների մասին, գիտնականները նույնիսկ պատկերացում չունեին, որ այդ ժողովուրդներին նախորդել է շումերների զգալիորեն ավելի հին և ոչ պակաս հարուստ մշակույթը: Հետաքրքիր է, որ Միշագետքի հեռավոր ժամանակաշրջանում դրա գոյության մասին առաջին ազդանշանները տվեցին ոչ թե պատմաբանները, այլ լեզվաբանները: Նրանք գտան նախկինում անհայտ այդ ժողովրդի հետքը, մտորելով բևեռագրի որոշ առանձնահատկությունների մասին:

Արտածման, այսինքն հետևությունների ճանապարհով կատարվող հայտնագործություններն այնքան էլ հազվադեպ երևույթ չեն: Այդպիսի հայտնագործությունների շնորհիվ գիտությունը հաճախ հասել է բացառիկ հաջողությունների, որոնք դարձել են նրա իսկ զարգացման բեկումնային գործոններ: Դա ավելի լիակատար պատկերացնելու համար հիշեցնենք նման ճանապարհով կատարված ամենանշանակալից հայտնագործությունները:

Հարյուր տարի առաջ աստղագետները համոզված էին, որ Արեգակնային համակարգում կա յոթ մոլորակ, որոնցից Ուրանը Արեգակից առավել հեռավորն է: Հաշվարկելով ուղեծիրը, որով, ըստ համաշխարհային ձգողականության օրենքի, պետք է շարժվեր Ուրանը, գիտնականները զարմանքով նկատեցին, որ քմահաճ մոլորակը, չգիտես ինչու, չի ուզում ընթանալ այդ ուղիով: Առաջին հայացքից թվում էր, թե նրա շարժման մեջ եղած շեղումները հարցականի տակ են դնում աստղագետների կողմից որպես անսասան ճշմարտություն ընդունված ձգողականության օրենքը: Սակայն ավելի հավանական էր մեկ այլ հնարավորություն, այսինքն, որ Արեգակնային համակարգի սահմանում թաքնվում է դեռ չհայտնաբերված ինչ-որ մոլորականման մարմին, որն էլ հենց Ուրանի շարժման մեջ խոտորումներ է առաջացնում:

Այդ ենթադրությունը ելակետ ընդունելով, երիտասարդ մաթեմատիկոսներ, ֆրանսիացի Լևերիեն և անգլիացի Ադամսը, մեկը մյուսից միանգամայն անկախ, կատարեցին մաթեմատիկական խիստ բարդ հաշվարկներ և ցույց տվեցին այն տեղը, ուր պետք է գտնվեր միջմոլորակային խոտորումների մեջ մեղավոր խորհրդավոր մարմինը: Նրանց աշխատանքը պսակվեց լիակատար հաղթանակով. գիտնականներն աստղադիտակներն ուղղեցին դեպի ցույց տրված կետը և գտան նեպտուն մոլորակը:

Ավելին: XIX դարի սկզբին պարզվեց, որ եթե նույնիսկ հաշվի առնվի նեպտունի ազդեցությունը, Ուրանի շարժումը դարձյալ մինչև վերջ հասկանալի չէ: Ինչ-ինչ պատճառներով նա, այնուամենայնիվ, հաշվարկված ուղեծրից ավելի էր շեղվում, քան պետք էր: Ամերիկացի աստղագետ

Փերսիվալ Լովելը ենթադրութիւն հայտնեց, որ դրանում մեղավոր է ևս ինչ-որ մոլորակ, և հաշվարկեց նրա հնարավոր դիրքը Արեգակնային համակարգում: Սակայն այս անգամ պարզվեց, որ դրույթի ստուգումն այնքան էլ հեշտ գործ չէ, որովհետև խոսքը Արեգակից վիթխարի հեռավորութեան վրա գտնվող մոլորակի մասին էր: Միայն 1930 թվականին հաջողվեց միլիոնավոր աստղերի մեջ գտնել նրան: Այն անվանվեց Պլուտոն:

Գիտական արտածման եղանակով կատարված ամենահանճարեղ հայտնագործութեան օրինակը տվել է քիմիան: Ռուս մեծ գիտնական Դմիտրի Իվանովիչ Մենդելեևը 1869 թվականին հրապարակեց մի աղյուսակ, որտեղ վաթսուներեք տարր էր տեղադրել իրենց ատոմական կշիռների համաձայն:

Մենդելեևի հայտնագործութեան հանճարեղութիւնը գլխավորապես այն էր, որ ատոմների կառուցվածքի իր հայտնաբերած որոշ օրենքների հիման վրա նա կանխագուշակեց տակավին չհայտնաբերված այլ տարրերի գոյութիւնը և դրանց համապատասխան տեղ հատկացրեց իր աղյուսակում: Գիտութեան զարգացմանը զուգընթաց աղյուսակի դատարկ վանդակները աստիճանաբար լրացվեցին նոր հայտնաբերված տարրերով: 1950 թվականին գտնվեց հարյուրերորդ տարրը՝ ցենտուրիումը, որոշ ժամանակ անց դրանց ավելացան ևս երեքը:

Նման մի բան տեղի ունեցավ մարդաբանութեան մեջ: Գերմանացի բնախույզ Հեկկելը, հիմնվելով էվոլյուցիայի տեսութեան վրա, ենթադրութիւն արեց, որ բնութեան մեջ մի ժամանակ պետք է միջանկյալ օղակ գոյութիւն ունեցած լինի մարդանման կապիկների և մարդու միջև: Այդ դեռևս չհայտնաբերված արարածը նա անվանեց պիտեկանտրոպ: Եվ ահա 1892 թվականին հոլանդացի բժիշկ Դյուբուան ճավա կղզում գտավ ոչ այն է մարդու, ոչ այն է կապիկի ոսկորներ: Կմախքի գտնված մնացորդների շափումները դարձան այն բանի անվիճելի ապացույցը, որ պիտեկանտրոպը հիրավի գոյութիւն է ունեցել: Զարգացման տեսակետից նա ղգալիորեն ցածր է եղել մարդուց, բայց գերազանցել է մարդանման կապիկին: Մարդկային բանականութիւնը այս դեպքում էլ լուրջ հաղթանակ տարավ:

Այս փաստերի լույսի ներքո արդեն արտասովոր բան չի թվա, որ լեզվաբանները, ձեռքներին ոչ մի պատմական կամ հանածո ապացույցներ չունենալով, կարողացան շումերների գոյութեան մասին ճիշտ հետեւութիւն անել:

Ի՞նչ ձևով նրանք կատարեցին այդ հայտնագործութիւնը: Մենք արդեն գիտենք, որ ասուրա-բաբելերեն գրում սեպագէտ որոշ նշաններ ունեցել են պատկերագրի կամ նկարային գրի բնույթ, մյուսները՝ այբբենական կամ վանկային, այսինքն փոխակերպվել են հնչյունական նշանների: Մեկ համակարգում այդքան տարբեր տարրերի գոյակցութիւնը լեզվաբանների մեջ միտք հղացրեց, որ գրի այդ խրթին համա-

կարգը տևական ու դանդաղ զարգացման արդյունք է: Բազմաթիվ դա-
րաշրջանների սերունդների կողմից ներմուծված տարբեր տարրերն ավե-
լացել են, ինչպես տարեշերտերը ծառի բնի վրա:

Սեպագրում կարելի է տարբերել զարգացման երեք հիմնական փուլ: Մ. Թ. ա. շորրորդ հազարամյակում օգտագործել են այսպես կոչված պատկերագիրը: Դրա էությունն այն է, որ գրագիրները ավելի կամ պակաս իրապաշտորեն են նկարել տվյալ առարկան: Ժամանակի ընթացքում նրանք, ձգտելով պարզեցնել աշխատանքը, նկարը հանգեցրել են մի քանի անհրաժեշտ ուրվագծերի, այնպես որ այն դարձել է սխեմատիկ, ընթերց-
ման համար դժվարին նշան: Դրանք արդեն սոսկ պայմանական խորհրդ-
դանշաններ էին, որոնք, ինչպես, օրինակ, «թռչուն» կամ «ջուր» բառերը, կարող էր կարդալ միայն նա, ով անգիր էր արել դրանց նշանակությունը:

Մենք գիտենք, որ Միջագետքում փայտիկներով են գրել կավե խո-
նավ սալիկների վրա: Այդպիսի սալիկների վրա բոլորակ կամ ալիքաձև
գծեր քաշելը հեշտ չի եղել, և այս պարագան շատ է դանդաղեցրել գրելու
պրոցեսը: Այդ պատճառով որոշ ժամանակ անց նկարը դարձրել են ուղ-
ղագիծ, կլորությունների փոխարեն երևան են եկել անկյուններ: Այդպես
ծագել է գծային-հիերոգլիֆային գիրը: «Ցուլ» բառը գրելու համար հին
գրագիրը, օրինակ, օգտագործել է մի քանի գծիկներից բաղկացած խոր-
հրդանշան:

Վերջապես, գրելու պրոցեսը էլ ավելի հեշտացնելու համար դա-
դարել են ուղիղ գծիկները միացնել իրար, յուրաքանչյուրը դրոշմել են
առանձին, այնպես որ ամեն մի նշան բաղկացած է եղել մի խումբ առան-
ձին գծերից: Սալիկի խոնավ մակերեսին գրելիս ընդօրինակողը սկզբում
ուժեղ է սեղմել փայտիկը, և այն ավելի խորն է մտել կավի մեջ, իսկ
բուն գիծը քաշել է պակաս ջանք գործադրելով, այդ պատճառով գծերը
նմանվել են սեպերի:

Պատկերագրից սեպաձև նշաններին անցմանը զուգահեռ տեղի է
ունեցել զգալիորեն ավելի կարևոր ներքին էվոլյուցիա: Խորհրդանշան-
ները, որոնցով սկզբում պատկերել են առարկաների նմանակները, հե-
ռացել են իրենց բովանդակությունից և դարձել բացառապես կամ առան-
ձին վանկեր կամ այբուբենի առանձին տառեր պատկերող հնչյունական
նշաններ:

Ասուրա-բաբելոնյան արձանագրությունները կարգալու առաջին փոր-
ձերի ժամանակ ասուրագետները դեմ առան լանուծելի թվացող մի
առեղծվածի: Նկարային, վանկային և այբբենական գրի տարրերի ան-
սրամտությանական խառնաշփոթությունը ոչ միայն դժվարացնում էր ըն-
թերցումը, այլև հետաքրքրություն գրգռող մի հարց առաջ բերում՝ առհա-
սարակ ինչպե՞ս կարող էր այդօրինակ գիր ստեղծվել: Չէ՞ որ ոչ ոք
գիտակցաբար չէր բարդացնի այն և դժվարացնի ընթերցումը: Հարցի
պատասխանը շատ պարզ էր, այդ գրի առանձին տարրերը դնալով ավե-

լացիւ են աշխատես, ինչպէս մշակութային շեքտերն են առիւնը ստանալու հնարաւորութեան օրինակներուն: Այն ժամանակաշրջանում, երբ աստուրա-բարեւելներն գիրը գտնվել է հնչարանական նշաններէ զարգացման փուլում, հին գեղագիրները (գրագիրները) կամ իրենց պահպանողականութեան, կամ ալ պատճառներով նրանք առհասարակ են ավանդութեամբ պահպանուած նկարային որոշ խորհրդանշաններ, որոնք եղել են անցյալի մնացուկներ:

Աստուրա-բարեւելիան դարութեան հուշարձաններում անհրաժեշտ է շնչով շնորհակալութեամբ նկարային գրի մտքի արձանագրման այդ նախնական ձևերը մի օրինակ շատն: Դրանից անվերջի հետեւութուն էր բխում, որ աստուրեանցիներն ու բարեւելեանցիները չեն ստեղծել սեպագիրը, այլ արդեն բավական զարգացած տեսքով այն փոխառել են ուրիշ ժողովրդից: Գրիւտ արվեստը սաղմնավորվում է պատմական և մշակութային բազմադարյան զարգացման ընթացքում: Այստեղից հետևում էր, որ սեպագիրն ստեղծած, իսկ այնուհետև անհետ կորած ժողովուրդը պետք է հարուստ և զարգացած մշակութային ունեցած լինէր:

Սեպագրի վերածութեան արդյունքների հիման վրա լեզվաբանները պնդեցին, որ այդպիսի ժողովուրդ մի ժամանակ գոյություն է ունեցել թեև նրանց այդ պնդումը հնագիտական ոչ մի գտածոյով ապացուցելու չէր հաստատվել: Երանք այնքան համոզված էին իրենց ենթադրութեան իսկութեան մեջ, որ նույնիսկ անուն տվեցին այդ ժողովուրդին: Ոմանք նրան շումերներ էին անվանում, ոմանք էլ՝ արքայացիներ: Երկու անվանումներն էլ փոխառված են մի ընթացքով արձանագրութեանից, որտեղ սեմական Սարգոն թագավորն իրեն կոչում է «շումերների և արքայացիների թագավոր»:

Շումերների գոյութեան հարցը գիտական ենթադրութեանների ուղղությամբ մնաց ընդհուպ մինչև 1877 թվականը: Այդ տարի ֆրանսիական հյուպատոսական գործակալ էդնեստ դը Սարգելը Թելո կոչված տեղանքի մի մեծ բլրի ստորոտում գտավ մինչ այդ միանգամայն անհայտ ոճի արձանիկ: Գտածոն դը Սարգելի մեջ պեղումներ կատարելու միտք հղացրեց, թեև նախկինում նա երբեք չէր զբաղվել հնագիտութեամբ: Քայլ առ քայլ փորելով, նա հողի տակից հանեց քանդակներ, արձանիկներ, սեպագիր սալիկներ և միանգամայն յուրօրինակ զարդանկարով կավե ամանների կտորտանքներ: Բոլոր գտածոները նա խնամքով արկղավորեց և ուղարկեց Փարիզ, էովր:

Բազմաթիվ գտածոների մեջ էր նաև կանաչ դիրքիտե մի արձանիկ, որը պատկերում էր կազաշ քաղաքի թագավոր-քրմին: Իր ոճով արձանիկը հնագույնն էր այն ամենից, ինչ մինչ այդ գտնվել էր Միջագետքում: Ամենաշրջահայաց աստուրագետներն անգամ ստիպված էին ընդունել, որ քանդակը պետք է վերագրել մ. թ. ա. IV և III հազարամյակներին և, հետևաբար, այն ստեղծվել էր աստուրա-բարեւելական մշակութային սկզբնավորումից առաջ:

Այդ հայտնագործութիւնը գիտնականների մեջ հակադասական հուզմունք առաջացրեց: Հիմա արդեն ոչ ոք չէր կարող ժխտել, որ զբ Սարգեկը գտել է միջագետքյան նախամշակույթի գոյութեան ասպացույց և գրանով իսկ հաստատել շումերների գոյութեան մասին լեզվաբանների դրույթը: Ինչպես ավելի ուշ պարզվեց, Ֆրանսիացին Թելուցոս գտել էր ավերակները շումերյան կաթաղ քաղաքի, որը Միջագետքի պատմութեան մեջ վերջին քաղաք չէր կատարել և որոշ ժամանակ եղել էր Շումերի մշակութային կյանքի կենտրոնը:

Նույնիսկ այն բանից հետո, երբ գտնվեցին շումերական գրի նմուշներով սեպագիր սարկիւններ, որոշ ասուրագետներ չէին ուզում հավատալ այդ ժողովրդի գոյութեանը: Նրանք կարծում էին, թե գտնվել են պարզապես բաբելոնյան, միայն թե ավելի հնագույն, քան մինչ այդ էր հայտնի, մշակութի հուշարձաններ:

Շումերների գոյութեան դեմ միանգամայն աներևակայելի տեսութիւն առաջ քաշեց Ֆրանսիացի սեմագետ Հալեին: Նա պնդեց, թե շումերական արձանագրութիւններն, իբր, արհեստական լեզվի հատվածներ են, ժաժկագրի պես մի բան, որ բաբելոնացի քրմերը ստեղծել են գաղտնի գրագրութեան համար:

1880 թվականին որոշ քանակութեամբ միջագետքյան հինավուրց հուշարձաններ ընկան Մոսկվա: Դրանց մեջ էր նաև տարօրինակ նկարներով սեպագիր սալիկների մի հավաքածու: Ասուրագետները և համակապես Ֆրանսիացի հայտնի գիտնական Մենանտը, տեսնելով դրանց լուսանկարները, հայտարարեցին, որ այդ սալիկները կեղծարք են, որ մարդկային բովանդակ պատմութեան մեջ այդպիսի անհեթեթ դպրութեան չի եղել ու չէր կարող լինել:

Այդ դպրութեամբ հետաքրքրվեց ոուս ականավոր ասուրագետ Յիսայիլ Նիկոլսկին: Տքնաջան հետազոտութիւններից հետո նա հանդես եկավ ի պաշտպանութեան սալիկների և հայտարարեց, որ դրանք բովանդակում են սեպագրի հնագույն ձևերից մեկը, արդեն հիշատակված գծային-հիերոգլիֆական գիրը: Ավելին, գիտնականը կարողացավ կարդալ այդ հնագույն գրի մի քանի նշաններ:

Նրա հայտարարութիւնը լաճն բանավեճ առաջացրեց աշխարհի գիտական շրջաններում: Սակայն երբ մի քանի տարի անց Թելո ըլրում գտնվեցին մեծ քանակութեամբ սալիկներ, արդեն ոչ ոք չէր կարող կասկածել, որ ոուս գիտնականը հայտնաբերել է շումերների հնագույն դրույթութիւնը:

Սարգեկն իր պեղումները կատարեց 1877—1881 թվականներին: 1888 թվականից մինչև 1890 թվականն ընկած ժամանակամիջոցում ամերիկացիներ Պետերսը, Հայնեսն ու Ֆիշերը գտան շումերների կրոնական պաշտամունքի կենտրոն նիպուր քաղաքը, իսկ 1922 թվականին անգլիացի

լեռնարդ Վուլլին ապշեցուցիչ հայտնագործութիւններ արեց հնագույն Ուր քաղաքում:

Այդ քաղաքների ավերակներում գտնվեցին հոյակերտ վիթխարի տաճարներ, սկահակներ, քանդակներ, արձանագործութիւններով հուշաքարեր, սեպագիր սալիկներ, գեղարվեստական իրեր ոսկուց, արծաթից ու թանկարժեք քարերից: Տաճարների պեղված արխիվները հնարավորութիւն տվեցին քննելու շումերների պատմութիւնը ընդհուպ մինչև անցյալի ամենահեռավոր աղջամուղջը: Ավելի, Ֆար, Ուրուկ, էլ Օբեիդ և Ուր քաղաքներում պեղվեցին քարի դարի ժամանակների բնակավայրեր, հիմնված անհայտ ժողովուրդների կողմից, որոնք հարավային Միջագետքում են բնակվել շատ ավելի վաղ, քան այնտեղ հայտնվել են շումերները:

Այդ հայտնագործութիւնների շնորհիվ մեր գիտելիքները թափանցեցին հազարամյակների խորքը: Հիմա մենք գիտենք, որ դեռևս մեր թվականութիւնից հինգ հազար տարի առաջ Միջագետքի ցեղերը զբաղվել են անասնապահությամբ ու երկրագործությամբ և այնպիսի մարդաշատ քաղաքներ են կառուցել, ինչպիսիք են Ուրը, Լագաշը և Նիպուրը:

Ուր մի ժամանակ խշշացել են արմավեհների պուրակները

Բաղդադի և Պարսից ծոցի միջև ընկած ճանապարհի կեսին, Սփրատի այժմյան հունից տասնհինգ կիլոմետր հեռավորութեան վրա վեր է խոյանում Ուր քաղաքի վիթխարի ավերակներով մի բլուր: Շուրջբոլորը, ինչքան աչքն է կտրում, փռված են ամառի շիկավուն անապատն ու նոսր խոտով ծածկված տափաստանը: Տեղ-տեղ նշմարվում են իրաքցի ֆելահների կավածեփի խղճուկ խրճիթներ, որոնք իրենց ներկայութեամբ ասես էլ ավելի են սաստկացնում ամառութեան ճնշող զգացումը: Արևելքում երևում են Սփրատի ափի երկայնքով նեղ շերտով ձգվող արմավենիների մթին ուրվագծերը:

Անծայրածիր, նիրհուն լուսութեամբ համակված հարթավայր: Սպանիչ տապից օդը դողդողում, պեծին է տալիս: Ժամանակ առ ժամանակ հանկարծ փոշու ամպ է բարձրանում, կալնելով միայնակ ճամփորդի քիթն ու բերանը: Հաճախ օդատեսիլներ են հայտնվում, թվում է, թե լանդշաֆտի վրա ջրի պաղ հարթութիւն է տարածվում: Բայց շատ բան տեսած մարդը չի խաբվում բնութեան դավաճանական խաղերից, նա գիտի, որ շիկացած, այրված-մոխրացած հողն անհիշելի ժամանակներից ջրազուրկ անապատ է:

Դժվար է հավատալ, որ այդ անապատը մի ժամանակ սղել է խիտ բնակեցված երկիր, որ այդտեղ եղել են բաղմաթիվ քաղաքներ, հացա-

հատիկի, բանջարեղենի և մրգերի առատ բերք է հավաքվել, որ ծաղկել ևն գիտությունն ու արվեստը, բուռն թափով զարգացել են առևտուրն ու արհեստները: Սակայն ուղղաբերձ բլուրները, որոնց գագաթներին ավերակներ կան, ոչ մի կասկած չեն թողնում, որ այս դժբախտ հողը երբևէ, հեռավոր ժամանակներում հարուստ ու փառավոր երիտասարդություն է ապրել: Հիմա հնագետներն այդ հողի տակ գտնում են վիթխարի բերդապարիսպներ, ապարանքներ, տաճարներ, գրադարաններ, քանդակներ ու ազնիվ մետաղներից շինված թանկարժեք իրեր, որոնք վկայում են հնադարյան բնակիչների հանճարեղության, նրանց բարձր զարգացած մշակույթի, տիրակալների մեծազորության և այն մասին, որ այդ հողը մի ժամանակ առատ բերք է տվել:

Հազարամյակներ առաջ հարավային Միջագետքը եղել է Պարսից ծոցի հատակը: Հետո ծոցի ջուրը աստիճանաբար հեռ է քաշվել, ջրի տեղում լայնորեն տարածվել են ճահճուտները: Տիգրիս և Եփրատ գետերը անատոլիական բարձունքներից տիղմ են բերել, որը կիզիչ արևի տակ չորացել է և ճահճների ու եղեգնուտների մեջ վերածվել կենսալից կղզիների: Գետերում ու գետաբազուկներում վլստացել են ձկները, եղեգնուտներում բնադրել են թռչունները, բազմացած վարազները շինել են իրենց որջերը, կղզիներում կանաչ են կապել սննդարար պտուղներ տվող արմավենիները:

Լայնարձակ ամալի տարածությունների մեջ ընկած, փարթամորեն ծաղկող կյանքի այս անկյունը առաջին եկվորներին պետք է որ «ավետյաց երկիր» թվար: Տարեցտարի երկու գետերը դուրս են եկել իրենց ափերից, լայնորեն ողողելով շրջակա հովիտները: Օգոստոսին և սեպտեմբերին գետերը վերադարձել են իրենց հունը: Այդ շրջանում բարձրագիւր վայրերը արագ չորացել են արևադարձային տապում, հովիտներում միայն ճահճալճակներ են մնացել: Ճահճակալած հարթավայրերն այգիների ու բանջարանոցների վերածելու համար բավական էր սանձել բնությունը, ջրանցքներ կառուցել և ջուրը բաշխել ըստ անհրաժեշտության:

Առաջին բնակիչները հարավային Միջագետքում հայտնվել են հեռավոր, մեզ անհայտ նախապատմական ժամանակներում: Ուր քաղաքի փլատակներից յոթ կիլոմետր հեռավորության վրա գտնվող արաբական էլ Օբեիդ վայրի պեղումները ցույց են տալիս, որ արդեն քառի դարում այնտեղ լիարժեք կյանք է փթթել: Այնտեղ գտնվել են տղամածկի ու եղեգնաշեն խրճիթներ, ձեռքով, առանց բրուտի դուրգի օգնության պատրաստված կճուճներ, կայծքարե բրիչներ ու կացիններ, թրժակավե մանգաղներ, քարաշեն խորշեր, որոնց դռները բացվել ու փակվել են սոնիների օգնությամբ, մակույկներ, ձկնորսական կարթեր: Բնակիչները պահել են ընտանի կենդանիներ, հող են մշակել, զբաղվել ձկնորսությամբ: Քարե մաքոքները վկայում են, որ նրանց ծանոթ է եղել ջուլհակությունը:

Իբրև զարդեր նրանք օգտագործել են հրաբխային բազալիտ, խեցուց և թափանցիկ կվարցիտ շինված ուլունքներ, իսկ դատելով գտնված արձանիկներով, կիրառել են նաև դաջվածքը: Մինչև հիմա պարզված չէ այդ մարդկանց ծագումը: Գիտնականները ենթադրում են, որ նրանք եղել են աքքադացիների սեմական ցեղեր, որոնք հետո անհայտ պատճառներով գնացել են դեպի Միջագետքի հյուսիսային մասը և այնտեղ ստեղծել են իրենց պետությունը:

Շումերները զգալիորեն ուշ են հայտնվել հարավային Միջագետքում: Հնագիտական գտածոները վկայում են, որ նրանք այդ շրջանը գրավել են խաղաղ կերպով և հետզհետե ձուլվել են տեղացիներին, որոնք ավելի վաղ էին եկել: Շումերները հրաշալի երկրագործներ են եղել: Ծահիճները շտրացնելու և երաշտի ժամանակ ջուրը պահպանելու համար նախատեսված ջրանցքների համակարգը հենց նրանք են կառուցել:

Շումեր երկրագործի հմուտ ձեռքերի շնորհիվ Միջագետքի հողերի բերրիությունը զգալիորեն ավելացել է: Մեր թվականությունից առաջ երրորդ հազարամյակի մոտավորապես կեսին վերաբերող վավերագրերը վկայում են, որ գարու արտերը միջին հաշվով վաթսունվեցապատիկ բերք են տվել: Հույն պատմագիր Հերոդոտը գրում է, որ այնտեղ ցանվածից երկու հարյուր անգամ ավելի բերք են հավաքել: Հոմերոսի գլուխ Պլինիոս Ավագը հաստատում է, որ տարեկան երկու անգամ են հունձ արել, բացի այդ, աշորայի ցանքերը ոչխարների արոտատեղի են եղել:

Մեր թվականությունից առաջ երրորդ հազարամյակում հարավային Միջագետքը խիտ բնակեցված երկիր է եղել: Այդ են վկայում միմյանցից ոչ հեռու ընկած քաղմաթիվ քաղաքները: Դրանցից ամենախոշորներն էին Նիպուրը, Իսինը, Շուրոպակը, Ուման, Լագաշը, Ուրուկը, Ուրը և Էրիդուն: Երկրի հյուսիս-արևմտյան մասում ապրել են աքքադացիների սեմական ցեղերը: Երանց քաղաքներն են եղել Ակշահը (Փպիս), Միպարը, Բաբելոնը, Կուտուն, Կիշը և Աքքադը:

Շումերները, ինչպես որ մյուս բոլոր ժողովուրդները, սկզբում ապրել են տոհմական կարգերի սլայմաններում: Տեխնիկայի զարգացմանը զուգընթաց շումեր երկրագործը ստեղծել է ավելի շատ, քան կարող էր սպասել: Տոհմերի ազնուները յուրացրել են ազնուները: Նախնադարյան համայնքը աստիճանաբար քայքայվել է, վերածվելով դասակարգային հասարակության: Հնագիտական գտածոներն ամենահամոզիչ կերպով ապացուցում են, որ մեր թվականությունից առաջ արդեն երրորդ հազարամյակում դասակարգերի միջև խոր վիճ է առաջացել: Առանձին քաղաքների գլուխ են կանգնել աստվածայնության լուսապսակով շրջապատված քուրմ-թագավորները: Երանք քրմերի ու հարուստ վերնախավի հետ ապրել են շքեղ դրյալներում, շտեմնված պերճանքի մեջ, իսկ հողագործներն ու արհեստավորներն ավելի ու ավելի են վերածվել ստրուկների:

Շումերները շեն կաթողացել ճիավորվել մեկ միաձույլ պետության

մեջ: Չնայած նրանց միավորել են ընդհանուր մշակույթն ու կրոնը, նրանք մասնաձևաված են եղել բազմաթիվ քաղաք-պետությունների, որոնք տերնդհատ պատերազմել են միմյանց դեմ, ձգտելով զավթել լավագույն հողերը և մրցակիցներին պարտադրել իրենց գերիշխանությունը: Հենց այդ շրջանում էլ առաջանում է արքայադպրոցների հզոր պետությունը, որի թագավորն էր Սարգսնքա Հյուսիսային անավան ցեղերը միավորելով մեկ միասնական պետության մեջ, նա իր զորքերը վարել է իբար հեռ մրցակցազ շտակրական քաղաք-պետությունների դեմ, նվաճել դրանք ու ստեղծել Միջագետքում առաջին բնակալական միասնությունը: Սակայն անավան արքայադպրոցները արագորեն կուլ են դնացել հպատակեցված ժողովրդի ավելի բարձր զարգացած մշակույթին, ևստի շուտով Սարգսնքի միասնությունը շումերական պետություն է դարձել:

Որտեղի՞ց էին եկել շումերները և ժողովարդներն ո՞ր խմբին է պատք գասեղ նրանց: Գտնված ոսկորների ու գանգերի հետազոտությունը ցույց տվեց, որ նրանք հնդեվրոպացիների ճյուղավաղարժյունն են, իսկ լեզվաբանները որոշեցին, որ նրանց լեզուն մոտ է հարեթական լեզվախմբին:

Կան մի շարք տվյալներ, որոնք վկայում են, որ շումերները սկզբում լեոնական ժողովուրդ են եղել և, հավանաբար, եկել են իրանական բարձրավանդակից կամ արևելյան լեոնային շրջաններից: Վաղնշական ժամանակներում լեոնաբնակ ցեղերը աստվածներին զոհեր են մատուցել լեոնապարսիներին: Երևում է, որ շումերները ևս իրենց աստվածներին միշտ բնակեցրել են որևէ բարձունքում: Միջագետքում լեոներ չկային, ուստի շումերները, զատելի տեղանգայթը չխախտելու համար, հում ազյութից վիթխարի բարդեր են կառուցել, ոչոնք կոչվել են «զիկկուբասներ»: Շումերները իրենց աստվածների տաճարները կանգնեցրել են միայն այդ արհեստական սարերի հատած կատարին: Շումերական յուրաքանչյուր քաղաքում հոյանաբերվել է այդպիսի տեղադրման մեկ «զիկկուբաս»:

Ծակային այս ենթադրությունը չի համընկնում շումերների ավանգազրուցների հետ շումերները համառորեն կրկնել են, թե իրենք եկել են շոմի ալն կողմից: Հնագետները շեն բացատում այդ հնարավորությունը ևս, քանզի բազմիցս համոզվել են, որ շումերների բազմաթիվ, առաջին հայացքից միանգամայն անհավասարի թվացող ավանգազրուցներում ճշմարտության հաստիկ կու: Վերջիվերջո, շումերական մշակույթի հետքեր են գտնվել Աֆղանստանում, Բելուչստանում և նույնիսկ Միջագետքից երկուսուկես հազար կիլոմետր հեռու բնկած Ինդոսի հովտում: Ահա թե ինչու է գիտությունը համարում, որ շումերների ծագման հարցը մինչև այժմ չուծված չէ:

Ուր քաղաքի թագավորական դերերը աննկատ, որոնց մենք տեսնվին գլուխ կնչիրենք, գտնվեց խնամակար մի սաղ, այսպես կոչված «Ուրի գրո-

շակր»։ Ժամանակին այդ գտածոն մեծ սենսացիա առաջացրեց։ Դրոշակի վրա շումերները պատկերված են այնպիսին, ինչպիսին եղել են մեր թվականությունից առաջ երրորդ հազարամյակում։ Գտածոյի վրա մենք տեսնում ենք իր պալատականների հետ խրախճանք անող թագավորքրմին։ Ճոխ, պատմուճանի նման զգեստներ հագած մեծատոհմիկները ձեռքներում գավաթներ են բռնել։ Մեծ գլխի, լայն դեմքի և ցցված քթի շնորհիվ նրանք նմանվում են արաբների։ Ի տարբերություն ասորեստանցիների ու բաբելոնացիների, նրանք ոչ բեղ են կրել, ոչ էլ մորուք։ «Դրոշակի» ստորին մասում պատկերված են զոհաբերության կենդանիները, որոնց տանում են մորթելու, ինչպես նաև կապված ուղղաձիգներ և նիզակներով ու վահաններով զինված, գլխներին սաղավարտ դրած շումեր ուղղաձիգներ։ Այդտեղ պատկերված են նաև ավանակներ լծած մարտակառքեր։ Մինչև «դրոշակի» գտնելը կարծում էին, թե առաջինը ասորեստանցիներն են մարտակառքեր կիրառել։

Լաջվարդից և ոսկուց կերտված երկնաքերձ տաճարը

1922 թվականին անգլիացի հնագետ Լեոնարդ Վուլլիի գիտական արշավախումբն սկսեց արաբների կողմից «Կարասար» անվանված բլրի կանոնավոր պեղումները։ Այնտեղ թաքնված էին լուսնի աստված Նանարայի գլխավոր բնակատեղիի՝ Ուր քաղաքի վիթխարի փլատակները, աստված, որի տաճարը շուրջ երկու հազար տարի գտնվել է այդտեղ ու եղել շումերների, բաբելոնացիների և ասորեստանցիների երկրպագության առարկան։

Մի կողմ թափելով հազարավոր տոննա ավազ ու քար, արշավախումբը բացեց «զիկկուրատ» կամ «աստծո տաճար» կոչված հսկայական բուրգի հիմքերն ու փլված պատերը։ Խնամքով կատարված չափումները հնարավորություն տվեցին գրեթե բոլոր մանրամասնություններով վերականգնելու շինության տեսքը։ Այն ունեցել է վերևի մասում նեղացող երեք սանդղավանդ։ Բուրգի հատած գագաթին կանգնած է եղել տաճարը, դեպի որը երեք շարքով ձգվել են հարյուրական աստիճաններ ունեցող բարձր սանդուղքները։ Բուրգը շարվել է հում աղյուսներով և երեսապատվել թրծած աղյուսներով։

Չափումները շինության մեջ բացահայտեցին անսովոր շեղումներ ու անճշտություններ։ Յուրաքանչյուր հարկի պատերը ոչ թե ուղղահայաց էին, այլ թեթևակի թեք, նման միջնադարյան պատերին կամ շեպի։ Ավելին, դրանք ոչ թե ուղիղ գծեր էին ստեղծում, այլ հորիզոնական կերպով աղեղնաձև կորսցած էին դեպի մեջտեղը։ Գիտնականները վերըստեղծեցին բուրգի սխեման և հեշտորեն պարզեցին շեղումների իմաստը։

Միմյանց վրա կիտված ուղղանկյուն խորանարդներից կառուցված շինությունը պետք է թողներ ծանրանիստ, սառը ժայռի տպավորություն: Իսկ շինության քիչ թեք, գոգավոր պատերը ստեղծել են սահուն գծեր, որոնցով դիտողի հայացքը կարող էր ազատ սահել դեպի վեր և, վերջապես, կանգ առնել մեհյանի՝ ամբողջ շինության պսակի և նպատակի վրա: Ակնհայտ դարձավ, որ շումեր ճարտարապետները եղել են ոչ միայն հիանալի շինարարներ, այլև մեծ շինությունների հորինվածքի գաղտնիքները լավ իմացող նրբաճաշակ արվեստագետներ: Զարմանալի վարպետության մեջ նրանք կարողացել են կառուցներում միավորել վիթխարակերտությունն ու թեթևության և ներդաշնակության տպավորությունը:

Աղյուսների վրա մնացած ներկերի հետքերը հնագետներին օգնեցին պարզելու լրացուցիչ մանրամասնություններ. ներքևի երկու հարկերը ներկված են եղել սև, երրորդը, ամենաբարձրը՝ կարմիր գույնով, իսկ վերևում շողշողացել է տաճարի պատերի շափյուղագույն ջնարակն ու ոսկեջրած գմբեթը:

Ներկերը ոչ միայն զարդարման խնդիրն են լուծել, այլև ունեցել են աշխարհի կառուցվածքի մասին շումերների պատկերացումների հետ կապված որոշակի խորհրդանշական իմաստ: Սև գույնը մարմնավորել է հանդերձյալ, ստորգետնյա աշխարհը, կարմիրը՝ երկիրը, իսկ ծավին և ոսկին՝ երկինքն ու արևը:

Բուրգի պատերին եղել են հին ամրոցների հրակնատներ հիշեցնող նեղ ճեղքեր: Սկզբում ոչ մի կերպ չէին կարողանում պարզել այդ տարօրինակ անցքերի նշանակությունը: Բուրգն իրենից ներկայացրել է աղյուսներով լցված մի հոծ զանգված, հետևաբար, այդ ճեղքերը չէին կարող պատուհաններ լինել: Միայն տևական հետազոտություններից ու բանավեճերից հետո հնագետները եկան այն համոզման, որ անցքերն արվել են հարկերից ջուրը հեռացնելու համար: Բայց հարկերում ինչպե՞ս կարող էր ջուր հայտնվել, եթե Միջագետքում գրեթե երբեք անձրև չի տեղացել: Այդ հարցի պատասխանը ևս նվազ կարևոր հայտնագործություն չէր. շումերները սանդղաձևանդներում այգիներ են գցել: Բնական է, որ արևադարձային կլիմայի պայմաններում հարկ է եղել հաճախ և առատ ջրել ծաղիկներն ու ծառերը: Եթե ջրի ավելցուկը չհեռացնեին պատերի անցքերով, այն կարող էր սողողել հիմքը, և վաղ թե ուշ շինությունը կփլվեր:

Սեպագիր սալիկները լիովին հաստատեցին հնագետների ենթադրությունը: Արձանագրություններից մեկում Բաբելոնի թագավոր Նաբոնիդը հայտնում է, որ ինքը հրամայել է ճյուղերից մաքրել և կարգի բերել «Գիգ-պար-կա» տաճարը: Այդ ճյուղերի առեղծվածը պարզվեց, երբ որոշվեց տաճարի տեղը: Այն գտնվել է բուրգի ստորոտում, ուրեմն՝ անմիջականորեն հարկերի տակ, որտեղից անբարեխիղճ այգեպանները ցած են նետել կտրատված ճյուղերը, հոգ չտանելով, որ դրանք ընկնում են ներքևում գտնվող տաճարի տանիքին:

Շումերների կրոնական ծեսերի գլխավոր մասը Թափորներն էին: Դրանց ճախաթյունը, գունագեղությունն ու շուքը, երեփ, եղեյ են կեղեքվող ժողովրդին հնազանդության և խոնարհության մեջ պահելու միջոցներից մեկը: Թագազար-քուրմն իրեն կոչել է «երկրի վրա աստծո փոխանորդ», և նշան աջն բանի, որ ոչ թե նա, այլ աստված ինքն է տիրում երկրի հարստություններին: Երկրագործներն ու արհեստավորները պետք է հավատալին, որ իրենց աշխատանքի արդյունքների մեծ մասը աստծո փոխանորդին տալով, կրոնական պարտադիր ու բարեպաշտ պարտականություն են կատարում:

Հավանաբար, կախարդական բան է թվացել զիջվածքատի փառահեղ կառույցը: Արևի տակ փայլիլել է գլխադրույթ անառաքնացող բարձրաբերկ աշտարակի հարուստ գույների գամման՝ իրար վրա կիսված ճահատային մասի հարկերի սեն ու բոցագույնը, կախովի այգիները դժբուխ կանաչը և լաջվարդ ոսկեգույն տաճարը, որը երկնային բարձունքում միջօրեկ արևի տակ շողշողացել է ինչպես այլաշխարհի մի տեսիլք:

Տաճարը ոչ թե կրոնական ընդհանուր պաշտամունքի օջախ է եղել, այլ աստծո բնակատեղի, և հասարակ մահկանացուները այնտեղ մուտք չեն ունեցել: Նրանք լսկ ամբխվել են բուրգի ստորտառում, աստվածազայ երկյուղածությունը դիտելով կրոնական արարողությունների: Այն ժամանակ, երբ քրմերի երգչախումբը տավրդների, արինգների ու դափերի նվագակցությամբ հանդիսադեր հիմներ է նրգել, սանդուղքներով վերուվար է արել Թափորը՝ Թագազորը, քրմերն ու մեծատոհմիկները, հագած տոնական զգեստներ, որոնց վրա փայլատակել են ոսկին ու թանկարժեք բարերը: Նրանց գլխավերևում փողփողել են զորադրոշմեր, ծածանվել են նանարա աստծո խորհրդանշանները:

Թափորի մեծաջութությունը պետք է որ խորը ստուգվածքներ հնադարյան ժողովուրդների երեսակայությունն ու հիշողությունն մեզս Դրա հետ կապված գրույցները և այլաբանությունները վերագրել են թե՛ շումերներին, թե՛ վաղուց փլատակներ դարձած զիջվածքատիներին: Այդ արարողություն մասին հեռավոր հուշերի արտացոլումն է եղել աստվածաշնչական Հովակիմի երազը: Հրեշտակների թափարը, որ մերթ քարձրացել, մերթ ցած է իջել սանդուղքով, մի՞թե բուրգի աստիճաններին կատարված ծիսական երթի տեսարանը չէ: Աբրահամի ցեղերը Պարսում իրենց գերություն ժամանակներից սերնդեաերունդ փոխանցել են աջն և Հին կտակարանում յուրովի վերափոխել Հովակիմի սանդուղքի: Մինչև Վուլփի հայտնագործությունը ոչ ոք նախիրսկ չէր կապածում, որ աստվածաշնչական այլաբանությունը կապ ունի իրական իրադարձությունների հետ, և որ հրեշտակների ոտնդրը Թագսնում է հիմնավազց Շումերի վիթխարի բուրգերի գաղտնիքը:

Թաքնված գանձերն ու մոխրակույտերը

Ուր քաղաքի բուրգը միայնակ չի կանգնած եղել բաց թաքուժու-
թյունում: Այն շրջապատել են ավելի փոքր տաճարներ, տնտեսական
պահեստներ և քրմերի բնակելի տներ, ասեա ստեղծելով քաղաքի մի հա-
տուկ թաղամաս:

Այդ շինություններից իր վեհությամբ առանձնացել է Նտնարա աստ-
ծո կնոջը՝ Նինգալ դիցուհուն նվիրված տաճարը: Դա դահլիճների, մա-
տուռների, սրահների, գավթիների և բերդապարիսպների մի բարդ համա-
լիր է եղել, որ կառուցվել է հարյուրավոր տարիների ընթացքում և ծա-
վալվելով հասել պատկառելի չափերի:

Միջագետքի թագավորներն արտակարգ հոգ են տարել այդ տաճարի
մասին. շարունակ ինչ-որ բան բաժանել են, զարդարել, նորոգել, իսկ
երբ հին պատերը փլվել են, դրանց հիմքի վրա կառուցել են նոր, է՛լ
ավելի հոյակապ շինություններ: Նրանք շատ են հետևել նաև, որ չմոռաց-
վեն իրենց ծառայություններն ի փառս Նինգալ դիցուհու: Նրանց փառա-
սիրության շնորհիվ հիմա մենք վրտենք զրեթե այն բոլոր թագավորների
անունները, ովքեր այսպես թե այնպես նպաստել են տաճարի մեծաշու-
քությանը: Հնագետները նրանց անունները գտան աղյուսների, որմնա-
խորշերում դրված կավաշեն կոների, ծիսական բրոնզե արձանիկների
վրա, ինչպես նաև կարծր դիորիտից շինված խորշերում փորագրված,
որոնցում սոնիների վրա պատվել է տաճարի դարպասը:

Վուլլիի արշավախումբը բացեց մեկը մյուսի վրա կիսված մի քանի
հատակներ, իսկ ամեն մի հատակի տակ գտավ տաճարի զարգացման
որոշակի փուլի հետ կապված նվիրատու թագավորի անունը: Այդ կրջա-
նիկ պարագայի շնորհիվ կարելի էր ոչ միայն հեշտորեն հետևել շինու-
թյան շերտավորման հաջորդականությանը, այլև որոշել դրանց տարե-
թվերը, առնչել սեպագիր տեքստերից հայտնի պատմական որոշակի անց-
քերի հետ:

Պեղված շերտերից մեկում գտնվեցին մի ժամանակ տաճարում մո-
լեգնած հրդեհի հետքեր: Ավելին, հրդեհատեղում ընկած էին, հավանա-
բար, գիտակցորեն շարդուփշուր արված և դրանով իսկ պերճախոս կեր-
պով այն մասին վկայող սկահակներ ու ծիսական արձանիկներ, որ մի
ինչ-որ նվաճող է ոչնչացրել դրանք:

Ե՞րբ է տաճարը զոհ դարձել ներխուժման և ո՞վ է կատարել այն:
Հարցի պատասխանը ստացվեց բավական արտասովոր հանգամանքե-
րում: Տաճարի բակում կար հում աղյուսից շարված, սև քարե սալերով
կիսով չափ ծածկված մի ոչ բարձր գետնախարիսխ: Այդ հուշարձանի
մասին ամեն ինչ պարզ էր՝ սալերը մի ժամանակ եղել են գետնախարիսխի
երեսպատվածքը և շարվել են անհայտ բարբարոսների կողմից: Այն
բանից հետո, երբ բեկորները դրվեցին կողք-կողքի և մի ամբողջութուն

կազմեցին, պարզվեց, որ սալի վրա փորագրված է Բաբելոնի թագավոր ու օրենսդիր, Աստվածաշնչի ծննդոց գրքում իբրև Աբրահամի ժամանակակից հիշատակված Համուրայի հաղթանակներն ու նվաճումները փառաբանող մի արձանագրություն:

Տաճարում գտնվեցին սեպագիր սալիկներ, որոնք հայտնում էին, որ Համուրային ամբողջ հարավային Միջագետքի հետ նվաճել է նաև Ուր քաղաքը: Իր հաղթանակը հավերժացնելու համար նա մեհյանի բակում կոթող է կանգնեցրել, որը շումերները համարել են իրենց կրոնական լավագույն զգացմունքների դեմ ուղղված ծանր վիրավորանք: Ուստի երբ նրանք ապստամբություն են բարձրացրել հարստահարիչի դեմ, իրենց ատելությունն ամենից առաջ ուղղել են ընդդեմ կոթողի, որը հիշեցրել է իրենց պարտությունն ու նվաստացումը: Սալիկները հուշարձանից պոկվել ու փշուր-փշուր են արվել: Այդ վիճակում հուշարձանը մնացել է գրեթե չորս հազար տարի, այնքան ժամանակ, մինչև որ հնագետի բահը հայտնաբերեց այն:

Սակայն ապստամբներն ինչո՞ւ չեն վերացրել հուշարձանի մնացորդները և այդպիսով չեն ջնջել ստրկացման վերջին հետքերը: Հավանաբար, այն պատճառով, որ դրա համար ժամանակ այլևս չեն ունեցել: Համուրային ապստամբությանը պատասխանել է կայծակնային արագությունով ու եռանդով: Նախքան շումերները կհասցնեին հրճվել ստացած ազատությանը, նա հայտնվել է քաղաքի դարպասի մոտ, գրոհով գրավել է քաղաքը և կողոպտման հանձնել իր ռազմիկներին: Տներն ու տաճարները փլատակների են վերածվել:

Հատակի սալերից մեկի տակ Վուլլին գտավ մի հույակապ գանձարան, ոսկերչական արվեստի իսկական գլուխգործոցներ՝ կախազարդեր, ապարանջաններ, մանյակներ, ծամկալներ, որոնց գլխիկների փոխարեն վարպետորեն քանդակված էին կանացի մարմիններ:

Տերն այդ գանձերը թաքցրել է, հավանորեն, պաշարման ժամանակ, իսկ հետո մեռել է կամ ստրկացվել: Նույն շերտի աղյուսների վրա կար մ. թ. ա. VI դարում գահակալած Նաբուգոդոնոսոր II թագավորի կնիքը, ուստի կարելի է ենթադրել, որ երկուսուկես հազար տարի գանձը անշարժ մնացել է նույն տեղում:

Նաբուգոդոնոսորը վերջին թագավորն է, որ հոգ է տարել Ուրի վեհուկության, հարստության մասին և այնտեղ շինարարական լայն աշխատանքներ ծավալել: Նրա մահից շատ շանցած Միջագետքը ենթարկվել է նոր ներխուժման: Պարսից թագավոր Կյուրոս Մեծը ջախջախել է նոր Բաբելոնյան տերությունը և գրավել Տիգրիսի ու Եփրատի միջև ընկած ամբողջ երկիրը:

Նրա նվաճումներին նպաստել են ներքին հուզումները, որ թուլացրել էին նոր Բաբելոնյան թագավորությունը: Վերջին թագավոր Նաբոնիդը

փորձել է խորտակել քրմերի ուժը և պետական յուրատեսակ կրոն ստեղծել իր վեհապետութեամբ:

Այդպիսի սպառնալիքի պայմաններում քրմերը թագավորին անողոք պատերազմ են հայտարարել: Այդ պատճառով, երբ Կյուրոսը մոտեցել է Ուրին, նրանք դիմել են պետական դավաճանության՝ բացել են քաղաքի դարպասը և թագավորին մատնել թշնամու ձեռքը: Նաբոնիդը գերի է ընկել ու անհայտ կորել:

Ուր քաղաքի ճակատագիրը կանխորոշել են պատմական երկու իրադարձություններ: Դրանցից առաջինը պարսիկների անցումն էր Զրադաշտի կրոնին: Այդ կրոնի խստաշունչ օրենքները չեն հանդուրժել Միջագետքի բազմաստվածությունը: Այդ պատճառով պարսիկներն ավերել են Ուրի հին տաճարները, և քրմերն այդպիսով պատժվել են հայրենիքին դավաճանելու համար:

Քաղաքին էլ ավելի ասավոր աղետ է նախապատրաստել բնություճը: Եփրատը հետզհետե փոխել է իր հունը և գրեթե տասնհինգ կիլոմետր հեռացել քաղաքի պարիսպներից: Լքված ու աղքատացած քաղաքը այլևս միջոցներ չի ունեցել ջրանցքների նոր համակարգի օգնությամբ դաշտերի շորացումը կանխելու համար: Նախկին արտերը, բանջարանոցներն ու այգեստանները շուտով դարձել են տափաստան և անապատ: Բնակիչները լքել են քաղաքը, փոխադրվել այլ վայրեր, ուր հեշտ էր մի կտոր հաց ճարելը:

Լքված քաղաքը աստիճանաբար վերածվել է փլատակների կույտի: Մրրիկներն այն ծածկել են ավազի հաստ շերտով: Տարիների հետ այլևս ոչ ոք չի մտաբերել, որ այդ ավազների տակ գտնվում են խղճուկ մնացորդները երբեմնի մի հզոր պետության, որը հազարամյակների ընթացքում մեծ, հարուստ քաղաքակրթության քուրա էր եղել:

Փլվածքների վերին շերտերում գտնվեցին հողի տակից հանված աղյուսներից՝ շումերյան հնամենի աղյուսներից կառուցված խրճիթների մնացորդներ: Այդ խրճիթներից մեկի հատակի տակ պահված էր սեպագիր սալիկներով լցված մի թաղար: Դրանց արձանագրություններից կարելի էր որոշել, որ դա տաճարի գոյության վերջին, խղճուկ ժամանակաշրջանն է եղել: Խրճիթներում մի կերպ իրենց գոյությունն են քարշ տվել նանարա աստծո վերջին քրմերը: Նրանք ասլրել են այն սակավաթիվ նվիրատուների ողորմությունների շնորհիվ, ովքեր ինչ-որ հրաշքով Զրադաշտի անհամար հետևորդների մեջ պահպանել էին իրենց հավատարմությունը հինավուրց կրոնին:

Բլրի մեկ այլ տեղում հնագետները դեմ առան բրուտի վառարանների ու պարսիկ վերաբնակիչների կացարանների, ինչպես նաև մ. թ. ա. V դարի կեսի սեպագիր սալիկների: Հետո գրեթե քսանհինգ դար, ընդհուպ մինչև 1922 թվականը, երբ Վուլլիի արշավախումբն իր որոնումները սկսեց Կպրասարում, մոռացության մեզը պատում է քաղաքը:

Ամենահին դյուցազնավեպը

«Հազար ու մեկ գիշեր»-ի հեքիաթների ազդեցության տակ Լեյարդը երազում էր ճանապարհորդություն կատարել Մեքսիկոյի Արևելքում, իսկ երբ նա իրականացրեց իր իղձերը, անսպասելիորեն գեմ առավ Միջագետքի առեղծվածային բլուրներին:

Թեև նա գործի մարդ էր և աչքի էր ընկնում նպատակին հասնելու հաստատակամությամբ, գլխավոր խթանիչը նրա ոռոմանտիկ խառնվածքն էր: Ռոմանտիկ երազանքներից մինչև գիտական հայտնագործություններ՝ այսպիսին էր Լեյարդի անցած արտասովոր ճանապարհը:

Հնագետի միանգամայն ուրիշ, ժամանակակից տիպար կարելի է համարել մեկ այլ անգլիացու՝ Ջորջ Սմիթին: Նա մի համեստ, լրջախոհ և աշխատասեր մարդ էր, որ ապրուստ էր վաստակում Լոնդոնի փողեռանոցում փորագրիչ աշխատելով: Նա մանկուց մեծ հակում էր դրսևորում գիտության նկատմամբ, սակայն ծնողները շափազանց աղքատ էին որդուն բարձրագույն կրթություն տալու համար: Ուստի բացառիկ ընդունակությունների տեր պատանին ստիպված էր ընդունվել փորագրման արհեստանոց, որտեղ էլ երկար տարիներ անցկացրեց իբրև աշակերտ:

Բայց դա Սմիթի մեջ չսպանեց գիտության սերը: Յուրաքանչյուր ազատ րոպե նա օգտագործում էր իր կրթությունը լրացնելու համար: Ուսումնասիրում էր օտար լեզուներ և կլանված կարդում պատմագիտական աշխատություններ: Ասուրագիտության հետ նա առնչվեց միանգամայն պատահաբար: Բրիտանական թանգարանը ձեռնամուխ եղավ «Արևմտյան Ասիայի սեպագիր տեքստերը» վերնագրով մի ավրոմի հրատարակմանը և Սմիթին առաջարկեց այդ հրատարակության համար փորագրություններ պատրաստել: Դա մեխանիկական աշխատանք էր փորագրիչ-պատճենահանողի համար: Սակայն աշխատանքի ընթացքում տարօրինակ նշաններն այն աստիճան հետաքրքրեցին Սմիթին, որ նա որոշեց սովորել դրանք կարդալ:

Դա հանդուգն և, թվում է, վաղօրոք անհաջողության դատապարտված մտադրություն էր: Չէ՞ որ ինքնուր պետք է այնքան աշխատանք կատարեր ու ջանք թափեր իր նպատակին հասնելու համար, այնքան անքուն գիշերներ անցկացներ, որպեսզի հասու լիներ ասուրագիտության գաղտնիքներին: Բացառիկ ընդունակությունների և գիտական ազնիվ մոլուցքի շնորհիվ նա կարողացավ հաղթահարել այդ դժվարությունները: Իր հուշերում, որոնք այնպիսի ճանաչման արժանացան, որ հրատարակվեցին յոթ անգամ, Սմիթն այսպես է ասում իր կյանքի նպատակի մասին.

Ամեն ոք ունի որոշակի հակումներ ու մոլություններ, որոնք բարենպաստ հանգամանքներում կարող են լուսավորել իր մնացած կյանքը: Ես միշտ հակում եմ ունեցել դեպի արևելագիտությունը և

Երիասասարդ հասակից հետաքրքրվել եմ Արեւելում կատարված ուրոնումներով ու հայտնագործություններով, հատկապես Լեյարդի և Ռաուլիենտնի մեծարժեք աշխատություններով: Առաջին մի քանի տարիներին ես քիչ բան արեցի կամ գրեթե ոչինչ շարեցի, բայց 1866 թվալուսին, տեսնելով մեր գիտության տերափառ փրնակը Ասիայի այն մասի վերաբերյալ, որը կապված է աստիճանաշահական պատմության հետ, վեցերորդ ինչ-որ բան անել որոշ վիճելի հարցեր լուծելու համար:

Նույն թվականին էլ քսանվեցամյա Սմիթը տպագրեց ասուրագիտական իր անդրանիկ աշխատությունը, որն անմիջապես նրան լայն համբավ բերեց գիտական շրջաններում, և Սմիթը ինքնուս սիրողից դարձավ ասուրագիտության բնագավառի ճանաչված հեղինակություն: Հաջորդ տարի եկավ երկար սպասված պարզելը թափած ջանքերի համար՝ նա նշանակվեց Բրիտանական թանգարանի եգիպտասուրական բաժնի ասիստենտ, որտեղ արդեն կարող էր իրեն ամբողջովին նվիրել սիրած գրադմունքին:

Թվում էր, թե նրա կյանքն այդուհետև կընթանա գիտական աշխատասենյակի անդարձության մեջ: Բայց ճակատագիրն այլ կերպ տնօրինեց: Սմիթը տիպիկ գիտնական էր, օժտված զգաստ բանականությամբ, և կյանքի նկատմամբ նրա վերաբերմունքը բնավ ոռոմանտիկական չէր: Այդ սլաւաճառով նա ինքն էլ, հավանորեն, շճեց, երբ իր գլխին, ինչպես առատության եղջյուրից, թափվեցին ամեն տեսակ արկածներ ու ապրումներ, որ եթադեւ կարող էր միայն աեուղղելի ոռոմանտիկը: Գիտության այդ համեստ մշակը նախ համայն աշխարհին ազդեցրեց իր հայտնագործությամբ, իսկ հետո մի ճանապարհորդություն ձեռնարկեց, որի ֆանտաստիկական նպատակը սենսացիայի առարկա դարձավ անգլիական բուլվարային թերթերի էջերում: Նրա մահն իսկ ուղեկցվեց արտասովոր և դրամատիկական հանգամանքներով, կարծես թե քմահաճ ճակատագիրը մինչև վերջին պահը չէր դադարում խաղ անել այդ ականառ ոռոմանտիկի հետ:

Իսկն ասած, սկզբում ոչ մի բան սենսացիա չէր կանխագուշակում: Բրիտանական թանգարանի նկուղներում արկղերի մեջ պահվում էին Աշուրբանիսլալի գրադարանի հարյուրավոր սեպագիր սալիկներ, որ ծամանակին Քուլունջիքի բլրից ուղարկել էին Լեյարդն ու Ռասամը: Գրանք, բնականաբար, հետաքրքրեցին Սմիթին: Բահերավ արկղերի մեջ լցված սեպագիր սալիկները ողրալի տեսք ունեին: Դա ջարդուփշուր եղած խեցիների մի հսկայական շեղջ էր, ի լրումն՝ հողի և փոշու հաստ շերտով պատված: Այդ բեկորներից հավաքել ամբողջական սալիկներ և դրանք կեղտից մաքրել այնպես, որ սեպագիրը շվնասվի՝ ահավարիկ այն խընդիրը, որ ծառայավ թանգարանի երիտասարդ ասիստենտի առջև:

Սմիթը ձեռնամուխ եղավ գլուխկոտորուկի լուծմանը, և մի քանի ամսվա քրտնաջան ու նախապատրաստական աշխատանքից հետո, վերջապես, կարող էր անցնել գլխավոր խնդրի լուծմանը՝ արձանագրությունների ընթերցմանը:

Բառը բառի հետևից վերծանելուն համեմատ նրան ավելի ու ավելի մեծ զարմանք էր համակում: Նրա աչքերի առջև, ասես իրական, հառնեց աշխարհի հնագույն ժողովրդական դյուցազնավեպի հերոս հզոր Գիլգամեշը՝ մինչ այդ գիտությանը միանգամայն անհայտ մի անձնավորություն: Կարդալով նրա արկածների մասին, Սմիթը եկավ այն համոզման, որ հայտնաբերել է Միջագետքի Հոմերոսին, որը բազում հարյուրամյակներով մեծ էր հույն Հոմերոսից, որ իր առջև վիպերգական պոեզիայի նախատիպն է՝ գրված մարդկային քաղաքակրթության արշալույսին:

Գիլգամեշը եղել է Ուրուկ (աստվածաշնչական Արեք) քաղաքի տիրակալը և դաժանորեն կեղեքել է բնակիչներին, ստիպելով նրանց տանջալից աշխատանք կատարել բերդապարիսպների ու տաճարների շինարարությունում: Ուրուկի բնակիչները աստվածներին զանգատվել են իրենց բախտից, և աստվածները որոշել են նրանց ազատել անգութ բռնակալից: Նրանք գերմարդկային ուժով օժտված մի հսկա են ստեղծել և կոչել էնկիդու: Հսկան պետք է գոտեմարտի բռնվեր Գիլգամեշի հետ և սպաներ նրան: Էնկիդուն ապրել է վայրի անտառի խորքում, բարեկամություն արել կենդանիների հետ, նրանց պաշտպանելով որսորդներից:

Իմանալով նրա մասին, Գիլգամեշը թաքնվել է ամրոցում, իսկ էնկիդուի մոտ մի գեղանի քրմուհի է ուղարկել, որպեսզի նա գայթակղեր հսկային ու բերեր Ուրուկ: Երկու հսկաների միջև ահավոր գոտեմարտ է մղվել, բայց ավարտվել է նրանով, ինչ չեն սպասել ո՛չ աստվածները, ո՛չ մարդիկ՝ էնկիդուն և Գիլգամեշը, ընդունելով, որ իրենք հավասար են, դարձել են հավատարիմ բարեկամներ և այդ պահից ի վեր միասին կատարել ամեն տեսակ հերոսական արարքներ: Նրանք, օրինակ, կռվել են ամեհի առյուծների դեմ, անտառային ճիվաղ խումբաբայի ձեռքից ազատել են Իշտար դիցուհուն և սպանել Անու աստծո ուղարկած վիթխարի ցուլին:

Մի անգամ էնկիդուն ծանր հիվանդանում է և, նախազգալով մոտալուտ մահը, սրտագին հրաժեշտ տալիս սիրելի բարեկամին: Գիլգամեշը դառնորեն ողբում է ընկերոջ կորուստը և կյանքում առաջին անգամ խորհրդածում մահվան անմեկնելի առեղծվածի մասին.

Վեց ցերեկ և յոթ գիշեր վրան լացի, թույլ չտվի, որ իրեն քաղեն, մինչև որ երեսը որդ ընկավ: Բարեկամիս տխուր անսփից սարսափեցի, մահից սոսկալով ասփաստանները փախա: Բարեկամիս դառը նախատագիրը ծանրացած է վրաս, դրա հսմար ելա, տափաստանների նամփան բռնեցի:

Օ՛հ, ինչպե՞ս կարող եմ լուռ ու մունջ մնալ: Ինչպե՞ս կարող եմ հանդուրժել: Բարեկամս, որին այնքան սիրում էի, հող դարձավ:

Արդյո՞ք ե՞ս էլ մի օր նրա պես պիտի պառկեմ, որպեսզի հավիտյանս հավիտենից շկարողանամ պառկածս տեղից վեր կենալ¹:

Տազնապահար Գիլգամեշը որոշել է որոնել իր նախնուն՝ Ուտնափիշտիմին, աշխարհում միակ մարդուն, որի նկատմամբ մահն անզոր էր: Նրանից հույս ունեւր իմանալու անմահութեան գաղտնիքը: Նրա ճանապարհը լի է եղել բազմապիսի գայթակղութեաններով ու խոչընդոտներով: Գիլգամեշը պետք է հաղթեր կարիճ-մարդկանց, բազառվեր դրախտային երկրի ուժասպառ անող հմայքներից, ուր ծառերի վրա պտուղների փոխարեն թանկարժեք քարեր են աճում, անդրդվելի մնար Սիդուրի գիցուհու առջև, որը նրան համոզում էր շմտածել մահվան մասին ու տրվել կյանքի խնդութեաններին: «Արևամուտի» լեռներում նա տասներկու ժամ դեգերել է լիակատար խավարում, մինչև որ, վերջապես, հասել է «Մահվան ջրերին», որտեղ նավավար Ուրշանաբին համաձայնել է նրան փոխադրել մյուս ափը, Ուտնափիշտիմի մոտ:

Սկզբում Գիլգամեշը հիասթափվել է: Ուտնափիշտիմը չի ցանկացել նրան հայտնել անմահութեան գաղտնիքը, քանզի մահը կյանքի բնական, անխուսափելի և անկապտելի հատկանիշն է: Միայն կնոջ ազդեցութեան տակ է նա գաղտնիքը հայտնել Գիլգամեշին. ծովի հատակում մի բույս կա, որ հավերժական կյանք է պարգևում: Գիլգամեշը նետվել է խորխորատը և հաղթանակով վերադարձել ափ, ձեռքում բռնած հրաշագործ բույսը: Նա համակվել է վսեմ ու ազնիվ երազանքներով՝ ինքը եսասեր չի լինի, ինչպես Ուտնափիշտիմը, հավիտենական երիտասարդութեան խոտը կտանի իր հայրենի քաղաքը և կբաժանի մարդկանց:

Բայց լճակում իր լողանալու ժամանակ օձը գողանում և ուտում է խոտը: Հուսախարաված Գիլգամեշը ձեռնունայն վերադառնում է Ուրուկ և այդ ժամանակվանից տրվում կյանքի և մահվան գաղտնիքի մասին խորհրդածութեաններին:

Ժողովրդական վիպերգութեանը զարմանք հարուցեց ոչ միայն իր բանաստեղծական արժանիքներով, այլև մտքի խորութեամբ: Գիլգամեշի բուռն կյանքի տեսարանների միջով ի հայտ են գալիս մարդկային վաղեմի սերունդների իղձերն ու ձգտումները, նրանց տազնապաններն ու բնութեան ուժերը հաղթահարելու ցանկութեանը, դժվարին անցումը բարբարոսութեանից քաղաքակրթութեան: Ուրուկի դաժան տիրակալը, որից հպատակները բոլոր հիմքերն ունեին գանգատվելու, կենսափորձի ազդեցութեան տակ վերափոխվում է մի ազնիվ հերոսի, որը նախ և առաջ հոգ է տանում իր ժողովրդի բարօրութեան և երջանկութեան մասին:

Վիպերգութեանը գրված էր բաբելերեն, բայց դրա շումերական ծա-

¹ Այս և հաջորդ մեջբերումը քաղված են 1963 թվականին Երևանում Նշան Մարտիրոսյանի ներածականով և թարգմանութեամբ հրատարակված «Գիլգամեշ» դյուցազնավեպից, տեղ-տեղ կատարված են ոճական որոշ շտկումներ:— Մ. Հ. Թ.

գումը կատարած չէր հարուցում: Գիլգամեշի անունը բազմիցս հանդիպում է շումերական հին արձանագրություններում: Գանվել են Գիլգամեշի Էկարները՝ փոքագրված մինչբաբելոնյան ժամանակաշրջանի գլանաձև կնիքների վրա, մի բան, որը վկայում է Շումերում դյուցազնավեպի արտակարգ ժողովրդականության մասին: Հեռագայում վիպերգությունը իրենց լեզվով են թարգմանել շումերների հաջորդները՝ ասորեստանցիներն ու բաբելոնացիները:

Ուտնափիշտիմը Գիլգամեշին պատմել է, թե ինչպես է ինքը անմահ դարձել:

Երբ եա ապրել է Եփրատի ափին գտնվող Շուրուպակ քաղաքում, երազում իրեն հայտնվել է էա աստվածն ու նախազգուշացրել, որ մտադիր է ջրհեղեղով մաքրկանց պատժել նրանց գործած մեղքերի համար: Առաված որոշել է կործանումից փրկել միայն Ուտնափիշտիմին և նրա քնտանիքին: Նա Ուտնափիշտիմին պատվիրել է մի մեծ տապան շինել և իր քնտանիքի ու կենդանիների հետ միասին փոխադրվել այնտեղ: Շուրուպակ վիթխարի սև ամպը պատել է երկինքը, անթափանց խավարը ծածկել է երկիրը: Վեց օր սաքսափելի անձրև է տեղացել, ջուրը ողողել է ողջ երկիրը: Յոթերորդ օրը տապանը կանգ է առել Նիսիր լեռան գագաթին:

1872 թվականին սկսելով դյուցազնավեպի թարգմանությունը, Սմիթը համոզվեց, որ ջրհեղեղի մասին Ուտնափիշտիմի պատմության մեջ կան էական բաց տեղեր, որովհետև պակասում էին սեպագիր մի ամբողջ շարք տառիկներ: Բայց այն էլ, ինչ որ նա կարողացավ բեկորներից ի մի բերել, ցնցեց վիկտորիական Անգլիայի խստակյաց կեղծ բարեպաշտներին, որոնց համար մաքրկային բոլոր գիտելիքների անըստգյուտ աղբյուրը Հին կտակարանն էր: Մինչդեռ պարզվում էր, որ Նոյի աստվածաշնչական պատմությունը հրեաները փոխառել են շումերների ժողովրդական ավանդազրույցից:

Քրիտանական թերթերի էջերում բուռն բանավեճ ծայր առավ: Հին կտակարանի պաշտպանները պնդում էին, թե, չիմանալով Ուտնափիշտիմի պատմության վերջին, ամենակարևոր մասի բովանդակությունը, չի կարելի խոսել այդ զրույցի և Նոյի պատմության որևէ անշուքյան մասին: Այն, ինչ մինչ այդ կարդացել էր Սմիթը, նրանց կարծիքով, սոսկ մանրամասնությունների պատահական զուգահիստություն էր: Հարցը կարող էր լուծվել միայն այն գեպքում, եթե հաջողվեր գտնել պակասող սեպագիր սալիկները, իսկ դա միանգամայն անհավանական գործ էր լիվում:

«Դեյլի տեչեգրաֆ» թերթը, ցանկանալով սենսացիա առաջացնել և դրանով իսկ իր համար ռեկլամ ապահովել, հազար ֆունտ ստեռլինգ պարգև առաջարկեց պակասող սալիկները գտնողին: Թերթի տերերը երևի կարծում էին, թե չի գտնվի թեկուզ մի մարդ, որը ավերակների հսկայական կուտակներում ինչ-որ կավե բեկորներ փնտրելու համար համա-

ձայներ իր նախաձեռնություններ մի այնպիսի հեռավոր ճամփորդություն ձեռնարկել: Դա հավասարազոր էր դեզի մեջ ասեղ փնտրելուն:

Առավել ևս մեծ էր զարմանքը, երբ այդ մարտահրավերն ընդունեց ինքը՝ Սմիթը: Ինչը ստիպեց այդ համեստ, գիտությունը տարված մշակին բարձրացնել ձեռնոցն ու իր բարի անունը նետել սենսացիայի վաճառանոց: Դժվար էր կասկած տանել, որ նրան գայթակղել է հայտարարված պարզելը կամ նրա մեջ հանկարծ գլուխ է բարձրացրել մինչ այդ թաքնված արկածախնդրական շիդը:

Առաջին հայացքից թեթևամիտ թվացող այդ որոշումը խարսխված էր մասնագետ-ասուրադետի խելամիտ հաշվարկի վրա: Սմիթն իր աչքով տեսավ, թե ինչպիսի բարբարոսական անփութություններ էին սալիկները հավաքել լցրել արկղերի մեջ: Լեյարդն ու Ռասամը, որոնցով միայն հնագիտական տպավորիչ հուշարձաններ, դրանց վերաբերվել էին ակրն-հայտ քամահրանքով: Իսկ եթե այգուկն է, մի՞թե չի կարող պատահել, որ սեպագիր բազմաթիվ սալիկներ, իսկ դրանց թվում նաև այն սալիկները, որոնցում Ուտնափիշտի մի պատմության շարունակությունն է, մինչև այժմ էլ ընկած են Քույունջիք բլրի ավերակների մեջ:

Սվ դարձյալ սենսացիա: Ասես ինչ-որ հրաշքով իրականացավ այն, ինչը համարվում էր «կտրված գլխի երազանք»: Դեպի Միջագետք երիցս կատարած, արկածներով ու դժվարություններով լի, ընդհանուր առմամբ գրեթե շորս ամիս տևած ճանապարհորդությունների ընթացքում Սմիթը հավաքեց գրեթե երեք հազար սեպածև արձանագրություն, որոնցից, ի զարմանս ընդհանուրի, ընտրեց Ուտնափիշտի մի պատմության պակասող մասերը կազմող երեք հարյուր ութսուն բեկոր:

Սեպագիրը վերծանվեց, տեքստը թարգմանվեց: Ահավասիկ, թե ինչ էին բովանդակում գտնված հատվածները.

Ինչ որ ունեի, նավ բարձրացրի ու տեղավորեցի, որքան արժար և ոսկի ունեի, նավին բեռնեցի, նաև անսակ-տեսակ անասուններ նավ հանեցի: Ընտանիքս ու տոհմս, բոլորին էլ տարա նավ: Նաև վայրի անասուններից մեկ-մեկ հատ այնտեղ տարա: Բոլոր վարպետներին նավի մեջ վերցրի:

... Առաջին այգայույսը ծագելուն պես մութ և փոթորկաբեր ամպեր դիզվեցին երկնում: ... Երկինգ-գետին իրար խառնվեցին. լույսի նշույլ չմնաց, ամբողջ երկիրը, կյոռ կնունի նման ջարդ ու փշուր լինելով, կործանվեց:

Ամբողջ մի օր փոթորկաբեր հարավային ֆամի փչեց, ջրի տակ բաղեց լեռները, խեղդամահ անելով մարդկությունը: Երկրի վրա մարդիկ այլևս իրար չէին տեսնում, աստվածներն էլ մարդկանց չէին տեսնում: Աստվածներն էլ այս անեղ ջրհեղեղից սարսափեցին, Անուի երկինքը բարձրացան, շների պես կծկվեցին և դուրսը թափուր կազմեցին:

... Վեց օր և յոթ գիշեր ֆամին դեռ սաստիկ փչում էր. վիշապ հողմն ու հեղեղը երկրի վրա էին նետվում: Թագաբունը յոթ օր տևելուց հետո, հարավային ֆամին, վերջապես, հաղթեց վիշապ

հողմին, գործի նման կոխվ մղելուց հետո: Մովր, վերջապես, հան-
դարտեց ու խաղաղվեց: Վիշապ հողմը տեղի տվեց և ջրհեղեղը
վերջացավ:

Սվ այնժամ երդիկը բացեցի. լույսը երեսիս խփեց, օդի երե-
վույթը տեսա, ամենուրեք լուրջուն. ամբողջ մարդկային սերունդը
հող էր դարձել: Տափառակ տանիքի նման փոխած էր նահիհը:

... Մովի միջին ասիերին էի նայում, տասներկու երկժամից մի
կզգի Լեւան եկավ: Այնտեղ, Նիսիւր լեռան մոտ կանգ առավ տա-
պանը: Նիսիւր լեռան վրա հանգչեց տապանը և շկարողացավ այլևս
տեղից շարժվել: Յոթերորդ օրը մի աղավնի տապանից դուրս ար-
ձակեցի: Ցամաք չգտնելով, վերադարձավ: Հետո մի ծիծեռնակ
աապանից դուրս արձակեցի: Նա էլ ցամաք չգտնելով, վերադար-
ձավ: Վերջապես, մի ագռավ տապանից դուրս արձակեցի, թռավ
իջավ այնտեղ, ուր ջուրը ցամաքած էր, կերավ, պնոթկեց, կոչեց ու
չվերադարձավ:

Այլևս ո՞վ կարող էր ժխտել, որ Ուտնափիշտիմի պատմությունը
աստվածաշնչական ջրհեղեղի սկզբնաղբյուրն ու նախավարկածը չէ: Այդ
էին ապացուցում երկու տեքստերի միանման մանրամասները՝ աղավնու
և ագռավի թռիչքը դեպի ազատություն, լեռը, որին իջել էր տապանը,
ջրհեղեղի տևողությունը և նույնիսկ պատմությունների նույն բարոյա-
խոսությունը՝ մեղքերի համար մարդկանց պատժելը և աստվածավախ
Ուտնափիշտիմ-Նոյի փրկվելը: Պարզվեց, որ Աստվածաշունչը նախա-
պատմական առասպելների, ժողովրդական սովանդությունների և զրույց-
ների ժողովածու է, բանաբաղություն:

Սմիթի բուռն կյանքն ավարտվեց ողբերգականորեն. դեպի Միջա-
գետք կատարած երրորդ ճանապարհորդության ժամանակ նա զոհ գնաց
այնտեղ մոլեգնած խոլերայի համաճարակին, և 1876 թվականի օգոս-
տոսի 19-ին, երեսունվեց տարեկան հասակում, մահացավ Հալեպում:

Օրագրում, որ պահում էր գրեթե մինչև կյանքի վերջին րոպեն, Սմի-
թը գրեց.

Ես բացառապես գիտության համար եմ աշխատել... իմ գա-
ծոները հետազոտության արժեքավոր նյութ են: Ես մտադիր էի
անձամբ մշակել դրանք, բայց հիմա ուզում եմ, որ այդ գաածո-
ները մատչելի լինեն հետազոտողներին: Ես միշտ ձգտել եմ կա-
տարել պարաֆս...

Ջրհեղեղի հետքերով

Կարելի էր համաձայնել, որ շումերական դյուցազնավեպում ջրհե-
ղեղի տեսարանը ժողովրդի բանաստեղծական երևակայության արդյունք
է, սակայն այստեղ մի հարց էր ծագում՝ բազմաթիվ այլ սովանդու-
նների ու առասպելների նման այն չի՞ բովանդակել արդյոք պատմական
ճշմարտության հատիկ: Չէ՞ որ Ուտնափիշտիմի արկածները կարող էին

լինել արձագանքը, արտացոլումը մի վաղեմի տարերային աղետի, որը ամենատարբեր ավանդությունների և կրոնական այլաբանական գրույցների ձևով խորը տպավորվել է սերունդների հիշողության մեջ:

Հարցը առավել ևս տեղին էր թվում այն պատճառով, որ իրենք՝ շումերները, բնավ կասկածի տակ չեն առել ջրհեղեղի պատմականությունը:

Դինաստիական ցուցակներում Միջագետքի թագավորներին թվարկելիս շումերները նրանց բաժանել են երկու հատակորեն սահմանազատված խմբերի՝ մինչջրհեղեղյան թագավորների և հետջրհեղեղյան թագավորների: «Իսկ հետո ջրհեղեղ եղավ, իսկ ջրհեղեղից հետո թագավորները նորից ցած իջան երկնքից»՝ այսպիսին է ժամանակագրություններում մշտապես հանդիպող ձևակերպումը:

Այս հարցը միանգամայն պատահաբար ծառայեց անգլիացի հնագետ Վուլլիի առջև, երբ նա 1927—1929 թվականներին պեղումներ էր կատարում Ուրում: Քաղաքի բերդապարսպի մոտ գտնվում էր ամենաբազմազան աղբի, մնացորդների և մոխրի մի մեծ բլուր, ենթադրաբար՝ քաղաքի հին աղբանոցը, ուր բնակիչները պատից ցած էին նետել խոհանոցային և այլ մնացորդներ: Հնագիտական առատ գտածոներ պարունակելու պատճառով աղբակույտերը միշտ էլ ժողովուրդների նյութական մշակույթի մասին տեղեկությունների արժեքավոր աղբյուր են, ուստի Ուրի մոտակայքի բլուրը հնագետների մեջ աշխույժ հետաքրքրություն առաջ բերեց:

Վուլլին հրամայեց տասնչորս մետր խորությամբ հետախուզական հորան փորել: Բանվորները բահերով հորանից դուրս էին նետում տարբեր կտորտանքներ և աղբ, օջախի մոխիր, մուր, կիսաչրված փայտի կտորներ, հին աղյուաներ ու բազմաթիվ կավեղեն բեկորներ: Թմբի բարձրությունը և հորանի սլափին պարզորոշ երևացող մշակութային շերտերի մեծ քանակությունը վկայում էին, որ Ուրի բնակիչները շատ հարյուրամյակների ընթացքում այդ վայրը լրբեա աղբանոց են օգտագործել:

Հորանի հատակում Վուլլին կատարեց իր կյանքում ամենանշանակալից հայտնագործությունը. բազմապիսի աղբի տասնչորսմետրանոց շերտի տակ այն աստիճան հին մի գերեզմանոց կար, որի գոյության մասին շումերներն իրենք էլ չեն իմացել, այլապես Ուրի բնակիչներն աղբով չէին ծածկի այն:

Նույնիսկ գերեզմանոցն ուներ մի քանի հարյուր տարվա հնություն: Գերեզմանները երկու, երեք, իսկ տեղ-տեղ էլ վեց շարք դիզված էին մեկը մյուսի վրա: Բազմաթիվ սերունդներ այդտեղ գերեզման էին փորել իրենց հանգուցյալների համար, դամբարաններ կառուցել, շկասկածելով, որ դրանց տակ իրենց նախապապերի մոռացված գերեզմաններն են: Ահա այդ գերեզմանոցում էլ հայտնաբերվեց շումերական Ուր քաղաք-

պետութեան վաղ շրջանի թագաւորներէ դամբարանը, որտեղ գանվեցին
սակուց և թանկարժեք քարերից շինված դին շունեցող գանձեր:

Վուլլին շքաւարարվեց այդ հայտնագործութեամբ: Նա ցանկացաւ
անպայման իմանալ, թե ինչ է թաքնված գերեզմանոցի տակ: Ի՞նչ ճա-
կատագիր է ունեցել այդ հողակտորը նախքան մեռածների ապաստարան
դառնալը: Գուցե, հողագործները մշակե՞լ են այն կամ այդտեղ որեէ
քնակավա՞յր է եղել: Այս հարցերին կարող էին պատասխանել միայն
բահն ու քլունգը: Շուտով Վուլլին դեմ առավ նոր անակնկալի. գերեզ-
մանոցի տակ կար մեկ այլ աղբանոց, լի ամեն տեսակ թափուկներով:
Այն վերաբերում էր Ուրի ամենավաղ շրջանին, հետևաբար, շափազանց
հին, զգալիորեն ավելի հին էր, քան գերեզմանոցում գտնված թագաւո-
րական շիրիմները: Փորելով աղբի համեմատաբար հաստ շերտը, բան-
գոյները հասան մի ժամանակ ջրի բերած և մարդկային կյանքի ու գոր-
ծունեութեան որեէ հետքից զուրկ ստվար տղամաշերտի: Ամեն ինչ վկա-
յում էր, որ, վերջապես, բանվորները հասել են այն ժամանակաշրջանի
հնագույն գետի դելտայի սկզբնական հատակին, երբ այդտեղ դեռ ոչ
մի բնակավայր չէր եղել: Ուստի բանվորները հայտարարեցին, թե փո-
րելն այլևս իզուր է: Սկզբում Վուլլին էլ էր այդ կարծիքին, բայց ուշադիր
դիտելով շրջակայքը, նա հանդեպ այն հետեւութեան, որ, շնայած փոր-
վածքը շատ խորն է, ջրաբերուկ տղմի մակարդակը շրջակա հարթավայ-
րից զգալիորեն բարձր է: Տրիանգուլյացիոն շափումները լիովին հաստա-
տեւին այդ դիտարկումը: Դժվար էր ենթադրել, թե գետի հատակն ավելի
բարձր է եղել, քան շրջակա հովիտը, հետևաբար, բարձրավայրը պետք
է՝ որ մարդկային ձեռքերի գործ լիներ ու իբր ընդերքում ինչ-որ գաղտնիք
ամ խոփեր: Իսկ մյուս կողմից, թվում էր, թե դրան հակասում է տղմա-
շերտը, որ անկասկած գետն էր բերել:

Բահները նորից գործի դրվեցին: Գործը թվում էր բավական անհու-
սալի: Ժամը ժամի հետևից անցնում էր, իսկ հորանից մարդկային գոր-
ծունեութեան որեէ հետքից զուրկ տիղմ էր միայն դուրս նետվում: Հա-
կառակ շափումներին, թվում էր, թե հաստ տղմաշերտը հիրավի գետի
այն ժամանակաշրջանի հնագույն հատակն է, երբ Միջագետքն անմար-
դաբնակ հահիճ էր եղել:

Երկուսուկես մետր խորութեամբ տիղմը փորելով, արաբ բանվոր-
ները, տեսածից ապշած, հանկարծ ընդհատեցին աշխատանքն ու ան-
միջապես կանչեցին Վուլլիին: Գետային տիղմի հաստ ծածկույթի տակ
նորից երևացին աղյուսի, կավե ամանների կտորտանքներ, աղբ և մո-
խիր: Դրանք ինչ-որ նախահին բնակավայրի մնացորդներ էին:

Հնագետի փորձված աչքն իսկույն ւեթ նկատեց, որ բնակավայրը
վերաբերում է միանգամայն ինքնատիպ, բոլորովին այլ, ժամանակի
առումով ավելի հին ու պարզունակ մշակույթի, քան շումերներինն էր:
Ամանների զարդանկարի միանգամայն ուրիշ մոտիվները, հղկած քարից

շինված քարժիքները, ազյւսւանների բնորոշ կորնթարդ ձևը, որանք նման էին էլ Օրբիդ բնակավայրում գտնվածներին, անվիճելիորեն վկայում էին, որ դրանք նոր քարի դարի հուշարձաններ են:

Գետի բերած երկուսուկես մետր հաստութեամբ տղմաշերտը միմյանցից հստակորեն բաժանել էր երկու կատարելապես տարբեր մշակույթները: Այդ շերտի վերևում գտնվում էին շումերական բավականաչափ զարգացած մշակույթի մնացորդները (ինչի մասին վկայում էին բրտտի դուրզի օգնութեամբ շինված ամանները), իսկ ներքևում՝ այլ, անհայտ մի ժողովրդի նախնադարյան մշակույթի մնացորդները:

Իսկ որտեղից էր հայտնվել երկու միանգամայն տարբեր դարաշրջանների մարդկային բնակավայրերը միմյանցից այնպես հստակորեն սահմանազատած տղմի այդ հաստ շերտը: Միայն մի պատասխան կարող էր լինել՝ ջրհեղեղն է բերել այն: Սակայն այդպիսի հետքեր թողած ջրհեղեղը չէր կարող բնական սովորական երևույթ լինել: Դա, անտարակույս, մի վիթխարի աղետ է եղել, որ ամենայն շնչավորի համար ավարտվել է ողբերգականորեն: Որպեսզի տղմի ու ճլցեխի երկուսուկես մետր հաստութեամբ շերտ գոյանար, ջուրը պետք է երկար ժամանակ այդտեղ կանգնած լիներ գրեթե ութ մետր բարձրութեամբ: Ջրի այդպիսի մահարգակի դեպքում ամբողջ երկիրը Իրաքի անապատից մինչև Ելամի նախալեռները, Գիլեխից կամ Հին Բաբելոնից մինչև Պարսից ծոց պիտի դառնար ջրհեղեղի գոհը: Այն սղողել է բոլոր գյուղերն ու քաղաքները, բացառութեամբ բարձրադիր վայրերում գտնված գյուղերի ու քաղաքների: Շումերական ժամանակագրություններն իրոք հայտնում են, որ սրտը քաղաքներ փրկվել են ջրհեղեղից:

Այդ ջրհեղեղն, անշուշտ, ոչ թե համաշխարհային աղետ է եղել, ինչպես շումերական և հրեական ավանդություններն են ներկայացնում, այլ տեղական բնույթի իրադարձությանն Տիգրիսի և Եփրատի ավազանում, որն բնագրկել է 650 կիլոմետր երկարութեամբ և 150 կիլոմետր լայնութեամբ մի տարածութուն: Բայց այնտեղի բնակիչների համար ամբողջ աշխարհը պարփակվել է այդ տարածության մեջ, իսկ ջրհեղեղը նշանակել է համաշխարհային ջրհեղեղ, որով ահեղ ու արդարամիտ աստվածք պատժել է մեղապարտ մարդկութեանը:

Ջրհեղեղը պարզաբանեց յուրօրինակ զարդանկարով այն ձևագործ ամանեղենի հանկարծակի անհետացման հանելուկը, որը, ինչպես պեղումները ցույց տվեցին, տարածված է եղել ամբողջ Միջագետքում: Այդ ամանեղենը շինած ցեղերը անհետացել են ջրհեղեղի ժամանակ: Հրաշքով փրկված մարդկանց փոքրաթիվ խմբերը իրենց զարգացման մեջ նահանջել են դեպի բարբարոսութեան փուլ և խղճուկ գոյություն: Երբեմնի բերրի հողերը վերածվել են ճահիճների, ջուրը քշել տարել է մարդկային բնակավայրերը, իսկ տնային բոլոր անասունները ոչնչացել են: Այդ ան-

հայտ ցեղերի քաղաքակրթությունը կործանվել է և այլևս չի վերածնվել։
Երբ ջուրը նահանջել է դեպի Տիգրիսի և Եփրատի հուները, իսկ ճահիճները շորացել են, այդտեղ նոր ցեղեր են հայտնվել և շուտով խառնվել փրկվածների մնացորդներին։ Դրանք շումերներ են եղել։ Հին կտակարանում մի մեջբերում կա շումերական այն ավանդազրույցից, որը հավաստում է, թե շումերները «եկել են արևելքից և գրավել Շինար երկիրը», այսինքն Բաբելոնը։ Մեկ այլ ավանդազրույց ասում է, որ նրանք եկել են հարավից, ծովի այն կողմից և իրենց հետ բերել են հողը մշակելու հմտություն, մետաղներ մշակելու արվեստ և դպրություն։ «Եվ այն ժամանակվանից ի վեր,— հայտնում է ավանդազրույցը,— ոչ ոք նոր գյուտ չի արել»։

Այդ միավորված ժողովուրդներն էլ ստեղծել են շումերական մշակույթը։

Թե ինչպես մի արձանագրություն օգնեց բացահայտելու թագավորի գաղտնիքը

Առաջին որոնումների անսպասելի արդյունքները վկայում էին, որ Ուր քաղաքի աղբանոցը հնագիտական պարզապես անգնահատելի գանձեր է պարունակում և, որ ամենից կարևոր է, կօգնի պարզելու անցյալի շատ գաղտնիքներ։ Հաջորդ փորվածքը ոչ միայն արդարացրեց ակնկալիքները, այլև գերազանցեց դրանք։ Նոր գտածոները արմատապես փոխեցին աշխարհի հնագույն մշակույթների նկատմամբ գիտական նախկին հայացքները։

Իրոնգե բազմաթիվ գործիքների ու զենքերի մեջ այնտեղ գտնվեց հնադարյան ոսկերչական արվեստի մի իսկական գլուխգործոց, որն այժմ հայտնի է որպես «Ուրի դաշույն»։ Այդ շքեղ իրը բաղկացած է կոածո ոսկե շեղբից, ոսկե ելունդներով դրվազված լաջվարդե երախակալից և թերթավոր ոսկուց շինված, վարպետորեն փորագրված զարդանկարով պատյանից։ Փորվածքում գտան նաև որոշ քանակությամբ արդուզարդի նրբակերտ պարագաներ՝ ունելիներ, նշտարներ և զարդատուփեր, որոնք հնարավորություն տվեցին պատկերացում կազմելու ոչ միայն շումերական քաղաքակրթության հարստության, այլև գեղարվեստական նվաճումների մասին։

Այդ գտածոների թողած տպավորության տակ Վուլլին որոշեց հանգամանալից հետազոտել ամբողջ վիթխարի աղբակույտը։ Զգուշորեն հեռացնելով շերտը շերտի հետևից, նա, վերջապես, հասավ շումերական հիշատակված գերեզմանոցին։ Աստիճանաբար բացվեցին Ուրի բնակիչների հազար շորս հարյուր գերեզմաններ, որոնք տեղ-տեղ վեց շարք

դասավորված էին միմյանց վրա: Գերեզմանոցի ամենաստորին շարքում գտնվում էին քաղաքի շարքային բնակիչների գերեզմաններից զգալիորեն ավելի հին թագավորական տասնվեց դամբարաններ:

Հասարակ մահկանացուների գերեզմաններն ունեին ուղղանկյուն փոսի ձև: Հատակին գտնվում էին, որպես կանոն, կողքի պառկեցված, ծնկածալ ոտքերով, ձեռքերում բերանի մոտ գավաթ բռնած փտած աճյուններ: Դիակների մի մասը փաթաթված էր բրոնզե երկար վարսանոցներով միացված փսիաթների մեջ, իսկ մյուսները թաղված էին փայտե, խաղողի որթից հյուսված կամ կավածեփ դագաղներում:

Գերեզմաններն առատորեն ապահովված էին ամենօրյա գործածության առարկաներով: Դրանց մեջ գտնվեցին մանյակների ցրիվ եկած ուլունքներ, մատանիներ, ապարանջաններ, դանակներ, դաշույններ, արդուզարդի պարագաներ, խեցե, բրոնզե և ալեբաստրե բազմաթիվ ամաններ: Թեև կրոնական պաշտամունքի հետ անմիջականորեն կապված ոչ մի առարկա չգտան գերեզմանոցում, բայց մեռածներին ուտելիքի և ըմպելիքի պաշարով ապահովելու բուն փաստը վկայում է, որ շումերները հավատացել են անդրշիրիմյան աշխարհի գոյությանը:

Թագավորական դամբարանները բաղկացած էին քարով կամ աղյուսով երեսապատված և գմբեթարդ թաղով ծածկված երկուսից մինչև չորս խցերից: Այդ խցերը գտնվում էին մեծ փոսի հատակին և լիովին ծածկված էին հողով: Խաղողի որթից հյուսված փսիաթով ծածկված թեքուղին տանում էր դեպի քարերով լցված մուտքը:

Ավաղ, դամբարանները թալանված էին: Խցերում ոչ մի հուշարկամ հանգուցյալների որևէ հետք չգտնվեց: Դրանում զարմանալի ոչինչ չկա, եթե նկատի ունենանք բոլոր այն կողոպուտները, որոնց ենթարկվել է գերեզմանոցը իր գոյության հարյուրավոր տարիների ընթացքում: Հիշենք նաև այնտեղ գտնված շերտանստվածքները: Ամենաներքևում գտնվում էր քաղաքի հնագույն աղբանոցը: Ավելի ուշ այդ տեղը գերեզմանոց են դարձրել, ուր թաղել են, նույնպես քարե դագաղներում, թագավորական ընտանիքի անդամներին: Մի քանի հարյուր տարի անց, երբ կատարելապես մոռացել են գերեզմանների մասին, այնտեղ նորից է աղբանոց գոյացել, արդեն՝ երկրորդը: Հետո գոյացած բարձունքում նորից սկսել են թաղել մեռածներին և, վերջիվերջո, այդ վայրը զբաղեցրել են բնակելի շինությունները:

Ինչպես տեսնում ենք, այդ հողակտորն անընդմեջ օգտագործվել է: Ուստի դժվար չէ պատկերացնել, թե ինչպես են դամբարանները դարձել կողոպուտիչների զոհը: Պետք է ենթադրել, որ ժամանակի առումով երկրորդ գերեզմանոցի գերեզմանափորները թաղումների ժամանակ կարող էին բահով դիպչել ավելի ցածրում գտնվող դամբարանների պատերին: Գայթակղությունը շատ մեծ է եղել, որպեսզի դիմանային ու շխուժեին խորհրդավոր շինությունը, շնայեին, թե ինչ կա այնտեղ: Իսկ բացելով

5 Երբ արևը ասաված էր

դամբարաններն ու տեսնելով ոսկե տարբեր առարկաների կուրացուցիչ փայլը, նրանք սկսել են թալանել բոլորը, շինայելով անդամ թագավորների աճյունները:

Եվ նորից մի քանի դար է անցել: Հին գերեզմանոցում սկսվել է բնակելի տների շինարարությունը: Հիմքերի համար խրամներ փորելիս բանվորները շատ հեշտ կարող էին դեմ առնել կողոպտիչների կողմից շտապելուց կորցրած որևէ առարկայի, ինչպես որ պատահեց Վուլլիի արշավախմբի գտած «Ուրի դաշույնի» հետ: Դա կարող էր դրդել տակավին շթալանված դամբարանների որոնումների: Նույնիսկ պահպանվել են խնամքով նախասպատրաստած թալանի հետքեր: Դրանք վկայում են, որ գերեզմանների թալան է կատարվել ոչ միայն Եգիպտոսում: Կողոպտիչները նախ որոշակի խորություն մտնելուց հետո են փորել, իսկ հետո ընդգետնյա թունելով հասել դամբարանին, որի դիրքն իրենք հաշվարկած են եղել:

Շատ դեպքերում նրանց հաջողվել է այդ անել դարմանալի ճշգրտությամբ: Սակայն երբեմն, հավանաբար, եղել են թալանչիական «արհեստի» սկսնակներ, նրանք սխալ են հաշվարկել գերեզմանի դիրքը և չեն հասել ծրագրված նպատակին: Դրա օրինակ կարող էին ծառայել միայն կիսով չափ փորված թունելները, որոնց առանցքի վրա ոչ մի դամբարան չկար:

Հնագետների առջև դժվարին խնդիր ծառայավ՝ որոշել թագավորական դամբարանների կառուցման ժամանակաշրջանը: Միջոցները, որոնցով գիտնականները հասան այդ խնդրի լուծմանը, արտակարգ հետաքրքիր են, դրանք հնագիտության մեջ կիրառվող ստույգ եղանակներն են:

Ավելի վաղ արդեն հիշատակվել է Աքքադի սեմական թագավոր Սարգոնը, որը նվաճել էր Շումերի բոլոր քաղաք-պետությունները և Միջագետքում բռնակալական պետություն ստեղծել: Շումեր տարեգիրների գրառումների հիման վրա որոշվել է, որ այդ նվաճողը թագավորել է մ. թ. ա. 2369—2314 թվականներին: Սակայն դա այնքան էլ հեշտ գործ չէր: Ելնելով որոշ նկատառումներից, որոնք անհնար է բացատրել այստեղ, ասուրագետները Լրկար ժամանակ կարծում էին, որ Սարգոնը առասպելական, մտացածին անձնավորություն է և որ պատմական, բայց մոռացված մի քանի թագավորների գործերը վերագրվում են նրան: Սարգոնին նույնացրել են առասպելական մյուս հերոսներին համահավասար նաև աստվածաշնչական ներբովթի հետ:

Պետք է հիշել, որ թագավորական դամբարանների վերևում, Ուրի գերեզմանոցի ավելի բարձր շերտում, գտնվեցին ուրիշ՝ քաղաքի շարքային բնակիչների շիրիմներ: Հետաքրքրական գտածոները՝ գլանաձև երկու կնիքները, որոնց վրա փորագրված էին դրանց տերերի անունն ու զբաղմունքը, օգնեցին որոշելու այդ շիրիմների մոտավոր տարիքը:

Ինչպիսին էր հնագետների զարմանքը, երբ պարզվեց, որ կնիքները պատկանել են Սարգոն թագավորի սպասավորներին: Նրանք սպասարկել են արքայադստերը, որը եղել է Լուանի դիցուհու քրմուհին: Նրա պատկերով նույնիսկ մի սալիկ գտնվեց: Այդ հարթաքանդակում երևում է զոհ մատուցող մի քուրմ, իսկ նրա հետևում՝ երկար հանդերձով մի կին: Կողքին մակագրութուն կա, որը հայտնում է, թե նա Սարգոն թագավորի դուստրն է: Կնիքներից մեկը պատկանել է նրա վարսավիրին, մյուսը՝ գրագրին և ծառայապետին:

Թագավորի երկու ծառաների շիրիմների հայտնաբերումը հնարավորութուն տվեց ստույգ պարզելու, որ հակառակ գոյութուն ունեցող կարծիքներին, Սարգոնը պատմական անձնավորութուն է, ուստի և ավելի վերևում գտնվող գերեզմանները վերաբերում են մ. թ. ա. 2300 թվականին:

Միանգամայն ակնհայտ է, որ թագավորական դամբարանները պետք է զգալիորեն ավելի հին լինեին Սարգոնի ժամանակաշրջանի գերեզմաններից, քանի որ դրանցից ավելի ցածր էին գտնվում: Բայց որքա՞ն հին: Այդ հարցի պատասխանը ստացվեց զարտուղի և բավական բարդ հունապարհով:

Մինչև մեր ժամանակներն են հասել շումեր թագավորներին հաջորդաբար թվարկող դինաստիական երկու ցուցակներ: Դրանցից մեկը կազմել են շումեր տարեգիրները, իսկ մյուսը թողել է մ. թ. ա. III դարի բաբելոնացի քուրմ, պատմագիր Բերոսոսը, որը գրել է հունարեն:

Համաձայն այդ ցուցակների, շումերների պատմութունը սկզբնավորվել է աշխարհի արարչագործումից: Առաջին թագավորներն այնտեղ կոչվել են նախաթագավորներ: Ըստ մի վարկածի, նրանք ութն են եղել, ըստ մյուս վարկածի՝ տասը: Այդ նախաթագավորներն իրենց երկարակեցությամբ գերազանցել են Մաթուսաղայի ունկորդը. համաձայն մի ցուցակի, նրանք ընդհանուր առմամբ ապրել են 241 300, համաձայն մյուսի՝ 456000 տարի: Նախաթագավորների դինաստիան ջրհեղեղի հետեանքով ընդհատվել է, իսկ հետո, ինչպես ավանդաբանությունն է ասում, երկրում բնակութուն են հաստատել Ուտնափիշտիմի հետնորդները: Համաձայն այդ ցուցակների, շումեր թագավորների առաջին դինաստիան ջրհեղեղից հետո գահակալել է 24—150 տարի:

Այդ ցուցակներում թագավորներին վերագրված առասպելական տարիքն ու գերմարդկային հատկութուններն են պատճառը, որ ասուրագետներն անմիջապես մի կողմ նետեցին դրանք որպես միանգամայն անհավանական և պատմության տեսակետից ոչ մի արժեք չունեցող վավերագրեր:

Ուրի աղբանոցում կատարված հայտնագործութունների ազդեցության տակ Վուլլին սկսեց խորհրդածել. իսկ առաջին դինաստիան ջրհեղեղից հետո իսկապես գոյութուն չի ունեցել արդյոք, չնայած նրա

տիրապետութեան ժամանակամիջոցը աներևակայելիորեն երկար է թվում: Շուտով նոր հայտնագործութիւնները հաստատեցին նրա ենթադրութիւնը:

Էլ Օրբիդի ավերակներում Վուլլին բացեց աստվածների մայր Նին-խուրսագի տաճարը: Դա մի փառահեղ կառույց էր, հնագույններից մեկը Միջագետքում, բազմաթիվ պղնձապատ սյուներով, խճանկարներով, հարթաքանդակներով ու արձաններով: Ամեն տեսակ աղբի մեջ այնտեղ գտնվեց սպիտակ կրաքարե մի սալիկ, որի վրա սեպագիր նշաններ էին փորագրված: Վերծանելուց հետո պարզվեց, որ սալիկին գրված է տաճարի հիմնադրի անունը: Ամբողջութեամբ արձանագրութիւնն այսպիսին էր. «Ուր քաղաքի թագավոր Ա-անի-պադան, Ուր քաղաքի թագավոր Մես-անի-պադայի որդին տաճարը կառուցեց Նին-խուրսագ դիցուհու համար»:

Գտնված արձանագրութիւնը շտեմնված հուզմունք առաջ բերեց հնագետների մեջ: Չէ՞ որ երկու ցուցակում էլ Մես-անի-պադա թագավորը հիշատակվում էր որպէս հետջրհեղեղյան շումերական առաջին դինաստիայի հիմնադիր: Նա, որ մինչ այդ առասպելական անձնավորութիւն էր համարվում, հանկարծ դարձավ պատմական անձնավորութիւն: Նրա որդին եղել է Վուլլիի հայտնաբերած տաճարի հիմնադիրը:

Ե՞րբ է թագավորել Մես-անի-պադան: Չհաջողվեց այդ ստույգ որոշել: Բայց մշակութային նույն շերտում գտնված խեցե ամանները զարդարած նախշերի (իսկ դրանց տարիքը որոշեցին այլ եղանակներով) բնորոշ մոտիվների հիման վրա կարելի էր մոտավորապէս հաշվարկել, որ նա ապրել է մեր թվականութիւնից 2700 տարի առաջ:

Այժմ անդրադառնանք Ուրի թագավորական դամբարաններին: Այնտեղ գտնված արձանագրութիւնից պարզվեց, որ այնտեղ թաղված թագավորներից մեկի անունը Ա-բար-գի է:

Դինաստիական ցուցակներում Ա-բար-գիի անունը չկար: Դա զարմացրեց հնագետներին: Չէ՞ որ նրա մասին շէր կարելի ասել, թե առասպելական անձնավորութիւն է. գտնվել էր բազմապիսի գանձերով լի նրա գամբարանը: Ուրեմն նա իրոք գոյութիւն էր ունեցել և իրոք եղել էր Ուր քաղաքի թագավորը:

Պատասխանն այս էր. Ա-բար-գին ապրել է ավելի վաղ, քան Մես-անի-պադան: Սակայն ցուցակներում Մես-անի-պադան անվանված է շումեր առաջին թագավոր: Իսկ Ա-բար-գին նրա հետ ի՞նչ կապեր է ունեցել:

Դա միայն այն ժամանակ պարզվեց, երբ ընթերցվեցին սեպագրի սալիկները: Մ. թ. ա. մոտավորապէս 2700 թվականին, այսինքն Մես-անի-պադայի գահակալութեան ժամանակ, Ուր քաղաքը գերիշխանութեան է հասել Շումերի մնացած բոլոր քաղաքների նկատմամբ: Հետևաբար, Մես-անի-պադան եղել է ամբողջ Շումերի առաջին թագավորը,

այդ պատճառով էլ նա է գլխավորում ցուցակը: Նրանից առաջ ապրած թագավորները, իսկ նրանց թվում նաև Ա-բար-գին, միայն Ուր քաղաք-պետության տիրակալ են եղել և նույնիսկ, ինչպես իմանում ենք սեպագիր սալիկներից, վասալական կախման մեջ են գտնվել ավելի ուժեղ Լագաշից:

Այսպիսով, մենք մոտեցանք խնդրի լուծմանը: Ամբողջ Շումերի առաջին տիրակալ Մես-անի-պադայի գահակալության ժամանակ, այսինքն մեր թվականությունից 2700 տարի առաջ Ուրի գերեզմանոցը վերածվել է աղբանոցի: Քաղաք-պետության հին թագավորների գերեզմաններն արդեն առանց որևէ այլևայլության աղբածածկ են արվել, որովհետև բոլորովին մոռացված են եղել:

Իսկ ինչքա՞ն ժամանակ պետք է անցներ, որպեսզի հին դամբարանները մատնվեին մոռացության: Պարզ հաշվումներով՝ երկու, երեք հարյուր տարի: Ուրեմն, թագավորական դամբարանները կառուցվել են մ. թ. ա. շորրորդ և երրորդ հազարամյակների սահմանագծում:

«Բարեբեր երկրի հերոսը» և փոքրիկ արքայադուստրը

Մի անգամ գերեզմանոցում՝ պեղումներ կատարելիս բանվորները գտան հողից դուրս ցցված նիզակի պղնձե ծայրագիր: Դրան ամրացված էր ձողին հագցնելու համար նախատեսված ականոց: Այդպիսի գտածոները բազմաթիվ էին և դրան ուշադրություն չէին դարձնի, եթե ականոցը ոսկեփայլ շողշողար այնպես, ասես հենց նոր էր դուրս եկել զինագործի արհեստանոցից: Միայն մաքուր ոսկին կարող էր այդպես դիմանալ ժամանակի քայքայիչ ներգործությանը:

Վուլլին անմիջապես ընդհատեց աշխատանքն ու մանրազնին հետազոտեց գտածոյի տեղը: Եվ այնտեղ, ուր ցցված էր նիզակի ծայրը, նա մի ուղղահայաց ակոս գտավ, որն, անտարակույս, լիովին փտած ձողի հետքն էր: Նիզակի դիրքը նրան արտասովոր թվաց, և նա հրամայեց ակոսին զուգահեռ մի հորան փորել: Ի վարմանս նրա, հորանը տարավ ուղիղ ինչ-որ քարաշեն դամբարանի մուտքի մոտ: Հիմա արդեն ոչ մի կասկած չէր մնում, որ խորհրդավոր նիզակը մի ժամանակ ցույց է տվել դեպի դամբարան տանող ուղին: Հավանաբար, այն ժամանակ, երբ դամբարանը հողածածկ են արել, թաղման արարողության մասնակիցներից մեկը տնկել էր նիզակը, որպեսզի հետո իր համար հեշտացներ թալանելու նպատակով դամբարանի որոնումը: Դամբարանը, սակայն, ձեռք տված չէր:

Վուլլին հուզված հեռուում էր, թե բանվորներն ինչպես են տենդադին շտապողականությամբ դամբարանի մուտքը մաքրում բեկորներից ու ավազից: Վերջապես, նա սրտատրոսի մտավ խավարամած դամբարանը և, տեսածից ապշած, կանգ առավ շեմքին: Դամբարանի ուղղակի հատակին դրված առարկաների շճեցուցիչ առատությունը կարող էր գլխապտույտ առաջացնել: Գիտնականը հասկացավ, որ իրեն բախտ է վիճակվել հայտնաբերելու շումեր մեծատոհմիկի առաջին գերեզմանը, որին չէր դիպել կողոպտչի ձեռքը:

Դամբարանի մեջտեղում դրված էր թաղման փտած պատգարակը, որի վրա հանգչում էր հանգուցյալի սևացած աճյունը: Գլխավերևում ցցված էին հողի մեջ շարքով խրված նիզակներ, իսկ դրանց արանքում, հավասար հեռավորության վրա դրված էին տարբեր մեծության ալեբաստե և թրծակավե սկահակներ: Նիզակների մի այգափսի շարք էլ ցցված էր ոտքերի մոտ, սոսկ այն տարբերությամբ, որ դրանց արանքում հատակի մեջ մխրճված էին կայծքարե ծայրերով նետեր:

Ըստ շումերական սովորույթի, ննջեցյալը պառկեցված էր կողքի, ոտքերը ծնկածալ էին, իսկ ձեռքերում բերանի մոտ՝ բռնած գավաթ կար: Այդ գավաթը կավից չէր շինված, ինչպես մյուս գերեզմաններում գտնվածները, այլ կոփված էր մաքուր ոսկուց: Մեծատոհմիկի կուրծքն ամբողջապես ծածկված էր ոսկե և լաջվարդե ուլունքներով: Արծաթե լայն գոտուց կախված էին ոսկե դաշույնը և լաջվարդե հեսանը: Արմնկի մոտ և գլխավերևում ընկած էին գավաթներ, ձեթի խեցիածե լամպեր, ապարոշներ և բազմաթիվ զարդեր՝ բոլորը կոփված բնական մաքուր ոսկուց: Հանգուցյալի աջ թևի տակ երկսայրի մեծ կացին էր ընկած:

Վուլլին հիացրեց թերթավոր ոսկուց պատրաստված, այտոսկրերը կողային վահանիկներով ծածկող շքահանդեսային սաղավարտը: Այն ուներ վարպետորեն արված գանգուրներով կեղծամի ձև: Մանրամասների մշակման մեջ զգացվում էր ոսկերչական գործի փորձառու վարպետի ձեռքը:

Շճեցուցիչ էր գտնված արժեքների վիճակը: Ժամանակը, բոլոր իրերի այդ անողորմ կործանիչը, անզոր էր եղել ոսկու առջև: Ապարոշները, գավաթները, սաղավարտն ու զարդերն այնպիսի վիճակում էին, ասես դրանք միայն երեկ էին դրել դամբարանի մեջ:

Ոսկե առարկաների վրա փորագրված էր դրանց տիրոջ անունը՝ Մես-կալամ-դուգ՝ «Բարեբեր երկրի հերոս»: Այդ մականունը կամ տիրուղոսը ցույց է տալիս, որ մեռածը թագավոր չի եղել, այլ փառաբանված առաջնորդ: Նա, երևի, մեծարանքի է արժանացել, մասնակցելով գերիշխանության համար շումերական քաղաքների մղած եղբայրասպան պատերազմներին, իսկ թաղման շքեղությունը ցույց էր տալիս, թե նրա ծառայություններն ինչքան բարձր են գնահատել արքունիքում:

Սեպագիր սալիկներում ոչ մի տեղ չի հիշատակվում «Քարեբերձերկրի հերոս» Մես-կալամ-դուգը: Նրա մասին տեղեկությունների համար մենք պարտական ենք այն երջանիկ պարագային, որ գերեզմանների ընչաքաղց թալանչիները հրաշքով շրջանցել են նրա դամբարանը: Վստահությամբ կարելի է ասել, որ նրա մասին ավելին իմանալ այլևս չի հաջողվի: Բայց արդեն այն էլ, ինչ դրված էր նրա աճյունի մոտ և, հետեւաբար, նրա անձնական գույքն էր, շատ բան է ասում այդ զորականի կյանքի մասին: Մենք իմացանք, թե ինչքան են հրան սիրել Ուրում, ինչքան շքեղ են եղել նրա հանդերձն ու գենքը, գավաթները, որոնցով գինի է խմել, ինչքան է սիրել գեղեցիկ սկահակներ, բազմագույն մանյակներ, վարպետորեն շինված գենք ու զարդեր, մի խոսքով, մեզ հայտնի դարձան այն պաճուճագեղությունն ու պերճանքը, որոնց մեջ անցել ու ավատվել է նրա կյանքը:

Արտասովոր հայտնագործության ազդեցության տակ նույնիսկ լրջմիտ հնագետը չկարողացավ սանձել զրգոված երեակայությունը: Նրա երեակայության մեջ, ինչպես իրականում, հառնեցին Մես-կալամ-դուգ ռազմիկի հետ առնչված դեմքեր ու տեսարաններ: Ահա նա կուրացուցիչ շքեղությամբ հաղթականորեն մուտք է գործում Ուր քաղաքը, վերադառնալով ռազմական հաջող արշավանքից: Փողոցների երկու կողմերում շարված մարդիկ խանդավառությամբ ողջունում են նրան, իսկ նա հպարտորեն ձգված, կանգնած է մարտակառքում, ընթանալով դեպի բարձրում, գիկկուրատի կատարին գտնվող տաճարը, որի լազուր պատերն ու ոսկեզօծ գմբեթը շողշողում են արևի տակ: Այնտեղ, շրջապատված իր պալատականներով և ամբողջ ժողովրդի ներկայությամբ թագավոր-քուրմը գուրգուրանքով կդիմավորի նրան ու կփառաբանի նրա ռազմական ծառայությունները:

Առաջնորդի մարտակառքի հետևից, որը ծանրացել է առատ զարդերից, քայլում են բրոնզե սաղավարտներով, նիզակներով, վահաններով, պարսատիկներով ու աղեղներով զինված ռազմիկները: Նրանց հետևից խղճուկ շարքերով քարշ են գալիս ռազմագերիները, որոնց պահակները քշում են խարազանի և բռունցքների հարվածներով: Գերիների մեջ ոչ միայն ուժեղ զինվորներ կան, այլև կանայք ու երեխաներ, անգամ ծերունիներ, ովքեր տակավին պիտանի են քրմերի և մեծատոհմիկների լայնարձակ արտերում ստրկական աշխատանքի համար: Հաղթանակը եզրափակում է ամեն տեսակ ռազմավարով բեռնված սայլերի շարանը:

Բնակչությունը զարմանքով նայում է հերոսին: Կիզիչ արև է շողշողում նրա սրածայր ոսկե սաղավարտի վրա: Կուրծքն ամբողջությամբ ծածկված է ոսկե և լաջվարդե ծանր ուլունքաշարերով: Նրա զենքերն են արծաթե գոտուց կախված ոսկե դաշույնը, շքեղորեն դրվուզված պղնձե վահանը և ոսկեպատ նիզակը, այն նույն նիզակը, որը Վուլլիին դուրս բերեց դամբարանի հետքի վրա:

Պերճ զգեստի փայլից շլացած մարդկանց Մես-կալամ-դուզը պետք է նանարա աստծո կողմից Ուր ուղարկված ինչ-որ արտաերկրային արքա-րած թվար: Եվ ահա արևափայլ քայլում է այն ընտրյալներից մեկը, ում համար նրանք ուժից վեր աշխատանքով խեղում են իրենց ձեռքերը, ում տալիս են բերքը, իսկ իրենք քաղցած մնում, միայն թե արժանանան զիկկուրատի կատարից քաղաքի անվտանգությանը հետևող աստծո բարեհաճությանը: Այդ գերիմաստությունը նրանց ներշնչել են գրեկ-կարճալ իմացող քրմերը: Նրանք ասողերով գուշակել են ապագան և սեպածե մոգական նշանների շնորհիվ ստույգ իմացել, թե ամեն ոք ինչ տուրք պետք է մատուցի թագավորին ու քրմերին:

Նույնպես անձեռնմխելի վիճակում գտնված մեկ այլ գերեզման էլ է վկայում Ուրի տիրապետող դասակարգի հարստության մասին: Այնտեղ թաղված էր վեց կամ յոթ տարեկան մի աղջնակ, հավանաբար, արքայադուստր: Նրա քարաշեն դամբարանում գտնվեցին լաջվարդե ուլունք-ներով ընդելուզված և հաճարենու տերևի ձև ունեցող կախազարդերով ապարոշներ, ոսկե բաժակներ, գավաթներ, թասեր, սկահակներ և բազմաթիվ զարդեր: Դրանք ոչ թե սովորական, այլ շատ փոքրիկ շափերի առարկաներ էին, որ մանկական խաղալիքների տպավորություն էին թողնում:

Հեշտ է պատկերացնել, թե ինչպիսի պերճանքի մեջ է դաստիարակվել այդ փոքրիկ արքայադուստրը, եթե նա կերել ու խմել է հատուկ իր համար պատրաստված ոսկե ամաններից:

Թագավորները միայնակ չեն մեռել

Պեղելով Ուրի աղբանոցի վիթխարի թումբը, բանվորները դեմ առան մի ապշեցուցիչ գտածոյի: Ոչ խորը խանդակի հատակին մի շարքի վրա պառկած էին հինգ փտած կմախքներ: Նրանց մոտ ընկած դաշույնները վկայում էին, որ այդ տղամարդիկ, ամենայն հավանականությամբ, հին Շումերի ռազմիկներից են:

Թեև հնագետներն արդեն ընտելացել էին գերեզմանոցում պեղված զգայացունց գտածոներին, այդ մեկը նրանց մեջ ավելի մեծ հետաքրքրություն առաջ բերեց: Մինչ այդ այնտեղ ոչ մի կոլեկտիվ գերեզման չէր գտնվել և ոչ մի տեղ հանգուցյալները պառկած չէին առանց պաշտպանական փսիաթի կամ դագաղի: Մի արտասովոր պարագա ևս՝ բերանի մոտ բռնած գավաթից բացի, այդ հանգուցյալները անդրշիրիմյան թափառումների համար շունեին գործածության ոչ մի առարկա և նույնիսկ ուտելիքի և խմելիքի ամաններ, որ, որպես կանոն, հանդիպում էին մյուս գերեզմաններում: Դա լիովին հակասում էր այն բանին, ինչ մինչ այդ

հաջողվել էր իմանալ շումերների թաղման արարողությունների մասին:

Այդ կոլեկտիվ գերեզմանը խորհրդավոր գաղտնիքով պարուրված հնագիտական հանելուկ էր: Սակայն նախքան Վուլլին կկարողանար խորասուզվել այդ հանելուկի մասին մտքերի մեջ, նրա ուշադրությունը գրավեց մի նոր հայտնագործություն: Կմախքները գրված էին խաղողի որթից հյուսված փսիաթի վրա, որը կարծես թե գերեզմանի հատակի դեր էր կատարում: Ուշադիր նայելով, Վուլլին նկատեց, որ այդ հատակը ոչ թե հորիզոնական է, այլ թեքված է զգալի անկյան տակ, և փսիաթը ավելի հեռու է տարածվում գետնի տակ, դուրս գալիս գերեզմանի սահմաններից: Սկսեցին փորել այդ ուղղությամբ և առաջանալուն զուգընթաց պարզ էր դառնում, որ այն կարծես թե դեպի հողի տակ թաքնված ինչ-որ անհայտ նպատակակետ տանող ստորանցք է: Հինգ ռազմիկները պառկած էին ստորանցքի սկզբնամասում, ասես նրանց խնդիրն էր պահպանել դրա մոտքը:

Մի քիչ հեռու, ստորանցքի ամբողջ լայնքով մեկ գտնվում էին տասը կանանց երկշարք պառկեցրած աճյունները: Զարդերի արտակարգ շքեղությունը ցույց էր տալիս, որ նրանք հասարակ կանայք չեն եղել: Նրանց գլխներին կային լաջվարդե և սարդիոնե ակերով ընդելուզված ոսկե հերակալներ, պարանոցներին՝ վառվռուն մանյակներ: Կանանց մոտ ևս չկար թաղման ծեսով նախատեսված և ոչ մի առարկա:

Այդ պահից սկսած քլունգի գրեթե յուրաքանչյուր հարված հուզիչ հայտնագործություն էր անում: Կանանց աճյուններից ոչ հեռու գտնվեցին զարմանալիորեն գեղեցիկ տավղի մնացորդներ: Ճիշտ է, փայտե շրջանակն անհետ փտել էր, սակայն մետաղյա պատվածքն ու զարդերը ընկած էին այնպիսի դիրքով, որ կարելի էր պատրաստել գործիքի պակասող մասերն ու այդ ձևով վերականգնել այն ձևով, ինչպիսին մի քանի հազար տարի առաջ շումերներն էին դրել այնտեղ: Տավղի հորիզոնական քառակողմ ձողը պատված էր ոսկու թերթով: Թերթի միջից դուրս էին ցցվել ոսկեզուխ մեխերը, որոնցից ամրացվել են լարերը: Ռեզոնատոր-արկղի եզրերը զարդարված էին սարդիոնից, լաջվարդից և սպիտակ խեցիներից արված խայտանկարով: Սակայն գլխավոր զարդը ոսկու թերթի վրայի դրվագումն էր: Դրվագված էր ցուլի գլուխ, ըստ որում ցուլի աչքերն ու մորուքը լաջվարդից էին: Տավղի վրա ընկած էր կնոջ փտած աճյուն՝ զարդարված ոսկով և գույնզգույն ուլունքներով: Հավանաբար, նա տավղահարուհի էր:

Բանվորներն ու հնագետները չէին հասցրել ազատվել այդ ողբերգական համր տեսարանի թողած տպավորությունից, երբ ստորանցքի հաջորդ հատվածում գտնվեցին ինչ-որ կենդանիների ոսկորներ: Դրանք ավանակների քայքայված կմախքներ էին: Հենց այդտեղ, դրանց մոտ անիվների փոխարեն սահակողեր ունեցած կառքի հետքեր կային: Կողքին ընկած էին երկու տղամարդկանց, անկասկած, կառապանների

կծախքներ: Կառքն առատորեն զարդարված էր սպիտակ, կարմիր և երկ-
նագույն ակերից արված խայտանկաքրներով, ինչպես նաև թերթավոր
ոսկու վրա դրվագված հարթաքանդակներով: Հարթաքանդակներն առյուծ-
ներ էին պատկերում: Առյուծների բաշը լաջվարդից էր:

Կառքի շուրջբոլորն ընկած էին զանազան առարկաներ ու թանկար-
ժեք իրեր: Այնտեղ գտնվեցին ինչ-որ կտրեկտիվ խաղի համար նախա-
տեսված շախմատի յուրօրինակ խայտանկար տախտակ, ոսկե, արծաթե
և ուլեբաստրե սկահակներ ու ջրամաններ, գործիքներ ու արդուզարդի
զանազան պիտույքներ, իսկ որ գլխավորն է, հնագիտական եզակի պա-
րագաներ՝ հրաբխային ապակուց պատրաստված սքանչելի առարկաներ:
Թերթավոր արծաթից վարպետորեն կերտված առյուծի երկու գլուխները
մնացորդներն էին գահի, որի փայտյա մասերը փոշիացել էին, բայց
առավել հետաքրքրություն առաջացրեց կիսափտած արկղը, որի վրա
դեռևս հստակ երևում էր խեցիներից և լաջվարդից արված զարդանկարը:

Գտածոների պահածոյացման և կործանումից դրանց պահպանման
քրտնաջան աշխատանքից հետո հնագետները սկսեցին արկղը մի կողմ
հրել: Եվ այդ պահին զարմանք կտրած ներկաներին հայտնի դարձավ
ևս մեկ զգայացունց գաղտնիք: Արկղը ծածկել էր ստորանցքի հատակը
կազմող քարե շարվածքի մեջ եղած անցքը: Դա գիտակցաբար բացված
ճեղք էր, ինչը ապացուցվում էր նրանով, որ հետո այն փորձել էին քո-
ղարկել մի կերպ շարված աղյուսներով:

Շարվածքը գերեզմանների գողերի կողմից, իհարկե, թալանված
դամբարանի եզրափակիչ գմբեթի մի մասն էր: Այնտեղ գտնվեցին միայն
երկու մանրակերտ մակույկներ, առանձնապես հետաքրքրական այն
բանով, որ իրենց ձևով ոչնչով չէին տարբերվում Միջագետքի բնակչու-
թյան կողմից մինչև հիմա էլ օգտագործվող մակույկներից: Սակայն
ամենաարժեքավոր գտածոն զլանաձև կնիքն էր՝ մի մակագրությամբ,
որից հետևում էր, որ մի ժամանակ դամբարանում թաղվել է Ա-բար-գի
անունով մի թագավոր:

Դամբարանի մանրակրկիտ զննումը երևան բերեց ևս մի զարմա-
նալի բան՝ Ա-բար-գի թագավորն այդտեղ թաղվել էր ուրիշ մարդկանց,
հավանաբար, մերձավոր հարազատների հետ: Այսպիսով, ընդհանուր
գերեզման է եղել անգամ թագավորի քարաշեն դամբարանը:

Հնագիտական որոնումների հետագա ընթացքն ըմբռնելու համար
հարկ է պարզորոշ պատկերացնել, թե ինչպիսի դիրք ունեին թեք ստո-
րանցքը և դամբարանը: Պեղված ստորանցքը, որտեղ գտնվեցին տղա-
մարդկանց ու կանանց աճյունները, սահակողերով կառքը, տավիղն ու
արկղը, չէր կարող տանել դեպի Ա-բար-գի թագավորի դամբարանը այն
պարզ պատճառով, որ անցնում էր գմբեթարդ կամարի գազաթի վրայով,
դրան ընդհուպ մոտենալով այն տեղում, ուր արկղը քողարկում էր ճեղքը:

Հետևաբար, ստորանցքը պետք է տաներ դեպի հողով ծածկված ժնկ իւրիշ դամբարան: Շուտով Ա-բար-գիի դամբարանից ոչ հեռու իրոք գտնվեց այդ դամբարանը, միայն այն տարբերութեամբ, որ հողի մէջ ավելի բարձր դիրք ունէր, այնպես որ թէք ստորանցքն ուղիղ դժով տանում էր դեպի դրա մուտքը:

Նախքան մուտքը մաքրելն ու նոր դամբարանը բացելը, Վուլին վճռեց փնտրել մյուս՝ Ա-բար-գիի դամբարանի ստորանցքը: Կասկածի ենթակա չէր, որ այդպիսի ստորանցք պետք է գոյութիւն ունենար հողի ավելի խոր շերտերում: Եվ իրոք, դրա առաջին հետքերը գտնվեցին առաջին ստորանցքի տակ երկու մետր խորութեան վրա: Նրա մուտքի մոտ երկշարք պառկած էին նիզակներով ու բրոնզե սաղավարտներով վեց զինվոր: Հողը մի քիչ փորելուց հետո հանվեցին եղներ լծած փայտե երկու, կատարելապես փտած քառանկով սայլեր: Այդ եզների կմախքներն այնպես լավ էին պահպանվել, որ նրանցից մեկը ամբողջութեամբ հանվեց հողի տակից: Լծասարքը, հատկապես երասանը, շքեղ զարդարված էր ուլունքներով ու արծաթով: Եզների ոսկորների վրա ընկած էին երկու տղամարդկանց, հավանաբար, սայլապանների աճյունները:

Ա բար-գիի դամբարանի պատի հիմքի մոտ գտնվեցին ինը նստած կանանց աճյուններ: Նրանց գանգերին շողշողում էին լաջվարդով և սարդիոնով, ինչպես նաև հաճարենու տերևի ձև ունեցող ոսկե կախացներով զարդարված ոսկե ապարոշներ: Կանանց ոտքերի մոտ ընկած էին մահիկաձև ոսկե ականջօղեր, լաջվարդից և սպիտակ խեցուց շինված վարդյակներով սանրեր, ինչպես նաև մանյակի շաղ եկած գուլնզգույն ուլունքներ: Դժվար է նկարագրել դրամատիկ դիրքերով պառկած այդ կանանց տեսքը: Մեջքները դամբարանի դրսի պատին հենած, ոտքները փորվածքի լայնքով մեկնած այդ կանայք մի ժամանակ այդտեղ տեղի ունեցած ողբերգութեան համր, բայց պերճախոս վկաներն էին:

Դրանից հետո բանվորների բահերը բացում էին այդ ողբերգութեան նորանոր հետքեր: Կանանց խմբի և սայլի միջև ընկած տարածութիւնը տառացիորեն լեփ-լեցուն էր այլ տղամարդկանց ու կանանց աճյուններով: Դամբարանի հողածածկ մուտքի երկու կողմերում կանգնած էին մարտական լիակատար սպառազինութեամբ ռազմիկներ:

Քիչ հեռու գտնվում էին շքեղ զարդերով երկու տավղահարուհիներ: Նրանց տավիղները շումերական զարդարվեստի իսկական գլուխգործոցներ էին: Դրանք զարդարված էին թերթավոր արծաթի վրա դրվագված ցուլի դուխներով, ըստ որում ցուլերի աչքերն ու կլիկեր շինված էին սաղափից ու լաջվարդից: Փայտյա մասերից, բնականաբար, ոչինչ չէր մնացել, իսկ պահպանված մնացորդները ցույց էին տալիս, որ ռեզոնանսային արկղերը զարդարված են եղել լաւափե թիթեզներով, որոնց վրա փորագրված էին կենդանիների կյանքից վերցված զավեշտական տեսարաններ:

Հենց Ա-բար-գիի դամբարանի կողքին կար, ինչպես արդեն ասացինք, մեկ այլ դամբարան, դեպի որը տանում էր ավելի վերևում գտնվող ստորանցքը: Այնտեղ դրված արկղի գաղտնիքը պարզվեց: Ստորանցքը փորելիս գերեզմանափորները բահով դիպել են Ա-բար-գի թագավորի դամբարանի գմբեթարդ տանիքին: Գայթակղութունը եղել է անհաղթահարելի: Նրանք բացված ճեղքից մտել են դամբարան և թալանել, շխնայելով նաև թագավորի աճյունը: Շտապելուց չեն նկատել միայն արծաթե երկու մանրակերտ մակույկները: Հետո բացված ճեղքը մի կերպ փակել են աղյուսներով և քողարկել արկղով: Դա ոչ մեկի մեջ կասկած չի հարուցել, որովհետև սրահը լիքն է եղել բազմաթիվ ուրիշ առարկաներով՝ սկահակներով, գավաթներով, սայլերով ու տավիղներով:

Երկու ստորանցքերից հանված գտածոները պահպանելով ոչնչացումից, Վուլփին ձեռնամուխ եղավ երկրորդ դամբարանի բացմանը: Բանվորները քարաբեկորներից մաքրեցին մուտքը, և արշավախմբի անդամները սրտատրոփ մտան խավար դամբարանը: Այն, ինչ ներկայացավ ապշած հնագետներին, նման էր սահմուկելի դրամայի եզրափակիչ տեսարանի, որտեղ գործող անձինք անկենդան վայր են ընկնում գեղեցիկ կեցվածքներով ու քարանում վարագույրն իջնելուց առաջ: Միայն թե այստեղ դերասանների փոխարեն ընկած էին ժամանակից սևացած կմախքներ: Նրանց վրայի զարդերի առատութունը հնարավորութուն տվեց իսկույն եզրակացնելու, որ դրանք կանանց աճյուններ են:

Դամբարանի մեջտեղում փտած պատգարակի վրա կնոջ աճյուն կար, ամբողջովին ծածկված արծաթե, ոսկե, լաջվարդե, կվարցե, ագաթե և քաղկեդոնե ուլունքներով: Բերանի մոտ ընկած էր մի ոսկե ծանր գավաթ: Աջ արմնի մոտ գտնվում էին լաջվարդե գլխիկով ոսկե երեք ծամկալ, ինչպես նաև ձկների ու վիթերի պատկերով շորս համայիլ:

Մահացածի գլխարկը կազմված էր հսկայական կեղծամը ժաներիզներով օղակած ոսկե ժապավենի գալարներից: Ապարոշից կախված էին ոսկե տերևների և սպիտակ ու երկնագույն ապակուց շինված թերթերով ծաղիկների ձև ունեցող զարդեր: Գանգի տակ գտնվեց ոսկե վարդյակներով զարդարված սանր: Գլխի երկու կողմից կախված էին քառանկյուն ուլունքների երբեմնի շարանները, որ հիմա անկանոն ցրիվ էին եկել սլատգարակի վրա: Քուղերի ծայրերից կախված են եղել լաջվարդից վարպետորեն քանդակված ցուլի և հորթի պատկերով համայիլներ:

Պատգարակին հենված, կոացած նստած էին երկու սպասուհիներ, մեկը՝ գլխավերևում, մյուսը՝ ոտքերի մոտ: Դամբարանի հատակին կային ամեն տեսակ առարկաներ ու թանկարժեք իրեր՝ ապարոշներ, ոսկե թասեր, արծաթե սկահակներ ու ձեթի լամպեր, արծաթե երկու զոհասեղան, ինչպես նաև խեցիաձև զարդատուփեր, որոնցում շրթներկը դեռևս պահպանվել էր:

Սակայն ամենակարևոր գտածոն գլանաձև կնիքն էր մի մակագրու-

թյամբ, որից կարելի էր իմանալ, որ դամբարանում թաղված է թագուհի Շուբ-ադը¹: Վուլլին եկավ այն եզրակացության, որ նա Ա-բար-գի թագավորի կինն է եղել: Հավանաբար, մահվանից առաջ նա ցանկություն է հայտնել, որ իրեն թաղեն ամուսնու կողքին, ինչով և պետք է բացատրել երկու դամբարանների հարևանությունը:

Այդ նախապատմական գերեզմանների գաղտնիքը բացահայտվեց դրանց ամբողջ սահմուկելի դրամատիզմի մեջ՝ շումեր թագավորների և թագուհիների հետ հետմահու ճանապարհ են ուղարկել ողջ արքունիքին: Ա-բար-գի թագավորը պառկած էր երեք մերձավորների շրջապատում, իսկ դեպի դամբարան տանող ստորանցքում թաղված էին վաթսուներկու հոգի: Շուբ-ադ թագուհուն ուղեկցել են ամենամերձավոր շրջապատից քսանհինգ մարդ, ըստ որում երկու ամենասիրելի սպասուհիներին բախտ է վիճակվել մնալու նրա պատգարակի մոտ, բուն թագավորական դամբարանում:

Տավղահարուհիները, եղերամայրերը և թաղումից ուշացած սպասուհին

Ի՞նչ մահով են մեռել թաղման մռայլ ծիսակատարության զոհերը, այն բոլոր զինվորները, սպասավորները, տավղահարուհիները, վարձակներն ու աղախիները, որոնց աճյունները գտնվեցին Ուրի գերեզմանոցում: Հնագետները երկար ժամանակ գլուխ էին կոտրում դրա վրա և սրամիտ դատողությունների միջոցով, ինչպես դետեկտիվ վեպում, հանգեցին հետաքրքիր հետևությունների:

«Հանցանշանների» հիման վրա նրանք նախ և առաջ պարզեցին, որ զոհերի նկատմամբ կոպիտ ուժ չի կիրառվել: Այդ էր վկայում կմախքների հանգիստ դիրքը, որն այնպիսի տպավորություն էր թողնում, ասես թագավորական թափորի անդամներն իրենց հոժար կամքով են հավիտենական քուն մտել: Թանկարժեք իրերի, զինվորական հանդերձանքի, տավիղների, իսկ ամենից առաջ բերանի մոտ մեռածների բռնած գավաթների բնականոն, ոչնչով չխախտված դիրքը վկայում էր, որ զոհերի և նրանց սպանողների միջև ոչ մի պայքար չի եղել:

Ճշմարտանման չէր թվում նաև այն ենթադրությունը, թե նրանց սպանել են ինչ-որ այլ տեղում, և թաղման խանդակ են բերվել արդեն մեռած մարմինները: Այդպիսի տեղափոխության դեպքում պետք է գոնե փոքր-ինչ խախտումներ տեղի ունենային զարդերի, զենքի կամ ծիսա-

¹ Շուբ-ադի անձի և անվան վերաբերյալ մյուս կարծիքը տես՝ «История древнего Востока», М., «Наука», 1983, էջ 176. Մ. 2. Թ.

էան ամանների դիրքում, մի բան, որ հնագետները շահյունաբերեցին ամենամանրակրկիտ զննումների ժամանակ:

Նախապես հարկ էր մի կողմ վանել նրանց ողջ-ողջ թաղելու հնարավորության մասին միտքը: Նմանօրինակ մահը ակնհայտ ապացույցներ կթողներ: Ողջ-ողջ թաղված մարդիկ, եթե նույնիսկ շժմած լինեին Քմրադեղերից, կայաքարեին մինչև վերջին շունչը և կմեռնեին հոգեվարքի շղաձգություններից կծկված:

Գաղտնիքի ենթադրական բացատրությանն օգնեց մի գտածո, որին սկզբում մեծ նշանակություն չտվեցին: Դա տավղահարուհիների մոտ գտնված պղնձե մի կաթսայիկ էր: Նկատելով, որ կաթսայիկը դրված է հարթակի մեջտեղում, Վուլլին կասկածեց, թե այն որևէ կապ ունի գավաթների հետ, որ թաղման արարողության բոլոր զոհերն անխտիր բռնել էին իրենց բերանի մոտ:

Հնագետը մի այսպիսի ենթադրություն արեց՝ կաթսայիկը պարունակել է ինչ-որ շժմեցնող հեղուկ, գուցե օպիումի կամ հաշիշի լուծույթ: Մահվան դատապարտված մարդիկ հերթով մոտեցել են կաթսայիկին, գավաթով քնաբեր հեղուկ վերցրել, մի ումպով խմել, իսկ հետո վերադարձել թաղման ծիսակարգով սահմանված իրենց տեղն ու քուն մտել: Այդժամ զինվորները կամ քրմերը իջել են դամբարան և սրտին հասցված դաշույնի հարվածով սպանել զոհերին:

Վաթսունութ կանանցից քսանութը քունքերին ունեին թերթավոր ոսկուց շինված ժապավենաձև զարդեր: Հնագետները սկզբում կարծեցին, թե մնացած կանայք գլխներին ոչ մի զարդ չեն ունեցել: Սակայն ավելի ուշ այդ կանանց գանգերի վրա նշմարվեցին ծիրանագույն տարօրինակ բծեր: Քիմիական վերլուծությունը ցույց տվեց, որ դա արծաթի քլոր է: Հետևությունն ակնհայտ էր. այդ կանանց ապարոշները շինված են հղել արծաթից, որը լիովին քայքայվել է, որովհետև ի տարբերություն ոսկու, արծաթը քայքայվում է օրգանական թթուների միջավայրում:

Քիմիական այդ երևույթի կապակցությամբ հնագետները դեմ առան հանդիսավոր թաղման ժամանակ տեղի ունեցած մի դեպքի բնորոշ և միաժամանակ հետաքրքրական հետքերի: Կանանցից մեկի աճյունի մոտ գտնվեցին մաքուր ոսկուց ականջօղեր: Սակայն տարօրինակ թվաց, որ նրա գլխին ոչ մի զարդ չկար և գանգի վրա նույնիսկ արծաթից մնացած բծեր չկային: Հարց ծագեց՝ ինչպե՞ս թե: Այդպիսի ականջօղերով կին և առանց ապարոշի՞: Այդտեղ ինչ-որ բան այնպես չէր, չէ՞ որ բոլոր կանայք գլխներին զարդեր են ունեցել:

Երբ կնոջ աճյունը սկսեցին հավաքել, գոտկատեղի բարձրության վրա գորշ գանգվածից շինված մի տափակ բոլորակ նկատեցին: Տարօրինակ առարկան մաքրեցին ու զննեցին խոշորացույցով: Եվ ահա անակրնկալ. դա արծաթե նույնպիսի ապարոշ էր, ինչպես շումեր մնացած կանանցը, միայն թե պինդ կծկած: Գոտկատեղի մոտ ընկած բոլորակի

գիրքը ցույց էր տալիս, որ կինը պահել է այն զգեստի գրպանում: Կծկած հերակապը բավական մեծ զանգված էր, բացի այդ, զգեստի գործվածքը պաշտպանել էր օրգանական թթուների ներգործությունից և, ի տարբերություն մյուս սպարոշների, այն լիովին չէր քայքայվել:

Կնոջ գլխին շողշողալու փոխարեն ապարոշն ինչո՞ւ էր գտնվում նրա գրպանում: Չէ՞ որ թաղման մուտքի ծիսակատարության բոլոր մասնակիցները փայլել են իրենց հանդերձների ամբողջ շքեղությամբ: Այդ մասին հնազանդները կարող էին միայն տարբեր կոահումներ անել: Ամենաճշմարտանմանը այն ենթադրությունն էր, որ կինը թաղումից ուշացած արհունի սպասուհի է: Երիտասարդ կինը չի հասցրել ժամանակին հազնըվել և աճապարելուց ապարոշը խոթել է գրպանը, որպեսզի այն գլխին դնի ճանապարհին կամ բուն թաղման արարողության ժամանակ: Հիմա այլևս չի իմացվի, թե նա ինչու չի արել այդ:

Հնագիտական այս աննշան հայտնագործությունը մեզ շատ բան է ասում: Դրանում, ինչպես բյուրեղյա կախարդական գնդիկում, մենք տեսնում ենք այդ դրամայի կենդանի մասնակիցների արտացոլումը, այն մարդկանց, ովքեր ունեցել են իրենց թուլություններն ու հոգսերը, այն մարդկանց, ովքեր նման են եղել մեզ, թեև ապրել են այդքան հեռավոր ժամանակաշրջանում և մեզ միանգամայն խորթ հասարակական սլայմաններում: Մեր երևակայության մեջ պարզորոշ հառնում է այդ երիտասարդ կինը, որ դեռ վերջերս լի էր կյանքի խնդրությամբ, իսկ հիմա գունատ ու դողահար, իր պատմուճանի ծալքերն է հարդարում, որպեսզի արժանավայել դիմավորի անմարդկային ծիսակարգի մոլոքը, որը խլելու է նրա երիտասարդ կյանքը:

Դժվար է հիմա վստահորեն ասել՝ այդ մարդիկ կամովին են մահ ընդունել, թե ոչ: Վերը հիշատակված հանգամանքները վկայում են, որ զոհաբերությունը կամավոր է եղել: Թագավոր-քրմին համարել են աստվածային էակ, իսկ նրա մահը՝ պարզ անցում դեպի այլ աշխարհ, ուր նա գրավելու էր իր կարգին արժանի տեղ: Ուստի բացառված չէ, որ թագավորին գերեզման ուղեկցելը և անդրշիրիմյան կյանքում նրան սպասավորելը ծառաները համարել են արտոնություն և անձնական շահ:

Մյուս կողմից, որոշ փաստեր վկայում են, որ թագավորի աստվածայնության նկատմամբ այդ հավատը Շումերում այնքան էլ կույր և ընդհանուր չի եղել, ինչպես կարող էր թվալ: Մենք արդեն իմացանք Ա-բար-գի թագավորի դամբարանի կողոպտման մանրամասները: Գերեզմանափորները հանցագործությունը կատարել են թաղումից ոչ շատ անց, ըստ որում թագավորի աճյունը քարշ տալով տարել են մեկուսի տեղ, որպեսզի առանց արգելքների նրա վրայից պոկեն բոլոր թանկարժեք զարդերը: Դժվար է ենթադրել, որ նրանք հավատացել են թագավորի աստվածայնությանը և վախեցել նրա վրիժառությունից, եթե հանգգնել են մի այդպիսի անաղակող սրբապղծություն կատարել:

Իսկ չէ՞ որ գերեզմանափորները Ուր քաղաքի բնակիչներ էին և քաղաքի մյուս բոլոր բնակիչների հետ պետք է գտնվեին ամենագոր նախապաշարմունքի ազդեցության տակ, որ իրենց մանկուց ներշնչել էին քրմերը: Եվ եթե այդ մարդիկ, հակառակ ամեն կարգի ազդեցու- թյունների, հանդգնել են թագավորի աճյունի նկատմամբ մի այդպիսի անզուսպ լիտիություն կատարել, բացառված չէ, որ թաղման ծեսի զո- հերի մեջ ևս եղել են այնպիսիները, ովքեր չեն հավատացել քրմերի ներշնչումներին: Մահը թագավորական գերեզմանում, չնայած դրան ուղեկցած շքեղությանը, նրանց համար, անտարակույս, տառապանք է եղել:

Ուստի պետք է ենթադրել, որ բազմաթիվ զոհեր ի մահ են գնացել ոչ հոժար կամքով: Սակայն նրանց դիմադրության շնչին իսկ հետքեր ինչո՞ւ չգտնվեցին: Պատասխանը պարզ է՝ նրանք ի մահ են գնացել նույն- քան հանգիստ, ինչպես դատապարտվածն է կառափնարան գնում, երբ հնարավորություն չկա ոչ փախչելու, ոչ էլ դիմադրելու: Նրանք ի մահ են գնացել սարսափահար, այլ ոչ թե անդրշիրիմյան կյանքում մեռած թագավորի շքախմբում ծառայելու հույսով:

Թաղման բարբարոսական արարողությունն արմատներ է ձգել հա- սարակության դասակարգային կառուցվածքի մեջ, և թագավորին աստ- վածացնելուն հավասար, կառավարող դասակարգերի համար եղել է մարդկանց վրա իշխելու գործիքներից մեկը: Թագավորի աստվածայնու- թյան նկատմամբ հավատի թուլացմանը զուգընթաց դաժան սովորույթը հանդիպել է հարաճուն դիմադրության և համեմատաբար վաղ է սկսել վերանալ: Ավելի ուշ ժամանակների թագավորական շիրիմներում հնա- գետները մարդկային զոհեր այլևս չեն գտել, որից պետք է հետևություն անել, որ այդ ծեսը վերացել է Ուր քաղաք-պետության թագավորական առաջին դինաստիայի հետ:

Թաղման արարողակարգը վերստեղծելու փորձ անելու համար վուլլին բավականաչափ նյութ հավաքեց թագավորական գերեզմաննե- րում: Մի տեղ կմախքների մոտ գտնվեցին գործվածքի շափազանց մանրիկ մնացորդներ, որոնց օգնությամբ որոշեցին, որ կանայք հագած են եղել ծիրանագույն զգեստներ: Ըստ երևույթին, տավղահարուհիները կազմել են կանանց մեկ, իսկ վարձակները, երգչուհիներն ու սպասու- հիները՝ մյուս խումբը: Տավղահարուհիներից մեկը ձեռքը պահել էր իր տավղի այն մասի մոտ, որտեղ մի ժամանակ լարեր են եղել: Դա այն- պիսի տավորություն էր թողնում, ասես տավղահարուհին մեռնելով, վերջին ակորդներն է վերցրել:

Այդ և մյուս մանրամասնությունների հիման վրա դժվար չէր պարզել թաղման ամբողջ պատկերային ընթացքը: Առաջինը թեք ստորանցք ոտք են դրել տավղահարուհիները, երգչուհիներն ու վարձակները: Այնուհետև գնացել են պալատական կանայք ու սպասուհիները, ուղամիկներն ու

կատարանները, մեծատոհմիկներն ու սպաները: Ծառաները ֆերս են տարել ամաններն ու զարդատուփերը: Ավանակներն ու լեզանքները քաշելով ներս են տարել սայլերն ու մարտակառքերը, մի խոսքով, գերեզմանում հավաքվել է մեռած թագավորի ողջ բարիքը:

Լիովին ասպազեն ռազմիկները հոծ շարքով գրավել են գերեզմանի հավիտենական պահակների իրենց տեղը: Պատի երկայնքով կանգնել են տավղահարուհիներն ու երգչուհիները: Միջագետքի կիզիչ արևի տակ կրակի պես հուրհրացել են կանանց ծիրանագույն պատմուճանները, կայծկլտացել ոսկե և արծաթե թանկարժեք զարդերը, պսպղացել պղնձե ողորկված սաղավարտները, նիզակներն ու դաշույնները, ծիածանի բոլոր գույներով շողշողացել են մանյակների ուլունքները:

Բաց դարպասից երևացել է թագավորի՝ ծիսական ճոխ հանդերձներով պատգարակին դրված աճյունը: Ամբողջ արարողության ընթացքում լսվել են տավիղների մեղմ հնչյունները, կանանց երգչախմբի երգը, քրմերի ծիսական բացականչություններն ու արքունի եղերամայրերի ողբը:

Պայմանական ազդանշանով թագավորական թափորի մասնակիցները հերթով մոտեցել են մեծ կաթսային, գավաթով քնաբեր ըմպելիք վերցրել և մի ումպով խմել այն: Հետո վերադարձել են իրենց տեղը, պառկել գետնին ու աստիճանաբար քուն մտել: Տավղահարուհիները ավելի ու ավելի դանդաղորեն են դիպել լարերին, լռել են խմբերգչուհիները, և շուրջբոլորը տիրել է կատարյալ, սպասումով լի լուսթյուն:

Որոշակի պահին զիկկուրատի կատարից լսվել են շեփորների հնչյունները: Քրմի ազդանշանով զինվորները իջել են փոսը, դաշույնի վարժ հարվածներով վերջ տվել մարդկանց ու կենդանիների կյանքին: Այնուհետև գերեզմանափորները դամբարանի մուտքը ծածկել են խճաքարով, հսկայական փոսը թեքուղու և դամբարանի հետ միասին լցրել հողով, ու թաղման մասնակիցները վերադարձել են իրենց առօրյա զբաղմունքին:

Ընդամենը երեք հարյուրամյակ է անցել, և ստորգետնյա դամբարանում հանգչող ամուսինները՝ թագավորն ու թագուհին, մոռացվել են: Ուրի բնակիչների հաջորդ սերունդներն արդեն ոչինչ չեն իմացել իրենց հետ այնքան զոհեր և այնքան գանձեր տարած տիրակալների մասին, չեն իմացել նույնիսկ, որ այդտեղ մի ժամանակ գերեզմանոց է եղել: Եվ նրանք սկսել են ամեն տեսակ աղբ թափել այդտեղ: Գնալով թումբը բարձրացել է, դամբարանները մնացել են հողի խոր շերտի տակ: Անցել է ևս յոթ դար, և այդտեղ նոր գերեզմանոց են հիմնել, ուր թաղված էին Լուսնի դիցուհու քրմուհու՝ Սարգոն թագավորի դստեր վարսավիրն ու ծառայապետը:

Միայն հինգ հազար տարի անց հնագետները մոռացութեան խավարից դուրս հանեցին Շուր-ադ թագուհու և Ա-բար-գի թագավորի անունները, բացահայտեցին նրանց թաղման սահմուկների գաղտնիքը:

Աստվածային կալվածքների վարձակալները

Երբևէ արգավանդ Միշապետքը մի ժամանակ աղքատ երկիր է եղել. բնությունը նրան ոչ մի հանածո հարստություն չի պարգևել: Այդ պատճառով հումքը, որից շումեր արհեստավորները գեղարվեստական իրեր են պատրաստել, որ այնպես առատորեն գտան հնագետները, կարող էր միայն արտասահմանից ներմուծված լինել:

Թագավորներն ու քրմերը ուրիշ, երբեմն հեռավոր երկրներից ներմուծել են մայրի ծառի փայլե, կիսաթանկարժեք քարեր, ալեբաստր, դիորիտ, պղինձ, սադամ, ոսկի, արծաթ և, իհարկե, իրենց այնքան ևիրած լազվարդը: Այդ բոլոր արժեքավոր ալլանքները նրանք ստացել են իրենց երկրի գյուղատնտեսական մթերքների, այսինքն բրդի, անասունների, գարու, ձեթի, տնային թռչունների և արմավի, իսկ որոշ շափով էլ նաև շումեր արհեստավորների ստեղծած իրերի՝ բրդյա գործվածքների, կաշվե ոտնամանների, զենքի, զարդերի, խեցե առարկաների, գործիքների, վարպետորեն փորագրված կնիքների, մետաղյա ամանների, արձանիկների և դիմահարդարման ապրանքների փոխարեն:

Շումեր թագավոր-քրմերի գերեզմաններում գտնված զարմանալի գանձարանները այն ժամանակվա հասարակական հարաբերությունների մասին մեզ ավելի շատ բան են պատմում, քան գրավոր շատ աղբյուրներ: Ամենից առաջ մենք իմանում ենք երկու հիմնական փաստի մասին. առաջին՝ մեր թվականությունից արդեն երեք հազար տարի առաջ երկրագործության տեխնիկական առաջընթացի հետևանքով շումեր գյուղացին ավելի շատ պարեն է արտադրել, քան ինքը կարող էր սպառել, երկրորդ՝ տիրապետող դասակարգերը վերցրել են այդ բոլոր ավելցուկները և օգտագործել անձնական հարստացման համար:

Շումերական քաղաքների դասակարգային կառուցվածքի մասին բազմաթիվ տեղեկություններ հաղորդեցին նաև տաճարների և պալատների փլատակներում գտնված հիշատակարաններն ու ժամանակագրությունները: Քրմերն ու շումեր թագավորներից ոմանք ստեղծել են գրադարաններ, որտեղ թրծակավե «ծրարներում» պահվել են սեպագիր սալիկները: Բարեբաստիկ պատահականությամբ մինչև մեր ժամանակները պահպանվել են այդպիսի մի քանի գրադարաններ, օրինակ, Լագաշում, Նիպուրում և Սիպարում, որոնք պարունակում են սեպագիր տասնյակ հազարավոր սալիկներ, իսկ ամենից առաջ Նինվեի մեծ գրադարանը,

որ ստեղծել է վավերագրերի ջերմ սիրահար Աշուրբանիպալ թագապուլը, ընդօրինակողների մի ամբողջ բանակի օգնությամբ իր պալատում ժողովելով ասուրա-բաբելական գրեթե ողջ գրականությունն ընդգրկող բոլոր մատչելի սկզբնաղբյուրները:

Բուրժուական հնագիտությունը չի կարողացել օգտագործել այդ նյութերը և գլխավորապես զբաղվել է թագավորների ու նվաճումների պատմությամբ: Հնագետները բաբելական աղոտ պատկերացում են բացել այնպիսի հարցերում, ինչպիսիք են միջագետքյան ժողովուրդների նախնադարյան համայնքի քայքայվելը, սոցիալական անհավասարության երևան գալը, ստրկատիրության ծագումը, ինչպես նաև սաղմնավորումը դասակարգային պայքարի, որի պարզորոշ արձագանքը գտնում ենք շումերական գրադարանների նյութերում:

XIX դարի երկրորդ կեսին ասուրագիտական հետազոտություններին միանգամայն այլ ուղղություն տվեց ռուս հանձարեղ գիտնական Միխայիլ Վաօիլևիչ Նիկոլսկին: Ի հակակշիռ բուրժուական մյուս պատմաբանների, նա նախ և առաջ հետաքրքրվեց ժողովրդական լայն դանգվածների կյանքով ու աշխատանքով և սեպագիր սալիկների ջանադիր վերլուծության հիման վրա հիրավի ցնցող հայտնագործություններ արեց այդ բնագավառում: Մանրագնին հետազոտելով Լագաշում գտնված սեպագիր սալիկները, Նիկոլսկին շումերների կյանքի և սովորույթների մասին երկհատոր աշխատություն գրեց, որը շումերական քաղաք-պետություններում եղած մասնագիտությունների և աշխատանքի պայմանների, ստրկության, իսկ ամենից առաջ՝ հողի մշակման մասին տեղեկությունների հարստագույն աղբյուր է: Նիկոլսկին առաջինը ճշտորեն ներկայացրեց Շումերում գոյություն ունեցած տնտեսական և հասարակական հարաբերությունները: Նրա հետազոտությունները շարունակեցին սովետական գիտնականները: Օգտվելով դիալեկտիկական մեթոդից, նրանք մեզ տվեցին նախնադարյան համայնքից մինչև ստրկատիրական պետություն շումերական հասարակության զարգացման հստակ պատկերը: Այդ հետազոտությունների խորաքնին ամփոփումը եղավ Վ. Ի. Ավդիևի «Հին Արևելքի պատմություն» սքանչելի աշխատությունը:

Մյուս ցեղերի նման, շումերներն իրենց զարգացման ընթացքում անցել են նախնադարյան համայնքի ժամանակաշրջանը, երբ տակավին գոյություն չունեին մասնավոր սեփականությունն ու մարդու կողմից մարդու շահագործումը: Սակայն տեխնիկական առաջընթացին, արտադրողական ուժերի զարգացմանը, գույքային և սոցիալական անհավասարության խորացմանը զուգընթաց նախնադարյան համայնքը քայքայվել է:

Թագավորական գերեզմաններում գտնված հուշարձանները, ինչպես նաև այլ աղբյուրներ վկայում են, որ մեր թվականությունից դեռ 3000 տարի առաջ նախնադարյան համայնքի քայքայումը կատարված փաստ էր շումերների մոտ: Նրանց հասարակության մեջ տեսնում ենք գույքա-

լին և դասակարգային խոր անհավասարություն՝ մի կողմից կառավարող խավերի և աստվածություն պատվանդանին բարձրացված թագավորի անսահման հարստությունը, մյուս կողմից՝ կարծես թե ազատ, բայց տնտեսապես կախյալ գյուղացուն և արհեստավորին և, վերջապես, քրմերի ու մեծատոհմիկների դաշտերում աշխատող անհամար ստրուկներին:

Իրերի այդ վիճակը սքողվել է նախնադարյան համայնքի ավանդական ձևերով, որը, սակայն, արդեն կորցրած է եղել իր վաղեմի էությունը: Ամբողջ վարելահողը համարվել է աստվածապատկան, իսկ թագավորությունը եղել է սոսկ կառավարիչ, «երկրագործ-վարձակալ», ինչպես ինքն է իբեն տիտղոսավորել, որի պարտականությունն էր այդ հողը բաժանել սոհմերին, ընտանիքներին և առանձին մարդկանց:

Շումերական Լագաշ քաղաքում գտնված սեպագիր սալիկները բացում են այն գաղտնիքի քողը, թե այդ հողաբաժանումը ինչպես է կատարվել գործնականում: Հիշատակարանները ամենից առաջ վկայում են քրմերի հարստությունների և հզորության մասին: Արդեն այն ժամանակ վարելահողերի մեծ մասը պատկանել է քաղաքում գտնվող քսան տաճարներին: Մնացածը թագավոր-քուրմը բաժանել է մեծատոհմիկներին և մանր երկրագործներին:

Շարքային հողագործի համար վարձակալման պայմաններն անհամեմատ ծանր են եղել, քան մեծատոհմիկների համար: Մենք բավական ստույգ տեղեկություններ ունենք տաճարապատկան կալվածքներում տիրած հարաբերությունների մասին, որովհետև Լագաշում գտնվել է Բաու դիցուհու տաճարի ընդարձակ հաշվապահությունը, տաճար, որը տիրել է այդ քաղաք-պետության բոլոր վարելահողերի կեսին: Իրենց հողերի երեք քառորդը քրմերը վարձակալության են տվել գյուղացիական ընտանիքներին և անգթորեն շահագործել նրանց, վարձակալման վճարի պատրվակով վերցնելով տարեկան բերքի յոթանասունից մինչև ութսուն տոկոսը:

Մնացած հողը տաճարը մշակել է, օգտագործելով ստրկական աշխատանքը: Բանվորների պահպանված ցուցակների շնորհիվ մենք կարող ենք բավական ստույգ պատկերացում կազմել, թե ովքեր և ինչ պայմաններում են աշխատել տաճարապատկան հողերում և ինչ է արտադրվել այնտեղ:

Ցուցակում նշված են 27 գարեջրագործներ և 6 ստրուկ օգնականներ, 21 հացթուխներ և 27 ստրուկ օգնականներ, 40 մանածագործուհիներ և ջուհակուհիներ, դարբիններ, ատաղձագործներ ու այլ արհեստավորներ, տնտեսավարներ, գրագիրներ և վերակացուներ: Նրանց վճարել են շնչին պարեն, առավելապես գարի: Գուլքը, գործիքները, լժկան անասունները, մակույկները, ձկնորսական ուռկանները և այլն պատկանել են տաճարին:

Ստրուկների հետ այդ կալվածքներում աշխատած արհեստավորները,

ըստ երևույթին, քաղաքի ազատ բնակիչներ են եղել, սակայն առանց սեփական միջոցների, գործիքների. նրանք նույնիսկ երազել չէին կարող անկախ աշխատանքի կամ գործատիրոջը փոխելու մասին:

Վերջիվերջո հայտնի չէ, թե նրանք կհամարձակվեին՞ արդյոք դիմել այդպիսի փոփոխության, քանզի ամբողջ տնտեսության շահագործողական բնույթը շրջապատված է եղել կրոնական նախապաշարմունքներով: Ամեն մի շումերի մանկուց ներշնչվել է, որ հողը և հողում աճող ամեն բան պատկանում է ոչ թե քրմերին, այլ աստծուն և, հետևաբար, աշխատանքը աստծո նախանշած կրոնական պարտականությունների կատարում է:

Վարձակալության սնանկացնող վճարը և հարուստների վաշխառությունը աշխատավոր զանգվածներին հարկադրել են պարտքի մեջ թաղվել և ընկնել ստրկությանը հավասարազոր տնտեսական կախման մեջ: Սկզբում դա բացահայտ ստրկություն չի եղել, թեև իրականում գյուղացին և արհեստավորը ավելի լավ չեն ապրել, քան ստրուկը: Գյուղացու մշակած հողակտորն իսկ նրա սեփականությունը չի եղել, այլ պատկանել է աստծուն, այդ նույն աստծուն, կարիքի և հարածուն պարտքի գնով, նա պետք է տար իր բերքի մեծ մասը: Հաճախ նրան զրկել են նաև այդ հողակտորից, ստիպելով պարտքի դիմաց աշխատել տաճարների ու մեծատոհմիկների կալվածքներում, որտեղ նա շուտով հայտնվել է նույնպիսի վիճակում, ինչ որ իսկական ստրուկները, որոնց ընտրել են ռազմագերիների միջից:

Աշխատավորների վիճակի ստույգ արտացոլությունն է եղել շումերական օրենսդրությունը: Այն, օրինակ, ընտանիքի գլխավորին թույլ է տվել վաճառելու իր երեխաներին կամ պարտքի դիմաց նրանց ստրկության տալու: Երեխաների առուժախի բազմաթիվ համաձայնագրերը, որոնք գտնվել են շումերական քաղաքների ավերակներում, ապացուցում են, որ քաղաքի՝ պարտքերի մեջ խրված, աղքատության հասցված բնակիչները շատ լայնորեն են օգտվել այդ իրավունքից: Սերնդից սերունդ շումերական ցեղերի ավելի ու ավելի մեծ քանակությամբ ազատ անդամներ են վերածվել ստրուկների:

Աշխատավոր դասակարգերի ստրկացման պրոցեսը ուժեղացել է յուրաքանչյուր հարյուրամյակի հետ, առանձնապես այն բանից հետո, երբ Շումերը նվաճել են բաբելոնացիները, ասորեստանցիները և, վերջապես, քաղդեացիները:

Քրմերի, մեծատոհմիկների և թագավոր-քրմի վաշխառությունը, կամայականությունն ու դաժանությունը դեռ մեր թվականությունից 2500 տարի առաջ հարուցել են դասակարգային բախումներ, որոնց արձագանքը գտնում ենք սեպագիր բազմաթիվ տեքստերում: Այսպես, օրինակ, ժամանակագիրներից մեկը գանգատվում է, որ «բարձրաստիճան քուրմը մտավ աղքատի այգին և խլեց նրա ծառը»: Մյուս տեքստում

ասվում է. «Եթե ենթակայի տնտեսությունում լավ իշուկ ծնվի և տերն ասի «ուզում եմ այն գնել», հազվագեպ է պատահել, որ նա իշուկի համար վճարի այնքան, ինչքան իշուկի տիրոջ սիրտն է կամեցել»:

Այդ հասարակական հարաբերությունների ֆոնի վրա հեշտ է հասկանալ մեր թվականությունից 2400 տարի առաջ շումերական Լագաշ քաղաք-պետությունում տեղի ունեցած քաղաքական ընդվզումների էությունը: Լագաշի Ուրնանշե դինաստիայի վերջին թագավորները հետըզհետե կորցրել են իրենց ոտքերի տակի հողը, իսկ Լուգալանդա թագավորն այլևս մի կամազուրկ գենք է եղել քրմապետի՝ Լագաշի իսկական տիրակալի ձեռքին:

Լկտիացած քրմերի քաղաքական ու տնտեսական անտանելի ճնշումը երկիրը հասցրել է ապստամբության: Ապստամբած ժողովրդի գլուխ է կանգնել ոմն Ուրուկագինա, որը թերևս քաղաքական առաջին բարենորոգիչն է պատմության մեջ:

Ուրուկագինան ոչնչացրել է քրմերի իշխանությունը, զսպել հարուստների կամայականությունը և անցկացրել մի շարք բարենորոգություններ, որոնք թեթևացում են բերել ընչազուրկ ժողովրդին: Լագաշ քաղաքի ավերակներում գտնվել են քարե երեք կոներ, ինչպես նաև մի սալ, որոնց վրա Ուրուկագինայի հրամանով փորագրված է նրա բարենորոգությունների պատմությունը: Նա նկարագրում է քաղաքի ողբալի վիճակը, պատմում հարկահավաքների ազահույթյան, կրոնական սպասարկման համար հսկայական վարձ վերցրած քրմերի կամայականության ու անհազուրդության, հարուստների ճնշման ու անօրինությունների մասին: Հետո նա հպարտ հայտարարում է, թե վերացրել է այդ բոլոր շարաշահումները, այնպես որ «հարուստն այլևս անիրավություն չի գործել որբերի և այրիների նկատմամբ»:

Արձանագրություններից բխում է, որ բարենորոգությունների սուր ծայրն ուղղված չի եղել քաղաք-պետության սոցիալական կառուցվածքի դեմ: Ուրուկագինան մտադրություն չի ունեցել վերացնելու ստրկությունը կամ դասակարգային տարբերությունները: Նա ձգտել է միայն վերացնել ամենածայրահեղ շարաշահումները և սահմանափակել կառավարող դասակարգերի կամայականությունը իբր թե ազատ արհեստավորների և հողագործների նկատմամբ:

Նրա կառավարման ժամանակները Լագաշի համար նոր հաջողությունների ու բարեկեցության շրջան են եղել: Ուրուկագինան հայտնում է, որ ինքը մի շարք նոր շենքեր է կառուցել և ընդլայնել ոռոգման ջրանցքների համակարգը: Աշխատավոր մարդիկ իրենց դրույթյան Երոշ թեթևացում են զգացել ու փառաբանել նրան որպես ազատարարի:

Սակայն նրա կառավարումը տևել է ընդամենը հինգ տարի: Լիբերալ բարենորոգությունները խոր անհանգստություն են առաջացրել շումերական մյուս քաղաք-պետությունների տիրակալների մեջ: Նրանց բանասար-

կուսիյունների, ինչպես նաև վտարված քրմերի սաղրանքի հետևանքով Ումա քաղաքի թագավոր Լուգալզագեսին հանկարծակի հարձակվել է Լազաշի վրա, ավերել, իսկ Ուրուկագինային (նրա ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ), երևի, գերի է վերցրել ու սպանել: Մինչև մեր օրերը պահպանվել է հուշիչ, «Երեմիայի ողբին» նմանվող գանգատը ապարստ քաղաքի ճակատագրի մասին, քաղաք, որից միայն ծխացող փլատակներ են մնացել:

Սակայն մեծատոհմիկի և քրմերի բանասարկուսիյունը կործանարար է եղել հենց իրենց համար: Լազաշի նվաճողը, դյուրին հաղթանակից խրախուսված, հերթով իրեն է ենթարկել մնացած քաղաք-պետուսիյունները և դրանցից ստեղծել շումերների մեկ միասնական պետուսիյուն Ուրուկ մայրաքաղաքով:

Ավելի մեծ և ավելի բազմաթիվ մասնավոր տիրուսիյունների առաջացմանը զուգընթաց հողը մշակելու համար աճել է ստրուկների պահանջարկը: Հնարավորուսիյուն շունենալով ստրուկներ գտնելու իրենց երկրում, խոշոր հողատերերը ուղղակի արշավանքներ են կազմակերպել հարևան երկրների դեմ, որտեղ կարող էին ձեռք բերել ոչ միայն նոր ստրուկներ, այլև լրացուցիչ վարելահողեր, ինչպես նաև ջուր՝ ոռոգման համար:

Այդ պատճառով էլ դեռևս իրենց պատմուսիյան արշալուսին շումերներն անվերջանալի պատերազմներ են մղել: Շումերական ցեղերն ունեցել են ընդհանուր լեզու և մշակուսի, բայց քաղաքականապես բաժանված են եղել առանձին քաղաք-պետուսիյունների, որոնցից յուրաքանչյուրը կառավարել են ուրիշ քաղաքների հաշվին իրենց հարստուսիյունը մեծացնելու ձգտած մի բուռ ստրկատերեր:

Շումերների ամբողջ պատմուսիյունը Եղբայրասպան անընգմեջ պատերազմներ են, որոնց հետևանքով առանձին քաղաքներ հերթակա-նուսիյամբ միմյանց են պարտադրել իրենց գերիշխանուսիյունը: Դրանք էին Լազաշ, Ուրուկ, Ուր, Իսին, Լարսա և այլ քաղաք-պետուսիյունները: Հետո շումերական հողերի արևմտյան սահմանում հայտնվել է սեմական ցեղերի ականավոր առաջնորդ Սարգոնը (մ. թ. ա. 2369—2314 թվականներ): Նա ոչ միայն նվաճել է ամբողջ Շումերը, այլև իր տիրակալուսիյունն ընդարձակել է դեպի արևելք, Պարսից ծոցից էլ հեռու, իսկ արևմուտքում՝ ընդհուպ մինչև Միջերկրական ծովը: Սարգոնն իրեն հայտարարել է Շումերի և Աքքադի թագավոր: Նա վերջ է դրել շումերական անկախ քաղաքների դարաշրջանին, բայց նրա տերուսիյունում շումերական լեզուն և մշակուսիքը ոչ միայն չեն կործանվել, այլ ընդհակառակն, ավելի են ծաղկել, յուրացնելով աքքադացի նվաճողների մշակուսիքը:

Շումերա-աքքադական պետուսիյունը միայն երկու հարյուրամյակ է գոյուսիյուն ունեցել: Այն ջախջախել են ելամացիների լեռնական ուղղաշունչ ցեղերը, իսկ ավելի ուշ նրա ավերակների վրա բաբելոնյան հզոր աշխարհակալուսիյուն է ստեղծել մեծ նվաճող և օրենսդիր Համուրապին

(մ. թ. ա. 1792—1750 թվականներ): Հինգ հարյուր հիսուն տարի անց Միջագետքում երևան է գալիս նոր՝ ասորեստանցիների տերութունը, իսկ հետո, մ. թ. ա. 626—538 թվականներին՝ սեմական քաղղեացիների ստեղծած նոր Բաբելոնյան պետությունը: Այնուհետև Միջագետքը նվաճում է պարսից թագավոր Կյուրոսը: Վերջապես, հայտնվում է պատմության մեջ մեծագույն նվաճողներից մեկը՝ Ալեքսանդր Մակեդոնացին և գրավում բովանդակ Մերձավոր Արևելքը:

Աքքադացիների, բաբելոնացիների, ասորեստանցիների և քաղղեացիների, իսկ որոշ շափով էլ պարսիկների ու հույների պետությունները շումերական մշակույթի անմիջական ժառանգորդներն են: Այդ աշխարհակալություններում շումերների կատարած դերը շատ է հիշեցնում եվրոպական պետությունների պատմության մեջ հռոմեացիների ու հռոմեական մշակույթի կատարած դերը: Գրեթե երեք հազար տարվա ընթացքում շումերերենը լատիներենի նման ոչ միայն չի մահացել, այլև շարունակել է զարգանալ, թեև իրենք շումերներն արդեն վաղուց գոյություն չեն ունեցել:

Շումերերենը սկզբում գործածվել է ամենուրեք, սեմական մյուս լեզուների հետ միասին: Ժամանակի ընթացքում դարձել է բացառապես քրմերի և բանաստեղծների լեզու: Տաճարներում այն գործածել են որպես ժամասացության սրբազան լեզու, ականածանքով անեղծ պահել դպրոցներում, ուր սովորել են գրագիրները, հաշվետարները, դասավորները, բժիշկները, ուսուցիչներն ու աստղագետները: Հարյուրամյակների ընթացքում քարե սալերի և գետնախարիսխների վրա արձանագրություններն արվել են շումերերեն կամ գուգահեռաբար շումերերեն և բաբելերեն:

Ուրում և շումերական մյուս քաղաքներում կատարված հայտնագործություններն արմատապես փոխեցին մեր մշակույթի ժազման վերաբերյալ եղած հայացքները: XIX դարի սկզբին գիտնականները համարում էին, որ մշակույթի (և հատկապես՝ արվեստի) համար մենք պարտական ենք հույներին, որոնց մոտ այն հայտնվել է հանկարծակի, ինչպես Աթենաս Պալասը Օլիմպիական Ջևսի գլխից: Այն ժամանակներից, երբ հայտնի դարձան Եգիպտոսի, Կրետեի և Բաբելոնի մշակույթները, մենք իմացանք, որ մեր մշակույթի բնօրրանը հարկավոր է փնտրել մարդկության ավելի հեռավոր պատմության մեջ: Եվ միայն շումերական քաղաքների պեղումները ցույց տվեցին, որ մեր քաղաքակրթության նախաակունքը գտնվում է ոչ միայն Եգիպտոսում, այլև Շումերում, որտեղ մեր թվականությունից դեռ 3000 տարի առաջ ճարտարապետությունը, կիրառական արվեստը, իրավաբանությունը, բժշկությունը, գրականությունն ու աստղագիտությունը ապշեցուցիչ զարգացման են հասել:

Անխզելի թելը հարյուրամյակների միջով շումերներին կապում է մեր ժամանակի հետ: Տարբեր ժողովուրդներ զարգացել են և կործանվել,

յուրովի վերափոխելով ու հետագա ժողովուրդներին փոխանցելով մշակույթի և քաղաքակրթության հինավուրց ժառանգությունը, որի սկիզբը նրանք նույնիսկ չեն էլ իմացել: Շատ բնագավառներում մենք շումերների հեռավոր ժառանգորդներն ենք: Անհաշիվ սերունդների միջնորդությամբ մենք նրանցից ստացել ենք թե՛ նվազ և թե՛ վճռական նշանակություն ունեցող բաներ՝ և այնպիսիք, որոնք խանգարել են մարդկության զարգացմանը, և այնպիսիք, որոնք մարդու մեծագույն նվաճումներն են պրիմիտիվիզմից քաղաքակրթության անցնելու ճանապարհին:

Իբրև երկրագործներ շումերները ոռոգման ջրանցքների օգնությամբ դաշտերը ջրելու հմտությամբ, ըստ երևույթին, առաջ են անցել եգիպտացիներից: Նրանք գտել են խաշասերման ճանապարհով բույսերի բերքատվությունը ավելացնելու եղանակը: Արմավենիները սրբազան ծառեր են համարվել, բայց դա շումերներին չի խանգարել արհեստականորեն դրանք փոշոտելու և այդպիսով առատ բերք ստանալու:

Շումերական քանդակագործությունը նշանակալի բարձունքների չի հասել: Դրա պատճառը Միջագետքում հարկ եղած հումքի՝ փայտի, քարի, մետաղների բացակայությունն է: Չնայած դրան, հնագետները գտան քանդակագործական արտասովոր ստեղծագործություններ, ինչպես, օրինակ, վիրավոր էգ առյուծ պատկերող հիշատակված հարթաքանդակը:

Ճարտարապետության մեջ և կիրառական արվեստում շումերները հմուտ վարպետներ են եղել: Այդ նրանք են հորինել ճարտարապետական այնպիսի տարրեր, ինչպիսիք են կամարը, գմբեթը, քառանկյունի հաստ որմնասյունը, շեպը, ծոփորը, որմնախճանկարը: Նրանք մշակել են շինարարությունում համամասնության ու ներդաշնակության հիմունքները, այդ պատճառով բերդապարիսպները, տաճարները, պալատներն ու բուրգերը, չնայած իրենց զանգվածեղությանը, զուրկ չեն եղել ձևերի որոշ նրբությունից ու թեթևությունից:

Սակայն բոլորից շատ զարմանք են հարուցում շումեր արհեստավորների պատրաստած իրերը, որ անթիվ քանակությամբ գտնվեցին փլատակներում և թագավորական դամբարաններում: Կիրառական արվեստի այդ թանկարժեք իրերը՝ ստեղծել են մեծ քանակությամբ անանուն ոսկերիչներ, բրուտներ, փորագրիչներ ու գլինագործներ, ովքեր հարուստների կողմից շարունակված են եղել հիերարխիական սանդղաքի ամենաստորին աստիճանին և, այնուամենայնիվ, սիրել են իրենց արվեստն ու դրանով զբաղվել գեղեցիկի անսխալական զգացումով: Եթե շումերական արվեստը կարողացել է մրցակցել մյուս ժողովուրդների արվեստի հետ, դա հնարավոր է եղել միայն ժողովրդի ծոցից ելած համեստ արվեստագետների շնորհիվ, ովքեր ապշեցուցիչ հմտությամբ ոսկու և արծաթի թերթերից կերտել են քանդակներ, գավաթներ, թասեր, սաղավարտներ ու վահաններ, սաղափե թիթեղներով և կիսաթանկարժեք քարերով դրո-

վազեց տավիրներ ու զարդատուփեր կամ կնիքների վրա փորագրել մանրագեղ առասպելական տեսարաններ:

Մարդկութունը շումերներին պարտական է զրադարանների, արխիվների ու գեղարվեստական գրականության, ամենից առաջ, քնարական վիպերգության նմուշի ստեղծման համար:

Նրանց կրոնը սկզբում եղել է բնության աստվածացման արտահայտություն, սակայն ժամանակի ընթացքում աստվածները, որոնք մարմնավորել են արևը, լուսինը, ջուրը, աստղերը, օդը և այլն, դարձել են այնպիսի վերացական հասկացությունների խորհրդանիշներ, ինչպիսիք են արդարությունը, բարությունը, իմաստությունը, պողաբերությունը, պետություն հզորությունը:

Շումերներին են պատկանում նաև կրոնական որոշ հիմնական գաղափարներ, որոնք հետագայում մտել են ուրիշ ժողովուրդների կրոնական համակարգերի մեջ: Բարձրագույն աստված Անուի անունը բառացի նշանակում է «հայր», Նիմախ դիցուհունը՝ «աստվածամայր», իսկ Թամուզ աստծունը՝ «խակական որդի»: Թամուզն ամեն աշնան մահացել և ամեն գարնան հարություն է առել: Նրա մահն ու հարությունը շումերները նշել են հանդիսավոր թափորներով ու ժամերգությամբ, որոնց ժամանակ քրմերը պտուղներ և կենդանիներ են նվիրաբերել, հիմներ երգել դափահարներից, սրնգահարներից, եղջյուրահարներից, շեփորահարներից ու տավղահարներից կազմված նվագախմբի նվագակցությամբ: Պետք է նշել, որ շումերներն են հորինել նաև յոթնոտայանոց գամման:

Շուշում քարե մեծ սալի վրա գտնված Համուրապիի բաբելոնյան օրենսգիրքը, ըստ էության, միայն զարգացրել է շումերական հին օրենսգրությունը: Օրենսգրքով մարմնական դաժան պատիժներ են նախատեսվել շնչին զանցանքների համար, մի բան, որը վկայում է նաև այն ժամանակների դաժանության մասին: Բայց պետք է նշել անտարակուսելի մի առաջընթաց քայլ՝ օրենսգրքի հիմքը եղել է մեղքի համար պատիժը, իսկ մեղքն արդեն որոշվել է զուտ իրավաբանական կատեգորիաներով, առանց կրոնական նախապաշարմունքների: Հետևաբար, դա աշխարհիկ առաջին օրենսգիրքն էր, որտեղ ոչ թե աստված, այլ պետությունն է կատարել արդարադատության դերը:

Շումերական օրենսգրության այդ ոացիոնալիստական գիծը նորից դրսևորվել է Հուստինիանոսի և Նապոլեոնի օրենսգրքերում:

Գիտության մեջ մեծ հաջողությունների հասնելու համար շումերները գտնվել են խորհրդավոր-կրոնական նախապաշարմունքների շափազանց ուժեղ ազդեցության տակ: Չնայած դրան, պետք է նշել նրանց որոշ նվաճումները բժշկության, աստղագիտության մեջ և մաթեմատիկայում:


Աստղերին նայելով, շումեր քրմերը փորձել են գլխավորապես դրանց դիրքով գուշակել ապագան (ինչի մասին վկայում են Սարգոն I-ի ժամանակների աստղագուշակության յոթանասուներկու գրքերը), բայց


գիկկուրատների կատարից երկնքի դիտարկումները տվել են նաև գիտագործնական օգուտ: Քրմերը ստեղծել են լուսնային ստույգ օրացույց, որտեղ Նրկրի շուրջը լուսնի պտտվելու ժամանակը հաշվարկել են ընդամենը շորս վայրկյան սխալ թույլ տվող ճշգրտությամբ: Մերկուրիի ուղեծիրը նրանք ավելի ստույգ են որոշել, քան ավելի ուշ շրջանի հույն աստղագետներ Հիպարքոսն ու Պտղոմեոս Ալեքսանդրիացին:

Մաթեմատիկայում նրանք կարողացել են գործածել ապշեցուցիչ մեծ թվեր: Մաթեմատիկայում բեկումնային հայտնագործություններ արած հույները «տասը հազար» թիվը համարել են չափազանց «մեծ, հաշվելու համար անհնարին»: Եվրոպայում «միլիոն» հասկացությունը լայնորեն հայտնի է դարձել միայն XIX դարի սկզբին: Իսկ շումերական սեպագիր սալիկներից մեկի վրա գտնվել է մի մաթեմատիկական հաշվարկ, որի արդյունքն արտահայտվում է 195 955 200 000 000 թվով:

Թեև շումերների բժշկագիտությունը վիրաբուժության և բուսաբուժության մեջ զուրկ չի եղել խելացի հիմունքներից, այնուամենայնիվ, այն գլխավորապես հանգել է աչքով տալը վերացնող կամ դիվահարանող մոզական խոսքերի, կախարդանքի:

Շումերների մեջ լայնորեն տարածված է եղել հավատը սև մոգության նկատմամբ: Սեպագիր ութ սալիկների վրա պահպանվել են ճիշտ ցուցումներ, թե ինչպես պետք է սլայքարել կախարդուհիների դեմ: Կարելի է արդյոք դրանում մեղադրել 5000 տարի առաջ ապրած մարդկանց, եթե 1484 թվականին հռոմի պապ Իննոկենտիոս VII-ը կոնդակ հրապարակեց ընդդեմ նրանց, ովքեր կապ էին պահպանում դեերի հետ, իսկ միջնադարյան «Վհուկների կոանը» կախարդության մեջ կասկածվող մարդկանց կտտանքների ենթարկելու ձեռնարկ էր ընդհուպ մինչև XVIII դարը:





Կարավունների
Եգիպտոսում

Քար, որ թանկ էր ադամանդից

1798 թվականի մայիսին դեպի Եգիպտոս արշավանք սկսելով, Նապոլեոնը Թուլոնի նավահանգստում կենտրոնացրեց հարյուր քսանութ նավ և իտալական արշավանքի երեսունութ հազար վետերանների: Դա շատ հանդուգն ձեռնարկում էր, որովհետև Միջերկրական ծովի ջրերը հսկում էր Մեծ Բրիտանիայի այն ժամանակ հզոր նավատորմը՝ Նելսոնի գլխավորությամբ: Սակայն Նապոլեոնը հույս ուներ, թե անգլիական նավերում տեղի ունեցած նավաստիական երկու խռովություններն այնքան կազմալուծած կլինեն հակառակորդին, որ ֆրանսիական թեթև նավերը կկարողանան աննկատելիորեն սրընթաց անցնել շրջափակման օղակի միջով:

Այդ արշավանքի ծրագրերը չէին սահմանափակվում Եգիպտոսի նվաճմամբ: Նապոլեոնը մտադիր էր իր փոքր, բայց մարտերում կոփված բանակով այնուհետև շարժվել դեպի Հնդկաստան, նվաճել այն և այդպիսով քայքայել բրիտանական համաշխարհային կայսրության հիմքերը:

Պատանի հասակից նապուլեոնը գտնվում էր Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների տպավորության տակ, ուստի և նրա հետքերով գնալով, երգում էր Արևելքում մեծ տերութուն ստեղծել, որի գլուխ կկանգներ ինքը՝ որպես լիլիշիան, միահեծան տիրակալ:

XVIII դարի վերջին Եգիպտոսը եվրոպացիների համար տակավին դադանիքներով ու հմայքով լի մի երկիր էր: Նրա պատմությունը հայտնի էր միայն հին գրողների՝ ինչպիսիք են Հերոդոտը, Ստրաբոնը, Դիոդորոսը, Պլուտարքոսը, ստեղծագործություններից, Վերածննդի դարաշրջանի գրողների խառնաշփոթ հաղորդումներից: Այնտեղ եղած ճանապարհորդները հրաշքներ են պատմել վերից վար խորհրդավոր նշաններով պատված և անապատի թռչկան ավազով կիսով չափ ծածկված հին փլատակների, տաճարների, բուրգերի, սյուների, սֆինքսների ու կոթողների մասին: Նրանց մեջ էր նաև լեհ հնագետ, պատմաբան և ճանապարհորդ, «Սարագոսում գտնված ձեռագրի» հեղինակ Յան Պոտոցկին (1761—1815), որը 1797 թվականին, այսինքն նապուլեոնի արշավանքից մեկ տարի առաջ, ֆրանսերեն հրատարակեց իր «Ճանապարհորդություն Բուրքիայում և Եգիպտոսում» գիրքը:

Եգիպտոսը, իսկ հետո Հնդկաստանը նվաճելուց բացի, նապուլեոնն իր առջև ևս մեկ նպատակ էր դրել, մարդկության համար ավելի օգտակար, քան նրա ռազմական ծրագրերն էին. արշավանքը դեպի Եգիպտոս պետք է դներ այդ երկրի պատմության կանոնավոր ուսումնասիրության սկիզբը: Ուստի նապուլեոնն իր հետ վերցրեց գիտնականների և նկարիչների, աստղագետների ու երկրաչափների, քիմիկոսների, հանքաբանների, արևելագետների, տեխնիկների, գեղանկարիչների, գծագրողների և անգամ բանաստեղծների մի մեծ խումբ:

Ֆրանսիական նավատորմն աննկատ անցավ ծովը, և հուլիսի երկուսին ֆրանսիացիներն ափ իջան Եգիպտոսում: Բուրգերի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը եգիպտացիների հետ: Նապուլեոնի բանակի դեմ դուրս էր եկել Եգիպտոսի բեյ Մուրադի այրուձին: Արագավազ ձիեր հեծած մամլուքները, որ կազմում էին բեյի անձնական գվարդիան, արտակարգ խրոխտ ու մարտական տեսք ունեին. թվում էր իրենց կեռ թրերով նրանք կկոտորեն ֆրանսիական հետևակին: Սակայն իտալական արշավանքի վետերանների փորձն ու կարգապահությունը հաղթեցին եգիպտական հեծելազորի դյուրաշարժությանը: Բուրգերի մոտ մղված ճակատամարտում ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսը ջախջախեց բեյի զորքերին, և արդեն հուլիսի քսանհինգին նապուլեոնը մտավ Կահիրե:

Սակայն հաղթանակից ոչ լրիվ երկու շաբաթ անց բախտը երես թեքեց նապուլեոնից: Աբուլիրի ծովածոցում, ուր խարիսխ էր նետել ֆրանսիական ամբողջ նավատորմը, անսպասելիորեն հայտնվեց նեյսոնը: Նավերի անձնակազմերին թույլ էր տրվել ափ իջնել, և ֆրանսիացի ծո-

ժնկալը, շնայած անգլիացիների հայտնվելուն, նույնիսկ մարտական անգնապ շհայտարարեց, քանզի վստահ էր, որ հակառակորդը չի համարձակվի մտնել ստորջրյա վտանգավոր խուժերով ու ծանծաղուտներով լի ծոցը: Բայց նելսոնը ներխուժեց ծոց և, նավային հրետանուց կրակ բացելով, խորսակեց ափին սեղմված ֆրանսիական նավերը: Արուքիրի ծոցում կրած պարտությունը կտրեց Նապոլեոնի ճանապարհը դեպի Ֆրանսիա և երկար ժամանակ նրան պահեց Եգիպտոսում:

Փեներալ Դեղեի կորպուսում, որը հետապնդում էր սլարտված Մուրադին, գտնվում էր գիտական հանձնաժողովի անդամ Դոմինիկ Վիվան Դենոնը: Այդ մարդու կյանքն արտակարգ հետաքրքիր է: Նրանում, ինչպես զեղադիտակում, հերթով արտացոլվել են այն ժամանակ Ֆրանսիան ու Եվրոպան ցնցած բոլոր հեղաշրջումները: Արիստոկրատ և տաղանդավոր նկարիչ Դենոնը միապետության ժամանակ արժանացավ բոլոր հնարավոր պատիվներին ու արտոնություններին: Նրա առջև, որպես նրբահայաց, սրամիտ, բարձրաշխարհիկ շարժուձևով աչքի ընկնող մարդու, բաց էին Եվրոպայի լավագույն տների դռները: Փարիզում նա հնությունների թագավորական հավաքածուի պահապանն էր, ֆրանսիական ակադեմիայի անդամ և միաժամանակ տիկին Պոմպոսի հոմանին: Կյուրովիկոս XV-ը նրան ուղարկեց Պետերբուրգ, որպես ֆրանսիական դեսպանության առաջին քարտուղար: Գտնվելով Ռուսաստանում, Դենոնը կարողացավ նվաճել Եկատերինա կայսրուհու բարեհաճությունը: Այնուհետև որպես դեսպան փոխադրվելով Շվեյցարիա, նա սերտ բարեկամություն հաստատեց Վոլտերի հետ, որի մշտական հյուրն էր:

Սկսված հեղափոխության մասին առաջին իսկ լուրն առնելուն պես Դենոնը աճապարեց Փարիզ և այնտեղ իմացավ, որ լիովին սնանկացել է. հեղափոխական կառավարությունը բռնադրավել էր նրա ամբողջ ունեցվածքը: Որոշ ժամանակ ապրում էր նրանով, որ իր գծանկարներն էր վաճառում մայրաքաղաքի փողոցներում: Սակայն դա երկար շարունակվեց, քանզի շուտով մեծ նկարիչ Դավիդը հոգ տարավ նրա մասին, նրան հանձնարարելով պղնձի վրա փորագրել նորաձևությունների իր նախագծերը: Դենոնը ոչ միայն կատարեց առաջադրանքը՝ ի լիակատար գոհունակություն իր հովանավորի, այլև միաժամանակ ճարպկության շնորհիվ կարողացավ այն աստիճան հմայել Ռոբեսպիերին, որ վերջինս հրամայեց բռնազրավված ամբողջ ունեցվածքը վերադարձնել նրան:

Նապոլեոնի իշխանության ժամանակ ևս Դենոնը բնավ վատ չէր ապրում. այս անգամ նա նվաճեց դիկտատորի կնոջ՝ Ժոզեֆինայի բարեհաճությունը և նրա միջնորդությամբ ընդգրկվեց գիտնականների եգիպտական հանձնաժողովի կազմում: Առաջ անցնելով, պետք է ասել, որ Եգիպտոսից վերադառնալուն պես Դենոնը նշանակվեց ֆրանսիական բոլոր թանգարանների գլխավոր դիրեկտոր: Միևնույն ժամանակ նա մի վեպ գրեց, որը Բալզակի կողմից շատ բարձր գնահատվեց իրեն ժամա-

նակակից Ֆրանսիայի բարձրի ռեալիստական պատկերման համար:

Եգիպտական ավերակների խորհրդավոր ու մռայլ գեղեցկությունը Դենոնի վրա անջնջելի տպավորություն թողեց: Եգիպտոսում գտնվելու առաջին ռոպեներից Դենոնը շեր բաժանվում մատիտից ու ալբոմից: Տենդագին ջանասիրությամբ նա նկարում էր այն ամենը, ինչ տեսնում էր Նեղոսն ի վեր գեներալ Դեզեի կորպուսի արշավանքի ժամանակ: Նրա նկարներն արտակարգ ճշգրիտ էին և նման պղնձի վրա փորձառու վարպետների կատարած փորագրություններին, ուստի դրանք խլխլում էին որպես Եգիպտոսի հին շինությունների մասին տեղեկությունների աղբյուր:

Եգիպտական արշավանքի ժամանակ Դենոնն արդեն հիստունն անց էր, բայց իր անբռնազբոս զվարթությամբ, մարդամոտությունամբ, անվեհերությամբ ու անխոնջությամբ մեծ համբավ էր ձեռք բերել ֆրանսիացի զինվորների շրջանում: Ո՛չ սոսկալի տապը, ո՛չ էլ Լրկարատե երթերը անապատի սորուն ավազուտներում չէին կարող ազդել նրա աշխատունակության վրա: Նա միշտ առաջինն էր ոտքի վրա լինում և վերջինն էր պառկում հանգստանալու: Նա նկարում էր անընդհատ՝ արշավի, հանգրստի, կարճատև մարտերի և նույնիսկ այն ժամանակ, երբ շուրջբոլորը սուլում էին զնդակները: Նրա ալբոմի էջերում հայտնվում էին նորանոր սյուններ, սֆինքսներ, կոթողներ, տաճարներ, Նեղոսի շրջակայքի և անապատի լանդշաֆտներ:

Եգիպտոսում գտնվելու ժամանակ «գիտնականների հանձնաժողովը» գիտական աշխույժ գործունեություն ծավալեց Կահիրեում: Սակայն հանձնաժողովը պեղումներ չէր կատարում, քանզի հողի երեսին էլ հնության այնքան հուշարձաններ կային, որ սոսկ դրանց գրանցումը մի քանի տարվա աշխատանք էր պահանջում:

Գիտնականները շափագրում էին փլատակները, նկարագրում հնության հուշարձանները, վերջապես, գիպսից ու կավից պատրաստում դրանց պատճենները: Նրանք հավաքեցին նաև եգիպտական արվեստի հսկայական քանակությամբ նմուշներ՝ քանդակներ, հարթաքանդակներ և անգամ սարկոֆագներ, որոնք, չնայած Նելսոնի կազմակերպած ծովային շրջափակմանը, ուղարկվեցին Փարիզ:

1799 թվականի օգոստոսին ֆրանսիացի զինվորներն ամրացնում էին Նեղոսի դելտայում գտնվող արաբական Լեոզեթ գյուղից մի քանի կիլոմետր հեռավորության վրա ընկած ամրոցը: Մի անգամ զինվորներից մեկը հողի տակից հանեց սև բազալտե մի սալ, ամբողջովին ծածկված արձանագրություններով: Նախնական զննումն իսկ մեծ հուզմունք առաջացրեց ֆրանսիացի եգիպտագետների մեջ: Արձանագրությունը երկլեզվյան էր և դասավորված երեք սյունակով: Առաջին երկու սյունակները բովանդակում էին եգիպտերեն տեքստ, գրված հին՝ հիերոգլիֆային գրով և ավելի ուշ շրջանի դեմոտական գրով, երրորդ սյունակը բովանդակում էր հունարեն տեքստ:

Գեներալներից մեկը, որ մասնագիտությամբ հունագետ էր, հեշտու-
թյամբ կարդաց այդ տեքստն ու համոզվեց, որ այն եզրույթական քրմերի
ողջույնի ուղերձն է Պաղոմեոս V Եպիփան փարավոնին՝ նրա թագադրման
առթիվ (մ. թ. ա. 196 թվական)։

Հռոմեական կայսր Թեոդոսիոսը 391 թվականին հրամայել է փակել
բոլոր հեթանոսական տաճարները։ Հեթանոսական պաշտամունքների
քրմերը ցրվել են, ընդմիջտ զրկվելով իրենց ժամերգությունները կատա-
րելու հնարավորությունից, իսկ նրանցից ոմանք քրիստոնեություն են
ընդունել։ Վերջին քրմերի անհետացման հետ Եզրույթական անհետացել
է նաև հիերոգլիֆները կարդալու դժվարին արվեստը։ Այն ժամանակվա-
նից հազար հինգ հարյուր տարվա ընթացքում տաճարների և դամբա-
րանների, հուշասարկների, դագաղների, սարկոֆագների, արձանների
և կոթողների վրայի անհամար արձանագրությունները դարձել են մեռած
նշանների ժողովածու։ Այդ նշանների մասին գիտեին միայն, որ դրանց
մոտիվները վերցված են կյանքից, որովհետև նշաններում կարելի էր
նկատել մարդկանց, կենդանիների, բույսերի, պտուղների, գործիքների,
հագուստի առանձին մասերի, զամբյուղների, սափորների, զենքի և գոր-
ծածության բազմաթիվ այլ առարկաների ուրվագծեր։

Գիտնականների աշխարհը հասկացավ «Ռոզեթյան քարի» հսկայա-
կան նշանակությունը։ Հնագետներից մեկն ասել է, թե այդ քարը «թանկ
է փարավոնների բոլոր ադամանդներից»։ Դրա նշանակությունն այն էր,
որ գիտնականներն առաջին անգամ եզրույթական տեքստը ստացան իր
հունարեն ճշգրիտ թարգմանության հետ։ Այնուհետև բաղադրելով երկու
տեքստերի առանձին բառերն ու հնչյունական նշանները, կարելի էր
վերծանել հիերոգլիֆների գաղտնիքը։

Ֆրանսիական հաղթական, սակայն Եզրույթական շրջափակված,
բանակի վիճակն օրըստօրե ավելի ու ավելի էր ծանրանում։ 1799 թվա-
կանի օգոստոսի 17-ին Նապոլեոնը գաղտնի հեռացավ Եզրույթականից և
«Մուիրոն» ֆրեզատով բարեհաջող հասավ Ֆրանսիա։ 1802 թվականին
Ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսը անձնատուր եղավ։ Համաձայն
Ալեքսանդրիայում կնքված խաղաղության համաձայնագրի, ֆրանսիա-
ցիները պարտավոր էին անգլիացիներին տալ «գիտնականների հանձ-
նածոլովի» հավաքած եզրույթական գտածոները, շրջադրելով նաև «Ռո-
զեթյան քարը», որը շուտով հայտնվեց Բրիտանական թանգարանում։

Թվում էր, թե ֆրանսիացիներն ընդմիջտ կորցրին իրենց հավա-
քորդական ու հետազոտական ջանադիր աշխատանքի պտուղները։ Սա-
կայն այդպիսի բան տեղի չունեցավ. իրենց շրջահայացության շնորհիվ
նրանք ցուցադրական և նկարագրական հսկայական նյութ ունեին, ինչ-
պես նաև հին հուշարձանների կավե ու գիպսե իսկական պատճենները,
և ամենից առաջ «Ռոզեթյան քարի» պատճենը։ Ուստի իրենց հայրենի-

քում Ֆրանսիացիները կարող էին շարունակել եգիպտագիտական հետազոտությունները:

1802 թվականին Վիվան Դենոնը հրատարակեց «Ճանապարհորդութուն Վերին և Ստորին Եգիպտոսներում» վերնագրով իր գիրքը: Այն արժանացավ շատ մեծ ճանաչման և համայն Եվրոպայում լայն հետաքրքրություն արթնացրեց այդ երկրի նկատմամբ:

Եգիպտագիտության համար, սակայն, բեկումնային իրադարձություն էր «գիտնականների հանձնաժողովի» հավաքած նյութերի հիման վրա Ֆրանսուա Ժոմարի պատրաստած և Դենոնի նկարներով առատորեն պատկերազարդված քսանչորսհատորանոց աշխատության հրատարակումը: «Եգիպտոսի նկարագրությունը»՝ այդպես էր աշխատության վերնագիրը, որի լույս ընծայման համար շատ միջոցներ էին ծախսվել, որովհետև բացի մնացածից, այն բովանդակում էր հարյուրավոր փորագրություններ, որոնց մեծ մասը հետո ձեռքով էր ներկվել:

Եվրոպացի ընթերցողի համար այդ գիրքը որոշ իմաստով հայտնություն էր: Նախկինում միայն սակավաթիվ ճանապարհորդներին մատչելի եգիպտական հիասքանչ շինություններն ու քանդակներն ընդհանուր դարմանք առաջացրին իրենց մոնումենտալությամբ և ոճի ինքնատիպությամբ: Այդ հրատարակության հերթական հատորները լույս ընծայվեցին 1809—1813 թվականներին: Դա միաժամանակ եգիպտագիտության սկզբնավորման շրջանն էր, որը XIX դարի ընթացքում, հարյուրավոր գիտնականների աշխատությունների շնորհիվ, բացահայտեց եգիպտական մշակույթի գաղտնիքների մեծ մասը:

Անմտություն էր որևէ հետազոտություն կատարել, չկարդալով հիերոգլիֆները: Ուստի հետազոտությունների առաջին փուլում գիտնականների ողջ ուշադրությունը բևեռված էր «Ռոզեթյան քարին»: Թվում էր, թե արձանագրության երկլեզվությունը առեղծվածք լուծելու բանալի է տալիս: Սակայն դրանք կարդալու բոլոր փորձերը միայն հուսախաբություն էին բերում: Վերջիվերջո, նույնիսկ կասկածներ առաջացան, թե որևէ մեկը առհասարակ կկարողանա այդ անել: Ֆրանսիացի ականավոր արևելագետ դը Սասին մինչև անգամ հայտարարեց, թե «ինդիրը չափազանց խճճված է և գիտականորեն անլուծելի»:

Շամպոլյունը հիերոգլիֆների վերծանող

Այն ժամանակ, երբ տաք վեճեր էին գնում հիերոգլիֆների մասին, Նապոլեոնը Գրենոբլի դեպարտամենտի պրեֆեկտ նշանակեց եգիպտական հանձնաժողովի անդամներից մեկին՝ մաթեմատիկոս և ֆիզիկոս Ժան Բատիստ Ֆուրիեին: Մեծ գիտնականը ոգևորությամբ զբաղվեց տե-

դռնիցն դպրոցներով, շատ ժամանակ ու եռանգ եվիրելով դրանց: 1801 թվականին, այցելելով Գրենոբլի դպրոցներից մեկը, նա ուշադրութիւն դարձրեց տասնմեկամյա աշակերտ ժան Ֆրանսուա Շամպոլյոնի վրա, որին ընկերները արևելյան դիմագծերի համար «եգիպտացի» էին անվանել:

Զրուցի ժամանակ Ֆուրիեն զարմանքով նկատեց, որ վտիտ, հիվանդոտ տղան միանգամայն ազատ խոսում է հունարեն և լատիներեն, իսկ հիմա էլ սկսել է ուսումնասիրել հին եբրայերենը: Փոքրիկ տղայի արտասովոր զարգացումն այնպիսի տպավորութիւն թողեց Ֆուրիեի վրա, որ իր մոտ հրավիրեց նրան: Նա տղային ման ածեց բոլոր սենյակներում, ցույց տվեց Եգիպտոսից բերված հուշարկերի հարուստ հավաքածուն: Շամպոլյոնն ամբողջ ժամանակ լուռ էր, բայց երբ տեսավ հիերոգլիֆներով ծածկված պապիրուսի պատանները, վեհերոտ հարցրեց.

— Որևէ մեկն արդեն կարդացե՞լ է սա:

— Ավա՛ղ, ոչ...

— Երբեք էս կկարդամ սա, — ասաց տղան:

Կյանքի տասներեքերորդ տարում Շամպոլյոնը, բացի արդեն նշված լեզուներից, վարժ տիրապետում էր արաբերենին, ասորերենին, քաղդեերենին, դատերենին, հին չինարենին և սանսկրիտին: Այդ հրաշամանուկի համբավը շուտով հասավ Փարիզ:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Շամպոլյոնը մտադիր էր ընդունվել Փարիզի լիցեյներից մեկը: Դրա համար նա մրցութային աշխատանք գրեց, որը պարտավոր էր ամենից առաջ հրապարակել իր հայրենի քաղաքի լիցեյում: Դասախոսները ակնկալում էին նման դեպքերում սովորական աշակերտական շարադրութիւն: Բայց ինչքան զարմացան նրանք, երբ ևրիտասարդ թեկնածուն ներկայացրեց «Եգիպտոսը փարավոնների իշխանութիւն տակ» վերնագրով մի լուրջ և գիտական ինքնուրույն հետազոտութիւն, լի անհայտ փաստերով ու հրեական, հունական և լատինական գրականութիւնների տեքստերի վրա հիմնված հետեւութիւններով:

Դասախոսներն այնքան ցնցված էին, որ լիցեյ ընդունվելու Շամպոլյոնի իրավունքը ճանաչելու փոխարեն որոշեցին նրան իրենց շարքերն ընդունել որպէս դասախոսական կոլեգիայի անդամ: Այդ իմանալով, Շամպոլյոնը հուզմունքից կորցրեց գիտակցութիւնը և շկարողացավ ինքնուրույն հասնել տուն:

Սակայն նա չօգտվեց ինքնասիրութիւն շոյող առաջարկից և մեկնեց Փարիզ՝ ուսումը շարունակելու: Հանրակառքում նստած, նա իր հովանավորին՝ ավագ եղբորը, խոստովանեց, որ իր ամբողջ ուսումը համարում է «Ռոզեթյան արձանագրութիւն» վերծանման սոսկ նախապատրաստութիւն: Դա նրա երազանքների գագաթնակետն էր, որին նվիրեց իր ամբողջ կյանքն ու բոլոր ուժերը: Ուսումնասիրելով արևելյան լեզու-

ները, նա ձգտում էր հասկանալ հին եգիպտացիների հոգեբանությունն ու մտածելակերպը: Նա համոզված էր, որ միմիայն այդպիսի քրտնաջան աշխատանքով հնարավոր կլիներ գտնել նրանց դպրության վերծանման և լեզուն հասկանալու ուղին:

Գլխավոր ուշադրությունը նա դարձրեց դպտերենին, որը հին եգիպտերենի զարգացման ամենաուշ և վերջին փուլն էր: Շամպոլյոնը միանգամայն ազատ խոսում էր դպտերեն, իսկ գրելու մեջ վարժվելու համար իր օրագրում նշումները կատարում էր այդ լեզվով:

Եգիպտոսի վերաբերյալ ստեղծագործություններ ուսումնասիրելով, Շամպոլյոնն այնքան ընդարձակ գիտելիքներ էր ձեռք բերել այդ երկրի մասին, որ այն ժամանակ Աֆրիկայում իր կատարած ճանապարհորդություններով հայտնի Սոմինի դը Մանենկուրը նրա հետ զրուցելուց հետո բացականչել է.

— Նա հո այդ երկիրը զգալիորեն ավելի լավ է ճանաչում, քան ես:

Փարիզում Շամպոլյոնը աղքատություն էր քաշում: Ապրում էր ձեղնահարկում, Լուվրից ոչ հեռու, հաճախ սոված էր մնում, իսկ տնից դուրս էր գալիս շատ դժկամորեն, ամաչելով իր մաշված շորերի համար: Նա աննկատելի մտնում էր գրադարանները և ամբողջ օրն անցկացնում այնտեղ, գրքերի վրա խոնարհված: Չմոռանը նա ծանր հիվանդացավ ու առանց որևէ խնամքի պառկեց շտաքացվող, խոնավ խցիկում: Ապրում էր այն սուղ միջոցներով, որ ավագ եղբայրն էր ուղարկում իր ոչ մեծ վաստակից:

Մի օր փողոցում նա հանդիպեց ծանոթի, որը տխուր լուր հայտնեց՝ հիերոգլիֆները վերծանված են: Նա գունատվեց ու երեբաց: Ուրեմն, վերջ բոլոր հույսերին, իր ամբողջ աշխատանքը զուր է, եթե ինչ-որ մեկը կանխել է իրեն:

— Ո՞վ է այդ արել, — դժվարությամբ հարցրեց նա:

— Ալեքսանդր Լենուարը: Հենց նորերս լույս է տեսել նրա «Նոր մեկնաբանություն» գրքույկը, որտեղ նա պնդում է, որ վերծանել է բոլոր հիերոգլիֆները: Մի մտածիր է՞, թե դա ինչ նշանակություն ունի գիտության համար...

— Լենուա՞րը, — զարմացած հարցրեց Շամպոլյոնը: — Բայց չէ՞ որ հենց երեկ եմ տեսել նրան, և նա այդ մասին ծպտուն իսկ չհանեց:

— Դրանում զարմանալի ի՞նչ կա որ: Նա գտնում էր, որ մինչև գրքույկի լույս տեսնելը հարկավոր է գաղտնի պահել:

Շամպոլյոնը վազեց դեպի մոտակա գրքի կրպակն ու, տագնապահար, գնեց գրքույկը, որպեսզի անհապաղ կարդա:

Նրա տուն վերադառնալուց մեկ ժամ անց խոհանոցում նստած տանտիրուհին դռան հետևում ինչ-որ վայրի քրքիչ է լսում: Նա տեղից վեր է ցատկում ու մտնում կենվորի մոտ: Շամպոլյոնը թավալվում էր բազմոցի վրա, հիստերիկորեն քրքջալով: Պարզվել էր, որ գրքույկը

վերին աստիճանի անհեթեթությունների մի հավաքածու է: Նա արդեն բավականաչափ ծանոթ էր առարկային՝ իսկույն կռահելու համար, որ գրքույկը բարբաջանք է հրամցնում:

1809 թվականին տասնիննամյա Շամպոլյոնը վերադարձավ Գրենոբլ՝ զբաղեցնելու համալսարանի պատմության ամբիոնը: Սակայն շուտով ուստիկանությունը սկսում է հալածել նրան, որովհետև նա մոլի հանրապետական էր և չէր թաքցնում իր բացասական վերաբերմունքը Նապոլեոնի բռնակալության նկատմամբ: Նա գրում է Նապոլեոնի դեմ ուղղված խայթիչ երգիծանքներ և բացեիբաց հանդես գալիս նրա ռազմական քաղաքականության դեմ:

Նրբորը գրած նամակում Շամպոլյոնը պարսիկների սուրբ գրքից՝ Զենդավեստայից մեջ է բերել «Ավելի լավ է վեց ակր հող հերկել, քան քսանչորս պատերազմ շահել» նախադասությունը: Շուտով համալսարանի դեկավարությունը նրան զրկում է գիտնականի թոշակից:

Նապոլեոնի պարտությունից հետո նա նույնպիսի հաստատակամությամբ պայքարում էր նոր միապետության ճնշման դեմ, գրում թատերական պիեսներ ու երգիծական երգեր, որոնք անմիջապես ընդունվում էին համաքաղաքացիների կողմից: Չնայած դրամական դժվարին կացությանը, նա այդ ժամանակ պատրաստեց Ֆրանս-ղպտերեն բառարանի գրեթե հազար էջ, որի մասին կատակով գրեց եղբորը. «Բառարանս օրեցօր ավելի է հաստանում, բայց դրա փոխարեն ես ավելի եմ բարակում»:

Վրա հասավ նապոլեոնյան «հարյուր օրերի» բուռն շրջանը: Նապոլեոնը փախավ էլբայից, ափ իջավ Ֆրանսիայում և շուտով մտավ Գրենոբլ, որի ամբողջ կայազորն անմիջապես անցավ նրա կողմը: Կայսրը ռազմական ու քաղաքական տենդագին գործունեություն էր ծավալում, բայց, իմանալով երիտասարդ գիտնականի մասին, ժամանակ գտավ նրան անձամբ այցելելու: Շամպոլյոնը նրան դիմավորեց սառը զսպվածությամբ, բայց դա չվանեց կայսրին. նա հետաքրքրվեց Շամպոլյոնի աշխատանքներով: Կայսրը հաջորդ օրն էլ եկավ նրա մոտ, խոստացավ օգնել զպտերեն բառարանի հրատարակման գործում:

Կայսրությունը կրկին կործանվեց, բայց նապոլեոնական վետերանները չէին ուզում հանձնվել ռոյալիստներին և մինչև վերջ պաշտպանվում էին: Ուստի գեներալ Լատուրը սկսեց քաղաքի ոմբակոծումը: Շամպոլյոնը նապոլեոնին մեղադրում էր հանրապետական իդեալներին դավաճանելու մեջ, բայց ռոյալիստներին ատում էր է՛լ ավելի շատ և, անվարան, թողեց իր պարապմունքներն ու կանգնեց քաղաքի պաշտպանների շարքերում:

Ռոյալիստները նրան երբեք չներեցին այդ: Քաղաքը գրավելով, անմիջապես նրան զրկեցին համալսարանի ամբիոնից, իսկ ավելի ուշ նրա դեմ դատավարություն սկսեցին, մեղադրելով պետական դավաճանու-

թյան մեջ: Շամպոլյոնին գիլյոտին էր սպանում, և 1821 թվականի հուլիսին նա Գրենորլից փախավ Փարիզ, ուր ավելի հեշտ էր թաքնվել: Հայտնի չէ, Շամպոլյոնը անհաջողությունից էր վախենում, թե դեռ իրեն պատրաստված չէր զգում, բայց մինչև այդ «Ռոզեթյան արձանագրությունը» վերծանելու լուրջ փորձերի չէր դիմել: Եվ միայն 1822 թվականին նա լրջորեն ձեռնամուխ եղավ այդ աշխատանքին:

Այն ժամանակ գիտությունն ի՞նչ գիտեր հիերոգլիֆների մասին: Արդեն հայտնի էր, որ եգիպտական դպրությունը անցել է զարգացման երեք փուլ, որն արտահայտվել է գծանկարային երեք տարատեսակներում: Իրենց պատմության ամենահեռավոր ժամանակաշրջանում եգիպտացիները գործածել են հիերոգլիֆներ, այսինքն կենդանի արարածների ու անշունչ առարկաների ռեալիստական նկարներ ներկայացնող նշաններ: Գրի այդ համակարգը բավական բարդ է եղել և պահանջել է նկարելու ընդունակություն, ուստի որոշ ժամանակ անց նշանները պարզեցվել են, վերածվել ամենաանհրաժեշտ ուրվադժերի: Դա այսպես կոչված հիերատական (քրմական) գիրն էր, որ եգիպտական քրմերը կիրառել են տաճարների և դամբարանային արձանագրություններում: Զարգացման վերջին փուլում երևան է եկել դեմոտական, այսինքն ժողովրդական գիրը: Դա մի շղագիր էր, կազմված գծիկներից, աղեղիկներից ու շրջաններից: Դրանում դժվար էր տարբերել սկզբնական խորհրդանշանները, բայց գրելը հեշտ էր:

Հիերոգլիֆներով շատ են հետաքրքրվել դեռևս հին գրողները: Հերոդոտը, Ստրաբոնը և Դիոդորոսը, իսկ առանձնապես՝ Հորապոլլոնիոսը (մ. թ. ա. IV դար), որն այդ բնագավառում մեծ հեղինակություն է համարվել, վճռականորեն պնդել են, որ հիերոգլիֆները պատկերային, այսինքն նկարային գիր են, որի առանձին նշաններն արտահայտում են ամբողջ բառեր և ոչ թե վանկեր կամ տառեր, այլ խոսքով՝ այդ գրում յուրաքանչյուր նշան որոշակի կոնկրետ իր կամ վերացական միտք է նշանակել: XIX դարի հետազոտողներն այն աստիճան էին գտնվում հին գրողների կարծիքի ազդեցության տակ, որ նրանց գլխով նույնիսկ չէր անցում այդ պնդումը գիտական ստուգման ենթարկելու միտքը: Ուստի նրանք փորձում էին վերծանել հիերոգլիֆները, դրանք մեկնաբանելով որպես նկարների օգնությամբ արտահայտված առանձին ամբողջական հասկացությունների համակարգ: Այդպիսի մեկնաբանության պատճառով նրանց բոլոր փորձերը զուր անցան և, որ ավելի վատ էր, այդ սխալ հայացքները հաճախ հանգեցնում էին միանգամայն անհեթեթ, ոչ գիտական լուծումների: Միայն անգլիացի հնագետ Թոմաս Յունգը ենթադրություն արեց, որ եգիպտական արձանագրությունները բուլանդակում են ոչ միայն նկար-հասկացություններ, այլև հնչյունական նշաններ, սակայն այդ ենթադրությունից նա չկարողացավ գործնական հետևություններ անել և գտնել հիերոգլիֆների վերծանման բանալին:

Շամպոլյոնի դարակազմիկ ժառանգությունն այն է, որ նա խախտեց շերտերի, Ստրաբոնի, Գիորգորուսի և Հորապոլլոնիսի ավանդույթը և համարձակորեն գնաց իր ուզիով, համարելով, որ եգիպտական գիրը բաղկացած է հնչյունական տարրերից և ոչ թե նկար-հասկացություններից:

«Ռոզեթյան քարի» հունարեն արձանագրությունը բովանդակում էր Պտղոմեոսի և Կղեոպատրայի անունները: Այդ նույն անունները պետք է որ գտնվեին եգիպտերեն երկու տեքստերում: Բայց դրանք ինչպե՞ս գտնել հարյուրավոր հանելուկային նշանների մեջ: Բարերախտաբար, գործք ղգալիորեն ավելի հեշտ էր, քան կարող էր թվալ առաջին հայացքից: Արդեն վաղուց հայտնի էր, որ եգիպտացիները թագավորների անուններն առել են ձվածիր շրջանակների, այսպես կոչված «կարտուշներով» մեջ: Այդ պատճառով Շամպոլյոնը բնավ չէր կասկածում, որ հիերոգլիֆների մրջնանոցում հստակորեն առանձնացող երկու կարտուշները բովանդակում են թագավորական նույն անունները:

Եգիպտական առանձին նշանները բաղդատելով հունարեն համապատասխան տառերի հետ, նա համոզվեց, որ հիերոգլիֆների հնչյունական կառուցվածքի մասին իր ենթադրությունը միանգամայն հիմնավորված է:

Շամպոլյոնը շահամանափակվեց դրանով: Եգիպտական հերթական նշանները համեմատելով հունարեն այն տառերի հետ, որոնք կաղմում էին «Պտղոմեոս» և «Կղեոպատրա» անունները, նա կարգաց հնչյունական երեք հիերոգլիֆ՝ «պ», «ո», «դ»: Նրան որոշ դժվարություններ պատճառեց այն փաստը, որ երկու այլ հիերոգլիֆներ, որոնք պետք է միատեսակ լինեին եգիպտական երկու անուններում, քանզի թե՛ մեկ և թե՛ մյուս անվան մեջ նշանակում էին «տ» և «ե» հնչյունները, գծագրորեն տարբեր տեսք ունեին: Բայց Շամպոլյոնը ճիշտ ենթադրեց, որ եգիպտացիները միևնույն հնչյունը հաղորդելու համար որոշ դեպքերում օգտագործել են տարբեր նշաններ այնպես, ինչպես «ե» և «օ» հնչյունները նշելու համար հույները երկու տառ են ունեցել:

Օգտվելով վերծանված նշաններից, Շամպոլյոնը մյուս տեքստերում կարգաց Ալեքսանդրի և հռոմեական մի քանի կայսրերի անուններն ու այդպիսով ավելացրեց ընթերցված հիերոգլիֆների ընդհանուր թիվը:

Որոշ դեպքերում նա սովորաբար օգտագործում էր բառահանելուկներ լուծելիս կիրառվող հնարքներ: Այսպես, օրինակ, կարտուշներից մեկում նա գտավ հիերոգլիֆային երկու նշան՝ մեջտեղում կետ ունեցող մի շրջան, ինչպես նաև մի հատուկ նշան, որը նման էր կոթի փոխարեն երեք եղջյուրիկ ունեցող պատառաքաղի: Գլուխ կոտրելով հասկանալու համար այդ շրջանի իմաստը, Շամպոլյոնը ենթադրեց, որ դա արևի խորհրդանշական պատկերն է:

Հույն գրողների հաղորդումներից նա գիտեր, որ արևը եգիպտերեն կոչվել է «Ռա»: Քանի որ երկու հիերոգլիֆներն էլ առնված էին կար-

տուշի ձվածիր շրջանակի մեջ, կարելի էր անսխալաբար ենթադրել, որ դրանք արտահայտել են Ռամզես փարավոնի անունը: Սակայն ինչպե՞ս է արտասանվել անվան երկրորդ մասը, արդեն հիշատակված «պատառաբաղը»: Հարցի պատասխանը նա գտավ ղպտերենում: Ղպտերենում կա «messes» բառը, որը նշանակում է «որդի»: Ամեն ինչ պարզ դարձավ. թագավորի անունը եգիպտերեն հնչել է «Ramesses», որ նշանակել է «արևորդի»:

Մեզ՝ անգետներիս համար դժվար է գնահատել հիերոգլիֆները վերծանելիս Շամպոլյոնի և նրա բազմաթիվ հետևորդների թափած մտավոր հսկայական ջանքերը: Եգիպտական գիրը զգալիորեն ավելի բարդ է, քան կարելի է մտածել, ելնելով վերը բերված օրինակներից: Բավական է ներկայացնել ուրիշ բնորոշ մանրամասնություններ, որպեսզի ընթերցողը համոզվի դրանում:

Եգիպտացիները ձայնավորները բոլորովին չեն գրել, ուստի գրառումը բաղկացած է եղել միայն բաղաձայններից: Դա հեշտ պատկերացնելու համար փորձենք այդ եղանակը կիրառել հայերենի նկատմամբ: Եթե մենք հանդիպեինք «շն» կամ «լր» տառերի զուգորդման, դա կարող էր նշանակել թե՛ «շուն», թե՛ «շեն», ինչպես նաև թե՛ «լոր» և թե՛ «լար»:

Նման թյուրիմացություններից խուսափելու համար եգիպտացիները բառավերջում դրել են այսպես կոչված դետերմինատիվներ, այսինքն՝ որոշիչներ, որոնք պետք է ցույց տային, թե խոսքը այդտեղ ինչ առարկայի մասին է:

Այսպես, «շն» արտահայտելիս մենք պետք է դնեինք շան պատկերը կամ շեն նշանակող մի խորհրդանշան:

Դա էլ դեռ բոլորը չէ, եգիպտացիները վերացական հասկացությունները նույնպես արտահայտել են կոնկրետ առարկաների օգնությամբ, յուրաքանչյուր դեպքում դրանց իմաստը որոշելով խորհրդանշական տարբեր դետերմինատիվներով: «Վր» բաղաձայնների զուգորդումը կարող էր նշանակել կամ ծիծեռնակ, կամ էլ «մեծ» ածական անուն: Առաջին դեպքում այն ուղեկցվել է ծիծեռնակի պատկերով, երկրորդ դեպքում՝ պապիրուսի փաթեթի նկարով: Կարելի է պատկերացնել, թե պապիրուսի այդ փաթեթի առեղծվածային դերը պարզելու համար Շամպոլյոնը ինչքան աշխատանք ու ժամանակ է վատնել:

Իսկ հիերոգլիֆային արձանագրություններում անհաշիվ քանակությամբ այդպիսի բառահանելուկներ կային:

Պետք է ասել, որ եգիպտերենը գործածության մեջ է եղել ավելի երկար ժամանակ, քան աշխարհի բոլոր լեզուները, բացառությամբ չինարենի: Մարդիկ այն գործածել են առնվազն մ. թ. ա. չորրորդ հազարամյակից ընդհուպ մինչև մեր թվականության XVII դարը, այսինքն՝ գրեթե հինգ հազար տարի: Բնական է, որ այդ հսկայական ժամանակամիջոցում եգիպտերենն անընդհատ զարգացել է, ենթարկվելով արմա-

տական փոփոխութիւններէ: Եթե մեր թվականութիւնն ից առաջ երրորդ, երկրորդ և առաջին հազարամյակներում ապրած երեք եգիպտացիներէ հանդիպեցնեինք միմյանց, նրանք, անկասկած, չէին կարողանա հասկանալ իրար:

Ճիշտ այդպես էլ հիբրոգլիֆային գիրն է ենթարկվել աստիճանական փոփոխութիւններէ: Բացի արդեն հիշատակված գծանկարային փոփոխութիւններէց, տեղի է ունեցել նաև ներքին զարգացման պրոցես: Հին հուլյն գրողները չեն սխալվել իրենց այն պնդումներում, որ հիբրոգլիֆները սկզբում նկարային գիր են եղել: Բայց արդեն շատ հեռավոր ժամանակներում այն դառնում է հնչյունագիր՝ նկարներն այլևս նշանակել են ոչ թե ամբողջական առարկա, այլ միայն դրա անվան առաջին բաղաձայն տառը: Այդ ձևով եգիպտացիները ստացել են հնչյունական քսանչորս նշան: Սակայն պետք է նկատել, որ նրանք դրանից այն կողմ չեն անցել, չեն արել այբուբենի՝ մարդկութեան համար բեկումնային գյուտը:

Այս բոլոր բարդութիւնները եգիպտագետների համար անպատմելի դժվարութիւններ էին ստեղծում: Հիբրոգլիֆային մի տեքստի վերծանումն ամենևին չէր նշանակում, թե հնարավոր է ընթերցել մյուս տեքստը: Այնուամենայնիվ, Շամպոլյոնի հանճարեղ հայտնագործութեան շնորհիվ այժմ չկա մի արձանագրութիւն, որ մասնագետը չկարողանա ընթերցել ու հասկանալ:

Եգիպտերենի վերստեղծման գործում Շամպոլյոնին մեծապես օգնեց դպտերենի իմացութիւնը, ինչպես նաև այն փաստը, որ այդ լեզուն պատկանում է սեմա-քամյան մեծ լեզվախմբին: Դրա շնորհիվ այն կարելի էր համեմատելու նպատակով համադրել Արևմտյան Ասիայում, Արաբական թերակղզում և Հյուսիս-արևելյան Աֆրիկայում բնակութիւն հաստատած հին ժողովուրդների արդեն հայտնի լեզուների հետ:

Շուտով Շամպոլյոնը գիտական մեծ հեղինակութիւն դարձավ Ֆրանսիայում և հեշտորեն միջոցներ ստացավ դեպի Եգիպտոս գիտարշավ կազմակերպելու համար: 1828—1829 թվականներին իր հավատարիմ տասնհինգ աշակերտների գլուխ անցած նա ոտքի տակ տվեց Նեղոսի հովիտը: Ամենուրեք նրան խանդավառութեամբ դիմավորում էին որպես մի մարդու, որն «ընթերցել է հին քարերի գիրը»:

Պետք է խոստովանել, որ արշավախմբի անդամներն իրենց աներևակայելի հագուստով կարող էին ընդհանուր զարմանք հարուցել: Նրանք բոլորն էլ չալմա էին դրել, հագել էին ոսկեկար բաճկոնակ և դեղին կաշվից մուկեր: Իսկ արշավախմբի կազմակերպիչն ու ղեկավարը պճնվել էր իսկական արաբական տարադով:

Չնայած այդ թատերական հանդերձավորմանը, արշավը գիտական լուրջ ձեռնարկում էր: Շամպոլյոնը բոլորին ապշեցնում ու զարմացնում էր իր հսկայական գիտելիքներով: Նրան բավական էր մի հայացք գցել հնութեան որևէ հուշարձանի վրա, որպեսզի անսխալ վերագրեր այս կամ

այն ժամանակաշրջանին: Ոչ մի բան նրա համար անուկնկալ չէր. այն ամենը, ինչ նա տեսնում էր, հաստատում էր բազմամյա աշխատանքի ընթացքում Գրեեոթլում և Փարիզում ձեռք բերած իր տեսական գիտելիքները:

Շամպոլյոնի երիտասարդ ուղեկիցներն ապշում էին եգիպտական ավերակների ոսմանտիկ գեղեցկությունից: Ահա թե նրանցից մեկն ինչ է գրել Գեեոթրայի տաճարի մասին.

... և, վերջապես, մենք նպատակի մոտ ենք. մեր առջև լույսով ողողված տանաբն է: Այդ պատկերը տեսնելիս հիացմունքից արթնում ենք: Ճանապարհին երգում էինք, որպեսզի զսպեինք մեր անհամբերությունը, բայց այստեղ, լուսնի լույսով ողողված սյունազարդ մուսֆի առջև զգացմունքները ամբողջովին համակում են մեզ. վիթխարի սյուներին հենված այս գավթում խոր լուսություն է տիրում... Թանձր ստվերներն ուժեղացնում են խորհրդավոր հմայֆը, իսկ դրսում լուսնի դյուրական, փայլկտացող լույսն է: Անմոռանալի հակադրություն: Հետո մենք չոր խոտերից խարույկ ենք վառում տանաբնում: Նոր կախարհություն և նորից մոլեգնության հասնող հիացմունքի ընդհանուր պոռթկում: Դա նման էր տենդի, խելացնորության: Բոլորս գմայլանքի մեջ էինք:

Ինքը՝ արշավի ղեկավարը, այդ տաճարի մասին ավելի զուսպ է խոսում, բայց միանգամայն ակնհերև է, որ նա էլ չի կարողացել շենթարկվել դրա հմայքին.

Ես չեմ փորձի նկարագրել այն տպավորությունը, որ մեզ վրա թողեց, մասնավորապես, մեծ տանարի գավիթը: Կարելի է պատմել գավթի չափերի մասին, բայց սլատկերացում տալ դրա մասին՝ անհնար է: Դա ներագեղության և վեհության առավելագույն հնարավոր գուգակցում է: Մենք այնտեղ երկու ժամ անցկացրինք լիակատար ինքնամոռացման մեջ: Մեր մի բոտ ֆելլահների հետ շրջում էինք սրահներում, փորձելով լուսնի լույսի տակ կարգալ պատերին փորագրված արձանագրությունները:

Արքաների հովիտը, արբազան ցուլերը և սֆինքսները

Դենոնի գիրքն ու ժոմարի հրատարակած շքեղ ալբոմները հին եգիպտական հուշարիեր ձեռք բերելու իսկական տենդ առաջացրին Եվրոպայում: Ամեն մի քիչ թե շատ նշանավոր քաղաք պատվի գործ էր հա-

մարում իր թանգարանում նեղոսի ափերից բերված ցուցանմուշներ ունենալը:

Այդ նպատակով ուղարկվող արշավախմբերը իրենց աշխատանքում հաճախ ղեկավարվում էին ոչ թե գիտական լուրջ նպատակներով, այլ մտղայի նկատառումներով: Ամեն տեսակ բախտախնդիրները, շահ ստանալու հնարավորության հոտն առնելով, իրենց նախաձեռնություններում էին Եգիպտոս, այնտեղ գնում քանդակներ, կոյարղեղներ, անգամ ամբողջական սարկոֆագներ ու մումիաներ, որպեսզի հետո վերավաճառեին մասնավոր հավաքորդներին:

Դրա հետևանքով Կահիրեում ընդհատակյա անգսպելի առևտուր ծավալվեց, որը չէին կարողանում դադարեցնել նույնիսկ վարչական ամենախիստ միջոցները: Եգիպտական ֆելլահների ամբողջ գյուղեր, որոնք գտնվում էին փլատակների և թագավորական դամբարանների կողքին, հնությունների առուծախն իրենց գոյոթյան աղբյուր էին դարձրել: Մորուքավոր արաբները նեղլիկ փողոցներում ու շուկաներում անգադար առաջարկում էին գնել եգիպտական արվեստի ստեղծագործություններ, որոնցով կարող էին հպարտանալ աշխարհի խոշորագույն թանգարանները: Անհնար է նույնիսկ պատկերացնել, թե ինչ անուղղելի վնաս է հասցվել եգիպտագիտությանը, որովհետև առուծախի նպատակով հնությունների տենդագին որոնումների ժամանակ առանց ձևականությունների թալանել են տաճարներն ու դամբարանները, ջարդել սարկոֆագները, թոցրել արձանների գլուխները, պատերից պոկել ամբողջ սալեր՝ հարթաքանդակներով ու արձանագրություններով:

Այդ ամբողջ խառնաշփոթության մեջ Եգիպտոսի իսկական հնագիտությունը շատ դանդաղ էր հասունանում: Հանգամանքների տարօրինակ բերումով դրա ոահվիրան դարձավ հնագիտության հետ ոչ մի ընդհանուր բան չունեցած մի մարդ՝ 1778 թվականին Պաղուայում ծնված Զովաննի Բատիստա Բելցոնին, արտակարգ հետաքրքիր և որոշ չափով արկածախնդիր մի անձնավորություն: Նրան հարկ էր դասել շարքային գանձորոնողների շարքը, որոնցով լեփ-լեցուն էր Եգիպտոսը և որոնք իսկական պատուհաս էին գիտության համար, եթե չլիներ այն փաստը, որ նա տակավին առաջին քայլերն անող եգիպտագիտության համար մեծ նշանակություն ունեցող մի քանի հայտնագործություններ արեց: Ավելի ուշ շրջանի հնագետները բազմիցս նրան մեղադրել են որոնումների կոպիտ, նույնիսկ բարբարոսական եղանակներ կիրառելու մեջ, բայց, շնայած դրան, ճանաչել են նրա անվիճելի ժառանգությունները:

Երիտասարդ ժամանակ Բելցոնին պատրաստվում էր վանք մտնել, թեև վանականի դերը նրան շատ էլ չէր սաղում: Նա ըմբիջի միանունքով, դյուրաբորբոք, բոնցրակոփվների ու վիճաբանությունների սիրահար մի պատանի էր: Դրան գումարած, խճճվել էր նաև քաղաքական բանասերկությունների մեջ, իսկ այն ժամանակներում դա անվտանգ բան չէր: Ահա

Թե ինչու, քսաներեք տարեկան դառնալով, նա ստիպված էր փախչել Պաղուայից և շուտով հայտնվեց Լոնդոնի փողոցներում:

Այնտեղ նա ապրուստ էր վաստակում բավական յուրօրինակ ձևով. իբրև «աշխարհի ամենաուժեղ մարդ» ելույթ էր ունենում ամենաանշանկրկեսներում: Վարդագույն մարզաշոր հագած, նա հանդիսականներին զարմացնում էր իր մկաններով, բարձրացնում անհավատալի ծանրություններ, իսկ ելույթի վերջում, նվագախմբի որոտի և ամբոխի հիացական ոռնոցի ուղեկցությամբ քայլում էր ասպարեզում, տանելով իրենից կախ ընկած մի քանի տղամարդկանց:

Սակայն նա երազում էր որևէ մեծ գյուտ անել, որը իրեն հարստություն բերեր: Լսելով անհիշելի ժամանակներից Եգիպտոսում կիրառվող ոռոգման պարզունակ եղանակների մասին, նա մի ջրհան անիվ հորինեց, որը կարող էր փոխարինել շորս պարզունակ ամբարձիչ-շերեփների: Կրկեսային ելույթներից հավաքած վերջին փողերով նա մեկնեց Կահիրե և իր մոդելը ցուցադրեց Եգիպտոսի այն ժամանակվա տիրակալ Մուհամեդ Ալուն: Սակայն նա լիակատար անհաջողություն կրեց: Մուհամեդ Ալին հայտնի էր նրանով, որ ճաշի հրավիրելով իր հակառակորդ շորս հարյուր բեյերին, բոլորին մինչև վերջինը մորթել էր: Նա ամենից քիչ էր մտահոգված այն բանով, թե ինչպես թեթևացնեն հարստահարված ֆելլահների կյանքը, և նայելով մոդելին, անտարբեր ուսերն էր թոթվել:

Բելցոնին Կահիրեում մնաց առանց գրպանում մի քոռ կոպեկ ունենալու: Ուստի, երբ անգլիական հյուպատոսը նրան առաջարկեց լավ վարձատրության դիմաց մի հանձնարարություն կատարել, նա անմիջապես համաձայնեց: Խոսքը Ռամզես II-ի վիթխարի արձանը Թեբեից Նեղոսով փոխադրելու և Ալեքսանդրիայում նավին բարձելու, այնուհետև Լոնդոնի Բրիտանական թանգարան տանելու մասին էր:

1816 թվականին Բելցոնին հայտնվեց Թեբեում: Քաղաքի փլատակները նրա վրա խոր տպավորություն թողեցին և ջերմ սեր արթնացրին եգիպտական հնությունների նկատմամբ: Նա որոշեց ընդմիշտ մնալ Եգիպտոսում և իրեն նվիրել հնագիտական որոնումներին: Առաջին անգամ փլատակները տեսնելիս նա այսպես գրեց իր օրագրում.

22-ին մենք առաջին անգամ տեսանք մեծ Թեբեի փլատակները և ափ իջանք Լուֆսոում: Անհնար է նկարագրել այն տեսարանը, որ երևաց մեր աչքի առաջ: Թվում էր, թե մտել եմ հսկաների ֆաղաֆ, որն այնպիսի տեսք ուներ, ասես ավերել էին տեական պատերազմի ժամանակ... Լուֆսոի տանաբը ճանապարհորդին ապշեցնում է իր հոյակապ, վեհապանծ մոնումենտալությամբ: Նրանում զարմանքի է արժանի ամեն բան՝ երկու կոթողներով ու հսկայական արձաններով մուսֆերը, կիպ շարված խումբ-խումբ սյուները, տարբեր սրահներն ու սրբարանները, որմերն ու սյուները ամբողջովին

ծածկած շֆեղ զարդանկարները, մուսֆերի մարտի տեսարաններ պատկերող հուրբաֆանդուկները: Եթե արմավենիների կատարներից շատ վեր բուրձրացող շինության մնացորդների տեսից հրապուրված մենք մեր հայացքն ուղղենք դեպի Թեբեի հյուսիսային մասը, տառացիորեն կհայտնվենք տանարների, սյուն-կոթողների, հսկա արձանների, սֆինքսների, գավիթների և նկարագրության միանգամայն ոչ ենթակա անհամար ու զարմանալի այլ հուշարձանների անտառում: .

Նույնիսկ Նեղոսի արևմտյան կողմում ճանապարհորդը կհայտնրվի հրաշքների մեջ: Այնտեղ գտնվում են զարմանահրաշ տանարներ, արտահայտչական տնհամեմատելի ուժով օժտված վիթխարի արձաններ, ինչպես նաև Արֆաների հովիտը թագավորական վիմափոր բազմաթիվ դամբարաններով՝ որմնանկարներով, սարկոֆագներով ու տնդրիներով հանդերձ: Այստեղ ինչպես շխորհես մի ժողովրդի բախտի մասին, որը կառուցել է այս ապշեցուցիչ շինությունները, իսկ հետո սուզվել մոռացության այնպիսի խավարի մեջ, որ նույնիսկ նրա լեզուն և դպրությունն են առեղծված դարձել:

Բելցոնին մի քանի տասնյակ արարների վարձեց և հեծանների, ցցերի ու արմավենու թելից հյուսած ճոպանների օգնությամբ արձանը բարձեց լաստին: Ինքն այնքան ջանադրաբար էր օգնում արձանը լաստին բարձելիս, որ նրա ջթից արյուն հորդեց: Ճանապարհորդությունը Նեղոսն ի վար տեեց հինգ ամիս: Ճանապարհին նրա աչքերը սկսեցին ցավել, և նա ամբողջ ժամանակ ստիպված էր մնալ մթնեցրած լաստայնում, բայց Ռամզեսի արձանը բարեհաջող հասցվեց Ալեքսանդրիա:

Հաջորդ հինգ տարիները նա անցկացրեց Եգիպտոսում, հավաքելով և կոնդոն առաքելով ամեն տեսակ գտածոներ՝ փոքրիկ կոյաբզեզներից մինչև հսկայական միակտոր կոթողներ: Բելցոնիի գործունեությունն, ըստ էության, ամենասովորական թալան էր. ի արդարացում նրա կարելի է միայն ասել, որ այն ժամանակ նա բացառություն չէր: Այն ժամանակներում անգամ լրջմիտ հնագետներն էին առանց խղճի խայթ դգալու թալանում Եգիպտոսը, հնագիտական գտածոներն իրենց երկրներն ուղարկելով:

Բելցոնիի անվիճելի ծառայությունն այն էր, որ նա առաջինը սկսեց հնագիտական որոնումները Նեղոսից արևմուտք, Լուքսորի և Կառնակի դիմաց ընկած Արքաների հովտում, մինչև հիմա էլ հսկայական փլատակներով լի եգիպտական հին քաղաքներում: Այդ ամայի, կրաքարե ժայռերի օղակով պարփակված գոգահովտում մ. թ. ա. XVI դարից սկսած փարավոնները հրամայել են իրենց համար դամբարաններ փորել

ու թաղել հեքիաթային թանկարժեք զարդերով ծածկված իրենց մու-
միաները:

Այդ դամբարանները տակավին հին ժամանակներում թալանվել են
կողոպտիչների կողմից: Բացված ու դատարկված, դրանք ապաստարան
են եղել շնագայլերի ու շղջիկների համար: Թաղման խցերի պատերին
պահպանվել են միայն զարմանալի պատկերներ ու հիերոգլիֆներ, որ
ոչ ոք չի կարողացել ընթերցել: Դեռևս հույն և հռոմեացի ճանապարհորդ-
ներն են հաճույքով այցելել այդ շարագուշակ հովիտը: Լերկ, զառիթափ
ժայռերը, դրանց ստորոտում գտնվող խճաքարի ու քարաբեկորների
հսկայական փլվածքները, այդ ամայի, ինչպես լուսնի լանդշաֆտը,
վայրում տիրող մեռելային լուսթյունը անջնջելի տպավորություն են
թողել:

Եզիպտագետները համոզված էին, որ Արքաների հովտի բոլոր գե-
րեզմաններն արդեն հայտնի են ու հետազոտված, ուստի ոչ մի իմաստ
չունեղ հատուկ պեղումներ սկսելը: Բայց Բելցոնիին այդ կար-
ծիքը հետ չպահեց: Հովտի մի տեղում նա ֆելլահներին հրամայեց մաքրել
քարաբեկորների հսկայական շեղջը և անսպասելիորեն հայտնվեց մի
դամբարանի մուտքի առջև, որի գոյությունը մասին ոչ ոք չէր կասկածում:
Մի ժամանակ դամբարանում, անգին գանձերի մեջ հանգչել էր Սեթի I
փարավոնի՝ Ռամզեսի նախորդի, Ասորիքը, Լիբանանը և խեթերի երկիրը
նվաճողի աճյունը: Դամբարանը իսպառ թալանված էր, մնացել էր միայն
ալեբաստրե սարկոֆագը, որն էլ Բելցոնին ուղարկեց Լոնդոն:

Դամբարանի հայտնաբերումը ընդհանուր հուզմունք առաջ բերեց,
քանզի անհերքելիորեն ապացուցում էր, որ հակառակ գիտնականների
կարծիքին, հովիտը շատ անակնկալներ է թաքցնում: Այն ժամանակվա-
նից այնտեղ բազմամյա պեղումներ սկսվեցին, որոնք XX դարում պսակ-
վեցին Թուֆանհամոնի անձեռնմխելի դամբարանի հայտնաբերմամբ,
ուր գտնվեցին բազմաթիվ ուղղակի շճմեցուցիչ թանկարժեք իրեր ու
եզիպտական արվեստի ստեղծագործություններ:

1820 թվականին Բելցոնին վերադարձավ Լոնդոն, որտեղ նրան դի-
մավորեցին խանդավառությամբ: Էլ ավելի մեծ աղմուկ հանեց Փիքըդիլի
փողոցում գտնվող Եզիպտական սրահում բացված նրա գտածոների ցու-
ցահանդեսը, որոնցից ամենամեծ հիացմունքը հարուցում էր Սեթի I
փարավոնի ալեբաստրե սարկոֆագը:

Մի քանի տարի անց Բելցոնին մահացավ նավում, Թիմբուկտու
տանող ճանապարհին, ուր գնում էր նոր տպավորություններ ու արկած-
ներ որոնելու:



Այլ կերտվածքի որոնող էր Ֆրանսիացի գիտնական-հնագետ և Լուվրի
թանգարանապահ Օգյուստ Մարիետը: 1858 թվականին նա գնաց Եզիպ-

ատս, մտադրվելով պապիրուսային վավերագրեր գնել իր թանգարանի համար:

Կահիրեն իր մզկիթներով ու սլաքածե մինարեթներով անջնջելի ապավորություն թողեց նրա վրա: Շրջելով քաղաքի փողոցներում, նա զարմանքով նկատեց, որ մզկիթների և բարձրաստիճան պաշտոնյաների դղյակների դռների առջև միանման սֆինքսներ են դրված: Նրան հետաքրքրեց դրանց ծագումը: Սֆինքսները, անկասկած, Կահիրե էին բերվել միևնույն վայրից. այնքան նման էին միմյանց թե՛ չափերով և թե՛ կատարման ոճով:

Սֆինքսների ծագման գաղտնիքը նա պարզեց միանգամայն պատահաբար: Շրջելով Կահիրեից ոչ հեռու գտնվող Սաքարա վայրում, նա ավազի միջից դուրս ցցված սֆինքսի գլուխ նկատեց: Փորփրելով բացելով սֆինքսի մարմինը, նա կարգաց «Ապիս՝ Մեմփիսի սրբազան ցուլ» մակագրությունը:

Այդ հայտնագրածությունը չափազանց հուզեց նրան: Նա գիտեր, որ սլաքածե ցուլի պաշտամունքային ծեսը կատարվել է առասպելական Սֆինքսների ծառուղու մոտ գտնված տաճարում, ծառուղի, որն արդեն վաղուց էր ջնջվել երկրի երեսից և ոչ ոք չգիտեր որտեղ փնտրել դրա հետքերը: Մի՞թե ծառուղին թաքնված է եղել այդտեղ, Սաքարայում, ավազի տակ:

Նա անհապաղ վարձեց մի քանի տասնյակ արաբների ու սկսեց գտնված քանդակի մոտ փորել ավազը: Այդ աշխատանքի արդյունքները շտեպ ցուցիչ էին: Լայն ճանապարհի երկու կողմերում կանգնած էին մտասույզ, հեռուն նայող հարյուր քառասուն հսկայական սֆինքսներ: Հետագա պեղումներն ի հայտ բերեցին, որ ծառուղին միացրել է երկու տաճարները, որոնցից կատարյալ փլատակներ էին մնացել:

Մի անգամ տաճարներից մեկի մոտ Մարիետը ստորգետնյա այրի ավազածածկ մուտք գտավ: Նա մի ջահ վառեց և թեք միջանցքով իջավ այնտեղ: Երեքուն բոցի լույսով գիտնականը մի անմոռաց պատկեր տեսավ: Ժայռափոր հսկայական սրահում մի շարքի վրա գրված էին հղկված սև և կարմիր գրանիտից պատրաստված, յուրաքանչյուրը առաջին հայացքից մոտ յոթանասուն տոննա քաշ ունեցող սարկոֆագներ: Հավանորեն, կողոպտիչներն այստեղ էլ էին տեր ու տնօրինություն արել, որովհետև մի քանի սարկոֆագների կափարիչները մի կողմ էին գցված:

Սարկոֆագներից յուրաքանչյուրում հանգչում էր ցուլի մումիա, անձեռնմխելի ու հիանալի պահպանված, թեև թալանված, չկային այն թանկարժեք իբեթը, որոնցով նրանց զարդարել էին հանգերձյալ աշխարհ ուղարկելիս:

Արգեն վաղուց էր հայտնի, որ եգիպտացիները որոշ կենդանիների համարել են աստվածություններ և նրանց պատշաճ պատիվներ մատուցել: Բայց միայն այդտեղ Մարիետը գտավ այդ յուրօրինակ հավատալիքի

իրեղեն ապացույցը՝ Պտահ աստծո ծառա սրբազան Ապիս ցուլի հերթական մարմնացումների գերեզմանոցի տեսքով, ցուլ, որի պատվին տաճարներ են կառուցել և որին ծառայել է քրմերի հատուկ կոլեգիան:

Կենդանին ողջ կյանքն անց է կացրել տաճարում կամ մոտակա արոտավայրում, իսկ երբ ավարտել է իր անհոգ գոյությունը, քրմերը կրոնական հատուկ ծիսակատարությամբ զմուսել են նրան ու թաղել ստորգետնյա փապարներում:

Եգիպտացիները հավատացել են, թե մեռնում է միայն ցուլի երկրային պատյանը, իսկ հոգին փոխադրվում է ուրիշ ցուլի մարմնի մեջ: Սգո երկարատև արարողությունների ու ծիսակատարությունների ավարտից հետո, տաճարի առանձնացրած քրմերը մեկնել են երկրով մեկ ճամփորդության՝ ցուլերի մեջ գտնելու աստվածային հաջորդին: Ծաղիկներով ու ժապավեններով զարդարված ընտրյալին հանդիսավոր թափորը տարել է տաճար: Ճանապարհին հավատացյալների ամբոխները խնդալից պարերով ու երգեցողությամբ ողջունել են նրան:

Պետք է նշել, որ տարբեր շրջաններում տարբեր կենդանիների պաշտամունք է գոյություն ունեցել: Այստեղից հետևում է, որ կենդանիներին երկրպագելը սկիզբ է առել այն ժամանակներում, երբ Եգիպտոսը դեռևս բաժանված էր ցեղային փոքրիկ պետությունների: Բուբասթիսում և Բենի Հասանում գտնվել է զմուսված կատուների, Օմբոսում՝ կոկորդիլոսների, Աշմունենում՝ քաջահավերի, Ելեփանտինում՝ ոչխարների գերեզմանոց: Այն ժամանակ, երբ որոշ շրջաններում նրանց սրբազան և անձեռնմխելի կենդանիներ են համարել, մյուս շրջաններում առանց որևէ նախապաշարմունքների սպանել են: Հավատալիքների այդ տարբերությունների հետևանքն է, օրինակ, այն փաստը, որ Նեղոսի որոշ հատվածներում վխտացել են կոկորդիլոսները, իսկ մյուս հատվածներում կոկորդիլոսներ բոլորովին չեն եղել, որովհետև այնտեղ բնաջնջել են նրանց:

Առհասարակ կենդանիները շատ կարևոր դեր են կատարել եգիպտական կրոնական հավատալիքներում: Ամենահեռավոր ժամանակներում աստվածները հանդես են եկել կովի, ոչխարի, բազբի, քաջահավի, շնագայլի, կոկորդիլոսի, կատվի, օձի և այլ կենդանիների կերպարանքով: Ավելի ուշ նրանց սկսել են տալ մարդկանց տեսք, սակայն պատկերներում պահպանելով կենդանիների գլուխները, և միայն զարգացման վերջին փուլում են աստվածները միանգամայն մարդկային կերպարանք ձեռք բերել:

Մարիետը արեց նաև երկրորդ, հնագիտության համար ոչ պակաս կարևոր հայտնագործությունը: Սֆինքսների ծառուղուց ոչ հեռու նա պեղեց մեծատոհմիկ և խոշոր հողատեր Թիի ժայռափոր, շափազանց հին, այն ժամանակներին վերագրվող դամբարանը, երբ կառուցվել են Քեոփսի, Քեփրենի և Միքերինի բուրգերը: Դամբարանը լիովին թալանված էր, բայց որմնանկարները պահպանվել էին: Այդ որմնանկարներն անգնա-

հատելի նշանակութիւնն ունեն գիտութեան համար, քանզի առաջին անգամ հնարավորութիւնն տվեցին ծանոթանալու եգիպտացիների ապրելակերպին և հասարակական կարգին:

Ազնվազարմ ու մեծատուն թին որմնանկարներում միշտ պատկերված է երեք կամ չորս անգամ ավելի մեծ, քան մնացած մարդիկ: Նա կանգնած է հպարտ և տիրաբար, այդ ձևով ընդգծելով տիրոջն ու ստրուկներին բաժանող դասակարգային անդունդը: Նա պատկերված է նաև ընտանիքի հետ զրուցելիս, պապիրուսի թփուտներում որս անելիս, նավի վրա՝ թիավարներին հետևելիս: Մյուս որմնանկարներում պատկերված են տուրք բերած, թոկը վզներին գյուղացիներ, կռացած ստրուկների երկար շարաններ, իսկ նրանց մոտ՝ խարազանները վրա բերող վերակացուներ: Այդ որմնանկարները ավելի պերճախոս են պատմում Հին Եգիպտոսում տիրած հասարակական հարաբերութիւնների մասին, քան ավելի ուշ ընթերցված բազմաթիվ արձանագրութիւնները:

Պակաս ուսանելի չեն այն նկարները, որոնցում մարդիկ պատկերված են իրենց ամենօրյա զբաղմունքի ժամանակ: Դրանցում պատկերված են վուշ մշակող, աշորա հնձող, կալսող, էրանող գյուղացիներ, իշապաններ, նավաշինարարներ, փայտահատներ, ոսկերիչներ, որմնադիրներ, թամբագործներ, փորագրողներ, քանդակագործներ: Քանի որ այդ ամենը կատարվում է մեծահարուստ թիի կալվածքում, կարելի է եզրակացնել, որ այն ժամանակվա մեծատոհմիկների կալվածքներն իրենցից ներկայացրել են բնատնտեսութիւններ, ուր արտադրվել է գրեթե ամեն անհրաժեշտ բան՝ ներքին պահանջմունքները բավարարելու համար:

Կահիրեում Եգիպտական թանգարանի ստեղծումը ևս Օգյուստ Մարիետի ծառայութիւնն էր: Լինելով թանգարանի դիրեկտորը, նա հաջողութեամբ պայքարում էր հնութեան հուշարձանների անլեգալ առևտրի դեմ, նրա շնորհիվ ընդունվեց մի օրենք, որը սահմանում էր այն պայմանները, որոնց դեպքում կարելի էր պեղումներ ձեռնարկել, և Եգիպտոսը պաշտպանում էր լիակատար կողոպուտից:

Հիմա, նրա թափած ջանքերի շնորհիվ, միայն առանձնահատուկ դեպքերում է թույլատրվում գտածոները դուրս տանել երկրից: Հնագետները, որպես կանոն, պարտավոր են դրանք հանձնել Եգիպտական թանգարան, այդ պատճառով այժմ Կահիրեում են գտնվում հնութիւնների ամենահարուստ հավաքածուները, որոնք գիտնականներին հնարավորութիւն են տալիս ուսումնասիրել Հին Եգիպտոսի պատմութիւնը, մշակույթը և սովորույթները:

Բուրգերի գաղտնիքները

XIX դարի հնագետների, եգիպտագիտության ուսուցիչների թվում պետք է նշել նաև անգլիացի գիտնական Ուիլյամ Մաթյու Ֆլինդերս Պետրիին, որը 1880 թվականից սկսած քառասուն տարի զբաղվում էր գլխավորապես բուրգերի հետազոտությամբ:

Արաբների կողմից «փարավոնների սարեր» կոչված փառահեղ կառույցները երևան են երեկ փարավոնների երրորդ և չորրորդ դինաստիաների օրոք, այսինքն գրեթե չորսուկես հազար տարի առաջ: Հնագույն ժամանակներից դրանք հրապուրել են ճանապարհորդների բազմաթիվ սերունդների, զարմանք և համարյա սնոտի վախ առաջացնելով իրենց շափերով ու խստաշունչ ճարտարապետությամբ:

Բուրգերի մասին գիտելին այն միակ բանը, որ դրանցում մի ժամանակ պահվել են Եգիպտոսի մեծագոր սիրակալների մումիաները: Ոչ ոք չի իմացել ոչ այն, թե դրանք երբ են կառուցվել, ոչ էլ այն, թե ինչպիսին են եղել դրանց իսկական շափերը: Բուրգերի մասին տարածվել են ամենաբազմազան, գլխավորապես ֆանտաստիկ, ավանդազրույցներ ու պատումներ: Դրանց ձևերում և համամասնություններում ջանացել են գտնել բրմերի աստղաբաշխական գիտելիքների արտացոլությունը և նույնիսկ մարդկային սերունդների ապագա բախտի մասին արված միստիկական մարգարևությունները:

Եթե մենք հիմա ամենամանրամասն տեղեկություններ ունենք բուրգերի մասին, դրա համար շատ ենք պարտական Պետրիի բազմամյա, համբերատար աշխատանքին: 1880 թվականին նա առաջին անգամ հայտնրվեց Գիզայի բուրգերի առջև: Պայմանները, որոնցում նա սկսեց իր աշխատանքը, մեծ անձնուրացություն էին պահանջում: Նրա դրամական միջոցները շատ սուղ էին, նա չէր կարող օգնականներ վարձել ու մի բարաք կառուցել, որտեղ հնարավոր լիներ ապրել և հանգիստ աշխատել: Նա տեղավորվեց ժայռափոր դատարկ դամբարանում, քնում էր խոտկուռի վրա, կերակուր եփում սպիրտայրոցով և իր գրառումները կատարում նավթի ծխարձակող լամպի լույսի տակ:

Հենց որ գիշերը վրա էր հասնում և թեթևակի իջնում էր ջերմաստիճանը, Պետրին տկլորանում ու մտնում էր բուրգի խճճված միջանցքները և գերեզմանախցերը: Շինության կենտրոնական մասում արեազարձային տաքություն էր և սարսափելի հեղձուկ, ուստի նա չէր կարող մեկ կամ երկու ժամից ավելի մնալ այնտեղ: Այդ ընթացքում նա հապճեպորեն նկարում էր միջանցքների գասավորությունը և պատճենահանում որմնանկարները: Նման արշավներից հետո սովորաբար վերադառնում էր քրտնամխած, գլխացավով և գերհոգնածությունից կարմրատակած աչքերով: Չնայած դրան, նա իսկույն նստում էր դետնին և լրացնում անավարտ ուրվանկարները: Տույ օրերին մինչև երեկո նա քնում էր իր որ-

շում, սրպեսզի երբ շերմատտիճանն իջներ, կրկին անցներ աշխատանքի:

Մինչև հիմա հնազետները գտել են ութսուն բուրգ: Դրանց մեծամասնությունը հայտնաբերվել է մնացորդային վիճակում, որովհետև դարերի ընթացքում բուրգերը շինանյութի անհատնում աղբյուր են եղել շրջակայքում ապրող ֆելլահների համար: Փարավոնները դրանք կառուցել են Նեղոսի արևմտյան կողմում, Վերին և Ստորին Եգիպտոսների սահմանագծում ընկած Եգիպտոսի հնագույն քաղաքամայր Մեմփիսի հարևանությամբ:

Դրանցից ամենահռչակավորները Քեոփսի (Քուփու), Քեփրենի (Քեփրա) և Միքերինի (Մենքաուրա) բուրգերն են, որոնցից ամենամեծը վեր է խոյանում հարյուր քառասունվեց մետր, իսկ քառակուսի հիմքի կողմի երկարությունը կազմում է գրեթե երկու հարյուր երեսուն մետր: Աշխարհի խոշորագույն քրիստոնեական եկեղեցին՝ Հոմի սուրբ Պետրոսի տաճարը կարող է ազատ տեղավորվել այդ բուրգում: Այն կառուցված է երկու միլիոն երեք հարյուր հազար մեծակտոր քարերից, որոնցից յուրաքանչյուրը միջին հաշվով կշռում է վեց հազար կիլոգրամ:

Հերոդոտը հաստատում է, որ բուրգը կառուցվել է քսան տարի, և միայն քարերը տեղափոխելու աշխատանքներում զբաղված է եղել հարյուր հազար գյուղացի, որոնց ամեն տարի երեք ամսով, երբ Նեղոսը դուրս է եկել ափերից և դաշտային աշխատանքները դադարեցվել են, քշել բերել են այդտեղ: Բացի այդ, ինչպես կարևի է դատել բարաքների փլատակներով, այնտեղ մշտապես աշխատել են շուրջ շորս հազար քարտաշներ, որմնադիրներ, փորագրիչներ և այլն:

Մինչև հիմա էլ բուրգի առջև միակտոր ժայռաբեկորից քանդակված մի վիթխարի սֆինքս կա: Այն ստեղծվել է Քեոփսի հաջորդներից մեկի թագավորության օրոք: Խորհրդավոր մտախոհության համակված մարդկային դեմքով պառկած առյուծը պետք է խորհրդանշեր եգիպտական տիրակալների անսահմանափակ հղորությունը: Արձանը մեծ տպավորություն է թողնում հենց միայն իր շափերով՝ այն ունի քսան մետր բարձրություն և յոթանասուներեք մետր երկարություն:

Անապատային լերկ հարթավայրի մեջտեղում կանգնած բուրգերը հիմա տխուր տեսարան են ներկայացնում: Կրաքարե կամ գրանիտե հղկված սալերը, որոնցով բուրգերը երեսապատված են եղել, մեծ մասամբ պոկվել ու որպես շինանյութ են օգտագործվել, իսկ դրանց մնացորդները հողմնահարվել են և ավազամրրիկների անդադրում հարվածներից կորցրել իրենց ողորկությունը:

Բուրգերն այլ շրջապատում տեսնելու համար փոխադրվենք դրանց երիտասարդության ժամանակները: Զարդարուն պարսպով պոտեկորված ամեն մի բուրգի մոտ մի դեղեցիկ տաճար է եղել բազմասյուն գավիթով, որտեղ քրմերը ժամերգություններ են կատարել մեռած փարավոնի բարեկեցությունն ապահովելու համար և հոգացել են նրա ամենօրյա կարիք-

ները, արձանի մոտ ուտելիքով և ըմպելիքներով լի ամաններ դնելով:

Պալատական մեծատոհմիկներն իրենց համար մեծագույն պատիվ են համարել բուրգերին մոտ հարևանությամբ թաղվելը: Այդ պատճառով բուրգի շուրջը ստեղծվել են մեծ գերեզմանոցներ՝ լի շքեղ դամբարաններով:

Բուրգերի արտաքին մակերեսը հաճախ զարդարվել է հարթաքանդակներով ու խճանկարներով: Մեծ տոնակատարությունների ժամանակ գույնզգույն դրոշակների կայմերի անտառը շրջապատել է բուրգը: Թագուհի Ուեթենի գերեզմանախցի արձանագրությունից հայտնի է, որ նրա բուրգի գագաթը ոսկեզօծված է եղել: Ոսկեգույն ցուլքը, որ հերթականորեն պայծառացել է մերթ արևի, մերթ լուսնի լույսից, գուցե, ուղեցույց նշան է եղել ճանապարհորդների համար, ինչպես փարոսի կրակը ծովում գտնվող նավերի համար:

Հաշվի առնելով բացառապես մարդու ֆիզիկական ուժի վրա հիմնված աշխատանքի այն ժամանակվա պարզունակ եղանակները, հետազոտողները մտորում էին այն հարցի շուրջ, թե ինչպե՞ս կարելի էր քարի այդպիսի ահռելի զանգվածները միմյանց վրա կիտելով, ստեղծել երկրաչափական անբասիր կանոնավոր ձև և հարյուր հազարավոր սալերն այնպես կիպ հարմարեցնել, որ անհնար է դրանց արանքը դանակի շեղք մտցնել:

Բարեբախտաբար, պատմական աղբյուրներում և հիերոգլիֆային արձանագրություններում պահպանվել են որոշ տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս մոտավորապես վերականգնել ամբողջ շինարարության ընթացքը: Քարերը մոտակա քարհանքներից փոխադրել են Նեղոսով, հետո գլորանների օգնությամբ հասցրել են շինարարության վայրը և սահաչորսուներով բարձրացրել դրել են թեք փայտամածին, որն անհրաժեշտության դեպքում բարձրացվել է ու երկարացվել: Շփումը փոքրացնելու համար ճանապարհը ջրել են, և գլորանները սահել են ցելի մեջ, որը յուրօրինակ քսուքի դեր է կատարել: Որմնադիրները քարերը տեղադրել են այնպես, որ մինչև դրանց միացման պահը թողել են մի նեղլիկ փայտամած, որին, անդունդի վրա կախված, կարողացել են հազիվհազ հենվել ոտքերով:

Դա բազմաթիվ մարդկային կյանք տարած տանջալից աշխատանք է եղել: Մրջյունների նմանվող այդ մարդիկ, որոնց վերակացուները շտապեցրել են իրենց խարազաններով, ուժից վեր գործ են արել անապատի սպանիչ արևի տակ, որպեսզի կատարեին մի մարդու՝ Վեբին և Ստորին Եգիպտոսների աստվածացված տիրակալի, քմահաճույքը:

Եթե մտածելու լինենք, թե այդ շինարարության մեջ ինչ հսկայական ջանքեր են ներդրվել, ակամա կհանգենք մի հետևություն, որ աշխարհի պատմության մեջ այլևս երբեք չի եղել այնպիսի դեպք, որ հպատակ մարդկանց ստիպեին կատարելու այդքան անարտադրողական աշխա-

տանք, որի շափերն ու լարվածությունը հիմա մեզ միանգամայն անհասկանալի են թվում:

Թագավորական մումիաները պահելու համար նախատեսված այդ անհուն կառույցները, բացի այդ, թագավորների աստվածայնության ապացույց էին և նրանց համար, ըստ այն ժամանակների հավատալիքների, սանդուղք են եղել, որով նրանք վերադարձել են երկինք: Ուստի հնագույն բուրգերը եղել են աստիճանաձև և միայն ավելի ուշ, անհայտ պատճառներով, դրանց պատերը սկսել են հարթ կառուցել: Բուրգերի այդ միատիկական նշանակության մասին են վկայում գտնված պապիրուսները, որոնցում, օրինակ, այսպիսի տողեր կան.

Մենք երա (փարավոնի) համար սանդուղք ենք կառուցում, որ կառուցանա երկինք բարձրանալ

Ճնշված ժողովրդի լայն զանգվածների համար բուրգերի այդ դաժան, անհոգի քարաբեկորները պետք է ինչ-որ միանգամայն խորթ ու թշնամական բան լինեին, իրենց հպարտության ու անձնամոլության շափը չիմացած տիրակալների խորհրդանիշ: Չէ որ այդ բուրգերի կառուցումը կլանել է Եգիպտոսի գլխավոր ռեսուրսներն ու սաստկացրել կարիքը: Բուրգերի շինարարության ավարտից հետո անգամ փարավոնները շարունակել են շահագործել աշխատավորական զանգվածներին՝ գյուղացիներին ու արհեստավորներին, քանզի ծիսակարգը պահանջել է, որ բացառապես հանգուցյալին ծառայող մի խումբ քրմեր սպասարկեն բուրգը: Փարավոններից մեկը տասներկու գյուղերից հավաքվող տուրքը հավիտյանս հավիտենից նախասահմանել է հոգեհանգստյան ժամերգության համար:

Չորրորդ դինաստիայի ժամանակներում մարդկանց հարստահարելու մասին հիշատակում է Հերոդոտը, իսկ Դիոդորոսը հաստատում է, որ մի անգամ երկրի բնակչությունն ապստամբություն է բարձրացրել և բուրգերից դուրս շարտել թագավորների աճյունները:

Ավելի խորապես հասկանալու համար այն պատճառները, որոնք փարավոններին դրդել են կառուցելու այդ վիթխարի շինությունները, անհրաժեշտ է գոնե հակիրճ կերպով վերհիշել եգիպտական հավատալիքների որոշ հիմնական գծերը: Աստվածների համաստեղության մեջ առավել մեծարվել են արևի աստված Ռան և երկրի աստված Օսիրիսը, որը կառավարել է արդարացիորեն և, բացի այդ, մարդկանց սովորեցրել է բոլոր արվեստներն ու արհեստները: Նրա եղբայրը՝ Սեթ աստվածը, եղել է շարի մարմնացումը: Նախանձելով Օսիրիսին, որին մարդիկ շատ են սիրել, Սեթը սպանել է նրան, դիակը դրել արկղի մեջ ու ծովը նետել: Ալիքը արկղը ափ է հանել Բիբլոս քաղաքից ոչ հեռու:

Օսիրիսի կինը՝ Իսիդան, նրան հարություն է տվել նոր կյանքի հա-

մար: Հարություն առած Օսիրիսն այդ ժամանակվանից մեռյալներին
երկրի տիրակալն է:

Օսիրիսի որդին՝ Հորը, լուծել է հոր մահվան վրեժը և սպանել Սեթին: Այդ պահից նա դարձել է որդիական սիրո մարմնավորում, իսկ քանի որ ախտյանի դեմ պայքարում կորցրել էր մի աչքը, դարձել է նաև անձնագոհության խորհրդանիշ:

Եգիպտացիները հավատացել են, որ մայրամուտն ու արևածագը նշանակում են Ռա աստծո մահն ու հարությունը: Այդ առասպելներից նրանք վստահություն են քաղել, որ իրենց նույնպես հարություն է սպասում ու հետմահու երջանիկ կյանք անդրշիրիմյան աշխարհում:

Համաձայն նրանց հավատալիքների, մարդը կազմված է եղել երկք տարրից՝ ֆիզիկական մարմնից, «կա» մասից և «բա» մասից:

«Կա»-ն եղել է մարդու նմանակն ու նրա սրահապան հրեշտակը: Նրան պատկերել են թագը գլխին մորուքավոր մարդու կերպարանքով: Նա եղել է նաև մարդու ուղեկցորդը անդրշիրիմյան աշխարհում, նրան պարեն մատակարարողն ու Ռա աստծո մոտ տանողը:

Մարդու բուն հոգին եղել է «բա»-ն, որը պատկերացվել է մարդու գլխով թռչնի և նրա առջև վառվող ձեթի լամպի տեսքով:

Հոգու համար անդրշիրիմյան կյանք կարելի էր ապահովել միայն երկու վճռական պայմանի դեպքում: Մեռածի մարմինը պետք էր զմրուսման միջոցով պահպանել նեխումից ու զերծ պահել կողոպուտից: Բացի այդ, հարկ էր նրան ապահովել պարենով և տնային գործածության բոլոր առարկաներով՝ նրա հետմահու պահանջմունքները բավարարելու համար: Այդ պատճառով փարավոնները կառուցել են բուրգեր՝ լի խճճված սրահներով, փակուղիներով ու ծուղակներով, որոնք պետք է թալանչիների առջև փակեին դեպի մումիան և դամբարանի գանձերը տանող ճանապարհը:

Փարավոնները, իբրև աստվածային էակներ, մահվանից հետո օգտվել են այն նույն արտոնություններից, ինչ որ իրենց կենդանության օրոք: Քանի որ բոլորը հավատացել են, թե արևի աստված Ռան ամեն օր ոսկե մակույկով ճամփորդում է երկնքում, փարավոնի հոգին սկզբում դարձել է նրա թիավարը, իսկ հետո՝ նույնիսկ ղեկորդը: Ինչքան թագավորները ավելի ու ավելի են հզորացել, այնքան նրանց հետմահու նկրտումներն ավելացել են: Նրանք դարձել են աստծո անձնական քարտուղարներ, իսկ հետո էլ իրենք են բազմել արև-աստծո գահին: Այդ հավատալիքների կապակցությամբ դամբարանների մեջ դրվել են թիեր, իսկ երբեմն էլ ամբողջական մակույկներ, որ հնագետները «արեգակնային նավակներ» են անվանում: 1955 թվականին Քեոփսի բուրգի ստորոտում, քարաշեն թաքստոցում գտնվեց հիանալի պահպանված մի մակույկ թիերով ու նստատեղերին փռած փսիաթներով:

Քուրդերն ու մեծատոհմիկների դամբարանները եղել են արտացոլութունը դասակարգային այն տարբերությունների, որոնք արդեն հնաավոր ժամանակներում սկզբնավորվել են եգիպտական հասարակության մեջ: Աճյունների զմուռումն ու դամբարանների կառուցումը չափազանց թանկ էր, որպեսզի հասարակ մահկանացուները կարողանային այդ բանը թույլ առ իրենց: Գյուղացիները, արհեստավորներն ու աստիճանավորները իրենց ննչեցյալներին թաղել են անապատի ավազուտներում: Եվ, հանգամանքների տարօրինակ զուգադիպությամբ, այն դեպքում, երբ հոյակերտ դամբարանները մեծ մասամբ դարձել են թալանչիների զոհը, հասարակ մարդկանց աճյունները խույս են տվել այդ ճակատագրից և, բացի այդ, պահպանվել են հիանալի վիճակում, մումիացել անապատի ավազների բացարձակ չորության շնորհիվ:

Մեռյալների երկրում ծանր է եղել եգիպտացու հոգու կյանքը: Նախքան երանության երկիր ընկնելը, որտեղ «գետի հորդացում չկա, հատիկն առատ բերք է տալիս, իսկ հոգին լողում է առատության մեջ», նա պետք է բազմաթիվ վտանգներ հաղթահարեր: Ավետյաց երկիրը շրջապատված է եղել խորունկ ջրերով, իսկ մուտքը հսկել է մի հրեշ, որը կոչվել է «շուռ տված երես» և ներս է թողել միայն նրանց, ովքեր երկրի վրա բարեպաշտ կյանք են վարել: Դեերի, հուշկապարիկների ու ամենատարբեր ուրվականների պարսերը դարանել են թափառող հոգիներին, որպեսզի կախարդությամբ նրանց ուժասպառ անեն ու կործանեն:

Մարդիկ կարող էին մեռածներին օգնել «Մեռյալների գրքում» ժողոված հմայական խոսքերով: Մարդկանց այդ օգնությունը իրենց համար հավիտյանս հավիտենից ապահովելու նպատակով փարավոնները ծախսեր չեն խնայել: Ուստի, ինչպես արդեն ասել ենք, նրանք իրենց դամբարաններին կից տաճարներ են կառուցել և դրանց համար քրմեր առանձնացրել, նրանց հատկացնելով թագավորական կալվածքներից ստացվող եկամուտների մի մասը: Այդ քրմերն ամեն օր կարդացել են ծիսական բարդ աղոթքներ, որոնք մեռյալներին նույնքան անհրաժեշտ են եղել, ինչքան ողջերին հացն ու ջուրը:

Փարավոններն իմացել են մարդկային բնավորության թերությունները և հաշվի են առել այն բանի հնարավորությունը, որ քրմերը պարտազանց կլինեն և դրանով իսկ իրենց՝ թագավորների հոգիները կենթարկեն կործանման վտանգի: Ուստի նրանք հրամայել են դամբարանների պատերին գրել ծիսակարգով պահանջված բոլոր աղոթքներն ու մոգական խոսքերը, իսկ դրանից զատ սարկոֆագի մեջ դնել «Մեռյալների գրքի» փաթեթը: Եղիպտացիները հավատացել են գրված բառի մոգական ուժին և համարել, որ հիերոգլիֆներն իրենց ինքնուրույն կյանքն ունեն: Գերեզմանախցի պատին գրված ծիսական տեքստը, նրանց կարծիքով, նույնպիսի ուժ է ունեցել, ինչպես որ մարդկանց կողմից բարձրաձայն ընթերցվածը:

Քրմերի նկատմամբ փարավոնների տածած անվստահության մասին է վկայում Պետրիի պատահականորեն արած հայտնագործությունը: 1889 թվականին նա որոշեց հետազոտել այն ժամանակ տակավին անանուն, քանզի հայտնի չէր, թե որ փարավոնն է այնտեղ թաղված եղել, մի բուրգի պարունակությունը: Չնայած մանրազնին որոնումներին, նա ոչ մի կերպ չէր կարողանում գտնել գաղտնի մուտքը, թեև գիտեր, որ մուտքը սովորաբար գտնվում է հյուսիսային պատի մեջ:

Համբերությունը կորցնելով, Պետրին վճռեց քարե այդ սմբողջ զանգվածի միջով մի թեք թունել բացել ընդհուպ մինչև թաղման խուցը: Դա տանջալից ու տևական աշխատանք էր: Միայն մի քանի շաբաթ անց արաբ բանվորները նրան իմաց տվեցին, որ ճեղքել են թաղման խցից իրենց բաժանող քարի վերջին շերտը:

Պետրին փորսող մտավ խուց և այնտեղ գտավ մի կողմ նետված ու ջարդված կափարիչներով երկու թալանված սարկոֆագ: Նա անմիջապես շկարողացավ որոշել, թե ում է պատկանել բուրգը, որովհետև ստորգետնյա ջրերն անհայտ պատճառներով սկսել էին ողողել տասնյակ գարեբ շոր մնացած թաղման խուցը: Պետրին ջուրը գոգաթիով լցնում էր դուլլի մեջ, փոխանցում արաբներին, նրանք էլ ջուրը դուրս էին թափում: Մեծ դժվարությամբ խուցը ցամաքեցնելով, Պետրին սկսեց զննել այն: Անկյունում գտավ մի ալեբաստրե սկահակ, որի վրայի մակագրությունից հետևում էր, որ բուրգը Ամենեմհետ III փարավոնն է կառուցել իր և իր կնոջ համար:

Պետրիին չափազանց հետաքրքրեց այն հարցը, թե կողոպտիչներն ինչպես են մտել դամբարան, իրենցից հետո չնչին հետք իսկ չթողնելով: Որտե՞ղ է գտնվում բուրգի մուտքը, որ ապարդյուն որոնում է ինքը: Մի՞թե կողոպտիչներն այնքան լավ են իմացել շինության հատակագիծը, որ պարզապես մուտքը բացել ու ներս են մտել:

Զգտելով պարզել գաղտնիքը, Պետրին որոշեց հետազոտել միջանցքների ողջ բավիղը, թաղման խցից առաջանալով դեպի կորած մուտքը: Դա անասելի դժվար, իսկ երբեմն էլ կյանքի համար վտանգավոր գործ էր: Միջանցքները բռնված էին խճաքարի շեղջերով, ինչպես նաև ավազակույտերով, որոնք ողողված լինելով ստորգետնյա ջրերով, վերածվել էին կաշուն ցեխի: Պետրին ստիպված էր տեղ-տեղ սողալ փորի վրա, շնչահեղձ լինելով նեխահոտ օդում: Վերջապես, ցեխակոլոլ ու միանգամայն ուժասպառ եղած, նա հասավ մուտքին: Հակառակ բոլոր կանոններին, այն գտնվում էր բուրգի հարավային պատի մեջ: Դա զարմացրեց Պետրիին: Կողոպտիչներն ինչպե՞ս են իմացել, որ մուտքը պետք է փրնտրել բուրգի ոչ թե հյուսիսային, այլ հարավային պատի մեջ: Հետզհետե նրա մեջ կասկածներ ծագեցին: Եթե դրանք արդարանային, մեծ սենսացիա կլիներ:

Նա վերադառնում էր այն ճանապարհով, որով անսխալ անցել էին կողոպտիչները, ընդամին աշխատում էր իրեն դնել նրանց տեղը և մտորում էր, թե ինքն ինչպես կվարվեր նրանց փոխարեն: Նա դեմ էր առնում տարբեր ծուղակների և խոշընդոտների, որոնք պիտի դժվարացնեին անկոչ այցելուների ներթափանցումը գերեզմանախույց: Բազմիցս նա պետք է խոստովաներ, որ կմոլորվեր այդ բավիղում, եթե դրանից առաջ չիմանար հակադիր ծայրից սկիզբ առնող ճանապարհը:

Բայց կողոպտիչները, ինչպես վկայում էին մի կողմ նետված քարաբեկորները, առաջ են շարժվել ապշեցուցիչ վստահությամբ: Երբ սանդուղքը հանկարծ ընդհատվել է հլք շունեցող որևէ խցում, նրանք իմացել են, որ հետագա ուղին պետք է փնտրել առաստաղում, որտեղ քարե սալով քողարկված անցք է եղել: Այդպես նրանք հեշտորեն անցել են հլք շունեցող երեք խույց: Միջանցքներից մեկում մինչև առաստաղը հասնող քարակույտերը փակել են ճանապարհը: Արգելքը վերացնելը շատ ժամանակ և ուժ է պահանջել: Պետրին հաշվեց, որ առնվազն հինգ ամիս է պահանջվել, որպեսզի կողոպտիչները հասնեին թագավորական աճյունախույց և դուրս տանեին դրա գանձերը:

Միանգամայն ակնհայտ դարձավ, որ այդ անհնար էր անել առանց քրմերի և գերեզմանոցի պահակապետի կասկածը հարուցելու: Իսկ եթե, չնայած դրան, կողոպտիչները հինգ ամիս հանգիստ տեր ու տնօրինություն են արել դամբարանում, կնշանակի նրանք մեռնակ չեն եղել, այլ պատկանել են մի մեծ գողախմբի, որտեղ հանցագործության ոգեշնչողները եղել են քրմերն ու գերեզմանոցի զլխավոր պահակը:

Փարավոնների հետմահու հոգսերը

Մի անգամ, 1881 թվականին, գերմանացի մի եգիպտագետի աշխատասենյակում հարուստ ամերիկացի հայտնվեց: Նստելով աթոռին, նա պայուսակից պապիրուսի փաթեթ հանեց ու ասաց.

— Ծս իմացա, որ դուք կարող եք կարդալ եգիպտական պապիրուսները և ուզում եմ խնդրել ձեզ գնահատելու այս վավերագիրը: Սա որևէ արժեք ունի՞ արդյոք: Ծս սրա համար բավական զգալի գումար եմ վճարել...

Պրոֆեսորն ուշիուշով զննեց պապիրուսը և խորասուզվեց ընթերցանության մեջ: Կարդալուն զուգընթաց նրա դեմքին ավելի ու ավելի մեծ զարմանք էր երևում: Դժվարությամբ զսպելով հուզմունքը, նա հարցրեց.

— Դուք սա որտե՞ղ եք ձեռք բերել:

— Իսկ ինչո՞ւ եք հարցնում: Մի՞թե դա բացառիկ արժեքավոր բան է:

— Սա տեքստն է մի փարավոնի, որի Արքաների հովտում գտնվող

դամբարանն անհիշելի ժամանակներից դատարկ է: Այսպիսի փաթեթներ դրվել են փարավոնների դագաղների մեջ, և եթե այս պապիրուսը կա, կարելի է եզրակացնել, որ այդ փարավոնի մումիան չի ոչնչացել, այն թաքցնում են այլ վայրում: Դուք հասկանո՞ւմ եք, թե գիտության համար ինչքան կարևոր է պարզել, թե որտեղ է գտնվել այս պապիրուսը:

— Չեմ թաքցնի,— ժպտալով պատասխանեց ամերիկացին:— Ես մեկնել էի Կահիրե, մտադրվելով հավաքածուիս համար եգիպտական մի քանի հնություններ ձեռք բերել: Իմանալով, որ դա անօրինական գործ է, արաբ առևտրականների հետ հանդիպում էի միայն գիշերները: Մի անգամ վիթխարի հասակով մի արաբ ինձ հրավիրեց իր խանութի հետնասենյակ և առաջարկեց այս պապիրուսը, բավական մեծ գումար պահանջելով: Սակարկելով, գնեցի այն և անհապաղ մեկնեցի Եգիպտոսից, որ չբռնեն ու խլեն ավարս:

Գերմանացի եգիպտագետն այդ մասին նամակ գրեց Կահիրե: Եգիպտական թանգարանի դիրեկտոր Գաստոն Մասպերոն ցասումով լցվեց, կարդալով արժեքավոր պապիրուսը գողանալու մասին հաղորդումը: Վերջին տարիներին արտասահման էին տարվել մի քանի արժեքավոր վավերագրեր ու եգիպտական արվեստի ստեղծագործություններ, իսկ հետաքննությունը ոչ մի արդյունք չէր տվել, բացի մի բանից՝ հայտնի էր, որ դրանց առևտրով զբաղվում է վիթխարի հասակով մի անհայտ արաբ:

Ոստիկանությունը, ինչպես որ նախկինում, միանգամայն անզոր գտնվեց, և դիրեկտորը որոշեց այդ գործը վերցնել իր ձեռքը: Չալմայով հսկային գտնելու խնդիրը նա հանձնարարեց երիտասարդ ասիստենտ էմիլ Բրուզզին, որը ձեռքերն էր շփում իրար, ուրախանալով իրեն վիճակված սիրող խուզարկուի դերի համար:

էմիլ Բրուզզը մեկնեց Լուքսոր և հաստատվեց հյուրանոցում, իրեն գնելով հնության հուշարձաններ փնտրող ամերիկացու տեղ: Գիշեր ու ցերեկ նա թափառում էր քաղաքի ծակուծուկերում, ժամանակ առ ժամանակ մեծ գումարով ձեռք բերելով տարբեր առարկաներ:

Արաբները սկզբում փորձում էին նրան վաճառել կեղծած էթաևագին բաներ, բայց երբ տեսան, որ երիտասարդ օտարերկրացին մի հայացքից ճանաչում է կեղծարքը և ձեռքի արհամարհական շարժումով դրանք մի կողմ վանում, հարգանքով լցվեցին նրա նկատմամբ, համոզվելով, որ գործ ունեն ոչ միամիտ զբոսաշրջիկի հետ:

Մի օր շուկայում ասիստենտն անցնում էր անհամար խանութների կողքով: Դրանցից մեկի շեմքին նստած ճերմակամորուք արաբը գլխով նշան արեց նրան և, տանելով խանութի հեռավոր անկյունը, մի քարակերտ արձանիկ առաջարկեց: Արձանիկը տեսնելով, Բրուզզը դժվարությամբ զսպեց զարմանքը. ոճից նա իսկույն հասկացավ, որ այն առնվազն երեք հազար տարեկան է: Սակարկելով, նա շինծու քամահրանքով ար-

ձանիկը շուռումուռ տվեց ձեռքում և փորագրված հիերոգլիֆային արձանագրությունից հասկացավ, որ այն հանված է քսանմեկերորդ դինաստիայի փարավոններից մեկի դամբարանից: Արքաների հովտում գտնվող նրա դամբարանը վաղուց դատարկ էր: Հապա որտեղի՞ց էր լույս ընկել այդ արձանիկը: Հետաքրքրություն գրգռող այդ հանելուկի լուծումը գիտությունն անգնահատելի օգուտ կբերեր: Անտարբեր ձևանալով, կեղծ ամերիկացին գնեց արձանիկն ու արաբին հասկացրեց, որ եգիպտական արվեստի այլ առարկաներ էլ է փնտրում:

Այդ գրույցից մի քանի ժամ անց էլ Հուրնա գյուղից հյուրանոց եկավ մի արաբ, որի անունը Աբդ-ալ-Ռասուլ էր, և Բրուզզին առաջարկեց նույն դինաստիայի ժամանակներից վերաբերող տարբեր առարկաներ: Երիտասարդ գիտնականը հմայվածի պես աչքերը հառեց եկվորին՝ վիթխարի հասակով մորուքավոր մարդուն: Ոչ մի կասկած չկար, որ նա երես առ երես հանդիպել է անորսալի առևտրականին, որը ստվերի նման խույս էր տվել իր դեմ սարված բոլոր ծուղակներից, արդեն շատ տարիներ թունավորելով ոստիկանների ու հնագետների կյանքը: Արաբն անհապաղ ձերբակալվեց:

Եգիպտական իշխանությունների կողմից կատարվող քննությունն անվերջ ձգձգվում էր: Խեղճ արաբն ամեն ինչ ժխտում էր, թեև այն ժամանակվա եգիպտական ոստիկանության մեթոդներին համապատասխան, ճիպոտահարել էին նրա ներբանները: Իբրև վկա կանչված նրա ազգականներն ու մի քանի համագյուղացիներ երդվում էին ալլահով, որ Աբդ-ալ-Ռասուլը պատվական մարդ է և երբեք իրեն չի արատավորել հնությունների արգելված առևտրով: Գործը կանգնեց մեռյալ կետում և ձերբակալվածին կամա-ակամա ստիպված էին ազատ արձակել:

Բայց մի քանի օր անց, օ՛, հրաշք, մեղավորը վերադարձավ ու խոստովանեց, թե ինքը հենց այն որոնվող առևտրականն է, որ կա:

Ի՞նչն էր նրան ստիպել այդ անելու:

Աբդ-ալ-Ռասուլը անդամն էր մի գողախմբի, որին պատկանելիս են եղել նրա եղբայրներն ու մի քանի համագյուղացիներ ևս: Ըստ պայմանի նա ստացել է անօրինական առևտրից գոյացած բոլոր շահույթների մեկ հինգերորդ մասը: Բանտից վերադառնալով, նա պահանջել է իրեն տալ շահույթների կեսը՝ որպես պարգև այն քանի, որ, չնայած կտտանքներին, իրեն պահել է տոկոսներեն և ոչ մեկին չի մատնել: Վեճ է ծագել և նույնիսկ՝ կոիվ: Մերժումը նրան այն աստիճան էր բարկացրել, որ նա վազել էր ոստիկանություն և ամեն ինչ խոստովանել, միայն թե վրեժ լուծեր իր գործակիցներից:

Գիբեկտոր Մասպերոն այն ժամանակ գտնվում էր Փարիզում, այդ պատճառով հրավիրվեց նրա ասիստենտը, որին գլխավորապես հետաքրքրում էր այն աղբյուրը, որտեղից հնությունները թափանցում էին

շուկա: Եվ այդժամ Աբդ-ալ-Ռասուլը պատմեց պատահաբար արված հայտնագործության աներևակայելի պատմությունը:

Մի անգամ իր եղբոր՝ Մահմեդի և իրենց գյուղից մե ծանոթի հետ նա գնացել է մի փոքրիկ հովիտ, որը գտնվում է Արքաների հովտից ոչ հեռու և վերջինից բաժանված է թեբեյան բլրաշղթայով: Քարաբեկորների մեջ այնպիսի իրեր փնտրելով, որոնք կարելի էր վաճառել, նրանք անսպասելի դեմ են առել ժայռի մեջ ուղղաձիգ փորված մի բաց հորանի: Աբդ-ալ-Ռասուլը պարանով իջել է հորանի մեջ, բայց հանկարծ պահանջել է, որ իրեն անմիջապես վեր բարձրացնեն, ու ահաբեկված սկսել է բղավել:

— Աֆրի՛տը: Այնտեղ ներքևում նստած է Աֆրի՛տը:

Աֆրիտ արաբերեն շար ոգի է նշանակում, ուստի երեքն էլ սկսել են փախչել: Երեկոյան Աբդ-ալ-Ռասուլը եղբորը խոստովանել է, որ Աֆրիտի հետ կապված պատմությունը հնարել է իրենց ուղեկցին վախեցնելու և հորանում եղածը նրանից թաքցնելու համար: Հետևյալ օրը երկու եղբայրները վերադարձել են ու իջել հորանի մեջ: Դեպի ժայռի խորքը մի միջանցք է ձգվել, որը վերջում վերածվել է ստորգետնյա սրահի, ուր շահերի ընդհատուն լույսով նրանք տեսել են մի ցնցող պատկեր՝ մի շարքի վրա դրված փայտե դագաղներ: Կափարիչները բարձրացնելով, համոզվել են, որ դագաղներում լավ պահպանված մումիաներ կան: Մումիաների գլուխներին եղած օձանշաններից նույնիսկ այդ տգետ ֆելլահներն են հասկացել, որ իրենց առջև փարավոնների աճյուններ են:

Նրանք գիտեին, որ պարտավոր են հայտնագործության մասին հայտնել հնությունների դեպարտամենտին, բայց գերադասել են լռել՝ գտնված գանձից որքան կարելի է շատ օգուտ քաղելու համար: Ամբողջ գանձը միանգամից դուրս հանելու մասին նույնիսկ խոսք լինել չէր կարող: շուկայում այդպիսի քանակությամբ նոր գտածոների հայտնվելը անմիջապես կասկած կառաջացներ իշխանությունների մեջ: Ուստի նրանք պայմանավորվել են դաշինք կազմել ընտանիքի մնացած անդամների և էյի մի քանի ծանոթների հետ, որպեսզի դամբարանը շահագործեն աստիճանաբար: Այդպիսով, նրանք իրենց համար եկամուտ կապահովեին ամբողջ կյանքում...

Թանգարանի ասիստենտ էմիլ Բրուզն անհապաղ գնաց նշված հովիտը և իջավ հորանի հատակը:

Զգիտեի,— գրում է նա իր հուշերում,— դա երազում էր, թե արթմնի: Նայելով դագաղներից մեկին, ես կափարիչի վրա կարդացի Աեթի I թագավորի՝ Ռամզես II-ի հոր անունը: Մի ֆանի ֆայլ այն կողմ համեստ դագաղում, ձեռքերը կրծքին խաչած պառկած էր Ռամզես II-ը: Ինչքան շատ էի առաջանում դեպի սրահի խորք, այնքան շատ գանձեր էի գտնում: Այստեղ Ամենհոտեպ I-ն է, այն-

տեղ՝ Յահմոս I-ը, Թուրմոս անունով երեք փարավոններ, թագունի Ամես Նեֆերտարին, ընդամենը երեսունյոթ դագաղ՝ թագավորների, թագունիների, արքայազների ու արքայազուսուրերի լավ պահպանված մումիաներով:

Որոշ դագաղներ դեռ փակ էին, մյուսները՝ բաց ու թալանված: Դագաղների արանքում թափթփված էին տեսակ-տեսակ բազմաթիվ առարկաներ՝ սկահակներ, զարդատուփեր ու թանկարժեք իրեր, որ մեռյալների մոտ էին թողել անդրշիրիմյան թափառումների համար:

Որոշ գանգերի վրա դեռ մաշկ ու մազեր կային, այս ու այնտեղ բաց բերաններում երևում էին լավ պահպանված ծնոտներ: Հատկապես մեծ տպավորություն էր թողնում կյանքի իննսուներորդ տարում մեռած Ռամզես II փարավոնը:

Սեքենհերա փարավոնի գանգի վրա ասիացիների ասպատակության ժամանակ ստացած մահացու հարվածից մնացած մի խոր անցք կար:

Որոշ մումիաներ այնքան լավ էին պահպանված, որ նույնիսկ կարելի էր տեսնել մեռյալների արյունակից աղզակցությունը: Այսպես, օրինակ, դիմագծերից կարելի էր իմանալ, որ Ռամզես II-ը Սեթի I-ի որդին է:

Մումիաներն ինչպե՞ս էին հայտնվել այդտեղ, կոլեկտիվ դամբարանում, այն ժամանակ, երբ փարավոնների սկզբնական դամբարանները Արքաների հովտում լքված էին: Հանելուկը լուծեցին դագաղների վրա հապճեպ խզբզած մակազրությունները: Աճյունները տեղափոխելիս խառնաշփոթությունից խուսափելու համար եզիպտացի քրմերը դագաղների վրա գրել էին դրանցում եղած ննջեցյալների անունները, ինչպես նաև նբանց գտնվելու հերթական վայրի անունը՝ նախքան ստորգետնյա կոլեկտիվ դամբարանում նրանց վերջնականապես ամփոփելը: Փարավոններից ոմանք, ինչպես երևում է մակազրություններից, մեռնելուց հետո հանգիստ չեն ունեցել: Այսպես, օրինակ, Ռամզես III-ին երիցս մի դամբարանից մյուսն են տեղափոխել:

Խորհրդածելով այդ տարօրինակ տեղափոխությունների պատճառների մասին, հնագետները փորձում էին մտովի պատկերացնել իրադարձությունների ամբողջ ընթացքը: Բազմաթիվ վավերագրերից անհերքելիորեն հետևում է, որ Արքաների հովտում դամբարանների կողոպուտն իսկական աղետ է եղել: Կողոպտիչները չեն խնայել անգամ մումիաները, դրանք դուրս են նետել դագաղներից, կտրել կալանդները՝ թանկարժեք իրերը և համայիլները հանելու համար: Նախապահպանական բոլոր միջոցներն ապարդյուն էին, քանի որ դամբարանների կողոպուտանը խառն են եղել պահակներն ու քրմերը, որոնց հանձնարարվել էր մեռյալների պահպանությունը:

Փարավոններից մեկը, վերջապես, կորցրել է համբերությունը: Ցան-

կանալով վերջ տալ գերեզմանների պղծմանը, նա հրամայել է մոտակա հովտում ընդհանուր դամբարան փորել ու այնտեղ փոխադրել իր նախորդների անվնաս մնացած բոլոր մումիաները: Քանի որ միայն մի անցք է տարել դեպի ստորգետնյա դամբարան, այն պահպանելու հնարավորությունը զգալիորեն մեծ է եղել, քան Արքաների հովտի բազմաթիվ դամբարանները:

Մի օր քրմերը խիստ գաղտնի մումիաները փոխադրել են նոր դագաղների մեջ և տեղափոխել թաղման նոր վայրը: Այդ սարսափազդու թափորն անցել է լեռնային ոլորապտույտ նեղ կածանով, որը պահպանվել է մինչև հիմա: Հանգամանքների բարեբաստիկ զուգադիպությամբ նոր դամբարանը մի տեսակ մոռացություն է մատնվել և հակառակ պատմական բոլոր փոթորիկներին, փրկվել, հասել է մեր ժամանակները, մինչև որ հայտնաբերվել է արաբ Աբդ-ալ-Ռասուլի կողմից:

Որոշվեց մումիաները տեղափոխել Կահիրեի Եգիպտական թանգարան և զետեղել առանձին սրահում, ուր կարելի էր մտնել միայն հատուկ թույլտվությամբ: Մումիաները բարձեցին լաստանավերին և տարան Նեղոսն ի վար:

Թագավորական նոր հուղարկավորության լուրը կայծակնային արագությամբ տարածվեց Եգիպտոսով մեկ: Հենց որ լաստանավերի տորմիզը մոտենում էր ափամերձ որևէ գյուղի, բոլոր բնակիչները դուրս էին թափվում ու կանգնում այնպես, ասես հրաժեշտ էին տալիս իրենց հարազատներից մեկնումեկին: Թաղման Եգիպտական սովորույթների համաձայն, տղամարդիկ հրացաններից օդ էին կրակում, իսկ կանայք աղիողորմ կոծ էին անում և իրենց մազերը փետում:

Ստորգետնյա սրահում շատան Մերնեպտ փարավոնի մումիան: Դա ուրախացրեց նրանց, ովքեր Աստվածաշունչը պատմական արժանահավատ աղբյուր էին համարում: Մերնեպտն այն փարավոնն է, որն ընկել էր Եգիպտոսից փախած հրեաների հետևից և խեղդվել Կարմիր ծովում: Դամբարանում նրա մումիայի բացակայությունը կարծես թե հաստատում էր աստվածաշնչական այդ ավանդազրույցը:

Սակայն տասներկու տարի անց մի նոր մեծ հայտնագործություն արվեց: Արքաների հովտում գտնվեց Ամենհոտեպ II-ի դամբարանը՝ տասներեք այլ մումիաներով: Դրանց մեջ էր նաև աստվածաշնչական Մերնեպտի մումիան: Դրանից հետևում էր, որ նա չի խեղդվել ծովում, այլ մեռել է բնական մահով: Ճիշտ է, ենթադրություն կար, որ նրա աճյունը ծովի ալիքները ափ են նետել և միայն դրանից հետո է այն զմրուսվել: Սակայն անատոմիական հետազոտությունները չհայտնաբերեցին մարմնի քայքայման այնպիսի հետքեր, որոնք պետք է որ առաջանային ծովաջրի ներգործությունից:

Բուրգեր կառուցելու ավանդույթը խախտած առաջին փարավոնը Թութմոս I-ն է (մ. թ. ա. 1538—1525 թվականներ): Այդ բանին նրան

դրոգեւ են ամենեւին էլ ոչ թե իր հպատակներն զիճակը թեթևացնելու ցանկությունը կամ «արևորդի» տիտղոսից հրաժարվելը, այլ զուտ գործնական նկատառումներ՝ այն ակնհայտ փաստը, որ բուրգերը ոչ մի մուսիա չեն կարողացել գերծ պահել պղծումից:

Հնագետները գտնում էին այդ սիստեմատիկ թալանի բազմաթիվ ապացույցներ: Մտնելով Ջոսեր փարավոնի կնոջ դամբարանը, գողերը կտրտել են մումիան՝ զարդերը հանելու համար: Սակայն ինչ-որ մեկը, երևի, վախեցրել է նրանց. դամբարանից հապշտապ վազելով, նրանք վայր են գցել թագուհու պոկված ձեռքը: 1909 թվականին այն գտան վուշե գործվածքի մեջ փաթաթված և մեղեսիկե ու փիրուզյա ապարանջաններով զարդարված: Քեոփսի և Քեփրենի բուրգերում գտնվեցին միայն դատարկ, ջարդուփշուր արված սարկոֆագներ: Միքերինի բուրգում ընդհանրապես սարկոֆագ չկար. գերեզմանախցի հատակին ընկած էին մումիայի և փայտե դագաղի մնացորդները միայն:

Թուֆմոս I-ը ցանկացել է խուլյս տալ նման ճակատագրից, ուստի իր դամբարանի համար ընտրել է մի ամաչի տեղ, որը կարելի էր հեշտ հսկել: Դա մեզ արդեն հայտնի Արքաների հովիտն էր, ուր այն ժամանակվանից հինգ հարյուր տարի ի վեր նրա բոլոր հաջորդները հրամայել են թաղել իրենց:

Գաղտնի դամբարանի կառուցումը Թուֆմոս I-ը հանձնարարել է իր ճարտարապետ Ինենիին: Շինարարն այդ մասին հայտնում է սեփական դամբարանի պատին գրված հետևյալ խոսքերով.

Միտյն ես եմ հսկել նորին քաղալորտկան մեծություն համար նախատեսված ժոյռակերտ դամբարանի շինարարությունը: Ոչ ոք տյն չի տեսել, ոչ ոք չի լսել դրա մտսին:

Նրա պնդումն, անշուշտ, չպետք է հասկանալ տառացիորեն, քանզի շինարարությունում առնվազն հարյուր մարդ է զբաղված եղել: Ի՞նչ է պատահել նրանց: Ահա թե այդ մասին ինչ է ասում Արքաների հովտի լավագույն գիտականներից մեկը՝ անգլիացի հնագետ Հովարդ Քարտերը.

Միանգամայն ակնհայտ է, սր փարավոնի մեծագույն զաղանիֆին իրողեկ դարձած հարյուր կամ տվելի բանվորները այլևս չէին կարող հրապարակել տյն: Պետք է կտրծել, որ Ինենին նրանց լռեցնելու միջոց է գտել: Բացտոված չէ տյն հավանականությունը, որ աշխատանքներին մասնակցել են ուղմագերիները: Այն տվարտելուց հետո նրանց բոլորին կոտորել են:

Մենք արդեն գիտենք, որ նախազգուշական բոլոր միջոցներն ու մարդկային զոհերն ապարդյուն են անցել: Արքաների հովտում գողերն այնքան են լկտիացել, որ հարկ է եղել մումիաները փրկել նրանցից, դրանք ուրիշ, ավելի պաշտպանված տեղ փոխադրելով:

Այն մասին, թե ինչպես է կատարվել դամբարանների կողոպուտը, պատմում է Ռամզես IX-ի (XX դինաստիա) գահակալության ժամանակների պապիրուսների մեջ գտնված մի դատավարական արձանագրություն: Ահավասիկ, թե բանն ինչպես է եղել:

Արևելյան Թեբեի Պեզեր անունով կառավարիչն իր լրտեսներից իմացել է Նեղոսի արևմտյան ափին, ուր կառավարիչ է եղել Պեբրոն, գտնվող Արքաների հովտում կատարվող սիստեմատիկ թալանի մասին: Երկու աստիճանավորները մրցել են միմյանց հետ, աշխատելով նվաճել Թեբեի ամբողջ մարզի կուսակալ Համուասի բարեհաճությունը և առիթը բաց չեն թողել մեկը մյուսին վնաս տալու համար:

Պեզերը զեկուցագիր է գրել, որով Պեբրոյին մեղադրել է գերեզմանների կողոպուտին գաղտնի մասնակցելու մեջ և հայտնել է թալանված դամբարանների ստույգ թիվը: Նրա պնդմամբ, պղծված են եղել թագավորական տասը, քրմական չորս և մասնավոր անձանց բազմաթիվ գերեզմաններ:

Համուասը պարտավոր էր բողոքին ընթացք տալ, և նա, հետաքննություն կատարելու համար, մի հանձնաժողով է ուղարկում Նեղոսի մյուս ափը: Բացառված չէ, որ հանձնաժողովի անդամները, իսկ գուցե և կուսակալն ինքը խառն են եղել այդ խարդախ գործին կամ էլ վերջին պահին կաշառվել են մեղավորների կողմից: Ուստի հանձնաժողովը զեկուցագիր է ներկայացրել, որով միանգամայն ծիծաղելի ու սակավանշանակ հետեւությունների հիման վրա հերքել է Պեզերի մատնությունը:

Հանձնաժողովը հայտարարել է, թե Պեզերի այն պնդումը, որ թալանվել են թագավորների տասը և քրմուհիների չորս գերեզմաններ, միանգամայն անհիմն է, քանզի թալանված է թագավորական ընդամենը մեկ և քրմական երկու գերեզման: Հանձնաժողովը խոստովանել է, որ թալանված են որոշ քանակությամբ մասնավոր գերեզմաններ, սակայն դա հիմք չէ Պեբրոյին մեղադրելու համար:

Կասկածներից ազատված Պեբրոն որոշել է խայտառակել ախոյանին: Նա ժողովել է իր բոլոր ենթականերին՝ տեսուչներին, վարչարարներին, բանվորներին ու Արքաների հովտի պահակներին, նրանց ուղարկել Նեղոսի այն ափը և Պեզերի տան առջև աղմկալի ցույց կազմակերպել:

Վրդովված Պեզերը դուրս է վազել փողոց և սպառնացել, թե կուսակալի գլխի վրայով կգանգատվի իրեն՝ թագավորին: Պեբրոն հենց դրան է սպասել. նա անմիջապես վազել է կուսակալի մոտ և հայտնել իր ախոյանի սպառնալիքի մասին: Համուասը Պեզերի արարքը համարել է կարգապահության աններելի խախտում, նրան դատի է տվել, և Պեզերը դատապարտվել է կեղծ վկայության համար, որ իբր տվել էր իր զեկուցագրով: Դատական արձանագրությունները, ցավոք, լուում են ապաբախտ կառավարչի հետագա ճակատագրի մասին, որը փորձել էր պայքարել գերեզմանների կողոպուտիչների հզոր խմբի դեմ:

Ութ տարի անց, սակայն, գործը միանգամայն անսպասելի ընթացք է ստացել: Ոստիկանությունը բռնել է գերեզմանների ութ կողոպտիչների, բրոնց մենք հիմա նույնիսկ անուններով գիտենք: Նրանք են որմնագիր Հապին, արհեստավոր Իրամունը, գյուղացի Ամենեմհերը, ջրկիր Համուասը, նկար ստրուկ էենուսիերը, Ամենանուսիերը, Հապիրեսը և Սեթնահտեն: Այն բանից հետո, երբ ճիպոտահարել են նրանց ձեռքերն ու ոտքերը, նրանք դատարանին այսպիսի ցուցմունք են տվել.

Մենք բացում էինք նրանց դագաղներն ու պոկում վարշամակները, բռնցում հանգչում էին նրանք... Մենք գտանք այդ թագավորի սրբազան մումիան... Նրա վզին կային բազմաթիվ համայիլներ ու ոսկե զարդեր, նրա գլուխը ծածկված էր ոսկե դիմակով. այդ թագավորի սրբազան մումիան ամբողջովին ծածկված էր ոսկով: Մումիայի վարշամակները ներսից ու դրսից ասեղնագործված էին ոսկով և արծաթով և պատված բանկարժեք ֆաբերով: Մենք պոկեցինք ամբողջ ոսկին, որ գտանք այդ աստծո սրբազան մումիայի վրա, և համայիլները, և զարդերը, և վարշամակները, որոնցում հանգչում էր նա: Մենք գտանք նաև թագավորի կնոջը, և նրա վրայից պոկեցինք այն ամենը, ինչ արժեքավոր էր: Վարշամակները, որոնցով նա փաթաթված էր, այրեցինք: Մենք գողացանք նրա մոտ եղած ամբողջ իրեղենը, դրանց մեջ կային ոսկե, արծաթե, բրոնզե անոթներ: Այդ երկու աստվածների մումիաների վրա եղած ոսկին, համայիլները, զարդերն ու վարշամակները մենք բաժանեցինք ուր մասի:

Դատարանը մեղադրյալներին դատապարտել է մահվան և դրանով իսկ լիովին արդարացրել Պեղերին: Սակայն դատական փաստաթղթերը լռում են հանցագործությունների գլխավոր ոգեշնչողների՝ բարձրաստիճան մեծատոհմիկ Համուասի և քաղաքային պաշտոնյա Պեկերոյի ճակատագրի մասին:

Խոռովարար փարավոնը և վրիժառու քրմերը

1907 թվականին ամերիկացի հնագետ Թեոդոր Դեխը Արքաների հովտում մի փակ դամբարան գտավ: Որմնաշարված մուտքից դեպի ժայռի խորքն էր տանում խճաքարով լցված մի շատ թեք միջանցք: Հրակայական, գրեթե մինչև առաստաղը հասնող քարաբեկորների կույտի վրա մայրու փայտից շինված բաց սարկոֆագ կար մի մակագրություն, որից հետևում էր, որ մի ժամանակ դրա մեջ հանգչել է թագուհի Թիան՝ Ամենհոտեպ III-ի կինը:

Վերաջնեւով խոչընդոտները, Դեիսը հասաւ թաղման խցին: Նրա առջև արտասովոր տեսարան բացվեց: Կոտրված ու փտած հենամասերով թաղման պատգարակին դրված էր մարդու մարմնաձևով պատրաստված մի դագաղ, որի ոսկե թերթերից, կիսաթանկարժեք քարերից ու գունավոր ապակուց շինված ճոխ դրվագագարդերը շողշողում էին լապտերիկի լույսից:

Բաց կափարիչի տակից երևում էր մումիայի փտած գանգը: Մեռյալի աճյունը ծածկված էր ոսկու բարակ թերթով, իսկ ճակատին փայլփլում էր թագավորական խորհրդանշանը՝ ոսկեկուռ օձը: Խցի անկյունում դրրված էին հանգուցյալի փորոտիքն ամփոփած ալեբաստրե շորս սկահակներ:

Դիտելով դագաղի վրայի մակագրութունները, Դեիսը մինչ այդ հնագետներին անհայտ մի հանելուկային երևույթ նկատեց: Մակագրութունների բոլոր այն մասերը, որտեղ պետք է ննջեցյալի անունը լիներ, սուր առարկայով քերված էին: Կալանդների մեջ առնված մումիան, ինչպես միշտ, փաթաթված էր ոսկե բարակ ժապավեններով, որոնց վրա արևի աստծուն ուղղված աղոթք էր փորագրված: Այդտեղ էլ ննջեցյալի անունը կտրված էր ասես մկրատով, միայն ձվածիր անցքեր էին մնացել: Այդ բոլորը միանգամայն որոշակի ցույց էր տալիս, որ ինչ-որ մեկը՝ մոլեգին համառությամբ ամեն ջանք գործադրել է, որպեսզի սերունդների հիշողութունից ջնջվեր մեռածի անունը:

Միայն խոշորացուցի օգնությամբ հաջողվեց պակաս ջանադրությամբ քերված մի տեղ կարգալ էհնաթոն փարավոնի անունը: Դեիսի մեջ, բնականաբար, հարցեր ծագեցին, որոնց պատասխանն անհրաժեշտ էր գտնել այդ արտասովոր դամբարանի գաղտնիքը պարզելու համար: Հիրավի, ո՞վ է պառկած եղել դագաղում՝ Թիա թագուհի՞ն՝ դամբարանի տիրուհին, թե՞ էհնաթոն փարավոնը: Եթե փարավոնը, այդ դեպքում ի՞նչ է պատահել թագուհու մումիային և ինչո՞ւ են նրա դագաղը դուրս նետել միջանցք: Եվ առհասարակ, ի՞նչ է թաքնված թագավորական աճյունների այդ հանելուկային տեղափոխութունների հետևում:

Ցանկանալով գտնել մասնակի պատասխան ստանալ, Դեիսը մումիան ուղարկեց Կահիրեի Եգիպտական թանգարան, որպեսզի այն հետազոտեր պրոֆեսսոր էլիոտ Սմիթը՝ այդ բնագավառի ամենախոշոր մասնագետներից մեկը:

Դեիսը ավելի շուտ հակվում էր այն մտքին, որ գործ ունի Թիա թագուհու աճյունի հետ, ենթադրելով, թե նրան թաղել են սկզբնապես իր որդուն՝ էհնաթոնին պատկանած դագաղում: Այդ դեպքում անվան քերվածքը կարելի էր ինչ-որ կերպ բացատրել: Ուստի նա զարմանքով կարդաց այն նամակը, որտեղ պրոֆեսսոր Սմիթը դրել էր. «Դուք վստահ եք, որ մումիան ինձ ուղարկել եք Թիա թագուհու դամբարանից: Ախր ծեր կնոջ աճյունի փոխարեն հետազոտության համար ես երիտասարդ տղա-

մարդու մուսիկա եմ ստացել: Հավանորեն ինչ-որ թյուրիմացություն է տեղի ունեցել»: Այնուհետև պրոֆեսորը հայտնել էր, որ մեռածը եղել է երեսուն տարեկան և որ արտասովոր երկար ծոծրակը ցույց է տալիս, որ նա հիվանդ է եղել ընկնավորությամբ:

Այսպիսով, այնուամենայնիվ, էհնաթոնի մուսիկան էր¹: Նա եզրիպտական գահին բազմած ամենահետաքրքիր, առավել աչքի ընկած փարավոններից մեկն է եղել: Շնորհիվ ներկայիս էլ Ամառնայի մոտերքում եղած նրա նստավայրում գտնված դիվանագիտական սեպագիր փաստաթղթերի, մենք նրա մասին ավելի շատ բան գիտենք, քան որևէ այլ փարավոնի: Նրա բուռն ռեֆորմները արմատապես փոխել են Եգիպտոսի դարավոր սովորույթներն ու շափազանց սուր և լայն թափի բախումներ առաջացրել:

Այն ժամանակ, երբ փարավոնները մեծ մասամբ պատմարանների աչքերի առջև անցնում են ինչպես դժգույն սովերններ, էհնաթոնն առանձնանում է իբրև միս ու արյունից կերտված մարդ, ուժեղ անհատականություն, որի մտքերը, զգացմունքները և ձգտումները մենք կարող ենք քննել հարաբերական ճշգրտությամբ:

Նրա գահակալության դրամատիզմը պարզորոշ պատկերացնելու համար անհրաժեշտ է գոնե թոուցիկ կերպով վերստեղծել այն ժամանակվա պատմական ֆոնը: Միայն Եգիպտական պետության երկարատև պատմության հեռանկարում են նրա արարքների քաղաքական ու հոգեբանական շարժառիթները նշանակություն ստանում:

Պատմաբաններն ընդունել են Եգիպտոսի պատմության թեև փոքր-ինչ սխեմատիկ, բայց դրա փոխարեն հետևյալ հարմար բաժանումը².

Հին թագավորություն (I—X դինաստիաներ, մ. թ. ա. 2900—2200 թվականներ):

Միջին թագավորություն (XI—XVII դինաստիաներ, մ. թ. ա. 2200—1600 թվականներ):

Նոր թագավորություն (XVIII—XX դինաստիաներ, մ. թ. ա. 1660—1100 թվականներ):

Ուշ ժամանակաշրջան (XXI դինաստիայից մինչև Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նվաճվելը, մ. թ. ա. 1100—400 թվականներ):

Եգիպտացիներն իրենց պատմությունը չեն թվագրել մի որևէ որոշակի ելակետից, ինչպես արել են, օրինակ, հռոմեացիները, որոնք իրենց պատմության հերթական իրադարձությունները հաշվել են Հռոմի հիմնադրումից: Եգիպտացիները տվել են միայն հերթական փարավոնների

¹ Այս հարցի վերաբերյալ մյուս տեսակետը տես՝ Ю Я Перепелкин, «Тайна золотого гроба», М., «Наука», 1968

² Եգիպտոսի ժամանակագրության վերաբերյալ առայժմ միասնական կարծիք չկա (Ման. ուս. խմբ.):

ցուցակները, նրանց գահակալության ժամանակը (մեծամասնությամբ ոչ ճիշտ), ինչպես նաև նրանց կյանքի հետ կապված անցքերը: Հաճախ պատմաբաններն անհավատալի դժվարությունների են հանդիպել, երբ հարկ է եղել որոշելու եզրպատական պատմության տարեթվերն ու ժամանակագրությունը:

Հիմա այդ խնդիրը կարելի է լուծված համարել: Ինչպե՞ս են նարո-ղացիները լուծել այդպիսի բարդ խնդիրը: Մեծապես օգնել են ամենից առաջ ասուրա-բարելական, հրեական, պարսկական, ինչպես նաև հունական վավերագրերը, որոնց տարեթվերը բավական ստույգ են որոշված: Այդ վավերագրերում պատերազմները, հաշտության պայմանագրերն ու որոշակի փարավոնների գահակալությունը բազմաթիվ անգամ հիշատակվում են որպես սեփական պատմության իրադարձությունների հետ միաժամանակ տեղի ունեցած փաստեր: Ուստի համեմատական եղանակով կարելի էր որոշել եզրպատական բազմաթիվ տարեթվեր:

Սակայն առավել ճշգրիտ տվյալներ մեզ տվել է աստղագիտությունը: Եզրպատացիները կազմել են շատ մանրամասն աստղագիտական օրացույց, որի հիման վրա որոշել են տարվա ժամանակների հերթափոխությունն ու Նեղոսի հորդացումների ժամանակաշրջանները: Այդ պատճառով եզրպատագետները դիմեցին աստղագետների և մաթեմատիկոսների օգնությանը, հետազոտելու համար նրանց տալով պապիրուսային հին տեքստեր ու դամբարաններում գտնված արձանագրությունների պատճեններ, որոնցում հիշատակվում էր, որ պատմական որոշ իրադարձություններ կապված են եղել երկնային որոշակի երևույթների, օրինակ, գիսաստղերի հայտնվելու հետ: Այդ տեքստերի հիման վրա գիտնականները կարողացան մինչև երեք-չորս տարվա ճշտությամբ հաշվարկել, որ փարավոնների XII դինաստիան իր տիրակալությունը սկսել է մ. թ. ա. 2000 թվականին, իսկ XVIII դինաստիան՝ մ. թ. ա. 1580 թվականին: Ունենալով այդպիսի ելակետային տվյալներ, պատմաբաններն արդեն կարող էին մոտավորապես որոշել մնացած դինաստիաների գահակալության ժամանակը, քանզի իրենց տրամադրության տակ ունեին փարավոնների պահպանված ցուցակները և գիտեին նրանց գահակալության ժամկետները:

Ատոմների մասին գիտությունը՝ ատոմագիտությունը, ստեղծեց հնությունների տարիքը և, հետևաբար, դրանց պատմության տարիքը որոշելու նորագույն եղանակներ: Տիեզերական ճառագայթների ներգործության հետևանքով բույսերի և կենդանիների օրգանիզմներում անջատվում է ռադիոակտիվ ածխածինը՝ C^{14} , որը քայքայվելով, մանրագույն մասնիկներ է գոյացնում: Հաշվված է, որ այդ ածխածնի ատոմները գոյություն են ունենում մոտ ութ հազար տարի:

Օրգանիզմի մեռնելու պահից սկսած մասնիկների կուտակումը դադարում է, իսկ կուտակված մասնիկները օրգանիզմի գոյության ամբողջ

ժամանակամիջոցում աստիճանաբար տրոհվում են: Ուստի որքան հին է հնագիտական գտածոն, այնքան թույլ է դրա ճառագայթումը: Այդ ճառագայթման ուժը կարելի է չափել Հեյգեր-Մյուլլերի հաշվիչի օգնությամբ: Գիտնականները փորձեր կատարեցին եգիպտական մումիաների վրա, որոնց տարիքը հայտնի էր այլ աղբյուրներից, և գտան, որ այդ եղանակով կարելի է տարեթիվը որոշել նման դեպքերում թույլատրելի երկու հարյուր տարվա ճշտությամբ:

Տաք վեճերի առարկա է Եգիպտոսի այսպես կոչված «երկար ու կարճ ժամանակագրությունը»: Դա ամենեին էլ աննշան հարց չէ, որովհետև խոսքն այն մասին է, թե երբ է սկիզբ առել Եգիպտոսի պատմությունը՝ ընդամենը մեկուկես հազար տարի ո՞ւր, թե՞ շուտ:

Շատ պարզեցված տեսքով բանն այսպես է: II դինաստիայի ժամանակներում եգիպտացի քրմերն արեգակնային օրացույց են ստեղծել: Քանի որ նրանք տարին բաժանել են 365 լրիվ օրերի, արեգակնային և օրացույցային տարիների միջև գոյություն է ունեցել մեկ քառորդ օրվա տարբերություն: Չորս տարի անց ուշացումը կազմել է արդեն մեկ լրիվ օր, իսկ 1460 տարի անց՝ մի ամբողջ տարի, այսինքն օրացույցային և արեգակնային տարիները նորից համընկել են:

Եգիպտացիների նոր տարին սկսվել է, երբ Նեղոսի վարարումը տեղի է ունեցել Արեգակի և Սիրիուսի ծագման հետ միաժամանակ: Աստղագետներն ու մաթեմատիկոսները հաշվարկեցին, որ այդպիսի համընկնում տեղի է ունեցել մ. թ. ա. 4339, 2773 և 1317 թվականների օրացույցային տարիների սկզբին:

Խնդիրն էր այդ թվերից մեկն ընտրել որպես եգիպտական օրացույցի ստեղծման տարեթիվ և դրանով իսկ մոտավորապես որոշել փարավոնների II դինաստիայի տիրակալության ժամանակը: 1317 թվականը, իբրև չափից ավելի ուշ, հարկավոր էր իսկույն դեն նետել, և վեճը գնում էր առաջին երկու տարեթվերի շուրջ: Դրանք էլ հենց ներկայացնում են հիշատակված «երկար ու կարճ ժամանակագրությունը»:

Թեև հիմա էլ դեռ կան հետազոտողներ, ովքեր պաշտպանում են 4339 թվականը, մեծամասնությունը, սակայն, 2773 թվականն ընդունել է որպես անվիճելի տարեթիվ: Նրանք գլխավորապես վկայակոչում են հնագիտական այն գտածոները, որոնք վկայում են, որ արեգակնային օրացույց ստեղծելու ընդունակ լինելու համար եգիպտական հասարակությունը մ. թ. ա. հինգերորդ հազարամյակում տակավին շատ թույլ զարգացած մշակույթ է ունեցել: Դրանից ելնելով, I դինաստիայի տիրակալության սկիզբը և եգիպտական պետության միավորումը եգիպտագիտությունը վերագրում է 2900 թվականին:

Եգիպտոսի բնական պայմանները շատ նման են Միջագետքի բնական պայմաններին: Նեղոսի ամենամյա վարարումների շնորհիվ այդ երկիրը հնագույն ժամանակներից արտակարգ բերքաշատ օաղիս է ան-

ժայռածիր անապատում: Հնադիակապան պեղումները ցույց տվեցին, որ գեռև քարի դարում այնտեղ եղել են երկրագործների, ձկնորսների, սր- սորդների ու հովիվների բազմաթիվ և մարդաշատ բնակավայրեր:

Հերոդոտը Եգիպտոսն անվանել է «գետրեծա»: Հարեշակյան լեռներում տեղացող արևադարձային տեղատարափ անձրևների պատճառով Նեղոսի ջրերը գուրս են գալիս ավերից, և ամբողջ շրջակայքը երեք ամիս՝ օգոս- տոսին, սեպտեմբերին, հոկտեմբերին, վերածվում է համատարած լճի: Վերագառնալով իրենց հունը, ջրերը շատ արգավանդ սև ախղմ են թող- նում: Ահա թե ինչու են եգիպտացիներն իրենց երկիրը «սև հող» անվանել:

Սակայն հովիտը հարթ մակերևույթ չի ունեցել: Եղել են ալիքածե բարձրություններ, բլուրներ, ուր շեն հասել վարարած Նեղոսի ջրերը: Հաճախ շորային տարիներ են եղել, երբ հորգացումն այնքան աննշան էր, որ բոլոր դաշտերը շէր ապահովում բերքի համար անհրաժեշտ խո- նավորթյամբ և արգավանդ տիղմով: Այդ պատճառով եգիպտացի հօգա- տար երկրագործներն անհիշելի ժամանակներից հովիտը սյատել են ջրանցքների ցանցով, ամբարձիչ-շերեփների և ջրարգելակների օգնու- թյամբ կաթգավորել ոռոգումը, իսկ երաշտից պաշտպանվելու համար ջրի մեծ պաշարներ են պահել արհեստական լճերում ու տակառներում:

Միայն XIX դարի երկրորդ կեսին հայտնաբերվեցին Նեղոսի ակունք- ները: Իր վերին հոսանքում Նեղոսը գոյանում է երկու գետաբազուկներից՝ Կենտրոնական Աֆրիկայի լճերից հոսող Սպիտակ Նեղոսից և Հարեշ- ստանի լեռներում սկիզբ առնող Կապուլյտ Նեղոսից:

Ներկայիս Խարթումի շրջակայքում դրանց միախառնումից գոյանում է իր մեծությունը աշխարհի երկրորդ գետը, որի երկարությունը ակունք- ներից մինչև գետաբերանը շուրջ 6400 կմ է:

Նեղոսն անցնում է հին Նուբիայի դրանիտե բլրակների մեջ բացված նեղ կիրճով, և հաղթահարելով ստորջրյա վեց սահանքներ, այսպես կոչված ցածր ջրվեժներ, դուրս է գալիս կրաքարային ժայռերով եղբրված լայն հովիտ: Կահիրեից ներքև բաժանվում է երկու գետաբազուկների (մի ժամանակ դրանք յոթն են եղել) և գոյացնում հունական դելտա կոչվող տառին նմանվող մի շատ արգավանդ հոսակյունի: Աշխարհագրականորեն ու քաղաքականապես երկիրը բաժանվել է Վերին և Ստորին Եգիպտոս- ների, որոնց սահմանը առաջին սահանքն է եղել:

Հնագույն, նախադինաստիական ժամանակներում եգիպտացիներն ապրել են առհասարակ համայնքներով: Միայն մեկ ձեռքում կենտրոնաց- ված ոռոգման միասնական համակարգը կաբող էր բնակչությանն ապա- հովել անհրաժեշտ քանակությամբ պարենով: Ուստի սկսել են առաջանալ տարածքային ավելի խոշոր միավորումներ, որոնք ժամանակի ընթաց- քում վերածվել են իշխանությունների՝ ավարտի կամ ժառանգական տի- բրակալի պիսավորությամբ: Տոհմային համայնքի կազմալուծման հետեան-

քով եզրիպտական հասարակութիւնում վաղ է կատարվել դասակարգա-
յին շերտավորումը՝ երևան են եկել հարուստ հողատերերի և սակավա-
հող կամ հողազուրկ շքավորների դասակարգերը: Գյուղերում գյուղացի-
ները դեռ երկար ժամանակ պահպանել են գյուղական համայնքի կա-
ցութեանը, իսկ իրականում նրանք տնտեսապես այնքան ճնշված են եղել,
որ վերածվել են ստրուկների հսկայական ամբոխների, որոնց ուժով
ստիպել են աշխատել փարավոնի և մեծատոհմիկների համար: Հարուստ-
ների դաշտերում միաժամանակ հայտնվել են նաև իսկական ստրուկներ
դաքձած ուղմագերիներ:

Պատմական հետադա զարգացման ընթացքում բազմաթիվ մանր
իշխանութիւնները միավորվելով, կազմել են երկու պետութիւն՝ Վերին և
Ստորին Եգիպտոսները: Մ. թ. ա. շուրջ 2900 թվականին Մենես փարա-
վոնը դրանք միավորել է մեկ պետութիւն մեջ և դրա գլուխ կանգնել
որպես աստվածայնութիւն կնիքով կնքված տիրակալ: Նա իր համար
մայրաքաղաք է ընտրել Մեմփիսը, որի ավերակները պեղվեցին Կահի-
րեից ոչ հեռու, Նեղոսի արևմտյան ափին:

Մենեսի գահ բարձրանալով սկսվում է «Հին թագավորութիւն» ժա-
մանակաշրջանը, բուրգերի, վեհաշուք արձանների և հոյակապ տաճար-
ների ժամանակաշրջանը: Արիստոկրատիայի կողքին հայտնվել է քրմերի
հարուստ ու ազդեցիկ դասը: Փարավոնները սկսում են նվաճողական
բազմաթիվ պատերազմներ վարել մետաղներ, պերճանքի առարկաներ,
ինչպես նաև ստրուկներ հայթայթելու համար, որոնց պահանջը թագա-
վորի մեծատոհմիկների ու քրմերի կալվածքներում և պալատներում գնա-
լով աճելի ու ավելի էր մեծանում: Աշխատավորները ոչ միայն ոչինչ
չէին շահում այդ նվաճողական պատերազմներից, այլ հակառակը,
նրանց ծանրաբեռնում էին աճելի մեծ հարկերով ու պարտականութիւն-
ներով: Այդ ժամանակաշրջանի վերջում գյուղացիական մեծ ապստամ-
բութիւն է բռնկվել, Վերին և Ստորին Եգիպտոսների պետութիւնը նորից
տրոհվել է փոքրիկ, միմյանց հետ պատերազմող իշխանութիւնների:

Մ. թ. ա. շուրջ 2200 թվականին թերեյան իշխաններից մեկը երկրորդ
անգամ է միավորել ամբողջ երկիրը: Այդ իրադարձութիւնից սկսվում է
Թեբե մայրաքաղաքով «Միջին թագավորութիւն» ժամանակաշրջանը:
Դա այսպես կոչված «Եգիպտոսի դասական ժամանակաշրջանն էր», երբ
գրականութիւնն ու արվեստը հասան ամենաբարձր ծաղկման: Նվաճո-
ղական արշավանքներ կատարելով դեպի արևելք, արևմուտք և հարավ,
փարավոնները ստեղծել են այն ժամանակների աշխարհակալ մեծ պե-
տութիւնը, կառուցել ուղղման նոր ջրանցքներ, առևտրական կապեր
հաստատել Կրետի և Պելոպոնեսի հետ:

Կառավարող դասակարգերի հարստութիւնն ու հզորութիւնը մեծա-
ցել են, և միաժամանակ ուժեղացել է աշխատավոր զանգվածների կեղե-
քումն ու կարիքը: Պապիրուսներից մեկում կարդում ենք.

Հացահատիկի կեսը -վնասատուներն են ոչնչացնում, գետա-
ծիերը խժոժում են մյուս կեսը. արտը լեփ-լեցուն է մկներով, վրա
է տալիս մորեխը: Եվ անա ափի մոտ կանգ է առնում հարկանա-
վաճր, դիտում է արտը, նրա օգնականներն իրենց ձեռքին գավազան
ունեն, իսկ նեգրերը՝ նիպոտ: Նրանք ասում են. «Հացահատիկ
տուր»: Իսկ եթե այն չկա, գանահարում են երկրագործին, կապ-
կրպում նրան ու նետում ջրանցքը... կապոտում են կնոջը և երեխա-
ներին:

*Մ. Թ. ա. մոտ 1780 թվականին ժողովրդական ընդվզումները նորից
են համակում երկիրը: Այս անգամ ապստամբում են ոչ միայն գյուղա-
ցիական ղանգվածները, այլև քաղաքի արհեստավորներն ու զորական-
ները, խոշոր հողատիրություններում աշխատող ստրուկները: Գոտե-
մարտը եղել է արյունահեղ ու հաղթական: Կեղեքված ժողովուրդը որոշ
ժամանակ իշխանությունը վերցրել է իր ձեռքը:*

*Այդ ապստամբության որոշ տեսարանների նկարագրությունը պահ-
պանվել է մեծահարուստ Իպուվերի գրառումներում: Ահավասիկ նրա
գրառումներից մի քանիսը.*

Տեսե՛ք, կատարվեցին գործեր, որ, թվում է, երբեք չպետք է
կատարվեին... Աղետ մարդիկ բռնել են թագավորին... Հիրավի,
դատական գեղեցիկ պալատ: Թալանված են դրա վավերագրերը,
գտղտնարանները գրկվել են իրենց պարունակությունից... Հիրավի,
բաց են արվել արխիվները: Թալանվել են դրանց հարկային հրո-
վարտակները: Ստրուկները դարձել են ստրկատերեր: Հիրավի, աս-
տիճանավորները սպանված են: Նրանց փաստաթղթերը վերցված
են: Հիրավի, բերքը հտշվառող գրագիրները, ցուցակները ոչնչաց-
ված են: Եգիպտոսի հացահատիկը ընդհանուր սեփականություն է
դարձել... Դատակտն պալատի օրենքների փոթեթները դուրս են
նետված, դրանց վրայով ֆայում են խաչմերուկներում: Աղետ
մարդիկ փողոցներում շարդում են դրանց կնիքները...

Աղետ մարդիկ ելումուտ են առնում Մեծ Պալատները...

*Իրադարձություններն առավել ռեալիստորեն է պատկերում այս
գրառումը.*

Ոչ մի տեղ չկտ երեկվա մարդը... Հիրավի, երկիրը շուտ է եկել
բրուտի դուրգի նման... Նա, ով չէր կարողանում իր համար սարկո-
ֆագ շինել, հիմա դամբարանի տեր է դարձել: Տեսե՛ք, դամբա-
րտնատերերին շարտել են բլուրների կատարը... Նա, ով նույնիսկ
պատի մոտ չէր ֆնում, հիմա օթյակի սեփականատեր է դարձել...
Տեսե՛ք, շֆեղ հանդերձների տերերը հիմա ֆրջերի մեջ են: Նա, ով
երբեք իր համար ոչինչ չէր գործել, հիմա նուրբ կտավի տեր է...

Նա, ով իր համար երբեք մակույկ իսկ չէր շինել, հիմա նավերի տեր է դարձել: Մինչդեռ նավերի իսկական սեփականատերը նայում է դրանց, բայց դրանք արդեն չեն պատկանում իրեն... Տեսե՛ք երկրի ումիկները հարստացել են: Հարստությունների աերերը շունևոր են դարձել:

Այդ իրադարձություններից անմիջապես հետո վրա է հասնում Եգիպտոսի պատմության ամենաաղետալի դարը: Ընդվզումներից թուլացած երկրի վրա հարձակվում են հիքսոսների ու խուուիների սեմական ցեղերը և կայծակնային արագությամբ նվաճում: Զավթիչները հայտնվել են մարտակառքերով, որոնց լծված են եղել ձիեր, որ Եգիպտոսում մինչ այդ տեսած չկային: Քառատրոփ արշավող բայդ հրեշներին տեսնելով, եգիպտական հետևակը ահ ու սարսափի մեջ խուճապահար փախուստի է դիմել:

Նվաճողները բիրտ բարբարոսներ են եղել և նվաճված երկրում տեր ու տնօրինություն են արել անլուր դաժանությամբ: Նրանք հրկիզել են քաղաքները, ավերել տաճարները, իսկ մարդկանց հետ վարվել են ինչպես բանող անասունի հետ: Հարյուր տարի տևած այդպիսի անմարդկային կեղեքումից հետո եգիպտացիները ապստամբություն են բարձրացրել և Թեբեի թագավոր Յահմոս I-ի գլխավորությամբ զավթիչներին դուրս քշել իրենց երկրի սահմաններից:

Այդ անցքից սկսվում է Եգիպտոսի ծաղկման ու հզորացման երրորդ մեծ ժամանակաշրջանը, որ պատմաբաններն անվանել են «Նոր թագավորություն»: Իշխանության գլուխ է անցել XVIII դինաստիան, որը մայրաքաղաք է ընտրում Թեբեն և իշխում մ. թ. ա. 1580—1350 թվականներին:

Այդ դինաստիայի փարավոնները եղել են խոշոր նվաճողներ, մղել են զավթողական բազմաթիվ պատերազմներ, իրենց ենթարկել ամբողջ Ասորիքը՝ ընդհուպ մինչև Եփրատ ու հյուսիսային Պաղեստին: Այսպես, օրինակ, Թուֆմոս III-ը ուղղակի տասնյոթ արշավանք է կատարել դեպի Ասորիք և զավթել անասելի քանակությամբ անասուններ, ստրուկներ, ոսկի և արծաթ: Այդ փարավոնները նվաճել են նաև Նուբիան՝ ընդհուպ մինչև շորրորդ սահանք, զավթել այնտեղի հարուստ ոսկեհանքերը: Խեթերը, բաբելոնացիներն ու ասորեստանցիները ստիպված նրանց ամենամյա տուրք են վճարել:

Ռազմավարը հարստացրել է թագավորին, արիստոկրատիային ու քրմերի դասին: Ապարանքներն ու տաճարները լողացել են շտեմնված շքեղության մեջ: Այդ հարստությունների համբավը տարածվել է այն ժամանակվա աշխարհով մեկ:

Սակայն մշտական պատերազմները իսպառ աղքատացրել են եգիպտացի գյուղացիներին: Նրանք հարաճուն հարկեր են վճարել բանակը

պահելու համար և այնքան զինվորներ մատակարարել, որ, վերջիվերջո, հողը մշակող մարդ չի մնացել: Մարդկային ռեսուրսների սպառվելը Ամենհոտեպ III-ին ստիպել է անցնելու բացառապես խաղաղ քաղաքա-
կանության: Նրա գահակալության երեսունվեցամյա շրջանը Եգիպտոսի պատմության ամենաօրհնյալ ժամանակներից է: Այդ փարավոնն ամուս-
նացել է ոչ թագավորական ծագումով կնոջ՝ արդեն հիշատակված Թիայի-
հետ, որի դերեզմանում գտնվեց էհնաթոնի մումիան:

Երբ ծնվել է նրա որդին՝ ապագա Ամենհոտեպ IV-ը, երկրի ներքին քաղաքական վիճակը խիստ լարված է եղել: Փարավոնի կողքին աճել է նրա համար վտանգավոր մի ուժ՝ հարստացած արիստոկրատիան և Թեբեի քրմերի գասը: Գլխավոր քուրմն իր պրաված դիրքի շնորհիվ միաժամա-
նակ եղել է փոխարքա, այսինքն փաստորեն իր ձեռքում է պահել իսկա-
կան իշխանությունը ամբողջ Եգիպտոսում: Ամենհոտեպ III-ն ու նրա կինը՝ Թիան, խարդավանքների միջոցով փորձել են սահմանափակել նրա ազդեցությունը, բայց չեն կարողացել բացահայտ թշնամություն տածել նրա հանդեպ, քանզի եգիպտական պետության մեջ, բացի ոչ հուսալի, հեղափոխական ավանդույթներով տոգորված աշխատավորների զանգ-
վածներից, չկային ուրիշ ուժեր, որոնց վրա նրանք կարողանային հենվել:

Քիչ էր նաև հույսը, որ իրենց միակ որդին՝ ապագա Ամենհոտեպ IV-ը, այդ պայքարը կհասցնեք հաղթական ավարտի: Նա մի թուլակազմ, հիվանդոտ տղա է եղել, որն իրեն օտար է զգացել պալատական խարդա-
վանքների և անընդմեջ հանդիսությունների պայմաններում: Որմանակար-
ներում պատկերված են մարմնի համեմատ նրա՝ չափից դուրս մեծ գլուխը, ծանր թմրած կռպերը, սենտիմենտալ աչքերը և կանացի դիրք շրթունքները: Նկարները վկայում են նաև, որ այդ դեռահասը բոլորից հաճույքով ժամանակն անց է կացրել պալատի պարտեզում, ծաղիկների, թռչունների ու թիթեռների շրջապատում: Պրոֆեսոր Սմիթի բժշկական եզրակացությունից մենք արդեն գիտենք նրա գանգի տարօրինակ ձևի մատին, որը վկայում է, որ պատանին հիվանդ է եղել ընկնավորությամբ:

Համաձայն եգիպտական արքունիքում ընդունված սովորույթի, նրան վաղ են ամուսնացրել արքայադուստր Նեֆերտիտի հետ: Թեև էլ Ամաու-
նայում փլատակների միջից հանվել է Նեֆերտիտի՝ կրաքարից վարպետ Թուֆմեսի կերտած և հետո ներկված դիմաքանդակը: Հռչակավոր քան-
դակը հիմա գտնվում է Բեռլինի թանգարանում: Այն պատկերում է նուրբ դիմագծերով, կարապի վզով և անորսալի երազկոտությամբ լի ճնշած և աչքերով մի աղջկա: Արվեստի այդ ստեղծագործությունը ապշեցնում է կատարման վարպետությամբ, բանաստեղծական արտասովոր հմայքով:

Տասնչորսամյա Ամենհոտեպը գահ է բարձրացել մ. թ. ա. 1375 թվա-
կանին: Մինչև չափահաս դառնալը նրան երկու տարի չի հերիքել, ուստի նրա գահակալության սկզբնական շրջանն անցել է արիստոկրատների և

քրմերի խնամակալութեան տակ, ովքեր այդ ժամանակ, անկասկած, նրան զգալ են տվել իրենց քաղաքական ամբողջ ուժը:

Բացառված չէ, որ հենց այդ ոչ ինքնուրույն ապրած և իր համար ծանր երկու տարիների ընթացքում է երիտասարդ փարավոնը շանացել գտնել իրերի այգպիսի վիճակի պատճառները: Ըստ երեւոյթին, գտնվել են նաև բարձրացակամ մտերիմներ, ովքեր վավերագրերի հիման վրա նրան բացատրել են, թե թերեք քրմերն ու նրանց հետ միասնարար գործող մեծատոհմիկներն ինչպես են այգպիսի հզորութունն ձեռք բերել պետութեան մեջ:

Եգիպտոսի պատմութեան մեջ կրօնական առաջին կենարոնը եղել է Հելիոպոլիս քաղաքը, ուր երկրպագել են արևի աստված Ռային: Գեոլես եգիպտական պետականութեան արշալույսին փարավոններն իրենց համարել են այդ աստծո սերունդ և հպարտութեամբ կրել «արևորդի» տիտղոսը: Հելիոպոլիս քրմերը վաշխել են նրանց բարեհաճութունը և դարձել Եգիպտոսի առավել ազդեցիկ քրմական խումբը:

Գրութեանը փոխվել է «Շոր թագավորութեան» ժամանակաշրջանում, էրբ գահանիստը փոխադրվել է Թերե: Տեղի քրմերը առաջնութեան համար պայքարելով Հելիոպոլիսի իրենց մրցակիցների դեմ, որոշել են իրենց տեղական Ամոն աստծուն առաջին տեղ առաջ քաշել եգիպտական կրօնում: Հեշտ չէր անել այդ, որովհետև Ռա աստվածը համարվել է փառավոնների հայրը և անհիշելի ժամանակներից շրջապատված եղել ամբողջ եգիպտական ժողովրդի ջերմեռանդ երկրպագութեամբ: Թերեի քրմերն իրենց մտահոգացումն իրականացրել են, Ամոնին նույնացնելով Ռա աստծո հետ, նրան անվանելով Ամոն-Ռա և նրան վերագրելով հելիոպոլիսյան նախկին աստվածութեան բոլոր հատկանիշները:

Սկզբնապես Ամոն-Ռան եղել է տեղական բազմաթիվ աստվածներից մեկը և միայն հարյուրավոր տարիներ անց է գերիշխող դիրք գրավել եգիպտական կրօնում: Դրանից ելնելով, Ամենհոտեպ IV-ը եկել է այն համոզման, որ Ամոն-Ռան անց որ ինքնակոչ է, իսկ իսկական աստվածը Հելիոպոլիսի Ռան է, որի սերունդները և ներկայացուցիչները երկրի վրա եղել են ու կան փարավոնները:

Կասկածի ենթակա չէ, որ պատմական ու կրօնական այդ ծագումնաբանութեանը պարզելու գործում նրան օգնել են Հելիոպոլիսի քրմերը, որոնք թերեւս մրցակիցների դեմ ընդհատակյա պայքար են մղել իրենց կորցրած ազդեցութունը վերականգնելու համար: Այդ ամենը երիտասարդ փարավոնը պատեհ առիթ է համարել թերեւս քրմերի և նրանց ազնվազարմ դաշնակիցների հզորութեանը խորտակելու համար: Այդ պատճառով շափահաս դառնալուն պես նա իրեն հռչակել է հին Ռա աստծո ջատագով:

Այդ պահից սկսվում է երիտասարդ փարավոնի հազիկան արտակարգ հետաքրքիր զարգացման շրջանը: Այն, ինչը սկզբնապես զուտ քաղա-

քանակ մտահղացում էր, շուտով վերափոխվել է կրոնական խոր ու-
ֆորմացիայի: Ամենհոտեպ IV-ը հետզհետե դարձել է նոր, բարենորոգված
կրոնի ստեղծող, որը քարոզել է կանխատեսողի և մարգարեի ամբողջ
կրքով: Արքունիքում նրա մոտ մուտք են ունեցել միայն հավատարիմ
հետևորդները, և միայն նրանց է նա վստահել պետական բարձրագույն
պաշտոնները:

Ի վերջո, նույնիսկ հին աստված Ռան է ստիպված եղել նահանջել
աստծո նոր գերագույն գաղափարի առաջ, աստված, որին փարավոնն
անվանել է «Աթոն», այսինքն՝ «Արեգակի սկավառակ»: Այդ աստծո
խորհրդանշանը եղել է արևի պատկերը, որի ճառագայթներն ավարտվել
են մարդկային ձեռքերով: Փարավոնի վարդապետության համաձայն,
Աթոնը ոչ թե բազմանդամ համաստեղության աստվածներից մեկն էր,
այլ միակ աստվածությունը տիեզերքում, անդամ ու անտեսանելի այն
ուժը, որ ստեղծել է արևը, և աղբյուրն էր այն ամենի, ինչ ապրում և
աճում էր երկրի վրա:

Մինչ այդ Եգիպտոսում աստվածները պատկերացվել են որպես
մարդկային, ճիշտ է, անմահությանը օժտված, բայց մարդկային բոլոր
թուլություններից ոչ զուրկ էակներ: Դրանք սարսափ առաջացնող վրեժ-
խնդիր ու քմահաճ ուժեր են եղել, որոնց շարունակ հարկ էր սիրաշահել
արյունալի զոհաբերություններով:

Ամենհոտեպ IV-ի վարդապետության արտասովոր նորամուծությունն
այն էր, որ Աթոնն այլևս չուներ այդ երկրային հատկությունները: Նրան
պաշտել են որպես համայն մարդկության ողորմած հոր, նրա ներկայու-
թյունը հարկ էր փնտրել ոչ թե ճակատամարտերի թոհուրոհի կամ ար-
նաթոր զոհերի մեջ, այլ բնության գեղեցկության, ծաղիկների, ծառերի,
թռչունների մեջ: Աթոնը դարձել է «սիրո աստված», որը երեսային
հարուժյուն է տալիս մոր արգանդում և սփռվում, որ նա լաց չլինի: «Ես
Եգիպտոսի երկու երկրները լցնում եմ իմ սիրով»,— ասվում է փառա-
քանական հիմներից մեկում: Դա խնդրությանը ու կյանքի սիրով տոգոր-
ված կրոն է եղել: Դրա կողմնակիցները սնտախի վախից դողացել են Աթոնի
առաջ, բայց երախտագիտությանը երգել. «Ամբողջ երկիրը կատարում է
քո տոնը և բերկրում քեզնով»:

Տաճարներում կատարվող կրոնական ծեսերը եղել են հասարակ ու
պարզ: Դրանք հանգել են առավելապես ծաղիկներ, մրգեր նվիրաբերելուն
և հիմներ երգելուն: Նոր կրոն դավանողները հավաքվել են արևածագին
ու մթնշաղին, աղոթելով ծագող ու մայր մտնող Աթոնին:

Ապշեցուցիչ է, որ Ամենհոտեպ IV-ը միաստված կրոն է ստեղծել,
չունենալով պատմական ոչ մի օրինակ, որի վրա կարող էր հենվել: Ահա
թե ինչու նրան պետք է համարել ոչ միայն կրոնական յուրօրինակ մտա-
ծող, այլև ավելի ուշ շրջանի կրոնական միաստված պաշտամունքների
բոլոր ստեղծողների նախակարապետ: Մովսեսն ասում է, թե ինքջ

«Եգիպտոսի իմաստությունները» սովորել է Հելիոպոլսում, ուստի բացառված չէ հրեական կրոնի և Աթոնի պաշտամունքի որոշ ազգակցությունը, որ ի հայտ են բերում Աթոնին նվիրված հիմներից մեկում և աստվածաշնչական 115-րդ սաղմոսում եղած նմանությունները:

Ամենհոտեպ IV-ը վճռաբար խզել է կապը անցյալի հետ, անվանափոխվելով էհնաթոն, որ նշանակում է «Աթոնի վահան»: Միաժամանակ, ցանկանալով վերջնականապես ազատվել քրմերի ազդեցությունից և Թեբեն հասցնել գավառական սովորական քաղաքի մակարդակի, նա ներկայիս Թեբե էլ Ամառնայի մոտակայքում նոր շքեղ գահանիստ է կառուցել ու անվանել «Արևավառ հորիզոնի քաղաք»:

էհնաթոնը ապագա մայրաքաղաքի վայրն է գնացել իր ոսկեզօծ մարտակառքով, որը «շողշողում է ինչպես արևը, երբ այն հորիզոնից վեր է բարձրանում և աշխարհը տոգորում սիրով»: Քշելով բարեկազմ երիվարները, նա պտտվել է ամայի դաշտի շուրջը և նշել քաղաքի սահմանները, որը նախագծված է եղել մեծ թափով՝ ապարանքներով, տաճարներով, պարտեզներով, վարչական շենքերով, փողոցներով ու այգիներով:

Քաղաքի հիմնադրման մասին սերունդների համար նախատեսված հաղորդումը նա հրամայել է փորագրել մերձակա մի քանի ժայռերի վրա:

Երկու տարի անց նա արդեն կարողացել է փոխադրվել նոր նստավայրը: Այնտեղ լիովին նվիրվել է իր կրոնի քարոզմանը, իսկ ազատ ժամանակն անց է կացրել արքունիքում՝ ընտանիքի ու բարեկամների շրջապատում կամ էլ որսորդությամբ: Եգիպտագետները ենթադրում են, որ Աթոնի պատվին հորինված հիմների մեծ մասի հեղինակը ինքը էհնաթոնն է: Ահա այդ ոգեշունչ պոեմներից մեկի սկզբնատողերը.

Օ՛, ինչ կախարդիչ է քո ծագումը երկնքում,
Աթոն կենդանի, կյանքի արարիչ:
Հենց որ դու հայտնվում ես հորիզոնում,
Երկրները բոլոր սուզվում են այդ գեղեցկության մեջ:
Քանզի դու, ճաճանչափայլ, բարձր ես ու հեռու մեր վերևում,
Քո սահեղծած հողը գուրգուրում ես շողերիդ ձեռքերով:
Օ՛, Ռա, դու գերել ես բոլոր ժողովուրդներին
Եվ նրանց իրար ես կապել քո սիրո ուժով:
Թեև անհասանելի ճախրում ես երկնքում,
Դու երկրի համար չես խնայում քո լույսը,
Եվ մեր կյանքի ամեն մի օրը
Դրոշմված հետքն է քո ոտքի:
Երբ դու ծածկվում ես հորիզոնի հետևում,
Երկրային աշխարհը սուզվում է խավարի մեջ, հանգչում.
Մարդիկ իրենց խրճիթներում քնում են, գլուխները տաք փաթաթած,
Եվ ոչինչ չեն լսում, երբ նրանց գլխատակից
Գողերը հափշտակում են բարիքը նրանց:
Որչերից դուրս են գալիս առյուծները, դուրս են սողում օձերը.
Երկիրը սուզվել է խավարի մեջ ու ընդարմացել,

Որսվհետև նրա արարիչը քուն է մտել:
 Իսկ երբ առավոտյան դու արթնանում ես
 Աւ մեզ, Աթոն, լույս ես բերում,
 Իսկույն նահանջում է խավարը
 Քո բոցավառվող տեսքից:
 Այդժամ մեր երկու երկաները՝ լցվում են ուրախությամբ:
 Արթնացածները ոտքի են հենում՝
 Մարդիկ թոթափում են քնի մոռացությունը,
 Լվանում են իրենց մարմինները, հագնում զգեստները
 Եվ սիրով ձեռքերը կարկառում առ սկավառակդ,
 Իսկ հետո անցնում իրենց ցերեկային գործերին:
 Անասունը արոտավայր է գնում,
 Մաղկում են թփերն ու ծառերը,
 Թռչունները դեսուդեն են ընկնում ճահճի թփուտներում
 Եվ թևերի թրթիռով քո գուլքն են անում:
 Ոչխարները ցատկոտում են պարելով:
 Թևավոր ամեն բան օդ է բարձրանում,
 Քանզի քո շերմությամբ դու նրանց կյանք ես տալիս:
 Նավակները վերոավար են լողում գետով,
 Ճանապարհները լցվում են մարդկանցով, երբ ծագում ես դու,
 Ձկները դուրս են ցատկում շրից քեզ տեսնելով,
 Իսկ մեծ ծովը լույս է դառնում:

Էհնաթոնը շատ է սիրել արվեստը և հաճույքով հովանավորել է երի-
 տասարդ նկարիչներին, որոնց ամեն կողմից հավաքել էր իր մայրաքա-
 ղաքը: Ինչպես կրոնում, այնպես էլ եգիպտական արվեստում երևան են
 եկել թարմ հովեր: Նոր ուղղության հիմքը ընդդիմադրությունն էր թեթե-
 յան քրմերին: Մինչ այդ կրոնական ծեսերի խստագույն օրենսգիրքը, որը
 թույլ է տվել փարավոններին պատկերել միայն որպես քարացած, աստ-
 վածային վեհություններ լի անձնավորությունների, խեղդել էր արվեստն ու
 քանդակագործությունը:

Երիտասարդ նկարիչները այլևս դուրս են պրծել քրմական ավան-
 դապահություն խնամակալության տակից և իրենց ստեղծագործություն-
 ներում ձգտել են ազնվաբարո պարզության ու ճշմարտության: Էհնա-
 թոնը պաշտպանել է այդ ունակալական ուղղությունը և նկարիչներին
 չի արգելել իրեն պատկերելու այնպիսին, ինչպիսին նրանք են տեսել
 իրեն: Նրա այդ հանդուրժողականությունն այնքան հեռուն է գնացել, որ
 նա թույլ է տվել իրեն պատկերել ոչ միայն որպես միս ու արյունից
 կերտված մարդու, այլև նույնիսկ իր վանող արտաքինի բոլոր մանրա-
 մասնություններով՝ մեծ գլխով, դուրս ցցված փորով և ծուռտիկ ոտքերով:

Նախկին պայմանական տեսարանները նկարներում արդեն կենսա-
 կան գույներով են պատկերվում: Նախորդ փարավոններից և ոչ մեկը

1 Խոսքը վերին և Ստորին Եգիպտոսների մասին է:

չէր համաձայնի, որ իրեն պատկերին որպէս հասարակ մահկանացուի, առանց աստվածային վեհութեան լուսապսակի: Այս իմաստով էհնաթոնը ոչ մի նախապաշարմունք չի ունեցել, և արվեստի նկատմամբ նրա վերաբերմունքի մեջ առանձնապէս պարզորոշ են երևում հեղափոխական խոր և համարձակ ձեռնարկումները: Բոլորից լավ այդ են վկայում որմնանկարները, որոնցում պատկերված է փարավոնի, նրա կնոջ և դուստրերի ընտանեկան մտերմիկ կյանքը: Օրինակ, մենք այդ նկարներում տեսնում ենք, թե էհնաթոնն ինչպէս է համբուրում ու փաղաքշում իր կնոջը, այն ժամանակ, երբ նրա ոտքերի մոտ խաղում են փոքրիկ աղջիկները:

«Արևավառ հորիզոնի քաղաքի» ժայռափոր դամբարաններում հնագետները գտան մի շարք որմնանկարներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել թագավորական ընտանիքի ապրելակերպի մասին:

Որմնանկարներից մեկում պատկերված է Մերիրային նոր կրոնի գերադույն քուրմ ձեռնադրելու արարողությունը: Մենք տեսնում ենք թագավորին, նրա կնոջը՝ Նեֆերտիտին և դուստրերին, որոնք պատշգամբի բազրիքին հենված, նայում են պալատի առջև հավաքված ժողովրդին: Նկարը տոնական է, ուրախ ու բազմագույն: Բազրիքին դրված են երփնեւորանոց բարձիկներ, իսկ պալատի սյուներից կախված են լոտոսի ծաղիկներից հյուսված դրասանգներ ու սյուքից ծածանվող ժապավեններ: Արքունի ծառաները բռնել են ջայլամի ալ կարմիր և կապույտ գույն ներկված փետուրներից շինված երկարակոթ հովհարներ: Էհնաթոնը, ձեռքը պարզած, դիմում է ծնրադրած քրմին, որին հոգևոր բարձր աստիճան է շնորհվում:

Շարժումով, կյանքով ու գրավչութեամբ լի մյուս նկարում պատկերված է էհնաթոնի այցը արևի տաճար: Մայր մտնող արևի լույսով փարավոնը ոսկեգոծ մարտակառքով սլանում է քաղաքի փողոցներով, ձեռքում պահելով երասանները և մտրակելով ջայլամի փետրափեղջերով զարդարված սուրացող նժույզներին: Մարտակառքի կողքից վազում են նիզակներով, վահաններով, կացիններով, աղեղներով ու լախտերով զինված ռազմիկներ: Նրանց մեջ երևում են մորուքավոր ասորիներ, նուբիացի նեգրեր և երկարավարս լիբիացիներ: Քաղաքի բնակիչները դուրս են թափվել տներից և դիտում են թագավորական շքերթը: Փարավոնը մոտենում է տաճարի մուտքին: Այնտեղ նրան սպասում են ծնրադրած քրմերն ու դահիրաների նվազակցություններ պարող աղջիկները:

Երրորդ նկարում պատկերված է այդ տեսարանի շարունակությունը: Այս անգամ նկարիչը մեզ ներս է տանում տաճար: Էհնաթոնն ու Նեֆերտիտին կանգնած են մրգերով ու ծաղիկներով ծածկված զոհասեղանի առաջ և ինչ-որ հեղուկ են լցնում կրակի վրա: Թագավորը մինչև գոտկատեղը մերկ է, նրա հագին միայն նուրբ կտորից մի շրջազգեստ կա, որ

փնփուկ ծալքերով իջնում է մինչև ոտքերը: Գոտկատեղից ազդրերն ի վար կախված են հրակարմիր գոտու ծայրերը:

Թագուհին այնքան բարակ սպիտակ զգեստ է հագել, որ դրա տակից երևում են նրա աղջկական իրանի ուրվագծերը: Նա էլ է մեջքին հրակարմիր գոտի կապել, որի ծայրերը հասնում են տաճարի հատակին: Ապշեցուցիչ է, որ ամուսինները ոչ մի զարդ չեն կրում: Նրանց ազատ և գեղեցիկ զգեստների պարզութունը չափազանց հաճելի տպավորություն է թողնում:

Թագավորի երկու դուստրերը կանգնած են ծնողների հետևում և հիմն են երգում ի պատիվ արևի աստված Աթոնի, իրենք իրենց նվագակցելով լարային փողերիկ գործիքներով: Գերագույն քուրմ Մերիրան խոնարհվում է թագավորի առջև, իսկ մնացած քրմերը անուշահոտություններով լի բուրվառն են վառում: Քիչ հեռու կանգնած են յոթ կույր նվագածուներ՝ ծեր, գեր տղամարդիկ: Յոթնադի տավիղների հնչյունների ուղեկցությամբ նրանք Աթոն աստծո գովքն են անում:

Դամբարաններում գտնվել են նաև ընտանեկան այնպիսի տեսարաններ պատկերող մի շարք նկարներ, որոնք վկայում են ոչ միայն արքունական կյանքի շքեղության, այլև մերձավորներին փարավոնի սրտառուչ կապվածության մասին:

Ահա ամբողջ ընտանիքը հավաքվել է փայտաշեն տաղավարում, որի տանիքը պահում են լոտոսի ծաղիկներից հյուսված դրասանգներով ու խաղողի որթով պատրաստված գույնզգույն սյունները: Այդ սյունների խոյակները զարդարված են ծաղկեփնջեր ու սպանված վայրի բաղեր պատկերող բարձրաքանդակներով: Մի խումբ կանայք կանգնած են տաղավարի կենտրոնում և տավիղներով, ջնարներով ու քնարներով ինչ-որ մեղեդի են նվագում: Թագավորը հարմար տեղավորվել է աթոռի բարձիկների վրա: Նա հոգնած է և տխուր տեսք ունի. գուցե, նկարիչը նկատել է նրան տպնշող ախտը և կանխագուշակել նրա վաղաժամ մահը: Երիտասարդ միապետը ձեռքին գավաթ է բռնել, իսկ կինը սափորից գինի է լցնում գավաթի մեջ: Երեք դուստրերը շրջապատել են նրան. մեկը մեծ ծաղկեփնջ է բռնել, մյուսը նրան քաղցրավենիքով լի ափսե է մոտեցնում, իսկ երրորդը զրույցով զբաղեցնում է հորը:

Սակայն արվեստում կատարված հեղաշրջումն առավել պարզորոշ է երևում ընտանեկան շարքի մեկ ուրիշ որմնանկարում: Երբ դուստրերից մեկը մահացել է, էհնաթոնը հրամայել է նրան թաղել իր դամբարանում և պատին նկարել թագավորական ընտանիքի վիշտն ու սուգն արտացոլող հուզիչ տեսարանը: Պատգարակին դրված մեռած աղջկա շուրջը կանգնել են ծնողներն ու քույրիկները: Առանձնապես հուզիչ է Նեֆերտիտին. նա գրկել է ամենափոքրիկ երեխային, նրա դեմքին խորունկ տառապանք է երևում:

Մինչ այդ եգիպտական արվեստում նմանօրինակ ոչ մի բան չի եղել:

այդ նկարում փարավոնի աստվածացված ընտանիքի զգացմունքներն անաչին անգամ վերարտադրված են այնքա՛ն անմիջականորեն ու մարդկայնորեն:

Արիստոկրատների և քրմերի դեմ է՛հնաթոնի մղած պայքարը ժամանակի ընթացքում ավելի սուր բնույթ է ընդունել: Փարավոնն իր շրջապատից հեռացրել է բոլոր նախկին մեծատոհմիկներին և, ինչպես նրա մերձավորներից մեկն է նշում իր դամբարանում արված արձանագրության մեջ, աշխատակիցներ է ընտրել ազատ հողագործների մեջ:

Պալատական մեկ այլ բարձրաստիճան պաշտոնյա իր մասին հետևյալն է ասում.

Հորս և մորս կողմից ես ցածր ծագումով մարդ էի, բայց թագավորն ինձ ոտքի կանգնեցրեց: Նա ինձ հնարավորություն տվեց բարձրանալու... ես շունևոր էի, իսկ նա իր առատաձեռնությամբ ինձ ամենօրյա ապրուստ տվեց, ինձ, որ առաջ մի կտոր հացի համար պետք է մուրացկանություն անեի:

Թագավորի նկատմամբ թշնամաբար տրամադրված մեծահարուստներն ու քրմերը դավադրություն են կազմակերպել, նրա վրա մահափորձ կատարելով: Մենք դա գիտենք ոստիկանության պետի դամբարանում եղած արձանագրությունից ու որմնանկարից: Մենք ոստիկանության պետին տեսնում ենք այն պահին, երբ նա մեծ վեզիրի մոտ է բերում բռնված երեք դավադիրներին: Արձանագրության մեջ մեծ վեզիրը շնորհակալություն է հայտնում Աթոնին, որ նա օգնել է մերկացնելու հանցագործներին, և օրհնում է է՛հնաթոնին:

Մինչ այդ է՛հնաթոնը զգուշավորությամբ է վերաբերվել քրմերին և նրանց թույլ է տվել ազատորեն ծեսեր կատարել ի պատիվ ավանդական աստվածների: Բայց դավադրությունը բաց անելուց հետո նա դառնում է մոլեռանդ հակակրոնավոր ու պատկերամարտիկ: Նա փակել է տվել տաճարները, հրամայել է ոչնչացնել տեղական աստվածիկների արձանները և առանձին անողոքությամբ ոչնչացրել Ամոնի պաշտամունքը: Նրա ուղարկած գործակալները Ամոնի անունը քերել են դամբարաններում ու տաճարներում, հասել են անապատի ամենահեռավոր անկյունները և ժայռերի վրա փորագրված արձանագրություններում ջնջել Ամոնի անունը: Արիստոկրատները պետք է փոխեին իրենց անունները, եթե դրանք ածանցված էին Ամոնի անունից:

Փարավոնի ռեֆորմների նպատակն է եղել նպաստել իշխանության համար արիստոկրատների և քրմերի դեմ մղված պայքարին: Նույնիսկ միաստվածության հաստատումը, ըստ էության, մենիշխանության ձգտելու արտահայտություն է եղել: Քանի որ է՛հնաթոնի ռեֆորմները հասարակական բնույթ չեն կրել, ժողովրդական զանգվածներին ոչ քաղա-

քական թեթևացում են բերել, ոչ էլ տնտեսական, դրանք ժողովուրդն ամենուրեք ընդունել է լիակատար անտարբերությամբ:

Սակայն այն պահից, երբ էհնաթոնն սկսել է հալածել տեղական աստվածներին, հարուցել է ժողովրդական զանգվածների դժգոհությունը: Ժողովրդի համար դրանք եղել են երկրագործի աշխատանքի ու կյանքի հետ սերտորեն կապված հասարակ ու օգտակար աստվածություններ: Զ՛լչտ է, նրանք ցասկոտ էին ու քինախնդիր, շարագույժ և սարսափազգու, բայց, այնուամենայնիվ, ունեին մարդկային գծեր, որ հասկանալի էին հաւարակ մարդկանց: Մինչդեռ Աթոնը, արեգակի սկավառակի տեսքով հանդես եկող այդ անտեսանելի աստվածը, նրանց համար միանգամայն անհասկանալի, խորթ և ուշադրության անարժան ինչ-որ բան էր: Ուստի էհնաթոնի մուկուանդ աղանդավորությունը շուտով անհաղթահարելի վիճ է ստեղծել նրա արքունիքի և եգիպտական ժողովրդի լայն զանգվածների միջև, ժողովուրդ, որի մեջ նա հենարան էր փնտրել, նրա ծոցից ելած- ներից ընտրելով մերձավոր աշխատակիցներ:

Մտցնելով Աթոնի պաշտամունքը, երիտասարդ փարավոնն իր բորբոն երևակայության մեջ նվաճողական լայն ծրագրեր է հասունացրել: Մենք արդեն գիտենք, որ նրա նախորդների նվաճումների շնորհիվ եգիպտական պետության կազմի մեջ էին մտել Ասորիքը, Պաղեստինը և Նուբիան: Նվաճված ժողովուրդների մեծամասնությունը այս կամ այն ձևով արևի պաշտամունք է դավանել: Ուստի էհնաթոնը համարել է, որ դժվար չի լինի նրանց Աթոնի պաշտամունք պատվաստել, որն այդպիսով կդառնար պետության ընդհանուր, համապարփակ աստվածը: Դրանով իսկ կսկսվեր թված երկրների երկրորդ, այս անգամ իաղաղ նվաճումը, և դավելի ամուր կապեր կստեղծեր, քան զենքի ուժը:

Սակայն գործերը միանգամայն այլ ընթացք են ստացել: Այն ժամանակ, երբ էհնաթոնը արվել է ընտանեկան կյանքի խնդություններին և Աթոնի պատվին հիմներ է հորինել, նրա իշխանությունը սասանվել է, պետությունն սկսել է կազմալուծվել: Կառավարման մեղմ եղանակները հանդես բերել են նրան, որ ասորի իշխանները գնալով ավելի են լկտիացել, զաղտնի հարաբերությունների մեջ են մտել Եգիպտոսի թշնամիների հետ և մեկը մյուսի հետևից թոթափել են կախվածությունը, կոտորելով եգիպտական կայազորները:

Թեև էլ Ամառնայում գտնված գրագրությունից գիտենք, որ Ասորիքում եղած զորավարներն ու կառավարիչները սուրհանդակներ են ուղարկել, տեղեկացնելով նորանոր պարտությունների մասին, և նախազգուշացրել են, որ երկիրը կկործանվի, եթե անհապաղ օգնական ուժեր չհասնեն: Մեգիդո, Ասկաղոն և Գազա քաղաքների կայազորները հուսահատորեն օգնություն են աղերսել, իսկ Երուսաղեմի պարետը գրել է. «Թագավորին առանց այլևայլության ասա՛ իմ թագավորի և տիրոջ ամբողջ երկրին կործանում է սպասում»:

Քայց էճնաթոնը ոչ մի պատասխան չի տվել, կայազորները թողնելով իրենց սեփական բախտին: Ավելին, վերջում նա նույնիսկ թույլ չի տվել իր մոտ գալ սուրհանդակներին, ովքեր վազքով հսկայական տարածութուն են կտրել և, ճանապարհից միանգամայն տանջահար եղած, հույս ունեցել փարավոնից սփոփանք և օգնութուն ստանալու:

Ի՞նչն էր փարավոնի անհասկանալի անտարբերության պատճառը: Վաճկերագրերը այդ մասին ոչինչ չեն հայտնում, և մենք կարող ենք միայն կռահել, թե ինչ է տեղի ունեցել: Էճնաթոնը միշտ սովորեցրել է, որ Աթոնը խաղաղության աստված է, իսկ ինքը, հավանաբար, եղել է պատմության մեջ առաջին պացիֆիստը, որ դատապարտել է պատերազմը: Նրա պետական ամբողջ քաղաքականութունը հիմնվել է այն համոզմունքի վրա, որ նվաճված երկրները պետք է դեպի Եգիպտոսը միտել միայն խաղաղ եղանակներով, նրանց պատվաստելով Աթոնի՝ արևի, սիրո և կյանքի խնդրության աստծո պաշտամունքը: Ուստի կարող ենք ենթադրել, որ Ասորիքից ստացված ողբերգական լուրերը նրան կանգնեցրել են տհաճ երկրնտրանքի առջև՝ կամ ուղղմական օգնութուն ցույց տալ եգիպտական կայազորներին և դրանով իսկ խաչ քաշել իր ողջ վարդապետության վրա, կամ պասսիվորեն հաշտվել ապստամբած տիրույթները կորցնելու մտքի հետ: Դա ողբերգական, անլուծելի խնդիր է եղել, որ կաթվածահարել է փարավոնի կամքը և, հավանորեն, մոտեցրել նրա վաղաժամ մահը: Երբ էճնաթոնը գտնվել է մահվան մահճում, Ասորիքն արդեն կորսված է եղել, և միայն Սեթին ու Ռամզեսն են այն նորից միացրել Եգիպտոսին:

Էճնաթոնը մեռել է մ. թ. ա. 1388 թվականին, կյանքի երեսուներորդ տարում: Նրա մարմինը թաղվել է «Արևավառ հորիզոնի քաղաքի» մոտ դռնվող ժայռափոր դամբարանում: Նեֆերտիտի ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ: Քանի որ պատմութունը լռում է նրա մասին, կարելի է ենթադրել, որ նա մեռել է ամուսնու մահից շատ շանցած:

Էճնաթոնը որդի չի ունեցել, այդ պատճառով գահ է բարձրացել Սմենհքարան՝ նրա ավագ դստեր ամուսինը: Սակայն նա կարճ ժամանակ է թագավորել: Պաշտպանելով աներոջ ռեֆորմները, նա իր դեմ լարել արիստոկրատներին և քրմերին, իսկ սրանք արդեն այնպիսի ազդեցութուն են ունեցել, որ գահընկեց են արել նրան: Նրանից հետո գահը գրավել է Թութանհամոնը՝ էճնաթոնի երրորդ դստեր ամուսինը: Նա ընդամենը տասներկու տարեկան է եղել և հեշտորեն ընկել է Եգիպտոսի իսկական տիրակալների ազդեցության տակ: Այդ պատճառով նա անվանափոխվել է Թութանհամոն, ուրացել աներոջ կրոնը և փոխադրվել Թեբե՝ քրմերի հովանավորության տակ:

Թեղ էլ Ամառնայում կատարված պեղումները պերճախոս կերպով վկայում են, որ «Արևավառ հորիզոնի քաղաքը» լքվել է անասելի հապճեպությամբ: Պալատական կցաշենքերի փլատակներում գտնվել են,

հավանաբար, արքունի սպասավորների կողմից մոռացված և սովամահուժյան մատնված շների ու կովերի ոսկորներ: Տեղափոխության ժամանակ տիրած ահավոր իրարանցման մասին, թերևս, ավելի արտահայտիչ կերպով է խոսում այն փաստը, որ սեպագիր սալիկների արխիվը, որը դիվանագիտական կարևոր գրագրություն է պարունակել, մնացել է իր տեղում:

Արևի աստված Աթոնի մայրաքաղաքի ճոխ շինությունները լքվել ու դարձել են շնագայլերի և շղջիկների ապաստարան: Փլված պատերը շրջակայքի գյուղացիների համար շինանյութի անսպառ աղբյուր են դարձել: Ժամանակի ընթացքում անապատի ավազը ծածկել է տաճարների ու պալատների մնացորդները և դրանք այնպես լավ պահպանել, որ հնագետները հիմա կարող են ամենայն ճշգրտությամբ վերականգնել ռեֆորմատոր փարավոնի մոռացված նստավայրի հատակագիծը:

Թուֆանհամոնը բռնագրավված կալվածքները վերադարձրել է քրմերին, կրկին բացել է նրանց տաճարները և դրանք ապահովել ոսկե ու արծաթե ճոխ ծիսագույքով: Մի ժայռափոր արձանագրության մեջ նա պարծենկոտությամբ հայտարարում է. «Ծս կրկին բնակեցրի Թեբեն, վերականգնեցի լավ օրենքները և ամրապնդեցի արդարությունը»:

Քրմերի դասը լիակատար հաղթանակ է տարել փարավոնի նկատմամբ:

Էհնաթոնի մահից հետո նրա կրոնի դեռևս շատ կողմնակիցներ են մնացել: Ցավով են նրանք նայել խայտառակ անկման հասած «Արևավառ հորիզոնի քաղաքին» և մանավանդ թագավորի լքված, թալանչիների պղծմանը մատնված դամբարանին: Նրանք որոշել են թագավորի աճյունը գաղտնաբար փոխադրել ավելի ապահով տեղ: Նոր դամբարան կառուցելու մասին խոսք լինել չէր կարող. քրմերը կիմանային և կխանդարեին նրանց ծրագրի կատարմանը: Հենց այդ ժամանակ էլ որոշվել է մուսիան զետեղել Էհնաթոնի վոր՝ Թիա թագուհու դամբարանում:

Թուֆանհամոնը թագավորել է ընդամենը վեց տարի և մեռել տասնութ տարեկան հասակում: Գահը զավթել է Թեբեի բարձրագույն քուրմ էյեն, բայց շուտով գահընկեց է արվել նոմարքոս, եգիպտական բանակի գլխավոր հրամանատար Հորեմհեբի՝ փարավոնների XIX դինաստիայի հիմնադրի կողմից:

Հորեմհեբը եղել է արիստոկրատների ամենահետադեմ շրջանների ներկայացուցիչը: Թեբեի քրմերը ամեն բան արել են Էհնաթոնի անունը փառազրկելու համար: Նրանք անարգել են նրան որպես «հերետիկոսի և հանցագործի» և հրամայել են քերել, ջնջել նրա անունը, որտեղ էլ որ այն հանդիպելիս լիներ:

Նրանց հայտնի է դարձել, որ Էհնաթոնի աճյունը փոխադրել են Թիա թագուհու դամբարան: Քրմերը ընկել են դժվարին կացության մեջ: Նրանք սիրտ չեն արել մուսիան տանել ու ոչնչացնել. դա սրբապղծուչ

Թյուն կլինեն, որը կհարուցեր ժողովրդի պարսավանքը, ժողովուրդ, որի մեջ խոր արմատ էր գցել ննջեցելոց պաշտամունքը: Մյուս կողմից, նրանք համարել են, որ հերետիկոսի մնալը դամբարանում պղծում է Թիա թագուհու մումիան: Ուստի նրանք վճռել են թագուհու աճյունը փոխադրել ուրիշ դամբարան, իսկ էհնաթոնի մումիան թողնել տեղում: Սակայն տեղափոխելիս պարզվել է, որ թագուհու՝ մայրու փայտից պատրաստված դագաղը շատ դժվար է տանել դամբարանի նեղ միջանցքով: Այդ պատճառով դուրս է տարվել միայն մումիան, իսկ դագաղը թողնվել է բեկորների կույտի վրա, որտեղ էլ գրեթե երեք հազար երեք հարյուր տարի անց այն գտավ հնագետ Թեոդոր Դեխտը:

Դագաղը բացելով, թեբեյան քրմերը մեկ այլ նպատակ էլ են հետապնդել՝ նրանք մանրազնին ստուգել են դագաղը և ամենուրեք, ուր գրված է եղել էհնաթոնի անունը, սուր գործիքով քերել են այն, նրանք մումիան նույնիսկ հանել են դագաղից և, ասես մկրատով, կտրատել մումիան գոտևորած ոսկե ժապավենի այն մասերը, որտեղ փորագրված է եղել էհնաթոնի անունը, այդ տեղերում թողնելով ձվածիր անցքեր: Դրանից հետո նրանք փակել ու նորից կնքել են դամբարանը:

Դամբարանում ննջեցյալի անվան ոչնչացումը, քրմերի պատկերացումներով, ամենաահավոր վրեժն էր, որպիսին կարելի էր միայն պատկերացնել: Հավատալով գրված խոսքի մոզական ուժին, նրանք խորապես համոզված են եղել, որ մեռածի անվանազրկված հոգին դառնում է ստորգետնյա աշխարհում դեգերող անտուն թափառական: Հավիտենական տառապանքների դատապարտված նրա նմանակը, հուսահատորեն հեծեծալով, թափառում է քառուղիներում ու քաղցը հագեցնում աղբանոցներ նետված նողկալի մնացուկներով:

Ահա թե թեբեյան քրմերն ինչպիսի ահավոր ճակատագրի են արժանացրել այն փարավոնին, որը հանդգնել էր շնագանդել նրանց:

Թուրթանհամոնի դամբարանի հայտնաբերումը

Լորդ Կառնարվոնը անգլիական հարուստ արիստոկրատիայի տիպիկ ներկայացուցիչն էր: Իր ժամանակը նա առավելապես վատնում էր զվարճությունների և ճամփորդությունների վրա, իսկ երբ արվեց ավտոմոբիլի գյուտը, դարձավ առաջին ավտոմոբիլիստներից մեկը Անգլիայում: Շուտով հռչակվեց նրանով, որ ճանապարհներին զարգացնում էր այն ժամանակների համար գլխապտույտ արագություն, սարսափի մատնելով ազարակապաններին ու սալապաններին: 1900 թվականին վրա հասավ անխուսափելի աղետը՝ ավտոմոբիլը շուռ եկավ, իսկ ինքը՝ Կառնարվոնը, լրջորեն վիրավորվեց և ուղեղի ցնցում ստացավ:

Այդ պահից նա հիվանդացավ անբուժելի շնչարգելությամբ: Բժիշկները նրան խորհուրդ տվեցին մեկնել Եգիպտոս, հուսալով, որ այնտեղի շոր և սաք օդը կթեթեացնի նրա տառապանքները: Կառնարվոնը լսեց բժիշկներին, իսկ Եգիպտոս ժամանելով, հետաքրքրվեց այդ երկրի հնաթյուններով: Նա որոշեց բնակութուն հաստատել այնտեղ և իր բոլոր միջոցները հատկացնել հնագիտական որոնումներին:

Նա ինքնուրույն պեղումներ սկսեց, սակայն շուտով եկավ այն համոզման, որ գիտական պատշաճ պատրաստվածություն չունի և անհրաժեշտ է մասնագետ-հնագետի օգնությունը: Նա դիմեց Եգիպտական թանգարանի դիրեկտոր Մասպերոյի օգնությանը, որը Կառնարվոնին հանձնարարեց երիտասարդ եգիպտագետ Հովարդ Քարտերին, անցյալում Պետրիի և Գևիսի աշխատակիցին:

Էհնաթոնի մուսիան և թագավորական բազմաթիվ դամբարաններ հայտնաբերած Թեոդոր Գևիսը վաղուց արդեն պայմանագիր ուներ Արքաների հովտում պեղումներ կատարելու: 1914 թվականին նա այն զիջեց Կառնարվոնին, համարելով, որ ամբողջ հովիտը արդեն հանգամանորեն հետազոտված է: Նույնիսկ Մասպերոն, պայմանագիրը գրելով նոր տիրոջ անունով, ուղղակի ասաց նրան, որ հետագա որոնումներն այդ վայրում համարում է ժամանակի և փողի անօգուտ ծախս:

Կառնարվոնը պայմանագիրը ձեռք բերեց, հետևելով գլխավորապես Հովարդ Քարտերի հորդորներին, որը, ընդհանուր կարծիքին հակառակ, համոզված էր, որ հովտում պետք է թաքնված լինի Թուֆանհամոնի տակավին չգտնված գերեզմանը: Այդ դամբարանի գոյությունը մասին, նրա կարծիքով, վկայում էին զանազան գտածոներ, որ նա հավաքել էր հնագիտական նախորդ որոնումների ժամանակ: Դա ամենից առաջ Թուֆանհամոնի հախճապակյա գաժաթն էր, որ գտնվել էր ավերակների մեջ, փայտյա կոտրված զարդաստուփը, որի ոսկե թերթիկների վրա փորագրված էր նրա անունը, ինչպես նաև կավե մեծ անոթը՝ նրա մարմինը զմուսած մարդկանց թողած վուշի կալանդների մնացորդներով: Առանձնապես ուշագրավ էր, որ Թուֆանհամոնին պատկանած բոլոր առարկաները գտնվել էին միմյանցից փոքր հեռավորության վրա, ուստի կարելի էր ենթադրել, որ ինչ-որ տեղ դրանց հարևանությամբ պետք է լիներ դեռևս չգտնված դամբարանը:

Երբ Կառնարվոնը և Քարտերը ժամանեցին Արքաների հովիտ, այն տխուր պատկեր էր ներկայացնում: Հսկայական գոգահատի ժայռոտ հատակը ծածկված էր քարաբեկորների կույտերով ու փրվածքներով, որ մի ժամանակ այնտեղ թողել էին թագաժոթական դամբարանները փորած եգիպտացի քարտաշները: Քարե շեպերում երևում էին դեպի դատարկ դամբարանները տանող միջին անցքեր:

Որտե՞ղ որոնել և ինչի՞ց սկսել այդ վիթխարի աշխատանքը: Հովտի ամբողջ հատակից քարաբեկորները հեռացնելու մտախն երազել անգամ

չէր կարելի: Հաթկավոր էր ընտրել մի ստույգ սրտոված վայր և շանքերը կենտրոնացնել այնտեղ. այլ ելք չկար: Քարտերն ընտրեց այն վայրը, որտեղ Դևիսը գտել էր արդեն նշված, Թուֆանհամոնին պատկանած առարկաները: Այն կազմում էր Ռամզես II-ի, Մերնեպտի և Ռամզես VI-ի դամբարաններով սահմանափակված մի եռանկյունի:

1917 թվականին արար բանվորների մի բրիգադ վարձեցին և սկսեցին պեղումները: Ամառվա ամիսներին այնտեղ սպանիչ շոգ էր լինում, ուստի կարելի էր աշխատել միայն ձմռանը: Վեց ձմեռ հարկավոր եղավ քարաբեկորների հսկայական կույտերը մաքրելու համար: Արդեն առաջին տարում Քարտերը ժայռի ստորոտում, Ռամզես VI-ի դամբարանից մեկ մետր ցած, դեմ առավ անհայտ պատերի մնացորդների: Հանգամանակից հետազոտության ժամանակ պարզվեց, որ դրանք այն խրճիթների փլատակներն են, որոնցում ապրել են Թագավորական դամբարաններից մեկի շինարարությամբ զբաղված քարտաշները: Դրանք կանգնած էին ոչ թե հովտի կուսական հողի, այլ քարաբեկորների մեկ մետր հաստությամբ շերտի վրա: Այդ շերտը այնտեղ էր մնացել Ռամզես VI-ի դամբարանը կառուցելուց հետո:

Քարտերը որոշեց առժամանակ ձեռք չտալ այդ պատերին, որպեսզի չբարկկաղավորեր վերը գտնվող դամբարանը, որը դեպի իրեն էր ձգում բազմաթիվ զբոսաշրջիկների ու գիտնականների: Սակայն երբ խճի բոլոր կույտերն ու փլվածքները հեռացվեցին նշված ամբողջ եռանկյունուց և դամբարանի ոչ մի հետք չգտնվեց, նա վճռեց քանդել խրճիթների կիսակործան պատերը և հետազոտել դրանց հիմքը կազմած ժայռաբեկորների տակի հատվածը: Վեցամյա տանջալից ու թանկ նստած որոնումներից հետո գա վերջին հույսն էր:

Ահա թե իր հուշերում Քարտերն ինչ է գրել այդ մասին.

Դա պետք է լիներ մեր վերջին ձմեռը հովտում: Վեց ձմեռ մենք այնտեղ պեղումներ կատարեցինք, ամիսներ շարունակ աշխատում էինք առանց հանգստի և ոչինչ չգտանք: Միայն հնագետը կարող է իմանալ, թե դա իմչպես է ճշտում: Մենք արդեն պատրաստ էինք խոստովանել, որ պարտություն ենք կրել, և պատրաստվում էինք հեռանալ հովտից...

1922 թվականի նոյեմբերի 3-ին Քարտերը ձեռնարկեց վերջին որոնումները: Բանվորներն սկսեցին քանդել խրճիթների փլատակներն ու դրանց տակ ընկած քարաբեկորների շերտը: Հաջորդ օրը վաղ առավոտյան Քարտերը նկատեց, որ բանվորները հանկարծ դադարեցրին աշխատանքն ու կարկամած նայում են թարմ փորվածքի մեջ: Նա անմիջապես վազեց այնտեղ և քար կտրած կանգ առավ. փլվածքների տակից ժայռափոր սանդուղքի տատիճան էր երևում:

Այդ պահից բոլորը սկսեցին աշխատել կրկնապատկված եռանդով:

Աստիճանները մեկը մյուսի հետևից դուրս էին գալիս բեկորների տակից, իսկ երբ բանվորները հասան սանդուղքի վերջը, գորշ սվաղով պատված մի կնքված դուռ երևաց:

Կնքված դուռ,— գրել է Քարտերն իր նոթերում:— Ուրեմն, մենք իրավացի էինք: Այս բոլոր տարիների համբերատար աշխատանքն, այնուամենայնիվ, վարձատրված է: Կարծում եմ, ինձ համակած առաջին զգացումը ուրախությունն էր, որ հովտի նկատմամբ ունեցածս հավատը հիմնավորված էր:

Հուզմունքից դողալով, Քարտերը զննեց դամբարանի դռան կնիքը: Արդյունքները գերազանցեցին նրա բոլոր ամենահամարձակ ակնկալիքները: Դա գերեզմանոցի թագավորական վերակացուի անձեռնմխելի կնիքն էր՝ շնագայլի և ինը ռազմագերիների պատկերով: Առանց որևէ կասկածի դա վկայում էր, որ դամբարանը թագավորական է: Ավելին, հիմնավորված հույս կար, որ այն թալանված չէ: Այդ էր վկայում այն տեղը, ուր նա գտնվեց: Ռամզես VI-ի համար ժայռի մեջ դամբարան փորած բանվորները քարի կտորտանքը թեք լանջով ցած են նետել և դրանցով ծածկել ներքևում գտնվող Թուֆանհամոնի դամբարանի մուտքը: Այդպիսով, դամբարանն անհետացել է քարաբեկորների հաստ շերտի տակ: Շուտով դրա մասին մոռացել են, իսկ ավելի ուշ տարիներին դամբարանի վրա բանվորների համար հյուղեր են կառուցվել, որոնք վերջնականապես այն թաքցրել են կողոպտիչներից:

Դռան վերին մասում Քարտերը ոչ մեծ անցք շաղափեց և, էլեկտրական լապտերիկով լուսավորելով, նայեց ներս: Նրա աչքերի առաջ ձգվում էր քարերով, ժայռաբեկորներով լեցուն մի նեղ միջանցք: Այդ ժամանակ Կառնարվոնը գտնվում էր Անգլիայում, նրա բացակայությանը Քարտերը չէր ուզում բացել դամբարանը: Նա հեռագիր ուղարկեց և գրեթե երեք շաբաթ սպասեց Կառնարվոնի ժամանմանը:

Կարելի է պատկերացնել, թե նա ինչպիսի անհամբերությունով էր սպասում Կառնարվոնի գալստյանը:

Դա այնպիսի պահ էր,— գրել է նա,— որը կարող էր հնագետի մարմինը դող զցել: Այնքան տարիների ապարդյուն որոնումներից հետո ես հայտնվեցի, գուցե, շատ մեծ հայտնագործության շեմին: Ամեն, տառացիորեն ամեն բան կարող էր թափնված լինել այդ միջանցքի հետևում, և ես ստիպված էի օգնության կանչել իմ ամբողջ ինֆնատիրապետումը, որպեսզի շենթորկվեմ տեղնուտեղը դուռը շարդելու և որոնումները շարունակելու գայթակղությանը:

Վերջապես, դատեր հետ ժամանեց Կառնարվոնը, և նրանք անհապաղ ձեռնամուխ եղան խորհրդավոր դռան բացմանը: Դա անմշակ քարերից խնամքով շարված և սվաղի շերտով պատված մի բարակ միջնորդ էր: Սակայն նախքան միջնորդը քանդելը, Քարտերը ներքևում մեկ այլ

կնիք տեսավ, որը շահագանց ուրախացրեց նրան, քանզի դրա վրա փորագրված էր Թուֆանհամոնի անունը: Այսպիսով, գտնվեց այն դամբարանը, որ այնպիսի դժվարութեամբ որոնում էին վեց տարի:

Դուռը բացելու հաջորդ ամբողջ օրվա ընթացքում հեռացնում էին քարաբեկորները, որոնցով լցված էր նեղ թեք միջանցքը: Խորքում, մուտքից մոտ տասը մետր հեռավորության վրա, մի դուռ էլ կար, նույնպես Թուֆանհամոնի կնիքով: Հասավ վճռական ակնթարթը: Քարտերը մի անցք շաղափեց և դրա մեջ վառված մոմ մտցրեց ստուգելու համար, թե այնտեղ թունավոր գազեր չկա՞ն արդյոք: Հետո նա վառեց էլեկտրական լապտերիկն ու նայեց ներս, իսկ նրա ընկերները լարված սպասում էին զննման արդյունքներին:

Սկզբում նա ոչինչ չէր տեսնում, բայց կիսախավարում հետզհետե սկսեցին երևալ, ձև ստանալ տարօրինակ կենդանիներ, անդրիններ, անիվներ, արկղեր, սկահակներ, իսկ ամենից առաջ՝ ոսկի: Ուր նայում էր՝ ոսկի էր, որը լապտերիկի լույսի տակ փայլփլում էր անաղարտ մաքրութեամբ: Քարտերը զարմանքից պապանձվեց, իսկ երբ համբերությունը կորցրած Կառնարվոնը նրան հարցրեց, թե նա այնտեղ որևէ բան տեսնո՞ւմ է, դժվարութեամբ կարողացավ արտաբերել. «Օ՛, այո, զարմանահրաշ իրեր»:

Դուռը քանդեցին մեծագույն զգուշությամբ, որպեսզի չվնասեն դրա հետևում գտնվող առարկաներից և ոչ մեկը: Երբ, վերջապես, Քարտերն ու Կառնարվոնը մտան դամբարանի առաջին սենյակը, նրանց խորին հուզմունք համակեց. ախր երեք հազար տարի էր անցել այն ժամանակներից, երբ այդտեղ մարդու ոտք էր դիպել: Այն, ինչ նրանք տեսան այնտեղ, կատարելապես շշմեցրեց նրանց: Սենյակը անկանոն լցված էր բացառիկ գեղեցիկ անհամար առարկաներով: Աստիճանաբար նրանց աչքերն ընտելացան այդ քառսին, և նրանք սկսեցին զանազանել առանձին իրեր:

Պատի մոտ դրված էին երեք ոսկեզօծ մահիճներ, որոնց շրջանակները փորագրիչը քանդակել էր առյուծի, ցուլի կամ գետածի, թե՛ կոկորդիլոս հիշեցնող ֆանտաստիկ արարածների գլուխներ ունեցող պառկած կենդանիների տեսքով: Պատերի մոտ ընկած էին ամբողջովին ոսկեպատ և զարդանկար շորս մարտակառքերի ցիրուցան մասերը: Ոսկեպատ էին նույնիսկ անիվներն ու սոնիները:

Սակայն ամենամեծ տպավորությունը թողեցին որմնաշարված մեկ այլ մուտքի երկու կողմերում ասես պահակ կանգնած, բնական մեծութեան մարդկային երկու ֆիգուրները: Երկար գավազաններ բռնած փայտե արձաններին, որոնց, երևի, նմանություն էին տվել Թուֆանհամոնի հետ, հազցրել էին վուշե շորեր, ոսկե գոգնոցներ և ոսկե սանդալներ: Նրանց գլխներին կային թագավորական նշաններ՝ ոսկեկուռ օձեր: Վեհապալած, անիմանալի իրենց խորթացածության մեջ, նրանք անհանգստություն և սնտախ հարգանք էին առաջացնում:

Կողմնային պատերից մեկի մէջ Քարտերը ևս մեկ մուտք գտավ: Երբ այն բացվեց, նրանք մտան մի քիչ ավելի փոքր սենյակ, որը նույնպես կիսով չափ լցված էր ամենատարբեր իրերով: Իրերն այնպես անկանոն էին ընկած, որ թվում էր, թե երկրաշարժից էին ցիրուցան եղել: Անկասկած, մի ժամանակ կողոպտիչներ են ներխուժել այդտեղ, բայց նրանց կամ խրտնեցրել են, կամ բռնել հանցագործութեան վայրում:

Արվեստի ստեղծագործությունների լուկ թվարկումը մի ամբողջ գիրք կհաղմեր. բավական է ասել, որ կազմված ցուցակում յոթ հարյուր անվանում կար: Ուստի սահմանափակվենք սոսկ ամենաարժեքավոր առարկաների հակիրճ նկարագրութեամբ:

Ամենից առաջ այնտեղ կային ոսկուց, արծաթից, փղոսկրից, ալեբաստրից, սև և մաշրու փայտից վարպետորեն շինված տուփեր: Դրանք ոսկերչական և փորագրման արվեստի իսկական գլուխգործոցներ էին, ճոխ կերպով զարդարված որսի և ռազմի տեսարաններ պատկերող հարթ ու մակադիր դրվագումներով և նկարներով: Այդ տուփերն ամփոփում էին թագավորական ոսկեկար և ուլունքազարդ զգեստներ, ոսկե սանդալներ, ձյունաթույր սպիտակեղեն, ապարոշներ, նախշազարդ թղեզներ, նիզակներ ու կապարճներ, ընծառյուծի մորթուց քրմական հագուստ՝ եզրակարված ոսկե և արծաթե վարդազարդերով, խնչպես նաև անհամար քանակութեամբ այլ իրեր:

Բացի այդ, չափազանց մեծ արժեք էին ներկայացնում ալեբաստրե, ոսկե և բրոնզե դավաթները, պարեն, օրինակ, տապակած բադեր պարունակած սկահակները, խնչպես նաև ոսկե և բրոնզե կանթեղները, որոնցում գեռ պահպանվել էին վուշաթեղից հյուսված պատրույզները: Այնտեղ կային սև փայտից շինված մահիճ, ոսկեզօծ ձուլածո արձանիկներով փոխադրելի զոհասեղանիկներ, գունավոր ապակիով դրվագված կոյաբզեզներ, անթիվ քանակութեամբ ոսկե և հախճապակյա զարդեր, լաջվարդով մակազարդված զանգվածեղ ոսկուց թագավորական զայիսոն:

Հատուկ հիշատակութեան են արժանի ճարտարորեն դրոշմանկարված կաշվե նատլատեղերով ճոխ, զերից վար ոսկով, փղոսկրով, արծաթով և գույնզգույն ապակիով զարդարված աթոռներն ու ծալովի աթոռակները՝ փորագրման արվեստի իսկական գլուխգործոցները:

Դրանց մեջ իր շքեղութեամբ փայլում էր Թուրանհամոնի գահը, վերից վար դրվագված ասեռով, արծաթով, ապակիով, հախճապակով ու կիսաթանկարժեք քարերով: Գահը հենված էր առյուծի թաթերի վրա, իսկ արմնկակալները քանդակված էին թևավոր օձի կերպարանքով: Եզիպտական արվեստի երբեք գտնված շրջուցիչ, գրեթե ամենանրբին ստեղծագործությունը գահի թիկնակն է: Թիկնակին թերթավոր ոսկու վրա դրվագված էր դրասանդներով պատառված սյուներով պալատական դահլիճ: Երդիկից ներս թափանցող արևի ճառագայթների լույսով ողողված

Թուօթանհամոնը ազատ ու անբոնազրոս նատած է բարձիկապատ գահին, մի ձեռքը դրած բազկակալին: Նրա առջև կանգնած է օրիորդի պես գեղ-իբրան թագուհին և անուշահոտ ձեթ է քսում ամուսնուն: Դրվազման եղա-նակով ստեղծված այդ տեսարանը շողշողում է նուրբ, մեղմ գունախա-ղավ: Ամուսինների մարմինները շինված են վարդա-ծանգազույն ապա-կուց, գլխարկները՝ մուգ փիրուզագույն հախճապակուց, զգեստները՝ արծաթից, որը հնությունից ծածկվել է փառի բավական հաստ շերտով: Թագավորական ոսկե զարդերը փայլփլում են, շողշողում գունավոր հախ-ճապակու տարբեր երանգներով:

Քարտերն իրեն հաշիվ էր տալիս, թե ինչ հսկայական, պատասխա-նատու աշխատանք է սպասում իրեն այդ հեքիաթային գանձերը պահ-պանելու համար: Ամենից առաջ հարկավոր էր առանձին առարկաներ տեղում լուսանկարել, նկարել և շափել, ստուգել դրանց դիմացկունու-թյունը հպումների նկատմամբ, արտակարգ զգուշությամբ դուրս հանել գամբարանից, փաթեթավորել և հասցնել Կահիրեի լաբորատորիա՝ պա-հածոյացման նպատակով անհապաղ քիմիական մշակման ենթարկելու: Դրա համար հարկավոր էր ունենալ զիտնականների՝ եգիպտագետների, արվեստի պատմաբանների, քիմիկոսների մի մեծաթիվ շտաբ, հսկայա-կան քանակությամբ արկղեր, քիմիական պատրաստուկներ, ավտոմոբիլ-ներ ու փաթեթավորման նյութեր: Ուստի Քարտերը կողպեց դամբարանն ու մեկնեց Կահիրե՝ լաբորատորիա կազմակերպելու և այդ մեծ աշխա-տանքի համար աշխատակիցներ հավաքագրելու:

Մինչ այս, մինչ այն դամբարանի հայտնաբերման լուրը կայծակ-նային արագությամբ տարածվեց աշխարհով մեկ: Մամուլը ճշան վեր-նագրերով հաղորդում էր Թուօթանհամոնի գամբարանը գանելու մասին, այդ թեմայի շուրջ զգայացունց կոահումներ ու մտացածին բաներ մա-տուցելով: Մորեխների պես Արքաների հովիտ թափվեցին բազմաթիվ գքոսաշրջիկներ, լրագրողներ, հնագետներ, որոնք Քարտերի համար իսկական պատուհաս դարձան:

Յոթ շաբաթից ավելի գանձերը գուրս էին հանում առաջին և կողմ-նային սենյակներից: Բարեբախտաբար, տեղափոխելիս ոչ մի առարկա չվնասվեց, մի բան՝ որ հաշվետվության մեջ Քարտերը հպարտությամբ նշում է որպես իր աշխատակիցների և արաբ բանվորների բացառիկ արժանիք:

Վերջապես, հատավ գլխավոր խուցք բացելու հերթը, որն ամփոփում էր գամբարանի հիմնական գազանիքը: Համայն աշխաբհի ականավոր գիտնականներին և եգիպտական կառավարության ներկայացուցիչներին Քարտերը հրավիրեց մասնակցելու այդ նշանակալից իրադարձությանը: Հյուրերը տոնական տրամադրության մեջ նստեցին առաջին սենյակի պատերի երկարությամբ դրված աթոռների, իսկ Քարտերն սկսեց ան-ձամբ քանդել որմնաշարված մուտքը:

Երբ քարաշեն միջնորմում երևաց առաջին անցքը, ներկաներն ապ-
շեցին: Մեկ մետրից պակաս հեռավորության վրա փայլվեց ուռուցիկ
նախշով պատված և երկնագույն հախճապակիով զարդարված մի ոսկե
պատ:

Որոշ ժամանակ անց ամբողջ մուտքը բաց արվեց, և հեքիաթային
պատի դադունիքը սյարզվեց: Դա մի հսկայական արկղ էր, նման վերնա-
ծածկույթով վարագույրի, իսկ մեջը դրված էր մեռած փարավոնի սարկո-
ֆագը: Քարտերը զգույշ մտավ դելեզմանախուց: Արկղն այնքան մեծ էր,
որ դրա և գերեզմանախցի ժայռոտ պատի միջև սոսկ մի նեղ միջանցք
էր մնացել, որտեղով նա կարող էր անցնել մեծ դժվարությամբ: Այդտեղ
ընկած էին թաղման ամենատարբեր ընծաներ՝ զինու սափորներ, կան-
թեղներ, սկահակներ, ալեբաստրե զավաթներ և ծիսական այլ առար-
կաներ: Խցի պատերը ծածկված էին նկարներով ու հիերոգլիֆներով:

Արկղի կողերից մեկի մեջ ոչ թե կնքված, այլ եբենոսի փայտից
պատրաստված սողնակով փակված երկփեղկ դուռ կար: Քարտերը բացեց
այն ու նայեց ներս: Պարզվեց, որ ներսում նման մի արկղ էլ կա: Դռան
վրայի թաղավորական կնիքն անշափ ուրախացրեց Քարտերին, քանզի
դա երաշխիք էր, որ կողոպտիչները չեն հասել թագավորի սարկոֆագին:
Հետևաբար, Արքաների հովտում թաղված փարավոնների քսանութ գե-
րեզմաններից միայն Թութանհամոնի գերեզմանն էր ավելի քան երեսուն-
երեք դարերի ընթացքում մնացել ձեռք չտված:

Քարտերը նորից ծածկեց դուռը և նեղ միջանցքում շուրջը նայեց:
Պատերից մեկի մեջ նա մի այլ սենյակի շորմնաշարված մուտք նշմարեց:
Շեմքն անցնելով, նա համոզվեց, որ դա հնության հուշարձաններով ծայ-
րից ծայր լցված մի ամբողջ գանձարան է:

Ուղիղ նրա առջև դրված էր ամբողջովին թերթավոր ոսկով պատված
ու ոսկե սրբազան օձերով զարդարված փոխադրելի տուփ-զոհասեղանը:
Չորս պահապան դիցուհիներ, հոգատար կերպով ձեռքերը պարզած, շր-
ջապատել էին այն, ասես սրբությունը պաշտպանելով անկոչ հյուրերից:
Նրանց դեմքերի արտահայտությունը բնական էր ու կենդանի, լի կարեկ-
ցությամբ ու հոգատարությամբ: Ինչպես պարզվեց, տուփը պահարանն
էր ննջեցյալի սրտի, ուղեղի և փորոտիքի, որ հանել էին աճյունը զմըռ-
սելիս:

Սահակողերով ոսկեզօծ դեսպակում ասես քուն մտած պառկած էր
վուշե շորեր հագած Անուբիս շնագայլ-աստվածը: Պատերի մոտ դրված
էին ոսկով ու երկնագույն հախճապակիով դրվագված փղոսկրե, ալեբաս-
տրե ու փայտե բազմաթիվ տուփեր: Բացի ամենօրյա գործածության
մեծաքանակ առարկաներից, դրանց մեջ գտնվում էին նաև Թութանհա-
մոնին պատկերող ոսկե մի քանի արձանիկներ և զարմանալիորեն լավ
պահպանված, ջայլամի փետուրներից պատրաստված մի հովհար: Խցում
կար նաև մեկ մարտակառք, ինչպես նաև առագաստանավակների մի

քանի մողելներ: Ի տարբերութիւն թաղման մյուս սենյակների, այդտեղ կողոպուտի ոչ մի հետք չկար. առարկաներն այն նույն տեղերում էին, ուր թաղման արարողութիւնների ժամանակ դրել էին եգիպտացի քրմերը:

Միայն երկարատե նախապատրաստական աշխատանքից հետո ձեռնամուխ եղան դագաղային ոսկեպատ արկղերը բացելուն: Պոկեւով թագավորական կնիքները, Քարտերը բացեց առաջին և երկրորդ երկփեղկ դռները: Այդտեղ նրան նոր անակնկալ էր սպասում. ներսում կային նախորդ երկու արկղերից ոչ պակաս գեղեցիկ ևս երկու արկղ: Հերթով դրանք բացելով, նա, հուզված ու ապշած, հայտնվեց թագավորի սարկոֆագի առաջ: Դեղին կվարցիտից տաշված սարկոֆագը դրված էր ալեբաստրե հաստ սալի վրա ու ծածկված վարդագույն գրանիտե կահարիչով: Չորս անկյուններում երևում էին հոգատար կերպով ձևոքերը պարզած ու թևատարած դիցուհիների բարձրաքանդակները:

Նախքան սարկոֆագը բացելը, անհրաժեշտ էր դուրս հանել շորս արկղ վարագույրները: Դա գրեթե երեք ամիս խլեց, քանզի արկղերից յուրաքանչյուրը բաղկացած էր կեռիկներով և ունկերով միացած ութսուն ծանր ու փխրուն մասերից: Դամբարանից դրանք դուրս հանելու համար Քարտերը ստիպված էր քանդել զլխավոր խուցը առաջին սենյակից բաժանող պատը: Ըստ որում, ի հայտ եկան մարդկային պատմութեան մեջ թերևս ամենահին խոտանարարութեան հետքերը: Չնայած բոլոր մասերը համարակալված էին, եգիպտացի բանվորները դրանք միացրել էին ոչ ճիշտ հաջորդականութեամբ, այնպես որ դրանք բավականաչափ կիպ չէին կպած իրար: Բացի այդ, ոսկեթերթ երեսապատվածքն ու զարդանկարը շատ տեղերում վնասված էին, իսկ սարկոֆագի մոտ մնացել էին փայտի տաշեղներ ու կտորտանք:

Ճոպանների և ամբարձիչների ժողովութեամբ բարձրացրին սարկոֆագի ծանր կահարիչը: Դագաղը ծածկված էր քաթանե պատանով, որը հնանալուց դարձել էր ժանգա-դարչնագույն: Մումիաձև ունեցող փայտյա դագաղը պատված էր ոսկե թերթերով, իսկ փարավոնի գլուխն ու ձեռքերը հին վարպետը դրվագել էր ոսկու հաստ թերթից: Գլխի հանդարտ գեղեցկութիւնը, խորհրդավոր, մտախոհ դեմքը, հրաբխային ապակուց շինված աչքերը, փիրուղագույն ապակուց շինված ունքերն ու կոպերը խորապես հուզիչ տպավորութիւն էին թողնում: Ճակատին փայլում էր թագավորական արժանապատւութեան խայտանկար նշանը՝ Վերին ու Ստորին Եգիպտոսները խորհրդանշող օձն ու արծիվը:

Քարտերի ուշադրութիւնը գրավեց առաջին հայացքից սակավանշանակ մի մանրամասն:

Բայց այն, — գրում է նա, — ինչը այդ շլացուցիչ հարստութեան մեջ ամենամեծ տպավորութիւնը թողեց մեզ վրա, դաշտային ծա-

դիկներից հյուսված, սրտանմիկ փոփոխի պսակն էր, որ դեռուսաբայրին դրել էր դագաղի մեջ: Թագավորական ողջ շփեղութունը, թագավորական ողջ մեծաշուքութունը դժգունեցին այդ թոշնած ծաղիկների փնջի առաջ, որոնք տակավին պահպանել էին իրենց վաղեմի վառ գույներն հետքերը: Անդիմադրելի ուժով գրանք մեզ հիշեցրին, թե ինչպիսի կարճատև ակնթառք են հագարամյակները:

Բարձրացված կափարիչի տակ երևաց երկրորդ դագաղը, որ փարավոնին ներկայացնում էր Օսիրիս աստծո կերպարանքով: Դրա ոսկին, հասպիսե, լաջվարդե և փիրուզագույն ապակյա զարդերը աչք էին կուրացնում: Դա փորագրիչների ու ոսկերիչների ապշեցուցիչ արվեստի գեղարվեստական անգնահատելի արժեքի ստեղծագործություն էր:

Ամենամեծ անակնկալը Քարտերին սպասում էր երկրորդ կափարիչը բացելիս: Դրա տակ գտնվում էր մարդու մարմնի ձևով երրորդ դագաղը, ամբողջովին պատրաստված հաստ թերթավոր ոսկուց և այնքան ծանր, որ ութ բանվորներ հազիվ կարողացան տեղաշարժել: Դրա պատրաստման վրա օգտագործված մետաղը միայն հսկայական արժեք էր ներկայացնում: Դագաղը զարդարված էր կիսաթանկարժեք քարերով, իսկ փարավոնի պատկերը՝ կարմիր, դեղին, երկնագույն և ոսկե ուլունքներից շարված մանյակով: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ գանձեր եղած կլինեն թագավորական մյուս համբարաններում, եթե երիտասարդ ու նվազ նշանավոր փարավոնին թաղել են այդպիսի շքեղությամբ:

Դագաղում հանգչող մումիան ածխացել էր ու պատված էր ինչ-որ բուրավետ, խեթանման զանգվածով: Բայց մումիայի գլուխն ու ձեռքերը ծածկված էին ոսկե դիմակով, որը պատկերում էր երիտասարդ փարավոնի տրտում և մտախոհ դեմքը: Չեռքերը, նույնպես ոսկեքանդակ, խաչված էին կրծքին: Երբ հանեցին դիմակն ու բացեցին կալանդները, երևաց մումիայի իսկական դեմքը: Եվ այդ ժամանակ ակներև դարձավ, որ գամբարանում արված բոլոր դիմակները, քանդակներն ու նկարները աներկբայորեն նման են փարավոնին, մի բան, որը վկայում էր, թե եղիպտացի նկարիչներն ինչքան ունախատորեն են ձգտել վերստեղծելու մեռած թագավորի պատկերը:

Կազմախոս դոկտոր Դերին անմիջապես ձեռնամուխ եղավ թագավորի աճյունի գննմանը: Կալանդները բացելիս առանձին շերտերում գտնվեցին գեղարվեստական անգնահատելի արժեք ներկայացնող հարյուր քառասուններեք առարկաներ՝ ապարոշներ, դաշույններ, համայիլներ, մանյակներ, ապարանջաններ ու մատանիներ: Չեռքերի և ոտքերի մատները դրված էին ոսկե հատուկ պատյանների մեջ, որոնց վրա եղունգներ էին փորագրված: Սակայն ամենամեծ հուզմունքը առաջացրին երկաթյա երկու առարկաները՝ դաշույնը և սնարը. դրանք հնագույն ապացույցն էին այն բանի, որ Եգիպտոսում երկաթն արդեն գործածվելիս է եղել:

Գոկտոբր Դերին պարզեց, որ Թուֆանհամոնը մեռել է տասնութ կամ տասնինը տարեկան հասակում, սակայն շկարողացավ գտնել նրա վաղաժամ մահվան պատճառը:

Այդ բոլոր հայտնագործությունները բուլվարային թերթերի էջերում դպայացունց և անհեթեթ բամբասանքներ առաջացրին, իբր դամբարանի բացման հետ այսպես թե այնպես առնչված մարդիկ դառնում են փարավոնի անեծքի զոհը: «Փարավոնի վրեժը» կամ «Փարավոնի անեծքի նոր զոհը» ճշան խորագրերով լրագրողները հայտնում էին Քարտերի մերթ մեկ, մերթ մյուս աշխատակցի մահվան մասին:

Մնտաի լուրերը առանձնապես լայնորեն սարածվեցին, երբ 1923 թվականին մոծակի խայթոցից անսպասելի մահացավ լորդ Կառնարվոնը: Ահա թե հետագա տարիների ընթացքում ինչ էր հաղորդում մամուլը: Յոթանասունութամյա լորդ Ուեսթբրին ինքնասպան եղավ, իսկ նրա որդին՝ Քարտերի նախկին քարտուղարը, մեռավ խորհրդավոր հիվանդություներից: Արշիբալդ Ռեյդը տեղնուտեղը մեռավ, երբ ուղում էր հանել մոմիայի ունտզենյան լուսանկարը: Մեռան նաև Քարտերի աշխատակիցներ, եզիպտագետ Արթուր Վեյգելը և Ա. Ք. Մեյսը, ըստ որում մամուլը լռեց այն մասին, որ վերջինս արդեն Թուֆանհամոնի դամբարանում աշխատելու ժամանակ էր անբուժելիորեն հիվանդ: Բամբասանքները հիստերիայի փոխվեցին, երբ Կառնարվոնի խորթ եղբայրը լնքնասպանություն գործեց, իսկ վերջինիս դուստրը մեռավ ինչ-որ միջատի խայթոցից:

Վերջապես, երբ մամուլը հաղորդեց, որ Քարտերն էլ անեծքի զոհ դարձավ, հնագետը բողոքեց և հրասլարակավ լուրերը նշավակեց որպես մտավորական մարդկանց ոչ վայել անհեթեթություններ, ընդգծելով, որ եզիպտական ծեսում անեծքի հասկացություն ընդհանրապես գոյություն չունի, և որ մեռածները միայն խնդրում են հոգ տանել իրենց մասին և աղոթել քնդերկրյա աշխարհում իրենց հաջողությունների համար: Այն փաստը, որ իր մի քանի աշխատակիցները մեռել են կարճ ժամանակահատվածում, Քարտերը բացատրեց հանգամանքների պատահական դուրսդուրյալ հասակը կամ երկարատև հիվանդությունը: Դանդություններ լի իր բողոքը Քարտերը այսպես եզրափակեց. «Մարդկությունը բարոյականության բնագավառում ավելի քիչ առաջադիմության է հասել, քան մենք դա առհասարակ պատկերացնում ենք»:

Լրագրային կեղծիքը վերջնականապես մերկացրեց գերմանացի եզիպտագետ, պրոֆեսոր Շտեյնդորֆը: 1933 թվականին հրատարակված գրքույկում նա քննության առավ մահվանյ յուրաքանչյուր առանձին դեպքը և սպացուցեց, որ մամուլի թված անձանցից շատերը ոչ մի առնչություն չեն ունեցել Թուֆանհամոնի դամբարանի հետ: Ուստի նա հանգեց այն եզրակացության, որ այդ ամբողջը հերյուրել են բուլվարային մամուլի՝ սենսացիայի հետևից ընկած լրագրողները:





Էգեյան աշխարհի բեօրրանում

Պատանեկության երազանքներից հավատարիմ մնացած մարդը

XIX դարում հնազիտությունը գեռևս սեփական ստույգ եղանակներ ունեցող գիտություն չէր: Դրա ամենաերևելի ներկայացուցիչները հաճախ մասնազիտական բարձրագույն կրթություն չեն ունեցել, պեղումների ժամանակ չեն կիրառել արդեն մշակված եղանակներ և, ավելին, պատահել է, որ ընդհանրապես ոչ մի կրթություն չեն ունեցել:

Այդուհանդերձ, նրանք բեկումնային հայտնագործություններ են արել: Նրանց շնորհիվ կորուսյալ անցյալում հայտնաբերվեցին մի ժամանակ հարուստ մշակույթներ, տաճարների և պալատների փլատակներ, արվեստի մոռացված ստեղծագործություններ, որոնց մասին անորոշ տեղեկություններ էին պահպանվել լոկ առասպելներում, ավանդազրույցներում և պոեզիայում և որոնց պատմաբանների մեծամասնությունը վերաբերվում էր որպես իրական որևէ հիմքից զուրկ հեքիաթների:

Ի՞նչն էր այդ մարդկանց մղել հնազիտական որոնումների: Նրանց 11 Երբ արևը աստված էր

մեջ, հավանորեն, եղել են նաև սովորական բախտախնդիրներ, որոնց խիստ շահադիտական նպատակ է հրապուրել՝ ձեռք գցելով թաքնված գանձերը, իրենց համար հեշտ կյանք ապահովել: Նրանք մեծ մասամբ, անհաջողություն են կրել, իսկ եթե ինչ-որ հայտնագործություններ են կատարել, դրանք անհայտ են մնացել, քանզի գաղտնի են պահվել, որպեսզի թալանը չհայտնաբերվեր:

Բայց եղել են նաև ֆանտաստ-երազողներ, որոնց առաջնորդել է հայտնագործությունների անզսպելի ծարավը: Մեկ անգամ ոգևորվելով որևէ վսեմ գաղափարով, նրանք անհաղթահարելի հաստատակամությամբ հասել են իրենց առաջին հայացքից աներևակայելի թվացող, նպատակներին, խուլ մնալով շրջապատողների ծաղրի ու հորգորների նկատմամբ: Մեծ մասամբ այն, ինչը բոլորի կողմից համարվել է միամտություն և անիմաստ կիրք, անսխալ բնազդ է եղել, որը ուղիղ ճանապարհով նրանց մղել է ապշեցուցիչ հայտնագործությունների: Այդ թվացյալ անգեղությունները, ըստ էության, արտասովոր մարդիկ էին, օժտված վառ, ստեղծագործական երևակայությամբ: Բացի այդ, նրանք աչքի են ընկել ուժեղ, համառ բնավորությամբ, մրջնի աշխատասիրությամբ և իրենց նպատակադրումների ճշտության նկատմամբ աներեր հավատով:

Հետազոտողների այդ տիպի ներկայացուցիչն էր XIX դարի ամենակարկառուն հնագետներից մեկը՝ Հենրիխ Շլիմանը (1822—1890): Նրա կենսագրությունն ասես ամբողջովին փոխ է առնված արկածային վեպից: Բայց եթե մի որևէ հեղինակ հորիներ այն ամենը, ինչ ապրեց այդ մարդը, նրան, երևի, հանդիմանեին երևակայության չափից դուրս խելահեղ խաղի համար:

Շլիմանի հայրը Մեկլենբուրգ փոքրիկ քաղաքում աղքատ բողոքական պաստոր էր: Չի կարելի ասել, թե նա ամենեին մեղավոր չէր, որ աղքատ էր. ծեր պաստորը չափազանց հաճախ էր կոնժոմ: Բացի այդ, նա այրի էր, խնամքի տակ վեց երեխա ուներ: Հետևաբար, ընտանեկան պայմանները, որոնցում Հենրիխն անցկացրեց կյանքի առաջին տարիները, այնքան էլ չնպաստեցին նրա զարգացմանը:

Բայց ծեր Շլիմանը մի արտասովոր հատկանիշ ուներ, որի շնորհիվ առանձնանում էր իր դժգույն շրջապատում՝ նա Հոմերոսի ինքնամոռաց երկրպագուն էր և այդ սերը մանկուց պատվաստեց Հենրիխին: Երեխաների ճիշերում և հարբած պաստորի երգերում Ագամեմնոնի, Աքիլլեսի, Ոդիսևսի և Մենելայոսի անունները շարունակ կրկնվում էին մերձավոր հարազատների անունների պես:

1829 թվականին յոթամյա Հենրիխը ծննդյան տոներին նվեր ստացավ ժերերի «Ընդհանուր պատմությունը»՝ էջով մեկ արված փորագրանկարներով զարդարված մի հրաշալի գիրք: Տղայի գանգրահեր գլուխը խոնարհվեց մի նկարի վրա, որը պատկերում էր վառվող Տրոյան, որտեղից էնեասը շալակած դուրս էր տանում զառամյալ հորը՝ Անքիլլին:

Ահա թե ինքը Հենրիխն ինչպես է այդ պահը վերհիշում իր «Իլիոն» գրքում.

«— Հայրիկ,— հարցնում է տղան,— դու ասում էիր, չէ՞, որ Տրոյան հողին են հավասարեցրել:

— Այո...

— Եվ նրանից ոչինչ չի՞ մնացել:

— Բնավ ոչինչ...

— Բայց ժերերը պետք է տեսած լիներ Տրոյան, այլապես ինչպե՞ս կարող էր այն նկարագրել:

— Հենրիխ, ախր դա երևակայությամբ է նկարված:

Տղան մի պահ մտածեց, ապա նորից հարցրեց.

— Հայրիկ, Տրոյայում իրոք այնպիսի հսկայական պատեր են եղե՞լ, ինչպես նկարում է:

— Հավանաբար, այո:

— Այդ դեպքում,— հաղթականորեն ճշաց տղան,— դրանք չէին կարող անհետ կորչել: Այդ պատերի մնացորդները պետք է ինչ-որ տեղ ծածկված լինեն հողի տակ: Օ՛հ, ինչքան կուզենայի բացել դրանք: Հայրիկ, երբեք էս կգնամ այնտեղ և փորելով բաց կանեմ դրանք:

Ծեր Շլիմանին ձանձրացրին երեխայի հարցերը, և նա խույս տվեց.

— Դա ինձ չէր զարմացնի... Բայց հիմա լուռ մնա, ես ուզում եմ մի քիչ քնել»:

Փոքրիկ Հենրիխը ձգտում էր գիտելիքների, բայց հոր հարբեցողությունը հանգեցրեց նրան, որ կարիքը հաստատուն տեղ գտավ նրանց տանը: Այդ պատճառով տասնչորս տարեկան հասակում նա ստիպված էր թողնել դպրոցն ու աշակերտություն անել Տյուրստենբերգ փոքրիկ քաղաքի մի խանութում:

Նա աշխատեց ավելի քան հինգ տարի, վաճառելով հարինգ, օղի, կաթ ու աղ, մաքրելով խանութը և ուժից վեր ծանրություններ քարշ տալով:

Ես մեջք էի ծռում,— գրում է նա իր հուշերում,— առավոտվա ժամը հինգից մինչև երեկոյան ժամը տասնմեկը և ոչ մի ազատ ժամ չունեի գիրք կարդալու համար:

Մի անգամ, երբ նա մեռակ էր, անվստահ քայլերով կրպակ մտավ թունդ հարբած ջրաղացպան Նիդերհոֆը՝ քաղաքում հայտնի խենթը: Մի ժամանակ նա պաստոր էր, բայց հարբեցողության համար եկեղեցական իշխանությունները նրան զրկել էին հոգևոր աստիճանից:

Օրորվելով, այցելուն դերասանի պես հերոսի կեցվածք ընդունեց և սկսեց հունարեն արտասանել Հոմերոսից:

Ճիշտ է, Հենրիխը ոչինչ չէր հասկանում, բայց հեկզամետրի երգեցիկ, ռիթմիկ արտասանությունը նրա վրա ներգործում էր տարաշխար-

հիկ արբեցուցիչ երաժշտության պես: Նա լսում էր, և նրա աչքերը վառվում էին, նա շէր կարողանում հագենալ իրեն անծանոթ լեզվի կախարդական ուրիշից: Հենց որ ասմունքողը լսում էր, Հենրիխը դողացող ձեռքով գրպանից հանում էր վերջին կոպեկներն ու խրախուսելու համար նրա համար օղի էր գնում: Այդ կախարդական արտասանությունն ընդհատեց հանկարծակի հայտնված խանութպանը, որը դուրս վռնդեց հարբածին:

Այն ժամանակվանից,— գրում է Շլիմանը,— ես անդադար աղոթում էի աստծուն, որ նրա ողորմածությամբ հունարենը սովորելու երջանկությունն ունենամ:

Տղան այլևս միայն Հոմերոսի մասին էր անըջում: Հասակակիցների հետ անվերջ խոսում էր Տրոյայի և այն մասին, որ երբևէ կմեկնի որոնելու նրա ավերակները: Բանը հասավ այնտեղ, որ քաղաքի ամբողջ ջահելությունը սկսեց նրան խենթ համարել և ուզածի շափ ձեռք էր առնում: Միայն գյուղացի հարևանի աղջիկը՝ Միննա Մայնկեն էր լրջորեն վերաբերվում նրա մտադրություններին և ուշագրությամբ լսում երազողի պատմությունները:

Երիտասարդները երգվեցին մինչև գերեզման սիրել միմյանց ու վճռեցին ամուսնանալ, հենց որ մեծանան: Ազատ ժամանակ նրանք հաճախ գնում էին Անկերսհագեն ամրոց, ուր, ըստ ավանդության, ավազակ ասպետ Հենինգ ֆոն Հոլշտայնը հորել էր թափառական փերեզակներից մեծ ճանապարհների թալանած գանձերը: Հենրիխը որոշել էր գտնել այդ գանձերը և ստացած փողով մեկնել որոնելու տրոյական ավերակները:

Մինչդեռ ընտանեկան հարաբերություններն այնքան էին վատացել, որ Հենրիխն այլևս չէր կարող մնալ տանը: Նա մեկնեց Համբուրգ և ծառայության մտավ գաղութային ապրանքների առևտրականի մոտ: Սակայն կրպակում աշակերտի պարտականությունները այլևս ուժից վեր էին նրա համար: Մի անգամ, երբ նա բարձրացրեց հարինգով լի տակառը, նրա կոկորդից արյուն հորդեց: Հարկ եղավ այլ զբաղմունք որոնել:

Դիպվածն այնպես տնօրինեց, որ այդ ժամանակ Վենեսուելա էր մեկնում «Դորոթեա» առևտրական նավը: Առանց երկար-բարակ մտածելու Հենրիխը գնաց նավապետի մոտ և խնդրեց իրեն վերցնել որպես փոքրավոր: Բաց ծովում վրա է տալիս փոթորիկը, և նավն սկսում է սուզվել: Հենրիխն ութ ընկերների հետ հայտնվում է փրկանավակում: Մոլեգնած ալիքները ինը ժամ նրանց այս ու այն կողմ են քշում և, վերջապես, դուրս նետում հոլանդական ափ: Նավաբեկությունից տանջահար եղած մարդկանց տեղավորում են Ամստերդամի հոսպիտալում:

Մի քանի օր անց ուշքի գալով, Հենրիխն սկսում է աշխատանք որոնել: Երկարատև որոնումներից հետո, նա, որ ոչ միջոց ուներ և ոչ էլ տանիք գլխավերևում, վերջապես, իբրև հանձնակատար ընդունվեց մի

հռչանդացի առևտրականի մոտ: Այս անգամ Շլիմանը որոշեց ավելի խելացի տնօրինել իր ժամանակը և ազատ ընկերներին օտար լեզուներ ուսումնասիրել: Այդ ժամանակվանից նա իր շնչին ոտճիկի կեսը ծախսում էր դասագրքերի վրա: Նա բնակութուն հաստատեց ձեղնահարկում, որտեղ ձմռանը մրսում էր, իսկ ամռանը շոգից գիտակցութունը կորցնում:

Դա յուրօրինակ ուսումնառութուն էր: Դրա էութուն այն էր, որ նա բարձրաձայն հատվածներ էր կարդում գրքերից կամ խոսակցութուններ՝ ինքնուսույցներից և դրանք բերանացի անում: Դրա պատճառով նույնիսկ անախորժութուններ էին ծագում, որովհետև հարևանները գանգատվում էին տանտիրոջը, և վերջինս նրան երկու անգամ զրկեց բնակարանից:

Շուտով պարզվեց, որ Հենրիխն օժտված է լեզուներ սովորելու բացառիկ ընդունակությամբ: Մի լեզու սովորելու համար նրանից պահանջվում էր վեց շաբաթից ոչ ավելի: Մեկ տարվա ընթացքում նա արդեն ազատ խոսում ու ճիշտ գրում էր անգլերեն, ֆրանսերեն, հոլանդերեն, իսպաներեն, պորտուգալերեն և իտալերեն:

Երբ մի անգամ նա հայտնվեց Շրյոդերի առևտրական ֆիրմայում, հաշվետարի պաշտոն խնդրելով, ֆիրմայի տերը զարմացավ, որ այդ գունատ, վեհերոտ և անբարետես պրակտիկանտն ազատ տիրապետում է յոթ լեզուների, և անմիջապես նրան աշխատանքի ընդունեց:

Նոր աշխատանքում Շլիմանը այլ շնորհքներ էլ դրսևորեց. պարզվեց, որ նա մի ճարպիկ, հաջողակ առևտրական է, կարողանում է շատ շահավետորեն իրականացնել առևտրական ամենաբարդ գործարքները:

Քսանչորս տարեկան հասակում նա այնքան լավ սովորեց ուսներեն, որ կարող էր ազատ խոսել հնդկական այն ժամանակ գնայուն ինդիգո կապույտ ներկանյութը գնելու համար Ամստերդամ ժամանող ուս վաճառականների հետ: Հենրիխի ուսներենի հիանալի իմացութունը Շրյոդերին դրդեց նրան ուղարկել Պետերբուրգ՝ որպես իր ներկայացուցչի:

Մի տարի անց Շլիմանը հիմնեց իր սեփական ֆիրման: Նրա գործերը ընթանում էին սպասվածից շատ ավելի լավ: Ռուսական շուկա ինդիգո ներմուծելով, նա կարճ ժամանակում բավական մեծ կապիտալ ձեռք բերեց:

Մարդիկ մեծ մասամբ շուտ են մոռանում իրենց պատանեկան ձգտումները, իսկ եթե հիշում էլ են, ապա ներողամիտ ժպիտով, դրանք համարելով երեխայական երազանքներ: Բայց Հենրիխ Շլիմանն այլ խմորից էր թխված: Հենց որ նա կապիտալ ձեռք բերեց, նամակ գրեց իր մանկության ընկերուհուն, նրան առաջարկելով ամուսնանալ իր հետ: Պատասխանը խորապես ցնցեց նրան. գործնական գերմանուհին, չսպասելով իր խելառ ընկերոջ վերադարձին, ամուսնացել էր:

Հուսախաբված, բայց կյանքի նկատմամբ հավատը չկորցրած Շլիմանը դրանից հետո շատ ճամփորդեց Եվրոպայում: Եղավ Բեռլինում,

Փարիզում և Լոնդոնում, ամենուրեք բազմապատկելով իր կապիտանները և յայնքի երեսուներեքերորդ տարում նա արգեն տասնհինգ լեզու գիտեր: Արդեն նշված յոթ լեզուներից բացի, նա սովորեց լեհերենը, շվեդերենը, նորվեգերենը, շեխերենը, դանիերենը, լատիներենը, ինչպես նաև հունարենը՝ հին և ժամանակակից: Նա պարզորոշ գիտակցում էր իր կրթության թերությունները և յուրաքանչյուր ազատ րոպեն նվիրում գիտական պարապմունքներին, մանավանդ պատմության ուսումնասիրությանը:

Ինձ պակասում են դպրոցը և ընդհանուր կրթությունը, ես երբեք գիտնական չեմ դառնա,— մի անգամ գրեց նա իր օրագրում:

Պատանեկության իղձերը չէին լքում նրան, թեև նա մինչև ականջները խրվել էր առևտրական գործերի մեջ, կատարելով միլիոնանոց շրջանառություններ: Այդ ամենը նա համարում էր միայն նպատակին հասնելու միջոց, կարևոր լոկ այնքանով, որքանով իրեն մոտեցնում էր երբևէ երազածին: Ազատ ժամանակ նա Սոփոկլեսի գործերը թարգմանում էր ժամանակակից հունարեն ու անգիր անում Հոմերոսի բոլոր երկերը, խորամուխ լինելով ամենաչնչին, քննադատների կողմից չնկատված կամ չգնահատված մանրամասնությունների մեջ: Չնայած ժամանակակից խոշորագույն պատմաբաններն «Իլիականը» ու «Ոդիսականը» րանաստեղծական երևակայության արդյունք էին համարում և համոզված էին, որ Տրոյան իրականում գոյություն չի ունեցել, Շլիմանը երբեք չէր երկմտում իբ համոզմունքներում: Նա գիտեր, որ հույն մեծ պատմագիրները Հերոդոտի և Թուկիդիդեսի գլխավորությամբ կասկածի տակ չեն առել Տրոյական պատերազմի պատմականությունը, թեև Հոմերոսի պոեմում հաճախ խոսքը մարդկանց օգնող աստվածների և գերբնական բաների մասին է:

Ճանտաստիկ գծերին նա հակադրում էր «Իլիականի» և «Ոդիսականի» առաջնական տեսարանները: Ամենօրյա կյանքի, պալատների և աղքատ հյուղակիների, ինչպես, օրինակ, «Ոդիսականում» խոզապահի հյուղակի, երկրագործության և ծովագնացության, զենքերի, կանանց տնային զրազմունքի, հագուստի և զարդերի նկարագրությունները Հոմերոսի մոտ այնքան հանգամանալից են, որ դժվար թե այդ ամենը ծագեր միայն բանաստեղծի երևակայության մեջ: Ծիշտ այդպես էլ Հոմերոսի աշխարհագրությունը ևս հիմնվում է Միջերկրական ծովի ցամաքների ու կղզիների մասին ստույգ տվյալների վրա: Ու թեև տեղ-տեղ բանաստեղծը, երևակայությանը թույլ տալով հրապուրել իրեն, մտնում է հեքիաթների երկիրը՝ Կիբլեի կղզին, կիկլոպների երկիրը կամ Հագեսը նկարագրելիս, դա սակայն խաչ չի քաշում նրա աշխարհագրական իրազեկության վրա:

Սակայն երազանքի իրականացման ժամանակը տակավին չէր եկել: Շլիմանին առժամանակ մի ուրիշ գործ կլանեց: 1848 թվականին Կալիֆոռնիայում ոսկի գտնվեց: Շուտով դեպի այնտեղ, ասես դեպի ավետյաց երկիր, սկսվեց ժողովուրդների մեծագույն գաղթը խաչակրաց արշա-

վանքների ժամանակներից ի վեր: Մարդկանց անզսպելի ամբոխները շարժվում էին Միացյալ Նահանգների մի ծայրից մյուսը, կտրում տափաստանները, անապատներն ու անտառները, անցնում գետերն ու ճահիճները, բարձրանում ժայռոտ լեռների ու Միեռա Նևադայի լեռնանցքները: Ոսկու տենդը համակել էր ոչ միայն ամերիկացիներին, այլև եվրոպացիներին: Հարստություն որոնող ճղճղան, կովարար ու գինարբուքների սիրահար խաբեբանների, թափառաշրջիկների, արկածախնդիրների ալիքը ողողեց Կալիֆոռնիան: Ամառի վայրերում շուտով հայտնվեցին տախտակաշեն ավաններ՝ պանդոկներով և մոլեխաղերի որջերով, ուր և՛ ծեծկլբաուքները, և՛ սպանությունները զարմանալի բաներ չէին:

Շլիմանի պես մարդու համար դա փոքր գայթակղություն չէր: Նա մեկնեց Կալիֆոռնիա, փայտաշեն մարագում գրասենյակ բացեց և մեծ շահով սկսեց ոսկի գնել ոսկեխույզներից, որոնց անհապաղ փող էր պետք խմելու և մոլեխաղերի համար: Նույնիսկ տիֆով հիվանդանալով, նա չդադարեցրեց իր գործարքները. հրամայեց իրեն պառկեցնել գրասենյակի հետնամասում և, անկողնում պառկած, անձամբ ղեկավարում էր գործարքները:

Այդ ձևով բազմապատկելով իր կապիտալը, Շլիմանը հեռացավ Կալիֆոռնիայից և մեկնեց ճանապարհորդության նախ Կահիրե, ապա Երուսաղեմ և Անդրհորդանան: Միաժամանակ սովորեց արաբերեն: Նա արաբերեն այնքան լավ գիտեր, որ արաբներն անգամ չէին կռահում նրա օտարերկրացի լինելը: Նա նույնիսկ այն ժամանակների համար մի շափազանց հանդուգն արարք կատարեց. հագնվեց արաբի պես, ապահովության համար իրեն թլպատեց և թափանցեց Մեքքա, ուր անհավատների մուտքը արգելված է մահվան սպառնալիքի տակ:

Դրանից հետո Շլիմանը մեկնեց Հունաստան՝ իր մանկական իղձերի երկիրը: Երբ նա ոտք դրեց Իթակեի՝ Ողիսևսի հայրենիքի ափին, նրան խորին հուզմունք համակեց: Նրան թվաց, թե ինքը Ողիսևսի նման աշխարհով մեկ երկար տարիների թափառումներից և ամեն տեսակ արկածներից հետո, վերջապես, վերադարձել է հայրենիք: Նա ծնրադրեց և արցունքն աչքերին համբուրեց հողը: Կղզիաբնակները զարմանքով էին նայում օտարականին, որն իրեն այնպես տարօրինակ էր պահում:

Իթակեում նա սկսեց հնագիտական առաջին պեղումները՝ փորձնական փորվածք արեց այն վայրում, ուր, ըստ ավանդության, եղել էր Ողիսևսի պալատը: Այնտեղ գտնվեցին մարդու ոսկորներ, զոհադանակ, աստվածների թրժակավե արձանիկներ և այլ մանրուք: Իթակեից նա գնաց Պելոպոնես, այնուհետև անցավ Դարդանելն ու հետախուզեց այն հովիտը, ուր պետք է գտնվելիս լիներ Տրոյան:

Այդ պահից նա որոշեց իրեն լիովին նվիրել հնագիտական որոնումներին, ուստի մեկնեց Ամերիկա, որպեսզի լուծարքի ենթարկեր իր ձեռ-

նարկումները: Շլիմանն ուզում էր իրականացնել այն ամենը, ինչ երազել էր ջահել ժամանակ, և որոշեց կյանքի մի այնպիսի ընկերուհի գտնել, որի հետ կարողանար անել իր հայտնագործությունները: Քանի որ Միննան հուսախաբ էր արել նրան, նա ուզում էր այլ՝ նվիրված ու սիրող, առաջիկա աշխատանքներում իսկական գինակից կին գտնել իրեն:

Ինչպես միշտ, այս հարցում ևս նա վարվեց բավական յուրօրինակ ձևով: Նամակ գրեց իր բարեկամին՝ հույն արքեպիսկոպոս Վիմպոսին, նրան խնդրելով թեկնածու որոնել: Նա ուզում էր, որ իր կինը հույն լինի: Թեև նա ինքն արդեն երիտասարդ չէր՝ քառասունվեց տարեկան էր, պահանջները շատ մեծ էին. աղջիկը պետք է լիներ աղքատ, բայց կրթված, Հոմերոսի երկրպագու և Հունաստանի անկախության համար մղվող պայքարի մասնակից, թխահեր, հունական տիպիկ դիմագծերով, հնարավորին շափ գեղեցիկ, բայց գլխավորը՝ բարեսիրտ:

Արքեպիսկոպոսը նրան ուղարկեց իր զարմուհի Սոֆյա էնգաստրոմենոսի լուսանկարը: Շլիմանը լուսանկարը դիտում էր հիպնոսվածի պես: Սոֆյան դասական տիպի գեղեցկուհի էր, կարծես կամեյայի վրա փորագրված պատկերից փոխ առնված նուրբ, կանոնավոր դիմագծերով: Բերանի անկյունների մոտ թափառող մեղմ ժպիտը նրան տալիս էր անորսալի թովչանք, որն այնպես բնորոշ է Արևելքի կանանց:

Շլիմանն առանց հապաղելու ուղևորվեց Աթենք, ծանոթացավ աղջկա հետ և խելահեղորեն սիրահարվեց նրան: Շլիմանին հմայեց աղջկա ոչ միայն դասական գեղեցկությունը, այլ ամենից առաջ նրա շիտակությունը և դուրեկան բնավորությունը, համեստությունն ու իմաստուն հանդուրժողականությամբ լի հայացքը:

Սակայն Շլիմանը որոշեց տեղի շտալ առաջին տպավորությունը, այլ ինչպես որ մտադրվել էր, նրան խիստ քննության ենթարկեց: Նա անհաշիվ հարցեր էր տալիս, որոնց աղջիկը պատասխանում էր միանգամայն բավարար: Նա, օրինակ, աղջկան հարցրեց, թե Ադրիանոս կայսրը ո՞ր թվականին է այցելել Աթենք: Կամ՝ Հոմերոսից ի՞նչ հատվածներ նա անգիր գիտի:

Ամեն ինչ ընթանում էր սպասվածից լավ: Վերջում նա հարցրեց.

— Դու ինչո՞ւ համաձայնեցիր ամուսնանալ ինձ հետ:

— Մնողներս ինձ ասացին, որ դուք հարուստ մարդ եք:

Այդ լսելով, Շլիմանը դուրս թռավ սենյակից: Ծշմարիտ պատասխանը ցավագին խոցել էր ծերացող փեսացուին: Բայց արդեն ուշ էր, նա հասկանում էր, որ դարձել է իր զգացմունքների գերին: Զսպելով հպարտությունը, նա հետ դարձավ ու խնդրեց աղջկա ձեռքը:

Հարսանիքն արեցին անհապաղ, որովհետև Շլիմանը երբեք չէր սիրում հետաձգել ընդունված որոշումների կատարումը: Շուտով նա համոզվեց, որ Սոֆյան սիրող ու նվիրված կին է:

Սոֆյան հիանալի կին է,— գրում է նա իր նոթերում,— նա ինձ սիրում է կրֆոտությամբ, ինչպես հելլենոնի, ես նույնպես ջերմորեն եմ սիրում նրան: Մենք խոսում ենք միայն հունարեն, աշխարհի այդ գեղեցկագույն լեզվով:

Բայց Շլիմանի հետ ապրելն այնքան էլ հեշտ չի եղել: Այդ մենք իմանում ենք նրա դասեր՝ Անդրոմաքեի նոթերից:

Խեղճ կինը,— գրում է նա մոր մասին,— պատմում էր ինձ, թե նարսանեկան նամփոռոգության ժամանակ ինչպես էր պարտավոր եղել նրա հետ շրջել Իտալիայի և Ֆրանսիայի բոլոր թանգարանները: Հայրիկը նրան ստիպել է նաև օտար լեզուներ սովորել, իսկ ուսուցման նրա եղանակները գրեթե հրեշավոր են եղել: Բացի ֆրանսերենից, մայրիկի հետ ոչ մի այլ լեզվով չի խոսել, մինչև որ նա լրիվ այն շի յուրացրել: Բայց հենց որ նա սկսել է տգառ խոսել այդ լեզվով, հայրիկն անմիջապես տնցել է անգլերենին:

Ամուսնության առաջին տարիներին կյանքն այդ պոռթկուն, անխոնջ ու փոթորկվող եռանդով լի մարդու հետ, որի մեջ հանճարից ինչ-որ բան կար, երիտասարդ կնոջ համար բավական լուրջ փորձություն է եղել: Ինձ համար էլ հեշտ չէր: Իմ երեխա ժամանակ նա ձմռանը առավոտյան ժամը հինգին արթնացնում էր ինձ ու իր հետ ձիով հինգմղոնանոց զբոսանքի ասնում մինչև Ֆալերոն, ուր մենք լողանում էինք ծովի սառը ալիքներում:

Մեր առողջության մասին նա հոգ էր տանում ուղղակի մոլեռանդորեն: Երբ բազմաթիվ հրավիրվածների ներկայությամբ պետք է կատարվեր եղբորս՝ Ազամեմնոնի մկրտությունը, հայրիկը հանկարծ գրպանից ջերմաչափ հանեց և շափեց օրհնված ջրի ջերմությունը: Մեծ շփոթություն տոաջացավ: Մի այդպիսի անըրբանկաա արարք տեսնելով, ֆահանան անասելիորեն զայրացավ: Միայն մորս խնդրանքները մեղմեցին նրան, և նա կրկին օրհնեց ջուրը:

Վերջիվերջո, նրա կտրակտությունը չէր խանգարում. նա բարյացակամ և շափից տվելի շոայլ մարդ էր: Յուրովի համեստ էր և տանել չէր կարողանում մոդայամուլներին... Մաղիկներ ու կենդանիներ սիրում էր գրեթե կրոնական ջերմեռանդությամբ:

Պրիամոսի ամրոցը

1870 թվականին Հենրիխ Շլիմանը կնոջ հետ մեկնեց Փոքր Ասիա և Հելեսպոնտոսի ափին սկսեց լայնորեն մտահղացված հնագիտական աղաջին պեղումները: Հուրախություն իրեն հետևող ամբոխի, նա պեղում-

ներքին ձեռնամուխ եղավ շատ յուրօրինակ եզանտեֆուի: «Իլիականը» ձեռքին, ինչպես երկրաշափը տեղագրական քարտեզով, սկսեց շարժել տարածությունները, պարզելու համար, թե որտեղ, ամենայն հավանականությամբ, կարող էր գտնվել Տրոյան, որը Ագամեմոնանի ջոկատները տասնամյա պաշարումից հետո նեոպոթյամբ դրավել ու հիմնահատակ կործանել էին:

Սակայն նրա վարմունքն իրականում այնքան էլ միամտություն չէր, ինչպես կարող էր թվալ առաջին հայացքից: Դրա ետևում թաքնված էր գործնական և համոզիչ, Շլիմանի հետևություններին պատիվ բերող փաստարկների մի ամբողջ զինանոց: Հետևենք, ուրեմն, նրա այդ հետևությունների ընթացքին թեկուզև համոզվելու համար, թե իբր, պատահաբար արված հայտնագործություններն ինչ չափով են իրականում մտքի լարված աշխատանքի արդյունք լինում:

Այն սակավաթիվ գիտնականները, ովքեր ընդունել են Տրոյայի պատմական գոյության հնարավորությունը, քաղաքը զետեղել են թուրքական Բունարբաշի գյուղակի մոտ, ուր մի փոքրիկ բլուր կար: Նրանց ենթագրություն համար հիմք է ծառայել «Իլիականի» 22-րդ գիրքը, ուր Հոմերոսը հիշատակում է, որ Պրիամոսի քաղաքի մոտ երկու աղբյուրներ են եղել, մեկը տաք, մյուսը սառը: Իսկ այդպիսի երկու աղբյուրներ ոնց որ թե հենց Բունարբաշիում էին գտնվում:

Շլիմանը որոշեց անձամբ ստուգել այդ ենթագրությունը: Նա հույն ուղեկցորդ վարձեց և ձիերով մեկնեց Բունարբաշի: Բայց արդեն ճանապարհին նրա մեջ կասկածներ ծագեցին: Գյուղից մինչև ծովը երեք ժամվա ճանապարհ էր, այնինչ, եթե հավատալու լինենք Հոմերոսին, հույն հերոսները օրը երիցս հաղթահարել են ծովից մինչև տրոյական ամրոցի պարիսպներն ընկած տարածությունը, մի բան, որը նրանցից տասնութ ժամ կխլեր: Ուրեմն, կամ Հոմերոսն է սխալվել, կամ Բունարբաշիում Տրոյայի ավերակներ չկային:

Տեղ հասնելով, նա դիտեց բլուրը, որն իբր իր ընդերքում թաքցնում էր ավերակները: Պրիամոսի պալատը վաթսուներկու սենյակներով ու դահլիճներով հանդերձ, ինչպես նաև Սքեյան զանգվածեղ դարպասով բերդապարիսպը թաքցնելու համար այդ բլուրը շատ փոքր էր: Շլիմանն իջավ ձիուց և ելավ բլրի գագաթը: Մի քանի տեղ նա փորձնական հորաններ փորեց, ավերակների գոնե շնչին հետքեր որոնելով: Ամենուրեք միայն հող էր ու ավազ: Քարի, խեցու կամ աղյուսի ոչ մի կտոր չկար, մի խոսքով, ոչինչ ցույց չէր տալիս, որ այդտեղ երբևէ շինություններ են եղել: Եվ Շլիմանը եկավ այն համոզման, որ այդ բլուրն առաջացել է ոչ այն պատճառով, որ դրա ընդերքում ամփոփված են ավերված քաղաքի մնացորդներ, այլ պարզապես բնության գործն է, և ոչ թե մարդկային ձեռքերի:

Սակայն նա կշռադատող մարդ էր և որոշեց պարզել երկու աղբ-

յուրեւերի հարցը, որոնց մասին այնպիսի վատահուժյամբ էին գրել պատմիչները: Այս գործում էլ նրան զավեշտական անախնկալ էր սպասում. պարզվեց, որ Բունարբաշիի մերձակայքում բխում են ոչ թե երկու, այլ քառասուն աղբյուրներ: Դրանցից էլ առաջացել էր տեղանունը՝ «Քառասուն աղ»: Արդեն սասանված հիպոթեզի սխալ լինելու մեջ վերջնականապես համոզվելու համար Շլիմանը աղբյուրից աղբյուր էր գնում ու շահում ջրի ջերմաստիճանը: Դրանք բոլորն էլ մոտավորապես նույն ջերմաստիճանն ունեին, ոչ մի ջերմուկ չկար:

Այդ պահից Բունարբաշիի մոտի բլուրը դադարեց նրան հետաքրքրել: Բայց այդ դեպքում որտե՞ղ փնտրել Տրոյայի գտնվելու տեղը: Նա անզոր էր առանց որևէ ցուցումների, որոնց վրա կարող էր հիմնվել, և թափառում էր հելենապոնտոսյան հարթավայրի երկարությամբ ու լայնությամբ, բախտապաճեն փնտրելով կորած քաղաքը: Անսպասելիորեն նրա ուշադրութունը գրավեց Բունարբաշիից հյուսիս, ծովից հինգ կիլոմետր հեռավորության վրա գտնվող մի մեծ բլրի թուրքերեն անվանումը: Դա Հիսարլըղ բլուրն էր, որ նշանակում է «Պալատ»: Շլիմանն իրեն հաշիվ էր տալիս, որ ինչպես ավանդազրույցներում, այնպես էլ տեղանուններում հեռավոր անցյալի արձագանք կա: Այդ եղանակով մարդիկ սերնդե սերունդ են փոխանցում իրենց պատմութունը, իրենց իմաստութունը և իրենց փորձը: Ժամանակի ընթացքում անվանումների սկզբնական իմաստը ջնջվում է, ինչպես մաշված գորգի նախշ, մնում են միայն բառերը, որոնք անհասկանալի են թվում, բայց որոնք միաժամանակ այնպիսի հետքեր են, որ կարող են ցույց տալ ճշմարտության աղբյուրը: Ինչո՞ւ Հիսարլըղում ևս չէին կարող թաքնված լինել ինչ-որ ավերակներ, որ մարդիկ մի ժամանակ պալատ են անվանել: Դժվար է պատկերացնել, որ առանց որևէ հիմքի այդպես կոչվին մի սար, որն իր ուրվագծերով անգամ նման չէր որևէ շինության, շխտելով արդեն պալատի մասին:

Նախնական հետազոտութունները հաստատում էին Շլիմանի ենթադրութունը: Սարը ոնց որ քառանկյուն էր, հարթ կատարով, որը ցույց էր տալիս նրա արհեստական ծագումը: Եվ իրոք, քլունգի առաջին իսկ հարվածից հողի երես թռան աղյուսների, խեցիների բեկորներ, որոնք վկայում էին, որ խորքում հաստ պատերի փլատակներ կան: Անասելի երջանկության դողը համակեց Շլիմանին, նա արդեն վստահ էր, որ գտնվում է տրոյացի և հույն հերոսների քրտինքով ու արյամբ ներծծված «սրբազան Իլիոնի» տեղում:

Վերջիվերջո, հին պատմիչները նշել են, որ այդ վայրում պատմական ժամանակներում հառնել է հունական, իսկ հետո հռոմեական Նոր Իլիոն քաղաքը, որն ըստ ավանդության պետք է կառուցված լիներ Տրոյայի ավերակների վրա: Հերոդոտը նշում է, որ պարսից տիրակալ Քսերքսեսը կանգ է առել այդտեղ Պրիամոսի ամրոցի փլատակները գիտելու և Աթենաս Իլիոնացուն հազար գլուխ անասուն զոհաբերելու համար: Ըստ

Քսենոփոնի հաղորդման, այդ նույն նպատակով նոր Իլիոն է այցելել լակեդեմոնական առաջնորդ Մինդարոսը, իսկ մ. թ. II դարի հույն պատմիչ Արիանոսը գրում է, թե Ալեքսանդր Մակեդոնացին, զոհ մատուցելով, փլատակների միջից մի հին թուր է հանել և իր անձնական պահակախմբին կարգադրել միշտ տանել իր հետևից, համարելով, որ թուրը նրան երջանկություն կբերի պարսիկների դեմ արշավանքում: Կեսարը շատ է հոգ տարել քաղաքի մասին, օժանդակել է փողով, իրեն համարելով տրոյացիների անմիջական հետնորդ:

Շլիմանին անհանգստացնող միակ բանը հիշատակված աղբյուրների բացակայությունն էր Հիսարլըղի մերձակա շրջապատում: Բայց շուտով այդ կասկածն էլ փարատվեց: Շրջակայքում ապրող գյուղացիներից նա իմացավ, որ ժամանակ առ ժամանակ այնտեղ սկսում են բխել ջերմուկներ, շուտով ցամաքում են, ապա նորից բխում այլ վայրում: Սակայն նրա կատարած հետազոտությունների ժամանակ Հիսարլըղում ոչ մի այդպիսի աղբյուր չբխեց:

1871 թվականին Շլիմանը ութ բանվոր վարձեց ու ձեռնամուխ եղավ կանոնավոր պեղումների: Համաձայն Հոմերոսի, ամենաբարձր տեղում պետք է լիներ Աթենասի տաճարը, որից կարելի էր եզրակացնել, որ այն գտնվում է ուղիղ բլրի կենտրոնում: Շլիմանը հրամայեց տասը մետր խորությամբ մի երկար խանդակ փորել այնտեղ: Այդ աշխատանքների ժամանակ բահերը դուրս էին նետում զենքի կտորներ, սկահակներ ու ամենօրյա գործածության այլ առարկաներ, ակներև ապացույցներն այն բանի, որ մի ժամանակ այդտեղ հարուստ և մարդաշատ քաղաք է եղել:

Չմոռանալով աշխատանքները դադարեցվեցին, բայց արդեն հաջորդ տարվա գարնանը Շլիմանն ու նրա կինը վերադարձան: Նա կառուցեց բնակելի փայտաշեն բարաքներ ու պահեստներ, հարյուր բանվոր վարձեց և կրկին անցավ պեղումների:

Լուսաբացից մինչև մթնշաղ կնոջ հետ աշխատում էր փորվածքում, իսկ գիշերը լապտերի երեքուն լույսով զննում, մաքրում և համակարգում հողի տակից հանված առարկաները: Ներդրված աշխատանքի համեմատությամբ դրանք սակավարժեք իրեր էին, և չհուսախաբվելու համար պետք էր արտասովոր հաստատակամություն ու համբերություն ունենալ:

Ի լրումն, նրանց ձանձրացնում էր անառողջ կլիման: Ամառը տոթ էր, առատ տեղումներով: Ամենատարբեր միջատները, մանավանդ մոծակները, նրանց չէին թողնում քնել գիշերները: Շլիմանը հիվանդացավ դողերոցքով և երկար ժամանակ չէր ապաքինվում: Իսկ ձմռանը հյուսիսից փչում էին սառը քամիներ, թափանցում բարաքների բազմաթիվ ճեղքերից ներս, հնարավորություն չտալով վառելու լապտերները: Այդ պայմաններում, թեև վառարանները ջանադրաբար վառում էին, ջերմաստիճանը հաճախ նվազելով հասնում էր զրոյից ցածր ինը աստիճանի:

1873 թվականին, այսինքն որոնումների երրորդ տարում Հիսարլըղի

բլուրը երկայնքով ու լայնքով կտրտված էր խորը խանդակներով: Այդ ընթացքում տոննաներով հող ու քարաբեկորներ հեռացվեցին: Դեպի խորքը առաջ շարժվելուն զուգընթաց Շլիմանը նորանոր փլատակներ էր հայտնաբերում: Դրանք բազմաթիվ սերունդների կողմից միմյանց վրա կառուցված հին քաղաքների և բնակավայրերի մնացորդներ էին: Այդ քաղաքները վերաբերում էին տարբեր դարաշրջանների. ծաղկման կարճատև շրջանից հետո դրանք կործանվել էին կամ հրդեհից, կամ էլ ասպատակութուններից:

Վերին շերտում նոր Իլիոնն էր, իսկ ամենացածրում՝ նոր քարի դարի մի խղճուկ բնակավայր:

Շլիմանը փորվածքում զանազանեց իրար վրա դիզված մարդկային յոթ բնակավայր: Դրանցից ո՞րն էր հոմերոսյան Տրոյան: Հնագիտութայն այն ժամանակվա մակարդակի պայմաններում դժվար էր պատասխանել այդ հարցին: Այժմյան հնագետների համար ժամանակի ցուցիչներ են խեցե բեկորները: Ամեն մի հերթական սերունդ կավե ամանները զարդարելիս կիրառել է իր սեփական ոճն ու թեմատիկան, ընդ որում այդ արվեստը ժամանակի ընթացքում անցել է զարգացման բոլոր փուլերը՝ ամենապարզունակ, տակավին անհմուտ փորձերից մինչև առավել կատարյալ վարպետութուն:

Եթե, ասենք, կավե ամանների մի որոշակի տեսակը հանդիպում է միևնույն մշակութային շերտի բազմաթիվ բնակավայրերում և այդպիսինը չկա ավելի բարձր կամ ցածր շերտերում, կարելի է լիակատար վրստահությամբ ասել, որ ամանների այդ տեսակը պատկանում է միևնույն դարաշրջանին:

Իսկ ինչպե՞ս որոշել ամանների առանձին տեսակների երևան գալու տարեթվերը: Դրա համար շատ եղանակներ կան, բայց մենք մանրամասն չենք խոսի դրանց մասին. դրանք խիստ մասնագիտական և խըրթին հարցեր են: Մեր խոսքը պատկերավոր դարձնելու համար ավելացնենք միայն, որ միքենյան Տիրինթոս ամրոցում մշակութային մի շերտի տարիքը որոշվեց միայն այն բան շնորհիվ, որ այնտեղ գտնվեց նույնպիսի ոճի աման, որպիսին գտնվել էր եգիպտական փարավոն Թութմոս III-ի՝ մ. թ. ա. 1600 թվականին վերագրվող դամբարանում:

Շլիմանն, անշուշտ, այդ եղանակներին դեռ ծանոթ չէր: Խեցեբեկորների նախշերը նրան ոչինչ չէին ասում, այդ պատճառով նա նույնիսկ մոտավորապես չկարողացավ գլուխ հանել տրոյական յոթ բնակավայրերի ժամանակագրութունից: Նա միայն ենթադրում էր, որ ստորին շերտերը պետք է վերին շերտերից հին լինեն, և, այդ տեսակետից, հոմերոսյան Տրոյան պետք է գտնվեր ամենաստորին շերտում: Ծիշտ է, նրան զարմացնում էին ավելի բարձր շերտերում եղած զանգվածեղ պատերը, բայց նա եկավ այն համոզման, որ դրանք կարող են վերաբերել ամենաշատը մ. թ. ա. III դարին, այսինքն այն ժամանակաշրջա-

նին, երբ այդտեղ կառավարել է Ալեքսանդր Առեղտեացու ժառանգորդ Լիսիմաքոսը՝ նրա զորավարներից մեկը:

Այդպիսի դատողութիւնների հիման վրա Շլիմանը եզրակացրեց, որ իր որոնած հոմերոսյան Տրոյան գտնվում է ներքեկց երրորդ շերտում: Նրա այդ համոզմունքը վերջնականապես ամրապնդեցին մրտաված փլատակները, որոնք պարզորոշ վկայում էին քաղաքը ոչնչացրած ահա՛վոր հրդեհի մասին: Սակայն այդ բնակավայրը ոչնչով նման չէր Հոմերոսի նկարագրած հոյակերտ Իլիոնին: Մրտաված գլխավոր կառույցը շատ համեստ էր, այն դեպքում, երբ Պրիամոս թագավորի գահանիստն ունեցել է, ըստ Հոմերոսի, վաթսուներկու սենյակ: Ոչ ամուր բերդապարիսպները, խղճուկ հյուղակները և պարզունակ խեցեղենը վկայում էին բնակիչների մշակութային ցածր մակարդակի մասին:

Եվ այստեղ Շլիմանն առաջին անգամ չհավատաց Հոմերոսին: Մինչ այդ նա հույսը դնում էր նրա ճշմարտացիութեան վրա, սակայն իր հետեւիւթիւնների ազդեցութեան տակ այլևս սկսեց կասկածել, որ տրոյական պալատն ու ամրոցը նկարագրելիս Հոմերոսը դիմել է բանաստեղծական շափազանցութեան:

Չնայած ժամանակ առ ժամանակ նրա մեջ էլ էին լուրջ տարակուսանքներ ծագում, դա շատիպեց նրան հրաժարվելու մեկ անգամ կազմած կարծիքից:

Դա մի փոքրիկ աղքատ ֆաղաֆ է,— գում է նա ներքեկց երբորդ բնակավայրի մասին,— որն ամենաշատը երեք հազար բնակիչ է ունեցել... Մի՞թե այն կարելի է նույնացնել անմահ փառքով պսակված մեծ Իլիոնի՝ մի ֆաղաֆի հետ, որը տասը տարի դիմադրել է հույների հարյուր տասը հազարանոց բանակի ճնշմանը:

Դժվար է հասկանալ, թե Շլիմանը, որին մինչ այդ չէին դավաճանել բնազդն ու արագ կողմնորոշվելու ընդունակութիւնը, ինչո՞ւ էր այդ անգամ այնպես համառորեն կառչել ավելի քան խախտւտ հիմքերի վրա հիմնված թեզիսից: Շուտով նա բոլորին ի գիտութիւն հայտնեց, որ հայտնաբերել է Պրիամոսի պալատը: Այդ լուրը Եվրոպայում մեծ աղմուկ առաջացրեց: Գիտնականները խստորեն հարձակվեցին նրա վրա, կշտամբելով գոեհկութեան և սենսացիաների հետեկց ընկած լինելու համար, ծաղրեցին նրա այն պնդումը, որ ինքն իբր հայտնաբերել է մի քաղաք, որը երբեք գոյութիւն չի ունեցել:

Քշնամական քննադատութիւնը վիրավորեց Շլիմանին: Նա որոշեց դադարեցնել հետագա պեղումներն ու հրապարակեց հետեկյալ հաղորդումը.

Հարյուր հիսուն բանվորների օգնութեամբ երեք տարի մե՛ք փորեցինք այստեղ, հեռացրինք 250 հազար խորանարդ մետր խնա-

Բար և Իլիոնի ավերակների տակից հանեցինք գեղարվեստական շատ հետաքրքիր հուշարձանների մի հիանալի հավաքածու: Հիմա, սակայն, մենք հոգնած ենք և, քանի որ հասել ենք մեր նպատակին, իրականացրել մեր կյանքի իդեալը, սույն թվականի հունիսի 15-ից մենք դադարեցնում ենք մեր հետագա որոնումները Տոնյայում:

1873 թվականի հունիսի 14-ին, այսինքն Հիսարլըղի բլրին խիված ճամբարը թողնելու նախօրյակին, առավոտյան ժամը հինգին Շլիմանը կնոջ հետ արդեն կանգնած էր մեծ փորվածքի մեջ և հետևում էր բանվորներին: Փորվածքի մի պատը այն շինության պատն էր, որ Շլիմանը Պրիամոսի պալատ էր անվանել: Հանկարծ նա զարմանքով հայացքը սևեռեց մի կետի, որտեղ աղբի ու ավազի միջից ինչ-որ ոսկե առարկա էր երևում, փայլփլեղով վաղորդյան արևի շեղ ճառագայթներից: Նա դարձավ դեպի կինը և կիսաձայն, որպեսզի բանվորները չսեն, ասաց.

— Գնա բանվորների մոտ և հայտարարիր հանգիստ:

— Հիմա՞, առավոտյան ժամը յոթի՞ն, — հարցրեց զարմացած Սոֆյան:

— Այո, անհապա՛ղ... Ասա նրանց ինչ ուզում ես... Արդեն գիտեմ՝ ասա նրանց, որ այսօր իմ անվանակոչության տոնն է, ես ուղղակի մոռացել էի, իսկ հիմա իրենց ազատ օր եմ տալիս լրիվ օրավարձով: Բեր նաև քո կարմիր շալը...

Սոֆյան այլևս հարցեր չտվեց և կատարեց բոլոր հանձնարարությունները: Երբ նա վերադարձավ, Շլիմանը սլաքել էր փորվածքում և դողացող ձեռքերով հողի միջից գրչահատով ինչ-որ բան էր փորփրում հանում, ուշադրություն չդարձնելով գլխավերևում կախված պատին, որն ամեն վայրկյան կարող էր փուլ գալ: Սոֆյան շալը փոսեց գետնին, և Շլիմանը սկսեց դրա վրա շարել հանված ոսկյա ու արծաթյա իրերը: Դրանք այնքան շատ էին, որ հազիվ տեղավորվեցին շալի մեջ: Նրանք ծածուկ մտան բարաք, սողնակով փակեցին դուռը և խորին հուզմունքի մեջ թանկարժեք իրերը շարեցին սեղանին:

Ամենամեծ հիացմունք առաջացրին ոսկե երկու ապարոշները: Դրանցից մեկը քունքի նրբակերտ շղթա էր, որից կախված էին սրտաձև օղակներով երեսուն շղթայիկներ: Երկրորդի վրա էլ այդպիսի կախոցներ կային, բայց դրա հիմքը ձուլածո ոսկուց պատրաստված հաստ ժապավենն էր:

Թանկարժեք իրերը դասավորելուց հետո պարզվեց, որ գտնված դանձր բաղկացած է 24 մանյակներից, 6 ապարանջաններից, 8700 մատանիներից, 69 ականջօղերից, 4066 կրծքազարդերից, 600 գրամ քաշով ոսկե դավաթից, ոսկե մեծ շշից, արծաթե ու պղնձե մի քանի սկահակներից, ինչպես նաև բրոնզե զենքից:

Շլիմանը համոզված էր, որ գտել է Պրիամոս թագավորի գանձերը, իսկ գուցե և իր՝ Հեղինեի զարդերը, որին առևանգել էր Պարիսը:

Քանի որ այդ բոլոր առարկաները,— գրում է Շլիմանը,— ես գտա մի տեղում, ինչպես Հումբոսն է ասում, Նեպտունին կամ Ապոլլոնին նվիրված աճառի պատի տակ, անվիճելի է, որ դրանք սկզբում լցված են եղել փայտե այն սնդուկի մեջ, որի մասին Հումբոսն «Իլիականում» ասում է, թե գտնվում էր Պրիամոսի պալատում:

Երևակայության մեր վերականգնեց այն դրամատիկական իրադարձությունների ընթացքը, որոնց շնորհիվ գանձը պահպանվել էր: Ահա Ագամեմնոնի ջոկատները ներխուժել են Տրոյա: Պրիամոսի ընտանիքի անդամները մեծագույն հապճեպության մթնոլորտի ամբողջ գանձը լցրել են սնդուկի մեջ, մտադիր լինելով այն հորել պալատի պատի տակ: Բայց ճանապարհին նրանց սպանել են: Լքված սնդուկը, նախքան թշնամիները կհասցնեին այն նկատել, ծածկվել է փլվող պատերի բեկորներով: Այդ ժամանակվանից սնդուկը փտել է, բայց գանձերը լիովին պահպանվել են, և դրանք միայն XIX դարում գտավ Հոմերոսի խանդավառ երկրպագուն, որ եկել էր հեռավոր հյուսիսից:

Գանձը գտնելու օրը լրացավ Շլիմանի հիսուներկու տարին, բայց նա հրճվում էր երեխայի պես, երջանիկ, որ կատարվել էր պատանեկության երազանքը:

Անսպասելիորեն նրա հայացքը կանգ առավ կնոջ վրա, նրա տիպիկ հունական դիմագծերի վրա: Դեմքին հանդիսավոր արտահայտություն տալով, նա ապարոշներից մեկը դրեց կնոջ գլխին, ապա զարդարեց նրան մանյակներով, ականջօղերով, կրծքազարդերով ու մատանիներով և նստեց աթոռին, ըմբոշխնելով արտասովոր տեսարանը: Նրան թվում էր, թե իր առջև կանգնած է ինքը Հեղինեն՝ արքայական զարդերի ամբողջ փայլով ողողված, քնքուշ, թովիչ դեմքը բոլորած գանգուր մազերի թագը գլխին...

Շլիմանը երկար տատանվում էր, շիմանալով, թե ինչպես վարվի այդուհետև: Թուրքական իշխանություններից հնագիտական պեղումներ կատարելու թույլտվություն ստանալով, նա պարտավորվել էր թուրքական կառավարությանը տալ այն ամենը, ինչ որ գտնվեր: Սակայն հիմա, երբ նրա ձեռքում էին այդ շքեղացիլ գանձերը, նրան թվում էր, թե դա ուղղակի անհնար է: Նա երկյուղ էր կրում, որ ազահ սուլթանը բավականաչափ հարգանքով չի վերաբերվի նախապատմական ոսկերչական արվեստի անգնահատելի գլուխգործոցներին և, ով գիտի, գուցե հրամայի դրանք վերածուլել:

Այդ պատճառով մի անգամ գիշերը նա թանկարժեք իրերը գազտնի տարավ Հունաստան և պահ տվեց կնոջ ազգականներին:

Մեծ հայտնագործութեան լուրն աննախընթաց սենսացիա առաջացրեց աշխարհում: Տրոյայի մասին վեճը նորից բորբոքվեց, միայն թե այս անգամ Շլիմանի անունն արտասանում էին հարգանքով, առանց ներողամիտ քմծիծաղի, որով մի ժամանակ վերաբերվում էին նրան: Նրա գլխին շանթ ու որոտ էր թափում միայն թուրքական կառավարութիւնը, որը նրան հրապարակավ նշավակեց որպես սովորական մաքսանենգի:

Ազամեմնոնի ոսկե դիմապատկերը

Տրոյական արշավանքի առաջնորդ, «արքայից արքա» Ազամեմնոնը Միքենեի թագավոր Աթրևսի որդին էր: Կատարած հանցագործությունների համար աստվածների կողմից անհիժված տոհմ էր դա:

Հանցագործութիւնը կատարել էր Ազամեմնոնի հայրը՝ Աթրևսը, որը նողկալի եղանակով իր հարազատ եղբայր Թիեստոսից վերժ էր լուծել այն բանի համար, որ նա իբր խլել էր իր կնոջը: Մի անգամ նա Թիեստոսին հրավիրել է իր մոտ և հյուրասիրել տապակած մսով, իսկ խնջույքից հետո հայտնել, որ Թիեստոսի կերածը նրա սպանված երկու որդիների միսն է:

Դաժան կոտորածից փրկվել է միայն Թիեստոսի երրորդ որդին՝ էգիսթոսը: Տղան երգվել է վերժխնդիր լինել Աթրևսների ամբողջ տոհմից: Ազամեմնոնը չի իմացել, թե ինչ է կատարվում էգիսթոսի հոգում, և հունական միացյալ ջոկատների գլուխն անցած արշավանքի դուրս գալով Տրոյայի դեմ, նրան թողել է Միքենեում իր կնոջ՝ Կլիտեմնեստրայի հետ:

«Ողիսականի» երրորդ երգից իմանում ենք, ինչ է կատարվել նրա բացակայութեան ժամանակ:

... Մինչ մենք բյուր տանջանքներ էինք կրում
Եվ մարտնչում Տրովադայում, նա, բուն դրած դալարագեղ
Ու ձիառատ մեծ Արզոսում, աշխատում էր իր խաբուսիկ
Խոստումներով գլխից հանել սիրուն կնոջն Աթրիդեսի:
Բայց ըսկզբում Կլիտեմնեստրան մերժում էր ու չէր ընդունում
Այդ արարքը ապօրինի, քանզի բարի էր դեռ խորհում:
Նրա կողքին դեռ հսկում էր երգիչն անքուն, որ կարգել էր
Ազամեմնոնն իբրև պահակ, Իլիոնի դեմ արշավելիս:
Բայց երբ արդեն անմահները նրան կորուստ սահմանեցին,
էգիսթոսը տարավ երգչին մի ամայի ժեռուտ կղզի,
Թողեց նրան որպես ավար գազանների ու հավքերի:
Կլիտեմնեստրան էլ կամովին էգիսթոսի հետ տուն եկավ:

(Քարգմանութիւնը՝ Ս. Գրեաշարյանի)

Հանցագործ զույգը՝ վախենալով իր նենգության հետևանքներից, նյութել է Ազամեմնոնի մահը, հենց որ նա վերադառնար Տրոյայից: Քե նա ինչպես է իրականացրել իր մտադրությունը, Սպարտայի թագավոր Մենելայոսի շուրթերով Հոմերոսը պատմում է «Ռդիսականի» շորորդ գլխում:

... Այնուհետև, երբ հեշտացավ վերադարձի ուղին նրա,
Եվ աչ քամին նրան քշեց դեպի ափերն իր հարազատ,
Այնժամ անհուն մի բերկրանքով կոխեց նա հողն իր հայրենի,
Այն շոշափեց իր ձեռքերով ու ողողեց ջերմ արցունքով,
Ու մտածեց, թե նորից է տեսնում երկիրն իր հայրենի:
Բայց բարձրադիր դիտարանից նրան տեսավ պահակն արթուն,
Որ խորամանկ ու նենգամիտ էգիսթոսն էր կարգել այնտեղ՝
Նրան երկու տաղանդ ոսկի վարձատրությւն խոստանալով:
Ջօր ու գիշեր հսկում էր նա. որ շիհնի եղբւյրը քո
Գաղտագողի վրա հասնի ու հարձակվի, լէնքը ձեռքին:
Իսկույն փութաց դեպի պալատ և հաղորդեց նա արքային:
Իսկ էգիսթոսն անմիջապես մի խորամանկ հնարք նյութեց,
Նա իր երկրից քսան լավագույն կտրիճներ է ընտրում իսկույն
Ու թաքցնում, իսկ մի այլ տեղ հրամայում է կոշունք սարքել:
Ինքը անձամբ Ազամեմնոնին գնաց պալատ հրավիրելու,
Նժույզներով ու կառքերով, մտքում շարիք որոճալով:
Բերեց նրան խրախճանքի և խողխողեց դաժանաբար,
Ինչպես պարարտ եզն են մորթում, որ կապված է մսուրի մեջ:
Մարդ շագատվեց, ոչ քո եղբոր կտրիճներից, ոչ էլ խարդախ
էգիսթոսի համհարզներից. բոլորն ընկան ապարանքում:

(Թարգմանությունը՝ Ս. Գրեաշարյանի)

էսքիլեսի «Ազամեմնոն» ողբերգության մեջ սպանության գլխավոր տնօրինողը Կլիտեմնեստրան է: Նրան առաջնորդում է ոչ միայն դավաճանության համար պատժվելու վախը, այլ է՛լ ավելի ատելության ո՞ն վրեժխնդրության դեր: Նա չէր կարողանում Ազամեմնոնին ներել, որ նա, դուրս գալով Տրոյայի դեմ, զոհաբերել էր իրենց դստերը՝ Իֆիգենիային, որպեսզի աստվածներից համընթաց քամի ստանար ծովում: Ողբերգությունից մենք իմանում ենք նաև, որ Ազամեմնոնի հետ Միքենեում զոհվում է նրա գերուհին՝ Կասանդրան, Պրիամոս թագավորի դուստրը: Նա գուշակուհի էր, որին այցելում էին ոգիները: Այդ նա էր կանխագուշակել Տրոյայի կործանումը:

Ահավասիկ Կլիտեմնեստրայի մենախոսությունը.

Աստ եմ կանգնած, աստ մահացու հարվածեցի,
Սպանեցի, ուրանալու ոչինչ չունեմ.
Մեծ քողը այն ձուկ բռնելու ուռկանի պես
Պրկեց նրան շքեղությամբ կործանաբար:
Նա ուժ չունեի փախչելու կամ գիմադրելու:
Ծախսեցի երկու անգամ, երկու անգամ էլ նա ճշաց
Եվ դիտապաստ գետին փովեց: Եվ ընկածին

Երբ որպէս անգամ ետ զարկեցի, նորա ստրուծը հեղեցի
Գեհենի տեր, հողեփրկիչ Ձեռի պատվին:
Նա խոխոաց, բերանքսիվայր ընկավ, մեռավ,
Եվ արյունը հորդեց շիթով ու մի կաթիլ
Սե ցողի պես ընկավ ձեռքիս և ինձ խայթեց:
Ես ցնծացի. մեր ոսկեհասկ ծով դաշտերին
Ասես անձրեւ էր տեղացեւ աստվածային:

(Փարզմանութունը՝ Ս. Հայրապետյանի)

Ութ տարի անց Միքենե է գալիս Ազամեմնոնի որդին՝ Օրեստեսը, և լուծում հոր մահվան վրեժը: Նա սպանում է ոչ միայն էգիսթոսին, այլև իր մորը: Երկար ժամանակ մայրասպանին հալածում են էրինինները՝ երեք հրեշ քույրերը, խղճի դաժան ու աննահանջ տառապանքների մարմնացումները, բայց, վերջապես, երկար շարշարանքներից հետո նա Աթենքի արեոպագոսից թողություն է ստանում և բազմում Աթրիդեսների արնաթաթախ գահին:

Ի տարբերություն Տրոյայի, Միքենեի ավերակները հողին չեն հավասարեցվել: Արգոլիսում, Պելոպոնեսի հյուսիս-արևելյան անկյունում դեռ հիմա էլ կարելի է տեսնել ուղղաբերձ ժայռի վրա կառուցված Ազամեմնոնի ամրոցի մնացյալ պատերը: Դրանք շարված են միմյանց կատարելապես հարմարեցված հսկայական քարերից, բայց առանց որևէ շաղախի: Ամրոց է տանում հռչակավոր Առյուծների դարպասը, որով մի ժամանակ Տրոյայից վերադառնալիս անցել է Ազամեմնոնը: Դարպասի վերևում կանգնած են երկու քարակերտ առյուծներ, որոնց գլուխները անհիշելի ժամանակներից պոկված են: Ավերակների մեջ դեռ հիմա էլ անվնաս է ստորգետնյա հին ամբարը, որը թրծակավե ջրմուղի օգնությամբ լցվել է Պերսեսի աղբյուրի ջրով:

Պատերից դուրս, մոտակա բլուրների լանջերին գտնվում են յոթ մոնումենտալ գմբեթարդ դամբարաններ, այսպես կոչված թոլոսներ: Դրանցից յուրաքանչյուրը կառուցված է փեթակաձև: Այդ մոնումենտալ շինությունները վկայում են միքենյան աիրակալների հզորության և այն ժամանակվա շինարարության բարձր մակարդակի մասին: Դրանք թալանվել են տակավին անհիշելի ժամանակներում:

Ամենատպավորիչ հուշարձանն է «Ազամեմնոնի գերեզմանը», որ Սլովացկին փառաբանել է իր համանուն պոեմում: Խավարամած դամբարան է տանում յուրաքանչյուրը մի քանի տասնյակ տոննա քաշ ունեցող քարերից շարված, հինգ մետր բարձրությամբ դարպասը: Եթե կանգնելու լինենք մեջտեղում, ամբողջ շինությունը կթվա մի հսկայական փեթակ, կառուցված վարից վեր նեղացող և վերևում մի կիսաբոլոր քարաբեկորով միացող երեսուներեք քարե գոտիներից: Սիմետրիկորեն դասավորված անցքերը վկայում են, որ մի ժամանակ պատերը զարդարված են եղել բրոնզակոփ վարդաքանդակներով: Հոտմի Պանթեոնը հիշեցնող այդ

հսկայական դահլիճից միջանցքը տանում է դեպի մի ժայռափոր սենյակ, որտեղ էլ, հավանաբար, գտնվելիս է եղել մեռած թագավորի անյունը:

Աթրիդեսների ողբերգական տոհմի մասին հունական առասպելները, որոնք իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել Հոմերոսի և Հսքիլեսի երկերում, ինչպես նաև ավերակների խստաշունչ պարզությունը դեպի Միքենե են ձգել հույն և հռոմեացի բազմաթիվ ճանապարհորդների: Նրանց կարծիքով, հասարակ մարդիկ չէին կարող այդպիսի պատեր կառուցել, դրանք երևան են եկել հսկա կիկլոպների ջանքերով:

Մ. թ. մոտ 170 թվականին Միքենե է այցելել հույն գրող և ճանապարհորդ Պավսանիասը: Ահա թե նա ինչպես է նկարագրում իր տպավորությունները.

Պատերի մի մասը դեռ պահպանվել է, ինչպես և դարպասը, որի վրա առյուծներ են կանգնած: Միքենեի ավերակներում գտնվում են Պերսեսի աղբյուրը և Աթրեսի ընդգետնյա շինությունը. բացի այդ, նրանց գերեզմանները, ում էգիսթոսը խնջույքի ժամանակ սպանել է Տրոյայից վերադառնալուն պես: Այնտեղ գտնվում են Ագամեմնոնի, նրա կառապան Եվրիմեդոնտի, Տելեդամեսի և Պելոպսի շիրիմները: Ասում են, որ Կասանդրան Ագամեմնոնի համար երկվորյակներ է ծնել, և որ այդ փոքրիկ երեխաներին էգիսթոսը սպանել է նրանց ծնողների հետ միասին: Կլիտեմնեստրային ու էգիսթոսին թաղել են պատերից դուրս, որովհետև նրանք արժանի չեն համարվել գտնվելու այնտեղ, ուր թաղված են Ագամեմնոնն ու նրա հետ զոհվածները:

Մեջբերված տեքստն առանձնահատուկ դեր է խաղացել XIX դարի պեղումներում: Տարբեր հնագետներ, հենվելով Պավսանիասի հաղորդման վրա, Միքենեում հատուկենտ պեղումներ են կատարել, բայց ամեն անգամ թողել են դրանք, չհասնելով իրենց նպատակին:

Նրանց անհաջողության պատճառը այն յուրօրինակ եղանակն էր, որով մեկնաբանել են Պավսանիասի հաղորդումը: Թեև հույն ճանապարհորդն աներկմիտ գրել է, որ Ագամեմնոնն ընկերների հետ թաղված է պատերի բոլորագծի ներսում, բոլորը համոզված են եղել, որ նա նկատի չի ունեցել բուն ամրոցի հաստ պատերը: Հարկ է ավելացնել, որ, ինչպես ցույց տվեցին պեղումները, Միքենեն շրջապատված է եղել զգալիորեն նվազ հաստ մեկ այլ պարսպով, որն ընդգրկել է ավելի մեծ մի տարածություն, ուր և գտնվել են հիշյալ գմբեթարդ դամբարանները: Հնագետների մեծամասնությունը կարծել է, թե Պավսանիասը հենց այդ գերեզմաններն է նկարագրել:

Այդ համոզմունքը պայմանավորված էր ևս երկու հանգամանքներ-

րով: Ամրոցի բակը շատ փոքր տարածութիւն է զբաղեցրել, ուստի դժվար էր ենթադրել, թե այնտեղ կարող էր գտնվել նաև գերեզմանոցը: Բացի այդ, փորձնական հորանների օգնութեամբ պարզեցին, որ դրա, ճիշտ է, խճաքարի հսկայական շերտով ծածկված, հիմքը մի կարծր ժայռ է, ոչ պիտանի մեռածներին թաղելու համար:

Հիսարլըզի բլրում ունեցած հաջողութիւններից հետո Շլիմանը բնավ չէր պատրաստվում հանգչել դահինների վրա: Փնտրելով հնագիտական նոր օբյեկտներ, նա հիշեց, որ ամեն անգամ Միքենեն հիշատակելիս Հոմերոսն օգտագործում է այնպիսի մակդիրներ, ինչպես «ոսկեառատ», «ոսկե» կամ «հարուստ»: Այն ինքնավստահութեամբ, որը, ինչպես և Տրոյայի հարցում, արտաքնապես միամտութիւն էր թվում, նա հետևութիւն արեց, թե Միքենեում պետք է ոսկյա բազմաթիվ հին առարկաներ լինեն:

Իր դատողութիւններից նա ամենից առաջ նետեց նախորդների բոլոր մեկնակետերը, դրանք համարելով միանգամայն սխալ: Նրանց բոլոր հարցերին գտավ մի ապշեցուցիչ պարզ պատասխան, այնքան պարզ, որ պետք է զարմանալ, թե ինչու այն չէին գտել միքենյան ամրոցի տեղադրութիւնը լավ իմացած հնագետները:

Կշռադատելով Պավսանիասի հաղորդումը, Շլիմանը եկավ այն եզրակացութեան, որ նա նկատի է ունեցել բուն ամրոցի կիկլոպյան պատը. չէ՞ որ Պավսանիասը պարզորոշ ընդգծել է, որ այդ պատի մեջ գտնվելիս է եղել դեպի բակ տանող առյուծներով դարպասը: Իսկ ինչ վերաբերում է արտաքին պատին, հույն ճանապարհորդը ոչ մի դեպքում չէր կարող այն տեսնել, քանզի պատն ավերվել էր մ. թ. ա. 468 թվականին արգիվյանների ներխուժման ժամանակ, այսինքն Պավսանիասի Միքենե ժամանելուց 638 տարի առաջ: Այստեղից միակ հետևութիւն էր բխում, որ Պավսանիասը նկարագրել է ամրոցի բակի գերեզմանները և ոչ թե շրջակա բլուրների լանջերին եղած գմբեթարդ մեծ դամբարանները, ինչպես մտածել են նախորդ հնագետները:

Կարելի է արդյոք ենթադրել, որ փոքրիկ բակում, որը միաժամանակ ազորա, այսինքն հասարակական ժողովատեղի է եղել, գերեզմանոց են սարքել: Այդ հարցի պատասխանը Շլիմանը գտավ նույն Պավսանիասի մոտ:

Իր հուշերի մեկ այլ տեղում նա գրել է.

Այստեղ ժողովների համար մի հրապարակ են սարքել այնպես, որ հերոսների գերեզմանները գտնվել են դրա կենտրոնում:

Դա վկայում էր, որ հին հույների մոտ գոյութիւն է ունեցել երևելի մարդկանց հասարակական հրապարակներում թաղելու սովորույթ:

Հնագիտական աշխատանքներ սկսելու համար Շլիմանը պետք է Աթենքի Հունական հնագիտական ընկերութիւնից կոնցեսիա ստանար:

Քայց տրոյական գտնձերի հետ կապված մեծադրորդ աղմուկը հիշելով, հույները չէին վստահում նրան: Բանակցությունները ձգձգվեցին երկուսովեւ տարի և հավանաբար ավարտվեին անարդյունք, եթե Շլիմանը շխտատանար սահմանափակվել միայն ամրոցի բակում կատարվելիք պեղումներով: Ընկերության ղեկավարները, վերջիվերջո, նրան կոնցեսիա տվեցին և այն էլ սոսկ այն պատճառով, որ բակը, նրանց կարծիքով, հնագիտական ոչ մի արժեք չուներ. բացի խեցու բեկորներից և գլաբարերից, այնտեղ ոչինչ հնարավոր չէ գտնել: Սակայն Շլիմանից պահանջեցին հանձնել տրոյական գտածոները, բացառութեամբ մի քանի մանրմունք առարկաների, որ թույլ տվեցին նրան ցմահ պահել իր մոտ: Համենայն դեպս նրան մշտական հսկիչ կցեցին ի դեմս հույն հնագետ Ստոմատոկիսի:

Շլիմանը կնոջ հետ Միքենե ժամանեց 1876 թվականի օգոստոսի 7-ին: Միայն տեղում նա հասկացավ, թե իրեն ինչ հսկայական աշխատանք է սպասում: Բակը ծածկված էր քարաբեկորների ու աղբի մի քանի հազար տոննանոց բարձր կույտով: Շրջակա գյուղերում Շլիմանը հարյուր քանհինգ բանվոր վարձեց և եռանդով ձեռնամուխ եղավ այդ արգելքի վերացմանը: Աշխատանքը սկսեցին Առյուծների դարպասից մի քանի մետր հեռավորութեան վրա: Բանվորներից ոմանք քլունգով փրխրեցնում էին երկար մնալուց պնդացած կույտը, մյուսները բեռնում էին ձեռնասայլակներն ու դուրս տանում բակի սահմաններից: Շլիմանը բեկորների միջից շարունակ հանում էր տարբեր առարկաներ՝ ծոփորների հատվածներ, նախշազարդ սկահակներ, թրձակավե արձանիկներ, զարդեր ձուլելու քարե կսղապարներ, ուլունքներ և գեմմաներ:

Զորս ամսվա ընթացքում մի հսկայական փոս փորվեց: Երբ մոտեցան բակի իսկական մակարդակին, Շլիմանն արեց առաջին հայտնագործութեանը, որը ոգևորեց նրան: Ապառաժոտ հողի մեջ նա գտավ լայն շրջանով դասավորված քարե սալեր, իսկ կենտրոնում կլոր զոհասեղան՝ վերևում քանդակված թասով և ակոսով, որով առհասել էր զոհաբերութեան կենդանիների արյունը: Սալերը, ամենայն հավանականութեամբ, տապանաքարեր էին: Գրանցից մի քանիսի վրա դեռ կարելի էր նկատել մարտակառքերում կանգնած ուղմիկներ ու որսի տարբեր տեսարաններ պատկերող ոչ լրիվ ջնջված հարթաքանդակներ:

Շլիմանն արդեն գրեթե վստահ էր հաջողութեանը: Տապանաքարերի վրայի ֆիգուրները վառ կերպով հիշեցնում էին հոմերոսյան դյուցազներգութեան հերոսներին: Ամենախոր տպավորութեանը նրա վրա թողեց ակոսով զոհասեղանը: Հնում գոյութիւն է ունեցել զոհաբերութեան կենդանիներին մեռած հերոսների գերեզմանի վրա այնպես մորթելու սովորույթ, որպեսզի կենդանիների արյունը հոսեր գերեզման, ուստի միքենյան ագոբայում այդ զոհարանի առկայութեանը ապացուցում էր, որ մոտակայքում պետք է գտնվեին նաև որոնվող գերեզմանները:

Նորան հասարկ շեղումով երկխոս ասարտեղ իբր հեթանոսությունը հեռաբանական ասարտություններով: Սրբք մի անգ հեռաբանական ասարտեղ փերջին շեղումը, Շիվանի ասարտեղ ասարտե հայտնվեց բերնեբերության հողով լցված մի քառանկյուն հողում: Շիվանն անեթապետ կանգնեցրեց բանվորներին: Քանի որ նա ինքը շատ մաքրման էր, գերեզմանի մաքրմամբ զբաղվեց նրա կիներ: Փարթիկ բահով առ քանակով նա մեծագույն զգուշությամբ դուրս էր հանում հողը, մասաների արանքով թողանցելով յուրաքանչյուր հատիկը: Մոտավորապես հինգ մետր խորությամբ վրա նա գտավ մեծ հայտնագործություն կանխագուշակող մի առարկա՝ կնիքով ոսկե մատանի:

Շարանի հատակում գտնված իրերը գերազանցեցին ամենահամարձակ ակնկալիքները: Այնտեղ հանգում էին շլացուցիչ շքեղությամբ թաղված երեք հույն ռազմիկների աճյուններ: Նրանց գլուխները ծածկված էին հետմահու ոսկեդրվագ դիմակներով: Դրանք միանգամայն ռեալիստորեն էին փերարտադրում մորաքավոր տղամարդկանց վայրենաբարո դեմքերը: Նրանց կրծքերը ծածկված էին նախշերով առատորեն դարձրված ոսկե զրահներով: Մոտներն ընկած էին բազմաթիվ գեներդաշույններ, թրեր, վահաններ:

Դիմակները հանելուց հետո երկու գանգերը փոշի դարձան, բայց երբքոքը պահպանվեց միանգամայն բավարար վիճակում: Դրա վրա դեռ երևում էին մաշկի մնացորդները, իսկ բաց բերանում երևացող առողջ ատամները վկայում էին, որ մեռածը մոտ երեսունհինգ տարեկան տղամարդ է եղել:

Շիվանը հիացմունքի մեջ էր. նա վստահ էր, որ գտել է Ագամեմնոնի և նրա մերձավոր զինակիցների աճյունները: Արցունքն աչքերին նա ծնկի իջավ ու հանդիսավոր համբուրեց ոսկե դիմակը: Այնուհետև հեռագիր ուղարկեց Հունաստանի թագավորին. «Ծս նայեցի Ագամեմնոնի դեմքին»:

Հետագա որոնումների հետևանքով բացվեց ընդամենը հինգ գերեզման: Դրանցում գտնվում էին ինը տղամարդկանց, ութ կանանց և երկու փոքր երեխաների աճյուններ: Բոլոր տղամարդկանց վրա կային ոսկե դիմակներ ու զրահներ, նրանց կողքին գտնվեցին մեծ քանակությամբ գեներ, ոսկե և արծաթե գավաթներ, ինչպես նաև գործածության բազմաթիվ այլ առարկաներ: Կանանց մեծ մասն ուներ պարուրանախշով և վարդյակներով զարդարված ժապավենաձև ոսկե ապարոշներ: Նրանց աճյունների կողքին ընկած էին զարդերով լի ոսկե և արծաթե պճնատուփեր:

Մարմինները ծածկված էին հարյուրավոր ոսկե ճարմանգներով, որոնց վրա փորագրված էին մեղուններ, ձկներ, վարդյակներ ու պարույրներ: Մի ժամանակ այդ ճարմանգները զարդարել են հանդերձները, որոնցից, բնականաբար, ոչինչ չէր մնացել:

Գտնված առարկաները վկայում էին միջինյան արդեն հասուն քա-

դաքակրթութեան բարձր զարգացած մշակույթի մասին: Հատուկ ուշադրութեան էին արժանի զենքերը՝ տարբեր տեսարաններ պատկերող ոսկե և արծաթե դրվագումներով զարդարված բրոնզե թրերը, դաշույնները և վահանները: Դաշույններից մեկի վրա որսորդների կողմից հետապնդվող առյուծ էր փորագրված. որսորդները վահաններ ունեին, որոնք ծածկում էին նրանց ամբողջ մարմինը: Մյուս դաշույնի վրա, որը եգիպտական ծագում ուներ, անհայտ փորագրիչը պատկերել էր նեղոսը և կատունը, որ գաղտագողի գնում են պապիրուսի թփերի միջով, որոնց վերևում թաքտում են բաղերը: Բրոնզե թրի շեղբի վրա ձևի և շարժման զարմանալի ճիշտ զգացումով պատկերված էր քառատրոփ արշավող ձիերի երամակ:

Բացի գավաթներից, ապարանջաններից, հագուստը կոճկելու ճարձանդներից ու ապարոշներից, Շլիմանը գտավ նաև հասպիսից, մեղեսիկից և ագաթից, ինչպես նաև գունավոր այլ քարերից պատրաստված կնիքներով բազմաթիվ մատանիներ: Այդ գտածոների շնորհիվ հիմա մենք գիտենք, թե ինչպես են հագնվել այն ժամանակվա Հունաստանի կանայք: Կնիքների վրա փորագրված են գանգուր սանրվածքով, մերկ կրծքով, կրիսոլինանման զգեստ հագած պճնասեր կանանց ֆիգուրներ: Փորագրված ֆիգուրներն այնքան փոքր են, որ անհնար է տեսնել առանց խոշորացույցի, սակայն այն ժամանակվա մանրանկարիչները դրանք փորագրել են անկեղծ հիացմունք առաջացնող ապշեցուցիչ ճշգրտութեամբ:

Մի շարք զուգադիպություններ, որոնք չէր կարելի լուրջ պատահականութեանը վերագրել, Շլիմանին համոզեցին, որ գտնված աճյունները պատկանում են Ագամեմնոնին և նրա մերձավորներին: Ամենից առաջ այդ էր վկայում այն փաստը, որ միքենյան ամրոցի բակում գտնվեց հինգ գերեզման, ճիշտ այնքան, ինչքան նշել էր Պավսանիասը:

Սակայն ամենահամոզիչ փաստարկը Կասանդրայի երեխաների գերեզմանն էր: Ինչպես արդեն գիտենք Պավսանիասի մեջբերված տեքստից, կոտորածին զոհ են գնացել նաև երկվորյակները, որ Կասանդրան ծնել էր Ագամեմնոնի համար: Եվ ահա, հանգամանքների արտասովոր զուգադիպությամբ գերեզմաններից մեկում գտնվեցին երկու փոքրիկ երեխաների՝ ոսկե թիթեղի մեջ փաթաթված աճյուններ:

Բացի այդ, գերեզմանների միանման ձևը, դրանց մոտ դասավորությունը, թանկարժեք իրերի և զենքի վրայի զարդերի միատեսակ ոճը Շլիմանին համոզեցին, որ Միքենեում երբևէ տեղի է ունեցել հասարակական հուղարկավորություն, երբ միաժամանակ թաղվել են էգիսթոսի ու Կլիտեմնեստրայի արյունոտ դարանի տասնինը զոհերը:

Անհավատալիորեն երջանիկ Շլիմանի երկրորդ արտասովոր հայտնագործությունը, որ նա կատարեց դարձյալ ղեկավարվելով միայն բնագողով, մեծ հուզմունք առաջացրեց աշխարհում: Սկզբում ոչ ոք չէր հա-

մարձակվում կասկածի տակ առնել նրա թեզիսը, մանավանդ այն պատու-
ճառով, որ թվում էր, թե գտնված գանձերը առաջին հայացքից հիրավի
ապշեցուցիչ կապ ունեն շոմերոսի նկարագրած աշխարհի հետ:

Բայց ո՞րն էր նմանությունը: Գիտնականները ուշադրություն դարձ-
րին այն բանին, որ շոմերոսի ռազմիկները գործածել են մեծ վահաններ,
այն դեպքում, երբ պատմական ժամանակներում հույները գործածել են
բացառապես կարճ վահաններ: Իսկ դաշույնների շեղբերի և միքենյան
կնիքների վրա պատկերված որսորդներն ու ռազմիկները զինված են
հենց մեծ վահաններով: Դա կարող էր վկայել միայն այն մասին, որ
գտածոները վերաբերում են Ագամեմնոնի, Ոդիսևսի և Մենելայոսի ապ-
րած դարաշրջանին:

Աշխույժ վիճաբանություն առաջացրեց նաև միքենյան գերեզման-
ներից մեկում գտնված գավաթը: Այն հենվում էր ոտքի վրա, երկու կող-
մից ուներ մեծ կանթեր, որոնց վրա կանգնած էին կտուցները միմյանց
դարձրած երկու ոսկեքանդակ աղավիններ: Նման գավաթից, ինչպես
շոմերոսն է նկարագրում, գինի են խմել Նեստորն ու Մենելայոսը:

Առավել ապշեցուցիչ էր երրորդ նմանությունը: «Իլիականի» տաս-
ներորդ գլխում շոմերոսը հիշատակում է պատմական շունաստանում
ոչ մի տեղ չհանդիպած վարազի ժանիքներով զարդարված մի առանձնա-
հատուկ սաղավարտ: Ուստի կարելի է պատկերացնել Շլիմանի ուրախու-
թյունը, երբ նա մի գերեզմանում գտավ վարազի վաթսուն ցիրուցան
ժանիքներ, որոնց միակողմանի սղոցվածքը վկայում էր, որ մի ժամանակ
դրանք, գուցե, այնտեղ թաղված ռազմիկների սաղավարտների զարդերն
են եղել:

1876 և 1884 թվականներին Շլիմանը պեղումներ կատարեց Տիրին-
թոսում: Դա Միքենեից հարավ-արևելք, Արգոս քաղաքից ոչ հեռու գտնու-
վող հունական մեկ այլ ամրոց էր: Դրա հսկայական, շտաշված քարա-
բեկորներից շարված հաստ պատերը հին մարդիկ համարել են աշ-
խարհի հրաշալիքներից մեկը, իսկ Պավսանիասը հավասար է դասել
եգիպտական բուրգերին:

Ճիշտ է, Շլիմանն այնտեղ ոչ մի գանձ չգտավ, բայց դրա փոխարեն
հարյուրավոր տոննա քարաբեկորներ ու աղբ հեռացնելուց հետո հայտ-
նաբերեց հենահարթակից, պատերի մեջ քողարկված ծուղակներից ու
գաղտնի միջանցքներից կազմված արտակարգ հնարակերտ պաշտպանա-
կան կառուցներ:

Տիրինթոսում ամենաարժեքավոր հայտնագործությունը Ոդիսևսի ամ-
րոցին նմանվող ամրոցի ավերակներն էին: Դրա գլխավոր մասը այսպես
կոչված մեգարոնն էր՝ սյունազարդ դահլիճը, ուր բաց օջախի շուրջ են
հավաքվել հույն ամենանշանավոր այրերը: Տիրինթոսում մեգարոնը
հենվել է չորս սյուների վրա, պատերը զարդարված են եղել մարտի և
որսի տեսարաններ պատկերող բազմերանգ նկարներով: Ցերեկային

լաւան ալնտեղ է թափանցել միայն դանից, իսկ օջախի ծուխը դուրս է եղել երգիկից: Այդ պատճառով մեզարոնում միշտ կիսախավար է տիրել, մի բան, որը մեզ պարզաբանում է, թե Հոսեբրտան ինչու է այն «ստվերա» անվանում: Ավերակներում դտնված սկահակներն ու թրծակավե արձանիկները վկայում են, որ Տիրինթոսը պատկանել է այն նույն մշակույթին, ինչ որ Միքենեն և Պելուպոնեսի հունական մյուս բնակավայրերը:

Տրոյայում և բուն Հունաստանում կատարած աներևակայելի հայտնագործութիւնների շնորհիվ Շլիմանը նշանավոր մարդ դարձավ: Փառքի դագաթնակետին նա հասավ 1877 թվականին, երբ երեսուն գիտական ընկերութիւններ նրան հրավիրեցին Անգլիա: Նա մեկնում էր քաղաքից քաղաք, հանդես գալիս զեկուցումներով: Հասարակութիւնը տառացիորեն նրան բղիկ-բղիկ էր անում և առատորեն շնորհում պարգևներ՝ դիպլոմներ ու հուշամեդալներ: Այդ հաղթական երթում նրան ուղեկցում էր Աոֆյան, հիացմունք առաջացնելով իր դասական գեղեցկությամբ, արժանապատվությամբ լի շարժուձևով և ամուսնու հնագիտական հայտնագործութիւնների հիմնավոր իմացությամբ:

Այդ ժամանակվանից անցավ տասներեք տարի: 1890 թվականին, Անգլիա կատարած իր բազմաթիվ այցերից մեկից հետո Շլիմանը վերադառնում էր Աթենք, որտեղ տուն էր կառուցել և ընտանիքի հետ ընդմիշտ բնակութիւն հաստատել: Ծանապարհին նրա մոտ միջին ականջի բորբոքում սկսվեց, սակայն բժիշկների խորհուրդներին հակառակ, նա չընդհատեց ճամփորդութիւնը, որովհետև ուզում էր տուն հասնել մինչև ծենդյան տոները:

Ճրագալույցին նա հանկարծ կորցրեց գիտակցութիւնն ու ընկավ նեւալոլի հրապարակներից մեկում: Սրտացավ անցորդները անծանոթ մարդուն տարան մոտակա հիվանդանոց, բայց քանի որ Շլիմանը, ըստ իր սովորության, շատ աղքատ էր հագնված, հրաժարվեցին նրան հիվանդանոց ընդունել, համարելով մի աղքատ, որը չի կարողանա վճարել բուժման համար:

Շլիմանին տարան ոստիկանության մոտակա կոմիսարիատ: Ալնտեղ նրա գրպանում գտան մի տեղացի բժշկի հասցե, որի մոտ նա բուժվել էր: Կանչված բժիշկը կարդադրեց անմիջապէս մի կտրք վարձել հիվանդին հյուրանոց տանելու համար: Հանգամանքների տարօրինակ զուգահիւսությամբ այդ ժամանակ հյուրանոցում էր ապրում Հենդիկ Սենկլեիշը: Իտալիայում իր կատարած ճանապարհորդութիւնների մասին զրած նամակներից մեկում նա հայտնում է, որ վկա է եղել, թե ինչպէս են հյուրանոց բերել գիտակցութիւնը կորցրած Շլիմանին: Ոստիկանը անհանգրտացել է, թե ով պետք է վճարի նրա փոխադրման վարձը, որին բժիշկը պատասխանել է.

— Ախր նա շատ հարուստ մարդ է, — և ի սպացույց նրա գրպանից մի բաւոս ոսկեդրամ է հանել:

Նշխարանը նույն օրն էլ մտահացել է ազգեղի բարբառումից, հեռու իր կենտրոնից, աղջկանից՝ Անդրոմաքեից և որդուց՝ Ազամեմնոնից, հեռու իր սիրելի պեղումներից: Այգպես ավարտվեց նախկին հանձնակատար տղայի, հարուստ առևտրականի և, վերջապես, աշխարհի խոշորագույն հնադեաններից մեկի փոթորկալից կյանքը:

Մի Գնտապրոսի լարի ինքնուսում

1882 թվականին Աթենքում հայտնվեց երեսուներկուամյա անգլիացի Արթուր էվանսը: Նա հնամիջուկների մոլի հավաքող էր, հնագետ և նուժիզմատ, ամբողջ օրը անց էր կացնում հնավաճառների կրպակներում, տակնուվրա անում հնոտիները, ղննում գեմմաներն ու մետաղադրամները և, եթե որևէ բան իր ճաշակով էր լինում, գնում էր գրեթե առանց սակարկելու:

Երիտասարդ եկվորը շատ կարճատես էր, ուստի երրեք շեր բաժանվում հաստ, սատոտ ձեռնափայտից: Այդ թերութունը հանգեցրեց այն բանին, որ բոլորը սկսեցին նրան տիպիկ գրքային որդ համարել, որն իր գիտութունից դուրս աշխարհ չի տեսնում: Ոչ ոք չէր ենթադրում, որ այդ թուլակազմ գիտնականը Անգլիայում արդեն ձեռք էր բերել հանդգնության աստիճան խիզախ մարդու համբավ, որն իր ազմուկ հանած արարմունքներով լարվածության մեջ էր պահել թերթ ընթերցողներին և, ի լրումն, քարոզել էր հասարակական դժգոհություն առաջացրած քաղաքական արմատական հայացքներ:

Դա առավել ևս տարօրինակ էր, որովհետև Արթուրի պատանեկությունը, ինչպես ասում են, վարդաշատ էր եղել: Դեռևս մանկուց նա տարվել էր գիտական պարապմունքներով, ականջ դրել այն տաք բանավեճերին, որ վարում էին նրանց տանը հավաքվող հոր գործընկերները: Իր դյուրընկալության շնորհիվ նա կարճ ժամկետում ավարտել էր համալսարանը, որից հետո պատմության դասախոսի պատվավոր պաշտոն ստացել Օքսֆորդում:

Թվում էր, թե երիտասարդ Արթուրը կգնա հոր և պապի հետքերով, նրանց նման կդառնա համալսարանի պատկառելի պրոֆեսոր: Այնինչ նրա մեջ թաքնված էր կրակոտ, անհնազանդ, ոռմանտիկ արկածների ծարավ մի խառնվածք: Շուտով, իր բնավորության պատճառով, նա գրդեց համալսարանական իշխանություններին, քննադատելով նրանց մեռելային պահպանողականությունը և այնպիսի հայացքներ արտահայտելով, որոնք, այդ իշխանությունների կարծիքով, անհամատեղելի էին Օքսֆորդի պես հռչակավոր գիտական հաստատության դասախոսի արժանապատվության հետ:

Բացի այդ, ազատ ժամանակն ու արձակուրդը նա անցկացնում էր պրոֆեսորին ոչ սազական եղանակով. ուղեպարկը գցում էր շալակն ու մերթ հետիտն, մերթ ձիով գնում թափառելու Անգլիայում կամ Եվրոպայում, ճանապարհին օթևանելով պանդոկներում, գյուղական տներում ու մարագներում: Ժամանակի ընթացքում նա այդպես շրջեց Ռումինիան, Նորվեգիան, Շվեդիան, Ֆինլանդիան և նույնիսկ Լապլանդիայի սառած տունդրան:

1875 թվականին նա առաջին անգամ հայտնվեց Բալկաններում և սիրեց այդ վայրերը: Այնտեղ ամեն բան դուր էր գալիս նրան՝ Դալմաթիայի լանդշաֆտը, կապույտ Ադրիատիկայի կղզիները, թերակղզիներն ու ծովածոցերը, իրադարձություններով հարուստ պատմությունը, հոմեական, բյուզանդական, վենետիկյան և մահմեդական հնությունները, իսկ առանձնապես Սերբիայի և հորվաթիայի քաջարի ժողովուրդը, որը հերոսաբար պայքարում էր իր անկախության համար:

Այն ժամանակամիջոցում, երբ էվանսը գտնվում էր Բալկաններում, ապստամբություն բռնկվեց թուրքերի դեմ, որոնք 1526 թվականից ահավոր ձևով կեղեքում էին այդ երկրները: էվանսը դարձավ ապստամբների մոլեգին կողմնակիցը: Օրեր շարունակ նա գտնվում էր նրանց ճամբարում, մասնակցում պարտիզանական արշավներին, իսկ մի անգամ էլ զգեստափոխված թափանցեց թուրքերի գրաված տարածքը՝ տեղի սլավոնական բնակչության հետ կապ հաստատելու համար:

Բալկաններում տեղի ունեցող բուռն անցքերի մասին էվանսը թրդթակցություններ էր գրում անգլիական մամուլի համար, փառաբանում ապստամբների հերոսությունը, խարանում թուրքերի դաժանությունը, բայց ամենից առաջ կրքոտությունը գրոհում Մեծ Բրիտանիայի կառավարության վրա՝ հարավային սլավոնների ազատագրման գործի նկատմամբ նրա ցուցաբերած պասսիվ, օպորտունիստական վերաբերմունքի համար:

էվանսի գործունեությունը տհաճություն էր պատճառում տեղի անգլիական հյուպատոսին: էվանսի պրոպագանդան դիմակայելու համար հյուպատոսը Անգլիայում մի պաշտոնական հայտարարություն հրապարակեց, որով ժխտեց, թե թուրքերը բարբարոսաբար են վերաբերվել սլավոն բնակչությանը:

Դրանից վայրացած՝ էվանսը, ձգտելով թուրքական արյունալի տեռորի անհերքելի ապացույցներ հավաքել, լողալով անցավ անձրևներից ու ձնհալից հորդացած սառցաջուր, սրընթաց գետն ու հասավ ապստամբների գլխավոր ճամբարը: Շուտով անգլիական մամուլը, իսկ առանձնապես «Մանչեսթր գարդիան» լիբերալ թերթը, սկսեց հրապարակել հրդեհված գյուղերի, զանգվածային կոտորածների, բռնագրավումների և հայրենի վայրերից տեղահանված բնակիչների տառապանքների ցնցող նկարագրությունները: Անգլիական հյուպատոսը խայտառակվեց:

Մի անգամ էվանսն ընկավ թուրքերի ճանկը, և միայն անգլիական

քաղաքացու անձնագիրը նրան փրկեց կախաղանից: Սակայն նա ստիպված էր հեռանալ Բալկաններից և վերադառնալ Անգլիա, ուր սենսացիա առաջացրեց ապստամբի իր հագուստով, արևայրուկից բրոնզագույն դարձած դեմքով և կրակոտ պրոպագանդայով՝ ի պաշտպանութուն հարավային սլավոնների: Անգլիացիների խիղճն արթնացնելու համար նա իր հողվածների մեծ մասը հրատարակեց առանձին գրքույկով և, բացի այդ, փող ու հագուստ հավաքեց դժբախտ ժողովրդի համար, որի ճակատագիրն այնպես խորն էր հուզել նրան:

Նա ցնցված էր, երբ մեծ տերութունների դիվանագիտական մեքենայութունների հետևանքով Բոսնիան և Հերցոգովինան ազատութուն չստացան, այլ հանձնվեցին Ավստրիայի գերիշխանությանը:

Էվանսն ամուսնացավ և որոշեց ընդմիշտ բնակութուն հաստատել Դուբրովնիկում, որտեղ իր համար տուն գնեց: Այնտեղ նա զբաղվում էր պատմությամբ, հնագիտությամբ և քաղաքականությամբ, պեղում էր հին գերեզմաններ, հավաքում հունական և հռոմեական մետաղադրամներ, աշխատութուն գրում Դալմաթիայի վենետիկյան հնութունների մասին: Սիրված լինելով բոլորի կողմից, նա մեծ ժողովրդականութուն էր վայելում քաղաքի բնակիչների շրջանում:

Թվում էր, թե նրա կյանքն այլևս հանգիստ կրնա լինի: Սակայն 1878 թվականին ապստամբութուն բռնկվեց Ավստրիայի դեմ: Էվանսն առանց վարանելու թողեց գիտական աշխատանքն ու իր օդնութունն առաջարկեց ապստամբներին: Երկար ժամանակ նա գտնվում էր նրանց ճամբարում, որտեղից կրկին Անգլիա էր ուղարկում թղթակցութուններ, այս անգամ ապստամբների հերոսության և ավստրիական զորքերի պարտութունների մասին: Նրա տունը դարձավ գաղտնի ժողովատեղի և ոստիկանութունից թաքնվող հայրենասերների ապաստարան: Շուտով, սակայն, ավստրիական հետախուզութունը նրա տանը կատարվող անցուդարձի հոտն առավ: Էվանսը Ավստրիայի սահմաններից անհսպաղ հեռանալու հրաման ստացավ:

Անգլիայի համալսարանական շրջաններում նա առաջվա պես համարվում էր անպատասխանատու, անլուրջ մարդ, որն ընդունակ է ցանկացած խելահեղության: Ուստի, երբ նա սկսեց շարժարվել լոնդոնյան մի երկրորդական թանգարանի ղեկավարի պաշտոն ստանալու համար, հանդիպեց վճռական դիմադրության: Նորից արթնացավ նրա մարտատենչ խառնվածքը: Մի շարք հողվածներում նա նկարագրեց այդ թանգարանի խայտառակ, բարձիթողի վիճակը և, ի վերջո, շնայած բողոքներին, ստացավ դիրեկտորի պաշտոնը: Մինչև կյանքի վերջը նա մնաց դիրեկտոր, արմատապես վերակառուցելով թանգարանը:

Ամբողջ ազատ ժամանակը նա նվիրում էր ճանապարհորդութուններին: Դրանցից մեկի ժամանակ, ինչպես սկզբում արդեն հիշատակել ենք, նա 1882 թվականին հայտնվեց Աթենքում: Վազվելով հնութուն-

եւերով լի կրօնակից կրօպակ, նա շուտով ուշադրութեամբ դարձրեց աննշան, բայց հույժ ինքնօրինակ առարկաներին, որոնց հնավաճառները մեծ նշանակութիւն չէին տալիս: Դրանք գունաւոր քարերից շինված, եզրին անցք ունեցող հարթ բոլորակներ էին, մեղալի, թե համայնիլի պես ինչ-որ բաներ, որ կրում են քուղից կամ շղթայից կախած: Այդ քարե մեղալներից յուրաքանչյուրի վրա երևում էին փորագրված խորհրդավոր տառեր, որ նման չէին ոչ եգիպտական հիերոգլիֆներին, ոչ էլ ասուրական սեպագրին: Առևտրականները, որոնց էվանսը հարցուփորձ էր անում, ասում էին, թե այդ բոլորակները ստանում են Կրետեից, որտեղ դյուղացիները դրանք գտնում են վարած հողում:

էվանսը չէր կասկածում, որ այդ համայնիլները շատ հին են, որ դրանք վերաբերում են Կրետեի պատմութեան այն ժամանակաշրջանին, երբ այնտեղ փարթամորեն ծաղկել է մի մշակույթ, որը գործածել է մինչ այդ չվերծանված գրեր: Այն ժամանակ այդ մշակույթի մասին ոչինչ չգիտեին, բացի առասպելներից ու զրույցներից: Գտնված բոլորակները էվանսի համար դարձան այն հետքը, որը նրան հնարավորութիւն տվեց կատարելու հնագիտական ապշեցուցիչ հայտնագործութիւններ:

Աթենք ժամանելով, էվանսը, իհարկե, անուշադիր շանցավ Տրոյայի և Միքենեի մեծ հայտնագործող Հենրիխ Շլիմանի տան մոտով: Ժամանելուն պես նա հոր հանձնարարական նամակով գնաց Շլիմանի մոտ: Ծանոթութեան առաջին իսկ րոպեից, շնայած տարիքների մեծ տարբերութեանը, նրանք դուր եկան միմյանց: Ամբողջ օրեր և նույնիսկ գիշերներ նրանք անց էին կացնում թունդ վիճաբանութիւնների մեջ: Շլիմանը կլանված էր Տրոյայի և Միքենեի ոսկե գանձերով, իսկ անգլիացին տըքնում էր միքենյան կնիքների վրա, ուսումնասիրելով դրանց վրա փորագրված կանանց պատկերները:

Ամենից շատ նրա հետաքրքրութիւնը գրգռում էին այդ պճնասեր կանանց զգեստները, նրանց կրինոլինանման, գոտկատեղում ձիգ կապված շքեղ շորերը: Ուշադիր գննելով այդ անհայտ պալատական տիկնանց հագուստը, որը շատ էր հիշեցնում Լյուդովիկոս XV-ի ժամանակների ոսկոկո զգեստները, էվանսը նորից դեմ առավ Կրետեի մշակույթին: Նման զգեստներ նա արդեն տեսել էր Կրետեից բերված և ասթենացի հնավաճառների կրպակներում ի ցույց դրված կավե ամանների բեկորների վրա:

էվանսը առժամանակ պետք է վերադառնար Անգլիա, բայց նրա դիտողութիւնը, որը ցույց էր տալիս Միքենեի և Կրետեի մշակույթների խորհրդավոր կապը, մեծ տպավորութիւն թողեց Շլիմանի վրա, առավել ևս, որ Միքենեում աշխատանքներն ավարտելուց հետո նա իր համար հետազոտութեան նոր օբյեկտ էր որոնում:

Կրետեի գաղտնիքն արդեն մի քանի տարի հուզում էր նրան: Ոչ միայն Թեսուսի և Դեղալոսի մասին դրույցներն ու առասպելները, որոն-

ցում նա ջանում էր պատմական ճշմարտության հատիկ գտնել, այլև Հերոդոտի և Թուկիդիդեսի պես հին պատմիչների նոթագրությունները վկայում էին մշակութային և քաղաքական այն մեծ դերի մասին, որ նախապատմական ժամանակներում այդ կղզին խաղացել էր Միջերկրական ծովի ավազանում:

Մենք բոլորս էլ մանկուց գիտենք այդ հրաշալի զրույցները, սակայն ավելորդ չի լինի դրանք մեկ անգամ ևս հիշել այստեղ, թեկուզ և թուցիկ կերպով:

Կրետեի թագավոր Մինոսը, որն ապրում էր իր գահանիստ Կնոսոսում, հզոր տիրակալ էր, բայց ընտանեկան կյանքում տառապում էր մեծ ամոթից: Նրա կինը՝ Պասիթեն, ծնել էր կիսով շափ մարդ, կիսով շափ ցուլ մի ահավոր հրեշ՝ Մինոտավրոսին: Ցանկանալով իր ամոթը թաքցրնել մարդկանց աչքից, Մինոսը ճարտարապետ Դեդալոսին հանձնարարում է Մինոտավրոսի համար մի պալատ կառուցել խճճված սրահներով, սենյակներով ու միջանցքներով լաբիրինթոսի տեսքով:

Մի անգամ Մինոսի որդին՝ Անդրոգեյոսը, որ մի պարթև և բոլոր մարդաձևերում հմուտ պատանի էր, գնում է Աթենք, մտադիր լինելով հաղթանակի դափնիներ վաստակել Հունաստանի թեթևատլետիկական խաղերում: Բոլոր մրցումներում նա այնպիսի անհասանելի առավելության է հասնում աթենացիների նկատմամբ, որ Աթենքի թագավոր էգեյոսը հրամայում է դավաճանաբար սպանել նրան: Ցանկանալով լուծել որդու վրեժը, Մինոսը մեծ նավատորմով ուղևորվում է Հունաստան, ավերում Աթենքը և էգեյոսին ստիպում ամեն տարի որպես տուրք տալ յոթ աղջիկ և յոթ տղա, որոնք նախատեսված էին արյունարբու Մինոտավրոսին զոհաբերելու համար:

Աթենացիները երկու տարի վճարում են ահավոր տուրքը: Երրորդ տարում, երբ ընտրում են հերթական զոհերին, նրանց կամավոր միանում է էգեյոսի որդին՝ Թեսևսը, որպեսզի հաղթեր Մինոտավրոսին և այդ ձևով իր երկրակիցներին ազատեր ահավոր տառապանքներից:

Վտանգավոր ճանապարհորդության մեկնելուց առաջ նա հոր հետ սլայմանավորվում է, որ եթե իրենց վերադարձի ժամանակ նա հորիզոնում սև առագաստներ տեսնի, դա կնշանակի իր պարտությունն ու մահը, իսկ սպիտակ առագաստները տարած հաղթանակի ավետիս կլինեն:

Կրետեում Թեսևսի բախտը բերում է. Մինոսի դուստրը՝ Արիադենն, սիրահարվում է նրան: Հորից թաքուն նա Թեսևսին մի թուր և մի կծիկ թել է հանձնում, խորհուրդ տալով թելի ծայրը կապել լաբիրինթոսի մուտքի մոտ, իսկ հետո, առաջ գնալուն համեմատ, բացել կծիկը: Թեսևսը սպանում է Մինոտավրոսին և Արիադենի կծիկի շնորհիվ կարողանում ընկերների հետ գտնել լաբիրինթոսից դուրս գալու հետադարձ ուղին:

Թեսևսի նավը գաղտնի հեռանում է Կրետեից և սկսում լողալ դեպի Աթենք: Սակայն տարած հաղթանակի ուրախությունից Թեսևսը մոռա-

նում է սպիտակ առագաստներ բարձրացնել: Էգեյոս թագավորը, բարձր ժայռին նստած, անհամբերութեամբ սպասում է որդու վերադարձին: Մտտեցող նավի կայմին սև առագաստ տեսնելով, նա չի կարողանում դիմանալ որդու կորստյան ցավին և նկատում է ծովը, որը հետագայում անվանվում է էգեյան ծով:

Այդ նույն ժամանակ Դեդալոսը, որ ծնվել էր Աթենքում, սկսում է կարոտել իր հայրենիքը և Մինոսին թախանձագին խնդրում է ազատ արձակել իրեն: Սակայն Կրետեի տիրակալը նույնիսկ չի էլ մտածում զրրկվել Դեդալոսից՝ տաղանդավոր շինարարից, գյուտարարից ու նկարչից, որի հետ ժամանակակիցներից և ոչ ոք չէր կարող համեմատվել: Չէ որ այդ նա էր կառուցել ծովային նավահանգիստը, լաբիրինթոսը և թագավորի սքանչելի պալատը, հայտնագործել շաղափը, ջուլհակի դազգահը, ջրմուղը և հյուանի՝ շինարարութեան մեջ այնքան օգտակար հարթացույցը:

Չստանալով թագավորի համաձայնությունը, Դեդալոսը որոշում է գաղտնաբար հեռանալ Կրետեից: Այդ նպատակով նա իր և իր որդու՝ Իկարոսի համար թևեր է պատրաստում թռչնի փետուրներից, դրանք մեղրամոմով սոսնձելով միմյանց: Թռչելուց առաջ նա Իկարոսին զգուշացնում է, որ չափից ավելի շատ չբարձրանա երկնքի տակ, քանզի արևի թեթ ճառագայթները կարող են հալեցնել մեղրամոմը: Երբ նրանք երկուսն էլ արծվի պես սլանում են դեպի կապույտ լայնարձակություն, Իկարոսը մոռանում է հոր նախազգուշացումը: Հիացած, որ ճախրում է թռչնի պես, Իկարոսը բարձրանում է ավելի ու ավելի վեր, դեպի արևի ոսկե սկավառակը, երբ հանկարծ արևի ճառագայթներից նրա թևերը բաժան-բաժան են լինում, և նա քարի պես ընկնում է ծովի խորխորատը:

Անսփոփ վշտի մեջ Դեդալոսը թռչում է Սիցիլիա և ապավինում տեղի թագավորի հովանավորությանը, որը նրան լավ հյուրընկալություն է ցույց տալիս: Բայց Մինոսն իրեն պարտված չի ճանաչում: Նա ուզմական նավատորմով գալիս հասնում է Սիցիլիա և պահանջում հանձնել փախստականին: Սիցիլիայի թագավորը ձևանում է, թե ուրախ է նրա ժամանման համար և, ինչպես որ վայել էր հյուրընկալ տանտիրոջը, հրամայում է նրա համար լողանքի նախապատրաստություն տեսնել: Այն պահին, երբ Մինոսը պատրաստվում է լողանալ, Սիցիլիայի թագավորի երեք դուստրերը հանկարծակի նրան հրում գցում են եռման ջրով լի ավազանը, այդ ձևով Դեդալոսին ազատելով բռնակալի գերությունից:

Թեսևսի մասին պատմությունները աթենացիներն ամենևին ավանդազրույց չեն համարել: Նրանց համոզմամբ, նա պատմական անձնավորություն է եղել. Թեսևսի՝ համընդհանուր հարգանքով շրջապատված դամբարանը գտնվել է Աթենքի հենց կենտրոնում: Կրետեից նրա հաղթական վերադարձի տարեդարձը նշել են դիոնիսական տոնախմբության ժամանակ: Ի հիշատակ Թեսևսի կողմից աթենացի պատանդների փրկու-

թյան՝ Աթենքի պատանիներն ու աղջիկները ծաղիկներով զարդարված, ուրախ թափորով շրջել են քաղաքում:

Շլիմանը հանգեց այն համոզմունքին, որ Թեսևսի մասին ավանդազրույցը վկայում է, որ Միջերկրական ծովում գերիշխանութունը մի ժամանակ Կրետեին է պատկանել նրա ռազմական նավատորմի շնորհիվ: Եթե այդ եզրակացությունը ճիշտ է, դատում էր Շլիմանը, ուրեմն մի ժամանակ իրոք գահակալել է հզոր Մինոս թագավորը, որը գրավել է Աթենքը, կամ, ինչպես Հոմերոսն է հաստատում, այն ժամանակվա դինաստիայի Կրետեի թագավորները մինոս են կոչվել, այնպես, ինչպես Եգիպտոսի տիրակալները կոչվել են փարավոն: «Ողիսականի» XIX երգում իրեն Մինոսի թոռան տեղ դնելով, Ողիսեան ասում է.

Խոր ծովերի մեջ ընկած է Կրետե կոչվող երկիրն հեռու,
Որն ալեծեծ ու բարեբեր մի կղզի է գեղատեսիլ,
Քաղաքանակ բնակչությամբ և իննսուն քաղաքներով:
Ամեն ցեղ իր լեզուն ունի. կան սերունդներ աքայացոց
Եվ մեծասիրտ կրետացիներ, արժանավոր կեդոնացիք,
Գորևական ցեղեր երեք ու պեյասդներ աստվածատիպ:
Կնոսս քաղաքն այնտեղ է հենց, որին Մինոս հզոր արքան,
Սիրեցյալը ահեղ Ջևոի, ինը տարի կտռալար'ից .
(Քարգմանությունը՝ Ս. Գրեաշարյանի)

Ավելի հանգամանալից հաղորդում կարելի է գտնել Թուկիդիդեսի երկերում: Նրա «Պատմության» առաջին գրքում կարդում ենք հետևյալը.

Քանզի Մինոսը, ինչպես զրույցներն են ասում, հույժ վաղ ժամանակներում նավատորմ է կազմել և իշխել այժմյան Հելլենական ծովի գերակշիռ մասին, տիրելով նաև Կիկլադներին. և առաջինն է եղել, որ բնակեցրել է կղզիներից շատերը, այնտեղից վտարելով կարիացիներին և իր որդիներին իշխաններ կարգելով այնտեղ: Եվ, ինչպես պետք է կարծել, ծովը բավական մաքրել է ավազակներից, որպեսզի եկամուտները ծովով հասնեին իրեն:

Շլիմանը որոշեց պարզել Կրետեի մշակույթի գաղտնիքը: Ուստի 1886 թվականին նա մեկնեց Կրետե, որպեսզի ավելի լավ ճանաչեր այդ կղզին: Լեոնային գոգահնովտում, Հերակլիոն քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, վեր է խոյանում Կեֆալա բլուրը, որտեղ, ավանդության համաձայն, մի ժամանակ գտնվել է Կնոսոսը: Շլիմանի Կրետե ժամանելուց ինը տարի առաջ տեղի իսպանական հյուպատոսն այնտեղ պեղումներ էր կատարել և հաստատել մեծ խորության վրա գտնվող մի հսկայական շինության առկայությունը:

Կանոնավոր պեղումներ սկսելու համար նախ հարկ էր այդ բլուրը գնել իր տիրոջից: Սակայն խորամանկ կրետացին պահանջեց բլրի հետ միասին հարյուր հազար ֆրանկով գնել չամբողջ տնտեսությունը՝ շինու-
13 Երբ արևը աստված էր

թյուններով, խաղողի և ձիթենու այգիներով հանդերձ: Դա այնքան բարձր գին էր, որ Շլիմանը չհամաձայնեց և սառտիկ զայրացած վերադարձավ Աթենք:

Կրետացի գյուղացին, հասկանալով, որ իջ պահանջներով չափն անց է կացրել, հեռագիր ուղարկեց Աթենք, հայտնելով, թե գինը իջեցնելով հասցրել է քառասուն հազար ֆրանկի, պայմանով, սակայն, որ Շլիմանն այդ գումարն անհապաղ փոխանցի Աթենքի բանկ՝ նրա հաշվին:

Բայց Շլիմանը զուր չէր երկար տարիներ վաճառական եղել. գյուղացու աճապարանքում ինչ-որ խարդախություն նախագագաց: Նա կրկին մեկնեց Կրետե և աննկարագրելիորեն զայրացած, համոզվեց, որ իրականում բլրին հազար վեց հարյուր տասներկու ձիթենի պակաս կա, քան տերն էր պնդում:

Խաբուսթյունից զայրացած, Շլիմանը ձեռք քաշեց ամեն ինչից և հրաժարվեց գնումից: Այս անգամ Շլիման-վաճառականը հաղթանակ տարավ Շլիման-հնազետի նկատմամբ: Ձիթենիների պատճառով, որոնք նրա համար նշանակալի արժեք չէին ներկայացնում, նա հրաժարվեց երրորդ, գուցե, իր կյանքում ամենամեծ հայտնագործությունից:

Շլիմանի մահից շոքս տարի անց Կրետե մեկնեց Արթուր Էվանսը: Առաջին իսկ հայացքից կղզին դուր եկավ նրան: Ուր որ հայացք էր նետում, ամենուրեք այդ կղզու պատմությունն էր տեսնում իր ողջ փայլով: Հույները, հռոմեացիները, ֆրանկները, վենետիկցիները և թուրքերը հերթով իրենց տիրապետության հետքերն էին թողել այնտեղ: Հեքակլիոնում նա հիացավ վենետիկյան հին միջնաբերդում քանդակված սուրբ Մարկոսի Առյուծով: Տների սփյուռքի վրա վեր էին խոյանում մզկիթների գմբեթներն ու կաթոլիկական տաճարների սլաքաձև աշտաքակները: Երան դուր եկավ նաև կղզու լանդշաֆտը, կարծես կտրտված կրաքարային բլրակները, սուվերախիտ զառիթափները, արևի լույսով ողողված գոգահովիտներն ու վառ կապույտ ծովը:

Սակայն պեղումներն սկսելու առաջին փորձերը զուր անցան: Կղզին օկուպացրած թուրքիան էվանսին չէր ներել, որ նա համակրել էր բալկանյան ապստամբներին, և նրա դեմ ամեն կարգի խոչընդոտներ էին հարուցում: Նա մեկնեց Անգլիա և վերադարձավ միայն հինգ տարի անց, երբ Կրետեն կրկին միացվեց Հունաստանին: Հորից ստացած փողով էվանսը գնեց Կեֆալա բլուրը, այնտեղ տուն կառուցեց և կանոնավոր պեղումներ սկսեց:

Արդեն առաջին իսկ արդյունքները էվանսին համոզեցին, որ ինքը հայտնաբերել է մի անհայտ քաղաքակրթություն, որը շատ ավելի հին էր միքենյանից: Երկուսուկես հեկտար տարածության վրա հողի տակ մի հսկայական պալատ էր թաքնված, ավելի շուտ մի ամբողջ համակառույց, այնպիսի ճարտարապետությամբ, որը կարող էր ձևավորվել միայն բար-

գալիտեճող, բազմադարյան ավանդույթների ունեցող հարուստ պետութեան մեջ:

Աշխատանքների առաջ գնալուն համեմատ հողի տակից երևան էին գալիս բայնպիսի խճճված անհամար սենյակների ու դահլիճների շարքեր, սրահներ, գաղտնի անցումներ, սանդուղքներ ու բակեր, որ արդարև լաբիրինթոս էին հիշեցնում:

Արդե՞ն ոչ մի կասկած չիկնել չի կարող, — գրել է էվանսը, — որ ընդարձակ շինությունը, որը մե՛նք Միևոսի պալատ եմք անվանում, առասպելական նույն լաբիրինթոսն է: Երկար դահլիճներով և փակ միջանցքներով, բարդ անցումներով և փոքրիկ սենյակների խնդրված նամակարգով հորիզոնական հատակագիծը հիրավի ունի քառսի բոլոր հատկանիշները, քառս, որ անհնար է մեկնել:

Մեկ ամիս անց էվանսը մի հայտնագործություն կատարեց, որը բարձր արձագանք առաջացրեց բովանդակ աշխարհում: Պատերից մեկի վրա ապշեցուցիչ թարմ գույներով մի նկար էր պահպանվել: Ժամանակակից մարդն առաջին անգամ տեսավ այն հանելուկային ժողովրդի բնական մեծությամբ պատկերված ներկայացուցչին, որը մի ժամանակ, հեռավոր անցյալում, հասել էր մշակութային զարգացման չափազանց բարձր աստիճանի: Գունագեղ որմնանկարը պատկերում էր երկու ձեռքով կոնաձև սկահակ, այսպես կոչված ռիտոն բռնած պատանու: Պատանին բարեկազմ էր, բրոնզագույն արևայրուկով, ազդրակապով: Ազնիվ կիսադեմը, լիքը շրթունքները և նշաձև սև աչքերը նրա գեղեցկությունը փոքր-ինչ կանացիական էին դարձնում:

Կրետացու նկարը առանձին հուզմունք առաջացրեց եգիպտագետների մեջ: Այն պարզեց խորհրդավոր ժողովրդի ներկայացուցիչների առեղծվածը, որոնց պատկերները հաճախ հանդիպում էին եգիպտական դամբարանների պատերին: Նրանց ճանաչում էին ոսկե-կապտագույն ազդրակապերից և բնորոշ ռիտոններից, որոնցով նրանք փարավոններին տուրք և ընծաներ են տարիլ:

Դամբարանների հիերոգլիֆային արձանագրություններում տարօրինակ ձևով հագնված այդ տղամարդիկ անվանվում էին «կղզու ժողովրդի» կամ «մեծ կանաչ ծովի ժողովրդի» պատվիրակներ: Միայն էվանսի հայտնագործությունը հաստատեց այն, ինչ վաղուց ի վեր ենթադրվում էր. Keftin անվան տակ թաքնվել են Կրետեի բնակիչները: Տարբեր ժամանակներում փարավոնները կամ կռիվներ են մղել կրետացիների դեմ, կամ առևտրական աշխույժ հարաբերություններ պահպանել նրանց հետ: Պատմությունն, օրինակ, հիշատակում է, որ փարավոնների պատվիրով կրետական նավերը Լիբանանից մայրու փայտ են փոխադրել Եգիպտոս:

էվանսը Միևոսի պալատի պեղումներին նվիրեց իր կյանքի գրեթե հրեսուն տարին և հորից ժառանգած ամբողջ ունեցվածքը: Պեղումների

ժամանակ տարիներով կատարված տքնալից աշխատանքից և փութաջան վերակառուցումից հետո միայն կարելի էր գնահատել պալատի մեծությունն ու շքեղությունը: Թվացյալ քառսը աստիճանաբար վերածվեց շինարարների մեծ վարպետության մասին վկայող ճարտարապետական խելամիտ շարքի:

Սալարկված մեծ բակի շուրջը գտնվում էր տարբեր նշանակության շինությունների համալիրը: Այնտեղ կային հանդիսավոր ընդունելությունների համար նախատեսված դահլիճներ, թագավորի և թագուհու հարկաբաժիններ, պալատականների, սպասավորների ու ստրուկների սենյակներ, ինչպես նաև ընդարձակ շինություններ, որտեղ գտնվում էին թագավորի արհեստավորների աշխատանոցները: Պալատն ուներ մի քանի հարկ, որոնք միանում էին հատուկ ձևի սյուների վրա հենված մոնումենտալ սանդուղքներով. ի տարբերություն հունական սյուների, դրանք ներքևում նեղանում էին:

Պալատի ստորգետնյա հատվածներում էվանսը գտավ մառաններ՝ երեք մետր բարձրությամբ բազմաթիվ կարասներով, որոնցում պահվել էին մթերքներ, հատկապես գինի և ձիթայուղ՝ կղզու գլխավոր մթերքները: Հաշվված է, որ դրանցում կարող էր տեղավորվել շուրջ երեսունհինգ հազար լիտր գինի և ձիթ: Դա վկայում է կրետական արքունիքում եղած արտակարգ առատության մասին: Մառանի հատակում հայտնաբերվեցին բոլորաշարված գաղտնարաններ: Երկար ժամանակ չէին կարողանում պարզել դրանց նշանակությունը, բայց մի անգամ այնտեղ ոսկու հետքեր գտան և այդ ժամանակ պարզ դարձավ, որ Մինոս թագավորը պատերազմի ժամանակ ձեռք բերած գանձերը կամ առևտրից ստացած եկամուտները պահել է այդ գաղտնարաններում:

Հետաքրքիր է առանձնապես լավ պահպանված գահադահլիճը: Պատերից մեկին հենված է կրաքարից պատրաստված և գոթական աթոռ հիշեցնող թագավորական գահը: Դա ամենահին գահն է աշխարհում, որ լիովին պահպանվել է մինչև մեր օրերը: Հիանալիորեն հղկված կրաքարն ավելի շատ նման է կարրարյան մարմարի: Գահի երկու կողմերում պատին պատկերված են ոճավորված երկու գրիֆոններ՝ թռչնի գլխով թևավոր առյուծներ, որոնք ժանգի երանգներով նկարված են բաց երկնագույն ֆոնի վրա: Կողմնային երկու պատերի երկարությամբ դրված են պալատական բարձրաստիճան պաշտոնյաների համար նախատեսված քարե նստարաններ:

Ապշեցուցիչ է պալատի բացառիկ հարմարավետությունը: Բոլոր հարկերն ունեցել են ջրմուղ և կոյուզի, որոնք հարուցում են ժամանակակից մասնագետների զարմանքը: Պալատի բնակիչների տրամադրության տակ եղել են լոգարաններ, ջրավազաններ՝ ոտքերը լվանալու համար, և ջրով մաքրվող արտաքնոցներ: Թարմ օդն ու արևի լույսը բոլոր սենյակ-

ներն են թափանցել գլխավոր բակ տանող դռներից կամ կամարների մեջ եղած անցքերից, ինչպես նաև հատուկ բացված որմնախոռոչներից:

Կնոսոսի պալատն այնպես է հարաբերակցվում Միքենեի և Տիրին-թոսի շինությունների հետ, ինչպես Վերսալի պալատը միջնադարյան բարոնների դղյակների հետ: Կրետեի թագավորները ներխուժումներից երկյուղ չեն կրել, ուստի հարկ չի եղել քաղաքը շրջապատել բերդապարսպով: Կրետեի անվտանգությունը պայմանավորված է եղել ոչ միայն մայրցամաքից հեռու ընկած լինելով, այլ առաջին հերթին նրանով, որ նա ունեցել է ամենահզոր, եթե այն ժամանակ ոչ միակ, ռազմական նավատորմը, որը կղզու ափերն ավելի հուսալիորեն է պահպանել, քան ցանկացած ամրություն:

Իր թեթև, բաց և ազատ ճարտարապետությամբ Կնոսոսի պալատը նման է Վերածննդի ժամանակաշրջանի պալատներին: Կրետեի նավահանգստում հայտնված նավաստիները հիացել են իրենց դիմաց բացված տեսարանից: Հարավային կապույտ, արևոտ երկնքի ֆոնի վրա փայլփլել են բաղմահարկ ճերմակ շենքերը, երկար պատշգամբները, սանդուղքները, սյուներն ու գավիթները: Դա, երևի սքանչելի պատկեր է եղել, և դարմանալի ոչինչ չկա, որ նավաստիները պալատի մասին ամենահիացական սլատմություններ են տարածել:

Առաջին գտածոներով դժվար էր կռահել, թե ինչպիսին է նկարիչների, շինարարների և ծովային վաճառականների այդ ժողովրդի էթնիկական ծագումը, ժողովուրդ, որն իր փարթամորեն ծաղկուն մշակույթով հրակայական ազդեցություն էր գործել իրեն բոլոր կողմերից շրջապատած Միջերկրական ծովի կղզիներում բնակություն հաստատած մյուս ժողովուրդների մշակույթների վրա: Պալատի ավերակներում էվանսը գտավ հարյուրավոր կավե սալիկներ՝ ծածկված առեղծվածային գրերով, որ նա դեռ Աթենքում էր տեսել: Այդ սալիկներն, անկասկած, կօգնեին պարզելու կրետացիների ծագման գաղտնիքը, բայց, չնայած գիտնականների գրեթե կեսդարյա ջանքերին, ոչ ոք չկարողացավ կարդալ խորհրդավոր նշանները:

Կրետեի հին բնակիչների կյանքին ու բարքերին ծանոթանալ օգնեց այն հանգամանքը, որ պալատի սենյակների, գավիթների և սրահների պատերը զարդարված էին այդ ժողովրդի կյանքից վերցված տարբեր տեսարաններ պատկերող բաղմամբիվ նկարներով: Կրետեի նկարիչներն այդ որմնանկարներում ասես արարել էին գույների մի աշխարհ, որոնցով անդուզական վարպետությամբ գովերգել էին կյանքի հրապույրները: Բարեբախտաբար, որմնանկարները լիովին չեն ոչնչացել:

Նույնիսկ հիմա էլ զարմանք է հարուցում դրանց հյութեղ, հարուստ գունագեղությունը, ուր գերակշռում են կապույտ, կանաչ և ալ կարմիր երանգները:

Որմնանկարների կերպարային հորինվածքները թեթևակի ոճավորված են, որովհետև դրանք ծառայել են գլխավորապես զարդարարական նպատակներին: Քայց դրանց մաքուր և աչք շոյող գծերում նկարիչները հազվադեպ են նահանջել խեղամիտ ռեալիզմի հիմունքներից: Հիմա, նայելով դեռևս չնշված այդ նկարներին, մենք կարծես թե ընկնում ենք ուրիշ աշխարհ, ուր մեր աչքին, կախարդական կերպով փոքրացած, ներկայանում է կրեոացիների պայծառ, բազմազան կյանքը: Սակայն դա բացառապես պալատական էջանք է, լի ամեն կարգի պայմանականություններով, ամբողջովին հաճույքներով և կյանքի խնդություններով տարված հրեաճաշակ մարդկանց կյանք: Խնչպիսի՞ զարմանալի հակադրություն Միքենեի որմնանկարների համեմատությամբ, որոնց գլխավոր մոտիվներն էին որսի և մաքսի ակաթափները: Կնսասյան նկարներն ամենից առաջ վկայում են, որ Մինոս թագավորի արքունիքն ապրել է շտեմնված հախության և պերճանքի մեջ: Այդպիսի արքունիք կարող էր ստեղծվել միայն ժողովրդական զանգվածների ու սարուկների շահագործման վրա հիմնված հասարակարգում:

Մեր աչքի առջև անցնում են դաշտերում զբոսնող պատանիներ ու աղջիկներ, ըմբիշներ ու բռնցքամարտիկներ, կաքավոլ վարձակներ ու զոհարաններում ծեսեր կատարող զրմուհիների թափոքներ: Նկարներից մեկում պատկերված են գեապակ տանող շորս գերիներ, որի մեջ պալատական շքեղազգեստ տիկին է նստած:

Եզիպտական դամբարանների պատերին պատկերված էին միայն վռնի օսլայած զգեստներ հագած, քարացած, պայմանական ֆիգուրներ: Մինչդեռ Կնսոսում բոլոր պատկերներն ազատ ու կենդանի են իրենց շարժումներում, այդ պատճառով ավելի մարդկային են, մոտիկ ու հասկանալի:

Կերպարային հորինվածքների հետ մեկտեղ Կնսոսի որմնանկարչությունը առատ է անմիջականորեն Կրետեի բնությունից քաղված մոտիվներով: Նկարներում պատկերված են շուշաններով, քրքումով, մանուշակներով ծածկված մարգագետիններ, եղեղնուտներում թաքնված կաքավներ, նապաստակին հետամուտ վարազներ, աքլորներին դարանած կատուններ, ձիթենու ծաղկափթիթ ճյուղեր: Կրեոացիները ծովազնաց ժողովուրդ են եղել, և որմնանկարներում հաճախ են պատահում ութոտնուկների, ձկների, ծովաստղերի ու կակղամորթների ոճավորված պատկերներ: Կրեոացիները շատ զգայուն են եղել բնության գեղեցկությունների նկատմամբ, որով տարբերվել են Միջագետքի, Եզիպտոսի և նույնիսկ Հունաստանի՝ իրենց ժամանակակից ժողովուրդներից:

Ամենասքանչելիներից մեկը Կրետեի երիտասարդ թագավորին պատկերող որմնանկարն է: Կինաբարիսագույն ֆոնի վրա պատկերված է արևից թխացած մի երիտասարդ, որը զնում է ծաղկած շուշաններով սփռված դաշտով: Նա ձեռքը դրել է սրտին, իրանը քիչ հետ է թեքել: Նրա

հազաւարը սպիտակ-երկնագույն ազդրակացն է, գլուխը պատկրված է սիքամարգի փետրաժնոջով դարգարված թագով, որի տակից ուտերին են թափվել դանդուր մազերի խոպոպները: Դիմագծերի որոշ կանաչիու-թյանը զկայում է, որ այդ նրբազազմ պատանին մեծացել է պալատի քերմոցային պայմաններում, մարտերի շառաչից հետու, օրոնցով արքե-ցել են միքենյան խառախրա զոքականները:

Մտկայն Կնոստսի պալատական կյանքի մասին լավագույնս պատ-կերացում են՝ տալիս կրիտացի տիկնանց պատկերող երեք որմնանկար-ները: Պշուհիները նստարաններին խումբ-խումբ նստած, հետևում են խաղերին. այդ է վկայում նրանց թիկունքում օւրվագծված հանդիսա-կանների ամբոխը: Կանայք նստաւոր ասնթաժաժներով են և խոր լան-ջարացվածք ունեցող զգեստներով, որոնք շրջակարված են կրկնագույն, կարմիր, սպիտակ և սև բոլորածալերով: Նրանց գլուխները, պարանոց-ները և ուտերը ծածկված են ոսկե և արծաթե բաղմամբիվ զարդերով:

Անսպասելի է հումորի զգացումը, որով կրեւացի նկարիչը պատ-կերել է այդ կանանց: Դասեղով նրանց շարժումներից և գլուխների թեք-վածքից, նրանք թաքուն միմյանց պատմում են պալատական անպար-կելշտ բամբասանքներ և այնպես են կլանված դրանով, որ ոչ մի ուշա-դրություն չեն դարձնում ասպարեզում անդի ունեցող իրադարձության-ներին: Այդ որմնանկարներում, թերևս, արվեստի պատմության մեջ առա-ջին անգամ գիտակցաբար արտահայտված է նկարչի ձգտումը դեպի ծաղրանկարը:

Մինչև այժմ չլուծված վեճի թեմա է այնպես կոչված «Յլամարտիկ-ների որմնանկարը»: Որմնանկարում պատկերված է գրոհող ցուլ, խակ մի պատանի ցուլի մեջքին մահացատկ է կատարում: Հետևում կանգնած ակրոբատուհին ձեռքերն է պտբել՝ պատանուն բռնելու համար, այդ նույն ժամանակ ակրոբատուհու ընկերուհին բռնել է ցուլի պոզերից, որ-պեսզի նույնպիսի գլխապտույտ ցատկ կատարի: Երևի դա ժողովրդա-կան մարզաձև է եղել, որովհետև նման տեսարաններ հաճախ են հան-դիպում Կրետեի տարբեր վայրերում պատրաստված խեցե իրերի և կնիք-ների վրա:

Այդ տեսարանը շափազանց հետաքրքրեց էվանսին: Կասկածի են-թակա չէր, որ նման ակրոբատիկան պահանջել է կայծակնային կողմնո-րոշում, ուղղակի գեթմաբդկային ճարակություն և խիզախություն: Դա զեք չէ՞ր արգոք մարդու ուժերից: Մասնագետները, հատկապես իսպա-նացի ցլամարտիկներն ու ամերիկացի կովբոյները, որոնց հարցրել էին այդ մասին, բացասաբար պատասխանեցին: Նրանց ասելով, գրոհող ցուլի արագությունն այնքան մեծ է, որ չկա մի մարդ, որը կարողանա մի ակնթարթում բռնել նրա պոզերից, ձգվել-բարձրանալ ձեռքերի վրա, պտտացատկ կատարել ու ոտքերի վրա կանգնել ցուլի հետևում:

Եվ, այնուամենայնիվ, այդ տեսարանը չէր կարող լինել կրեատացի նկարիչների սոսկ երևակայության արդյունքը: Չէ՞ որ նրանք տեղ-տեղ պատկերել են նաև դժբախտ դեպքեր, որոնք այդ ակրոբատիկայի ժամանակ պետք է, որ հաճախ պատահեին: Սկահակներից մեկի վրա ցուլը պոզերով շամփրում է մի վայրկյան հապաղած մորուքավոր տղամարդուն, իսկ մի կնիքի վրա կանտաղած կենդանին կոխկրտում և պոզահարում է գետին տապալված պատանուն: Այդ սարսափազդու ակրոբատիկայի առեղծվածը մինչև հիմա էլ մնացել է չպարզված:

Մինոսի պալատում ամենուրեք (ի միջի այլոց՝ նաև գահադահլիճում) պատահում է երկսայրի փոքրիկ կացնի նկար: Հետազոտողները սկզբում շէին հասկանում դրա նշանակությունը, թեև ակներև էր, որ այդ նկարը Կրետեում ինչ-որ շատ կարևոր խորհրդանշան է եղել: Ոմանք դա համարում էին թագավորական իշխանության խորհրդանիշ, նման ճիպտափնջով այն կացիններին, որ լիկտորները տարել են հռոմեական կոնսուլների առջևից, մյուսները՝ կրետացիների կրոնական պաշտամունքի հետ կապված խորհրդանիշ: Հարցը վերջնականապես լուծեց այն հայտնագործությունը, որ կատարվեց ավանդազրույցի համաձայն Զևսի ծննդատեղին եղած քարանձավում: Շթաքարերի և պտկաքարերի արանքներում գտան երկսայրի բազմաթիվ մանրակերտ կացիններ. դրանք շատ դարեր առաջ հավատացյալների կատարած պաշտամունքային նվիրաբերություններն էին:

Երկսայրի կացինը հունարեն կոչվում է «լաբրիս»: Ենթադրություն է ծագում, որ հենց այդ բառի արմատից է առաջանում «լաբիրինթոս» անվանումը և որ սկզբնապես այն գործածել են Մինոս թագավորի պալատը նշելու համար, որովհետև այնտեղ գրեթե յուրաքանչյուր քայլափոխին պատահել է երկսայրի կացնի բնորոշ խորհրդանշանը:

Աստիճանաբար լաբիրինթոսը նույնացրել են պալատի ներքին բարդ կառուցվածքի հետ և, վերջապես, ժողովրդի երևակայության մեջ հառնել է մի հատուկ շինություն, ուր առասպելական հրեշ Մինոտավրոսը խժոնել է դրա միջանցքներում մոլորված մարդկանց:

Նույնիսկ Թեսևսի և Մինոտավրոսի մասին առասպելներում հնչում է իրական իրադարձությունների արձագանքը: Բնավ բացառված չէ, որ Կրետեի թագավորները պատանդներին նախ բանտարկել են իրենց պալատում, իսկ հետո հարկադրել վտանգավոր մրցակցության մեջ մտնել ցուլ-մինոտավրոսների հետ: Այդ մրցումները պետք է մեծ մասամբ ավարտվեին կատաղած կենդանու կողմից պոզահարված ըմբիշի մահով:

Այդ պատճառով Արթուր էվանսի ենթադրությունը զուրկ չէր իրական հիմքերից, երբ նա Կնոսոսում իր հայտնաբերած պալատը նույնացրեց այն լաբիրինթոսի հետ, որի մասին ասվում է առասպելներում և ավանդազրույցներում:

Պատմության հայտնագործված մայրցամաքները

Հետևությունները, որ Շլիմանն արել էր ի հաստատումն այն քանի, թե «նայել է Ագամեմնոնի դեմքին», դեռ նրա կենդանության օրոք ընկան քննադատության կրակի տակ: Որոշ հետազոտողներ, այդ թվում նաև նրա մերձավոր աշխատակից, հայտնի հնագետ Վիլհելմ Դյորպֆելդը, ուշադրություն դարձրին շլիմանյան հետևությունների նախադրյալների թուլությանը և կարծիք հայտնեցին, որ միջինյան գերեզմանները առնչվազն չորս հարյուր տարով կանխում են Ագամեմնոնի ժամանակները: Մ. թ. ա. 1180 թվականն ընդունելով որպես Տրոյական պատերազմի ավարտման տարեթիվ, նրանք համարում էին, որ գտնված գերեզմանները վերաբերում են մ. թ. ա. XVI դարի սկզբին:

Նոր հիպոթեզը պետք է նույնիսկ շոյեր Շլիմանին: Դրա իմաստն այն էր, որ Միքենեում կատարված հայտնագործությունը պատմության համար ավելի վճռական նշանակություն ուներ, քան նա ինքն էր պատրաստ ընդունելու:

Մինչև այդ գերեզմանները հայտնաբերելը Հունաստանի պատմությունը պատմագրության մեջ սկսվում էր մ. թ. ա. 776 թվականի առաջին օլիմպիադայից: Այն ամենը, ինչ եղել էր դրանից առաջ, դասվել է պատմական հիմնավորումից զուրկ առասպելների և ավանդազրույցների շարքը: Շլիմանը համարում էր, որ Միքենեում կատարված պեղումների հետևանքով ինքը Հունաստանի պատմությունը չորս հարյուր տարով հետ է տարել դեպի ժամանակների խորքը: Մինչդեռ քննադատների կարծիքով, մարդկության գիտելիքները նրա շնորհիվ հարստացել էին գրեթե ութհարյուրամյա պատմությամբ, որը հասնում էր Հին Հունաստանի մինչ այդ անհայտ արշալույսին:

Բայց Շլիմանը հիպնոսված էր իր այն թեզիսով, որ հայտնաբերել է Ագամեմնոնի գերեզմանը: Նա ընդդունեց նոր հիպոթեզը և հակադրվեց բոլոր կասկածներին ու հերքումներին: Այդ տեսակետից նա շատ նման է եղել Կոլումբոսին, որը մինչև կյանքի վերջը պնդել է, թե Հնդկաստան տանող ծովային նոր ուղի է գտել, թեև իրականում նրա ծառայությունն անհամեմատ մեծ էր՝ նա նոր մայրցամաք էր հայտնաբերել:

Տեղը չէ խորանալու այդ վիճաբանության բոլոր մանրամասնությունների մեջ: Ուստի սահմանափակվենք միայն Շլիմանի մի քանի («Ագամեմնոնի ոսկե դիմապատկերը» գլխում արդեն համառոտակի հիշատակված) հիմնական փաստարկների և քննադատական այն առարկությունների համադրմամբ, որ առաջ էին քաշում նրա ընդդիմախոսները՝ վիճարկելու համար տեսությունը, թե իբր միջինյան աճյունները պատկանում են Ագամեմնոնի ջոկատին:

ԱՌԱՋԻՆ ՓԱՍՏԱՐԿ. Երկար վահանները, երկկանթ գավաթը և վա-

բազի՝ զարդարանքի համար նախատեսված ժանիքները վկայում են, որ միջենյան ուղիքները Տրոյական պատերազմի հերոսներն են:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ. Իրոք, այդ զուգադիպությունները ստիպում են շատ քաների մասին մտածել: Սակայն չի կարելի քամահրել այն տարբերությունները, որոնք ավելի էական են, քան այդ զուգադիպությունները: Պեղումներից հետևում է, որ միջենյանները թաղել են մեռածների աճյունները, այն դեպքում, երբ հոմերոսյան հերոսները դրանք այրել են խարույկի բոցերում: Գերեզմաններում միայն բրոնզե զենքեր են գտնվել, մինչդեռ «Իլիականի» հերոսներն արդեն երկաթյա վահաններ ու թրեր են ունեցել: Այստեղից կարող է բխել միայն մեկ հետևություն՝ միջենյաններն ապրել են բրոնզի դարում, երբ մի քանի հարյուր տարի նախորդում է երկաթի դարին, երբ ապրել են Ազամեմնոնն ու Տրոյական պատերազմի նրա ընկերները:

ԵՐԿՐՈՐԴ ՓԱՍՏԱՐԿ. Պավսանիասը հայտնում է, որ միջենյան պալատի բակում տեսել է Ազամեմնոնի և նրա ընկերների հինգ գերեզմանները: Շլիմանը այնտեղ պեղեց հինգ հինգ գերեզման, այսինքն այնքան, որքան նշում է հույն ճանապարհորդը:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ. Այո, իհարկե, սկզբում այդ փաստարկը որոշ իրական հիմքեր ուներ, բայց մինչև որոշ ժամանակ. մի քիչ ավելի ուշ հույն հնագետ Ստոմատոկիսը ամբողջի բակում հայտնաբերեց վեցերորդ գերեզմանը, որը առարկայազրկեց այդ փաստարկը: Որպես հետևանք եզրակացություն՝ Պավսանիասը տեսել է ուրիշ գերեզմաններ և ոչ թե նրանք, որ բացել է Շլիմանը:

Վերջիվերջո այդ ևն հաստատում նաև տարածքի լրացուցիչ հետազոտությունները: Պարզվեց, որ միջենյան ամբողջի բակը հաստ շերտով ծածկած փլատակները եղել են դեռևս Պավսանիասի ժամանակներում, ուրեմն, քարաբեկորների տակ խորը թաքնված գերեզմանները այն ժամանակ չէին կարող տեսանելի լինել: Ոսկե իրերով լի թագավորական գերեզմանները միայն այդ պարագայի շնորհիվ են փրկվել ու շեն կոչուպովել տարբեր շրջաններում Պելոպոնեսյան թերակղզին տիրած բազմաթիվ նվաճողների կողմից:

ԵՐԿՐՈՐԴ ՓԱՍՏԱՐԿ. Գերեզմաններում գտնված աճյունները թաղվել են միաժամանակ, ընդհանուր, կոլեկտիվ դամբարանում: Ուրեմն, Միջենում ինչ-որ հանցագործություն է կատարվել, որին զոհ են գնացել թագավորական տոհմին և ավագանուն պատկանած տասնինը մարդ: Դա ի՞նչ հանցագործություն կարող է լինել, եթե ոչ էգիսթոսի և Կլիանմենատրայի սարքած արյունոտ կոտորածը:

Երկու հանգամանք վկայում են, որ աճյունները թաղվել են միաժամանակ: Առաջին, գերեզմանները լցված լին հողով և քարաբեկորներով, որն, անկասկած, ապացուցում է, որ դրանք միայն մեկ անգամ են օգտագործել: Տոհմական գերեզմանները, որ երկար ժամանակ օգտագործել են

գահակալող դինաստիայի՝ բնական մահով մեռած անդամներին թաղելու համար, ծածկված կլիներին քարե սալերով և ոչ թե կլցվեին հողով: Երկրորդ, բոլոր գիրեզմաններում գտնված զենքերի, թանկարժեք իրերի և կնիքների վրայի զարդերի ոճն ու թեմատիկան միատեսակ են, հետևաբար, վերաբերում են միևնույն ժամանակաշրջանին:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ. Այդ ամբողջ փաստարկումը հիմնված է մի թյուրիմացության վրա, որը բխում է տարածքի անբավարար հետազոտությունից: Փաստարկումը հերքեց արդեն հիշատակված Դյորպֆելդը: Ստուգելով գերեզմաններից հանված քարաբեկորները, նա դրանց մեջ գտավ ջարդված քարե սալեր՝ դամբարանների կափարիչներ: Ուստի, հսկառակ Շլիմանի ենթադրություններին, ժայռափոր գերեզմանները եղել են դամբարաններ, ուր երկար ժամանակի ընթացքում թաղել են թագավորական տոհմի անդամներին: Այդ կափարիչները ամբողջի փլատակների ծանրության տակ ջարդվել և քարաբեկորների ու հողի հետ ընկել են թաղման հորերը, մի բան, որն այն տպավորությունն է ստեղծել, թե իբր գերեզմանները միաժամանակ են լցվել հողով:

Ճիշտ այդպես էլ Շլիմանի Լրկրորդ պնդումը ևս անհիմն դուրս եկավ, քանզի առանձին ննջեցյալներին պատկանած սպասքի վրա կային դարդամոտիվների ոճի իսկույն շնկատված, բայց աներկբայելի տարբերություններ: Ոճական այդ տարբերություններն արտացոլում էին հարյուր կամ երկու հարյուր տարվա ընթացքում միջնայան մշակույթի զարգացման հերթական փուլերը և ապացուցում, որ մեռածներին այդ գերեզմաններում թաղել են հերթականորեն, այլ ոչ թե միաժամանակ, կոլեկտիվ դամբարանում: Այդ ննջեցյալները ներկայացուցիչներն էին պատմությանն անհայտ թագավորական այն դինաստիայի մի քանի սերունդների, որը կառավարել էր Միքենեում Աթրևսից, Ագամեմնոնից և Օրեսասեսից մի քանի հարյուր տարի առաջ:

Ագամեմնոնի մասին այդ վեճում ուշագրավ մի բան կա: Այդ վեճը տիպական օրինակն է այն եղանակների, որ հնագետները կիրառում են պեղումների արդյունքները բացատրելու և պատմական ճշմարտությունն ի հայտ բերելու համար: Այդպիսի եզանակներից նույնիսկ ինքը՝ Շերլոք Հոլմսն էլ չէր ամաչի: Հենվելով հազիվ նշմարելի, Շլիմանի կողմից շնկատված անճշտությունների վրա, Դյորպֆելդը և մյուս հնագետները արտածման եղանակով հասան միանգամայն անսպասելի արդյունքների՝ հայտնաբերեցին Հունաստանի պատմության նախկինում անհայտ մի ժամանակաշրջան և, ավելին, փորձեցին որոշել դրա տարիքը:

Արդևն Շլիմանի մահից հետո Կրետեում կատարված պեղումները լիովին հաստատեցին նրանց ապշեցուցիչ դիպուկ դատողությունները: Պեղելով Մինոսի պալատը Կնոսոսում, Արթուր Էվանսը պարզեց, որ փլատակները վերաբերում են ո՛չ մեկ ժամանակաշրջանի, արդեն ավերված պատերի վրա կրետացիները սերնդեսերունդ կառուցել էին նոր շեն-

քեր, ավելի ընդարձակ ու գեղեցիկ: Դրա շնորհիվ, հստակորեն նշմարելի մշակութային շերտերի ձևով պահպանվել էին տարբեր շրջաններում նրանց կատարած շինարարության ակնհայտ հետքերը: Ամենախորքում էվանսը գտավ մի հաստ շերտ, որը վերաբերում էր նոր քարի դարին և վկայում բնակավայրի շատ հին ծագման մասին:

Էվանսի գլխավոր նպատակն էր փորձել վերստեղծել պեղված հնությունների շերտային համակարգը, այլ խոսքերով ասած, ստույգ հետազոտել և որոշել մշակութային առանձին շերտերի դարաշրջանը, որովհետև միայն այդ եղանակով հնարավոր կլիներ լույս սփռել Կրետեի պատմության վրա:

Սովորական պայմաններում հեշտ չէր լինի լուծել այդ խնդիրը: Բարեբախտաբար, Կրետեի բնակիչները հնագույն ժամանակներից աշխույժ կապեր են պահպանել Եգիպտոսի հետ, որի ժամանակագրությունն արդեն շատ ստույգ հայտնի էր շնորհիվ դամբարանների պատերի վրայի ընթերցված հիերոգլիֆային արձանագրությունների:

Կնոսոսում բացված շերտերից մեկում էվանսը գտավ մի դիրբիտե արձանիկ, որը վերաբերում էր մ. թ. ա. 2000—1790 թվականներին, այսպիսին Եգիպտոսի Միչին թագավորության ժամանակաշրջանին: Միանգամայն ակնհայտ է, որ մշակութային նույն շերտում գտնված մնացած բոլոր իրերը, մանավանդ որոշակի ոճի նախշով խեցե բեկորները չէին կարող երևան գալ մ. թ. ա. երկու հազար թվականից ավելի վաղ: Իսկ քանի որ ավերակների ինչպես ստորին, այնպես էլ վերին շերտերում էվանսը գտավ եգիպտական ծագում ունեցող առարկաներ, նա կարողացավ համեմատաբար ճշտիվ վերստեղծել մինոսյան պալատի կառուցման պատմությունը:

Այդ քառնչան աշխատանքում նրան օգնեցին եգիպտագետները: Փարավոնների դամբարաններում հաճախ էին պատահել գեղարվեստական առարկաներ, որոնց ձևերն ու նախշերը տարածված չէին Եգիպտոսում: Հնագետները հասկանում էին, որ դրանք եգիպտական շինվածքներ չեն, սակայն չէին կարողանում որոշել, թե որ երկրից են բերվել: Միայն Կնոսոսում կատարված պեղումները հնարավորություն տվեցին ի հայտ բերելու դրանց կրետական ծագումը: Սակայն բոլորից կարևորն այն է, որ ընթերցված հիերոգլիֆների շնորհիվ հայտնի էր, թե դրանք երբ էին Եգիպտոս բերել: Ուստի եգիպտական դամբարաններում գտնված կրետական առարկաները համեմատելով կնոսոսյան նմանօրինակ գտածոների հետ, կարելի էր որոշել պալատի մշակութային շերտերի ստույգ ժամանակագրությունը:

Հապա այդ եղանակով ինչպես որոշվեց Միքենեում գերեզմանների երևան գալու ժամանակաշրջանը: Մենք գիտենք, որ դեռևս Շլիմանին այցելելիս էվանսն ուշադրություն դարձրեց միքենցի և կրետացի կանանց զգեստների նմանությանը: Կնոսոսում կատարված պեղումները ոչ

միայն հաստատեցին նրա դիտողութիւնը, այլև ի հայտ բերեցին, որ Միքենեի մշակույթի վրա Կրետեի մշակույթի ազդեցութիւնն ավելի մեծ է եղել, քան սկզբնապես ենթադրվում էր: Միքենյան գերեզմաններում գտնված զենքերի, զարդերի և ամանների մեծ մասը պատրաստվել է Կրետեում կամ էլ տեղում՝ կրետացի արհեստավորների կողմից:

Կրետեում էվանսի կիրառած և եգիպտագետների կողմից եգիպտական գտածոներով ստուգված հետազոտութիւնների շերտային եղանակի հիման վրա դժվար չէր որոշել միքենյան գերեզմաններում գտնված առարկաների ժազման տարեթիվը: Այդ հետազոտութիւնների արդյունքները համընկան այն բանին, ինչին Շլիմանի քննադատները հանգեցին բացառապես արտածման եղանակով՝ միքենյան գերեզմանները երևան են եկել մ. թ. ա. XVI դարում, հետևաբար, չէին կարող ամփոփել մ. թ. ա. XII դարում ապրած Ազամեմնոնի և նրա ընկերների աճյունները:

Քանի որ հնագիտական հետազոտութիւնները ցույց տվեցին նաև, որ Կրետեի մշակույթի ազդեցութիւնը տարածվել է մինչև Տրոյա, այդ նույն եղանակով կարելի էր հերքել Շլիմանի երկրորդ, ոչ պակաս էական սխալը: Ինչպես արդեն ասել ենք, նա նկատել էր, որ այդ քաղաքի ավերակները կազմված են միմյանց վրա դիզված մշակութային մի քանի շերտերից, որոնք տասնյակ դարերի ընթացքում հերթով երևան էին եկել ու կործանվել: Ավելի ուշ հնագետները հաշվեցին այդպիսի ինը շերտ, իսկ վերջին ժամանակներս պարզվել է, որ դրանք տասներկուան են եղել: Շլիմանը կարծում էր, որ Պրիամոս թագավորի քաղաքը ներքևից երրորդ բնակավայրն է, թեև դրա խղճուկ պատերը չէին հաստատում Հոմերոսի այն խոսքերը, որ Տրոյան հզոր ամրոց է եղել: Կրետական ծագում ունեցող գտածոների հիման վրա անմիջապես որոշվեց, որ հոմերոսյան Տրոյան ներքևից յոթերորդ բնակավայրն է: Այդ էին հաստատում հսկայական բերդապարիսպները, ինչպես նաև տաճարի ու պալատի փլատակները, որոնք հնարավորութիւն էին տալիս եզրակացնելու, որ դա հույն խիզախ ղինվորների բազմահազարանոց բանակի պաշարմանը տասը տարի դիմանալու ընդունակ, հարուստ, բազմամարդ քաղաք է եղել:

Շլիմանի և էվանսի հայտնագործութիւնները, որոնք լրացվում են հնագետների ստացած նորանոր սվյալներով, այժմ հնարավորութիւն են տալիս վերականգնելու պատմութիւնն անհայտ մի հսկայական ժամանակահատված: Դա անակնկալներով ու դրամատիկական անցքերով լի պատմութիւն է: Այդ շրջանում հերթականորեն կազմավորվել, բարգավաճել և կործանվել են տարբեր ժողովուրդներ ու նրանց մշակույթները:

Կրետեում գտնված մշակութային ամենաստորին շերտը ցույց է տալիս, որ մ. թ. ա. չորրորդ և հինգերորդ հազարամյակների սահմանագծում այնտեղ երևան են եկել նորքարեդարյան ցեղեր, որոնք ապրել են տոհմական համայնքներով և գործածել հղկված քարից գործիքներ: Այդ

ցեղերի անգամները եղել են ոչ միայն խիղախ ձկնորսներ, երկրագործներ, անասնապահներ, այլև հմուտ ծովագնացներ, որոնց համար հեռավոր նավարկութիւնները արտասովոր բաներ չէին:

Կրետեն այն ժամանակ առատ էր բնութքան պարզւածներով: Յորենի, գարու և վուշի դաշտերը ծածկել են հարթավայրերը, իսկ խաղողի և ձիթենու այգիները՝ լեռնալանջերը: Պաշտպանված գոգահովիտներում փարթամորեն կահաչել են արոտները, ուր արածել են մաստու և կաթնատու անասունները: Այնտեղ մշակել են քրքում, որն օգտագործվել է վուշե գործվածքները ներկելու համար: Բակները լիքն էին քաղերով, հաճերով, աղավնիներով ու կարապներով: Գոստակերտները շրջապատված էին բանջարանոցներով, հիրիկների, շուշանների, վարդակակաչների, հակինթների և այլ ծաղիկների շերտամարգերով: Ներկայումս զերկ բլուրները ծածկված են եղել նոճիների խիտ անտառներով, ուր շինանյութ ևն հայթայթել տներ և նավեր կառուցելու համար:

Կրետացիները, սակայն, առավելագուցն օգուտներ են քաղել Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի միջև ընկած իրենց կղզու աշխարհագրական դիրքերից: Դրա շնորհիվ բնակչութիւնը արագ հարստացել է, ծովային առևտուր անելով այդ մայրցամաքների ժողովուրդների հետ:

Շուտով այդ բարեկեցութիւնն առաջ է բերել սոցիալական խոր փոփոխութիւններ: Մեր թվականութիւնից առաջ երրորդ հազարամյակում տոհմական համայնքը լիովին քայքայվել է: Նախկինում ընտրվող ավագանին ժամանակի ընթացքում զավթել է իշխանութիւնը, սկսել այն փոխանցել ժառանգաբար, իսկ ծովային առևտուրը դարձրել է իր մենաշնորհը: Արդարև, նա կախման մեջ է դրել նախկինում ազատ գյուղացիներին և նույնիսկ ստրկատիրութիւն է մտցրել: Հասարակութիւնը շերտաւորվել է, Առաջացել է քաժանուժը ազնվատոհմիկների, պալատական պաշտոնյաների, վաճառականների, գյուղացիների, ինչպես նաև քաղամաքանակ արհեստավորների, ռժքեր բնակչութիւնն են հաստատել քաղաքներում, որտեղ էլ զբաղվել են գեղարվեստական զանազան առարկաների պատրաստմամբ՝ արքունիքի և անզրծովյան երկրներ արտահանելու համար:

Կրետական նավերը առագաստները պարզած, իսկ անհողմութիւն ծամանակ՝ թիռվարութիւնով, հասել են Միջերկրական ծովի ամենահեռավոր անկյունները: Կրետացի արհեստավորների շինած իրերը հնագետները գտել են Յգիպտոսում, Լիբիայում, Փոքր Ասիայում, Փյունիկիայում, Կիկլադյան կղզիներում, Հունաստանում, Հարավային Իտալիայում, Սարդիիայում, Իտալիայում, Մալթայում և Բալեարյան կղզիներում: Ենթադրում են, որ կրետացիները վաճառել են ոչ միայն պերճաւոր առարկաներ, այլև ստրուկներ: Իրենց ապրանքների փոխարեն նրանք ստացել են ոսկի, արծաթ, փղոսկր, ազնիվ տեսակի փայտանյութ,

ապակե և հախճապակե իրեր, ինչպես նաև պարեն: Կնոսոսի փլատակներում, օրինակ, գտնվել է լորի, որն աճել է միայն Եգիպտոսում:

Մեր թվականությունից առաջ երկրորդ հազարամյակի սկզբին բրոնզը վերջնականապես տուրա է մտել քարը: Այդ ժամանակներում Կրետեն դառնում է մի պետություն, որի հզոր ուղմակա՞ն նավատորմը՝ նրան գերիշխանություն է ապահովում էգեյան ծովում: Կղզում առաջանում են առևտրական շրտ կենտրոններ՝ Կնոսոսը, Փեսոսը, Ագիա Տրիադան և Մալիան: Այնտեղ կառավարում են մեկը մյուսից անկախ իշխաններ, ովքեր ապրել են շքեղ ապարանքներում: Դա արդեն պարզորոշ կազմավորված ստրկատիրական պետություն էր սակավաթիվ ադիստոկրատիայով, որը հնագնդություն մեջ է պահել հասարակության մնացած բոլոր դասակարգերը:

Մ. թ. ա. շուրջ 1700 թվականին Կրետեում վիթխարի աղետ է տեղի ունեցել: Մենք այդ ինչպե՞ս խմացանք: Կնոսոսի, Փեսոսի, Ագիա Տրիադայի և Մալիայի սլալատների փլատակներում էվանսե ու այլ հնագետներ դտան ջարդված արձանիկներ, ածխացած փայտ և հրդեհից հետո մնացած մոխրակուլտեր: Կասկածի ենթակա չէ, որ այդ ժամանակ տեղական իշխանների սլալատները կործանվել են:

Աղետի պատճառների մասին գոյություն ունեին տարբեր ենթադրություններ: Ոմանք կարծում էին, թե Կրետեն դարձել է անդրծովյան ցեղերի ներխուժումների, ոմանք էլ՝ երկրաշարժերի զոհ, որ մինչև հիմա էլ տեղի են ունենում կղզում:

Հիմա կշեռքի նժարը թեքվում է երրորդ տեսության կողմը: Դրա կողմնակիցները պնդում են, որ այն ժամանակ կղզում գերիշխանություն հաստատելու համար երկօպառակտչական պատերազմ է ծաղիկ տեղական իշխանների միջև: Նրանք քաղաքական անկախություն պահպանած նախկին ցեղապետներ են եղել, որոնց, սակայն, ժամանակի ընթացքում սկսել է սպառնալ Կնոսոսի տիրակալի հարանուն հզորությունը: Այդ ժամանակ նրանք գաշինք են կնքել միմյանց հետ և գոչքս եկել տիրակալի դեմ:

Մի շարք լուրջ հանգամանքներ խոսում են այդ տեսության օգտին: Մինչև ազետը բոլոր պալատները Կնոսոսում, Փեսոսում, Ագիա Տրիադայում, Մալիայում և այլուր միմյանցից չեն տարբերվել ոչ շափերով, ոչ էլ հարդարման պերճաշարժությամբ: Դրանք, հավանորեն, եղել են իբար հետ, ինչպես հավասարը հավասարի հետ, դիվանագիտական հարաբերություններ պահպանած տեղական իշխանների նստավայրեր: Մինչդեռ սլատերադմից հետո վիճակը միանգամայն փոխվել է: Կնոսոսում կառուցվել է ընդարձակ, շտեմնված շքեղաշոք մի շենք, որը միաժամանակ եղել է կենտրոնացված վարչակազմի նստավայրը, իսկ մյուս քաղաքներում կառուցվել են ոչ մեծ պալատներ, ուր, գատելով դրանց համեատ շափերով, հաստատվել են այլևս միայն գաղառական կուսակալները: Դրանից կարելի է եղրակացնել, որ Կնոսոսի թագավորը հազթող է

դուրս եկել այդ պատերազմում և կղզում դարձել արևելյան տիպի բրոնակալ-միապետ:

Տարակույս չկա, որ եթե դա թշնամական ներխուժում լիներ, կղզին, իհարկե, կվերածեր փլատակների կույտի, մահացու հարված կհասցներ կրետական մշակույթին: Կատարվել է հակառակը: Քաղաքներն ու պալատները արագորեն հառնել են ավերակներից, և կրետական միավորված պետությունը թևակոխել է իր ամենաբարձր ծաղկման ու հզորության շրջանը: Կրետեի թագավորը, ռազմական նավատորմ ունենալով, իրեն է ենթարկել Կիկլադները, Պելոպոնեսը և Փոքր Ասիայի մի քանի առափնյա քաղաքներ: Այդ վայրերում առաջ են եկել կրետական պետությանը ենթակա գաղութներ: Դա Մինոս թագավորի ոսկեդարն էր, հարստության և գեղարվեստական բարձր զարգացած մշակույթի դարը, որի հիշատակը պահպանվել է աթենացի պատանդների, Թեսեսի, Դեդալոսի և Մինոտավրոսի մասին հյուսված ավանդազրույցներում:

Հնագիտական պեղումները բացահայտեցին մի շարք յուրօրինակ հատկանիշներ, որոնցով կրետացիները տարբերվել են այն ժամանակվա մյուս բոլոր ժողովուրդներից: Այսպես, օրինակ, ի տարբերություն բարելոնացիների, ասորեստանցիների ու եգիպտացիների, կրետական հասարակության մեջ քրմերի առանձին դաս չի եղել: Քրմուհիները կրոնական ծեսերը կատարել են քաց երկնքի տակ՝ պուրակներում և դաշտերում: Պաշտամունքի առարկաներ են եղել մայր հողը, ցուլը՝ որպես բեղմնավորության խորհրդանիշ, ինչպես նաև որոշ ծաղիկներ, ձկներ, ծառեր և քարեր: Որմնանկարներում պատկերված են ղոհասեղանին ընծաներ դնող, հանդիսավոր թափոր կազմած կամ ծիսական պարեր պարող քրմուհիներ: Ենթադրվում է, որ Կրետեի թագավորը միաժամանակ նաև բարձրագույն քուրմ է եղել:

Մեր թվականությունից երկու հազար տարի առաջ, այսինքն Կրետեի մշակութային արդեն լիակատար ծաղկման շրջանում Պելոպոնեսում և էգեյան ծովի որոշ կղզիներում բնակություն են հաստատել միջերկրածովյան ցեղեր, որոնց հին հույները կոչել են լելեզներ, պելասգներ և կարիացիներ: Հավանաբար, նրանք տակավին ապրել են տոհմական համայնքներով և մեծ քաղաքներ չեն կառուցել, բայց արդեն բրոնզե դործիքներ են գործածել: Նրանց լեզուն սուզվել է մոռացության մեջ, սակայն որոշ բառեր, ինչպես, օրինակ, տեղանքի և ծաղիկների (հակինթ, նարգիզ) անվանումներ մտել են հունարենի մեջ: Նույնիսկ «ծով» բառը հույները փոխ են առել այդ անհետացած ժողովուրդներից:

Մեր թվականությունից առաջ երկրորդ հազարամյակի սկզբին հյուսիսից եկել են հույների հնագույն նախնիները՝ աքայացիները, որոնք բրոնզե դրահներ հագած ռազմաշունչ, բարբարոս ցեղեր են եղել: Նրանք հեշտորեն հնազանդեցրել են տեղի բնակչությանը և իրենց անվտանգությունը ոչ միայն ուրիշ գավթիչներից, այլև հպատակեցված տեղացիների

խոռվութիւններէց ապահովելու համար հզոր ամրոցներ են կառուցել Միքենեում, Տիրինթոսում և Արգոլիսի այլ վայրերում:

Պալատները, ամրոցներն ու թագավորական դամբարանները ակնառու վկայում են միքենյան թագավորների հզորութեան մասին: Իրենց վիթխարիութեամբ ապշեցնող այդ կառույցների պատերը գոյացել են բազմաթիւ ստրուկների, տեղի հպատակեցված բնակչութեան ներկայացուցիչների ջանքերով: Աքայական իշխանութիւնները ստրկատիրական պետութիւններ են եղել: Այնտեղ կառավարել են ազգակցական և դաշնակցային կապերով միավորված բռնակալ իշխանները: Ժամանակի ընթացքում միքենյան թագավորը գերիշխող դիրք է ձեռք բերել նրանց նկատմամբ: Թուկիդիդեսն ասում է, որ Ագամեմնոնը տրոյական արշավանքը ձեռնարկել է «որպէս իր ժամանակի ամենազորեղ մարդ»:

Մ. թ. ա. 1700 թվականից աքայացիներն սկսում են ընկնել ավելի բարձր զարգացած կրետական մշակույթի ազդեցութեան տակ: Աքայական արքունիքները Կրետեից ներմուծում են ոսկերչական գեղարվեստական իրեր ու դրվագազարդ զենքեր, կանայք հետևում են կրետական Նորաձևութեանը: Այդպիսով առաջացել է միասնական մշակույթ, որը պատմաբաններն անվանում են կրետե-միքենյան: Աքայացիները, սակայն, իսպառ չեն հրաժարվել իրենց բնորոշ հատկանիշներից՝ խստութիւնից և առնական ուժի գործադրումից. ի տարբերութիւն կրետացիների, նրանք կրել են մորուք և բեղեր, իսկ իրենց կյանքը անց են կացրել ռազմական արշավանքներում և որսորդութեան մեջ:

Թուկիդիդեսը հայտնում է, որ աքայական ցեղերը զբաղվել են ծովահենութեամբ: Ավելի ուշ նրանք ռազմական ընդհանուր նավատորմ են ստեղծել, որը դարձել է կրետականի ահեղ մրցակիցը: Մ. թ. ա. XV դարից սկսած, հավանորեն Աթրիդեսների տիրակալութեան ժամանակ, Արգոլիսը վերածվում է ծովային տերութեան: Աքայացիները կրետացիներին գուրս են մղում նրանց տիրույթներից և հերթով գրավում Կիկլադները, Հոտոոս, Կոս ու Կիպրոս կղզիները և նույնիսկ գաղութներ են ստեղծում Փոքր Ասիայում:

Մ. թ. ա. 1400 թվականին աքայացիները հարձակվել են Կրետեի վրա և այնպիսի պարտութեան մատնել, որից հետո նա այլևս չի կարողացել ոտքի կանգնել: Պատմական այդ անցքի հուզիչ հետքերը կարելի է հիմա էլ տեսնել կրետական պալատների՝ համապատասխան մշակութային շերտում գտնված ավերակներում և մոխրակույտերում: Պետք է ենթադրել, որ Կրետե կատարված ներխուժումից առաջ էգեյան ծովում տեղի է ունեցել պատմութեան մեջ բեկումնային ծովամարտերից մեկը: Կրետական հզոր նավատորմը ջախջախելուց հետո աքայացի մորուքավոր ռազմիկները ներխուժել են Մինոս թագավորի պալատը և մինչև վերջինը կոտորել փափկակցաց, կնանման պալատականներին, որ այնպես գունագեղ ու նրբորեն պատկերված են պալատի որմնանկարներում:

Պետք է մի քանի խոսք ասել կրեւտական գրի մասին: Կնոսոսում գտնված կավե սալիկների վրա էվանսը տարբերեց կրեւտական գրի գարգացման երեք հաջորդական փուլեր՝ սկզբնապես գործածված հիբրոգլիֆներ, Ս. գծային գիր և ավելի ուշ ժամանակների Ք գծային գիր, որը վերաբերում էր Կրեւտի պատմութեան ոսկե շրջանին: Սալիկների մեծ մասն այդ վերջին տեսակի գիրն է պարունակում:

Չեի գիտնական Բեդրժիխ Հրոզնին 1948 թվականին ցնցող հաղորդում արեց, թե վերծանել է Ք գծային գիրը, որի գաղտնիքը պարզելու վրա խոշորագույն լեզվաբանները տարիներ շարունակ զուր գլուխ էին կոտրում: Հրոզնու կիրառած եղանակները շարժազանց բարդ են և դրանց կոթյունն ըմբռնելու համար պահանջվում է Հին Արևելքի բազմաթիվ լեզուների իմացություն, լեզուներ, որ գիտնականն օգտագործել է որպես օժանդակ նյութ:

Սակայն Հրոզնու մահից հետո անհերքելիորեն հաստատեցին, որ նրա կիրառած եղանակը սխալ է եղել և նրան տարել է ոչ ճիշտ ուղիով: Ք գծային գրի ընթերցումը անգլիացի Մ. Վենթրիսի ծառայությունն է, որը մասնագիտությամբ ճարտարապետ էր և, հետևաբար, սիրող լեզվաբան: Չոն Չարվիքը՝ «Ք գծային գրի վերծանումը» գրքի հեղինակն ու գիտնականի բարեկամը, հետաքրքիր մանրամասնություն է հայտնում, որ Վենթրիսն ազատ խոսել է լեհերեն, քանզի նրա մայրը, ինչպես նա է գրում, «կիսալեհուհի» էր: 1956 թվականին Վենթրիսը զոհվեց ավտոմոբիլային աղետից:

Վենթրիսի համար ելակետ էր ծառայել միանգամայն ինքնատիպ մի հիպոթեզ: Հիմնվելով այն փաստի վրա, որ Ք գծային գրով սալիկներ գտնվել են ոչ միայն Կրեւտում, այլև մայրցամաքային Հունաստանում, ուր գերիշխել է աքայացիների միջինյան մշակույթը, Վենթրիսը ենթադրեց, որ հունարեն լեզուն այդ գիրն ընդունել է դրա սկզբնական ձևով. այլ խոսքերով ասած, հիբրոգլիֆներն ու Ս. գծային գիրը գործածել են կրեւտացիները, իսկ Ք գծային գիրը՝ հույների հնագույն նախնիներն աշխարհն ժամանակ, մինչև որ հարյուրամյակներ անց յուրացրել են փյունիկյան զգալիորեն ավելի հարմար այբուբենը:

Այդ վարկածը ճիշտ դուրս եկավ: Դասական հունարենը որպես միջոց կիրառելով, Վենթրիսը կաթողաց մայրցամաքում գտնված մի քանի աղյուսակներ: Ըստ որում նա հաստատեց, որ այդ գիրը կազմված է վանկեր հաղորդող հնչյունական նշաններից, ինչպես նաև պատկերային նշաններից: Վենթրիսի կիրառած եղանակով այդ գրի հետագա վերծանման վրա են աշխատում նաև լեհ գիտնականներ, կրակովցի գոկտորներ Ռ. Ռանտշեկն ու Յա. Սաֆարևիչը:

Մինչև հիմա ընթերցված տեքստերը բովանդակում են բացառապես ցուցակներ, հաշիվներ ու գրանցման մատյաններ, սակայն աներկբայորեն հաստատում են գիտական երկու ենթադրություններ. առաջին՝ որ աքայացիները հույներ են եղել, երկրորդ՝ որ հենց նրանք են նվաճել Կրեւտն, ինչի մասին վկայում են Կնոսոսի ավերակներում գտնված, նրանց գրով գրված հազար յոթ հարյուր սալիկները:

Հիբրոգլիֆներն ու Ս. գծային գիրը կարդալու գործում խոչընդոտ է ոչ միայն կրեւտացիների լեզուն չիմանալը, այլև այն պարագան, որ մինչև հիմա այդ տեսակի գրերով գրված սալիկներ շատ քիչ քանակությամբ են գտնված, և գիտնականները բավականաչափ բանակով գիտական նյութ

շունեն: Այդ պատճառով կրեացիները ծագման հարցը մինչև հիմա էլ մնում է պատմութեան գազանիքք:

Հիմնավորով կրեացիները սկսել են մտածել հնարավոր նոր զայթումների մասին: Մ. թ. ա. XIII և XII դարերում Անատոլիայի որոշ քեղերի հետ զաշնակցած նրանք երկիցս փորձել են նվաճել Եգիպտոսը, բայց, փնչպես այդ են վկայում եգիպտական արձանագրությունները, երկիցս էլ փարավոնների կողմից ջախջախվել ու հետ են շարտվել:

Եգիպտոսում կրած պարտությունները չեն սառեցրել ռազմատենչ աքայացիների նվաճողական ավյունը: Հելեսպոնտոսի վրա իշխում էր անհիշելի ժամանակներից իր հարատւթյամբ ու շքեղությամբ հռչակված բազմամարդ հին քաղաք և անխորտակ ամրոց Տրոյան:


Եվրոպայի և Ասիայի սահմանագծում գրաված հարմար դիրքի շնորհիվ Տրոյան իր ձեռքում էր կենտրոնացրել Անատոլիայում, Ասիայում և Սև ծովի հարավային ափերում կատարվող ամբողջ առևտուրը: Տրոյայի պատերի մոտ ամեն տարի տեղի են ունեցել տոնավաճառներ, ուր աշխարհի բոլոր ժայթերից ժամանած վաճառականները ծախել ու գնել են բազմազան ապրանքներ:



Հենց Տրոյայի ամրություններով պետք է բացատրել այն փաստը, որ կրեացիները երբեք չեն փորձել իրենց ձեռքը գցել առևտուրն Անատոլիայում: Նրանք նաև իրենց երբեք բավականաչափ ուժեղ չեն զգացել Տրոյային հաղթելու համար, որովհետև միայն նավատորմը քիչ էր, անհրաժեշտ էր ամրոցներ պաշարելու և ավերելու մեջ փորձված ցամաքային զորքեր ունենալ, իսկ այդպիսիք կրեացիները երբեք չեն ունեցել:

Աքայացիներին հրապուրել են ոչ միայն տրոյական պալատում եղած ոսկիները, այլև այն մեծ հնարավորությունները, որ նրանց առևտրի համար կստեղծվեին քաղաքը նվաճելու դեպքում: Ուստի նրանք զուրս են եկել Տրոյայի դեմ և տասնամյա կռիվներից - հետո, մ. թ. ա. շուրջ 1230 թվականին, կործանել են քաղաքը:

Սակայն նրանք երկար չեն վայելել իրենց հաղթանակի պտուղները: Ութսուն տարի անց հյուսիսից հեղեղի պես վրա են տվել հունական նոր բարբարոս ցեղեր՝ պատմական ավելի ուշ շրջանի հույների նախնիները, որոնք հայտնի են դորիացիներ ընդհանուր անվանմամբ: Դրանք դաժան ռազմաշունչ ցեղեր էին, և շատ շուտով գրավել և հողին են հավասարեցրել Միքենեի, Տիրինթոսի և Օրգոմենոսի ամրոցները, տիրել են Պելոպոնեսին, Կրետեին և էգեյան ծովի կղզիներին, հասել նույնիսկ Փոքր Ասիա:

Նրանց հայտնվելու հետ սկսվել է կրետե-միքենյան մշակույթի անկումը: էգեյան աշխարհի վրա իջել է բարբարոսության գիշերը: Բայց և այնպես պահպանվել են ավանդությունները Կրետեի և Տրոյական պատերազմի մասին, որ բերնեբերան փոխանցել են ժողովրդական թափառաշրջիկ երգասացները: Մի քանի հարյուր տարի անց Հոմերոսը ի մի է հավաքել այդ զրույցները և ստեղծել վիպերգական պոեզիայի երկու գլուխգործոց՝ «Իլիականը» և «Ոդիսականը»: Դրանք կարծես կանխագուշակել են նոր վերածննդի և մշակույթի ծաղկման այգաբացը, որ շուտով պետք է պայծառ լույսով շողշողար մայրցամաքի և Հունաստանի կղզիների վրա:





Ողջ-ողջ թաղված քաղաքներ

Նեապոլի ծոցի մոտ գտնվող Կամպանիայում արևոտ օգոստոսյան եղանակ էր: Մոցից փչում էր զովացնող աղահամ մեղմ քամի: Երկնի կապույտում զիլ ճիչերով սլանում էին ճայերի երամները:

Կապտա-ոսկեգույն ծովածոցը թեթև ալեկոծվում էր նավակներից, ռոններից ձկնորսները ուռկան էին նետում: Մովի ուռուցիկ հարթության եզրով արեգակի բյուրավոր ցուլքերի մեջ հանգիստ լողում էր ռազմական տրիրեման: Ստրուկների ամուր ձեռքերում թիակները վեր ու վար էին անում ճոճանակի կանոնավորությամբ: Նավի բազան գտնվում էր ոչ հեռու Մեսսենայում, որտեղ կանգնած էր հռոմեական նավատորմը պատրիկ և զիտնական-բնախույզ Պլինիոս Ավագի հրամանատարությամբ:

Ափի երկարությամբ և վեզուվի լանջի խաղողի ու պտղատու այգիների մեջ սպիտակին էին տալիս հռոմեական սենատորների և հեծյալների շքեղ առանձնատները: Խորքում կարմրին էին տալիս պաշտպանա-

կան հզոր պարիսպներով շրջապատված Պոմպեյի շենքերի տանիքները: Դեպի քաղաքի դարպասներից մեկը տանող ճանապարհը անցնում էր պոմպեյցի հարուստների դամբարանների մոտով:

Քաղաքը փեթակի նման եռում էր: Բազալտով սալարկված նեղլիկ փողոցներով հոսում էր բնակիչների շտապող բազմությունը: Նեղ և բարձր մայթերի երկարությամբ ձգվում էին դռները կրնկի վրա բաց, բազմապիսի ապրանքներով լցված խանութները, գինետները, պանդոկները, իջևանատները և արհեստանոցները:

Նեղլիկ փողոցների և նրբանցքների այդ լարիրինթոսի մեջտեղում գտնվում էր շուկայի ընդարձակ քառանկյունին՝ սյունաշարով, տաճարներով և հասարակական շենքերով շրջապատված վեհատեսիլ ֆորումը: Բարձր հիմքերի վրա կառուցած, տոնական ճերմակությամբ շողշողացող, սյունասրահներով զարդարված շենքերի նրբակերտությունը և վեհությունը փողոցների տոնափաճառային աշխուժության հետ մի ապշեցուցիչ հակադրություն էին ստեղծում:

Պոմպեյի տներից մեկում պահպանվել է մի որմնանկար, որտեղ անհայտ նկարիչը պատկերել է մի տեսարան ֆորումի առօրյա կյանքից: Այնտեղ պատկերված են մարմարե և բրոնզե պերճաշուք ու հիասքանչ արձաններ, սակայն դրանց պատվանդանները այլանդակված էին կարմիր ներկով զրված նախընտրական մակագրություններով: Դորիական սյունաշարերից կախված էին ծաղկաշղթաներ, որոնք հավանաբար մնացել էին քաղաքային տոնախմբությունից հետո: Բրուտները և մյուս արհեստավորները գովաբանում էին իրենց ապրանքները, իսկ հենց նրանց կողքին գեր առևտրականը վաճառքի էր ցուցադրել դեռատի ստրկուհուն: Շուկայի մի այլ անկյունում բարկացած ուսուցիչը ճիպոտահարում էր աշակերտին:

Պոմպեյը փոքր քաղաք էր, այնտեղ ընդամենը քսան հազար բնակիչ կար, բայց հարստության, հին ավանդույթների, մեղմ կլիմայի և գեղատեսիլ դիրքի շնորհիվ ամբողջ Իտալիայում արժանի համբավ էր վայելում:

Դա հիրավի հին քաղաք էր, հարուստ պատմությամբ հին քաղաք: Մեր թվականությունից հազար տարի առաջ, դուրս մղվելով դորիական ցեղերի կողմից, և էոլացիները, և հոնիացիները թողնում են Հունաստանը ու հաստատվում Միջերկրական ու Սև ծովերի ափերին: Այդպես հույները նաև Նեապոլի ծոցը հասան: Դրանք զլխավորապես վաճառականներ էին, որոնք հեշտությամբ ձուլվեցին բնիկ օսկերի հետ, փոխանցելով նրանց իրենց լեզուն և շատ զարգացած մշակույթը: Սովածոցի ափին հիմնադրվեց Նեապոլը, որն այն ժամանակ Պարթենոպ էր կոչվում, իսկ ավելի հարավ՝ Հերկուլանումը և Պոմպեյը:

Այդ քաղաքները հերթով գրավում են էտրուսկները, պելասգները և սամնիտները: Սամնիտյան պատերազմներից հետո (մ. թ. ա. 343—

290 Թվականներին) Պոմպեյը կամպանիայի հետ միասին ընկավ հռոմեացիներին տիրապետության տակ: Սակայն մեր թվականությունից առաջ առաջին դարում միայն նրանք վերջնականապես լատինացվեցին, թեև հունական մշակույթը և լեզուն, ինչպես և ամբողջ Իտալիայում, լատինական լեզվի և մշակույթի նկատմամբ հավասար վիճակում է եղել:

Պոմպեյցիները արագ համակերպվեցին նոր իշխանությանը, ըմբռնելով այն առավելությունները, որ իրենք ստացան այդ հսկայական պետության համաշխարհային առևտրին մասնակցելուց: Սարնոյի գետաբերանում գտնվող քաղաքում ոչ մեծ նավահանգիստ կառուցեցին, առևտրական հարաբերություններ հաստատեցին Արևելքի, հատկապես Եգիպտոսի հետ, որտեղից պատերազմներում հարստացած Հռոմի պատրիկների համար ամենաբազմապիսի դելիկատեսներ և պերճանքի առարկաներ էին ներմուծում:

Բացի տնայնագործական արհեստագործությունից, Պոմպեյը որևէ աչքի ընկնող արտադրությամբ չէր կարող պարծենալ: Սակայն նրա խաղողի այգիները փառաբանված գինի էին մատակարարում, որը մինչև այժմ էլ Իտալիայի ամենալավ գինիների տեսակին է պատկանում: Պոմպեյը սեփական բազալտից տարբեր շափերի աղացքարեր էր արտադրում, ինչպես նաև թյունիկ, մուրենա և թյունիոս ձկներից համեմունքներով պատրաստած սոուս, որը հայտնի էր ամբողջ Իտալիայում:

Սակայն Պոմպեյի բարեկեցության գլխավոր աղբյուրը նրա դիրքը և կլիման էին: Մրտենու, վարդի և ծովի բույրերով շնչող կախարդական ծովածոցի ափերին հարուստ հռոմեացիները կառուցում էին իրենց առանձնատները և ամառային ապարանքները, ու, դրանց ավելացմանը զուգընթաց՝ քարից, աղյուսից ու ծեփվածքից շինված քաղաքը փոխվում էր մարմարից ու բրոնզից կերտված, շատրվաններով ու սյունասարահներով զարդարված քաղաքի: Հայտնվեցին հոյակապ տաճարներ, հուշարձաններ, քսան հազար տեղանոց ամֆիթատրոն, դրամատիկ թատրոն, «Օդեոն» կոչվող երաժշտական ծածկած թատրոն, երեք թերմեր, այսինքն՝ բաղնիքներ, ինչպես նաև հարուստ հռոմեացիների տները ջուր հասցնող ջրմուղի լոռոք սխտեմ:

Հռչակավոր իրավաբան, հոկտոր և գրող Կիկերոնը հիշատակում է, որ Պոմպեյում ամառանոց ուներ, որը «Պոմպեանում» էր անվանել: Նույնիսկ կայսրական ընտանիքները ամռան ամիսները Պոմպեյի իրենց պալատներում էին անցկացնում: Նրանց այնտեղ գտնվելու ժամանակ տարեգիրների վկայությամբ մի ողբերգական դեպք է պատահել: Մ. թ. 21 թվականին ապագա կայսր Վլավդիոսի տասներեքամյա որդի Դրուզոսը խաղացել է փոքրիկ տանձով՝ վեր է նետել տանձը և բերանով բռնել: Մի անգամ տանձը այնքան խորն է մտել նրա կոկորդը, որ մինչև կհասցնեին օգնել՝ երեխան շնչահեղձ է եղել:

Հռոմեացիները քաղաքին ինքնավարության լայն իրավունքներ էին

տվել: Նրա գլուխն էին կանգնած երկու քաղաքապետեր, որոնք միաժամանակ քաղաքի խորհրդի նախագահներն էին: Կառավարիչների կարգին էին դասվում նաև ֆինանսները վերահսկող երկու քվեստոր և երկու էդիլ՝ քաղաքային շինարարության գործերով խորհրդականներ, որոնք միաժամանակ վերահսկում էին անվտանգությունը և կարգուկանոնը: Ազատ քաղաքացիների կողմից մեկ տարով ընտրվող այդ անձինք պետք է ունեւոր լինեին, որովհետև պաշտոնները վճարովի չէին, այլ պատվավոր և, բացի դրանից, նրանք պարտավոր էին խաղերի և հասարակական շինարարության համար խոշոր նվիրատվություններ անել:

Պոմպեյից դեպի հյուսիս-արևմուտք շորս կիլոմետր հեռավորության վրա, Նեապոլ տանող ճանապարհի կեսին գտնվում էր Հերկուլանում ձկնորսական ավանը: Հաղորդակցության բացակայության պատճառով այնտեղ առևտրական աշխույժ փոխանակում չկար, և Հերկուլանումի բնակչությունը զբաղվում էր միայն ձկնորսությամբ ու հողագործությամբ: Դեպի ծովը բացվող գեղեցիկ տեսարանը, ծովային օդի անզնահատելի նեկտարը, Նեապոլի և Պոմպեյի աղմուկից հեռու գտնվող փոքր քաղաքի անդորրն էին պատճառը, որ շատ հարուստ հռոմեացիներ այն իրենց հանգստի վայրը դարձրին:

Հերկուլանումի մոտակայքում, հատկապես Օգոստոս կայսեր օրոք, անձրևից հետո շատացող սնկերի պես սկսեցին հայտնվել պատրիկների ամառանոցները և նույնիսկ շքեղ պալատներ՝ արվեստի բազմաթիվ ստեղծագործություններով, խճաքարե հատակով, ալեբաստրե սյուներով, շատրվաններով և այգիներով: Դրանց մեջ իր շափերով և շքեղությամբ, հոյակապ դահլիճներով և ծովափ նայող մարմարե սանդղավանդներով աչքի էր ընկնում Հուլիոս Կեսարի փեսա, Կիկերոնի հայտնի հակառակորդ և էպիկուրի եռանդուն հետևորդ Լուկիոս Կալպուռնիոս Պիզոնի պալատը:

Ժամանակի ընթացքում քաղաքը կորցրեց ձկնորսական համեստ ավանի բնույթը և դարձավ հռոմեական ճարտարապետության իսկական մարգարիտ: Այնտեղ կար երկու հազար հինգ հարյուր հանդիսատեսի համար նախատեսված թատրոն, որի կիսաշրջանաձև պատի երկայնքով դրված են հղել կայսերական ընտանիքի անդամների և անվանի քաղաքացիների արձանները: Բեմը շրջափակող պատը շարված էր տարբեր գույների մարմարե սալերով, բազմաթիվ որմնախորշերում մարմարե և բրոնզե կիսանդրիներ էին դրված: Հասարակական շենքերի մեջ աչքի էին ընկնում բրոնզե քառաձի մարտակառքով պսակված վեհաշուք բաղիլիկը, ուր տեղավորված էին դատարանը և առևտրական կենտրոնը, ինչպես նաև աստվածների մայր, բնության կենարար ուժերը մարմնավորող Կիբելայի տաճարը: Հասարակական բոլոր շենքերը զարդարված էին որմնանկարներով, խճանկար հատակներով ու ալեբաստրե պորտիկներով:

Քաղաքն ուներ սալահատակած փողոցներ, կապարե խողովակներով ջրմուղ և շքեղ կահավորված հանրային բաղնիք:

Ամբողջ շրջակայքի վրա վեր էր բարձրանում Վեզուվի սուր կոնու: Պոմպեյի որմնանկարների շնորհիվ այժմ մենք գիտենք, որ Վեզուվն այն ժամանակ բաց խառնարան չուներ: Հրաբխի լանջերին արածում էին ոչխարները, փոված էին խաղողի այգիները, այս ու այնտեղ սպիտակին էին տալիս ամառանոցները: Անհիշելի ժամանակներից Վեզուվը լուռ է եղել, և մարդիկ մոռացել էին, որ կանաչի մեջ թաղված լեռը ահարկու հրաբուխ էր:

63 Թվականի փետրվարի 5-ի կեսօրին Կամպանիայում ուժեղ երկրաշարժ եղավ: Անսպասելի ցնցման հետևանքով որոշ շենքեր լուրջ վնասվածքներ ստացան: Ադետն ամենամեծ ավերածությունները պատճառեց Պոմպեյի ֆորումին: Յուպիտերի և Ապոլլոնի տաճարները լրիվ քանդվեցին, զգալիորեն վնասվեց շուկան երեք կողմից շրջափակող սյունաշարը: Զրմուղը դադարեց գործել, և բնակիչները ստիպված էին օգտըվել փողոցներում եղած հին ջրհորներից:

Այն ժամանակ ոչ մեկի մտքով չէր անցնում, որ այդ ամենի մեղավորը Վեզուվն է: Հրաբխում կուտակված գոլորշիները և գազերը ելք էին փնտրում, բայց պայթելու համար դեռևս բավարար չափով ուժ չունեին: Կամպանիայի բնակիչները աղետը աստվածներին էին վերագրում և աշխատում էին առատ զոհաբերություններով նրանց զայրույթը մեղմացնել:

Այդ դժբախտությունից համարյա մեկ տարի հետո Նեապոլի թատրոնում երաժշտական մեծ փառատոն էր: Այնտեղ որպես երգիչ մասնակցում էր անուղղելի խեղկատակ Ներոն կայսրը, որն իրեն աշխարհի ամենախոշոր դերասանն էր համարում: Հենց այն պահին, երբ հասարակ ժողովրդի և սեփական սյրեստորական գվարդիայի ծափարկունների ծափահարությունների տակ նա պարծենում էր իր արվեստով, տեղի ունեցավ ստորգետնյա նոր ցնցում, և թատրոնի պատերը քանդվեցին: Հանդիսականները խուճապի մատնվեցին, բայց Ներոնը, ինչպես հաստատում են ժամանակագիրները, անշարժ մնաց բեմի վրա և իր սառնասրտությամբ արժանացավ ամբողջ քաղաքի հարգանքին:

Վրա հասավ 79 թվականի օգոստոսի 24-ը՝ ճակատագրական օրը: Ինչպես մենք արդեն սկզբում հիշատակել ենք, կապույտ երկինքն անամպ էր: Արևն այրում էր վաղ առավոտից, Պոմպեյի և Հերկուլանումի բնակիչներն իրենց գործերով էին զբաղված: Պոմպեյի սալարկած փողոցներով անցնում էին հացահատիկ և բանջարեղեն բարձած երկանիվ սայլերը: Զկնորսները երգաձայն գովում էին իրենց գիշերային որսը, շուկայի առևտրականները և արհեստավորները ճոճոցով բացում էին արհեստանոցների և խանութների փայտե դռները, վերավաճառողների բազմության միջով հրելով անցնում էին ստրուկ-խոհարարները և դպրոց գնացող երեխաները:

Ժամանակ առ ժամանակ անցորդներից որևէ մեկը կանգնում էր բացված գինետան առջև, որ մի գուլաթ էժան գինով ծարավը հագեցնի: Մարդիկ մտքը խճրեքով կանգնում էին առաջիկա համայնական ընտրությանն երի թեկնածուներին գովաբանող ընտրական հայտարարությունների առջև: Կամպանիայի քաղաքները սկսել էին իրենց գործարար նոր օրը:

Ցերեկվա ժամը մեկին, երբ բնակիչները ճաշի նստեցին, հանկարծ մի խլացուցիչ դրագյուն լսվեց, գետինը ցնցվեց, տները հարբածների նման օրորվեցին: Վեզուլի գագաթից դեպի երկինք ժայթքեց քուլաներով պարուրված կրակի սյունը: Լայն բացված խառնարանի բերանից դուրս էին թռչում մոխրի կալյուներ և պեմզայի կտորներ: Դրանք ծածկեցին արևը, ամբողջ երկինքը, Կիրեց լրիվ մթություն, միայն բոսորագույն ցուլքերն էին ճեղքում համառարած խավարը:

Պոմպեյի վրա ավելի առատորեն սկսեց թափվել մոխրի և քարերի կարկուտը, որոնց քաշը մինչև վեց էիլոգրամի էր հասնում: Թռչունները երկնքից վայր էին ընկնում, ծովի ալիքները ափ էին նետում սասկած ձկներ: Մարդկանց և կենդանիներին աննկարագրելի սարսափ պատեց, ամեն մեկը միայն իր փրկության մասին էր մտածում: Խելակորույս ձիերը և ջորիները սրբնթաց թոցնում էին սայլերը և կառքերը: Տղամարդիկ, կանայք և երեխաները, ծածկելով գլուխները, նեղ փողոցներով դեսուդեն են վաղվազում ծծմբի թանձր գոլորշիների միջով, որտեղ անհնարին էր շնչել:

Ոչ բոլոր պոմպեյցիները ժամանակին կոահեցին փրկության որոնել քաղաքից դուրս: Շատերը անձնատուր եղան այն խաբուսիկ հուլյին, որ հրաբխային անձրևը շատ երկար չի տևի, ու պատսպարվեցին մոտակա տների նկուղներում, սեփական կյանքով հատուցելով իրենց անգործունեության համար: Մոխիրը և քարերը անընդհատ թափվում էին քաղաքի վրա, այնպես որ փողոցներում և հրապարակներում մի քանի մետր բարձրությամբ անհաղթահարելի խրուսներ առաջացան: Նրանք, սվքեր շատ ուշացումով փորձեցին փախչել քաղաքից, խրվում էին մոխրի մեջ և, քարկոծվելով, մեռնում՝ ջրածորին կրծքին սեղմելով իրենց մեծարժեք իրերը: Մյուսները զոհվեցին քարերի և մոխրի ծանրությունից քանգվող տների փլատակներում: Այդպես զոհվեցին ավելի քան երկու հազար պոմպեյցիներ, քաղաքի բնակչության տասը տոկոսը:

Ոչ ոք չէր կարող կոահել աղետի շափերը: Հրաբխային անձրևը քաղաքի վրա թափվում էր նաև հաջորդ երկու օրը: Եվ այդ ամբողջ ժամանակ թանձր խավար էր, միայն հրաբխի խառնարանից կարմիր բոց էր ժայթքում: Միայն օգոստոսի 27-ին արևի ճառագայթները ճեղքեցին երկիրը պատած մոխրի ծածկույթը: Փրկվածների առջև սարսափելի տեսարան բացվեց: Պոմպեյը և Հերկուլանումը լրիվ անհետացել էին քարերի և մոխրի տասնհինգ մետրանոց շերտի տակ, միայն այս ու

այնտեղ նշմարվում էին մենավոր սյուներ և ավելի բարձր շենքերի տանիքները: Հրաբխային պատանը տասնութ կիլոմետր տարածությամբ ծածկել էր ամբողջ շրջակայքը: Քամին գորշ մոխիրը հասցնում էր Հոռոմ, նույնիսկ Աֆրիկայի ծովեզերքը, Սիցիլիա և Եգիպտոս:

Հերկուլանումում աղետը բոլորովին այլ կերպ էր ընթանում: Քաղաքից ընդամենը շորս կիլոմետր հեռու գտնվող Վեզուվի լանջին արյունահոս վերքի նման ճեղք բացվեց: Ճեղքվածքից հոսում էր ծովի ջրի, մոխրի և մանր քարերի խառնուրդից, այսպես կոչված՝ լապիլլիաներից կազմված թանձր մածուցիկ ցեխ: Հրաբխի ստորոտում սկսեց գետ հոսել՝ տասնհինգ մետր բարձրության ցեխի հեղեղ: Անսանձելի ուժով, սակայն ոչ այնքան արագ, այդ հեղեղը կլանում էր տաճարները, տները, գեղեցիկ ամառանոցները, մարմարե սյուները, հասարակական շենքերը և ամֆիթատրոնի պատերը: Հերկուլանումը հետզհետե անհետացավ տասնհինգ մետր հաստության ցեխի շերտի տակ, որը կիզիչ արևից շուտով քարի նման ամրացավ:

Հերկուլանումի բնակիչները, ի տարբերություն պոմպեյցիների, ժամանակին կռահեցին իրենց սպառնացող վտանգը և հասկացան, որ ցեխի սարսափելի հեղեղից փրկվելու համար միայն մի բան է մնում՝ փախչել: Ոչ ոք չէր փորձում փրկել իր ունեցվածքը կամ թաքնվել նկուղում, այդ պատճառով, բացի մի քանի դժբախտներից, որոնց հեռանալ խանգարեցին հիվանդությունը կամ ծերությունը, Հերկուլանումի ողջ բնակչությունը համարյա առանց կորստի փրկվեց աղետից:

Ազետի ընթացքի մասին ճշգրիտ տեղեկությունների համար մենք պարտական ենք հռոմեացի պատմագիր Տակիտոսին: 106 թվականին նա դիմեց իր բարեկամ Պլինիոս Կրտսերին, արդեն հիշատակված նավատորմի հրամանատար Պլինիոս Ավագի եղբորորդուն, խնդրելով նրան հաղորդել այն ամենը, ինչ նա գիտեր Վեզուվի ժայթքման և իր հորեղբոր մահվան մասին: Պլինիոս Կրտսերը նրան երկու ընդարձակ նամակ գրեց, որոնք հանգամանքների երջանիկ բերումով սլահպանվել են մինչև մեր օրերը:

Նավատորմի հրամանատարը իր զարմուհի Ռեկտինայից, որը Վեզուվի լանջին ամառանոց լուներ, նամակ է ստանում, որտեղ նա խնդրում էր փրկել իրեն աղետից: Պլինիոս Ավագը հրամայում է անմիջապես թեթև նավ առանձնացնել և դուրս է գալիս բաց ծով: Մոխրի և քարերի խիտ ամպի միջով անցնելիս նա քարտուղարին թելադրում էր իր դիտումները: Սակայն շուտով ծանծաղուտները և ալեկոծվող ծովի հորձանքը անհնարին դարձրին առազաստանալի հետագա նավարկումը: Հակառակ նավապետի խորհրդի, Պլինիոսը Մտարիա ուղևորվեց, որտեղ և զոհվեց հրաբխային անձրևից, թունավորվելով ծծմբային գազերով:

Այնուհետև Պլինիոս Կրտսերը նկարագրում է իր հետ սլատահածը:

Այն ժամանակ ես մորս հետ գտնվում էի Միգենեում: Ամբողջ գիշեր, երբ բացակայում էր հորեղբայրս, սարսափելի երկրաշարժը շարունակվում էր: Արևածագին մայրս սարսափահար իմ ննջարանը վազեց: Տեսնելով, որ բոլոր տները ամեն բույս կարող են փլատակների վերածվել, մենք որոշեցինք անհապաղ հեռանալ ֆաղափից: Մեր օրինակին հետևեցին ֆաղափի բնակիչները, որոնք առաջ նետվեցին և մեզանից անցան:

Ընդ որում, կարելի էր դիտել տրտասովոր տեսարաններ: Ցրնցումներն այնպես էին նոսրում կառները, որ նրանք ամեն բույս կարող էին շուտ գալ: Մովը, թվում է, նահանջում էր, ավազի վրա թողնելով ծովային բազմաթիվ կենդանիներ: Երկնում հրով և ամայրոպով փայլատակող շարագուշակ ամպեր էին կուտակվում: Մի բույս անց մեզ կլանեց շուտավորված շենֆի խավար հիշեցնող սև գիշերը: Լսվում էին մայրերի նիշերը, երեխաների լացը և տղամարդկանց գոռոցը: Ոմանք սգում էին իրենց բախար, մյուսները՝ հարազատների, կային և այնպիսիք, որոնք մահ էին աղերսում: Շատերը ձեռները թախանձագին դեպի աստվածներն էին մեկնում, սակայն մեծ մասը գոռում էր, որ արդեն աշխարհում աստվածներ չկան և որ արդեն վրա է հասել մշտնջենական գիշերը:

Կամպանիայի ճակատագիրը ծանր տարավորություն գործեց իտալական հասարակության վրա: Տիտոս կայսրը սենատի հանձնաժողով կազմեց՝ Վեզովի դժբախտ զոհերին օգնություն ցույց տալու համար: Նա նույնիսկ անձամբ եղավ տեղում, որպեսզի տեսնի աղետի չափերը:

Իր այցելության ժամանակ նա հրամայեց Պոմպեյից դուրս բերել այն ամենը, ինչ հնարավոր է, հատկապես աստվածների և կայսրերի արձանները, որոնք հնարավոր էր հանել մոխրի տակից: Նույնիսկ պոկում էին գետնի երեսին մնացած սյուների և ատտիկոսների մարմարը: Բնակիչները թունելներ էին փորում դեպի իրենց տները, որպեսզի ամենաարժեքավոր գույքը հանեն: Այդ որոնումների հետքերը պատերում բացվածքների ձևով մինչև այժմ երևում են պեղված քաղաքի փլատակներում:

Այլ էր վիճակը Հերկուլանումում: Տասնհինգ մետր հաստություն ունեցող ապառաժի պես կարծր հրաբխային կեղևը այդ կարգի փրկարարական աշխատանքները անհնարին էր դարձրել: Բացի դրանից, ժամանակի ընթացքում բլրի վրա հայտնվեց Ռեսինա մեծ գյուղը, որը շատ դժվարացրեց հնագիտական պեղումները: Ուստի համոզմունք գոյություն ունի, որ Հերկուլանումի չափեղած մասերը թաքցնում են հնագետի բահին և բրիչին սպասող հունա-հռոմեական մշակույթի անգնահատելի գանձեր:

Երկու ծաղկուն քաղաքների կործանումը բուն արձագանք գտավ հռոմեական գրականության մեջ: Բանաստեղծ Ստացիոսը այդ մասին

բանաստեղծություն է գրել, իսկ երգիծաբան Մարցիալոսը, 88 թվականին այցելելով Նեապոլի ծովածոցը, տեսած ավերածության մասին էպիգրամ գրեց: Կայսր-փիլիսոփա Մարկոս Ավրելիոսը Պոմպեյի և Հերկուլանումի ճակատագիրը մատնանշեց որպես այս աշխարհում ամեն ինչի անցավորության և անհարատեության ակնառու օրինակ: Պլինիոս Կրտսերի երկու նամակի հիման վրա Տակիտոսը իր պատմական աշխատությունում նկարագրել է աղետը, բայց, դժբախտաբար, այդ գլուխները ոչնչացել են:

Կործանված երկու քաղաքների ճակատագիրը իտալիկների հիշողության մեջ երկրորդ պլան անցավ հոռմեացիներին բաժին ընկած տարերային մեկ այլ աղետի պատճառով: Հոռմում վիթխարի հրդեհ բռնկվեց, որին կուլ գնաց քաղաքի կեսը, իսկ այնուհետև հրդեհից տուժածների մեջ ժանտախտի սարսափելի համաճարակ ընկավ:

Որոշ ժամանակ անց մոռացվեց ոչ միայն Վեզուվի ժայթքումը, այլ նույնիսկ Պոմպեյի և Հերկուլանումի աշխարհագրական դիրքը: Այնտեղ, որտեղ մոխրի ծածկույթի տակ գտնվում էին այդ քաղաքները, նոր տներ կառուցեցին, ծառեր տնկեցին, խաղողի այգիներ գցեցին: Դրանց մասին հիշողություն պահպանվել էր միայն այն գյուղացիների մոտ, ովքեր այնտեղ տնտեսություն էին վարում և այդ վայրը «ցիվիտա», այսինքն՝ սև «քաղաք» էին անվանում:

Միջին դարերում արդեն Պոմպեյի և Հերկուլանումի մասին ոչ ոք չէր հիշում: Այդ քաղաքների ողբերգական ճակատագրի մասին տրված հարցին այն ժամանակ շատերը ուսերի թափահարումով կպատասխանեին: Սակայն եթե նայեք Իտալիայի միջնադարյան քարտեզներից մեկը, ապա կպարզվի, որ նրա վրա Պոմպեյը և Հերկուլանումը բավականին ճշգրիտ են տեղադրված: Ինչպե՞ս բացատրել այդ տարօրինակ հակասությունը: Պատճառը միջնադարյան սխոլաստիկայի շրջանում գիտական ինքնուրույն հետազոտությունների և ուսումնասիրությունների լրիվ բացակայությունն էր: Քարտեզագիրները ստրկամտորեն և անիմաստ կերպով պատճենահանում էին մինչև աղետը հոռմեակա լեգեոնների կազմած քարտեզները, և այդ անելով, նրանք բոլորովին չգիտեին, որ Պոմպեյը և Հերկուլանումը վաղուց արդեն չկան կենդանի քաղաքների թվում:

Գրատպության գյուտի և վերածննդի դարաշրջանի սկսվելուն պես հրապարակվում են Պլինիոս Կրտսերի նամակները, որոնք վերականգնեցին տեսական հետքերությունը Կամպանիայի քաղաքների նկատմամբ:

Վերածննդի դարաշրջանի գրողներն իրենց պոեմներում և ժամանակագրություններում հիշատակում են այդ քաղաքների մասին, բայց

այն ժամանակ նույնպես ոչ ոք չէր փորձում պարզել դրանց գտնվելու իսկական վայրը:

Ինչպես մենք արդեն ասել ենք, Հերկուլանումի տեղում հիմնվեց Ռեսինա գյուղը: 1710 թվականին գյուղացիներից մեկը, խորացնելով իր ջրհորը, դեմ առավ մարմարե սալերի և սյուների, որոնք որպես հումք վաճառեց Նեապոլի որմնադիրներին: Այդ մասին իմացավ Նեապոլում գտնվող ավստրիական զորքերի հրամանատարը և անմիջապես ինքնուրույն որոնումներ սկսեց: Գյուղացու փորած փոսում նա մի քանի սքանչելի արձաններ գտավ, այդ թվում մորը և երկու դուստրերին ռեալիստորեն պատկերած խմբաքանդակ: Արժեքավոր գտածոները նա ծածուկ Վիննես էր ուղարկում, որտեղ էլ դրանք մինչև այժմ գտնվում են թանգարանում: Այն ժամանակ ոչ ոք չէր գիտակցում, որ հայտնաբերվել է Հերկուլանումը:

1738 թվականի դեկտեմբերին Ռեսինայում քսան մետր խորությամբ փոս փորելով, գանձեր որոնողները Հերկուլանումի ամֆիթատրոնին հասան: Այնտեղ նրանք մարմարից քանդակած ձիու գլուխ և մարմին գտան, ինչպես նաև պարեգոտ հապած տղամարզկանց երեք արձան, որոնցից մեկը Օգոստոս կայսեր դիմագծերն ունեւր: Բացի դրանից, հանվել են մարտակառքի բեկորներ, Վեսպասիանոս կայսրին պատկերող հսկայական քանդակը և Կրետեի ու Աֆրիկայի փոխարքա Մարկոս Նոնա Բալբայի հեծյալ արձանը: Տներից մեկում հունական դիցաբանության պատկերներով որմնանկար հայտնաբերեցին: Այն կտրել-հանել էին պատի վրայից և տեղափոխել Նեապոլի թագավորի պալատ: Սակայն հնագիտական տեսակետից ամենաարժեքավոր գտածոն արձանագրություն պարունակող սալիկն էր, որը վկայում էր, որ Անն Մամիանոս Ռուֆն իր միջոցներով կառուցել է Հերկուլանումի թատրոնը:

Այսպիսով, առաջինը հայտնաբերվել է Հերկուլանումը, շնայած քարացած ցեխի հաստ շերտի տակ գտնվելով՝ շատ ավելի անմատչելի էր, քան սարուն մոխրի և պեմզայի կտորների տակ թաղված Պոմպեյը:

Այդ հայտնագործությունը ավելի լայնածավալ որոնումների մղեց: 1755 թվականին Նեապոլում «Հերկուլանյան ակադեմիա» հիմնադրվեց, որի խնդիրն էր կանոնավոր պեղումներ կատարել և գիտականորեն մշակել գտածոները: Այդ նույն տարին ակադեմիայի անգամներից մեկը՝ Բայարդին, հրատարակեց մի հիանալի քարտարան, որը պատկերազարդված էր Հերկուլանումում գտնված որմնանկարները, արձանները և ավելի մանր իրերը վերարտադրող հարյուրավոր պղնձե փորագրանկարներով: 1762 թվականին հրապարակվեց արվեստի հայտնի պատմաբան, գերմանացի Վինկելմանի աշխատությունը Հերկուլանումի գտածոների մասին: Այդ աշխատությունը համընդհանուր հետաքրքրություն առաջացրեց անտիկ արվեստի նկատմամբ, ծայր առավ դասականության իսկական վերածնունդ, որը խոր, բեկումնային ազդեցություն ունեցավ

Եվրոպայի ճարտարապետութեան, գեղանկարչութեան, գրականութեան և կիրառական արվեստի վրա:

Տարօրինակ էին այն ուղիները, որոնք հանգեցրին Պոմպեյի հայա-նաբերմանը: XVI դարում արդեն հայտնի էր, որ Յիվիտա բլրի տակ ինչ-որ քաղաքի ավերակներ են թաքնված: 1594 թվականին իտալացի ինժե-ներ Դոմինիկո Ֆոնտանային հանձնարարեցին ստորգետնյա ակվեդուկ կառուցել, և այն ժամանակ նա առեղծվածային փլատակներէ հանդի-պեց: Հերկուլանումը գիտական աշխարհում որոշակի հուզում առաջաց-րեց, որոշ գիտնականներ կարծիք հայտնեցին, որ փլատակները Պոմպեյի մի մասն են, սակայն ճնշող մեծամասնութիւնը պաշտպանում էր այն կարծիքը, որ Յիվիտայում Ստաբիա քաղաքի ավերակներն են, որտեղ, ինչպես մեզ հայտնի է, զոհվեց Պլինիոս Ավագը: Նույնիսկ Վինկելմանը Հերկուլանումի մասին իր աշխատութիւնը հրատարակելիս վճռականորեն արտահայտվեց երկրորդ ենթադրութեան օգտին:

Բեկումը միայն 1763 թվականի օգոստոսի 16-ին տեղի ունեցավ: Յիվիտայում հողից հանեցին պարեգոտ հազած տղամարդու սպիտակ մարմարից արձան: Պատվանդանի վրա կար հետևյալ արձանագրու-թիւնը.

Հանուն Վեսպասիանոս Օգոստոս կայսեր և թագավորի, տրի-բուն Տ. Սվեթիոս Կլեմենտը Պոմպեյ քաղաքին վերադարձեց ան-ճառ անձանց կողմից յուրացված հանրային հողերը:

Այդպիսով առաջին անգամ անհերքելի ապացույց գտնվեց, որ Յի-վիտա բլրի տակ հանգչում է երբեմնի փառաբանված Պոմպեյը: Հենց այդ ժամանակ էլ պեղվեց այժմ Հերկուլանումյան կոչվող քաղաքային դար-պասը, ինչպես նաև ննջեցյալների ճանապարհը, որտեղ գտնվել են մի քանի վեհաշուք դամբարաններ, այդ թվում՝ նաև Մամիա քրմուհու դամբարանը:

Հետագա երկու դարերի ընթացքում պեղումները քիչ թե շատ կա-նոնավոր էին կատարվում, նայած քաղաքական դեպքերին, որոնք մերթ արգելակում, մերթ արագացնում էին դրանք: Այժմ Պոմպեյը պեղված է և երեք հինգերորդ մասը մատչելի է տուրիստների համար: Այլ կերպ են հանգամանքները Հերկուլանումում. որպեսզի հետազոտութիւնները մինչև վերջ հասցվեն, անհրաժեշտ է Ռեսինայի բնակիչներին տեղափոխել և քանդել նրանց տները, ինչը կապված է այնպիսի հսկայական ծախսերի հետ, որ կապիտալիզմի պայմաններում հնապիսութիւնը ի վիճակի չէ կատարել:

Ավելի քան երկու դար Պոմպեյում պեղումները քառասուն և կողոպտ-չական, եթե ոչ բարբարոսական եղանակով էին կատարվում: Պե-ղումների նպատակը, նախ և առաջ, որքան հնարավոր է մեծ քանակու-

Թյամբ արժեքներ, արվեստի ստեղծագործություններ և մետաղադրամ հավաքելն էր: Գտածոներն ընկնում էին թանգարանները կամ թագավորների ու արխիստոկրատների պալատները՝ դրանց մեծ շուք տալու համար, և նույնիսկ ցուցադրվում էին վաճառքի նպատակով: Այդպիսի պայմաններում շէր կարող խոսք լինել գտածոները գիտականորեն հետազոտելու և հոսմեական երկու քաղաքների նյութական մշակույթի չլի վատկերը վերստեղծելու մասին, քաղաքներ, որոնք մինչև մեր ժամանակները պահպանվել են համարյա այն վիճակում, ինչպես որ նրանց բնակիչները մեր թվականության առաջին դարում թողել և հեռացել են այնտեղից:

Դժվար է այժմ սլարդել այն վնասի ստույգ չափերը, որը հասցվել է այդ դարերի վանդալությունը: Հիանալի որմնանկարները պոկում-հանում էին պատերի վրայից և տեղափոխում Նեապոլի թանգարանները: Ավելին, եթե ինչ-որ նկար որևէ մեկին գեղեցիկ շէր թվում, այն կոտորուտում և աղբանոցն էին թափում: Պեղված տները լրիվ կողոպտելուց հետո կրկին լցնում էին հողով: Հենց այդպես անվերադարձ կորել է ժամանակին գտնված Կիկերոնի «Պոմպեանում» ամառանոցը: Երբ բրոնզե արձանագրությունը մարմարե սալ էին գտնում, ապա առանձին տառերը պոկում էին մարմարից և զամբյուղի մեջ նետում, որից հետո արդեն տեքստը հնարավոր չէր լինում վերծանել: Արձանների բեկորներից զրոսաշրջիկների համար հուշանվերներ էին պատրաստում, հաճախ սրբերի պատկերներով. իսկ ամենավատն այն էր, որ ավերակներ այցելող յուրաքանչյուր ոք կարող էր հետը տանել այն ամենը, ինչ փչել էր խելքին:

XX դարի սկզբին միայն հնագետները պեղումների գիտական ճշգրիտ մեթոդներ կիրառեցին: Համապատասխան ուսուցում ստացած բանվորները փութաջանորեն մաղում են հողը, որպեսզի հնագիտական ամենափոքրիկ առարկաներ անգամ չկորչեն: Տները թողնում են այնպես, ինչպես որ փորվածքում գտնվել են, միայն ծածկում են տանիքով, որ պաշտպանեն անբարենպաստ եղանակից: Որմնանկարները և խճանկարները պաշտպանում են ապակիներով, նույնիսկ տնային գործածության առարկաները՝ կճուճները, կահույքը, գործիքները, խաղալիքները թողնում են այնտեղ, որտեղ դրանք գտնվել են: Պոմպեյի գինետներից մեկի վաճառասեղանին ընկած է մի աս՝ հոսմեական մանր մետաղադրամ, հավանաբար ծարավից տոշորված անցորդը այն պահին է դա այնտեղ դրել, երբ վրա է հասել աղետը: Այդ պղնձադրամը օրինակն է այն հոգատարության, որով ներկայիս հնագետները վերաբերվում են Պոմպեյում և Հերկուլանումում կատարվող պեղումներին:

Մարմարե սյուների հովանու տակ

Վեզուվի ժայթքման հետևանքով հնագիտության պատմության մեջ արտասովոր, եզակի իրադարձություն տեղի ունեցավ: Երկու քաղաք այն պահին, երբ կյանքն այնտեղ հորդում էր աղբյուրի նման, հանկարծ մեկ րոպեում անհետացան հրաբխային մոխրի ծածկոցի տակ, և այնտեղ, որպես հեքիաթային քնած ասպետներ, դարեր շարունակ սպասում էին իրենց արթնանալուն:

Շումերական Ուր քաղաքում թագավորական գերեզմանները հայտնաբերած գերմանացի հնագետ Լեոնարդ Վուլփին կատակով գրել է.

Եթե հետևենք հնագետների ցանկություններին, ապա բոլոր հին ֆաղաֆները առանց բացառության պետք է կործանվեն իրենց հարևանությամբ գտնվող հրաբուխների մոխրի տակ: Հնագիտական մյուս արշավախմբերի աշխատողները նույնիսկ նախանձի մաղձով են լցվում, երբ այցելում են Պոմպեյ և տեսնում հիանալի պահպանված աներ, որմնակարներ, կահույք և առօրյա գործածության առարկաներ, որոնք դրված են այնտեղ, որտեղ տերերը դրանք թողել են աղետից փախչելու պահին:

Պատմագիտությունը Հերկուլանումին և Պոմպեյին շատ բանով է պարտական: Այդ քաղաքների շնորհիվ Իտալիայի նյութական մշակույթը կենդանի կերպով ներկայացավ մեզ՝ իր բարդ ու հարուստ ամբողջականությամբ, որը, կարծես ամենազոր կախարդանքով, կանգ էր առել շարժման պահին: Հոռմեական կայսրության ամբողջ հսկայական տարածքում ոչ մի այլ պեղումներ դրանց հետ չեն կարող համեմատվել: Երկու քաղաքներում էլ ոչ միայն տաճարները, պալատները, բաղնիքները, ամֆիթատրոնները և հասարակական շենքերը մենք տեսանք համարյա այնպես, ինչ վիճակում հոռմեացիները օգտվել են դրանցից, այլ նաև շարքային մարդու առօրյա կյանքը, որով շատ անբավարար է զբաղվում հին պատմագրությունը:

Բարձրանանք Վեզուվի լանջը և հեռվից նայենք պեղումներին: Պոմպեյը փոված է մեր աչքի առջև: Այդ քաղաքի զբաղեցրած տարածությունը երեքուկես կիլոմետր շրջագծով անկանոն ձվածիք է կազմում: Տների խիտ մրջնանոցը շրջափակում են վեց մետր հաստությամբ և, տեղանքի կտրվածքից ելնելով, վեցից-ութ մետր բարձրությամբ հզոր բերդապարիսպները: Իրարից հարյուր մետր հեռավորության վրա դեպի երկինք են խոյանում հրակնատների ակնախոռոչներով հեռուն նայող վիթխարի սյուտարակները: Քաղաքը ութ դարպաս ունի, որոնցով դեպի ընդարձակ քառանկյունի ֆորումն են ձգվում սալարկված նեղ փողոցները:

Իջնենք Վեզուվի լանջից և մոտենանք Հերկուլանումյան դարպասին:

Քաղաքամերձ ճանապարհի երկու կողմում շրջապատելով կանգնած են Պոմպեյի ազնվատոհմիկների շքեղ դամբարանները: Բազալտե վեցանկյուն սալերով պատված չորս մետր լայնությամբ ունեցող փողոցը իջևանատների, Խանութների, գինեոճների և տնաթնադործական արհեստանոցների մոտով մեղ տանում է դեպի քաղաքալին շուկա: Սալարկի վրա երևում են հարյուրամյակների բնթացքում սայլերի անիվների բացած խոր անվահետքերը:

Վերջապես կանգնած ենք Ֆորումի շեմին: Այստեղ է կենտրոնացած պոմպեյցիների կյանքը, որոնք, ինչպես և հարավային բոլոր քաղաքների բնակիչները, իրենց ժամանակի մեծ մասը բաց երկնքի տակ էին անցկացնում: Այստեղ քաղաքական և առևտրական գործեր էին վճռվում, այստեղ կրոնական ծեսեր էին կատարվում և այստեղ էլ քվարձանում էին:

Ֆորումը զարդարելու համար միջոցներ և հնարամտությամբ շէին խնայում: Գեղաշար սյուների, իրիստ ներդաշնակ և չափի գագացողությամբ, հոյակապ ոճով կառուցված շենքերի հստակ գծերում արտացոլվում էր հունահռոմեական մշակույթի ուժն, սերը գեպի անբարոյի կանոնախորությամբ և հրապույրով լեցուն պարզորոշ ձևերը:

Շրջապատող բնությունը էլ ավելի էր ընդգծում հրապարակի գեղեցկությունը: Արևմուտքում բացվում էր Նեապոլի շողշողացող ծովածոցը՝ հորիզոնում երևացող Կապրի կղզու հետ միասին, արևելքում երևում էր հզոր լեռնաշղթան, հյուսիսում՝ վեղուլի կոճը:

Շուկան երեք կողմից շրջապատված էր երկհարկանի գորիական սյունաշարով: Չորրորդ կողմը զբաղեցնում էր տասը մետրանոց պատվանդանին բարձրացած Յուպիտերի տաճարը: Տաճարի մուտքը կորնթական ոճի վեց սյուն ուներ: Ներսում գտնվել է Յուպիտերի բնական շափերից մեծ գլուխը և այն հիմքը, որի վրա մի ժամանակ կանգնած է կղել արձանը: Ֆորումի գլխավոր մուտքը շարված էր երկնագույն երակներով սպիտակ մարմարով:

Յուպիտերի տաճարի կողքին կային ավելի փոքր, բայց նույնքան հիանալի ճարտարապետությամբ երեք տաճար: Սակայն շուկայի ամենամեծ կառույցը բազիլիկն էր: Գմբեթով պսակված նրա վիթիարի շենքը առևտրական գործարքների, հասարակական ժողովների և դատափարության վայր էր: Այնտեղ համայնական նշանակություն ունեցող այլ շենքեր էլ կային՝ առևտրական շարքեր, չափի ու կշռի սալատ, հանդիսավոր ընդունելությունների համար նախատեսված մարմարե դահլիճներով կուրիա կամ քաղաքապետարան, հասարակական ժողովատեղին՝ սյուններով շրջապատված գավիթը և նույնիսկ ջրով ողողվող հասարակական զուգարան:

Սայլերի և կառքերի մուտքը Ֆորում արգելված էր: Այն սալարկված էր տրավերտին կոչվող ամուր կրաքարով, շուրջբոլորը տեղադրված էին կայսերական տան անդամներին և քաղաքի անվանի մարդկանց պատկե-

րող մարմարե և բրոնզե արձաններ, որոնց հիմքերն էին միայն մնացել Զավանարար, աղետից անմիջապես հետո պոմպեյցիները քանդել հանել են դրանք որպես մեծ արժեք ներկայացնող առարկաներ:

Պոմպեյում տարբեր աստվածներին և աստվածուհիներին նվիրված ընդամենը ինը տաճար կար: Դրանցից ամենահետաքրքիրը եգիպտական Իսիդա աստվածուհու տաճարն էր: Ինչպես հռոմեական կայսրության ամբողջ տարածքում, Պոմպեյում նույնպես գոյություն ունեին արևելքից ներմուծված կրոնական զանազան պաշտամունքներ: Մենք հաստատ պիտենք, որ այնտեղ հրեական ազանդ գոյություն ուներ, իսկ տներից մեկի վրա խաչի նշանը թույլ է տալիս ենթադրել, որ քաղաքում եղել է նաև քրիստոնեական գաղտնի ազանդ: Մակայն ամենատարածվածը Իսիդայի պաշտամունքն էր: Նրան պատկերում էին երեսա գրկած մոր կերպարանքով: Մեծարվում էր նաև Օսիրիսը նրա ամուսինը և եղբայրը՝ Կրոնական տոնակատարությունների հետ կապված խորհրդավոր միստերիաները գրավում էին աղքատների և ստրուկների լայն զանգվածներին: Աշնանը մեծ տոնախմբություններ էին տեղի ունենում, որոնց ընթացքում ներկայացվում էր Մեթ աստու կողմից սպանված Օսիրիսի հարությունը:

Տաճարը հայտնաբերվել է 1765 թվականին: Այնտեղ է գտնվել Նեղոսի սուրբ ջրով մի մեծ տակառ և մութ խուց, որտեղից քմերը աստվածուհու անունից դուշակություններ էին ավետում և հավատացյալներին խորհուրդներ տալիս: Զոհասեղանին կանգնած էր Իսիդայի արձանը և դեռևս մնացել էին զոհաբերությունների՝ կենդանիների ոսկորների, թուզի, շագանակի, ընկույզի, արմավի և վարսակի ածխացած մնացորդները: Պատերին լավ պահպանվել էին Նեղոսի հովտի կենդանիներին և բույսերին պատկերող նկարները:

Այստեղ տեղին է հիշել, որ կրոնական պաշտամունքները Իսալիա կին թափանցում նույնիսկ հեռավոր Հնդկաստանից: Դրա ապացույցն է տներից մեկում գտնված հնդկական սիրո աստվածուհի Լաքշմինի պատկերող փղոսկրե արձանիկը:

Պոմպեյը ուներ մեկ այլ, ավելի հին եռանկյունաձև ֆորում ևս՝ այսպես կոչված «Ֆորում սրբանգույարև»: Նոր ֆորում կառուցելուց հետո հինը դարձավ հանգստի, զբոսանքի և զվարճությունների վայր: Այդ հիանալի հրապարակի երկու կողմը եղրապատում էր իննսունհինգ դորիական սյուներ ունեցող ծածկած սյունասրահը, երրորդ կողմը դեպի ծովն էր բացվում: Հանգստացողների համար այնտեղ նստարաններ էին դրված, կենտրոնում ավազան կար, որի մեջ կապարե խողովակներով ջուր էր հոսում: Հրապարակը զարդարում էին բրոնզե զանազան արձաններ, դրանց մեջ էր Օգոստոս կայսեր ազգական Մարցելլիոսի արձանը:

Հենց այստեղ՝ ֆորումի մոտ, իրարից ոչ հեռու եղել են երկու թատ-

բուն. հինգ հազար տեղանոց դրամատիկականը և այսպես կոչված «Օդեոն» երաժշտական ծածկած թատրոնը՝ հազար հինգ հարյուր մարդու համար: Այնտեղ կար զաֆրանի ջրի ավազան, որից շոգ ժամանակ ջուր էին շաղ տալիս դահլիճում: Նստարանների միջև թափված էին թատրոնի կլորածև տոմսերը, որոնք պատրաստված էին կապարից կամ փղոսկրից՝ տեղերի համարները վրան փորագրած:

Այդ թատրոնների ներկայացումները արս.ակարգ ժողովրդականություն ունեին Պոմպեյում: Հունական ողբերգությունների հետ միասին այնտեղ բեմադրում էին ժողովրդական ֆաբսեր, բալետներ և մնջախաղեր: Ներոնի թագավորության ժամանակ մեծ համբավ ուներ դիմախոս դերասան Պարիսը: Հասարակութունը նրան բուռն և անկեղծ ծափահարություններ էր պարգևում, սակայն փառքի անհագ ծարավի Պարիսը սեփական ծափարկուներ էր պահում նաև:

Քաղաքը հոգ էր տանում երիտասարդության ֆիզիկական դաստիարակության մասին և երեք պալեստրա՝ մարմնամարզական դպրոցներ է կառուցել: Դրանցից մեկն ուներ մարմարե սյունասրահ, հանդերձարան, բաղնիք, լողավազան, եկվոր ատլետների կացարան և նույնիսկ երիտասարդության հովանավոր Վեներայի փոքր տաճար: Ընդարձակ հրապարակում աճում էին հինավուրց սոսիներ, որոնցից մեկը հարյուր հիսուն տարեկան էր:

Քաղաքի մյուս մասում պեղվել է արդեն հիշատակված մեծ ամֆիթատրոնը: Այդ հսկայական շինությունը կառուցվել էր Կայոս Կվինկտոս Բալբայի և Մավրա Պորցիոսի միջոցներով, որոնք այդպիսով երախտագիտություն են հայտնել քաղաքին՝ իրենց բարձր պաշտոններում ընտրելու համար: Բայրան ահագին միջոցներ էր դիզել Սուլլայի ռեակցիոն տեոորի ժամանակ, շատ էժան գներով գնելով օրենքից դուրս հայտարարված հոռմեացիների ունեցվածքը:

Այնտեղ տեղի էին ունենում ո՛չ միայն գլադիատորների մարտեր: Արյունոտ տեսարանները բազմազանվում էին գիշատիչների մարտերով, քերժեններով հալածանք էր կազմակերպվում: Մրցասպարեղ էին բաց թողնում ցուլեր, արջեր, առյուծներ, վագրեր, գայլեր, հովազներ, վարազներ, վիթեր և նապաստակներ: Մարդկանց և կենդանիների արյունը հոսում էր հեղեղի նման:

Պոմպեյի բնակիչները կրճոտ մոլեգնությամբ էին դիտում արյունահեղ տեսարանները: Հանդիսատեսների մեջ խմբեր էին ստեղծվում, որոնք իրենց սիրեցյալներին պաշտպանելու համար միշտ պատրաստ էին տուրուդմիոց և կռիվ սարքել:

59 թվականին բանը հասավ արյունահեղ կոտորածի: Հոռմեացի քաղաքական վտարանդի սենատոր Լիվենցիոս Ուեգուլոսը, ցանկանալով նվաճել Պոմպեյի ընտրողների բարեհաճությունը, խաղեր կազմակերպեց: Ամֆիթատրոնը ոչ միայն պոմպեյցիներով լցվեց, այլ նաև շրջակա փոքր

քաղաքների բնակիչներով: Ներկայացման ժամանակ վիրավոր գլադիատորներինց մեկն ընկավ մրցասպարեղի ավաղի վրա: Հանդիսատեսները բուժ մատը վերև կամ ներքև ուղղելով, պետք է վճռեին նրա ճակատագիրը՝ սպանել կամ ներում շնորհել:

Այդ պատճառով պոմպեյցիների և Նուցերիայից եկածների միջև կռիվ ծագեց: Մուլեգնած ամբոխը քարերով, դանակներով և ցցերով դիմված ներխուժեց մրցասպարեզ, երբ ի վերջո կարգուկանոն վերահաստատվեց, ավաղի վրա մնացին մի քանի տասնյակ այլանդակված դիակներ և վիրավորներ: Նուցերիացի տուժած բնակիչները բողոքող պատվիրակութուն ուղարկեցին Ներոնի մոտ, և նա շատերին աքսորեց, իսկ Պոմպեյի ամֆիթատրոնը փակեց տասը տարով, որը արտակարգ դաժան պատիժ էր, նկատի ունենալով պոմպեյցիների հիվանդագին մոլուցքը գլադիատորների մրցումների նկատմամբ:

XVIII դարում ամֆիթատրոնի մոտակայքում գլադիատորների զորանոց պեղվեց: Դա հսկայական վարժահրապարակը շրջափակող քառանկյուն սյունասրահի ձևի շինություն էր, որն ուներ առանձին խցեր: Դահլիճներից մեկում գտնվել են գլադիատորների զենքերն ու զրահները՝ հոռմեական զինադորժական արվեստի հիանալի նմուշներ: Հատկապես աչքի էին ընկնում հարուստ դրվագված բրոնզե երկու ծնկակալը, բոլորակ վահանը և ծանր, շքեղ սաղավարտը: Այդ առարկաները այժմ Նեապոլի թանգարանի զարդերից են:

Խաղերը տարեկան միայն երկու անգամ էին տեղի ունենում, որոշակի տոնակատարությունների ժամանակ: Իսկ սովորաբար պոմպեյցիները իրենց ազատ ժամանակը հանրային երեք բաղնիքում էին անցկացնում: Բաղնիքները յուրօրինակ ակումբների դեր էին կատարում և այդ պատճառով ճոխությամբ ու ճաշակով էին կահավորված: Մարմարե ընդարձակ դահլիճները զարդարված էին որմնանկարներով և ծեփանկարներով, հատակը գեղեցիկ խճանկարով էր պատված, առաստաղները կամարածե էին: Բաղնիքը շորս սրահ ուներ՝ սառը, գոլ և տաք ջրով, ինչպես նաև շոգեբաղնիս, որտեղ հատակի տակով, պատերի և կամարների միջով անցնող խողովակներով տաք օդ էր մղվում: Պոմպեյի բնակիչը լողանալուց հետո կարող էր գրադարանում ընթերցանություն անցկացնել, հյուրասրահում զրուցել բարեկամների հետ, թեթև ատլետիկայի հրապարակում իր ֆիզիկական ուժը փորձել կամ թե լավ ուտել ու խմել պանդոկում:

Բաղնիքների փլատակներում բավական կարևոր հայտնագործություն արվեց՝ մի քանի դահլիճներ ապակիով պատուհանների ունեին: Անցյալում ապակե պատուհանների օգտագործումը բավականին հազվադեպ օրինակ է: Բաղնիքներից մեկում գտնված հազար երեք հարյուր քսանութ ձեթի ճրագնուրը վկայում են, որ պոմպեյցիները երեկոյան ժամերն էլ կլին բաղնիքներում անցկացնում: Տեղին է ավելացնել մի հե-

տաքրքիր մանրամասնութիւնն ևս. պոմպեյցիները գանգատվում էին, որ այն ժամանակ, երբ նրանք հաճույքով զողանում էին, գողերը տեօրինում էին հանդերձարանում և տանում նրանց հագուստներն ու թանկարժեք իրերը:

Միջին պոմպեյցին որպէս կանոն ապրում էր համեստ, եթե ոչ աղքատ: Մանր առետրականները և արհեստավորները վարձակալում էին պատրիկների պալատների ճակատային կողմում ներկառուցած խանութներն ու արհեստանոցները, իսկ քնում էին երկրորդ հարկի փոքր սենյակներում, ուր բարձրանում էին փայտե արտաքին սանդուղքներով: Նրանց սենյակների կահավորումը շատ աղքատ էր և բաղկացած էր միայն առաջին անհրաժեշտութեան առարկաներից:

Հոռմեական հասարակարգում դասակարգային խոր անհավասարութիւնը ամենից ակնառու արտահայտվում էր սենատորների, հեթալիների և հարստացած աղատ արձակվածների շքեղ առանձնատներում: Արտաքուստ դրանք անբարեսես էին: Ճակատները խուլ էին, առանց պատուհանների, երբեմն միայն պատերը զարդարված էին հոռմեական աստվածների՝ Յուպիտերի, Ապոլլոնի, Մարսի, Մերկուրիոսի կամ Միներվայի պատկերներով:

Ոչ կենտրոնական փողոցները, որտեղ գտնվում էին այդ տները, միօրինակ տպավորութիւն էին թողնում: Քաղաքի գլխավոր փողոցների պալատների ճակատային պատերում ներկառուցված էին խանութներ և արհեստանոցներ, բայց դրանք միայն սվելի էին քողարկում այն շքեղութիւնը, որը թաքնված էր պալատի ներսում:

Փողոցի կողմից թակ ունեցող երկփեղկ դռներով փակված նեղ միջանցքով մտնում էին տան գլխավոր, հանդիսավոր դահլիճը: Դա ատրիումն էր մարմարե ավազանով, որի մեջ անձրևաջուր էր լցվում երդիկից: Ավազանը շրջափակում էին տանիքը պահող սյուները: Այդ գեղեցիկ սրահը, սովորաբար, զարդարում էին կարկաչող շատրվանները, նախնիների և ընտանիքի անդամների կիսանդրիները:

Ատրիումի կողքին գտնվել են վարագույրներով ծածկված առանց լուսամտաների փոքրիկ սենյակների շարքերը: Դրանք ննջարաններն ու սեղանատներն էին, որտեղ մեծամասամբ պահպանվել են քարե մահիճները, որոնց վրա, գլուխները սեղանի կողմը դարձրած, թիկնում էին սեղանակիցները:

Տանտիրոջ սենյակի մոտով ատրիումից մտնում էին պերիստիլիում՝ սյունաշարով և փոքր որմնախորշերով շրջապատված այգին, որը խնամքով մշակում էին ստրուկները: Սովորաբար այնտեղ ցայտում էին շատրվանները՝ ջրի շիթեր սփռելով ծաղիկների, ծառերի և սիզամարգերի վրա:

Ածխացած արմատների մնացորդներով հաջողվեց վերականգնել այդ փոքր այգիների բուսականութեան ճշգրիտ տեսակները: Այնտեղ

ժառկաթմբերում աճում էին շուշաններ, դամասկոսյան վարդեր, մուշ-
շափարգեր, նարգիզ, հիրիկներ, մարգարաածաղիկներ: Մաաբրից ավելի
հաճախ հանդիպում էին ակացխան, նոճին, դափնին, սուսին, կաղնին և
պինիան, իսկ թփերից և դեկորատիվ բույսերից՝ հալվեն, բաղեղը, մըր-
տենին, պապիրուսը, եղեգը: Ձեռներից պոմպեյցիները շեն մոռացել նաև
պաղատու ծառերի և բանջարեղենի մասին: Շքեղ ամառանոցներում
գտնվել են ածխացած մնացորդներ, որոնք վկայում են, որ այնտեղ
տնկել են նշենի, ուտելի շագանակենի, թզենի, ընկուզենի, արմավենի,
բալենի, ձիթենի, նոնենի, խնձորենի, տանձենի, խաղող, բակլա, ծնեբեկ,
գդում և սեխ:

Շքեղ պալատների սենյակները վկայում են դեղեցիկի նկատմամբ
դրանց տերերի տաժած արտակարգ սիրո մասին: Համարյա բոլոր սեն-
յակների պատերը զարդարված էին որմնանկարներով և ծեփանկարներով:
Ահադիւ տարածութուն զբաղեցնող այդ նկարները ամենից հաճախ պատ-
կերում էին հոռմեական և հունական դիցաբանությունից քաղած տեսա-
բաններ: Այնտեղ մենք տեսնում ենք Դանայային գայթակղող կամ Եվրո-
պային առևանգող ցուլի տեսքով Յուպիտերին: Հաճախ կրկնվում էր
Դափնեին և Վեներային հետապնդող Ապոլլոնի պատկերը:

Սակայն պոմպեյցիները դիցաբանական թեմատիկայով չէին. սահ-
մանափակվում: Տարբեր ժամանակաշրջաններում մոդան փոխվում էր,
ուստի Պոմպեյի գեղանկարչությունը շորս հիմնական ոճի են բաժանում:
Շատ հետաքրքիր է պատրանքային ոճը: Այդ ժամանակաշրջանի նկար-
ներում մենք տեսնում ենք ֆանտաստիկ ճարտարապետություն և բնա-
նկարներ՝ պատկերված այնպիսի խաբուսիկ իրական հեռանկարով, որ
թվում է, թե լուսամուտի բացվածքից տեսնում ես արևով ողողված
օգառատ և լայնածիր արտաքին աշխարհ:

Հոռմեացիների կողմից Եգիպտոսը նվաճելուց հետո, մեր թվակա-
նությունից առաջ 30 թվականին, նրանց տների պատերին հայտնվում
են պապիրուսի, դեաձիերի, կոկորդիլոսների, բուրգերի պատկերներ և
նեղոսյան այլ տեսարաններ: Այդ մոտիվների հակադրությունն է կազ-
մում հումորի զարմանալի զգացողությամբ արված սքանչելի նկարների
շարքը: Դրանցում պատկերված են դեեր, այլ խոսքով ասած՝ տնային
ոգիներ, որոնք զբաղված են Պոմպեյում այն ժամանակ գոյություն ունե-
ցող զանազան արհեստներով. նրանք կերակուր են եփում, սանդալներ
կարկատում, ոսկերչական զանազան մանրուք պատրաստում, տախտակ
ուանդում, մուրճով զնդանին խփում, փռում հաց թխում, խաղող հավա-
քում և ոտքերով հյութը մզում: Թզուկներից մեկը կովում է ավանակի
հետ՝ քշելով նրան և պոչից քաշելով:

Հերկուլանումյան դարպասի առջև պեղվել է շքեղ մենատուն, որը
մի ժամանակ պատկանել է դիոնիսոսյան միստերիաների մի քրմաբնու
Տունը ունեցել է առանձին լուգադաններով տասները սենյակ և նույնիսկ,

Պոմպեյի տներում հազվադեպ, կիսաշրջանաձև պատշգամբ: Սակայն տան գլխավոր գանձը համարյա բնական մեծության քսանինը պատկերներով որմնանկարն էր: Անհայտ նկարիչը վառ գույներով պատկերել է նորադարձ կուլսին Դիոնիսոս աստծու պաշտամունքի միատերիային հաղորդակցելու դրամատիկական պրոցեսը: Նկարներից մեկում թևավոր աստվածությունը մտրակում է դեռատի աղջկան, մյուսներում՝ մերկ բաքոսուհիները պարում կամ ծնկի են գալիս Բաքոսի առջև:

Այդ նույն Հերկուլանոսյան դարպասից ոչ հեռու պեղվել է մեկ ուրիշ տուն, որը Վեզուվի ժայթքման պահին արդեն չորս հարյուր տարեկան էր: Այնտեղ, հավանաբար, ինչ-որ վիրաբույժ է ապրել, սենյակներից մեկում գտնվել է վիրաբուժական գործիքների հավաքածու, որոնք զարմանալիորեն նման են արդիական գործիքներին: Հետաքրքիր մանրամասնություն. վիրաբույժը դուստր է ունեցել, որը հավանաբար նկարչուհի է եղել: Դեպի այգին նայող հսկայական պատուհանով նրա սենյակի որմնանկարը պատկերում է մի երիտասարդ կնոջ, որը նկարում է Բաքոսի կիսանդրին. էրոսը բռնել է նկարը, իսկ երկու ստրկուհիները լարված հետաքրքրությամբ հետևում են նկարչուհու աշխատանքին...

Պատերի վրա հանդիպում են նաև միանգամայն ունայնատորեն կատարված դիմանկարներ: Այսպես, օրինակ, մեծ փոփ տեր Տերենցիոս Պրոկուլոսը, կարողություն ձեռք բերելով, իր համար առանձնատուն է կառուցել և կարգադրել պատերից մեկի վրա պատկերել իրեն ու կնոջը: Նկարը պատկերում է փոքր մորուքով և ցցված ականջներով մի տղամարդու, որը, հավանաբար, պատկառելիության համար՝ ձեռքին պապիրուսի փաթեթ է բռնել. քարայծի նման մեծ աչքերով, ուղիղ քթով և ձվաձև մեղմ դեմքով գեղեցիկ կինը իր առջև պահել է մոմե սալիկներ, իսկ գրիչը հպել է շրթունքներին, կարծես խորհրդածում է, թե ինչ պետք է գրի:

Պոմպեյցիները մեծ ուշադրություն էին դարձնում իրենց տների հատակներին: Դրանք մեծ մասամբ զարդարվում էին հազարավոր մանր գույնզգույն քարերից շարված խճանկարով: Այդ խճանկարներից մի քանիսը արվեստի իսկական գլուխգործոցներ են: Այնտեղ հանդիպում են երկրաչափական բազմապիսի զարդանկարներ, անտղեր, վարդազարդեր, զարդագրեր, ոլորանախշեր, հազվադեպ շեն նաև բուսական աշխարհից վերցրած մոտիվները՝ բաղեղ, պապիրուս, խաղող և դափնի: Կիրառական այդ նուրբ արվեստի վարպետները օգտագործում էին նաև կենդանիների աշխարհից վերցրած մոտիվները: Արտակարգ ճշտությամբ էին պատկերվում գետաձիերը, կենտավրոսները, ծովաձիերը, դելֆինները, շները, աղավնիները, արջերը և կովող աքաղաղները:

Խճանկարային արվեստի գագաթնակետը պետք է համարել դիցաբանական զանազան տեսարաններ կամ հին պատմության դեպքեր պատկերող կերպարային կոմպոզիցիաները: Այդ տեսակետից տիպական

է Բուլվեր-Լիտոնի «Պոմպեյի վերջին օրերը» վեպի շնորհիվ հռչակված «դրամատուրգի տունը»: Հատակի խճանկարում նկարիչը վառ գույներով, դրամատիկական լարվածությամբ հագեցված ռեալիստական եղանակով պատկերել է կատակերգակ դերասանների թատերական փորձը. ծեր ճաղատ դրամատուրգը սցենարը ձեռքին ռեժիսորական ցուցումներ է տալիս այժի մորթի հագած երկու պատանու, իսկ այդ ժամանակ մեկ այլ դերասան ընկերոջ օգնությամբ դգեստ է հագնում:

Ուղղակի շգերազանցված գլուխգործոց է «Այժամարդու տան» խճանկարով պատված հսկայական հատակը, որը հնագետների կողմից անվանվել է այդպես, որովհետև նրա ատրիումում գտնվել է հոռոմեական անտառների այդ թավամազ կուռքի շվնասված արձանը:

Մոտավորապես քսան քառակուսի մետր քառանկյունի հարթության վրա ամենատարբեր նուրբ երանգների մեկուկես միլիոն սպիտակ, սև, դեղին և կարմիր մանր քարերով նկարիչը ստեղծել է ճակատամարտի բազմաբովանդակ տեսարանը՝ Ալեքսանդր Մակեդոնացու ճակատամարտը Դարեհ III Կողոմանոսի հետ Իսոսի մոտ, մ. թ. առաջ 333 թվականին:

Ճակատամարտի քառուսում կուտակված ռազմիկների աչքերում արտահայտվող ցասումը և վախը, առանձին մարդկանց բնորոշ դիմագծերը, պայքարի դինամիկան և մոլեգնությունը, կոմպոզիցիայի ուժը, այս բոլորը շատ են հիշեցնում Մատեյկոյի «Գրյունվալդի ճակատամարտը» կտավը:

Նկարի գլխավոր դեմքը Ալեքսանդր Մակեդոնացին է: Մփացող մազերով, նիհար դեմքով և կրակոտ հայացքով Ալեքսանդրը նիզակով խոցում է պարսիկ ազնվատոհմիկին: Այդ պահին Դարեհը սարսափով նկատում է անձնապես իրեն սպառնացող վտանգը: Նրա մարտակառքի կառապանը խուճապահար քշում է նժույգներին, իսկ ինչ-որ պարսիկ իշխան նժույգից ցած է թռչում, որ այն տա իր աիքակալին և այդպիսով նրան փախուստով փրկվելու հնարավորություն ընձեռի: Հորիզոնի ֆոնի վրա ցցված նիզակների շարագույժ անտառը վկայում է, որ մակեդոնյան փաղանգները մարտի իրարանցման մեջ պահպանել են հոծ շարքերը, որը պարսիկներին լիակատար ջախջախում է կանխագուշակում: Խճանկարը մ. թ. առաջ երրորդ և երկրորդ դարերի սահմանագծում ապրած Փիլոքսենոս էրիտրեացու ոչնչացած նկարի ճշգրիտ պատճենն էր:

Հնագետները հույս չունեին, որ Պոմպեյում կարող էին գտնել մոմի սալիկներ, որոնց վրա հոռոմեացիները իրենց նամակներն էին գրում և ընթացիկ տնտեսական գործերը գրանցում: Դրանցից տրիպտիխներ էին կազմում, այսինքն՝ երեք սալիկը քուղով միացնում էին և կազմում վեց էջանոց գրքույկներ: Քանի որ այդ սալիկները մոմի բարակ շերտով ծածկված փայտե տախտակներ էին, դժվար էր ենթադրել, որ դրանք կարող էին պահպանվել Պոմպեյում, որտեղ մոխրի և քարերի միջով հեշտությամբ օդ էր թափանցում: Դրանք գտնելու հնարավորությունն

աշխարհի մեծ էր հրաբխային քարացած բալաչով ծածկված Հերկուլա-
նումումս:

Մահայն մի անգամ պեղվեց բունկիթ և մահուտի գործարանատեք
լուկիոս Յեցիլիոս Յուկանդայի առանձնատունը: Մենչափներկց մեկուս
դրված էր թերթավար բրանդով երեսպատված փայտե սնդուկ: Երբ նրա
կափարիչը բարձրացրին, այնտեղ գտան հարյուր հիսուներկու մոմե
սալիկ, որոնցից հարյուր քսանյոթը հաջողվեց կարդալ: Դրանք առևտրա-
կան փաստաթղթեր էին՝ անշարժ գույքի առք ու վաճառքի պայմանա-
դրեր, վճարման ծանուցագրեր և հաշիվներ: Դրանք հետաքրքիր ձևով
լուսարանում են այն ժամանակվա Իտալիայի առևտրական հարաբերա-
թյունները:

Հերկուլանումում պապիրուսի փաթեթների գրադարան հայտնաբեր-
վել էր դեռևս XVIII դարում: Առայժմ դա այնտեղ գտնված միակ գրա-
դարանն է, չնայած հայտնի է, որ պատրիկների շրջանում սեփական
գրադարան ունենալը բարեկրթության նշան էր համարվում: Գեղեցիկ
քանդակներով, նկարներով և խճանկարներով լի պալատում, որն աչտօր
«պապիրուսների առանձնատուն» է կոչվում, մեկուսի գրադարան-սեն-
յակ կար: Մյնտեղ գտել են պապիրուսի հազար ութ հարյուր փաթեթ,
ցավոք սրտի, իրար կպած և ածխացած վիճակում: Դրանք բացելը և
կարդալը անշափ դժվար գործ էր: XVIII դարում արդեն վանական
Պիաչին այդ նպատակի համար հատուկ դադգահ պատրաստեց, սակայն,
չնայած երկար տարիների տքնաջան աշխատանքին, փաթեթների ան-
նշան մասը կարողացավ բացել ու կարդալ, ընդ որում բազմաթիվ փա-
թեթներ տնհուսալիտրեն վնասվեցին: Մինչ այժմ միայն երեք հարյուր
քառասուն պապիրուս է ընթերցվել: Դրանց թվում են էպիկուրյան Փի-
լոդեմոսի տրակտատները երաժշտության մասին, ինչպես նաև քնախա-
սություններ էպիկուրի փիլիսոփայության թեմաներով, որի հետևորդն էր
եղել սքանչելի պարատի տերը:

Պոմպեյում կահույք քիչ է պահպանվել, բայց դրա փոխարեն այն-
տեղ պեղվել է հարուստ դրվագված գավաթներից, բաժակներից, թա-
սերից, ափսեներից, սկուտեղներից, գդալներից և շերեփներից բաղկա-
ցած հինգ արծաթե սպասք:

Մի քիչ ավելի ուշադրություն դարձնենք սպասքներից մեկին, ելնե-
լով դրա գեղարվեստական բացառիկ արժեքից և այն դարձածալի հան-
գամանքներից, որոնք ուղեկցել են դրա հայտնաբերմանը:

XIX դարի վերջում Պոմպեյի շրջակայքում Վեզուվի լանջին հայտնա-
բերեցին մի պալատ և գինու ու ձիթապատի սափորներ պահելու համար
նախատեսված շինություններիով գյուղական տնտեսութուն: Ինչպես
պարզվեց այնտեղ գտնված կնիքից, դա պատկանում էր խաղողի, ձիթա-
պատի այգիների և արտավայրերի սեփականատեր, հարուստ հողատեր
ոմե Լուկիոս Հորենիոս Յլորին:

Վեդուվի ժայթքումը այդ մեծ ռևոլյուցիոն վրա անսպասելի գուժեց ամենօրյա աշխատանքի արհեստագույն պահին: Խոհանոցում գտնվեց շղթայով շան կմախք, վառարանի վրա կեռածներ էին գրված, որոնցում կերակուր էր եփվում, ախտառում գտնվեց մի քանի ձիու կմախք: Կովերը, ոչխարները և այծերը, հավանաբար, այդ ժամանակ արտասովայրում են եղել, և այդ պատճառով նրանց կմախքները գտնում չեն հայտնաբերվել:

Բակում հնձանի մամլիչի մոտ գտնվել են մարդկային երեք կմախք, դատելով տպագրիտներով թանկարժեք մատանիներից՝ նրանց մեջ էր տանտիրուհու աճյունը:

Պեղումները կատարում էր հողամասի տեր Վինչենցո դե Պրիական: 1895 թվականի ապրիլի 13-ին, բանվորների գնալուց ոչ շատ առաջ, պահակը նկուղ տանող նեղ շանք հայտնաբերեց: Նա մտաւ այնտեղ, բայց անմիջապես վերադարձավ, բղավելով, որ նկուղը գազերով լեցուն է:

Հենց որ բանվորները գործը վերջացրին և տները գնացին, պահակը շաապեց հողամասի տիրոջ մոտ և հուղմունքով ասաց.

— Տեր իմ, նկուղում մի կմախք կա, իսկ նրա շորս կուզմը բազմաթիվ գանձեր են թափված:

Հողամասի տերը պահակին հրամայեց լսել և գիշերը տեղում մնալ:

Հենց որ մթնեց, նրանք լապտերներով մտան նկուղ և քարացան, տեսնելով իրենց առջև թափված մեծ հարստութունը: Այնտեղ նրանք տեսան ազարանջաններ, ականջողեք, մատանիներ, ռակե ծանր շղթաներ, հիանալի զարդարված արծաթե ամանեղեն, իսկ կենտրոնում՝ կաշվե փտած պարկ: Դրա մեջ կար կայսրության շրջանի՝ սկսած Օգոստոսից և վերջացրած Դոմիցիանոսով, հազարից ավելի ռակեգրամ: Ամենաուշ ժամանակների դրամները վերաբերում էին 76 թվականին, հետևաբար, աղետից երեք տարի առաջ էին թողարկված: Այնտեղ շատ հազվադեպ դրամներ կացին, Գալբաչի, Օտրոնի և Վիտելիսսի պատկերներով, որոնք բոլորը միասին միտջն մեկ տարի են թափավորել և այդ պատճառով մեծ քանակությամբ դրամ չէին կարող մտցնել շրջանառության մեջ: Համարյա բոլոր գրամները նորի նման փայլում էին:

Այժմ դրանք եռամիլիոնատական անգնահատելի նմուշներ են:

Ճաշի սպասքը՝ հոտմեացիների շրջանից մեզ հասած ամենագեղեցիկ սպասքներից մեկը, հարյուր ութ առարկայից էր բաղկացած՝ գավաթներ, մեծ սավորներ, ասիսենեք, աղամաններ, գդալներ, քաժակներ, նույնիսկ քամիչներ: Դրանք պատված էին զարգաբանդակներով, որոնք հմուտ վարպետները պատրաստել էին թերթավոր արծաթից:

Ուղղակի ապշեցուցիչ է մոտիվների և նախշերի հարստութունը: Այնտեղ կան կեսարների և հոտմեացի պատրիկների ռեալիստական գիմանկարներ, կոունկներ, արադիլներ, տերևներ, եղջերուներ, քերձիներից փախչող վարաքներ, քարայծիների վրա հարձակվող արջեր, նա-

պաստակ ճանկող արծիվներ, այծյամներ, մողեսին հետամուտ կեռնեխ, ցուլի վրա նետվող առյուծ, գայլի հետ կովող աղվես: Բոլոր տեսարանները վերարտադրված են շարժման արտասովոր զգացողությամբ, անատոմիայի և գեղարվեստական կոմպոզիցիայի գաղտնիքների իմացությամբ:

Հատկապես հետաքրքիր են գինու արծաթե գավաթները: Նկարիչը դրանց վրա դրվագել է մեծ փիլիսոփաներ և թատերագիրներ Սոֆոկլեսի, էվրիպիդեսի, Մենանդրոսի, էպիկուրի և ստոյիկների դպրոցի հիմնադիր Ջենոն Կիտիոնցու գլուխներով կմախքների պարը: Այդ մղձավանջային, գրոտեսկային տեսարանները արտացոլում էին այն ժամանակ տարածված էպիկուրյան փիլիսոփայությունը, որը հետևյալ մտքին էր հանգում՝ օգտվիր կյանքից քանի դեռ կենդանի ես, որովհետև ամեն քայլափոխին մահը դարանում է քեզ:

Այդ ահագին, իր տեսակի մեջ միակ գանձը գաղտնի արտահանվել է Իտալիայից և վաճառվել Ֆրանսիացի միլիոնատեր Ռոտշիլդին:

Առատ վարձատրություն ստանալով, պահակը հարբում է և գաղտնիքը հայտնում բաժակակիցներին: Այդ դեպքը Իտալիայում մեծ աղմուկ է բարձրացնում, նույնիսկ քննարկվում է պառլամենտում: Բայց կառավարությունը անզոր էր. օրենքով Իտալիական ժողովրդին պատկանող գանձը արդեն արտասահմանում էր, օտարերկրացի գնորդի ձեռքում:

Այժմ համարյա ամբողջ սպասքը գտնվում է Լուվրում, որտեղ Հոմերի նյութական մշակույթի ամենաարժեքավոր ցուցանմուշներից մեկն է:

Ինչպես աշխատելիս կանգնեցրած ժամացույց...

Եթե որևէ մեկը կարծում է, որ խզբզոցով պատերը կեղտոտելու խայտառակ սովորույթը միայն մեր ժամանակի շարիքն է, նա խորապես սխալվում է: Այդ շատ վատ սովորությունը հին է, ինչպես աշխարհը և Պոմպեյում նույնպես ներողամիտ էին վերաբերվում դրան: Բազիլիկայի, ամֆիթատրոնի, տաճարների և մասնավոր տների պատերին որևէ սուր գործիքով կամ փայտածուխի կտորով խզբզված էին հազարավոր անուններ, նկարներ, ազդեր ու խրատներ, որոնցով անցորդները փորձել են արտահայտել կասկածելի արժեք ներկայացնող իրենց մտքերը:

Մենք այժմ դատապարտում ենք այդ սովորույթը և աշխատում մարդկանց բացատրել, որ պատերին խզբզելը լավ ճաշակի հետ համատեղելի չէ: Իսկ ահա պատմության տարօրինակ ծաղրով Պոմպեյում գտնված այդ մակագրությունները հին գինու պես ուրիշ համ ունեն ու թանկ են մեզ՝ ժամանակակից մարդկանց համար: Չէ որ դրանց շնորհիվ մենք հաղորդակից ենք դառնում քաղաքի առօրյա կյանքին, ճանաչում միջին պոմպեյցու հոգին, նրա հոգսերը, դառնությունները, անմիջակա-

նորին ծանոթանում ենք նրա անսանձելի, անհոգ, հաճախ անպարկեշտ և հանդուգն սրամտությամբ:

- Զի կարելի չժպտալ, երբ մենք ծանոթանում ենք պոմպեյցի անհայտ քարտաշի հետ, որը շատ հաճույքով պատից ջնջել է ինչ-որ մեկի անունը, բայց չի կարողացել իրեն դսպել, որպեսզի չհավերժացնի իր սեփական անունը. պատի վրա կարդում ենք. «Սոսիոսը ստորագրել է, Հոնեսիոսը այն սպիտակ ծեփով ծածկել է»:

Շողոքորթ կամ ընկերոջ նկատմամբ բարյացակամությամբ լի մեկ այլ պոմպեյցի պատի վրա ասես փոստային բացիկ է թողել. «Ողջունքեզ, էմիլիոս Ֆորտունաս»: Գտնվել է ինչ-որ պատճառով դայրացած մի թղթակից, որը իր ամբողջ դայրույթը արտահայտել է հետևյալ դարձվածքով. «Սումիոսը ցանկանում է, որ Կոռնելիոսը կախվի»:

Սքանչելի են տների պատերին գրելու մանկական, միամիտ փորձերը: Պատերից մեկի վրա հպարտորեն փքված՝ շարված են շատ տգեղ տառեր՝ այբուբենի առանձին տառերը, որոնք փոքրիկ գրչակը, հավանաբար, դպրոցական նստարանին նստած հենց նոր է սերտել, ըստ երեւոյթին՝ ոչ առանց ճիպտի օգնության: Մեկ այլ տեղ պատկերված է պատանի ծաղրանկարչի բավականին հաջողված նկարը՝ գլխին դափնեպսակ դրած և թունդ հարբեցողի ուռած քթով ճաղատ ուսուցչի ծաղրանկարը: Ինքնաբուխ հումորով հարուստ է երկու գլադիատորների մենամարտը պատկերող նկարը:

Ընդհանրապես գլադիատորների մարտերի համբավը քաղաքի խաժամուժի շրջանում լայն արտացոլում է գտել պատերին արված մականդրություններում: Գլադիատորներից ոմանք կանանց կուռքն էին: Այսպես, օրինակ, մի մականդրություն վկայում է, որ Թրակոս Քելադոսը «կանանց տենչանքի առարկան է, տիրակալն ու բոժոզը»:

Շատ հետաքրքիր են առաջիկա խաղերն ազդարարող կամ առանձին ռարտերի արդյունքները հաղորդող հայտարարությունները: Անկյունային տներից մեկի վրա հետևյալ բովանդակությամբ մի ազդագիր է գտնվել.

Քսան զույգ գլադիատոր, որոնց կտակել է Ներոնի ֆուրմ կուկրեցիոս Սատրիոս Վալենսը և նրա որդու թողած տասը զույգը ապրիլի 4-ին Պոմպեյում իրար դեմ դուրս կգան: Բացի դրանից տեղի կունենա որսորդների և վայրի գազանների մենամարտ: Վերևում ֆաթանի ծածկ կգցվի, որ մարդիկ արևի տակ չայրվեն:

Էլ ավելի հետաքրքիր է, որ դեռ այն ժամանակներում կային բարբարոսական այս զվարճությունների հակառակորդներ, և ամենից առաջ՝ հենց գլադիատորների շրջանում: Սպարտակի ապստամբության ժամանակներից նրանք վտանգավոր խռովարար տարր էին հոռմեական կայսրության մեջ, լեգեոններն ու պրետորները ուշադիր հետևում էին և

խիստ պայմաններում էին պահում նրանց: Այդ խոռվարար գաղղիատոր-
ներից մեկը գորանոցի պատին գրած իր բողոքը հետևյալ նախադասու-
թյամբ է պատահյալ. «Փիլիսոփա Աննեյոս ԱՅՆԵԿԱՆՆ ԷՐԱԿ գրողն էր
հռոմեացիներին մեջ, որը դատապարտել է արյունաշի խաղերը»:

Համարյա երկու հազար այլ մակագրություններ ակնառու ցույց են
տալիս, որ ինքնավարության ընտրություններն անցնում էին աշխույժ
և աղմկոտ, դրանց գործնական մասնակցություն էր ունենում քաղաքի
ամբողջ բնակչությունը: Իրենց սիրելիների օգտին ազիտացիա էին անում
ոչ միայն առանձին մարդիկ, ի դեպ ասած՝ շատ հաճախ կանայք, այլ
նաև ամբողջ համքարություններ: Կան ազդագրեր, որոնց տակ ստորա-
գրել են հանրալին բաղնիքների հնոցապաններ, ջուլհակներ, ներկարար-
ներ, ոսկերիչներ, գրաստապաններ, խաղողի այգիներում աշխատողներ,
հրուշակագործներ, Իսիդա աստվածուհու երկրպագուներ, նույնիսկ գնդակ
խաղացողներ: Ընտրական լողունները և կոշերը կամ թեկնածուներին
մինչև երկինք էին բարձրացնում, կամ էլ նրանց ծաղրում և ցեխի հետ
հավասարեցնում:

«Պակվիոսը խնդրում է էդիլ ընտրել Լուկիոս Պոմբոսին», — կոչ է
անում մի պոմպեյցի, իսկ մյուսը մեծ, կարմիր տառերով հետևյալ կոչն
է գրել. «Օ՜ Տրեբիոս, ուժերդ լարիր և էդիլ դարձրու ազնիվ երիտասարդ
Լուկիոս Թուսկոսին»:

Թեկնածուին վարկաբեկող լողունները սրամիտ են և շարախոս:
Պատին կարդում ենք. «Վատիոսին էդիլ են առաջադրել խաբեբաները»:
Որոշ տեղերում թեկնածուներին գովաբանող լողունների տակ ավելաց-
րած է՝ «Բոլորը քնկոտ են»: Կամ թե՛ «Թունդ հարբեցողներ են»: Ծրևում
են նաև կատակի բնույթի սպառնալիքներ, որոնք վկայում են, որ ընտ-
րական տենդի ժամանակ պոմպեյցիները չէին մոռանում իրենց անզուսպ
հումորը: Այդ տեսակետից տիպական է այսպիսի մի մակագրություն.
«Նրան, ով իր ձայնը չի տա Քվինկտոսի օգտին, թող որ ծաղրածուի պես
էջի վրա նստեցնեն ու պտտեն քաղաքում»:

Սիրային գործերում պոմպեյցիները աչքի չէին ընկնում ավելորդ
ամոթխաժությամբ. հմայիչ անմիջականությամբ նրանք պատերի վրա
հաղորդում են իրենց հոգսերի, հիասթուսիությունների և բազմապիսի
կրիվների մասին, սիրեցյալներին կանչում են կամ դառնորեն բողոքում
նրանց թեթևամտությունից և անհավատարմությունից: Ինչ-որ սիրահար
տան պատի վրա հետևյալ մեղամաղձառ բանաստեղծությունն է գրել.

Մշինչ հավերժական չէ՝
Ժպտում է մեզ Արևգակը ոսկե,
Բաց միևնույն է կթաքնվի օվկիանոսում,
Իսկ փայլատակող Լուսինը պայծառ
Անհետ կկորչի երկնքի խորքերում:
Ռատի եթե քո սիրած էակը՝

Զայրույթից խենթանա,
Անձնատուր շինես՝ և փոթորիկն այդ
Իր տեղը կգիշի քնքուշ զեփյուռին:

Մի ոմն ախրահար գրել է. «Ախ, ես կնախընտրեի մեռնել, քան առանց քեզ նուշնխակ աատված լինել», Կսկ մեկ ուրիշը հիացմունքի պոռթկման պահին վրասարանում է ախրահու գեղեցկութունը. «Ով չի տեսել Ապելեաի վեներայի նկարը, փող նայի իմ սիրած աղջկան, նա այնքան շքնաղ է, որքան որ այդ աստվածուհին»: Իր հարսնացուի համակրանքին շարժանարցած ոմն անհաջողակ ախրահար նրան այսպես է հրաժեշտ տալիս. «Մնաս բարով, իմ Սափա, գեթ մի քիչ սիրիր ինձ: Ախ, երբ դու իմանաս, թե ինչ է սերը, և մարդու նման սկսես զգալ, խղճա փնձ, վեներա աստվածուհու ծաղիկ, և թույլ տուր քեզ մոտ գալ»:

Զրհորի վրա, որտեղ ջրում են ջորիներփն և էշերին, փնջոր մեկը դիմում է շարիսպանց աբաղկոտ վարասարանին. «Ախ, եթե դու զգայիր, թե ինչպես եմ այրվում սիրուց, դու շատ արագ փնձ իմ սիրած աղջկա մոտ կհասցնեիր: Գե առաջ, վերջուր քո մարտկը և սանձերը, քշիր կենդանիներին: Շտապիր Պոմպեյ, չէ որ այնտեղ է ապրում քիմ ախրեցյալը»:

Զարմանալի է, որ լրամբարանները նույնպես այլանդակվում էին զանազան մակագրութուններով: Մենք այնտեղ գտնում ենք ընտրական աղբազրեր, հայտարարութուններ գլադիատորների խաղերի մասին, ռեկլամ, նուշնխակ մտեր հայտարարութուններ, որոնց միջոցով բնակիչները մեկը մյուսի հետ վառ էին հաստատում: Հերկուբոսումյան դարսրասի առջև դամբարաններից մեկի վրա հայտարարութուն կա փռփած ձևում մասին. «Եթե որևէ մեկի բարձած ձին օգոստոսի ՁԾ-ին փախել է, թող դիմի Գեցլոսին... Սառնոջի կամրջի մյտա կողմը, Մամիանոսի կալվածքում»:

Պոմպեյի համարյա բոլոր հոյակերտ պատերը կենդանուղ մակագրութունների տաղիր զննումից հետո մեզ համար զարմանալի չէ, որ քաղաքի բնակիչների մեջ գտնվել է մի գիտակից մարդ, որին դա զայրացրել է: Սակայն նուշնխակ հա, և այդ է ամենից զավեշտականը, չի դիմացել ճակատագրական գայթակղությանը և ոչ առանց հուժորի գրել է. «Օ, պատ, զարմանում եմ, թե մինչև հիմա ինչպես ես կանգուն մնացել: Ձէ որ դու գատապարտված ես այդքան դատարկարանութուն կրկրու»:

Պոմպեյցիները լողոնքների և բարոյական կարճ խղատների նկատմամբ հակում տնեին և դրանք գրում էին սենյակների պատերին վրա հաստակի խճանկարին: Տներից մեկում վարդում ենք հետևյալ խրատը. «Ամենափոքր շարիքը մեծանում է, եթե անտեսվում է»:

Այդ մտղան անհեթեթության էր հասցրել ոմն էպիդիոս Հիմենևոս: Նրա սան բոլոր պատերին ձանձրաբիրեն աչքի են զարնում մակագրութուններ, հաճախ պարզապես թիժաղելի, որոնք պարզորոշ խոսում են սանտիրոջ ցուցամուլ վրան և անճաշակության մասին: Ահա նրա Վի-

շեցումը խնջույքի հրավիրված հյուրի էին, «Եթե կարող ես, ատելի վեճերը հետաձգիր, հակառակ դեպքում քայլերդ դեպի քո տունն ուղղիր»։ Կամ, «Կոկեսո դեմքդ և շողոքորթ աչքերդ շուռ տուր ուրիշի կնոջից, դեմքիդ պահպանիր համեստ արտահայտություն»։ Երրորդ ուղերձը թերևս ամենազվարճալիին է. «Մեր վուշի սփռոցների հետ զգույշ վարվեք»։

Հարուստ հացթուխ և տնատեր Գնեյոս Ալեյոս Նիգիդոսը ուրախանալով իր ունեցվածքով, հրամայել է իր փոռում մեծ տառերով գրել. «Այստեղ ապրում է Լրջանկությունը»։ Իսկ Սիրիկոս անունով մեկ այլ վաճառական իր կյանքի նշանաբանը արտահայտել է երկու բառով. «Ողջունում ենք շահույթը»։ Երրորդ վաճառականը, որի անունը անհայտ է մնացել, զարմանալի անկեղծությամբ բոլորին հայտնում է, որ իր համար՝ «Շահույթը ուրախություն է»։

Տների շեմքերը նույնպես զարդարվում էին մակագրություններով։ Հայտնի է շան խճանկարը հետևյալ նախազգուշացնող գրությունամբ. «Զգուշացիր շնից»։ Հաճախ դռների վրա երևում է «Salve» լակոնիկ ողջույնը։ Այդ համընդհանուր սովորույթը խախտել է մի տնատեր, որն իր աստիճաններին մի երկար դարձվածք է գրել. «Իմ տան դռները փակ են գողերի համար, սակայն կրնկի վրա բաց են ազնիվ մարդկանց համար»։

Եթե բերված մակագրությունները զվարճացնում են մեզ, ապա գտնվեց մեկը, որը զարմանալի ուժով հիշեցրեց Պոմպեյի ողբերգական ճակատագրի մասին։ Հերկուլանումյան նեղ դարպասի մոտ դանթեական տեսարաններ են եղել։ Սարսափից խելակորույս ամբոխը ցանկացել էր որքան հնարավոր է շուտ դուրս գալ բաց տարածություն, մարդիկ հրմըշտել և տրորել են իրար, շխնայելով ոչ երեխաներին, ոչ ծերերին։ Մի ինչ-որ հրեա, հնարավորություն չունենալով իր համար ճանապարհ բանալ, թաքնվել է մոտակա տանը, սակայն հետո դուրս է վազել փողոց, հասցնելով պատի վրա խզմզել երկու ցնցող բառ. «Սողոմ-Գոմոր»։

Այդ շարագույժ մակագրությունը լույս է սփռում այն ամենի վրա, ինչ պոմպեյցիները զգացել են աղետի ժամանակ։ Ակնառու ապացույց են քաղաքի տներում և փողոցներում գտնված մարդկանց կմախքները։ Ինչպես արդեն ասվել է, դրանք համարյա երկու հազարի են հասել։

Երկու դարի ընթացքում այդ կմախքները, որոնց դիրքից կարելի էր դատել անհատական ողբերգության ընթացքի մասին, հնագետները հավաքում էին թանգարանում՝ առանց ենթարկելու համապատասխան պահածոյացման։ Միայն 1864 թվականին պեղումների ղեկավար Ֆիորելլին երջանիկ միտք հղացավ՝ Փոքրիկ փողոցներից մեկում գտնվել է մի գանգ, իսկ կմախքի մնացած մասը գտնվում էր ամրացած հրաբխային մոխրի մեջ։ Հետազոտությունները ցույց են տվել, որ աղետի ժամանակ անձրևից թրջված մոխիրը ամուր շրջածեփել է մարմինը, որը ժամանակի ընթացքում փտել է, պահպանելով իր ճշգրիտ ձևը։

Ֆիորելին անցքի մեջ հեղուկ գիպս լցրեց, իսկ երբ այն ամրացավ, մարդկային շորս ֆիգուր դուրս հանեցին: Դրանք ունեին կենդանի մարդկանց մարմնի ձևերը, դեմքներին սարսափ և հոգեվարքի տանջանք էր դրոշմված:

Մարմինների դիրքից դժվար չէր կռահել, թե ինչ էր տեղի ունեցել այդ փոքրիկ փողոցում: Առջևում տարիքով մի կին էր պառկած, իսկ նրա մոտ ընկած էին այն բոլոր գանձերը, որ նա փորձել է փրկել՝ երեք զույգ ոսկե ականջօղ, մոտ հարյուր արծաթադրամ, երկաթե երկու բանալի: Նրա աջ ձեռքը կտրված էր, ձախով ծածկել էր դեմքը, կարծես պաշտպանվել էր քարե կարկուտից: Հենց այնտեղ, նրա ոտքերի մոտ զոհվել էր տասնչորսամյա մի աղջիկ, հնարավոր է, նրա դուստրը: Որոշ հեռավորության վրա մի ուրիշ կին էր պառկած, դատելով աջ ձեռքի օղակից՝ ստրկուհի էր: Քիչ այն կողմ ընկած էր երկաթյա օղակով և ոտքերին որոշակիորեն երևացող սանդալներով մի վիթխարահասակ ստրուկ:

Այդ ժամանակից սկսած հնագետները ամենուրեք, որտեղ խտացած մոխիրը դա թույլ էր տալիս, կիրառում են Ֆիորելիի մեթոդը: Այդ եղանակով ստացել են շատ հուզիչ բազմաթիվ ձուլվածքներ, որոնք այժմ պահվում են Նեապոլի թանգարանում: Անկախ դրանից, Պոմպեյի պեղումների ժամանակադրությունը նշում է աղետի առանձին պահերը հետազոտելու հնարավորությունն ավոզ բազմաթիվ կմախքների հայտնաբերում:

Իսիդայի տաճարում քուրմերը հենց նոր էին ճաշի նստել, երբ վեզովը ժայթքեց: Սեղանին դրված են եղել հաց, գինի, հավի ճտեր, ձուկ ու ձվեր:

Սեղանակիցները տեղերից վեր էին թռել և սկսել իրենց գանձերը հավաքել: Ամուր քաթանի մեջ նրանք փաթաթել էին ահագին քանակությամբ ոսկե ու արծաթե դրամ, իսիդա աստվածուհու արձանիկները, արծաթե զոհամաններ և այլ արժեքներ: Սակայն նրանք շատ հեռու չէին գնացել. քարերի կարկուտից ընկել էին իրար կողք, տաճարի գանձերը սալարկի վրա շաղ տալով: Մյուս քուրմերը զոհվել էին տաճարին կից տնտեսական շինություններում:

Նրանցից մեկը կացնով ճեղքել-անցել էր երկու պատի միջով, բայց ընկել էր երրորդ պատի մոտ և զոհվել թունավոր գոլորշիներից:

Մղձավանջային զրոտեսկի էր նմանվում այն տեսարանը, որը բացեցին Հերկուլանումյան դարպասի մոտ պեղված դամբարաններից մեկում: Հոռմեացիները սովորություն ունեին հոգեհացը տալ հենց դամբարանում, դրա համար նախատեսված հատուկ նախասենյակում: Վեզովի ժայթքումը վրա էր հասել այն ժամանակ, երբ հանգուցյալի ընտանիքի անդամները, դամբարանում թիկնելով մահիճներին, սկսել էին հոգեհացի արարողությունը:

Մարմնամարդության և սուսերամարտի դպրոցում, որ կոչվում էր

պարեստրա, կար ըողավագան և երխոտաւարդութեան հովանաւոր Իսի-
գայի մատուար: Երիտասարդները, ինչպես միշտ, իրենց վարժություններ-
ով էին զբաղված: Քարի և մախրի կարվուտը մարդիկներին քշել էր հրա-
պարակը շրջափակող սյունասրահը: Բայց տանիքը փլվել էր, և շատ սրա-
տանիներ հենց այնտեղ էլ իրենց մահն էին գտել: Իսիգայի քուրմը երկու
ծիսանոթ ձեռքին ընկել էր մոխրով լիքը ջրավազանի մեջ և, շնայած քո-
ւոր ջանքերին, չէր կարողացել այնտեղից դուրս գալ:

Նման դեպք տեղի էր ունեցել նաև գլադիատորների զորանոցում: Այնտեղ գտնվող գլադիատորները շափազանց ուշ էին հասկացել, որ
իրենց տունը ավելի շուտ ծուղակ է, քան ապաստարան: Միայն երբ
սենյակները լցվեցին ծծմբի գոլորշիներով, իսկ մոտքը փակվեց հրա-
բխային զանգվածով, նրանք փախուստի դիմեցին, մոռապան իրենց երկու
ընկերներին, որոնք ինչ-որ մեղքերի համար շղթայակապ փակված էին
նկուղում: Բայց նրանք ուշացել էին: Երկու մարդապրահում, որտեղ
պատերից գլադիատորների հանդերձանք էր կախված, զոհվել էին մոտա-
վորապես հիսուն գլադիատոր և մի կին, որի մոտ զարդեր են գտնվել:

Պակաս սարսափ չէր տիրում Մեռյալների ճանապարհի մոտ գտնվող
շքեղ պալատներից մեկում: Այդ պալատի սյունազարդ գահլիճի տակ
եղել է գինու կարասներով լիքը ընդարձակ նկուղը: Ճանաերն իր ընտա-
նիքի և բազմաթիվ սարուկների հետ թաքնվել էր այնտեղ: Ոսկե ման-
յակով և բազմաթիվ ապարանջաններով զարդարված տիրուհին զրկել էր
երեխային: Նրա մոտ էին ավագ որդին և դուստրը: Սպասավորը նկուղ էր
բերել հաց, միրգ և այլ մթերքներ, պայուսակով արծաթադրամ և պարկի
մեջ լցված թերթավոր հաստ արծաթից պատրաստած ճաշի սպասք:

Երբ գոլորշիները պալատ թափանցեցին, դժբախտ սնեցիկները փոր-
ձեցին մաքուր օդ դուրս գալ, բայց նրանց նկուղի մուտքերը արդեն մոխ-
րով և քարերով փակվել էին: Արդյունքը եղավ այն, որ մեծատան ընտա-
նիքը և երեսունչորս սարուկ՝ մահվան առջև հավասար, ընդմիշտ սլառկած
մնացին կարասների միջև: Հնագետները ծառաներին տներրից միայն
զարդերով կարողացան տարբերել: Մարդկանց հետ միասին զոհվել է
պղնձե զանգակը վղին մի այծ:


Նման տեսարաններ կարելի է անվերջ նկարագրել: Ահա Պավլիոս
Պրոկոլի տանը ուրախ խաղում էին յոթ երեխա: Նրանց ծնողներն այդ ժա-
մանակ, հավանաբար, գտնվում էին տեղից հեռու, իրենց խանութներում և
արհեստանոցներում: Հրաբխի ժայթքման պահին դժբախտ փոքրիկները,
հրկուծյան սպասելով, վախից իրար էին սեղմվել: Բայց նախքան նրանց
մասին կհասցնեին մտածել, բարերի և մոխրի ծանրոթյունից փլված
առաստաղը ճզմեց նրանց:


1787 թվականին սարսափելի տեսարան բացեցին: Փոքրիկ սենյա-
կում ցաքուցրիվ թափված էին կնոջ ոսկորներ, որոնք ակնհայտորեն
կրծած էին: Սկզբում ոչ մի կերպ չէին կարողանում հասկանալ, թե փնջու

կմախքի մասերը, աստիճաններ տեղեկում են ցրված: Միայն երբ գտան շան կմախք, ահավոր ողբերգությունը պարզվեց: Շունը, որ կենդանի էր մնացել տիրուհու մահից հետո, պայքարելով սովատանջ մահվան դեմ՝ կրծել էր նրա մարմինը:

Պոմպեյի լաբորինակ խորհրդանիշը դարձավ շղթայակապ շան դիպսե ձուլվածքը: Ընդհանուր իրարանցման ժամանակ, մի տան նախասենյակում մոռացված խեղճ շունը, քանի դեռ շղթայի երկարութունը թույլ էր ապխա, մազլցելով դուքս է եկել հարաձուռն շերտի միջից: Այնուհետև, հոգեվարքի ջղաձգությունից կծկված, երեսնիվեր ընկել է և սատկել:

«Հարբած աշտամարդու» պալատում, հենց այնտեղ, որտեղ մենք հիանում էինք Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտը պատկերող խճանկարով, սյունասարահի ծածկի տակ գտնվել է մի բույն՝ ձվերի վրա նստած աղալնու կմախքը մեջը: Ձվերից մեկի մեջ դեռևս դուրս չեկած ճտի կմախք կար: Այդ գտածոն այնքան արժեքավոր չէ հնագիտական տեսակետից, որքան հուղիչ է և արժանի հիշատակման այն պատճառով, որ ավելի քան մեկ այլ գտածո ակնառու է դարձնում քաղաքի ցնցող ճակատագիրը, որի սիրտը հանկարծ կանգ է առել, ինչպես ընթացքի ժամանակ կանգնեցրած ժամացույցը:





Թե ինչպես Կորտեսը նվաճեց ազտեկների երկիրը

Էստրեմադուրցի աղքատացած իսպանական ազնվականի որդի էռնանդո Կորտեսը երիտասարդ ժամանակ արտակարգ զվարճամոլ էր։ Իր նման անբանների ընկերակցությամբ սարքած գինարբուքներով, կոփվներով և սիրային արկածներով այնքան էր զզվեցրել բարեպաշտ քաղքենիներին, որ ի վերջո ստիպված էր փախչել քաղաքի պահնորդներինց։

Այն ժամանակներում իսպանացի երիտասարդ ազնվականի համար լայն հնարավորություններ կային թափառելու աշխարհով մեկ՝ արկածներ որոնելու նպատակով։ Չէ որ դա 1504 թվականն էր։ Արևմտյան Հնդկաստան կատարած Կոլումբոսի առաջին ճանապարհորդությունից տասներկու տարի էլ չէր անցել։

Անտիլյան կղզիների ոսկե գանձերի մասին այնպիսի լուրեր էին պտտվում, որ կարող էին գլխահան անել ոչ միայն արկածախնդիր Կորտեսին, այլև Իբերյան թերակղզու ամենազառամյալ բնակչին։

Կորտեսը մեկնեց ծովային ճանապարհորդության և ափ իջավ Սան Դոմինգո կղզում: 1511 թվականին նա Վելասկեսի հետ մեկնեց Կուբան նվաճելու, որտեղ հռչակվեց ոչ միայն կտրիճությանը, այլև սպիտակ ներխուժողների մղձավանջից մոլեզնորեն պաշտպանվող կղզիաբնակների նկատմամբ իր դաժանությունները:

Կղզին նվաճելուց հետո Վելասկեսը դարձավ նրա նահանգապետը, իսկ Կորտեսը հողամաս և ոսկու հանքեր ստացավ: Ինչպես գրել է XVI դարի իսպանական ժամանակագիր դե Լաս Կասասը, «... ատաված գիտե, թե քանի հնդկացու կյանքի գնով» շուտով նա բավականին մեծ կարողության տեր դարձավ:

Ամուսնանալով, Կորտեսը, հնարավոր է, բազմաթիվ գաղութաբնակների նման, կյանքի մեացած մասը անցկացնեց հնդկացի ստրուկների աշխատանքի պտուղները վայելելով, եթե չլինեք նոր հայտնագործությունների լուրը, որ կայծակի արագությամբ տարածվեց կղզում:

1518 թվականին Խուան դե Գրիխալվան եղավ Յուկատանի հյուսիսային և արևմտյան ափերին: Այնտեղի հնդկացի ցեղերից նա իմացավ, որ մայր ցամաքի խորքում գտնվում է հզոր, խիտ բնակեցված և ոսկով հարուստ ացտեկների պետությունը: Այդ լուրը Կորտեսի վրա ազդեց այնպես, ինչպես կայծը վառողի տակառի վրա:

Նահանգապետ Վելասկեսը որոշեց այնտեղ ռազմական արշավախումբ ուղարկել, և Կորտեսը, բազմազան մեքենայություններով, իր վրա վերցնելով արշավանքի ծախսերի մի մասը, կարողացավ ստանձնել նրա հրամանատարությունը:

Սանտ Յագո նավահանգստային փոքրիկ քաղաքում նորաթուխ ծովակալը վեց նավ հանդերձավորեց և երեք հարյուր զինվոր հավաքագրեց: Սակայն Վելասկեսը զղջաց իր արարքը և չեղջալ հայտարարեց նշանակումը: Իմանալով Կորտեսի ըմբոստ բնավորությունը և լիտիությունը, նա ձի նստեց և արշավեց Սանտ Յագո, որպեսզի անձամբ զրկի նրան հրամանատարությունից:

Բայց նրա ժամանման պահին Կորտեսը հապճեպ բարձրացրեց առաջատարները և, ծաղրելով նահանգապետին, ծով դուրս եկավ, չնայած արշավախումբը ամենեին պատրաստ չէր մեկնելու. քիչ էին նավերը, անձնակազմը, իսկ գլխավորը՝ պարենը: Իշխանության ներկայացուցիչների հետ կապերը փոզելով, Կորտեսը պետք է դիմեր ծովահանության, որպեսզի անհրաժեշտ պաշար ձեռք բերեր:

Կուբայի Մակակա նավահանգստում նա բռնագրավեց եղած պարենի ամբողջ պաշարը, շինարարելով նաև այնտեղ գտնվող թաղամտրական կավածքները: Տրինիդադում նա զավթեց իսպանիայից հեկտո նոյ ժամանած առևտրական մի նավ՝ ամբողջ բեռի հետ մասին: Մյուս կամայականություն համար քաղաքի նահանգապետը ցանկացավ բռնել նրան, որպես սովորական սվազակի, սակայն Կորտեսը թնդածոթներն ուղղեց

քաղաքների վրա և անբաժանելի, որ քաղաք քաղաքի վրա չի թաղնի: Վախեցած աստիճանաշատները վերջ դադարեցրեց փեանգաւար սկանդալիստի հետ:

Կարաչի Սան-Անտոնիո Կաթիլահանգաւում արմազան ի վերջո լքիվ աւազատեց նախապատրաստութունը և 1519 թվականի փետրվարին քաց ծռվ դարս ևկաւ, ուղղութիւն վերցնելով դեպի Յուկատան: Տորմիզն տնէք աւանտեկ Կաւ, որոնց վրա կային 110 նավաստի, 566 զինվոր և 200 հնգկացի բեռնակիր: Այդ փոքր բանակի հարվածային զխաւթը ուժը հեծելազորն էր՝ 11 հեծյալ, և հրետանին, որը բաղկացած էր 10 ծանր և 4 թեթև բրոնզե հրանոթից: Հետևակը զինված էր աղեղներով, նիզակներով, 32 արբաւիտով և 13 արատուլգավոր հրացաններով:

Մտնենազով Յուկատանին, նավատորմը խարխախ գցեց Ռիո դե Տաբասկոյի գետաբերանում, քանի որ գետը շատ ծանծաղ էր: Կորտեսը շոկատի մի մասի հետ նավակներով ուղևորվեց հոսանքն ի վեր, որպեսզի ալցելի տաբասկների ցեղի մայրաքաղաքը, որոնց մասին Գրիխաւիւան պատմել էր, թե նրանք իրեն բարեկամաբար էին ընդունել:

Սակայն գետի ափերից, որտեղ մանգրոյի ծառերի և պատատուկների թավաւտում թաքնվել էին հնդկացիների հարյուրավոր նավակները, նետերի և քարերի տարաւի տեղաց: Շուտով իսպանացիների և հնդկացիների նավակները կիպ մտացան, թեժ ճակատամարտ սկսվեց: Հակառակորդները ջուրն էին ընկնում, բայց ծանծաղոււտում նույնպես շարունակում էին մարտնչել: Ռոշ ժամանակ անց իսպանացիները կարողացան ափ դուրս գալ և սկսեցին հրացաններով կրակել այնտեղից: Անծանոթ զենքի որոտը հնդկացիներին խուճապի մասնեց: Նրանք ցիրուցան փախան, իսկ Կորտեսը սրենթաց սազմերթով գրավեց նրանց մայրաքաղաքը:

Հաջորդ օրն արդեն հավաքվեց մի քանի տասնյակ հազար ռազմիկներից կազմված տաբասկների բանակը: Ելացուցիչ սուլոցով և աղաղակներով հնդկացիները գրոհի նետվեցին. նույնիսկ թնդանոթները շկարողացան նրանց կանգնեցնել, շնայած գետինը ծածկվել էր դիակներով: Վերջին պահին նրանց թիկունքից գրոհեց իսպանական հեծելազորը: Հնդկացիները երգեք ձի շէին տեսել, և այդ փնչացող, խրխնջացող հրեշների տեսքից սարսափած, նրանք շարտեցին զենքերը ու գլխապատառ փախան:

Գերի վերցրած երկու սուաջնորդներին Կորտեսը, հաշտութիւն կրնքիլու առաջարկով, աղաթկեց տաբասկների թագավորի մոտ: Շուտով ստվար շքախմբի գլուխն անցած, հայտնվեց ինքը թագավորը և առատ եւլերներ ընրեց՝ տակի և քասն ստրկուհի, դրանց մեջ էր իսպանացիների կողմից հետազայում Մարինա անվանված գեղեցկուհի Մալինտսինը՝ Կորտեսի ապագա թագամանչուհին, պրուհին և օգնականը իր ցեղակիցների տարկացեան գործում:

Տաբասկների հետ հաշտութիւն կնքելով, կոնկիստադորները նորից

նավ նստեցին, իսկ 1519 թվականի ապրիլի 21-ին ափ իջան և բանակ դրեցին այնտեղ, որտեղ այժմ գտնվում է Վերակրուս քաղաքը: Նրանց շրջապատում էին թունավոր գոլորշիներով պարուրված անծայրածիր ճահճոտ ջունգլիները: Բարեբախտաբար, տեղացի հնդկացիներն ավելի խաղաղասեր դուրս եկան, քան տաբասկները: Մի ականթարթում նրանք ճամբարի շուրջը հազարավոր հյուղականեր շինեցին ճյուղերից և եռանդով հոգ էին տանում, որ հյուրերին բանջարեղենով, մրգերով ու տապակած մսով կերակրեն:

Հնդկացիների գլխավոր առաջնորդ Տեատլիլը իսպանացիների համար թանկարժեք նվերներ բերեց՝ բամբակյա գործվածքեղեն, տարաշխարհիկ թռչունների փետուրներով զարդարված թիկնոցներ և թերթավոր ոսկուց պատրաստած զարդերով լցված զամբյուղներ: Կորտեսը նրան խնդրեց սուրհանդակ ուղարկել ացտեկների տիրակալ Մոնթեսումայի մոտ, որպեսզի տեղեկացնի իսպանացիների ժամանելու և նրա մայրաքաղաքը այցելելու մտադրությունը մասին:

Կոնկիստադորները յոթ օր պատասխանի էին սպասում: Օդը հեղձուցիչ խոնավ էր: Նրանց շրջապատում էր արևադարձային փարթամ բուսականություն՝ մանգրոյի ծառեր, սաղարթախիտ կարմիր ծառեր և արմավենիներ, բարձր եղեգներ ու խոտ, տարաշխարհիկ երփներանգ ծաղիկներով օձագալար լիանաներ: Թավուտում ծիածանի վառ գույներով վետվետում էին կոլիբրիները, հսկայական թիթևները և շքեղ փետուրներով թռչունները:

Մինչդեռ Մոնթեսումայի պալատում անընդհատ խորհրդակցություններ էին տեղի ունենում: Ացտեկների մայրաքաղաք Տենոչտիտլանը, որ հետագայում վերանվանվեց Մեխիկո, համակված էր վախի և անվրճ-ռականության զգացումով: Երկրի տիրակալը և պալատական բարձրաստիճան անձինք չէին կարողանում որևէ որոշակի քայլի դիմել:

Ի՞նչն էր պատճառը, որ բազմամիլիոն ռազմատենչ ժողովուրդը վախեցավ անդրծովյան մի բուռ եկվորներից: Մեղավորը ացտեկների աստված Կեցալկոատլն էր: Չնայած իրենք մորուք չունեին, բայց իրենց աստծուն ացտեկները պատկերացնում էին գանգուր մորուքով սպիտակամորթ մարդ: Ավանդությունն ասում է, որ մի ժամանակ սպիտակ աստվածը եկել է Մագոդ արևի երկրից «թևավոր նավով» (ացտեկները առագաստի մասին գաղափար չունեին) և ափ է իջել այնտեղ, որտեղ այժմ Կորտեսը բանակ է դրել: Սպիտակ աստվածը հնդկացիներին արհեստներ և լավ սովորույթներ սովորեցրեց, նրանց իմաստուն օրենքներ և կրոն տվեց, հիմնեց մի պետություն, որտեղ տարբեր գույների բամբակ էին աճեցնում, իսկ եգիպտացորենը մարդու հասակի չափ կողրեր էր տալիս:

Կատարելով իր առաքելությունը, սպիտակ աստվածը վերադարձավ այնտեղ, որտեղից եկել էր: Նրա անհետացման մասին հնդկացիների մեջ մի քանի ավանդություններ են տարածված:

Դրանցից մեկը պատմում է, որ Կեցալկոատլը ծունկի է եկել շառաչող Ատլանտյան օվկիանոսի ափին, դառնորեն լացել և բոցավառված խարույկի մեջ նետվել: Նրա մոխիրը օդ է բարձրացել և թռչունների երամ դարձել, իսկ սիրտը լուսաստղի նման կախվել է երկնքում:

Մյուս ավանդույթյան համաձայն, գիշերվա աստվածը, ցանկանալով Մեքսիկայից հեռացնել սպիտակ աստծուն, իբրև թե անմահության խմիչքով լցված գավաթ է մատուցում նրան: Իրականում խմիչքը նրա մեջ հայրենիքի այնպիսի անհաղթահարելի կարոտ է առաջացնում, որ աստված թևավոր նավով մեկնում է Մագոդ արևի երկիրը:

Բոլոր ավանդույթյունները մի եղրակացույթյան էին հանգում. մորուքավոր աստվածը կանխագուշակել էր անդրծովյան սպիտակ նվաճողների հայտնվելը: Նրանք պետք է հպատակեցնեն հնդկացիների ցեղերին և տապալեն աստվածներին, փոխարինելով նրանց օտարերկրյա աստվածներով: Այդ ավանդույթյան ազդեցության տակ ացտեկները հեշտությամբ հավատացին, որ այժմ եկել է մարգարեության իրականացման ժամանակը: Սպիտակ եկվորները նրանց թվում էին այլ աշխարհի էակներ: Նրանք իշխում են կայծակներին, սանձահարել են ինչ-որ շորքոտանի հրեշի, իսկ թվով իրենց գերակշռող տաբասկներին, կարծես թե, ջախջախել են կախարդությամբ:

Պահպանված գրավոր աղբյուրները անվիճելիորեն վկայում են, որ սպիտակ աստծու հավատալիքը ացտեկների և Պերուի ինկերի հեշտությամբ նվաճման պատճառներից մեկն է: Այդ նախապաշարմունքը զրկեց նրանց պայքարի կամքից, մոայլ սովեր գցեց Մոնթեսումայի ռազմական խորհրդի վրա: Ամբողջ ուժերը կենտրոնացնելու և մի բուռ հանդուգն եկվորներին մի հարվածով վերջ տալու փոխարեն ացտեկների տիրակալը որոշեց բանակցություններ վարել: Նրա պատվիրակությունը թանկարժեք ընժաններով պետք է սիրաշահեր ահեղ օտարերկրացիներին, ալինառու ցույց տար ացտեկների հարստությունը և հզորությունը և այդպիսով ստիպելով նրանց մեղմանալ, արձակեր դեպի մայրաքաղաք հետագա առաջխաղացումը արգելող հրամանը:

Պատվիրակությունը կազմված էր մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներից և նվերներով բռնված հարյուր ստրուկից: Պատվիրակները հագել էին հարուստ զարդանախշված զգեստներ և գլուխներին դրել էին թուփակների փետուրներից խայտաբղետ փնջեր: Զեռքերից, ոտքերից, վզից և ականջներից կախված էին ամենաբարձր տեսակի ոսկուց պատրաստած զարդեր:

Պատվիրակները Կորտեսին ողջունեցին խոնարհվելով, ձեռքերի մատները մերթ գետնին, մերթ իրենց քունքին հպելով: Ստրուկները վառեցին տարաշխարհիկ բույսերից պատրաստած բուրվառները և խսիրի վրա դասավորեցին Մոնթեսումայի ուղարկած ընժանները. ոսկե վահաններ, սաղավարտներ, զենքեր, մանյակներ և ապարանջաններ: Զարդերի

մեջ կայի՞ր փետրախնջեր, մարգարիտ և շմեղնող քանակությամբ թանկարժեք քարեր, արտասովոր, բայց հրաշալիերտ ոսկե և արծաթե արձանիկներ, մետաքսի նման բարակ բամբակյա գործվածքից շքեղ հանդերձներ և, ի վերջո, ջրադացքաբեի նման կլոր ու մեծ ոսկե երկու սալեր, որոնք պատված էին բույսեր և կենդանիների պատկերող հարուստ փորագրանախշով:

Ընծաները գեթազանցեցին կոնկրետագործների ամենահանդուգն երազանքները և, վախի փոխարեն, նրանց մեջ անհագ ազահուլիւն առաջացրին: Կորտեսը քաղաքավարի, բայց վճռականորեն մերժեց Մոնթեսումայի պահանջները, հայտարարելով, որ ինքն այստեղ եկել է որպես Իսպանիայի թագավորի պատվիրակ և չի կարող չկատարել իր տիրակալի հանձնարարությունը:

Հաջորդ օրը լուսաբացին իսպանացիները նկատեցին, որ հնդկացիները, որոնք իրենց համար կերակուր էին պատրաստում, անհետ կորել են: Չարագույժ լռությունը ոչ մի լավ բան չէր խոստանում և ակնառու ցույց էր տալիս, որ Մոնթեսումայի պահանջները արհամարհել չի կարելի: Ահա նրա հրամանով բնիկներն արդեն լքել են իրենց, և իրենք մալարիաշատ ջունգլիների մահացու կլիմայի պայմաններում մնացել են անօգնական ու սովամահություն դատապարտված:

Կորտեսը գժվար խնդրի լուծման առջև կանգնեց: Վերադառնա՞լ Կուբա, ինչը համառություն պահանջում էին նրա զինվորները: Բայց այնտեղ նրան կախադան էր սպասում: Մյուս կողմից, խենթություն կլինեք թափանցել բազմամիլիոն բնակչություն ունեցող երկրի խորքը՝ հակառակ նրա տիրակալի կամքի:

Դրությունն անհուսալի էր, և Կորտեսը, տեղի տալով իր բանակի պահանջներին, արդեն ցանկանում էր դեպի նավերը վերադառնալ, երբ հանկարծ թմբուկների որոտի և շվինների սուլոցի ուղեկցությամբ անսպասելիորեն հայտնվեց ինչ-որ հնդկացիների բազմամարդ պատվիրակություն: Նրանք բալթրովին ուրիշ լեզվով էին խոսում, և նրանցից միայն երկուսն էին կարողանում անցեցներեն բացատրվել: Նրանցից Կորտեսն իմացավ, որ պատվիրակությունը եկել է տոտոնակների թագավորի կողմից, որի մայրաքաղաք Սեմպուլան գտնվում էր Մեքսիկական ծոցի հյուսիսային մասում:

Հզոր անցեցիների կողմից հպատակեցված տոտոնակները սափաված էին հանդուրժել նրանց լուծք, բայց չէին կորցնում իրենց անկախությունը վերականգնելու հույսը: Նրանց թագավորը, լսելով իրզախ տաքատկների նկատմամբ անդրժամյան եկվորների տարած զարմանալի հողթմանակի մասին, նրանց իր մոտ էր հրավիրում և ընդհանուր թշնամու օրե՛մ զաշխնք էր առաջարկում:

Կորտեսը երկու ձեռքով կառչեց պատահաբար հայտնված հարմար առիթից և իր բանակով հապճեպորեն շարժվեց դեպի Սեմպուլա: Նա

վատահ էր, որ հեշտությամբ կհաղթի ացտեկների պետութեանը, որովհետև պարզվեց, որ այն նվաճված և խռովութեան պատրաստ ցեղերի խառնակույտ է:

Երեսուն հազար բնակիչ ունեցող Սեմպոալա քաղաքը գեղատեսիլ փոխած էր բլուրների, այգիների և եգիպտացորենի դաշտերի մեջ: Մայրտակեցված տները արծաթի նման փայլում էին արևի տակ: Գլխավոր հրապարակում երկինք էր հառնում սանդղաձև ղեկերով սպիտակ բուրգը, իսկ նրա գագաթին կանգնած էր փայտե տաճարը:

Քաղաքի բնակիչները իսպանացիներին ծաղկաշղթաներով դիմավորեցին, իսկ թագավորը՝ բարձրահասակ, գեր հնդկացի, նրանց բարեհաճորեն ընդունեց, թանկարժեք իրեր և գեղեցիկ գործվածքներ ընծայեց: Բացի այն, որ խոստանում էր որպես օժանդակություն հարյուր հազար զինվոր տալ, նա հայտնեց ացտեկների մյուս թշնամիների՝ տլասկալանցիների մասին, որոնց վրա, հավանաբար, նույնպես կարելի էր հույս դնել:

Դրութեան փոփոխությունը Կորտեսի զինվորներին բուրբուխ շահագրաստացրեց: Դժգոհների մի մեծ խումբ դավադրություն կազմակերպեց, նպատակ ունենալով դրավել նավերը և ետ փախչել Կուբա: Կորտեսը բացեց դավադրությունը, պարագլուխներին դատապարտեց մահվան կամ խոշտանգումների, իսկ հետո դիմեց զարմանալիորեն խիզախ քայլի: Նա վճռեց «իր և իր զորքի հետևից բոլոր կամուրջները այրել», հրամայեց նավերը զինաթափ անել, այրել դրանց փայտե իրանները, իսկ մետաղյա մասերը, նավասարքը և առագաստները պահպանել:

Ափ իջնելու վայրում հիմնելով «ճշմարիտ խաչի հարուստ քաղաք» անունով ամրացված ճամբար և իր հետ հազար հինգ հարյուր տուտունակ զինվոր վերցնելով, Կորտեսը շարժվեց դեպի մայր ցամաքի խորքը: Քանի որ հնդկացիները տեղեկություն չունեին ոչ անիվի, ոչ բեռնակիր անասունների մասին, հանդերձանքը և հրանոթները տանում էին հազար հնդկացի բեռնակիր: Արշավանքը սկսվեց 1519 թվականի օգոստոսի 16-ին:

Սկզբում նրանք առաջ էին շարժվում արևադարձային ցածրադիր ջունգլիներով, վանիլի և կակաոյի թփուտներով, որտեղ ճախրում էին թուփակները, կոլիբրիները և վառ գույնի թիթեռները: Մակայն մի քանի օր հետո սկսվեց սարահարթի վերելքը, մինչև որ առաջին կաղնիների հայտնվելը ազդարարեց շափավոր կլիմայի գոտուն հասնելը: Նրանց աչքի առջև հառնեց երկնասլաց լեռնաշղթան: Աջից բարձրանում էր Սիերա-Մադրե հզոր զանգվածը, հարավում ձյունածածկ գագաթով շողշողում էր Անդերի մենավոր հսկան՝ Օրիսավա հրաբուխը, որը հնդկացիները պաշտում էին որպես աստված:

Ճանապարհին հանդիպող հնդկացիները նրանց բարեկամաբար էին ուղջունում: Հովիտներում և սարահարթերում իսպանացիները տեսնում

էին պարտադիր կերպով բուրգ ունեցող բազմամարդ քաղաքներ, մեկուսի գյուղակներ, ոսկեգուլն եգիպտացորենի, հալվեի և կակտուսի դաշտեր՝ մի խոսքով, լեռնային արևի կենարար ճառագայթների տակ ծաղկող մի երկիր:

Մի քանի օրվա երթից հետո զորասյունը կիրճի միջով հասավ ահարկու լեռնագագաթների երկիրը: Զորքի և բեռնակիրների շարասյունը ձգվել էր անդունդների և փրփրաբաշ հեղեղատների եզրով ոլորապատվող կածանի երկայնքով: Անձրևները՝ և սառնաշունչ մրրիկները, կարկուտը և ձյունը տանջում էին իսպանացիներին, բայց էլ ավելի շատ հնդկացիներին, որոնց հագուստը այդ պայմաններին բնավ չէր համապատասխանում:

Տոտոնակների խորհրդով Կորտեսը ուղղութուն վերցրեց դեպի այտեկների վաղեմի թշնամի՝ տլասկալանցիների երկիրը: Տլասկալանցիները անընդհատ մարտերով պետք է պաշտպանեին իրենց անկախությունը, ուստի Կորտեսը՝ հույս էր դրել նրանց զինված օգնության վրա:

Սակայն նրան տհաճ անակնկալ էր սպասում: Իսպանացիները հազիվ էին ոտք դրել նրանց տարածքը, երբ տլասկալանցի ռազմիկների մի փոքր ջոկատ այնպիսի կատաղությամբ հարձակվեց նրանց վրա, որի առջև նսեմացավ տաբասկների տաքարյունությունը: Նոր անսպասելի հակառակորդների արիությունը և արհամարհանքը մահվան նկատմամբ ուղղակի սարսափազդու էր. զարմանալի էր նաև նրանց մոտ ձիերի նկատմամբ սնահավատ վախի լրիվ բացակայությունը: Չնայած կյանքում առաջին անգամ էին տեսնում այդ կենդանիներին, նրանք հարձակվում էին հեծյալների վրա, թամբերից ցած գցում նրանց և նույնիսկ երկու ձի սպանեցին իրենց հատուկ զենքով, հրաբխային ապակուց՝ օբսիդիանից պատրաստած ածելու պես սուր փշերով մաշակներով: Հայտնի չէ, թե ինչով կվերջանար նրանց ընդհարումը, եթե արկեբուզների և հրանոթների կրակոցները չկանգնեցնեին հարձակվողներին:

Հաջորդ առավոտ, հետապնդելով հնդկացիների փոքրիկ ջոկատին, կոնկիստադորները նրանց քշեցին կիրճը: Բացված տեսարանն ապշեցրեց նրանց: Նրանց առջև, որքան աչքը կտրում էր, տարածված էր տլասկալանցիների անհամար բանակը: Սպիտակ և դեղին շերտերով նախշված ռազմիկների մեջ առանձնանում էին առաջնորդները: Նրանց ոսկե և արծաթե սաղավարտներն ու զենքերը, քամուց ծածանվող խայտաբղետ փետրափնջերը, խայտաբղետ փետուրներից պատրաստած թիկնոցները՝ բարբարոսական այդ ամբողջ պերճությունը նրանց նմանեցնում էր տարաշխարհիկ շքեղ թռչունների: Բանակի վերևում ծփում էր նիզակների անտառը և առանձին ջոկատների խորհրդանշանները՝ կենդանիների պատկերներով: Առջևում մի վիթխարի ռազմիկ բռնել էր տլասկալանցիների

պետութեան խորհրդանիշը՝ մարգարտով և շափյուղաներով զարդարված ոսկե արծիվը, որ ամրացված էր երկար ձողի վրա:

Կորտեսը վայրկենաբար հասկացավ, թե որքան միամիտ և պարզունակ է տլասկալանցիների տակտիկան: Կիրճում խմբված բանակը, բնականաբար, չէր կարող բացազատվել և պատշաճորեն օգտագործել իր քանակական գերակշռությունը: Ուստի Կորտեսը իր զինվորներին խիտ զորասյունով շարեց և ներխուժեց հակառակորդի ամենաբազմամարդ շարքերը: Նրա հաշվարկը ճիշտ դուրս եկավ. շնայած խառնիխուռն ճակատամարտը մոլեգնած ծովի պես կլանեց իսպանացիներին, նեղվածքից կաշկանդված հնդկացի ռազմիկները համարյա անօգնական էին:

Զրահ հագած իսպանացիները աստիճանաբար ճեղքելով անցնում էին ռազմիկների բազմութեան միջով, մինչև որ կիրճի մյուս կողմում ազատ տարածություն դուրս եկան, որտեղից սկսեցին կրակ տեղալ թշնամու վրա:

Տլասկալանցիները, մեծ կորուստներ կրելով, ստիպված էին նահանջել:

Երրորդ օրը իսպանացիների առջև էլ ավելի մեծ բանակ հայտնվեց: Կորտեսը որոշեց պաշտպանական տակտիկա կիրառել և բլուրի վրա խրամատավորվեց: Հնդկացիները մոլեգնաբար հարձակման նետվեցին, բայց նրանք կրկին գնում էին հոծ զանգվածով՝ առանց ռազմավարական որևէ պլանի: Նրանց աղեղներից արձակված նետերը և պարսատիկներով նետած քարերը խրվում էին հողե ամրությունների մեջ կամ սահում իսպանացիների սաղավարտների ու զրահների վրայով: Մեծ կորուստներ կրեց միայն դաշնակից տոտոնակների զորքը: Ի վերջո որոտացին հրանոթները և հրացանները: Տլասկալանցիները գերանդիով հնձած խոտի նման ընկնում էին, իսկ երբ, կորուստներից սարսափած, նրանք սկսեցին նահանջել, գրոհի նետվեց հեծելաղորը, խոցելով և տրորելով խուճապահար նահանջող զինվորներին:

Ամբողջ օրվա և հաջորդ գիշերվա ընթացքում հնդկացիները անօրինակ արիութեամբ գրոհը վերսկսում էին, բայց ամեն անգամ չէին կարողանում դիմանալ իսպանացիների ավելի կատարյալ տակտիկային և կարգապահութեանը, իսկ գլխավորը՝ նրանց անհայտ հրազենին: Շուտով հնդկացի առաջնորդների միջև վեճեր ծագեցին, նրանցից մի քանիսը իրենց ջոկատները հետ կանչեցին և հեռացան մարտադաշտից:

Կորտեսի առաջարկով տլասկալանցիները համաձայնեցին հաշտություն կնքել և, դեռ ավելին, իսպանացիներին իրենց մայրաքաղաքը հրավիրեցին: Եվ այն ժամանակ թշնամական վերաբերմունքը անսպասելիորեն փոխվեց բարեկամութեան: Քաղաքի բնակիչները ահազին ծաղկեփնջերով դուրս եկան դիմավորելու երեկվա թշնամիներին, զինվորների և ձիերի վզերին պսակներ էին կախում, ճերմակազգեստ քրմերը նրանց պարուրում էին իրենց բուրվառների ծխով:

Քաղաքում թնդում էին թմբուկները, լսվում էին բարձրաձայն քա-
ցականչություններ, երաժշտություն և երգ։ Նեղ փողոցներում ծփում էին
խապանացիներին անհայտ ծաղիկներից հյուսված դրասանգները։ Զառամ-
յալ Կսիկոտենկատլ թագավորը Կորտեսին գրեց և եկվորներին խնջույքի
հրավիրեց։

Քաղաքը շրջապատված էր հափերժական ձյունների հզոր լեռնաշղթա-
յով։ Փողոցները նեղ և դարիվեր էին։ Տները շինված էին կրաքարից և ոչ
պատուհան ունեին, ոչ դուռ։ Մուտքերը ծածկված էին զարդանկար գործ-
վածքներով, որոնց վրա կախված զանգակների արծաթահնչուն դողանջ-
ները տարածվում էին քաղաքով մեկ։ Տիրակալները, բարձրաստիճան
պալատականներն ապրում էին տաշած քարից կառուցված պալատներում։
Քաղաքի կենտրոնում երկինք էր հառնում պատերազմի աստծո տաճարը,
որին տլասկալանցիները ամեն օր մարդ էին զոհաբերում, զլխավորա-
պես գերիներից։

Արդեն կես դար էր նրանք պատերազմում էին ացտեկների դեմ՝
պաշտպանվելով նրանց զիշատիչ ազրեսիվությունից։ Անընդհատ պար-
տություն կրելով, ացտեկները նրանց նկատմամբ տնտեսական մեկու-
սացում էին կիրառում։ Նրանք կտրել էին, մասնավորապես, աղի փոխա-
դրման ճանապարհը, և տլասկալանցիները այնքան էին հետ սովորել
աղից, որ մի քանի սերունդներ, նույնիսկ արդեն խապանացիների զալուց
հետո, սննդի հետ աղ չէին օգտագործում։

Տլասկալանցիների պարտության, իսկ էլ ավելի շատ՝ օտարերկրա-
ցիների հետ նրանց վտանգավոր դաշինքի լուրը սարսափեցրեց, Մոնթե-
սումաչին և իսպառ զրկեց նրան արիության մնացորդներից։ Նա որոշեց
շատ մեծ քանակությամբ ոսկու գնով համոզել կոնկիստադորներին՝ խզել
տլասկալանցիների հետ կնքած դաշինքը և հրաժարվել Տենոչտիտլանի
վրա հարձակվելու մտքից։ Մերժում ստանալով, նա իսպանացիներին
խնդրեց, որ դեմն Զոլուլա քաղաքը, որտեղ նրանց համար ընակարան-
ներ էին նախապատրաստել։

Զոլուլան ացտեկների կրոնական մայրաքաղաքն էր։ Այնտեղ գտնվող
արդեն մեղ հայտնի Կեցալկոատլ աստծո տաճարը Մեքսիկայի բոլոր
հնդկացիների ուխտատեղին էր։ Իսպանացիները վկայում էին, որ քաղաքը
Ֆլորենցիայից գեղեցիկ էր, ինչը որոշակիորեն հաստատում են մինչև
մեր օրերը պահպանված ավերակները։ Բնորգը, որի վրա կանգնած է եղել
տաճարը, այժմ էլ դարմացնում է իր շափերով։ Ծրա հիմքը զգալիորեն
մեծ է, քան Քեոփսի բուրգինը, չնայած բուն շինությունը մի քիչ ցածր է։

Նեղ փողոցները որոշակիորեն հիշեցնում էին Մեքսան, Երուսաղեմը
կամ միջնադարյան Հռոմը։ Այդ փողոցներով ընթանում էր ճամփորդ-
ների և աղքատների, քրմերի և քրմուհիների անընդհատ հոսանքը։
Քաղաքում դեռ երկինք էին հառնում տաճարների շորս հարյուր աշտա-

րանները՝ գազաթներին բոցավառվող, հավերժական կրակով: Ամեն օր քաղաքում բուրվառների ծխի մեջ երգելով ընթանում էին թափորները:

Իսպանացիները տոտոնակների և տլասկալանցիների հետ միասին տեղավորվեցին տաճարներից մեկի գավթում: Մի անգամ Մարիեան տեղի մեծամեծներից մեկի կնոջից իմացավ, որ Մոնթեսումայի հրամանով եկվորների ղեմ դավադրություն է պատրաստվում:

Կորտեսը որոշեց առաջինը հարվածել և կազմեց տեղի ազնվականությունից ոչնչացնելու հանդուրճ պլան, որ քաղաքը զրկի առաջնորդներից: Կարևոր հաղորդման պատրվակով նա իր մոտ հրավիրեց բոլոր մեծառոհամիկներին: Հենց որ հրավիրվածները հավաքվեցին տաճարի գավթում, իսպանացիները հարձակվեցին նրանց վրա և սկսեցին կոտորել: Անզեն հնդկացիները սարսափահար աղաղակում էին: Հուսահատությամբ բռնված՝ նրանցից ոմանք անզին հարձակվում էին մարդասպանների վրա, մյուսները փախում էին, ծուղակից փախչելու ելք փնտրելով: Մակայն ոչ ոք մահից չխուսափեց: Շնչահեղձ, արյունով ողողված կոնկիստադորները շնագայլերի նման հարձակվեցին դիակների վրա, նրանց վրայից հանելով թանկարժեք զարդերը և հազուստո:

Կոտորվողների ճիչերը զայրացրին ամբողջ քաղաքը: Անհամար բազմությունները շրջապատեցին տաճարի գավթից և փորձեցին ներս խուժել: Իսպանացիները թուգանոթների և արկեբուզների համազարկով դիմավորեցին նրանց:

Գիակները տեսնելով, ամբոխը փախուստի դիմեց: Այն ժամանակ դարպասից դուրս թռավ հեծելազորը, խմբով դուրս թափվեցին կոնկիստադորները և նրանց դաշնակից հնդկացիները: Խուժելով մոլեգնած ամբոխի մեջ, նրանք աջ ու ձախ սրահարում էին, կոտորում: Ամբողջ օրը նրանք ավերում և թալանում էին տներն ու տաճարները, այրում այն սամներ, ինչ չէին կարողանում տանել և տուն էին վերադառնում ավարով բեռնավորված: Մտրկուն քաղաքից երեկոյան միայն փախտակներ մնացին:

Այդ դեպքերից երկու շաբաթ հետո իսպանացիները շարունակեցին իրենց ճանապարհը, որը ձգվում էր Մեխիկոյի հովիտը շրջափակող լեռնաշղթայի լեռնանցքով: Յուրաքանչյուր քայլից հետո օդը դառնում էր նոսր և սուր, սառը քամին թափանցում էր մինչև ոսկորները: Վեռնանցքի երկու կողմից բարձրանում էին հյուսիսամերիկյան մայրցամաքի ամենաբարձր լեռները՝ Ինստասիուատլ և Պոպոկատեպետլ հրաբուխները:

Համնելով լեռնանցքին, իսպանացիները կանգ առան և իրենց աչքերին չհավատացին: Նրանց զգացմունքներն արտահայտվեցին հիացական մի քաղաքականությունով՝ «Ահա ավետյաց երկիրը»: Մեխիկոյի հովիտը, որը հնդկացիները անվանում էին Անագուակ, անջնջելի սպավորություններ լր թողնում: Արևով ողողված անշարժ օդը այնքան թափանցիկ էր, որ, լնչպես ասի մեջ, պարզ երևում էր դաշտերի, այգիների, անտառների և

երկնագույն լճերի խայտանկարը: Ամենամեծ լճի կենտրոնում, ասես բյուրեղապակե հայելու վրա, բազմաթիվ բուրգերի հովանու տակ իր ճերմակությամբ փայլկտում էր ացտեկների մայրաքաղաք Տենոչտիտլանը՝ «Արևմուտքի վենետիկը», ինչպես այն անմիջապես անվանեցին կոնկիստադորները:

1519 թվականի նոյեմբերի 8-ին իսպանացիների և նրանց դաշնակից հնդկացիների բանակը՝ ուղղություն վերցրեց դեպի քաղաք: Քարերից և ավազից կառուցած, լարի պես ուղիղ ամբարտակը հաստում էր Տեսկոկո լիճը: Ամբարտակի ծայրին շքեղազգեստ մեծատոհմիկներով շրջապատված, ոսկեզօծ պատգաբակի վրա նստած՝ նրանց էր սպասում Մոնթեսսուման: Նա բարձրահասակ, մոտ քառասուն տարեկան տղամարդ էր, գիշատիչ թռչուն հիշեցնող թուխ դեմքով: Նրա գլխին մարգարտով և փիրուզով շողշողացող, ծիրանականաչագույն փետրափունջ էր դրած: Թիկնոցը ձեռագործի մի հրաշք էր. ծիածանագույն հազարավոր փետուրները գործվածքի վրա շլացուցիչ գունեղության զարդանկար էին կազմում: Ոսկով և թանկարժեք քարերով պճնված թագավորի հագուստը շողշողում էր: Նույնիսկ կոշիկի ներբանները թերթավոր ոսկուց էին:

Մոնթեսսուման հարգալից ողջունեց Կորտեսին և նրան նվիրեց մի շար բյուրեղներ, որոնք ացտեկները ոսկուց թանկ էին զնահատում: Հետո նա իսպանացիների գլուխն անցավ և առաջնորդեց դեպի քաղաք: Բանակը դրոշները պարզեց և փողերի ուժեղ ձայնի և թմբուկների որոտի տակ մտավ քաղաքի արվարձանը: Փողոց թափված և հարթ տանիքներից բարձրացած բնակիչները հետաքրքրությամբ և տազնապով էին դիտում նրանց:

Թափորը կանգ առավ քաղաքի գլխավոր հրապարակում: Այստեղ վեր էր բարձրանում հսկայական բուրգը, որի մոտ գտնվում էր տաշած քարից կառուցված Մոնթեսսումայի վեհասրահնչ պալատը: Հրապարակի հակառակ կողմում, հզոր պարիսպներով շրջափակված, կանգնած էր այժմյան տիրակալի հոր նախկին աթոռանիստը: Ամրոցի բակում հյուրերին սպասում էր Մոնթեսսուման, որպեսզի անձամբ ուղեկցի նրանց դեպի կացարանները:

Հաջորդ օրը Կորտեսը, հենց իր՝ տիրակալի ուղեկցությամբ, իր սպաների հետ միասին այցելեց բուրգը: Այն վեր էր բարձրանում ընդարձակ բակի կենտրոնում ու շրջասյուստված էր աշտարակներ և հրակնատներ ունեցող պարիսպով: Բնակչության հնարավոր խոտվությունը ճնշելու համար այստեղ մշտապես գտնվում էին թագավորական զորքեր՝ մարտական պատրաստականության վիճակում:

Բուրգը կազմված էր սանդղավանդավոր հինգ հարկից: Երեք հարյուր քառասուն աստիճանից բաղկացած սանդուղքը տանում էր դեպի գագաթը, որտեղ կանգնած էին փայտի աշտարակների նմանվող երկու տաճար:



Նումերական Նուր-ադ Թադունու ոսկե դիադարը



Հենաթոն փարավոնի գլուխը (Մ. թ. ա. XIV դար:
Նոր Քաղաքի թանգարան):



*Նեֆերտիտի թագուհի (Քանդակագործ Քուֆեյի արվեստանոցից Ախեթաթոնում:
Ավազաքար: Հին Եգիպտոս: Մ. թ. ա. XIV դար):*



Թուֆանհամոնի դիմաքանդակը երկրորդ ոսկե սարկոֆագի վրա:



Գահաթոռի թիկնակ Քուրթանհամոնի դամբարանից:
(XVIII դինաստիա: Մ. թ. ա. XIV դար):



«Քաղաղոր-քուրմ» (ներկված բարձրաբանդակ Կնոսոսի պալատից:
Մ. Թ. ա. երկրորդ հազարամյակի կես):



*Մխտերիաների առանձնատան սրահի որմնակար: Պոմպեյ:
(Հատված: Մ. թ. ա. I դար):*



Մահվան աստծուն պատկերող արցունքակալ ոսկե կրծքազարդ:

Բուրգի գագաթի գլխապտույտ բարձունքում Մոնթեսուաման թևանցուկ արեց Կորտեսին և բացատրեց երևացող համայնապատկերի մանրամասնությունները: Ացտեկների մայրաքաղաքը երեք հարյուր հազար բնակիչ ուներ, հետևաբար, աշխարհի ամենախոշոր քաղաքներից մեկն էր (այդ ժամանակ Լոնդոնը ուներ երկու հարյուր հազար բնակիչ): Լճի ափերին ուրիշ քաղաքներ էլ կային, որոնց մեջ Տեսկոկոն իր մեծությամբ գերազանցում էր մնացած բոլորին: Բոլոր քաղաքները սերտորեն կապված էին իրար հետ, այնպես որ, ըստ էության, Տենոչտիտլանը երեք միլիոն բնակիչ ուներ:

Թոշնի թոփշքի բարձունքից քաղաքի տեղագրությունը հետևյալ պատկերն ուներ:

Տենոչտիտլանը գտնվում էր լճի կենտրոնի ձվաձև կղզու վրա: Մայր ցամաքի հետ այն միանում էր ջրանցքներով կտրված երեք ամբարտակով, որոնց վրայով բացովի կամուրջներ էին գցված: Բացի դրանից, լճի վրայով ձգվում էր պատկանելի մեծության մի ակվեղուկ, որը թրձակավե խողովակներով մոտակա սարերից ջուր էր հասցնում քաղաքին, որովհետև լճի ջուրը աղի էր: Իսպանացիները տագնապով նկատեցին, որ քաղաքը ծուղակ է, որից դժվար կլինի դուրս գալ զինված ընդհարման դեպքում:

Տաճարի առջև դրված էր կարմիր հասալիսի մի խոշոր սալ, որի վրա կատարվում էին մարդկային զոհաբերությունները: Աշտարակներից մեկի ներսում իշխում էր պատերազմի աստված Ուիցիլոպոչտլին, մարդկային արյան ծարավի հսկայական և հրեշավոր մի կուռք:

«Արձանը,— գրում է Կորտեսի ուղեկից Բեռնալ Դիասը,— ամբողջովին պատված էր ոսկով և թանկարժեք քարերով: Կուռքը աջ ձեռքով աղեղ էր բռնել, ձախով՝ նետերի խուրձ: Կուռքից կախված էր շափյուղաներով ընդելուզված մարդկային գանգերից շարված մանյակ»:

Սակայն ամենացնցող տպավորությունը թողեց արձանի առջև դրված թասը, որի մեջ դեռևս մխում էին մարդկային երեք սիրտ: Բուրգի ստուգատում իսպանացիները տեսան հսկայական սանդուղքներից կազմված և այտե շարահարկ դարակներ, որտեղ խնամքով շարված էին հարյուր և նստնվեց հազար մարդկային գանգ:

Մայրաքաղաքում հայտնվելուց մեկ շաբաթ հետո Կորտեսը սկսեց սենտությունը նվաճելու և նրա հարստությունները զավթելու ծրագրեր կազմել: Նա արդեն փորձով գիտեր, որ հնդկացիները, որպես կանոն, չեն ճապի էին մատնվում և պայքարը դադարեցնում, հենց որ նրանց առաջնորդը սպանվում կամ գերի էր ընկնում: Ուստի նա որոշեց իր հանդգնությամբ անօրինակ պլան իրագործել՝ Մոնթեսուամային խաբեություն մե իր նստավայրը բերել և նրա անունից իշխանությունը զավթել:

Շուտով մի միջադեպ առիթ տվեց նրան հեղաշրջում կատարելու համար: Քավառական ացտեկ մի կառավարիչ սպանեց մի քանի իսպա-

նացի պատանդներին: Մարտի ժամանակ գերի ընկնելով և տանջանքների ենթարկվելով, նա խոստովանեց, որ պատանդներին սպանել է Մոնթեսուամայի դրոմամբ: Այն ժամանակ Կորտեսը մի քանի զինվորներով ներխուժեց պալատ, թագավորին մեղադրեց գավաճանության մեջ և ամբողջ արքունիքի լացուկոծի ուղեկցությամբ նրան իր նստավայրը տարավ: Որպես պատիժ նա անձամբ թագավորին մի քանի ժամով շղթայեց, իսկ այդ ժամանակ գժբախտ կառավարչին խարույկի վրա աչքեցին:

Սակայն շնայած այդչափ ստորացված արժանապատվությանը, Մոնթեսուաման ժողովրդին պայքարի շկոչեց, ընդհակառակը, երբ անհանգրստացած հալատակները սկսեցին պալատի առջև հավաքվել, նա հայտնրվեց պատի վրա և հայտարարեց, որ կամավոր է տեղափոխվել իր հյուիների մոտ: Եկվորների ներշնչած վախը նրան զրկել էր ոչ միայն արիությունից, այլև բանականությունից:

Տիրակալի հնազանդությունը և բնակիչների պասսիվությունը հանգեցրին նրան, որ կոնկիստադորները ավելի լկտիացան: Շուտով նրանք Մոնթեսուամային ստիպեցին, իբրև Իսպանիայի թագավորին տրվող տուրք, հանձնել ացտեկների ամբողջ գանձերը: Սակայն անամոթության գազաթնակետ դարձավ տաճարներից մեկը կաթոլիկական եկեղեցու վերածելը, ընդ որում իսպանացի զինվորները ամբողջ քաղաքի աչքի առաջ բուրգի սանդուղքից ցած գցեցին աստծու արձանը:

1520 թվականի մայիսին, այսինքն մայրաքաղաքում իսպանացիների հայտնվելուց վեց ամիս անց, Վերակրուսից տազնապալի լուր սուացվեց: Այնտեղ Նարվասի հրամանատարությամբ ափ էր իջել Կուբայի նահանգապետ Վելասկեսի կողմից ուղարկված իսպանական ուժեղ զորաբանակ, որպեսզի բռնեն Կորտեսին և խլեն նրանից ամբողջ ավարը:

Կորտեսը հրամանատարությունը հանձնեց Ալվարադոյին, իսկ ինքը առանց հապաղելու երկու հարյուր երեսուներեք զինվորի ուղեկցությամբ շարժվեց ընդդեմ նոր թշնամու: Նարվասը մտավ տոտոնակների մայրաքաղաքը և տեղավորվեց բուրգի գազաթին: Սակայն նա գանդաղկոտ և անընդունակ հրամանատար էր: Գիշերը, արևադարձային ամպրոպի և հորդ անձրևի ժամանակ, Կորտեսի ջոկատը աննկատելի մոտեցավ բուրգին և անակնկալ գրոհով գրավեց հակառակորդի դիրքերը: Նարվասը ծանր վիրավորվեց, իսկ զինվորները՝ հազար երկու հարյուր հետևակայիներ և հարյուր հեծյալներ, զենքները վայր դրին: Նվերների և հարուստ ավար ձեռք բերելու խոստումներով Կորտեսը նրանց իր կողմը գրավեց, այդպիսով զգալիորեն ուժեղացնելով իր բանակը:

Կորտեսը հագիվ էր այդ գործն ավարտել, երբ Ալվարադոյի ուղարկած սուրհանդակը շարագույժ լուր բերեց՝ Տենոչտիտլանում ապստամբություն էր բռնկվել: Բորբոքված բնակչությունը իսպանացիներին քշել էր իրենց բնակարանները և դադարեցրել պարենի մատակարարումը:

Ամեն բոլոր խոտվարարները կարող էին գրոհել և կործանել պաշարվածներին:

Իսկ ի՞նչ էր տեղի ունեցել:

Պատերազմի աստժո պատվին կատարվող ամենամյա տոնակատարության առթիվ բուրգի մոտ վեց հարյուր մեծատոհմիկներ են հավաքվում, որպեսզի հանդիսավոր թափորներով և երգեցողությանը կատարեն ավանդական ծեսերը: Ալվարադոյի նշանով կոնկիստադորները հարձակվեցին անդեն ացտեկների վրա և նրանց բոլորին կոտորեցին, իսկ դիակները կողոպտեցին: Սպանդը ոչնչով պատճառաբանված չէր, միակ դրդապատճառը սպանության ու կողոպուտի նողկալի ծարավն էր:

Կորտեսը արագացրած երթով ճանապարհ ընկավ պաշարվածներին օգնության հասնելու և հունիսի 24-ին մտավ քաղաք: Ամայացած փողոցներում և հրապարակներում թաղավորում էր շարագույժ լուսթյունը, ոչ ոք չփորձեց խանգարել իսպանական երկու ջոկատների միավորմանը:

Կորտեսի ջոկատի հետևից հաղիվ էին դարպասները փակվել, երբ ահավոր ալմուկ լսվեց: Մինչև ատամները զինված ամբոխը հորդաց դեպի բուրգի պարիսպները: Տղամարդիկ, կանայք ու երեխաները լցվել էին հարակից փողոցները, տանիքները և նույնիսկ բուրգը: Պաշարվածները վրա նետերի ու քարերի կարկուտ տեղաց, հնդկացի ռազմիկները անասելի նեղվածքի և հրհրոցի մեջ պատերի վրա էին մագլցում, շնայած թնդանոթներն և հրացանները հնձում էին նրանց շարքերը:

Իսպանացիները լուրջ կորուստներ չկրեցին, բայց գրոհների մոլեգնությունը նրանց սիրտը վախ էր գցել: Կորտեսը մեկը մյուսի հետևից արտագրոհներ էր կատարում, բայց անարդյունք: Իսպանացիները ձիերով կոխկրտում էին հակառակորդին, հեռու քշում, սրախողխող անում: Հընդկացիները խուճապահար փախչում էին, բայց անմիջապես վերադառնում էին: Նրանք երկու ձեռքով բռնում էին ձիերին, հեծյալներին իջեցնում թամբերից, իսկ գերվածներին ողջ-ողջ զոհաբերելու համար իսկույն ուղարկում էին պատերազմի աստժո զոհարանը: Կճում և ջրանցքներում վխտում էին ռազմիկներով լցված նավակները: Ացտեկները ամբարտակների վրայի կամուրջները քանդեցին, այդպիսով կտրեցին իսպանացիների նահանջի ճանապարհը: Կորտեսը մոլեգնում էր զայրույթից և իր անզորության գիտակցումից: Նա հրամայեց մեկը մյուսի հետևից այրել տները, թաղամասերը, մինչև որ ամբողջ քաղաքը վերածվեց կրակե ծովի:

Ի վերջո նա այն եզրակացությունը եկավ, որ փրկության միակ հնարավորությունը զինադադար կնքելն է և այն բանին հասնելը, որ իրենց դուրս թողնեն քաղաքից: Միջնորդության համար նա դիմեց Մոնթեսումային: Ացտեկների տիրակալը՝ կամ դանկանալով փրկել քաղաքը վերջնական կործանումից, կամ թե վախճանից դրդված, համաձայնեց օգնել նրան:

Հագնելով թագավորական ամենաշքեղ զգեստները, նա բարձրացավ բերդապարսպի վրա և իր ժողովրդին հրամայեց դադարեցնել պայքարը: Բայց ապստամբները արդեն կորցրել էին հարգանքը Մոնթեսուամայի թագավորական մեծության նկատմամբ: Հրապարակում դայրույթի միահամուռ աղաղակ լսվեց, վիրավորանքներ տեղացին: Մոնթեսուամայի վրա քարեր նետեցին: Դրանցից մեկը կպավ նրա ճակատին: Մահացու վիրավորված թագավորը գետին տապալվեց:

Իր կյանքի վերջին րոպեները Մոնթեսուաման անցկացրեց հուսահատ միայնության մեջ: Նա քանդում էր վիրակապերը և հրաժարվում ուտելիքից, թախիժով սպասելով մահվան:

Իսպանացիները նրա աճյունը հանձնեցին ացտեկներին, որոնք այնքան լավ են թաքցրել այն, որ մինչև այժմ չի գտնվել:

Հենց որ վրա հասան անլուսին գիշերները, Կորտեսը որոշեց գաղտնի դուրս գալ ծուղակից: Գիշերը քաղաքը խոր քուն էր մտնում, հնդկացիների մոտ պահակներ կանգնեցնելու սովորություն չկար, ուստի փախուստը կարող էր հաջողությամբ պսակվել: Նախօրոք պատրաստած շարժական կամուրջով իսպանացիները և նրանց հնդկացի դաշնակիցները հասցրին անցնել ամբարտակի մեջ բացված առաջին ճեղքով և մոտեցան երկրորդին, երբ հնդկացի մի կին, որը, չնայած ուշ ժամին, սպիտակեղեն էր լվանում, մթության մեջ նրանց նկատեց և տազնապ բարձրացրեց:

Բնակիչները սկսեցին հետապնդել փախստականներին: Ռազմիկների հոծ բազմությունը լցվեց ամբարտակը, լճի վրա նավակներ երևացին ու եռաց ճակատամարտը: Փախստականների դորասյան վրա նետերի ու քարերի կարկուտ տեղաց: Նավակներում նստածները իսպանացիներին քաշում էին ջրի մեջ և ողջ-ողջ բռնում, որ զոհաբերեն աստվածներին:

Նվաճողները ամբողջ ուժով պաշտպանվում էին, բայց նրանց կորուստները՝ սպանվածները և վիրավորները, սպառնալիորեն աճում էին: Վերջնական ջախջախումից նրանց փրկեցին հեծելազորի կործանիչ հարվածները և հրետանին, որը տաշեղի էր վերածում նավակները և ջնջում ամբարտակի վրա խոնված հնդկացիներին: Օգտվելով կարճատև խառնաշփոթությունից, իսպանացիները ջուրը նետվեցին, որպեսզի լողալով գուրս գան ափ, որտեղ մանևրելու մեծ հնարավորություն ունեին:

Այդ ճակատամարտից հետո Կորտեսի բանակից մնաց բզկտված, արյունաշաղախ և ուժասպառ զինվորների խղճուկ մի խումբ: Իսպանացիները կորցրին զինվորների մոտավորապես մեկ երրորդ մասը, իսկ տլասկալանցիները՝ հինգ հազար ռազմիկից ավելի: Բայց այդ ջախջախումից հետո կենդանի մնացածների մեջ չկար նույնիսկ մեկը, որ վիրավորված չլիներ: Կործանվեցին բոլոր թնդանոթները, հրացանները և ձիերի մեծ մասը: Լճի հատակը սուզվեց նաև ացտեկների ամբողջ օսկին,

որը իսպանացիները իրար մեջ էին բաժանել մարտից առաջ և փորձում էին տանել քաղաքից:

Կորտեսը ուղևորվեց տլասկալանցիների մայրաքաղաք: Ճանապարհ ընկնելուց մի քանի օր հետո կոնկիստադորները սկսեցին բարձրանալ տլասկալանցիների պետութունից իրենց բաժանող լեռնաշղթայի լանջով: Օտումբայի հովտի վրա իշխող լեռնանցքներում նրանք կանգ առան կարծես շանթահարված: Բամբակե սպիտակ գործվածքից կարված կապաներ հագած ացտեկ ռազմիկների անհամար բազմությունը փակել էր հովիտը: Հեռվից թվում էր, թե հովիտը ձյունով է ծածկված: Ռազմիկների գլխավերևում ցցված էին նիզակներ, զինանշաններ և խայտաբղետ փետրափնջեր: Առաջնորդները կրում էին գազանների գլխի պատկերով արտասովոր սպալավարտներ:

Իսպանացիները և տլասկալանցիները, որոնց դիմավորեցին խլացուցիչ ուռնոցով և սուլոցով, հասկացան, որ եկել է իրենց վերջին ժամը: Ցանկանալով որքան կարելի է թանկ ծախել իրենց կյանքը, հուսահատված կոնկիստադորները թշնամու զինվորների ամենախիտ տեղը նետվեցին: Կորտեսը ձյուն վրա նստած ամենաառջևում էր, նրա հետևից ճեղքելով անցնում էին իսպանացի զինվորները, խոցելով սուսերով, նիզակներով և դաշույններով, զորասյունը շրջափակում էին տլասկալանցիները, օբսիդիանի սայրերով պատված իրենց ահավոր մահակներով:

Ացտեկ առաջնորդները օտարերկրացիների հետ վարած նախորդ մարտերից ոչինչ չէին սովորել և անհասկանալի ու անիմաստ համառությամբ դարձյալ կրկնում էին այն տակտիկական սխալը, որը սկզբում թույլ տվեցին տլասկալանցիները, իսկ նրանցից հետո իրենք՝ Տենոչտիտլանի փողոցային մարտերի ժամանակ: Սեղմված լինելով հովտի փակ տարածություն մեջ, նրանք չէին կարողանում օգտագործել իրենց քանակային գերազանցությունը և միաժամանակ մարտի հանել ռազմիկների հազարանոց ջոկատները: Ճակատամարտը վարվում էր գոտեմարտերով, հնդկացիները չէին կարողանում դիմադրել երկաթե զրահ հագած և սուսերին հմուտ տիրապետող կոնկիստադորներին:

Եվ այնուամենայնիվ մի բուռ դատապարտվածները թշնամու գերակշռող ուժերի ճնշման ներքո անխուսափելիորեն պետք է կործանվեին: Զինվորների ձեռքերն արդեն ընդարմացել էին, նրանց մեծ մասը վիրավոր էր և ոտքի վրա հազիվ էին կանգնում: Նույնիսկ Կորտեսը ընկավ սպանված ձիուց և լուրջ ջարդվածքներ ստացավ: Ացտեկների բազմության գրոհը ավելի ուժեղանում էր և իսպանացիներին վերջնական պարտություն սպառնում:

Վերջին պահին Կորտեսը նկատեց այն, ինչը նրան հույս ներշնչեց իրենից ոչ հեռու, շքախմբով շրջապատված, կանգնել էր ացտեկների բանակի գլխավոր առաջնորդը: Այդ էր վկայում ոսկեկոթ մեծ փետրափունջը: Կորտեսը նետվեց նրա վրա և, մինչ անձնական պահակախումբը

կհասցնելը նորան իրանգարել, առաջնորդին խոցեց երգարով, իսկ դրոշակակրից խլեց պետական դրոշը:

Եվ դարձյալ կրկնվեց այն ժամանակվա հեղկացիական ցեղերի համար բնորոշ մի երևույթ. բանազր, որը հենց նոր կարգապահության և արխոթյան տիպար էր, անմիջապես կորցրեց իր համախառնվածությունը և մարտունակությունը: Անձնական պահակախումբը և շքախումբը ցածրացրիվ եղան: Խուճապը, վարակելով ամենաբազ ուղմիկներին, տարածվում էր տափաստանային հրդեհի նման: Ացտեկները, թողնելով սազմի դաշտը, փախուստի դիմեցին: Այդ օրը, 1520 թվականի նոյեմբերի 8-ին, իսպանացիները Մեքսիկայում ամենամեծ հաղթանակը տարան:

Ճլասկալանցիների երկրում Կորտեսը անմիջապես սկսեց նոր արշավանք նախապատրաստել ացտեկների դեմ և այդ նպատակով Վերակրուսից օժանդակ ուժեր խնդրեց: Այդ նույն ժամանակ ացտեկների մեջ ծաղկի համաճարակ բռնկվեց, որը Եվրոպայից բերել էին կոնկիստադորները: Հազարավոր մարդիկ դարձան համաճարակի զոհ և նրանց հետ միասին Մոնթեսումայի եղբայրը՝ ապստամբության առաջնորդ Գուտիերառուակը: Չնայած նրա հաջորդը՝ Գուտիերասինը ժողովրդական սրբազան պատերազմ հայտարարեց և փորձեց նույնիսկ տլասկալանցիներին իր կողմը գրավել, բայց առանձին քաղաքներ և ցեղեր, մեկը մյուսից առաջ անցնելով, Կորտեսին հաժաափացումներ էին ուղարկում իրենց շեղբուսթյան մասին, դրանով իսկ ստորագրելով իրենց և իրենց հայրենակիցների մահվան դատավճիռը:

Թվում էր, թե բախտը ժպտում էր Կորտեսին: Տարբեր կողմերից սկսեցին օժանդակ ուժեր գալ, որոնց վրա նա բոլորովին հույս չէր դրել: Այսպես, Վերակրուս նավահանգստում խարիսխ էր գցել Վելասկեսի կողմից ուղարկված մի նավ հրազենի և ռազմամթերքի մեծ պաշարով: Անմիջապես Կորտեսին միացավ Յուկատանը գաղութացածիլու նպատակով Յամայկայի նահանգապետի ուղարկած հարյուր հետևակայիններից և քսան հեծյալներից կազմված ջոկատը: Ինչ-որ մասնավոր նավատեղ նրան վաճառեց զենքով բեռնված իր նավը, որի անձնակազմը նույնպես կոնկիստադորներին միացավ: Արդեն Տենոչտիտլանի պաշարման ժամանակ հայտնի չէ որտեղից Վերակրուս ժամանեց երեք հարյուր զինվորով և յոթանասուն հեծյալով երեք նավ:

Արդյունքը եղավ այն, որ այժմ Կորտեսի բանակը դարձավ ավելի ուժեղ, քան երբևէ եղել էր, և կազմված էր 818 հետևակայիններից, այդ թվում՝ 118-ը զինված էին արքայիտներով և արկեբուզներով, 11 հեծյալներից, 3 մեծ երկաթյա թնդանոթից, 15 բրոնզե այսպես կոչված ֆալկոնետ թնդանոթից, ինչպես նաև տլասկալանցի 75 հազար ուղմիկներից:

Կորտեսը հիշում էր, թե ինչպես իրենց նեղեց ացտեկների նավակներից կազմված նավատորմիցը, ուստի որոշեց նրանց հակադրել իր

անհիական նավատորմը: Նա հրամայեց ասանհինգ ատագաստաննավ կառուցել և սարքավորեց զրանք արձագայի այրելուց հետո մնացած նավասարքով և առագաստաներով:

Շուտով աջտեկ ապստամբներին ամենածանր հարվածք հասցվեց. նույն լճում Տենդաթիտլանի դիմաց գանվող և նրան դաշնակից ու եղբայրական Տեսկոկո քաղաքը դինաստիական խաբդավանքների հեռեանքով դաշինք առաջարկեց Կորտեսին և իբ ամրոցը հրավիրեց նրան: Այգպիսով, հենց իրենց՝ աջտեկների պետության ներսում ծագած գաղաճանության շնորհիվ զավթիչները հենարան ստացան համարյա մայրաքաղաքի կողքին:

Տլասկալանցիների մայրաքաղաքից ծանր առագաստանավերի տեղափոխումը Տեսկոկո բարձր լեռնանցքներով դժվար գործ էր: Տլասկալանցի քսան հազար՝ ռադմիկների հսկողությամբ այն իրազարծեցին հնգկացի հազարավոր բեռնակիրներ:

Մի քանի ամսվա ընթացքում Կորտեսը աշխատեւում էր պաշարման ամուր օղակով ըջապատել Տենդաթիտլանը. նրա մարդիկ գրավեցին շրջակա քաղաքները և գյուղերը, բայց ամենից առաջ փակեցին ակվեդուկը, որ քաղաքը գրկեն ջրից: Չեռնամուխ լինելով գրոսնի, Կորտեսն իր բանակը երեք խմբի բաժանեց, որոնք պետք է կավայ միաժամանակ անցնեին դեպի քաղաք տանող երեք ամբարտակները:

Ցուատիմոսինը լավ մտածված պաշտպանություն կազմակերպեց: Ամբարտակները փակել էին ամրություններով և խանդակներով, իսկ այդ ամրությունների թևերը պաշտպանում էին բազմակներով լցված բազմաթիվ նավակներ:

Առաջինը ձեռնարկում էր գրոս գրոսի հետևից, բայց ամեն անգամ հարձակվողները ստիպված էին կորուստներ տալով նահանջել: Մակայն իրազարությունը ջուտով նրանց օգտին փոխվեց: Տեսկոկոյից վրա հասավ ատագաստաննավերի նավատորմիդը: Գլխապատույտ արագությամբ լճի ջրերը ճեղքող սպիտակ ատագաստաներով հսկայական նավերի անսպասելի հայտնվելը սաքսափ առաջացրեց հնգկացիների մոտ: Առագաստանավերը սրընթաց գիպչում էին խարթուկ նավակներին, ֆալկոնետներից և հրադեններից կրակ թափելով նրանց վրա: Շուտով լճի ծածկվեց դիակներով և ջաքոված նավակների բեկսրներով: Աջտեկների նավակների պարասությունը բացեց ամբարտակների վրա կատուցած բարիկազների թևերը և թիկունքը: Թեև բոլոր կողմերից շրջապատված աջտեկ ռադմիկները պաշտպանվում էին մահվան նկատմամբ արտակարգ սրհամարհանքով, սակայն շէին կարողանում գրոսները կառեցնել և զոհվում էին:

Ամբարտակի երկարությամբ մայրաքաղաքին մտնենալով, Կորտեսը մեկը մյուսի հետևից գրավում էր բարիկազները:

Քաղաքում իսպանացիները մարտով պետք է գրավեին չալաքան-

չոր տունը, յուրաքանչյուր բուրգը և բազմիցս ծուղակի մեջ էին ընկնում: Տանիքներից, բուրգերի գագաթներից տղամարդիկ, կանայք և երեխաները նրանց վրա քարեր էին թափում և աղեղներով նետահարում: Բոլոր կողմերից շրջապատված զավթիչները ստիպված էին շտապ նահանջել՝ ճանապարհը ծածկելով մարդկանց և ձիերի դիակներով:

Ի վիճակի չլինելով կոտրել ժողովրդի դիմադրությունը, Կորտեսը հրամայեց հրդեհել քաղաքը և նահանջել ամբարտակի կենտրոնը: Հրդեհը քաղաքը դարձրեց կայծերի շատրվաններ ցայտող դժոխք: Անվեհեր քաղաքացիներին թվում էր, թե եկել է աշխարհի վերջը: Քաղցից ու հոգնածությունից օրորվելով, նրանք ուրվականների նման շրջում էին քաղաքի փողոցներով և դիակներով լցված ջրանցքի երկարությամբ: Բուրգի գագաթից լսվում էին որմերի մռայլ կոչերը և ռազմական թմբուկների խուլ որոտը:

Մի գիշեր իսպանացիները բռնեցին ապստամբների առաջնորդ Գուատիմոսինին, որը փորձում էր նավակով դուրս գալ պաշարված քաղաքից: Կորտեսը նրան հարգանքով ընդունեց և հավաստիացրեց, որ ճանաչում է նրա թագավորական տիտղոսը: Այն ժամանակ Գուատիմոսինը խնդրեց Կորտեսին, որ նա բնակիչներին թույլ տա հեռանալ քաղաքից և բնակություն հաստատել շրջակա գյուղերում:

Լուսաբացին ծխացող փլատակներից դուրս եկան մայրաքաղաքի կենդանի մնացած բնակիչները: Յոթանասուն հազար տանջված տղամարդիկ, կանայք և երեխաներ երեք օր ու գիշեր ամբարտակի երկարությամբ հազիվհազ քայլելով գնում էին տարագրության:

Պաշարումը երեք ամիս տևեց: Ացտեկները կորցրին հարյուր քսան հազարից մինչև երկու հարյուր քառասուն հազար ռազմիկ: Տլասկալանցիները՝ երեսուն հազար: Միայն իսպանացիները քիչ արյունով հատուցեցին հաղթանակի համար: Պատերազմի ամբողջ ժանրությունը գլխավորապես իրենց վրա կրեցին հնդկացիական ցեղերը, շնայած շահեցին օվկիանոսի այն կողմից եկած սպիտակ եկվորները:

Գրավելով քաղաքը, կոնկիստադորները ամենից առաջ սկսեցին փնտրել լիճը գցված Մոնթեսումայի գանձերը: Զրատուղակները հետախուզեցին լճի հատակը և ջրանցքները, զինվորները քաղաքի բոլոր ներբանցքները տակն ու վրա արին: Արդյունքները համեստ էին՝ գտնվեց գանձերի միայն մեկ հինգերորդ մասը, որը նախատեսված էր Իսպանիայի թագավորի համար:

Այդժամ Կորտեսը արեց ևս մեկ ստորություն, իրեն ընդմիշտ անարգանքի սյունին գամելով: Դրժելով իր խոսքը, նա Գուատիմոսինին տանջանքի ենթարկեց, որպեսզի ստիպի հայտնել թաքցրած գանձերի տեղը: Բայց արի առաջնորդը ոչինչ չասաց: Մի քանի տարի հետո Կորտեսը հրամայեց նրան կախել այն բանի համար, որ նա իբրև թե ժողովրդին խոտովության է դրդել:

Ացտեկների գանձերի մնացորդները Կորտեսը Իսպանիա ուղարկեց, բայց դրանք տեղ չհասան: 1522 թվականի մայիսի 15-ի նամակով նա՝ վապետը հայտնեց, որ ինքը ընկել է Ֆրանսիայի թագավորին ծառայող մի ծովահենի ձեռքը: Ճակատագրի ծաղրի մեծ վարպետը՝ պատահակա՝ նությունը, արեց այնպես, որ Կառլոս V-ի համար նախատեսված ոսկին դարձավ նրա ամենաոխերիմ թշնամու՝ Ֆրանցիսկ I-ի բաժինը:

Տենոչտիտլանի կործանումը չընկճեց հնդկացիների ոգին: Երկար տարիների ընթացքում նրանք պարտիզանական անողոք պատերազմ էին մղում, այնպես որ գաղութարարները օր ռե գիշեր հանգիստ չունեին: Բեռնալ Դիասը գրում է.

Բնիկներին տուրֆ վնասելու ստիպելու փորձը ամբողջ նոր Իսպանիայում ապստամբություն բուրձացնելու ազդանշան դարձավ: Այն հարկահավաքները, որոնք փորձում էին տուրֆ հավաքել, կյանքից զրկվում էին այնպես, ինչպես և մյուս բոլոր իսպանացիները, որոնք հնդկացիների ձեռքն էին ընկնում: Գավառներում դիմադրությունը համատարած էր, այնպես որ մենք երկիրը պետք է մեծ զորքով հսկեինք, որ բնակչությանը հնազանդություն մեջ պահեինք:

Հաղթանակ տանելով, իսպանացիները սկսեցին հետևողականորեն ավերել մայրաքաղաքը: Զրանցքները լցվեցին պալատների ու տաճարների բեկորներով, բուրգերը հողին հավասարեցրին, իսկ ավերված քաղաքի տեղը կառուցեցին իրենցը՝ այժմյան Մեխիկոն: Այնտեղ, որտեղ բուրգի վրա պատերազմի աստծո տաճարն էր վեր հանում, այժմ եկեղեցի է, իսկ Մոնթեսումայի պալատի փլատակների տեղում գտնվում է իսպանական նահանգապետի աթոռանիստը: Հինգ տարին դեռ չլրացած՝ ացտեկների մայրաքաղաքն իր ճարտարապետական և քանդակագործական գանձերով այնպիսի փութաշանությամբ էր թաղվել իսպանական տների հիմքերի տակ, որ նրա հետքերն անգամ չէին մնացել:

Չնայած հնդկացիների մայր երկիրը կործանվեց, սակայն հնդկացիական ժողովուրդը շոշնչացավ: Հնդկացիները ոչ միայն դիմացան ստրկացման ամենադժվար ժամանակաշրջանին, այլ նաև արհեստավորների, խանութպանների, ջուլհակների և բրուտների, ոսկերիչների, սյգեգործների և գյուղացիների խայտաբղետ բազմությամբ հաստատվեցին իսպանական քաղաքի փողոցներում և շուկաներում: Հնդկացիների ջրառատ և պտղավետ ծովում իսպանական պալատները և առանձնատները միայն կղզիներ էին: Հնդկացիական և նրանց վզին փաթաթված տարրերից ծնունդ առավ մեքսիկական նոր մշակույթը՝ իր սեփական ազգային նկարագրով:

Մարդկային սրտեր լափողների վախճանը

Տեսկալի Բաղափի թագավորը իր երկրում ծաղկած շրջվիս մի անգամ դաշտում հանդիպեց ցնցոտիներ հագած մի սղոյի, որը ցախ էր հավաքում: Նա հարցրեց.

— Ինչո՞ւ դու անտառում շնու ցախ հավաքում: Չէ որ այժտեղ ավելի շատ ցախ կա, Բան այստեղ, դաշտում:

— Նա կպատժվեմ... Այդ անտառը թագավորին է պատկանում, այնտեղ ցախ հավաքողին մահ է սպասում:

— Իրո՞ք: Իսկ ինչպիսի՞ մարդ է ձեր թագավորը:

— Օ, նա անսիրտ մարդ է... Նա մարդկանց մեծածամ է այն, ինչ աստծո պարզեն է:

«Հազար աւ մի գիշերներէից» Բաղդադի փոքրօրէնքում շրջող խալիֆի հեքիմիքը հիշեցնող ացտեկական այս զրույցում որոշակիորեն արտահայտվում են այն ժամանակվա հնդկացիական հասարակութեան դասակարգային հակասութիւնները: Մենք այնտեղ տեսնում ենք անողորք, իր հարստութեան նկատմամբ նախանձախնդիր տիրակալին, տեսնում ենք աղքատ տղային՝ ընչազուրկներէ ներկայացուցիչն, որոնց զրկել են նախնական օջախ վառելու փայտից և որոնք սուր կերպով զգում են այդպիսի հասարակարգի անարդարացիութիւնը:

Մեզ արդեն հայտնի են պատմութեան մեջ այդ արտակարգ և ապշեցուցիչ փաստաբանական պատճառները, երբ ռազմիկների ինք միջիտեանոց պետութեանը կտրածանվեց իսպանացի մի բուռ քախտախնդիրների հարձակոյթներից: Մեզ հայտնի է, թէ նրա ճակատագրի վրա ինչպիսի ազդեցութիւն ունեցած այն, որ հնդկացիների ցեղերի մեջ դավաճանութիւն ծագեց, որ հնդկացի աստղնորդները կառչել էին հին, պրիմիտիվ ռազմական մարտավարութեանը և շկարողացան հարմարվել նոր իրադրութեանը, ի վերջո, որ Մոսթեաուժան նվաճողների նկատմամբ անսահման վախ և պատախալութեան ցուցաբերեց:

Բայց պարտութեան արմատները, ինչպես ցույց է տալիս վերը բերված պատմութիւնը, պետք է փնտրել զգալիորեն ավելի խորը՝ հասարակական տեղերի հարաբերակցութեան և հնդկացի ժողովրդի պատմութեան մեջ:

Իսպանական նվաճումների շրջանում համայնքը, առաջնորդների ընտրովիութիւնը և հողի բաժանումը տոհմերի և ընտանիքների միջև միայն ձևականորեն գոյութիւն ունեցին: Այն ժամանակվանից, երբ ացտեկները նվաճումների շնորհիվ ստեղծեցին իրենց պետութիւնը, գույքային և սոցիալական անհավասարութիւնը խորացավ, առաջացավ ռազմիկների ուժեղ ազնվական դասակարգ, որը ոչ միայն սեփականացնում էր հողը, այլ նաև ռազմական ավարով ու գերիներով հարստութիւն էր

կատարեալում: Մեազնորդները խոթանալով յանն արդևն ժառանգաբար էր փոխանցելում մի քանի վտարաթիւք սոհմերում:

Այդ օլիգարխները և ազնվատոհմիկները կողքին աճում էր քրմերի հզոր կաստան: Թագաւորները նրանց ափելի ու ափելի շատ հողեր էին տալիս, այնպես որ ացտեկները պետութեան մեջ չկար մի անկյուն, որտեղ տաճարներն ընդարձակ կալվածքներ չունենային: Բացի դրանից, քրմերն իրաւունք ունեին տվյալ տաճարի ազդեցութեան շրջանում գտնվող գյուղացիական բոլոր տնտեսութեաններից տասանորդ գտնվել:

Նրկու գլխավոր քրմերը պետութեան մեջ թագաւորից հետո երկրորդ տեղն էին գրավում: Նրանց ազդեցութեանը տարածութեւն էր մինչև ամենահեռավոր անկյունները, որովհետև նրանց ենթակառ բազմաթիւ հոգևորականները սիրոված էին ամբողջ երկրով մեկ: Բախահան է ասել, որ Տեոթլաուտլանի գլխավոր տաճարին կից ապրում էին զանազան աստիճաններ ունեցող հինգ հազար քուրմ: Մոնթեհումայի թագաւորութեան ժամանակ քրմերն առաջնութեան ձեռք բերեցին նույնիսկ օլիգարխների նկատմամբ և քաղաքական գործերում վճարեան ձայնի իրաւունք ստացան:

Տոհմերի նախկինում ազատ անդամները անհող դյուղացիներ դարձան, հետզհետեւ ափելի ու ափելի կախումն մեջ մտնելով օլիգարխներից ու քրմերից, այնպես որ ժամանակի ընթացքում նրանց վեճերը ասորկանի նման դարձաւ: Այդ դժուարացիների կողքին գոյութեան ունեւր իսկական աստեղները գտնաւորագ, որոնց շարքերը լրացնում էին ռազմագեղաները և տոհմերի նախկին այն անդամները, որոնց դեռևս մտնել հաստատում արքայատեղած ժողովները ատրիսութեան էին վաճառել:

Այդպիսով, հնդկացիական հասարակութեանը սրտիկեց հարուստները և աղքատների՝ մի կողմից հագասիրտանն ազնվականութեան ու քրմերի; և մյուս կողմից՝ գյուղացիների ու արհեստագործների: Հասարակութեան այդ երկու գլխավոր մասերի միջև եղել են ոչ միայն գույքային, այլև կենցաղային տարբերութեաներ. օրինակ, ազնվականները բոլորովին այլ ձևով էին հագնվում, քան դյուղացիները և սրահաստերները:

Այն ժամանակ, երբ կատալաբող դասակարգերի ներկայացուցիչները ընկզմվել էին հարստութեան և ճարտութեան մեջ, ժողովարարը ծանօտ աշխատանք էր կատարում մի կողմից հացի համար Կոնկիստապաները իրենց նոթերում բազմիցս նշել են, որ հոյակապ պաշտաններ կողքին գոյութեան ունեին աղքատիկ, իրար կիպ կպած կավից և արմաւիճնու տերևներից սարքած խրճիթներ: Չոչաւայում և Տեոտլաուտլանում Կորտեսի ուղարկութեանը գրավեց ամցորդներից պեղեղեատրեն ողորմութեան ինդորդ մուրացիանների տարոխը: Հնդկացիական ժամանակագրութեաններից հայտնի է, որ աղքատ ընտանիքները, ընկնելով անեղանելի կարիքի մեջ, իրենց երեխաներին ոչ միայն ստրկութեան, այլ նույնիսկ արյունալի զոհաբերութեանների համար վաճառում էին տաճարներին: Բանն

այնտեղ էր հասնում, որ որոշ ամուսիններ գա մասնագիտություն էին գարձնում՝ երեխա էին ծնում, որ հետագայում նրանց ծիսական զոհաբերության համար վաճառեն:

Մյուս կողմից, ազնվականների հարստության մասին որոշ պատկերացում է տալիս թեկուզ՝ այն, որ միայն Տեսկոկոյում կար տաշած քարերից կառուցած երեք հարյուր պալատ՝ շրջապատված այգիներով, բանջարանոցներով, ծաղկանոցներով և շատրվաններով: Այդ շենքերի սենյակները զարդարվում էին թանկարժեք խորաքանդակներով, արժեքավոր գործվածքներով և ոսկե իրերով:

Ացտեկ թագավորներին աստվածային մեծարանք էին մատուցում: Երբ Տեսկոկոյի Նասախուալպիլի թագավորը մահացավ, նրա աճյունը տասներկու ստրուկների և ստրկուհիների հետ միասին այրեցին խարույկի վրա: Մոխիրը լցրեցին թանկարժեք քարերով դրվագված ոսկե աճյունասափորի մեջ և դրեցին պատերազմի աստծու տաճարում:

Մոնթեսուման գահ բարձրացավ 1502 թվականին և հենց սկզբից դրսևորեց իրեն իբրև կատարյալ բռնապետ: Իրեն աստվածներին հավասար դասելով, նա գոռոզաբար և արհամարհանքով էր վերաբերվում հպատակներին: Մեծ վաստակներ ունեցող հին զինվորներին, որոնց նրա հայրը պալատական զանազան պաշտոններ էր պարգևել, Մոնթեսուման հրամայեց հեռացնել պալատից միայն այն բանի համար, որ նրանք ծագումով ազնվական չէին: Պալատականները նրա առջև երեսն ի վայր պետք է ընկնեին, իսկ նրան կարող էին դիմել միայն քարտուղարի միջոցով: Հարկերը զգալիորեն բարձրացնելով, նա դժգոհություն առաջացրեց բնակչության մեջ: Այդ հողի վրա շատ հաճախ դժգոհները խռովություններ էին բարձրացնում, սակայն թագավորի զինվորները խեղդում էին դրանք արյան մեջ:

Հարկերից գոյացած եկամուտների զգալի մասը ծախսվում էր արքունիքի պահպանման համար, որը կազմված էր հարյուրավոր աստիճանավորներից, պալատականներից և սպասավորներից, ինչպես նաև մի քանի հարյուր հարձերից, որոնք բնակվում էին պալատի հատուկ թևում:

Մոնթեսուման սիրում էր պճնվել շքեղ հագուստներով: Նա օրը շորս անգամ զգեստափոխվում էր, բայց միևնույն հագուստը երբեք երկրորդ անգամ չէր հագնում, շնայած դա հնդկացի արհեստավորների բազմաթիվ ամիսների աշխատանքի և գեղարվեստական վարպետության արդյունք էր:

Ճաշից առաջ ամենաբազմապիսի ընտիր կերակուրներով հարյուրավոր ափսեներ էին բերում սենյակ: Մոնթեսուման ընտրում էր այն, ինչ տվյալ պահին ցանկանում էր, իսկ մնացածը դուրս էին տանում պալատականների համար: Դրանք վայրի և ընտանի թռչունների մսից, նաև հատուկ արագավազների միջոցով Ատլանտյան օվկիանոսի ափերից բերված ձկներից պատրաստված խորտիկներ էին, բանջարեղեն ու մրգեր:

Մոնթեսուժիան սպասարկում էին պալատականները և գեղեցիկ հնդկուհիները: Մոնթեսուժիան նստում էր բարձերի վրա, ոսկեկար վարագույրով ծածկված, փորագրված ցածր սեղանի մոտ: Նուրբ խեցեղեն կամ ոսկե ափսեները կարելի էր միայն մեկ անգամ օգտագործել, հետո դրանք պալատականներին էին տալիս: Սեղանատունը լուսավորվում էր խեժաշատ բուրավետ փայտի մարխերով: Ճաշելուց հետո նա խմում էր վանիլով և դանազան արմտիքներով համեմված շոկոլադ:

Ճաշից հետո Մոնթեսուժիան արծաթե թասի մեջ լվանում էր ձեռքերը, ծխամորճ էր ծխում, իսկ ծաղրածուները և թղուկները, լարախաղացները, ձեռնածուները և պարուհիները զվարճացնում էին նրան: Հետո նա հեռանում էր իր ննջարանը հանգստի, որը մի քանի ժամ էր տևում:

Այն շտեմնված շքեղութունը, որ վայելում էր բարձր ազնվականութունը, շահագործելով աշխատավոր մասսաներին, հնարավոր էր պահպանել միայն բռնությամբ: Ժողովրդական ապստամբություններից իրենց ապահովելու համար ազնվական տոհմերը բնակվում էին քաղաքի հատուկ շրջաններում, որոնք շրջապատված էին բերդապարիսպներով: Տենոչտիտլանում քաղաքի այդ մասը Տեեպան էր կոչվում: Պալատներից բացի, այնտեղ էին գտնվում կրոնական պաշտամունքի գլխավոր օջախները: Պատերազմի աստծո մեծ բուրգը շրջապատված էր հզոր պարիսպով և աշտարակներով. նրա բակում էր տեղավորված և մշտապես մարտական պատրաստականության վիճակում էր գտնվում հարյուրավոր ռազմիկներից կազմված հատուկ ջոկատը:

Այդ փաստերի լույսի տակ մեզ համար հեշտ կլինի հասկանալ հրեղեկացիական ժողովրդի առաջին հայացքից տարօրինակ թվացող պասսիվութունը կոնկիստադորների նվաճողական գործողութունների նկատմամբ: Մոնթեսուժիան գերեզմարութունը նույնիսկ չկարողացավ նրա հավասարակշռվածութունը խախտել, և եթե Ալվարադոյի սարքած արյունալի կոտորածը չլիներ, հնարավոր է, որ գործը ապստամբության չհասներ:

Ժողովրդի անտարբերութունը իր տիրակալների ճակատագրի նկատմամբ բավականաչափ լուսաբանում է հետևյալ միջադեպը: Իսպանացիներից և տլասկալանցիներից կազմված Կորտեսի բանակը Տենոչտիտլանի պաշարման ժամանակ տեղավորված էր Տեսկոկոյում: Դաշնակիցների հարաբերութուններն այնքան էլ նախանձելի չէին, որովհետև իսպանացի զինվորները առիթը բաց չէին թողնում իրենց արհամարհանքը արտահայտելու հնդկացիների նկատմամբ:

Մի իսպանացի զինվոր վիրավորանք է հասցնում տլասկալանցի առաջնորդներից մեկին: Վերջինս բողոքով գնում է Կորտեսի մոտ, սակայն բավարարում չի ստանում և դրանից խորուրդս վրդովված թողնում է Տեսկոկոն ու տուն վերադառնում: Կորտեսը հրամայում է բռնել նրան և մահապատժի ենթարկել իբրև դասալիք: Մահապատիժը

աեղի է ունենում օրը ցերեկով՝ տլասկալանցիների յոթանասունհինգ հազարանոց բանակի աչքի առաջ, սակայն ներկաներից ոչ մեկը մատը մատին չի շխտում, որպեսզի պաշտպանի իր առաջնորդին և հայրենակցին:

Միայն ժողովրդի և նրա առաջնորդների միջև եղած դասակարգային անդունդով կարելի է բացատրել մեկ այլ երևույթ, այն փաստը, որ հնդկացիների բանակը հենց կորցնում էր առաջնորդին, անմիջապես կազմալուծվում և թողնում էր ուզմի դաշտը, կարծես պատերազմը համարելով ոչ թե իր սեփական, այլ առաջնորդների գործը: Հետևաբար, ացտեկների պատերազմը իսպանացիների դեմ աղնվականների պատերազմ էր և չուներ անկախության համար ժողովրդական պայքարի բնույթ: Միայն Տենոչտիտլանի սպասամբույթյունը ժողովրդական համընդհանուր պայքարի բնույթ կրեց, բայց արդեն շատ ուշ էր:

Պատերազմի ընթացքի համար պատասխանատվությունը կրում էր բացառապես հնդկացի ցեղերի ավագանին: Մենք արդեն գիտենք, թե ինչպիսի հետամնաց եղանակներով էին նրանք մարտը վարում: Կոնկիստադորների հետ ունեցած բոլոր ընդհարումների ժամանակ տաբասկների, տլասկալանցիների կամ ացտեկների բանակը խիտ բազմությամբ խըմբվում էր հրազենի համադարկերի և իսպանացիների կարգավարժ զինվորների գրոհների առջև: Այդ իմաստով բոլորից վատ իրենց դրսևորեցին ացտեկյան ցեղերը: Նախորդ ամբողջ փորձին հակառակ, նրանք ճակատագրական նույն սխալը կրկնեցին Օտումբայի հովտում, որտեղ զորքերի կենտրոնացումն արդեն անբացատրելի անհեթեթության էր նման:

Աղնվապետական կարգերի անխուսափելի հետևանքը նվաճողական պատերազմներն էին, որ անընդհատ վարում էին հնդկացի ցեղերը: Հարստության ծարավի ունևոր դասակարգերը հարձակվում էին հարևանների վրա, խլում լավագույն հողերը և իբրև տուրք վերցնում մետաղներ, արհեստավորական արտադրանք ու գյուղատնտեսական մթերքներ, ինչպես նաև մարդկանց՝ աստվածներին զոհաբերելու կամ դաշտերում որպես տրուկ աշխատեցնելու նպատակով:

Փերիշխանության համար մղվող այդ պայքարում հետզհետե հաղթանակեցին ացտեկները և 1427—1440 թվականներին ստեղծեցին Մեքսիկան, Յուկատանը և Գվատեմալան ընդգրկող մեծ պետություն: Բացառությամբ տլասկալանցիների, նրանք հպատակեցրին այդ հողերում բնակվող բոլոր ցեղերին՝ տոտոնակներին, տաբասկներին, սապոտեկներին, միշտեկներին և շատ ուրիշներին: Նրանց քաղաքներում ացտեկյան կայազորներ էին կանգնում, իսկ հարկահավաքները տուրք էին գանձում և Տենոչտիտլան ուղարկում: Հարկ վճարելուց խուսափելու փորձի համար մահապատիժ էր սպառնում, իսկ ամենաչնչին հանցանքի համար հպատակեցված ցեղերը պետք է իրենց երիտասարդության սերուցքը տային ացտեկյան արյունոտ զոհաբերելու համար:

Ացտեկները հաղթանակ տարան համընդհանուր սարսափ առաջացնող իրենց ռազմատենչության շնորհիվ, բայց ամենից շատ պարտական էին իրենց հասարակական կազմակերպության երկաթյա կարգապահությանը, որը հիշեցնում էր խաչակիրների կարգապահությունը: Բացառությամբ քրմերի, բոլոր տղամարդիկ ընդգրկված էին մի քանի աստիճանի բաժանված խմբերի մեջ, որոնք իրարից տարբերվում էին հատուկ նշաններով, զենքով և հագուստով: Բարձրագույն աստիճանն ընդգրկում էր ազնվական ծագում ունեցող ռազմիկներին, բայց նույնիսկ նրանք էլ կարգերի էին բաժանվում իրենց զինվորական ծառայությունների համեմատ: Նրանց կողքից արտակարգ դաժան էր. ամենափոքր զանցանքի համար մահվան էին դատապարտվում: Տեսկոկոյի թագավորներից մեկը իր երկու որդիներին մահվան դատապարտեց հակառակորդի ներկայությամբ ինչ-որ շնչին խախտումներ թույլ տալու համար:

Ացտեկների տնտեսական ու քաղաքական ճնշումը օրըստօրե աճում էր, իսկ հնդկացիների անշատ-անշատ ցեղերը չէին կարող թոթափել ծանր լուծը միասնություն բացակայության պատճառով:

Մոնթեսումայի նախորդը իր թագավորության ամբողջ ընթացքում զբաղված էր խոռվությունների զսպմամբ, իսկ Մոնթեսուման անընդհատ պատերազմներ էր մղում, որոնց ընթացքում բնակչության մի մասը ճնշում էր մյուսին՝ ապստամբածներին:

Գիտենալով այդ փաստերը, դժվար չէ կռահել, թե ինչու Կորտեսը այդպես հեշտությամբ ջախջախեց ացտեկների բազմամիլիոն պետությունը: Ստրկացված ցեղերը նրան ողջունում էին որպես դաշնակցի և ազատարարի, իսկ մյուսները, շնայած սկզբում դիմադրում էին, ինչպես, օրինակ, տլասկալանցիները, հետագայում ռազմական գլխավոր օգնություն էին ցույց տալիս իրենց թշնամու դեմ պայքարելու համար: Փամանակի ընթացքում ացտեկները մեկուսացվեցին և փոքրամասնություն կազմեցին: Կորտեսն արեց այն, ինչ հպատակեցված հնդկացի ցեղերը չէին կարող անել՝ միավորեց և դարձրեց նրանց հզոր ռազմական ուժ: Տենոչտիտլանի պաշարման ժամանակ նրա հրամանատարության տակ արդեն կար հնդկացիների հարյուրհազարանոց բանակ, որոնք ծարավի էին վրեժ լուծելու իրենց ճնշողներից. Կորտեսի հաղթանակը հենց հնդկացիների հաղթանակն էր հնդկացիների նկատմամբ:

Ացտեկների պետության քաղաքական դրության պատկերը լրիվ չէր լինի, եթե պատկերացում չտրվեր կրոնի մասին, որը ավելի մեծ շահով, քան աշխարհում մեկ այլ կրոն, զենք է ծառայել ացտեկ ժողովրդի և հպատակեցված ցեղերի հարստահարման համար: Նրա դաժան արյունոտ ծիսակարգը մարդկային բազմաթիվ զոհեր էր կլանում՝ տղամարդիկ, կանայք և նույնիսկ երեխաներ, չբացառելով ծծկերներին:

Ացտեկները բազմաստվածություն էին դավանում: Նրանք հավատում էին, որ աստվածները իշխում են բնության ուժերի և մարդկանց

ճակատագրերի վրա: Աստվածներին պատկերում էին մարդկային կերպարանքով, բայց նրանց օժտում էին գրոտեսկային, հրեշավոր, երբեմն գազանային գծերով: Աստվածներն այնքան շատ էին, որ նրանց թվարկումը միայն հատուկ գլուխ կպահանջեր:

Աստվածների այդ բազմությունից մենք արդեն հիշատակել ենք Կեցակոատլին, որին, շնայած իր բարությանը, նույնպես մարդկային զոհեր էին մատուցում: Մեծ պատիվներ էին մատուցում արևի աստծուն և նրա կնոջը՝ լուսնի աստվածուհուն: Արևածագը քրմերը դիմավորում էին ներբողներով և արյունալի զոհաբերություններով: Արեգակի խավարումը մեծ դժբախտություն էր համարվում. տաճարներում փողեր էին փչում, թմբուկ էին զարկում, իսկ մարդիկ արտասուք էին թափում և եղունգներով ծվատում իրենց դեմքը:

Չնայած գլխավոր աստվածությունը և ամենայն կյանքի ազբյուրը արևի աստված Թեոտլին էր, բայց ամենամեծ պատիվները տրվում էին պատերազմի դաժան աստված Ուիցիլոպոչտլին: Ացտեկների հավատալիքների համաձայն, այդ գարշելի աստվածը, լույս աշխարհ գալուն պես, արդեն արատավորել էր իրեն՝ հարազատների արյունը թափելով. նա կտրել էր իր քրոջ և եղբայրների գլուխները: Նրա մայրը մի նոզկալի հրեշ էր, որը գլխի փոխարեն գանգ ուներ, իսկ մատների փոխարեն՝ բազեի մագիլներ:

Չոհաբերությունները կատարվում էին հիրավի անմարդկային դաժանությամբ: Երեսներին սև ներկ քսած և սևազգեստ շորս քուրմ, բռնելով երիտասարդի ձեռքերից և ոտքերից, նետում էին նրան զոհասեղանի վրա: Միրանի հագած հինգերորդ քուրմը օբսիդիանի դաշույնով ճեղքում էր զոհի կրծքավանդակը և ձեռքով պոկում սիրտը, որը հետո աստծու ոտքերի տակ էր նետում: Ացտեկների մոտ ծիսական մարդակերություն գոյություն ուներ. զոհի սիրտը ուտում էին քրմերը, իսկ բուրգի աստիճաններից ցած նետված մարմինը տանում էին ազնվական տոհմերի անդամները և ուտում հանդիսավոր խնջույքների ժամանակ:

Տարեկան տասնութ գլխավոր տոներից բացի, որոնք երբեմն մի քանի օր էին տևում, մնացած բոլոր օրերն էլ նվիրված էին ամենաբազմապիսի աստվածներին, ուստի մարդկային արյունը տաճարներում հորդում էր անընդհատ:

Ամենայուրօրինակը Տեսկատլիպոկա աստծուն նվիրված տոնակատարությունն էր: Դեռևս տոնակատարությունից մեկ տարի առաջ որպես զոհ ընտրում էին ֆիզիկապես անթերի մի գեղեցիկ պատանի: Ընտրությանը ստանում էր աստծու անունը, հագուստը և բոլոր պատկանելիքները: Նա դառնում էր Տեսկատլիպոկա աստծո երկրային ներկայացուցիչը, և բնակչությունը նրան աստվածավախ հնազանդությամբ էր շրջապատում: Տարվա ընթացքում շքեղության և զվարճությունների մեջ էր ապրում, ազնվականական տները նրան շարունակ խնջույքի էին հրավիրում: Վեր-

զին ամսին նրան տալիս էին շորս ազջիկ, որոնք նրա կինն էին դառնում:

Նա ունեւր նաև որոշ պարտականութիւններ, որոնք բխում էին Տեսկատլիպոկա աստծու մասին առասպելներից: Ըստ համատալիքի, այդ աստվածը շրջում է գիշերները և մարդկանց այն աշխարհն է տանում: Որպեսզի նրան սիրաշահեին, ացտեկները ճանապարհների երկարութեամբ քարե նստարաններ էին դնում, որ թափառելուց հոգնած աստվածը կարողանար հանգստանալ: Եվ զոհաբերութեան համար ընտրված պատանին, նրա օրինակով, պետք է շրջելու դուրս գար և ժամանակ առ ժամանակ նստեր ճամփեզրի նստարաններին: Սովորաբար նրան ուղեկցում էր ոսկե երիտասարդութիւնից կազմված շքախումբը, հավանաբար նրա համար, որ դատապարտվածը շարողանա փախչել:

Տոնակատարութեան օրը պատանուն դեսպակով տանում էին տաճար, որտեղ քրմերը նրան աստծուն էին զոհաբերում արդեն հայտնի եզանակով:

Երկրագործութեան աստվածուհուն երիտասարդ աղջիկ էին զոհաբերում: Սև և դեղին ներկով նախշված, որը եզիպտացորեն էր խորհրդանշում, նա տաճարի կենտրոնում պետք է ծիսական նրբագեղ պարեր կատարեր, իսկ հետո մեռներ զոհասեղանին:

Ացտեկների կրոնում եղել է նույնիսկ մարդկային զոհերի հատուկ հովանավոր՝ Շիպե Տոտեկ աստվածը: Նրա պատվին քրմերը հանում էին ողջ-ողջ պատանիների մաշկը և քսան օր կրում իրենց վրա: Նույնիսկ ինքը թագավորը հագնում էր զոհի ձեռքերի և ոտքերի մաշկը:

Վայրենութեան գագաթն էր կրակի աստծո պաշտամունքի հետ կապված ծիսակատարութիւնը: Նրա տաճարում քրմերը մեծ խարույկ էին վառում, ուղմիկներին լրիվ մերկացնում էին և իրար կապած գցում կրակի մեջ: Զսպասելով նրանց մահվանը, քրմերը կեռերով նրանց դուրս էին քաշում կրակի միջից, դնում ուսերի վրա և խարույկի շուրջը ծիսական պար կատարում: Հետո միայն զոհասեղանի վրա նրանց սպանում էին:

Ացտեկների կրոնը շէր խնայում նույնիսկ երեխաներին: Երաշտի ժամանակ քրմերը սպանում էին փոքրիկ տղաների և աղջիկների, որ անձրևի աստծո գութը շարժեն Աղքատացած ծնողների կողմից տաճարին վաճառված ծծկեր՝ երեխաներին տոնական զգեստներ էին հագցնում, ծագիկներով զարդարում և օրորոցների մեջ տաճար տանում: Վերջացնելով ծիսական արարողութիւնը, նրանց դանակներով սպանում էին:

Հենց որ երևում էին եզիպտացորենի առաջին ծիլերը, երեխաներին այլ կերպ էին սպանում. նրանց գլուխները կտրում էին, իսկ մարմինները որպես մասունք, պահում էին լեռնային քարայրներում: Եզիպտացորենի հասունացման շրջանում քրմերը հինգից վեց տարեկան շորս երեխա էին գնում և փակում նկուղներում, դատապարտելով սովամահութիւն:

Յուրօրինակ սովորութիւն էր անարյուն ճակատամարտը, որը աց-

տեկները և տլասկալանցիները ամեն տարի վարում էին իրար հետ պայ-
մանավորված տեղում: Այստեղ ուղղակիները զենք չէին օգտագործում,
այլ ըմբիշների նման անզեն էին մարտնչում, պարտվածներին գերի
վերցնելով: Հետո գերիներին վանդակներով տանում էին իրենց տաճար-
ները՝ արյունալի զոհաբերությունների համար:

Մեկ այլ արարողություն շատ էր հիշեցնում հոմեական գլադիատոր-
ների մարտերը: Գերուն երկար պարանոզ կապում էին ծանր քարին:
Նրան վահան և մահակ էին տալիս, բայց այնքան փոքր, որ նրանով
համարյա ոչինչ հնարավոր չէր անել: Նրա հետ մարտի էր բռնվում նոր-
մալ ու պառագինված ացտեկ ուղղակի: Կապված և համարյա անզեն գերին
փրկության ոչ մի հնարավորություն չունեւր. բայց եթե նրան այնուամե-
նայնիվ հաջողվեր իրար հետևից հաղթել վեց հակառակորդի, ամենափոքր
քերծվածք անգամ շատանալով, ապա նա ազատություն էր ստանում:

Այդպիսի արտակարգ դեպք տեղի է ունեցել իր գերմարդկային ուժով
հայտնի տլասկալանցի թագավորներից մեկի հետ, որը գերի էր քնկել
ացտեկներին: Վեց հակառակորդի հերթով հաղթելով, նա ազատույն
իրավունք ստացավ, բայց նախընտրեց մեռնել, որովհետև, ըստ հնդկա-
ցիների հավատալիքների, այդպիսի մարտում պարտված մարտիկը
ընկնում էր հատուկ դրախտ, որը հիշեցնում էր գերմանական Վալհալլան:

Ստույգ հայտնի չէ, թե ացտեկների թագավորությունում տարեկան
քանի մարդկային զոհ էր մատուցվում: Մասնագետները գտնում են, որ
քսանից մինչև երեսուն հազար: Թեկուզ այս թվերը պետք է զգուշորեն
ընդունել, բայց կասկածից վեր է, որ զոհերի քանակը շատ մեծ էր: Այդ
են ապացուցում տասնյակ հազարավոր գանգերով լցված տաղավարները,
որ իսպանացիները հայտնաբերեցին բոլոր քաղաքներում, հատկապես
Տենոչտիտլանի արդեն հիշատակված շենքը, որտեղ Քեռնալ Դիասը հար-
յուր երեսունվեց հազար գանգ հաշվեց:

Անհագ աստվածների համար զոհեր հայթայթելը ացտեկների պե-
տության մշտական հոգսն էր: Ռազմիկների մի հատուկ խումբ բացա-
ռապես զբաղվում էր գերիներ հայթայթելով և նրանց տաճարները տեղա-
փոխելով: Շատ պատերազմներ ձեռնարկվում էին հենց միայն զոհաբե-
րությունների համար գերիներ ձեռք բերելու նպատակով: Ացտեկների
բանակում ուղղակի արժանիքների մասին դատում էին նրանով, թե
քանի գերի է վերցրել: Ուստի ճակատամարտերի ժամանակ հակառակորդ-
ներն աշխատում էին ոչ թե մեկը մյուսին վիրավորել կամ սպանել, այլ
գերի վերցնել: Հավանաբար, այդ տարօրինակ սովորույթով կարելի է
բացատրել և այն, որ կոնկիստադորների մեջ զարմանալիորեն քիչ էին
վիրավորները և սպանվածները: Մի անգամ երբ Մոնթեսումային հարց-
րին, թե ինչու է իր կողքին հանգուրծում տլասկալանցիների անկախ
թագավորության գոյությունը, նա առանց վարանելու պատասխանեց.

«Որպեսզի նա մարդիկ մատակարարի աստվածնեկին զոհ մատուցելու համար»:

1479 թվականին պեսք է տեղի ունենար մեծ տոնակատարություն՝ այն սալի օծումը, որի վրա փորագրված էր ացտեկների օրացույցը: Դա այժմ հայտնի «Արեգակի քարն» է, որը հետագայում, Լեյթարկվելով ճակատագրի զանազան փորձություններին, ի վերջո հայտնվեց Մեխիկոյի Ալգոային թանգարանում:

Ախանակատլ թագավորը դաշնակից թագավորների և զորավարների խորհուրդ է հրավիրում, որոշելու համար, թե ում պատերազմ հայտարարեն, որպեսզի անհրաժեշտ քանակությամբ զերիներ ձեռք բերեն: Որոշեցին հարձակվել սլասկալանցի ցեղերի վրա: Սակայն ացտեկների բանակը խայտառակ պարտություն կրեց և ձեռնունայն վերադարձավ:

Դաշնակիցները կրկին խորհրդակցեցին և որոշեցին մարտնչել իրար հետ: Ացտեկները զերի վերցրեցին յոթ հարյուր մարդ, դաշնակիցները՝ չորս հարյուր քսան: Բայց քանի որ օծման տոնախմբությունն ընդհանուր պոթ էր, ուստի որոշեցին զոհաբերել թե մեկ և թե մյուս կողմի զերիներին: Գերիներին շարեցին «Արեգակի քարի» մոտ, հետո թագավորը, ջրմերը և ավագանին նրանց դաշույններով սպանեցին: Ոչ ոք կենդանի չմնաց:

Տենոչտիտլանում պատերազմի աստծու տաճարը օրհնելու ժամանակ, որը տեղի ունեցավ 1486 թվականին, այդ նույն եղանակով քսան հազար զերի սպանեցին, իսկ Մոնթեհսուման ի նշանավորումն իր թագավորության՝ քսան հազար ռազմիկ զոհաբերեց: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի տեղոր և ատելություն էր տիրում Մեքսիկայի հնդկացի ցեղերի շրջանում այն ժամանակ, երբ այնտեղ եկան իսպանացիները:

Պատմական փաստերը խոսում են այն մասին, որ ացտեկները միայն XIV դարի սկզբին սկսեցին մասսայական մարդկային զոհաբերությունը, այսինքն այն ժամանակաշրջանում, երբ արդեն քայքայվեց ցեղային համայնքը և բաժնեկալվածքային թագավորի գլխավորությամբ առաջացավ կառավարող ռազմիկների խավը: Անկասկած, նրանք կիրառում էին վայրենություն ժամանակաշրջանի ծեսերը, որպեսզի դրանք իրրև տեղորի զործիք օգտագործեն իրենց արտոնությունները և ժողովրդից յուրացված բարիքը պաշտպանելու համար:

Յուրաքանչյուր ոք, ով համարձակվում էր բողոքել ռազմիկների արտոնությունների դեմ, մեռնում էր պատերազմի աստծու զոհասեղանի վրա: Քրմերի արտաքին տեսքն իսկ մարդկանց կարող էր զրկել դիմադրելու ցանկությունից: Սև կամ ծիրանի հագած, կարմիր կամ սև ներկով նախշված, զոհերի արյունով ծեփված երկար զզուզ մազերով, նրանք մարդկային զգացմունքներից զուրկ գիշատիչ դևերի էին նմանվում:

Կոնկիստադորների հաղորդումներից մենք գիտենք, որ Չուլուպյում և Տենոչտիտլանում տեղի ունեցող կրոնական տոնախմբություններին զրև-

խավորապես մասնակցում էին ազնվական տոհմերի անդամները և, որ ժողովուրդը իր աստվածների կամ տաճարների պղծմանը անտարբեր, նույնիսկ հուլորեն էր վերաբերվում: Հետևաբար, անհիմն չի լինի, եթե ասենք, որ ացտեկների կրոնը բացառապես ացտեկ ազնվատոհմիկների կրոնն էր:

Ժողովրդական զանգվածների բնավորությունը բոլորովին չէր համապատասխանում արյունառուշտ կրոնական պաշտամունքին: Միջին հնդկացին, որ ցեղին էլ որ նա պատկաներ, աչքի էր ընկնում հյուրասիրություն, բարեհոգություն և մրջյունի աշխատասիրությամբ: Հափըշտակվածությամբ և նույնիսկ անհոգությամբ նա անձնատուր էր լինում կյանքի բոլոր հաճույքներին: Նա սիրում էր խոնվել փողոցներում և շուկայում, հաճույքով մասնակցում էր խաղերին, զբոսանքներին, կուեկտիվ պարերին, հրապուրված հետևում էր թափառական դերասաններին, ձեռնածուներին և լարախաղացներին, սիրում էր խաղաղ, գունագեղ և բազմամարդ կրոնական ծեսերը, որոնց ժամանակ երգի ուղեկցությամբ աստծուն նվիրաբերում էին ծաղիկներ և մրգեր:

Հնդկացիները ամենից շատ ծաղիկներ էին սիրում: Մեքսիկայում մինչև այսօր էլ պահպանվել է սրտառուչ սերը ծաղիկների նկատմամբ: Բոլոր այն քաղաքները, որոնցով անցնում էին կոնկիստադորները, բառացիորեն թաղված էին ծաղիկների մեջ: Ոչ միայն կղզիները, նավակները, փողոցները և հրապարակներն էին լցված ծաղիկներով, այլ նույնիսկ տների հարթ կտուրներից անցորդների գլխավերևում դրասանգներ էին կախված:

Որտեղ որ հայտնվում էին իսպանացիները, ամենուրեք բնակչությունը նրանց դրասանգներով և մեծ ծաղիկներով էր դիմավորում: Եվ նրանք դա անում էին հաճույքով, կարծես թե արտահայտելով ապրելու իրենց բերկրանքը:

Հնդկացիները սիրում էին ամեն տեսակի սպորտային մրցումներ: Դրանց մեջ առաջին տեղն էր զբավում զնդակախաղը, որի համար ամեն քաղաք ուներ իր մարզադաշտը: Խաղացողների խնդիրն էր ուտինե գրնդակը (այնտեղ արդեն կաուչուկը հայտնի էր) նետել պատին հորիզոնական դիրքով ամրացրած օղի միջով:

Որոշ հմուտ խաղացողներ, իսպանական ցլամարտիկների նման, դառնում էին համընդհանուր սիրով շրջապատված հերոսներ:

Չնայած անհոգ բնավորությանը, հնդկացիները անհրաժեշտության դեպքում դրսևորում էին մահվան նկատմամբ արհամարհանքի հասնող արիություն: Նրանք խիզախորեն մարտնչում էին եկվորների դեմ, չնայած վերջինները նրանց համար գրեթե գերբնական էակներ էին, ինչպես նաև ձիերը, որոնց ոչնչացնում էին մահակներով, հոծ բազմությամբ հարձակվում էին հրաշունչ թնդանոթների վրա:

Հնդկացի ժողովուրդը գոտեմարտից անաղարտ պատվով դուրս եկավ: Նրան կործանման անդունդը գցեց օլիգարխների և քրմերի վայրենացած, տգետ և միանգամայն անպիտան փոքրաթիվ խավը, որոնց վարքագիծը վտանգի պահին դավաճանության էր հավասար:

Կույր գիտնականը հայտնագործում է կործանված քաղաքակրթությունը

Իսպանական նվաճումների ժամանակաշրջանում Մեքսիկայի պալատներում և տաճարներում պատմական բազմաթիվ աղբյուրներ էին պահվում, որտեղ քրմերը գրի էին առել ոչ միայն ացտեկների, այլ նաև հին հնդկացի ժողովուրդներ մայաների, տոլտեկների և միչտեկների պատմությունը: Նրանք այն գրում էին արտասովոր և պաճուճազարդ գրերով գանազան նյութերի՝ բամբակյա քաթանի, փափուկ մշակված կաշվի, բայց ավելի հաճախ՝ ազավայից պատրաստած թղթի վրա, որը հիշեցնում է եգիպտական պապիրուսը:

Հնդկացիների անհասկանալի հիերոգլիֆները սնահավատ վախ էին ներշնչում իսպանացիներին: Նրանք դա համարում էին դժբախտություն բերող սատանայական գրեր: Ուստի ֆանատիկոսի մոլեռանդությամբ փնտրում և ոչնչացնում էին դրանք, շմտածելով այն մասին, որ այդ փաստաթղթերի մեծ մասը, գունավոր նկար զարդումների շնորհիվ, հնագույն արվեստի իսկական հուշարձաններ էին:

Ամբողջ Մեքսիկայով մեկ բոցավառվում էին խարույկներ, որոնց մեջ այրվում էին մեկուսի վայրերից հավաքած հիշատակարաններ և ժամանակագրություններ՝ նվաճված երկրի մասին գիտելիքների անսպառ գանձերը: Բարեպաշտական այդ մոլեռանդությունից փրկված նյութերը կարող են սոսկ խախուտ հիմք ծառայել այդ դժբախտ, իր զարգացման ընթացքում կոպտորեն ընդհատված քաղաքակրթության վերստեղծման համար:

Համընդհանուր հրադատության առաջին ազդանշանը տվեց Մեքսիկայի առաջին եպիսկոպոս դոն Խուան Սամառագան, իսկ նրա համար օրինակ հանդիսացավ Հիմենես արքեպիսկոպոսը, որը դրանից քսան տարի առաջ Իսպանիայում ոչնչացրեց մավրիտանական մշակույթի երբևմնի հոյակապ ձեռագրերը:

Սամառագայի օրինակին հետևեցին մյուսները: Այսպես, օրինակ, նահանգապետ դոն Լորենցո Սավալան ավերեց Տենոչտիտլանի ացտեկյան բոլոր արխիվները, իսկ հավաքած ձեռագրերը որպես փաթեթավորման թուղթ առևտրականներին վաճառեց:

Իսպանացիները ճիշտ նույն ձևով վարվեցին հնդկացիների ճար-

տարապետական հուշարձանների հետ. դրանք այնպիսի մուլեգնությամբ ոչնչացրին, որ նվաճելուց հինգ տարի հետո ացտեկների մայրաքաղաքի հետքն անգամ չմնաց: Ավերված տաճարների, պալատների և արձանների բեկորները լիճը և ջրանցքները լցվեցին: Քաղաքը շատով դադարեց «Արևմուտքի Վենետիկը» լինելուց, ինչպես նրան իսպանացի առաջին եկվորներն էին անվանում: Չփրկվեցին նույնիսկ հզոր բուրգերը: Դրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ, պատերազմի աստծո մեծ բուրգը, հողին հավասարեցրին, մյուսները՝ մարդկանց կողմից լքված, հողմահարվում էին, կորցնում իրենց ձևերը, բուսականությամբ ծածկվում և դառնում բուլբուլ բլուրներ, որոնք ոչնչով չէին հիշեցնում նախկին հսկայական շինությունները:

Այստեղ հավասարապես մեղք ունեն նվաճողների և կրոնական մուլեռանդությունը, և ուզմավարը պահպանել ցանկացող քաղաքական նենգությունը: Հնդկացիներին հողից զրկեցին և քշեցին պլանտացիաներն ու հանքերը ստրկական աշխատանքի, ուստի անհրաժեշտ էր երկրի երեսից շնչել այն ամենը, ինչը կարող էր նրանց նախկին մեծությունը հիշեցնել: Երբ XVIII դարի կեսերին Չեռապուլտեկում Մոնթեսումայի բարձրաքանդակով սալ գտնվեց, մեքսիկական իշխանությունները հրամայեցին անմիջապես և գաղտնի կտոր-կտոր անել այն և թաղել մեկուսի վայրում:

Հաջուր տարի էջ չէր անցել, երբ հնդկացի ժողովուրդների մշակույթը լրիվ մոռացվեց: Հնդկացիական հիերոգլիֆները կարգալու հմտությունը բացառապես վերացավ: Երեք հարյուր տարվա ընթացքում պատմաբանները և հնագետները անօրինակ անտաքբեքությամբ էին վերաբերվում անհետացած, շատ հարուստ և ինքնօրինակ այդ քաղաքակրթություններին: Նրանց մասին ազոտ հիշողություններ էին պահպանվել միայն հնդկացիների խուլ պուրակներում, որտեղ շշուկով իբար պատմում էին հին աստվածների և քրմերի, Մոնթեսումայի, ինչպես նաև կոնկիստադորների դեմ մղված հերոսական սլայքաքի մասին:

Ափսոսանքի արժանի այդ վիճակի մեջ բեկում մտցրեց Վիլյամ Հայկլինգ Պրեսկոտը՝ 1843 թվականին Նյու Յորքում հրատարակված «Մեքսիկայի նվաճումը» աշխատության հեղինակը: Մի քանի հարյուր էջ հոծ տեքստ ունեցող այդ գիրքը անմիջապես մեծ մասսայականություն ձեռք բերեց և այժմ համաշխարհային դասական գրականության շարքն է դասվում:

Ինչո՞վ բացատրել այդ արտակարգ հաջողությունը: Նախ և առաջ նրանով, որ հեղինակը արտասովոր մանրակրկիտությամբ նրա էջերում հավաքել է Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդների մասին այն բոլոր տեղեկությունները, որոնք հնարավոր էր գտնել գրադարաններում և արխիվներում: Դա բոլորովին անհայտ, զղալի շափով սենսացիոն նյութ էր

նույնիսկ մասնագետների համար: Մարգկուֆյունը զարմանքով իմացավ մոռացութեան հորձանուտում թաղված այդ աշխատասեփների մասին:

Ընդամին հեղինակը կրակոտ խառնվածքով և հարուստ երևակայությամբ տաղանգավոր գրող էր: «Մեքսիկայի նվաճումը» առաջինից մինչև վերջին էջը կարդացվում է մի շնչով, փնչպես արկածային վեպ: Հափշտակիչ շարադրանքից մեր աչքի առջև կենդանի հանում են Կորտեսը, Մոնթեսուման և նրանց շրջապատը, լարված հետևում ենք ճակատամարտերի ընթացքին, տեսնում ենք գունագեղ, աշխույժ քաղաքները և նրանց բնակիչներին, ծանոթանում ենք հնդկացիների սովորություններին, կրոնին, սլատմութեանը, մի խոսքով՝ հայացքով ընդգրկում ենք վիպերգական թափով նկարագրված, մեզ համար արտասովոր աշխարհի տպավորիչ համայնապատկերը:

Այդ գրքում նոր էր նաև վերաբերմունքը հնդկացիների նկատմամբ: Հեղինակը համակրանքով է նկարագրում հնդկացիների քաղաքակրթության մեծ նվաճումները և նրանց հերոսությունը նվաճողների դեմ մղած պայքարում, թեև աչք չի փակում նրանց թուլությունների և կատարած սխալների վրա: Ինչ վերաբերում է իսպանացիներին, ապա հեղինակը անողորմաբար պատռում է կաթոլիկ միսիոներների անշահախնդրության կեղծավոր դիմակը, ցույց է տալիս կրոնի քողի տակ թաքնված դաժանությունը և ազահությունը, կոնկիսաադորների մղած ամբողջ պատերազմը պատկերում է որպես հանցագործությունների, ուխտագրծության և ստոր մեքենայությունների մի շարան, շնայած չի ժխտում նաև Կորտեսի մեծ ընդունակությունները և մարտի դաշտում նրա խիզախությունը:

Իսկ ո՞վ էր այդ Հայկլինգ Պրեսկոտը: Նյու Յորքի շատ բնակիչների զարմանք պատեց, երբ իմացան նրա կյանքի մանրամասնությունները:

Այդ մոտումենտալ աշխատության հեղինակը ապրում էր Մանհեթենի կողմնային փողոցներից մեկում գտնվող մի համեատ տանը: Մթնեցրած սենյակում լրագրողներին ընդունեց քառասունյոթ տարեկան համարյա կույր մի մարդ:

Պրեսկոտը հաճույքով պատմեց իր կյանքը: Նա ծնվել է 1796 թվականին, իրավաբանական կրթություն է ստացել Հարվարդի համալսարանում, իսկ հետո աշխատել հոր փաստաբանական գրասենյակում:

Դեռևս սովորելու ժամանակ ընկերներից մեկը հացի կտորով խփել էր նրա աչքին: Դեպքը ճակատագրական հետևանք ունեցավ: Որոշ ժամանակ հետո Պրեսկոտի մի աչքը կուրացավ, հետզհետե դադարեց տեսնել նաև երկրորդը: Դա ստիպեց նրան թողնել փաստաբանի մասնագիտությունը և Եվրոպա մեկնել, որտեղ հույս ուներ օգնություն ստանալ տեղի մասնագետներից:

Բուժումն արդյունք չտվեց, և Պրեսկոտը ցավով համոզվեց, որ ինքը ամբողջ կյանքում կույր կմնա: Սակայն հոգեպես նա չէր ընկճվում: Մխիթարական էին երկու հանգամանք. ֆինանսապես նա անկախ էր և կարող

էր կյանքում այլ ասպարեզ ընտրել: Նա շատ էր սիրում պատմութիւնը և որոշեց իրեն նվիրել հետազոտութիւններ կատարելուն և պատմական աշխատութիւններ գրելուն:

Պրեսկոտը օգտւում էր կույրերի գրելու ապարատից և տարիներ շարունակ դուրս չէր գալիս իր մթնեցրած սենյակից: Նա քարտուղարուհի վարձեց, որը բարձրաձայն գրքեր և պատմական փաստաթղթեր էր կարդում նրա համար: Աճող կուրութեան հետևանքով նա բացառիկ հիշողութիւն մշակեց, որի վրա կարող էր վստահորեն հիմնվել ստեղծագործական աշխատանքում: Սկզբում նա գրեց «Ֆերդինանդի և Իզաբելլայի թագավորութեան պատմութիւնը», հետո որոշ ժամանակ զբաղվեց Մուլիերի կենսագրութեամբ, բայց այն թողեց, հենց որ հանդիպեց Կորտեսի կողմից Մեքսիկայի նվաճման հակիրճ հուշադրութեանը:

Նրա գլխում միտք ծագեց, որ դեռևս չի գրվել Մեքսիկայի գիտական պատմութիւնը և ինքը կարող է զբաղվել այդ գործով: Պարզվեց, որ դա շատ դժվար գործ է: Սկզբնաղբյուրները ցրված էին Իսպանիայի, Իտալիայի, Անգլիայի և Ֆրանսիայի գրադարաններում: Այնտեղ մեկնելու մասին Պրեսկոտը երազել անգամ չէր կարող: Սկզբնաղբյուրները նա կարող էր միայն նամակագրութեամբ ստանալ, որոնումների և պատճենահանումների վրա զգալի միջոցներ ծախսելով: Չնայած դրան, մանրակրկիտ և համբերատար որոնումների շնորհիվ նրան հաջողվեց հավաքել ութ հազար էջ ամենաբազմապիսի փաստաթղթեր, որոնք հիմք ծառայեցին նրա հոյակապ աշխատութեան համար:

Այդ անղբյուրները կարելի է երկու խմբի բաժանել. չնայած լայնորեն կազմակերպված ոչնչացմանը, իրենց՝ ացտեկների մասնակիորեն պահպանված նյութերը և Մեքսիկայում եղած իսպանացիների գրառումները: Առաջին խմբին են պատկանում լորդ Կինգսբորոյի հավաքածուն և այսպես կոչված երեք «օրենսգրքերը»: Կարծես, դրանց միջև է գտնվում հնդկացիների պատմութիւնը, որը իսպաներեն գրել է Տեսկոտլի թագավորի հետնորդ արքայազն Իկատլիսոչիտլը:

Երկրորդ խմբից նախ և առաջ պետք է հիշել Ֆրանցիսկյան Բեռնարդ գե Սախագենին, որը ապրել է Մեքսիկայում Կորտեսի հետ միաժամանակ և թողել պատմական արժեքավոր աշխատութիւն:

Տեղեկութիւնների առատ աղբյուր է մեքսիկական մեկ այլ միսիոներ Տորկվեմադայի աշխատութիւնը, ինչպես նաև Կորտեսի մարտական ընկեր, մեր հին ծանոթ Բեռնալ Դիասի «Նոր Իսպանայի նվաճման պատմութիւնը» վերնագրով նոթագրութիւնը:

Բացի «Մեքսիկայի նվաճումից», Պրեսկոտը գրել է մեկ այլ մոնումենտալ աշխատութիւն՝ «Պերուի նվաճման պատմութիւնը», որտեղ նկարագրել է Պերուի ինկերի ջախջախումը իսպանացի կոնկիստադոր Պիսարոյի կողմից:

Այդպիսով կույր մարդը, իր առանձնասենյակի շորս պատերի ներ-

սում փակված, միայն հին փաստաթղթերի հիման վրա մեզ համար կենդանացրեց այն ժողովուրդների քաղաքակրթությունը, որոնց մասին համարյա երեք հարյուր տարի ոչ ոք ոչինչ չգիտեր:

Շատ ջուր հոսեց, մինչև որ այդ գործերով զբաղվեցին հնագետները: Իսկ չէ որ այն վայրը, որտեղ ստեղծվեց ժամանակակից Մեխիկոն, կոթողների, արձանների և արձանագրություններով սալերի մի խառնակույտ էր: Քլունգի յուրաքանչյուր հարված հողի մակերես էր հանում հնագիտական ամենատարբեր հուշարձաններ, որոնք վկայում էին ացտեկների մշակույթի հարստության մասին:

Սակայն դա չպետք է վերագրել միայն իսպանական նվաճողների անփութությանը և տգիտությանը: Այստեղ, ինչպես մենք արդեն ասել ենք, միանգամայն որոշակի քաղաքական տենդենց էր գործում: Մյուս փաստերի հետ միասին այդ է ապացուցում հանրահայտ օրացուցային սալի ճակատագիրը: Գրեթե չորս մետր տրամագիծ և քսան տոննա քաշ ունեցող այդ հսկայական սկավառակը ծիրանաքարի մի կտորից էր քանդակված: Նրա վրա փորագրված էր արև աստծու բարձրաքանդակը՝ շրջապատված սիմվոլիկ պատկերներով և հիերոգլիֆային արձանագրություններով:

Քարի այդ վիթխարի զանգվածը ացտեկները բերել էին շատ հեռվից և 1509 թվականին դրել էին Տենոչտիտլանում՝ արևի աստծու տաճաբի առջև: Կոնկիստադորները այն վայր նետեցին բուրգի վրայից և թաղեցին ացտեկների շինությունների փլատակների տակ: Առասպելական «Արևի քարը» գտնվեց 1560 թվականին, երբ փորում էին Մեխիկոյի գլխավոր հրապարակը:

Եպիսկոպոսը, երկյուղ կրելով, որ հայտնաբերումը կբորբոքի հնդկացիների հայրենասիրական զգացմունքները, հրամայեց այն կրկին թաղել հենց նույն տեղում: Քարն այնտեղ մնաց՝ ևս երկու հարյուր տարուց ավելի: Միայն 1790 թվականին բանվորները այն երկրորդ անգամ հանեցին: Սկզբում քարը որմնաշարեցին կաթոլիկական եկեղեցու ճակատին, բայց հետո, 1885 թվականին, այնտեղից հանեցին և դրեցին Մեքսիկայի Ազգային թանգարանում, որտեղ այդ ժամանակից ի վեր համարվում է ացտեկների մշակույթի ամենապատկառելի ցուցանմուշներից մեկը:

Նույնանման ճակատագիր վիճակվեց նաև Բեռնալ Դիասի հուշերում նկարագրված պատերազմի աստծու հրեշավոր արձանին: Իսպանացիները քաջ գիտեին, որ հնագիտական այդ արժեքավոր հուշարձանը թաղված է Մեխիկոյի գլխավոր հրապարակում գտնվող փլատակների տակ: Երբ 1790 թվականին այն պատահաբար պեղեցին, իսպանական իշխանությունները հրամայեցին անմիջապես ետ նետել փոսը և

ծածկել: Միայն 1821 թվականին որձանը վերջնականապես հանեցին և գրեցին թանգարանում: Այդ ժամանակվանից ացտեկների կրոնական պաշտամունքի սարսափելի հուշարձաններից մեկը, պատերազմի աստծո արձանը, որի ոտքերի մոտ մարգկային արյան փետեր են հոսել, մատչելի դարձավ համընդհանուր գիտման համար:

Այնտեղ է գտնվում նաև փլատակներից հանված պատերազմի աստծո զոհաքարը, որի վրա ամեն տարի հազարավոր մարդիկ էին սպանվում: Դա մեկ մետր քաբձրություն և համարյա երեք մետր տրամագիծ ունեցող քարի մի խոշոր զանգված է: Կողմնային նփստին հաղթանակող աստվածների շուրջպարբ պատկերող հարթաքանդակ կա, վերևում՝ թասանման փոս և փողրակ արյան հոսքի համար:

1800 թվականին տաճարի մոտ ջրհոր փորելիս հանկարծ հայտնարեցին մի մեծ բուրգի անկյուններից մեկը, որը մինչ այդ չէր ոչնչացված էր համարվում: Գեղեցիկ հարթաքանդակները և շինությունների վիճակարկությունը վկայում են, որ կոնկրետորների նկարագրությունները չափազանցված չէին: Գտնվել են նաև սանգուղքների և օձի մեծ գլխով վերջավորվող բազրիքի մնացորդները:

Այդ ժամանակից չի եղել մի օր, որ շկատարվեր ացտեկների մասին մեր գիտելիքները քաղմապատկող հնագիտական ոլեէ հայտնագործում: Դա Մեքսիկայի այնպիսի շնորհալի հնագետների համառոտեզությունն է, ինչպիսիք են Խոսե Ռեյզեզես Վերտեսը, Իգնացիո Մարկինը, Ալֆոնսո Կասոն, էգուարդո ձոգուերան և մյուսները: Գիտական նորագույն մեթոդներ կիրառելով, այդ գիտնականները հիանալի արդյունքների հասան: Այժմ արդեն կարելի է այցելել ացտեկական Չոլուլա, Տեսկոկո և Տլասկալա քաղաքների պեղված և կարգավորված փալատակաները:

Չնայած դրան, մեքսիկական հնագիտությունը ամենևին էլ չի ասել իր վերջին խոսքը: Մենք իրավունք ունենք սպասելու քաղում նոր, նույնիսկ սենսացիոն հայտնագործությունների, մասնավորապես պետք է հիշել, որ մինչև այժմ չեն գտնվել Մոնթեսումայի քանձերը: Դրանք գտնելը, ինչպես կապող է թվալ առաջին հայացքից, այնքան էլ անիրական գործ չէ: Այդ նն վկայում Մեքսիկայի աարքեր անկշամներում գտնված մաքուր ոսկուց սլատրաստած բազմաթիվ ցուցանմուշները: 1932 թվականին դուրսոր Ալֆոնսո Կասոն կրկնապատկեց հայտնաբերված ացտեկյան թանկարժեք իրերի քանակը, երբ բացեց բաբձրաստիճան մեծատոհմիկի անվնաս մնացած գերեզմանը: Սարկոֆագի մեջ կային ոսկե մանյակներ, ականջօղեր, մատանիներ և ապարոշներ, որոնք վկայում են ացտեկների ոսկերչական արվեստի բաբձր մակարդակի մասին:

Մայասերով աշխարհի կործանմանը

Մեխիկոյի հովտում դեկտեմբերը ծաղիկների ամիս է: Բնությունը դառնում է արևի տակ շողշողացող վառվառն, հյութալի գույների մի խկտեղան հրաշառութուն:

Ուր էք որ նայես, ծառերը հուրհրում են ամենատարբեր գույների և երանգների ծաղիկներով: Դաշտերը և հատկապես ավազտա բլրակները ծածկվում են սպիտակ, դեղին, ոսկեփայլ, վարդագույն և մուգ կարմիր գույներով ծաղիկող կամուսանների խայտաբղետ գորգերով:

Թվում է, թե այդ պերճաշուք գեղեցկության մեջ մարդիկ պետք է միայն ուրախանան: Մակայն 1507 թվականի դեկտեմբեր ամսի վերջին օրերին ուրախութուն չկար: Մեխիկոյի հովտի բնակիչները, կարծես, հանկարծ կուրացել էին և չէին տեսնում իրենց շրջապատող գեղեցկությունը և շքեղությունը: Տներք ողբի ու լացով ժայեր էին լսվում: Տնայիք աստվածների արձանիկները առջևից անհետացել էին անմար կրակները: Մարդկանց համակիչ էր ճնշող վախ և ոչնչացման մոլեգին տենչ: Ծրանք եղունգներով ճանկատում էին իրենց մաշկը, բզկտում հագուստը, մուտքի մոտ էին քարշ տալիս ամբողջ կահարասին, որսևսղի դրանք ջարդուհշուր անեն, բնկորների կույտի վերածեն:

Վշտի ու սգո այդ օրերին անհետանում էին երեխաները և հղի կանայք, կամանց փակում էին նկոզններում, աբ շար. ողիները նրանց վարդի գաղանձը շղարձեն, որքան էլ որ երեխաները լաց էին լինում հոգնածությանից, նրանց թույլ չէին տալիս քնել, քանի որ քնի մեջ կարող էին առնետներով փոխակերպվել...

Բողաքների ու գյուղերի վողոցներով թափատում էին ոչառառաքված շորերով, արյունոտված, համարյա խելազարված մարդկանց բազմություններ: Ամենուրեք շարագույժ լուսնյամբ ձգվում էին քրմերի մուսյլ սև ու կարմիր թափորները: Բուրգերի գազաթների մարում էին սուրբ կրակները, որոնք սովորաբար վառ էին պահում քրմուհիները:

Այդպիսի մոլեգին համընդհանուր սուգ էր պատում անցակներին յուրաքանչյուր հիսուներկու տարին մեկ անգամ, քանի որ նրանք սրբությամբ հավատում էին, որ այդ հիսուներկուամյա շրջաններից մեկի վերջում աշխարհը կործանվելու է: Իսկ քանի որ քրմերը չէին կարող կանխագուշակել, թե հատկապես որ ցիկլը մարդկանց համընդհանուր կործանում կբերի, ացտեղները յուրաքանչյուր անգամ վատթարագույնին էին սպասում:

1507 թվականի վերջին օրերին քրմերի թափորը արևամուտին բարձրացավ Մեխիկոյի հովտում վեր հանած հանդած հրաբխի գազաթը: Բողորը, ով կարող էր, հավաքվել էին լեռան լանջերին, տների կտուրներին և բուրգերի սանդղավանդներին, սարսափահար սպասելով աղետին:

Քրմերը խարույկի համար խոփվ հավաքեցին և սկսեցին հետևել

երկնքին: Հենց որ Բագումբի աստղերը անցան զենիթով, իսկ դա նշանակում էր, որ հիսուներկուամյա ցիկլը բարեհաջող ավարտվեց, քրմերը սպանված ռազմագերու կրծքի վրա կրակ հանեցին և խարույկ վառեցին: Բոցը տեսնելով, մարդկանց բազմությունները ուրախությունից սկսեցին ճշալ: Երկրի բոլոր կողմերից ուղարկված սուրհանդակները աբեթ վառեցին և այդ սուրբ կրակը ձեռքներում բռնած՝ իրենց քաղաքները և գյուղերը վազեցին: Տներում և բուրգերի վրա նորից անմար կրակներ բոցավառվեցին:

Սգից հետո վրա հասան տասներեք բերկրալի օրերը՝ ացտեկների տոնախմբության ժամանակը: Մարդիկ կարգի էին բերում, սպիտակեցնում տները, նոր իրեր էին ձեռք բերում, հետո տոնականորեն հագնվում և ծաղկաշղթաներով զարդարվում: Սկսվում էր համընդհանուր խրախճանքը: Պարուհիները և պարողները ֆանտաստիկ հագուստներով և դիցաբանական դիմակներով պարում էին փողոցներում: Հրապարակներում գիշեր ու ցերեկ սրինգների, թմբուկների, խեցիների և լարային գործիքների նվագակցությամբ շարունակվում էին խաղերը, զրոսահանդեսները և սյարերը: Մեղեդայնությամբ աղքատ, բայց հատուկ ութմով երաժշտությունը հնչում էր անհանգիստ, ինչպես որ անհանգիստ տրոփում էր այդ տաղանդավոր և զարմանալի ժողովրդի սիրտը:

1507 թվականի տոնախմբությունները վերջինն էին: Տասներկու տարի հետո եկան իսպանացիները և ոչնչացրին ացտեկների մշակույթը:

Սակայն տարօրինակ սովորույթը որոշ չափով օգնեց հնագետներին: Ցանկանալով աստվածներին շնորհակալություն հայտնել իրենց դարձյալ հիսուներկու տարի պարզեցնելու համար, ացտեկները սովորություն ունեին կրկին երեսապատելով ընդլայնել բուրգերը: Ուստի բավական էր պարզել, թե քանի շերտ ունի բուրգը, որպեսզի որոշվեր նրա տարիքը և նույնիսկ կառուցման տարեթիվը:

Դրանում մենք կարող ենք համոզվել Տանոյուկի բուրգի օրինակով: Բեռնալ Դիասը հիշատակել էր այն իր նոթերում, բայց հետագա շորս հարյուր տարիների ընթացքում ոչ մի տեղեկություն չկար այդ բուրգի մասին: Բուրգը գտան միայն 1925 թվականին, մի բլրի տակ թաղված, որը բնական էին համարում: Կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ նա 1299, 1351, 1403, 1455 և 1507 թվականներին իրար վրա շարված քարե վեց շերտից է կազմված: Այդ հետազոտությունների շնորհիվ պարզվել է ոչ միայն նրա տարիքը, այլև ապացուցվել է հետաքրքրական մի փաստ, որ այն գոյություն է ունեցել մինչև Մեխիկոյի հովտում ացտեկների հայտնվելը, հետևաբար կառուցվել է նրանց նախորդների՝ տոլտեկների կողմից, որոնք հետագայում լքել են այդ վայրերը:

Աշխարհից կտրված մայրցամաքում ինքնուրույն զարգանալով, ացտեկների մշակույթը չէր կարող օգտվել մյուս ժողովուրդների փորձից և լրիվ սեփական ուժերի հույսին էր թողնվել: Այստեղից էլ նրա զար-

զացման տարօրինակ և անբացատրելի թվացող անհամաչափությունը: Բարձր զարգացած բնագավառների հետ միասին, մենք այնտեղ գտնում ենք ապշեցուցիչ հետամնացության և քարացածության արտահայտություններ:

Ացտեկները հիանալի շինարարներ էին, մեծ վարպետության էին հասել քանդակագործության, ջուլհակագործության և ոսկերչության մեջ (չնայած շատ բան էին ժառանգել իրենց նախորդներ մայաներից և տուտեկներից), ունեին սեփական գիր և աստղագիտական ճշգրիտ դիտումների վրա հիմնված օրացույց, մի խոսքով, ստեղծել էին յուրօրինակ և պատկառելի մշակույթ, որը վկայում է նրանց մտավոր բարձր զարգացման և ստեղծագործական ընդունակությունների մասին:

Առավել ևս զարմանալի է, որ ացտեկները (չխոսելով արդեն նրանց կրոնական ծիսակարգի վայրենության մասին) չէին ընտելացրել ոչ մի բեռնակիր կենդանի, չէին հայտնագործել փոխադրական անիվը և բրուտի դազգահը: Նրանց մետաղագործությունը մինչև վերջին բոպեն էլ բարուրում մնաց. նրանք չհայտնաբերեցին բրոնզի համաձուլվածքը, իսկ պղինձը կոփում էին միայն սառը վիճակում: Քանի որ նրանք գաղափար չունեին նաև երկաթի մասին, ուստի աշխատանքային գործիքները և զենքերը շատ պարզունակ էին. դաշույնները օբսիդիանից էին պատրաստում, ասեղները՝ ագավայի փշից, իսկ նետերի և նիզակների ծայրակալները՝ ոսկորներից կամ կայծքարից:

Շատ յուրօրինակ էր նրանց պատկերացումը արժեքների մասին: Ամենից՝ բարձր էր գնահատվում հասպիսը, հետո գալիս էր պղինձը, այնուհետև արծաթը և միայն ամենավերջին տեղում ոսկին էր գտնվում: Պղնձից կոփում էին փոքրիկ օղեր, որոնք օգտագործում էին որպես մետաղադրամ: Մեքսիկայում արծաթը զգալիորեն ավելի քիչ էր հանդիպում, քան ոսկին, այն բացառապես դեկորատիվ և ոսկերչական իրեր պատրաստելու համար էին օգտագործում:

Հասպիսը կոնկիստադորների մոտ մշտապես զայրույթ էր առաջանում: Ամեն անգամ, երբ նրանք ացտեկների տեղական իշխանություններից պահանջում էին իրենց հանձնել թանկարժեք իրերը, նրանց համար հասպիսից պատրաստած զարդեր էին բերում, և իսպանացիները դա համարում էին ռազմատուգանքի վճարումից խուսափելու փորձ: Հետագայում նրանք միամիտ հնդկացիներին բացատրեցին, որ իսպանացիները համատարած տառապում են մի հիվանդությամբ, որի դեղամիջոցը ոսկին է, փաստարկ, որն ի դեպ ճշմարտությունից հեռու չէր, որովհետև անհագ ագահությունը իրոք նրանց հիվանդությունն էր:

Արժեքների մասին ացտեկների պատկերացումից առաջիններից մեկը գլուխ հանեց Բեռնալ Դիասը: Պաշարված Տենոչտիտլանից հեռանալուց առաջ իսպանացի զինվորներն այնպես էին բեռնավորված Մոնթեսումայի գանձարանից վերցրած ոսկով, որ ի վիճակի չէին ազատ շարժվել

մարտի և փախուստի ժամանակ, այնպես որ ի վերջո նրանք ստիպված էին իրենց ավարը դեն նետել: Միայն Դիասը իր գոտու տակ շորս փոքրիկ կտոր հասպիս էր դրել: Եվ երբ նրա ընկերները տլասկալանցիների մոտ հասան որպես աղքատ թափառաշրջիկներ, նա իր հասպիսով կարողացավ ձեռք բերել ամեն բան, նույնիսկ մեծ քանակութամբ ոսկի:

Երբ իսպանացիները առաջին անգամ հայտնվեցին Տենոչտիտլանում, նրանց ամենից շատ զարմացրին լճի վրա լողացող բանջարեղենի մարգերով կղզիները: Այնտեղ սպիտակ հագած գյուղացիներ էին աշխատում: Նրանք իրենց բերքը նավակներն էին բարձում կամ երկար ձողերի օգնությամբ կղզիները լաստերի նման տեղից-տեղ էին փոխադրում:

Ացտեկները այդ կղզիները շինամպաս էին անվանում: Դրանք ստեղծում էին այսպես. ջրիմուռներից, եղեգնից և ջրաշուշաններից միահյուսված հիմքի վրա լցնում էին լճի հատակից հանված տիղմի շերտ և այդպիսի լաստի վրա բանջարեղեն և մրգեր էին աճեցնում: Որպեսզի շինամպասը արգավանդ մնար, ամեն տարի անհրաժեշտ էր տիղմի նոր շերտ ավելացնել, կղզիներն ավելի խորն էին ընկղմվում, մինչև որ իջնում էին հատակը, դառնալով արդեն ոչ թե լողացող, այլ սովորական կղզիներ: Փոքր կղզիներն իրար էին միանում, և ի վերջո առաջացավ մեծ կղզի, որի վրա կառուցվեց Տենոչտիտլան քաղաքը: Սակայն գյուղացիները նորանոր լողացող կղզիներ էին ստեղծում, և իսպանացիների հայտնվելու պահին այդ պրոցեսը դեռ շարունակվում էր:

Այդպիսի կղզիների ստեղծումը ացտեկների ստեղծագործական ունակութունների ամենահամոզիչ ապացույցն է: Նրանք Մեքսիկայում հայտնվեցին XIV դարի սկզբին որպես փոքրաթիվ բարբարոս ցեղ: Բնիկները նրանց քշեցին եղեգնով պատած երկու փոքրիկ բնական կղզիները: Այստեղ նրանց սով էր սպառնում, և մշակման համար պիտանի հողի կարիքը կյանքի ու մահվան հարց էր: Եվ այդ ժամանակ էր, որ նրանք սկսեցին ստեղծել լողացող կղզիներ: Բնակչության աճի հետ միասին այդպիսի կղզիների քանակն ավելանում էր, մինչև որ ի վերջո գոյացավ ացտեկների մետրոպոլիսի մեծ կղզին: Մեքսիկայի այժմյան Սոչիմիլկո և Չալո նահանգներում, որտեղ ացտեկները բանջարեղենը աճեցնում են պապենական եղանակով, լողացող կղզիները մինչև այժմ էլ գոյութուն ունեն:

Ացտեկների հիանալի նվաճումն էր նրանց գիրը, որին Կորտեսը ծանոթացավ արտակարգ և շատ պերճախոս պայմաններում: Դա տեղի ունեցավ Վերակրուսում, այսինքն՝ Յուկատանի թերակղզում ափ իջնելուց անմիջապես հետո: Տաբասկների պատվիրակության մեջ նա նկատեց մի հնդկացու, որը կտավի վրա ձողիկով փութաշանորեն մանրանկարներ էր նկարում, զարմանալի ճշգրտությամբ պատկերելով իսպանացիներին, նրանց հագուստը և հանդերձանքը, թնդանոթները, ձիերին, նույնիսկ մարդկանց կիսադեմքերը, բոլորը բնական գույներով:

Հիանալով վարպետորեն կատարված այդ աշխատանքով, Կորտեռը հարցրեց, թե ինչի համար են այդ նկարները: Տարասկների պատվիրակության ղեկավարը պատասխանեց, որ դա իրենց գիրն է, և հնդկացին հաշվետվություն է գրում Մոնթեսումային: Ացտեկ զբաղիրը խպանացիներին ուղեկցեց մինչև Տենոչտիտլան: Նրա հաշվետվությունների հատվածները մինչև այժմ էլ պահպանվում են Մեքսիկայի ազգային թանգարանում:

Մի զվարճալի դեպք պատկերացում է տալիս այն մասին, թե որքան ստույգ էին պատկերված խպանացիները այդ ղեկուցագրերի նկարներում: Հուլիոսի զգացումից, թե դիվանագիտական սիրալիությունից դրբաված, Մոնթեսուման իր երկրորդ պատվիրակության հետ ուղարկեց մի բարձրաստիճան պաշտոնյայի, որը զարմանալիորեն նման էր Կորտեսին: Կոնկիստադորները դա անմիջապես նկատեցին և նրան «մեքսիկական Կորտես» անվանեցին:

Ցավոք, ացտեկների գիրը կարդալու հմտությունը XVII դարում արդեն անհետացել էր: Այժմ, չնայած բոլոր ջանքերին, հնագետները կարող են կարդալ միայն թվերը և բարդ հաշվարկների օգնությամբ որոշում են շատ շինությունների կառուցման թվականը: Վերծանման դժվարությունը այն է, որ այդ գրի մեջ ամենաբազմապիսի տարրեր են խառնված: Որոշ նշաններ բուն առարկաների պատկերներն են, մյուսները նկարային հիերոգլիֆներ են: Մի քանիսը՝ օդ, ջուր, ցերեկ, գիշեր և նման այլ բաներ արտահայտողները, խորհրդանշաններ են (օրինակ, ջուրը ալիքաձև երկնագույն գիծ է): Վերացական հասկացողությունները պակերում էին գաղափարագիր հիերոգլիֆներով: Բացի դրանից, գոյություն ունեին նաև հնչյունական նշաններ, որոնք համոզիչ կերպով վկայում են այն մասին, որ ացտեկների գիրը իր զարգացման ընթացքում ի վերջո որոշակիորեն հակվում էր հնչյունակազմական բարձր ձևերին:

Ացտեկյան մշակույթի հպարտությունը, անշուշտ, կիրառական արվեստն էր: Նախորդ գլուխներում մենք արդեն ասել ենք թոշունների հազարավոր բազմագույն փետուրներով զարդարված վահանների և թիկնոցների մասին: Ընդհանուր առմամբ, խճանկարային արվեստում առաջնության դափնին ամբողջ աշխարհում պետք է ացտեկներին տալ: Մեքսիկայի թանգարաններում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում կան շատ ցուցանմուշներ, որոնք վկայում են ացտեկ արհեստավորների արտակարգ վարպետության, ճաշակի և նույնիսկ նրբին պաճուճագեղության մասին: Փիրուզից, մետաղներից, սաղափից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից պատրաստած խճանկարներով զարդարված անհամար առարկաների մեջ ամենամեծ համբավն ունի Նյու Յորքի Հնդկացիական մշակույթի թանգարանում գտնվող վահանը: Այդ վահանը պատված է փիրուզի տասնհինգ հազար կտորից բաղկացած ձևավոր բարդ նախշերով:

Խեցիներին, փայտին, ոսկրին և քարին պատրաստած քանդակները հավասարապես արտահայտում են ացտեկ տնայնագործների վարպետությունը, որոնց համար ոչ մի նյութ չափազանց փխրուն կամ չափազանց կարծր չէր: Թանգարաններում կան լեռնային բյուրեղապակուց կերտված մարդկանց, կենդանիների և աստվածների բազմաթիվ ւորձաններ, որոնք շնայած իրենց փոքրությունը, վարպետորեն հղկված և լրիվ ավստրված ստեղծագործություններ են:

Սակայն ամենամեծ փառքը վայելում էին ացտեկ ոսկերիչները: Նրանք սառը եղանակով կոփում էին ամենաընտիր և բարդ ձևերի հազարավոր գեղարվեստական առարկաներ, ոսկով և արծաթով զարդարում էին աստվածների քարե արձանները, մի խոսքով, ստեղծել էին ապշեցուցիչ շքեղության ոսկերչական արվեստ, որը առասպելական է դարձել: Դժբախտաբար, այդ առարկաների մեծ մասը ացտեկների ապստամբության ժամանակ ոչնչացել են կամ խորտակված նավերի հետ սուզվել Մեքսիկական ծոցի հատակը: Սակայն մենք ունենք ամենից ավելի հեղինակավոր երկու գիտականների՝ Դյուրերի և Չելլինիի վկայությունները դրանց մասին:

Վերածննդի ժամանակաշրջանի գերմանացի նկարիչ Դյուրերը, 1520 թվականին տեսնելով Իսպանիայի թագավորին Կորտեսի ուղարկած առաջին ընծաները, անմիջական տպավորության տակ գրել է.

Կյանքում երբևէ այդպես սրտանց չէի ուրախացել: Այդ իրերի մեջ ես գեղարվեստական ապշեցուցիչ արժեքներ տեսա և հիանում էի հեռավոր երկրի մարդկանց նրբանշակ հնարամտությամբ:

Իտալացի հանճարեղ ոսկերիչ և քանդակագործ Բենվենուտո Չելլինին նույնպես խոսք չէր գտնում, որ արտահայտի իր հիացմունքը Կառլոս V-ի կողմից Հռոմի պապին ուղարկած ացտեկական քանդակների առթիվ:

Այդ բոլոր առարկաները, — գրում է նա, — անզնափառելի են: Կյանքում ես մի այլ բան չեմ տեսել, որն այդչափ ուրախացներ սիրոս: Արվեստի այս զարմանալի ստեղծագործությունները հարգանք են առաջացնում այդ օտար երկրների մարդկանց նուրբ հանճարի նկատմամբ:

Գիտության մեջ ացտեկները առանձին նվաճումներ չունեին: Նրանց մաթեմատիկական տարրական թվաբանական գործողություններից այն կողմ չէր անցնում, ընդ որում հիմքում ընկած էր քսաներորդական սիստեմը: Նրանց տարին տասնութ ամիս ուներ, յուրաքանչյուրը՝ քսան օր տևողությամբ, որը ի վերջո կազմում էր երեք հարյուր վաթսուն օր: Ուստի, որպեսզի օրացույցը համապատասխանի արեգակնային տարվան, նրանք յուրաքանչյուր տարուն հինգ ազատ օր էին ավելացնում, որոնց ժամա-

նակ շէին աշխատում: Բացի դրանից, յուրաքանչյուր շորս տարուց հետո ավելացնում էին ևս մեկ՝ նահանջ օր, որպեսզի օրացույցը վերջնակա- նապես համընկնի Արեգակի շուրջը Երկրի պտույտի ժամանակաշրջանին:

Բժշկությամբ միայն քրմերն էին զբաղվում, և այն գլխավորապես հանգում էր կախարդական հմայություններին: Սակայն որոշ հիվանդու- թյուններ բուժում էին խոտերով, մերսումով, թրջոցներով և շոգու լո- գանքներով: Կատարում էին նաև վիրահատություններ՝ կոտրվածքի բու- ժում, կեսարյան հատում և գանգի շաղափում:

Շատ հետաքրքիր է ացտեկների օրենսդրությունը: Այսպես, օրինակ, հարբեցողությունը նրանց մոտ ծանր հանցանք էր համարվում՝ և մահով էր պատժվում: Եթե ընտանիքի գլխավորը հարբում էր, ընտանիքի ան- դամները իրավունք ունեին գավազաններով սպանել նրան այնտեղ, որ- տեղ որ գտնում էին գիտակցությունը կորցրած վիճակում: Հարբելու աս- տիճանի խմելու իրավունք ունեին միայն այն տղամարդիկ, որոնց տա- րիքը արդեն յոթանասունից անց էր, իսկ մնացածները խմել կարող էին միայն կրոնական տոնակատարությունների ժամանակ:

Գողության, հատկապես դաշտից եգիպտացորեն գողանալու համար մահապատիժ (քարկոծում) կամ ցմահ ստրկություն էր սպառնում: Միայն ճամփորդներին թույլատրվում էր դաշտից մի քիչ եգիպտացորեն վերցնել քաղցը հագեցնելու համար: Մահապատիժ էր սպառնում նաև կախարդան- քով և անառակությամբ զբաղվելու համար: Զրպարտիչների շրթունքները և ականջները կտրում էին:

Այդ բարբարոսական, դաժան իրավական նորմերի հետ միասին գո- լություն ունեին նաև մարդասիրական նորմեր: Այսպես, օրինակ, ազատ տղամարդուց և ստրկուհուց ծնված երեխան նույնպես ազատ էր, և հայրը պարտավոր էր նրան որդեգրել: Փախած ստրուկը, եթե նրան հա- ջողվում էր թագավորի պալատում թաքնվել, ինքնաբերաբար ազատ մարդ էր համարվում:

Ամենաարժեքավոր ընծան, որ աշխարհը ստացավ եթե ոչ ացտեկ- ներից, ապա նրանց միջնորդությամբ Կենտրոնական Ամերիկայի հնդկա- ցիներից, գյուղատնտեսական այն բույսերն են, որոնց պտուղները մենք օգտագործում ենք, առանց իմանալու նրանց ծագման մասին: Բազմաթիվ բանջարեղենի և այլ բույսերի մեջ նաև պետք է նշել եգիպտացորենը, ծխախոտը, վանիլը, կակաոն, սեխը, անանասը, կանաչ ու կարմիր պղղ- պեղը և տարբեր տեսակի լոբիները:

Միայն գյուղատնտեսության բնագավառի այդ նվաճումներով արդեն ացտեկները մյուս հնդկացիների հետ միասին առհավետ արժանացել են աշխարհի ժողովուրդների երախտագիտությանը:

Ջուճգլիների կանաչ ծովում խորտակված Գավը

1836 թվականին մեքսիկացի գնդապետ Գարլինդոն, բանակի համար նորակոչիկներ հավաքելով, շրջում էր Յուկատանի և Կենտրոնական Ամերիկայի թշվառ գյուղականներով: Անկախությունը գրած իր գեկուցագրում նա հիշատակում է մի զարմանալի հայտնագործության մասին. անծայրածիր կուսական անտառների խորքում նրա առջև հանկարծ հայտնվեցին հարթաքանդակներով և բուռն աճած բուսականությամբ պատված առեղծվածային շատ հին փլատակներ:

Երեք տալի անց գեկուցագիրը անհայտ ուղիներով հայտնվեց Նյու Յորքում և ընկավ փաստաբան Ջոն Լյոյդ Ստեֆենսի ձեռքը: Խորհրդավոր շինությունների մասին հակիրճ հիշատակությունը շափազանց հուզեց նրան: Պետք է ասել, որ Ստեֆենսի մոլուցքը հնագիտությունը և անտիկ պատմությունն էր, որոնցով նա զբաղվում էր՝ անտեսելով փաստաբանությունը: Նա արդեն ճանապարհորդել էր Եգիպտոսում, Արաբիայում, Պաղեստինում, Հունաստանում և Թուրքիայում: Իր արկածների և ապրումների մասին նա երկու գիրք էր գրել, որոնք բավականին մեծ ճանաչում էին ձեռք բերել: Սակայն որևէ մեծ հայտնագործություն կատարելու նրա երազանքը մնում էր չիրականացած: Եվ հանկարծ՝ օ՛ հրաշք: Անհայտ գինվորականի գեկուցագրից նա տեղեկանում է, որ այդ մեծ հայտնագործությունը նրան սպասում է շատ մոտիկ, հարևան Մեքսիկայում:

Որոշումն ընդունվեց անմիջապես. նա կմեկնի այնտեղ և իր աչքով կտեսնի այն, ինչ հայտնաբերել է Գարլինդոն:

Արշավի նախապատրաստվելով, Ստեֆենսը աչքի անցկացրեց իրեն մատչելի պատմական բոլոր աշխատությունները և ճանապարհորդական հուշագրությունները, որպեսզի հնարավորին չափ շատ բան իմանա այն երկրի մասին, ուր մտադրվել էր մեկնել: Բայց այստեղ նա անսպասելի անհաջողության հանդիպեց: Բացի տաղտկալի դիտողություններից, նա որևէ բան չգտավ, որն ինչ-որ չափով իրեն օգներ: Մեքսիկայի, Յուկատանի և Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդների մասին պարզապես ոչ մի տեղեկություն գոյություն չուներ:

Իսկ չէ՞ որ նա շատ հեշտությամբ կարող էր իրեն անհրաժեշտ բոլոր տեղեկությունները ստանալ, եթե գիտենար, որ հենց նույն քաղաքում, համարյա իր կողքին ապրում էր ացտեկների, մայաների, տոլտեկների և ամերիկյան մայրցամաքի հնդկացիական մյուս ցեղերի այն ժամանակվա խոշորագույն և միակ գիտակ Վիլյամ Հայկլինգ Պրեսկոտը:

Մի որևէ ելակետ որոնելու ժամանակ Ստեֆենսը գրքերում հանդիպեց ոմն Ֆունենտեսի հաղորդմանը: Մեքսիկական ժագում ունեցող այդ իսպանացին 1700 թվականին ճանապարհորդելով Հոնդուրասում, Կոպանի մոտ հայտնաբերել էր լավ պահպանված հին շինությունների և բուրգերի հսկայական համալիր: Այդ պատճառով Ստեֆենսը իր արշավի

նպատակակետ ընտրեց Հոնդուրասը, նույնիսկ իրեն հաշիվ շտալով վայրի և անմարդաբնակ ջունգլիների խորքը կատարվելիք ճանապարհորդութան դժվարությունների մասին: Նա համոզեց իր ընկերոջը՝ հիանալի գծանկարիչ Ֆ. Կազերվուդին, մասնակցել այդ արշավին:

1839 թվականին ջորիներից, ուղեկցողներից և հնդկացի բեռնակիրներից կազմված փոքրիկ քարավանը հայտնվեց Հոնդուրասի և Գվատեմալայի սահմանագլխին: Սակայն այստեղ, ինչպես և Միջագետքում Լեյարդի եղած ժամանակ, հեղափոխություն էր սկսվել: Ամբողջ Կենտրոնական Ամերիկան բռնկված էր քաղաքական պայքարի կրակով: Իշխանության համար պաքարում էին երեք հակառակորդ՝ Սալվադորի նախկին պրեզիդենտ Մորսանան, հետագայում Գվատեմալայի դիկտատոր դարձած խառնածինների առաջնորդ Ֆերրերան և հնդկացի հեղափոխական Կարրերան: Նրանց ջոկատները բոլոր ուղղություններով ոտքի տակ էին տալիս ամբողջ երկիրը:

Դյուռներում և քաղաքներում նապոլեոնի բանակի նախկին դասալիքների և եվրոպական ամենաբազմապիսի բախտախնդիրների գլխավորութայամբ թափառում էին մինչև ատամները զինված նեգրերը, հնդկացիները և խառնածինները: Երկիրը ամայացած ու ահաբեկված էր, պարենը լրիվ կոդոպտված: Սարսափահար բնիկները սովից հազիվ էին ոտքի վրականգնում, ոչ մի տեղ հնարավոր չէր մի կտոր սև հաց ճարել:

Ստեֆենսը՝ հեղափոխութայան առաջնորդներից մեկի ստորագրութայամբ պահպանագիր ուներ, սակայն դրանից քիչ օգուտ կար: Սանձարձակ, հարբած զինվորները ճանապարհորդներին հալածում էին մանրախնդրութայամբ և կրակոցներով: Մի անգամ ինչ-որ հարբած հրամանատար, փրկակազին ստանալու հույսով, ամբողջ արշավախմբին փակեց ցախատանը: Միայն պատահաբար այնտեղ հայտնված բարձրաստիճան սպայի միջնորդութայան շնորհիվ Ստեֆենսին հաջողվեց անփորձ ազատվել այդ անախորժությունից:

Փրկվելով իրենց հետապնդող զինվորներից, բարեկամները հասան ջունգլիների սահմանին, որտեղից միակ ճանապարհը դեպի Կոպան էր տանում: Խորանալով վայրի անտառի մռայլ թավուտներում, Ստեֆենսը հետզհետե սկսեց հասկանալ, թե ինչու հեռավոր փլատակները մինչ այդ չեն հայտնաբերվել: Զունգլիների անթափանցելի պատը նրանց գաղտնիքը ավելի լավ էր պահպանում, քան դարերի ընթացքում կիտված հողի և ավազի ամենահաստ շերտերը:

Խիզախների փոքրիկ խումբը աննկարագրելի դժվարութայամբ առաջ էր գնում կանաչ դժոխքի միջով: Բեռնված կենդանիները մինչև փորը խրվում էին գարշահոտ ճահճուտի մեջ: Լիանաների փշերը կաշում էին հագուստից և խրվում մարմնի մեջ՝ այրող ցավ պատճառում: Նեխահոտ գոլորշիները թունավորում էին օրգանիզմը, ուժասպառ անում, սոսկալի ազդում նյարդերի վրա: Գիշերը ջունգլիները ոռնում, ճչում, հեծեծում

էին: Կապիկների կատաղի ճիշերը, թութակների ճղճղան ձայները, կարծես վիրավոր, ցավից գալարվող կենդանիների ականջ ծակող ծղրտոցը և ոռնոցը ճանապարհորդներին չէին թողնում քնել:

Ճանապարհ ընկնելուց մի քանի օր հետո, որոնք հավիտենականություն թվացին, Ստեֆենսը, Կազերվուդը և նրանց ուղեկցող հնդկացիները դուրս եկան ջունգլիներից և, վերքերով ու ցեխով պատված, հասան Կոպան: Նրանց սրտերը հուսահատությունից ճմլվեցին, երբ անքնությունից բորբոքված աչքերով մի հայացք նետեցին խղճուկ խրճիթների այն կույտին, որը Կոպան էր կոչվում: Պարզվեց, որ այնտեղ փլատակների հետք անգամ չկա: Կասկած առաջացավ, որ Տուենտեսի հիշատակությունը սովորական հորինվածք է եղել: Երբ փլատակների մասին հարցուփորձ էին անում բնիկներին, նրանք զարմացած ուսերն էին թոթվում: Ամբողջ ձեռնարկումը թյուրիմացություն էր թվում:

Ընկճված ճանապարհորդները որոշեցին մի քանի օր մնալ գյուղում, որ հյուժիչ ճանապարհորդությունից հետո ուշքի գան, իսկ հետո որոշեն, թե ինչ անեն: Ստեֆենսը որոշեց, որ ավելորդ չի լինի ուսումնասիրել գյուղի շրջակայքը: Չէ որ ջունգլիներն այնքան անանցանելի էին, որ, ով գիտե, գուցե այնտեղ որևէ բան լինի թաքնված: Այդ մտքին նա 'հանգեց' տեսնելով, որ բնիկները երբեք իրենց հողամասից հեռու չէին գնում, իսկ թավուտից վախենում էին՝ ինչպես կրակից:

Կարճատև հանգստից հետո նրանք խորացան կուսական անտառի թավուտը: Արշավին մասնակցող հնդկացիները իրենց մաշետներով արահետ էին բացում, իսկ Կոպանի բնակիչները աշխույժ հետաքրքրությամբ դիտում էին նրանց:

Եվ ահա արդեն շատ շուտով արշավախումբը կանգ առավ իրար կիպ հարմարեցրած, առանց շաղախի շարված քարի զանգվածներով հզոր պատի առջև: Աստիճանների դիք շարանը տանում էր դեպի վերև, դեպի խիտ մացառուտները: Ճանապարհորդներին անհավանական էր թվում, որ փլատակները թաքնված են հենց այստեղ, գյուղի մոտ, իսկ բնակիչները նույնիսկ չէին ենթադրում դրանց գոյության մասին:

«Իսկ գուցե, — մտածում էին նրանք, չհավատալով սեփական բախտին, — սրանք իսպանական ինչ-որ ամբոցի մնացորդներ են»: Չէ որ 1524 թվականին այստեղից անցել է Կորտեսը, շտապելով Հոնդուրաս, որպեսզի հնազանդեցնի ապստամբած նահանգապետ էլիզային, իսկ հետագա տարիներին իսպանացիները այստեղ կատաղի մարտեր են մղել քնիկների հետ, մինչև որ կարողացան գաղութային լուծը դնել նրանց վրա:

Սակայն շուտով կասկածները փարատվեցին, որովհետև խիտ մացառուտների մեջ նրանք քարե ինչ-որ սալ նկատեցին: Երբ մաքրեցին մացառուտները, նրանց աչքերի առջև երևաց հսկայական մի կոթող, որն ուներ համարյա շորս մետր բարձրություն և մեկ մետրից ավելի լայնու-

թյուն: Վերից վար այն ծածկված էր տարօրինակ գրոտեսկային հարթաքանդակներով: Խորություններում երևում էին վառ ներկերի հետքեր, որոնք ցույց էին տալիս, որ կոթողը մի ժամանակ առատորեն ներկված է եղել: Առջևի կողմի բարձրաքանդակը պատկերում էր տղամարդու, որի շարագույժ դեմքը կարող էր սնտախ սարսափ առաջացնել:

Քանդակի ոճը և բնույթը արտասովոր, շարագույժ էին, սակայն ապշեցուցիչ էին կատարման վարպետութունը և ճշգրտութունը:

Ամենափոքր մանրամասները, ամենանուրբ զարդաքանդակները քարի զանգվածի վրա այնքան հստակ և արտահայտիչ էին երևում, որ կարծես թե ինչ-որ փափուկ նյութի վրա ածելիով քանդակած լինեին: Այդ գրոտեսկային զարդանկարներից խոր հնություն էր բուրում:

Իսկ ուլքե՞ր են եղել այդ մարդիկ, որ այդպիսի համբերատար ջանասիրությամբ քարի վրա քանդակել են արտասովոր զարդանախշեր, իսկ հետո անհետ կորել են անցյալի մշուշապատ հեռուներում:

Խորանալով ջունգլիներում, ճանապարհորդները հայտնաբերում էին մի կոթող մյուսի հետևից, մինչև որ դրանց թիվը տասնչորսի հասավ: Նրանցից յուրաքանչյուրը տարբերվում էր անկրկնելի ինքնօրինակությամբ, բայց հավասարապես հարուստ էր զարդանախշերով, զարդերով և խորհրդանշաններով: Մութն ընկնելուն պես նրանք ստիպված էին դադարեցնել որոնումները և վերադառնալ ճամբար, արշավի հաջողութունից զարմացած:

Մյուս օրը լուսաբացին Ստեֆենսին ներկայացավ տեղացի խառնածին դոն Խոսե Մարիան և հանդիսավորությամբ հայտարարեց, որ Ռիո Կոպանի երկարությամբ ամբողջ հողը, որտեղ փլատակներ են գտնվում, իր սեփականությունն է:

Ստեֆենսը ծիծաղեց, այնքան անհեթեթ թվաց նրան այն միտքը, որ ջունգլիների փլատակներն ընդհանրապես կարող են որևէ մեկին պատկանել, այն էլ այնպիսի մեկին, որը մինչ այդ դրանց գոյության մասին գաղափար անգամ չուներ: Եվ նա արհամարհանքով ետ ճամփեց եկվորին իր տուն:

Սակայն գործն այնպես հեշտությամբ շահաջողվեց լուծել: Հենց որ սեփականատիրոջ պահանջները մերժվեցին, արշավախումբը միահամուռ բոյկոտի ենթարկվեց ամբողջ գյուղի կողմից: Ստեֆենսը չէր կարող բանվորներ վարձել, մի կտոր հաց գնել: Չէին օգնում ոչ առաջարկված դեղորայքը, ոչ մանր զարդարանքները, ոչ կանխիկ դրամը: Բանը միայն այն չէր, որ գյուղի բնակիչների օգնությունը անհրաժեշտ էր Ստեֆենսին, այլ նաև այն, որ հեղափոխությամբ բռնկված երկրում ձեռնտու չէր գծավել տեղական բնակչության հետ: Եվ Ստեֆենսը որոշեց խառնածինի հետ գործը հաշտությամբ վերջացնել:

Դոն Խոսեն հրավերով ներկայացավ, բայց իր նկատմամբ արտահայտված արհամարհանքից ակնհայտորեն վիրավորված էր: Ստեֆենսը

զարմանքով իմացավ, որ խառնածինը նյութական շահ չէր հետապնդում: Իր հաճականութունը հայտարարելով, նա բացառապես դեկավարվում էր սեփականատիրոջ անշահախնդիր հպարտությամբ և շփոթվեց, երբ Ստեֆենսը նրան առաջարկեց վաճառել փլատակները: Նա չէր կարողանում հասկանալ, որ որևէ մեկը կցանկանա գնել այդ միանգամայն անպետք, անօգտագործելի քարերը, ուստի դարձավ կասկածամիտ և գգուշավոր: Տեղում դուրսելով, նա մտածելու համար ժամանակ խնդրեց:

Երեկոյան ներկայացավ դեռևս ոչինչ չորոշած, բայց երկար բանակցություններից հետո գործարքը տեղի ունեցավ: Ստեֆենսը հիսուն դոլարով որպես սեփականութուն ստացավ Կոպան քաղաքի փլատակները: Խառնածինի դեմքի վրայով անցած թեթև ժպիտը մատնեց նրա կարծիքը ամերիկացու մասին, նա Ստեֆենսին կատարյալ հիմտր էր համարում, որին խաբելը շատ հեշտ է:

Ստեֆենսը առևտրական գործարքը նշանավորեց մեծ խնջույքով, որին հրավիրեց գյուղի բոլոր բնակիչներին: Երեկոն անցավ լիակատար բարեկամական մթնոլորտում: Հյուրերը երգում, պարում էին և պատշաճը հատուցում տապակած խոճկորին: Բնիկները ապշած դիտում էին կոթողները, նորից ու նորից էին զարմանում, որ դրանք գյուղից այդքան մոտիկ էին գտնվում: Խնջույքի վերջում ստանալով ևս մի նվեր՝ սիգարներ, նրանք իրենց խրճիթները ցրվեցին, պատրաստ ամեն ինչով ծառայելու առատաձեռն օտարերկրացիներին:

Այդպիսով շահելով բնիկների համակրանքը, Ստեֆենսը ձեռնամուխ եղավ հետագա որոնումներին: Նա ջունգլիների միջով հասավ մինչև Ռիո Կոպանի մյուս ափը, որտեղ իր ամենակարևոր հայտնագործությունը կատարեց: Դա քարի ահագին զանգվածներից կառուցած տարօրինակ ձևի մի հսկայական բուրգ էր:

Անցնելով ծառերի ու լիանաների միջով, Ստեֆենսը և Կազերվադը սկսեցին սանդուղքներով վեր բարձրանալ: Թավուտից անկոչ հյուրերի վրա, ինչպես գազազած շարժի կնիկներ, ճշում էին կապիկները:

Բուրգի գագաթից նրանց առջև տարածվեց անզուգական մի տեսարան: Բույսերի հյուսվածքի միջից, ինչպես ալեկոծված ձուլում, դուրս էին ցցվում բուրգերի, պալատների և տաճարների փլատակներ, առանձին քարե զանգվածներ: Հետազոտողներին այնպիսի զարմանք համակեց, որ կարծես նրանք անցել էին կյանքի իրական սահմանները և բնկել ինչ-որ ուրվականների հեքիաթային աշխարհ:

Մեր առջև փոված ավերված ֆաղաֆը,— գրում է Ստեֆենսը,— նման էր օվկիանոսի մեջտեղում խորտակված նավի: Նրա կայմերը ջարդվել էին, անձներ ջնջվել, անձնակազմը զոհվել էր: Եվ ոչ ոք չի կարող ասել, թե որտեղից էր նա գալիս, ում էր պատկանում,

որքան էր տեղի նրա նաևապարհորդութունը և ինչն էր նրա կոր-
ծանման պատճառը:

Հաջորդ օրերին Ստեֆենսը և Կազերվուդը ուսումնասիրում էին շր-
ջակայքը, հայտնաբերելով նորանոր արձաններ, խորաքանդակներով
սալեր, սանդուղքներ և սանդղավանդներ: Հնությունների քանակը
միայն կարող էր գլխապտույտ առաջացնել: Վիթիարի միակտոր կերտ-
վածքները, որոնց շուռ էին տվել ճյուղավորված արմատները, ընկած էին
փտող ծառաքների և տերևների մեջ: Գետնին ընկած էին լիանաներով
փաթաթված արձաններ: Այս ու այնտեղ կանգնած էին գիշատիչ բնության
մեջ անվնաս մնացած քարե կուռքեր, իսկ նրանց ոտքերի առջև հրաշքով
պահպանվել էին զոհասեղանները, որոնց վրա մի ժամանակ զոհ են
մատուցել: Քարե զանգվածների մակերեսները ծածկված էին քանդա-
կագործի հատիչով փորագրված զարդաքանդակներով և առեղծվածային
հիերոգլիֆներով: Աստվածների պատկերները այնքան ցցուն էին, որ
թվում էր, թե նրանք կտրվում էին իրենց քարե ֆոնից:

Փլատակները շջնեցրին Ստեֆենսին: Կասկածի նշույլ անգամ չկար,
որ նա հայտնաբերել է ստեղծագործական հանճարով օժտված մի հզոր
ժողովրդի պետության կենտրոնը: Քանդակագործ և վիթիարի շենքեր
կառուցող այդ ժողովուրդը, անկասկած, այստեղ շատ դարեր է ապրել,
որովհետև շենքերի, քանդակների և բուրգերի ստեղծումը բազմաթիվ սե-
րունդների ջանք և աշխատանք էր պահանջում:

Քայց ինչպե՞ս են այն ժամանակվա մարդիկ կարողացել այստեղ
տեղափոխել հաճախ տասը տոննայից ավելի քաշ ունեցող այդ զանգ-
վածները:

Ստեֆենսը պարզեց, որ մոտակա քարհանքները գտնվում են Ռիո
Կոպանի մյուս կողմում, և փից մի քանի կիլոմետր հեռավորության վրա:
Շատ հետաքրքիր և անբացատրելի մի փաստ՝ բեռնակիր կենդանիներից
և տեխնիկական հարմարանքներից զուրկ այդ ժողովուրդը կարողացել է
ոչ միայն մեծ հեռավորությունից փոխադրել այդ ծանրությունները, այլ
նաև գետի մի ափից մյուսը տեղափոխել:

Կազերվուդը սկսեց փութաջանորեն արտանկարել քանդակներն ու
զարդանկարները, բայց ոչինչ չէր ստացվում: Նրանց ոճը և կոմպոզիցիան
այնքան բարդ էին, այն աստիճան հեռու սպիտակ մարդու գեղարվես-
տական պատկերացումներից, որ նա բազմիցս ստիպված էր լինում մա-
տիտք անօգնական մի կողմ գնել: Բացի դրանից, նախքան աշխատանքի
անցնելը անհրաժեշտ էր մաշտեթ օգնությամբ կտրել խիտ թփուտները,
որպեսզի բավարար շափով լույս թափանցեր և հնարավոր լինե՞ր մտա-
նալ պատճենվող առարկաներին: Սակայն շնայած այդ դժվարություն-
ներին, Կազերվուդը շուտով ամենայն մանրամասներով մշակված հիսուս

Նկար պատրաստեց, որոնք հետագայում ծառայեցին Ստեֆենսի գրքի նկարագարումանը:

Վերադարձին ճանապարհորդները այցելեցին Գվատեմալա, Չիապաս և Յուկատան թերակղզու հյուսիսային մասը: Նրանք ամենուրեք բազմաթիվ ավերակներ էին գտնում՝ բուրգեր, պալատներ, արձաններ, ամբողջ քաղաքներ: Դրանք բոլորովին նոր, խորհրդավոր աշխարհներ էին, որոնք հարուցում էին պատմական և հնագիտական անհամար հարցեր:

Ստեֆենսը իր բարեկամներին գրած նամակներում հիացմունքով էր նկարագրում կատարված հայտնագործությունները, որոնք, սակայն, ընդունվեցին թերահավատությամբ: Բայց երբ 1842 թվականին նա հրատարակեց «Արկածներ Կենտրոնական Ամերիկա, Չիապաս և Յուկատան կատարած ճանապարհորդության ժամանակ» գիրքը, այն մեծ սենսացիա և վեճերի ալիք առաջացրեց: Կարճ ժամանակամիջոցում գիրքը մի քանի անգամ վերահրատարակվեց և թարգմանվեց այլ լեզուներով:

Այդ առիթով հիշեցին մեկ այլ գրքի մասին, որը հրատարակվել էր չորս տարի առաջ, բայց տարօրինակ ձևով վրիպել էր ընթերցողների ուշադրությունից: Դա ֆրանսիացի Ֆ. դե Վալդեկի «Յուկատանի նահանգում կատարած ոռոմանտիկական և հնագիտական ճանապարհորդությունը» աշխատությունն էր: Գրքից երևում է, որ այդ փլատակների հայտնագործողը եղել է ոչ թե ամերիկացի, այլ ֆրանսիացի: Դժբախտաբար, Վալդեկը գիրքը հրատարակել էր այն ժամանակ, երբ Ֆրանսիան կլանված էր Եգիպտոսում կատարված նոր հայտնագործություններով, և նրա գիրքը աննկատելի մնաց:

Ստեֆենսի աշխատության ազդեցության տակ պատմաբանները մեկը մյուսից առաջ անցնելով սկսեցին հետազոտել իսպանական հին աղբյուրները և եկան այն համոզման, որ այդ հոյակապ քաղաքների կառուցողները եղել են մայաները: Ացտեկներից շատ դարեր առաջ նրանք ստեղծել էին հարուստ մշակույթ և Կենտրոնական Ամերիկայի ու Յուկատանի տարածքում ունեին իրենց քաղաք-պետությունները:

Մայաների վերաբերյալ ծագած տաք վեճերից ծնվում էին ամենաֆանտաստիկ և նույնիսկ անհեթեթ տեսություններ: Ոմանք պնդում էին, որ մայաները, ջրհեղեղից փրկվելով, եկել են Ասիայից: Մյուսները նրանց համարում էին Ատլանտյան օվկիանոսի հորձանուտում սուզված առասպելական Ատլանտիդայի ողջ մնացած բնակիչներ:

Իսպանական կոնկիստադորները իրենց հաղորդումներում մշտապես մատնանշում էին մայաների կրոնի և քրիստոնեության զարմանալի նմանությունը: Մայաներն ունեցել են խաչի խորհրդանշաններ, խոստովանություն, փրկիչի գաղափարը և այլն: Սա առիթ դարձավ մի տեսության, ըստ որի մայաները իբրև թե ծագում են Պաղեստինից և ինչ-որ ընդհանրություն ունեն Քրիստոսի առաջին հետևորդների հետ:

Արդեն պակաս ֆանտաստիկ էին թվում այն բանավիճողների տե-

սակետները, որոնք համարում էին, որ գտնված շինությունները վկայում են մայաներին և հին՝ եգիպտացիներին միավորող ինչ-որ կապերի մասին:

Թե իրականում ովքե՞ր են եղել մայաները, մենք կիմանանք հետևյալ գլուխներից, որոնք գրված են պատմաբանների և հնագետների նորագույն հետազոտությունների հիման վրա:

Մեծ օձի թագավորությունում

Յուկատանի ջունգլիների վերևում մի փոքրիկ ինքնաթիռ էր պտրտվում: Շարժիչի դղրոյունը արձագանքում էր վայրի ամայության մեջ: Շատ հաճախ ինքնաթիռը այնքան էր իջնում, որ անիվները համարյա դիպչում էին անթափանցելի գորգի պես գետինը ծածկող հզոր ծառերի կատարներին: Այստեղ ու այնտեղ կանաչ թավուտների մեջ սպիտակին էին տալիս բուրգերը և պալատական շինությունները: Ինքնաթիռը իջնում էր և պտտվում նրանց վրա:

Դա 1930 թվականն էր: Խցիկում երկու հնագետ էին նստած՝ Մադեյրոն և Մասոնը: Երկարատև ջանքերից հետո ի վերջո իրագործվեց նրանց երազանքը: Կառավարությունը նրանց ինքնաթիռ հատկացրեց, և այժմ նրանք փութաջանորեն լուսանկարում ու քարտեզի վրա նշում էին մայաների դեռևս անհայտ բնակավայրերի կղզյակները:

Իսկ լուսանկարելու և նշելու շատ բան կար: Մի ժամանակ մայաների քաղաքակրթությունը գրավում էր համարյա հարյուր հազար քառակուսի կիլոմետր տարածություն: Միայն Յուկատանում, բացի արդեն հայտնի երեք մայր-քաղաքներից՝ Չիչեն Իցա, Մայապան և Ուլմալ, հայտնաբերվել են յոթանասուն այլ քաղաքներ: Մինչ այդ չհետազոտված հսկայական տարածությունները մի ժամանակ կենսական մասն էին կազմում «Մեծ օձի թագավորության», ինչպես անվանում էին մայաներն իրենց պետությունը: 1947 թվականին հնագիտական արշավախումբը Մեքսիկայի Չիապաս և Բոնամպակ նահանգներում հայտնաբերեց մեր թվականության առաջին դարերին վերաբերող տասնմեկ տաճար: Շենքերի դեղին, կարմիր, դարչնագույն, կանաչ և երկնագույն որմնանկարները պատկերում էին ռազմիկների, քրմերի և թագավորների:

Մայաների շինությունների գլխավոր առանձնահատկությունը այն է, որ դրանք կառուցվում էին հատած գագաթով բուրգի ձև ունեցող քարե արհեստական հարթակի վրա: Տաճարների և պալատների պատերը, որպես կանոն, շատ հաստ էին և երեսպատված հարթաքանդակներով զարդարված քարե սալերով: Շենքերի մուտքերը շատ նեղ և ցածր էին: Սենյակների առաստաղները սանդղաձև սրածայր կամարների տեսք

ունենին, ինչը հանդիպում է միայն մայաների ճարտարապետության մեջ: Ընդհանրապես, այդ կառույցները ցածր ամրոցներ կթվային, եթե չլինեին դրանց պատերը վերից վար ծածկող հիերոգլիֆները և ձևավոր հարթաքանդակները: Դրանք պատկերում են մարդկանց ու կենդանիների գլուխներ, որոնք հիշեցնում են միջնադարյան տաճարների եղջերվաքաղններին, հրեշավոր օձերի և աստվածների: Հարթաքանդակների ոճը ուրվանկարով շատ ճշգրիտ և արտահայտիչ է, բայց պատկերներն իրենք այնքան գրոտեսկային են, որ կարծես այստեղ են տեղափոխվել մղձավանջային երազներից:

Չնայած մայաների քաղաքակրթությունը հիմնված էր եզիպտացորենի մշակութային վրա և զարգանում էր փարթամ բուսականությամբ շրջապատված, մայաների կիրառական արվեստում բուսական թեմաները շատ սակավ են: Նույնիսկ սյունները, որոնք ամբողջ աշխարհում նմանվել են որևէ ծառի, հիմնականում արմավենու բնի, մայաների մոտ հիշեցնում են լեզուները հանած հրեշավոր օձերի մարմիններ: Լայնորեն հայտնի են Չիչեն Իցայի «Ռազմիկների տաճարի» առաջ կանգնած երկու օձսյունները: Գետնին սեղմված են բաց կրախով օձերի գլուխները, իսկ թեփուկներով ծածկված մարմինները, գալարվելով, մի փոքր տարածվում են գետնի վրա և ապա ուղղահայաց վեր բարձրանում, որպեսզի իրենց վրա պահեն տաճարի տանիքը:

Մայաների փլատակների մեջ հաճախ հանդիպում են այնպիսի փոքր մուտքերով և սենյակներով շինություններ, որ թվում է, թե դրանք գաճաճների համար են կառուցված: Այդպիսին է, օրինակ, «Գաճաճների տունը» Ուշմալում: Նկարագրելով այդ արտասովոր շինությունները, հնագետները զանազան տեսություններ էին առաջ քաշում: Նրանց մի մասը պնդում էր, որ այնտեղ ժամանակին անհայտ գաճաճ ժողովուրդ է ապրել, սակայն ավելի ճշմարտանման է այն ենթադրությունը, որ մայաները այդ տները կառուցել են ողիների կամ ինչ-որ գերբնական էակների համար, ձգտելով նրանց ապահովել օթևանով: Չիչեն Իցայի փլատակները իրենց ճարտարապետության շքեղությամբ, քանդակագործության հարստությամբ, բազմազույն որմնանկարների գեղեցկությամբ պերազանցում են մնացած բոլոր շինություններին: Դրանք մոտավորապես երեք և կես քառակուսի կիլոմետր տարածություն են զբաղեցնում: Ժամանակակից զբոսաշրջիկին սպասում է բոլորովին այլ տեսարան, չան Ստեֆենսին և XIX դարի մյուս ճանապարհորդներին: Այժմ փլատակները գտնվում են բուսականությունից մաքրած բաց տարածությունում: Դեպի քաղաք է տանում խնամքով պահպանվող ճանապարհը, որով ծուկատանի մայրաքաղաք Մերիդայից ավտոբուսներ են երթևեկում:

Բազմաթիվ շինությունների և բուրգերի թվում անհրաժեշտ է հիշատակել «Յագուարների տաճարը», որն աչքի է ընկնում զարդաքանդակների հարստությամբ և կարծր քարից փորագրված զարմանալիորեն

նուրբ աստիկոսով: Պակաս հուշակ շունի «Ռազմիկների տաճարը» իր սյունաշարով, որի ներքին սանդուղքը տանում է դեպի բուրգի վերին հարթակները: Սակայն էլ Կաստիլիոյի բուրգը գերազանցում է մնացած բուրգին: Այն բաղկացած է ութ հարկ սանդղավանդներից, բուրգի գագաթին վեր է խոյանում Կուկուկանո սպիտակ աստծու տաճարը, որի խորհրդանիշն էր թևավոր օձը:

Քաղաքի կենտրոնում գտնվում է մի բարձր գնդաձև շենք՝ մայաների աստղադիտարանը: Նրա պատուհանները այնպես են տեղադրված, որ հայացքը ուղղվում է դեպի որոշակի համաստեղություն: Հետաքրքիր է մարզադաշտը: Նրա հսկայական պատը զարդարված է քիվ ո՛նեցող զարդաքանդակներով, որոնք պատկերում են օձերի: Պատից դուրս է ելնում մեկուկես մետր տրամագծով քարե հորիզոնական օղ:

Այդ մարզադաշտում Չիչեն Իցայի բնակիչները դիտում էին գանազան թիմերի մոլեգին գոտեմարտերը, գրազ էին գալիս, հիանում էին սիրելի հերոսներով և վիրավորական մականուններ էին պարգևում նրանց, ովքեր չէին արդարացրել իրենց սպասելիքները: Եամանակագրությունների համաձայն, պարտվածները պետք է բուրգի աշքի առաջ հանեին իրենց հագուստները և տալին հաղթողներին, մի կանոն, որը վկայում է մայաների հումորի զգացողության մասին:

Յուկատանի հյուսիսային մասում իրարից ոչ հեռու գտնվում են մայաների երկու քաղաք ևս՝ Ուշմալը և Մայապանը, որոնք հուշարձանների հարստությամբ շատ քիչ են գիջում Չիչեն Իցային: Հատկապես Ուշմալը հայտնի է իր արտասովոր, առատորեն դրվագված շենքերով, ինչպիսիք են «Մարգարենների տունը», «Միանձնուհիների տունը», «Կառավարչի տունը», «Կրիաների տունը», «Մեր գնոջ տունը», «Աղավնատունը» և այլն: Այդ շենքերի անվանումները տվել են հնագետները, ելնելով գերիշխող դեկորատիվ թեմաներից:

Իսկ այժմ տեղափոխվենք հարավ, մեքսիկական Չիապաս նահանգը: Խորունկ կիրճի վերջում, լեռների ու կուսական անտառի մեջ սպիտակին է տալիս մայաների սրբազան հին քաղաքը, որը հնդկացիների հարևան փոքրիկ գյուղի անունով կոչվում է Պալենկե: Եթե հաշվի առնենք, որ քաղաքի քարաշեն թաղամասը կրոնական նպատակների համար է ծառայել և այնտեղ միայն քրմերն ու ազնվատոհմիկներն են ապրել, իսկ մնացած բնակչությունը տեղավորված է եղել կավե խրճիթներում, որոնցից, պարզ է, որ հետք անգամ չի մնացել, ապա պետք է ենթադրել, որ քաղաքը մոտավորապես հարյուր հազար բնակիչ է ունեցել: Անջնջելի տպավորություն են թողնում խնամքով տաշված և հարթաքանդակներով զարդարված քարե զանգվածների կույտերը: Բավական է ասել, որ այնտեղ պահպանվել են տասնութ հոյակապ պալատ և տաճար, ինչպես նաև քսաներկու այլ շինություն, որոնց թվում նաև բարձր աշտարակ՝ աստղագի-

տական դիտումների համար: Այդ բոլոր շինությունները կառուցվել են բուրգաձև հիմքերի վրա:

Հնագետները համարում էին, որ մայաների բուրգերը, ի տարբերություն եգիպտականների, ոչ թե թագավորների դամբարան են եղել, այլ ծառայել են միայն որպես արհեստական հիմք տաճարների և պալատների համար: Սակայն այդ կարծիքը սասանվեց 1952 թվականին: Դրանից շորս տարի առաջ հնագետ Մասոնը Պալենկեի «Արձանագրությունների տաճարի» հատակին նկատեց անցքեր ունեցող ինչ-որ սալ: Նրա տակ կար ամբողջապես քարաբեկորներով լցված մի նեղ սանդուղք, որը տանում էր դեպի բուրգի խորքը: Չորս տարվա մանրակրկիտ աշխատանքից հետո ի վերջո մի փոքրիկ սենյակ հայտնաբերվեց, որտեղ կային հինգ երիտասարդ հնդկացիների՝ երկու աղջկա և երեք պատանու աճյուններ: Մեծ քանակությամբ հասպիսի զարդերը, որոնք մայաները ոսկուց թանկ էին գնահատում, ցույց էին տալիս, որ, հավանաբար, կրոնական ծիսակատարությունը զոհ դարձած այս երիտասարդները ազնվական տոհմերին էին պատկանում: Մի քանի տոննա կշռող սալաքարով ծածկված եռանկյունի մուտքով հետազոտողները մտան հսկայական մի դահլիճ, որը դյուրիչ տպավորություն էր գործում առաստաղից կախված բյուրեղյա շթաքարերի և հատակից խիտ անտառի նման դուրս ցցված անթիվ պտկաքարերի շնորհիվ: Կարթիղի լապտերների պայծառ լույսի տակ դրանք կուրացուցիչ կայծեր էին սփռում, կարծես կախարդական հրավառություն լիներ:

Դահլիճի կենտրոնում քարե ծանր սարկոֆագ էր դրված, իսկ ամփոփված էր նրա մեջ ինչ-որ թագավորի կամ քրմի աճյուն: Ննջեցյալը ամբողջովին ծածկված էր կանաչ հասպիսե զարդերով: Դեմքը ծածկված էր հասպիսի սալիկներից պատրաստած դիմակով: Հագուստի գործվածքը լրիվ փտել էր:

Սարկոֆագը զարդարված էր ձևավոր զարդաքանդակներով և հիերոգլիֆներով, որոնցից Մասոնը վերծանեց թվականը՝ 27-ը հունվարի 603 թիվ: Հետևաբար, այդ օրը տեղի է ունեցել Պալենկե քաղաքի անվանի անձի, հավանաբար՝ մայաների պատմության մեջ ամենաականավոր կառավարչի և քրմի թաղումը:

Պալենկեն մայաների Հին թագավորության շրջանի քաղաք էր: Անհրաժեշտ է ասել, որ հնագետները մայաների պատմությունը երկու մեծ ժամանակաշրջանի են բաժանում՝ Հին և Նոր թագավորության:

Սկզբնական շրջանում մայաները ապրում էին Յուկատան թերակղզու հարավային մասում, այժմյան Հոնդուրասում, Գվատեմալայում և մեքսիկական Չիապաս ու Տաբասկո նահանգներում: Դա մոտավորապես մեր թվականությունից առաջ 1000 թվականի և մեր թվականության VI դարի միջև ընկած ժամանակաշրջանում էր: Մեր թվականության առաջին դարերին է ընկնում Հին թագավորության ծաղկման շրջանը:

Մեր թվականության մտազվտրապես 610 թվականին մայաների թագավորությունում տեղի է ունենում պատմության մեջ աննախագեղ իրադարձություն: Մի օր ամբողջ բնակչությունը հավաքում է իր ունեցվածքը և ընդմիջտ հեռանում իր չքնաղ քաղաքներից, փողոցներից ու հրապարակներից, տաճարներից ու պալատներից, թողնելով դրանք շունգլիների քմահաճույքին, որպեսզի Յուկատանի հյուսիսային մասում կառուցի բոլորովին նոր քաղաքներ՝ Չիչեն Իցան, Մայապանը և Ուշմալը:

Ինչպե՞ս ենք իմացել մենք մի ամբողջ ժողովրդի այդ անսպասելի և տարօրինակ գաղթի մասին: Դրա համար մասամբ պարտական ենք Յուկատանի արքեպիսկոպոս Դիեգո դե Լանդային, որը ապրել է XVI դարում և, բարեկամանալով մի հնդկացի արքայազնի հետ, գրի է առել նրա պատմածները մայաների աստվածների, պատերազմների և սովորությունների մասին:

Դե Լանդան իր աշխատության մեջ վերարտագրել է օրեր և ամիսներ նշանակող հիերոգլիֆները, որի շնորհիվ հնագետների համար իմաստավորվեցին շենքերի և կոթողների վրայի գրոտեսկային հարթաքանդակները: Նրա որոշ հաղորդումները ապշեցուցիչ և նույնիսկ անհավանական էին թվում: Այսպես, օրինակ, մայաների կիրառական արվեստում բոլոր թեմաները, նույնիսկ մարդկանց ու կենդանիների պատկերները կապված էին որոշակի թվականի հետ: Ավելին, յուրաքանչյուր շինություն, նույնիսկ նրա յուրաքանչյուր մասը ըստ էության քարե օրացույց է, որովհետև նշում է որևէ թվական կամ աստղաբաշխական երևույթ:

Ժամանակակից հնագետների աշխատանքների շնորհիվ մայաների շենքերի ու կոթողների վրա փորագրված որոշ հիերոգլիֆներ այժմ ընթերցվում են բավականին ճշգրիտ: Սակայն դրանց ընթերցումը հիասթափություն առաջացրեց, որովհետև պարզվեց, որ բոլոր արձանագրությունները միայն թվականներ են բովանդակում: Տասնյակ հազարավոր արձանագրություններում ոչ մի տեղ չեն տեղեկություն անգամ չի գտնվել մայաների կյանքի և սովորությունների մասին: Ուստի պետք է ենթադրել, որ նման տեղեկություններ մայաները քարի վրա երբեք չեն փորագրել:

Շարադրված փաստերի հիման վրա եկան այն եզրակացության, որ մայաները դարձել են իրենց օրացույցի ստրուկները: Կարելի է ենթադրել, որ նրանք շենքերը կառուցել են ոչ միայն դրանք օգտագործելու համար, այլ նաև այն պատճառով, որ դա պահանջում էր օրացույցը: Հինգ, տասը կամ քսան տարին մեկ նրանք քարե նոր շինություն էին կառուցում և նրա վրա համապատասխան թվական նշում: Երբեմն նրանք իրենց խնդիրը պարզեցնում էին. հին շենքը ծածկում էին քարե նոր շերտով և նրա վրա նոր թվական նշում:

Եվ ահա մենք մոտենում ենք ամենակարևորին: Քանի որ Հին թագավորության, այսինքն հարավային շրջանի քաղաքների շինությունների վրայի հաջորդական թվականները ընդհատվում են մոտավորապես 610

Թվին և համարյա այդ նույն ժամանակով են թվագրվում Չիչեն Իցայի, Մայապանի, Ուշմալի և Հյուսիսային Յուկատանի մյուս քաղաքների առաջին շինությունները, ապա այդ զարմանալի փաստից կարելի է միայն մի եզրակացություն հանգել. մայաները իրենց բնակավայրերը լքել են հանկարծակի և բոլորը միասին: Այդ արտագաղթը՝ հարյուր հազարավոր բնակիչների կամավոր հեռանալը, իսկապես ժողովուրդների գաղթի բնույթ ուներ:

Հենց որ պատմական այդ իրողությունը հաստատվեց, բոլոր կողմերից ամենաբազմապիսի տեսությունների տարափ տեղաց, որոնք հորձուր էին այն բացատրել: Ամենահին տեսությունը, որի համաձայն մայաները փախել են նվաճողներից, շուտով արխիվ հանձնվեց: Այն ժամանակ մայաների թագավորությունը գտնվում էր իր ռազմական հզորության գագաթին, նրանց հարևանությամբ երբեք չի եղել այնքան ուժեղ մի ցեղ, որը կարողանար այդպիսի արշավանք կատարել, իսկ ամենազլխավորը՝ փլաաակներում պայքարի ոչ մի հետք չի հայտնաբերվել:

Ավելի արժանահավատ է այն պնդումը, որ մայաներին տրտաքսել է ինչ-որ ահավոր տարերային աղետ կամ համաճարակ: Սակայն այդ տեսության դեմ էլ լուրջ փաստարկներ գոյություն ունեն: Նախ և առաջ, վտանգն անցնելուց հետո բնակչությունը, անկասկած, պետք է որ վերադառնար ընտելացած վայրերը, իր հին հոյակապ քաղաքները, ինչը սակայն տեղի չի ունեցել: Բացի դրանից, հյուսիսային քաղաքների բնակչության խտությունն ու աճը, նրանց մշակութային և քաղաքական կենսադրությունը, այս բոլորը ոչ մի կերպ չեն վկայում այն մասին, որ այնտեղ ապրել է տարերային աղետի կամ համաճարակի նորերս ենթարկված մի ժողովուրդ:

Այն ենթադրությունը, թե արտագաղթի պատճառը իբրև եղել է կլիմայի հանկարծակի փոփոխությունը, նույնպես քննադատության չի դիմանում: Այդպիսի փոփոխությունը, բնականաբար, պետք է տեղի ունենար նաև ընդամենը շորս հարյուր կիլոմետր հեռու գտնվող Չիչեն Իցայում:

Երկար ժամանակ չէին կարողանում քիչ թե շատ բավարար չափով բացատրել մայաների ճակատագրում տեղի ունեցած այդ անօրինակ ցնցումը: Միայն վերջին տարիներին հնագետ Սիլվանուս Մորլին հրապարակեց մի տեսություն, որն ընդհանուր առմամբ համարվում է բավականաչափ համոզիչ:

Ահա դրա համառոտ շարադրանքը:

Ըստ իրենց խառնվածքի, մայաները քաղաքի բնակիչներ էին: Սակայն նրանք չէին կարող գոյություն ունենալ առանց հողագործների աշխատանքի և նրանց արտադրած մթերքների, որոնցից ամենազլխավորը եգիպտացորենն էր: Մայաների ամբողջ գոյությունը, նրանց կյանքը և զարգացումը կախված էին եգիպտացորենի մշակությունից:

Մայաների հասարակական կառուցվածքը բնութագրվում է դասակարգային սուր հակասություններով, որոնք ակնհայտ էին նաև քաղաքների կառուցապատման մեջ: Տաշած քարից կառուցված տաճարները և ազնվականների պալատները կազմում էին քաղաքի հատուկ թաղամասը, որը կարծես մի ամբողջ էր՝ ուղղված աշխատավորների դժգոհ զանգվածների դեմ: Այդ քարե քաղաքի շուրջը խճողվել էին քաղաքային շքավորության աղքատ խրճիթները, որոնցից, բնականաբար, հետք անգամ չի մնացել:

Հողագործի ճակատագիրը արտակարգ ծանր էր: Բերքի մեկ երրորդը նա պետք է տար բարձրաստիճան պաշտոնյաներին, նույնքան էլ քրմերին և միայն մնացածը կարող էր պահել սեփական կարիքների համար: Ցանքի և բերքահավաքի միջև ընկած ժամանակամիջոցում գյուղացիներին քշում էին աշխատելու քարհանքերում և շինարարության վրա:

Ազնվականության հետամնացությունը, ժողովրդական զանգվածների կյանքից նրանց կտրվածությունը հանգեցրին այն բանին, որ հասարակության զարգացման ընթացքը կանգ առավ: Դա հատկապես անդրադարձավ հողագործության վրա, ուր հողի մշակման մեթոդները չափազանց պարզունակ էին: Բավական է ասել, որ մայաները նույնիսկ արոր չունեին:

Եզիպտացորենը աճեցվում էր հետևյալ եղանակով. հողագործը ջունգլիներում մի տեղամաս էր հրդեհում, ապա առաջացած բացատում սրածայր փայտով փոսեր էր փորում և դրանց մեջ հատիկներ գցում: Երբ դաշտը ուժասպառ էր լինում, նա պարզապես լքում էր այն և այլ հողամաս տեղափոխվում, քանի որ պարարտանյութի մասին գաղափար չունեին: Լքված հողը ծածկվում էր վայրի բուսականությամբ և միայն երկար տարիներ հետո կրկին պիտանի դառնում օգտագործման համար:

Բերքի հողեր որոնելով, գյուղացիները ավելի ու ավելի էին խորանում ջունգլիներում, հետևաբար, էլ ավելի էին հեռանում քաղաքներից, որոնց սլարտավոր էին կերակրել: Քաղաքների և նրանց կերակրող հողի միջև տարածվում էին անբերրի դարձած, ամայի հողերի լայն շերտեր: Քաղաքի բնակչությանը կերակրելու գործը օրըստօրե դժվարանում էր, և ի վերջո երևան եկավ սովի սպառնալիքը: Հողի հսկայական տարածությունները, որոնք մայաների մշակույթի նախապայմանն ու հիմքն էին, անբերրի դարձան: Ամբողջ ժողովուրդը տեսավ, որ միակ փրկությունն արտագաղթն է: Եվ այն ժամանակ, երբ հյուսիսում առաջանում էր նոր թագավորությունը, լքված հին քաղաքներ Ուաշակտունը, Տիկալը, Նաբանխոն, Կոսյանը և Պալենկեն անհետանում էին վայրի բուսականության թավուտում, որը կրկին նվաճեց այդ վայրերը և համարյա հազար տարի մաքզկանց աչքերից թաքցրեց Հին թագավորության փլատակները:

Այդ տեսությունը հաստատվում է այն հետաքրքիր փորձով, որը վերջերս կատարեց դանիացի գիտնական Աքսել Ստեենսբերգը:

Ցանկանալով վերականգնել այն իրական պայմանները, որոնցում քարե դարի մարդիկ մշակել են հողը, նա իր ասիստենտների հետ մեկնեց Յուտլանդիա, որտեղ քարե կացիններով արմատախիլ արեց կաղնու անտառը և սրած փայտի օգնությամբ վարսակ ցանեց: Առաջին տարին բերքը լիովին բավարար էր, սակայն հետո, տարեցտարի բերքատվությունը այնքան արագ էր իջնում, որ արդեն շորրորդ տարին հողը բոլորովին անբերրիացավ:

Նոր թագավորության քաղաքների մասին տեղեկությունների աղբյուր են հանդիսանում մայա լեզվով, բայց լատիներեն տառերով գրված «Չիլամ Բալամ գրքեր» կոչվող ժամանակագրությունները: Դրանք XVI դարում գրել է Յագուար մարգարե անունով քուրմը: Ժամանակագրություններից մենք իմանում ենք, որ հյուսիսային Յուկատանում գոյություն են ունեցել քաղաքական երեք կենտրոն՝ Մայապան, Չիչեն Իցա և Ուշմալ քաղաք-պետությունները: Մայապան քաղաքի տիրակալները քրոմերն էին, թագավոր քրմի գլխավորությամբ, նրանք համարվում էին Կուկուկան սպիտակ աստծու ուղղակի հետնորդները և այդ պատճառով արհեստական մորուք էին կրում: Չիչեն Իցայում և Ուշմալում թագավորում էին մի քանի ազնվական տոհմերի ռազմիկները:

Հազար թվականին նշված քաղաքները միավորվեցին մի ֆեդերացիայի մեջ: Բայց մոտավորապես 1200 թվականին նրանց միջև արդեն պատերազմ սկսվեց: Մայապանի բանակի առաջնորդ Խունակ Կեելը տոլտեկների ցեղի վարձկանների օժանդակությամբ նվաճեց Չիչեն Իցան և նրա տիրակալներին պատանդ վերցրեց: 1441 թվականին նվաճված քաղաքներում ապստամբություն բռնկվեց: Ուշմալի թագաժառանգ Տիտուլ Շիուի հրամանատարությամբ ապստամբների զորքերը Մայապանը ավերակների վերածեցին: Մասնատված և ուժասպառ երկիրը ացտեկների համար մատչելի ռազմավար դարձավ:

Իսպանացիների հայտնվելու պահին մայաների մշակույթը արդեն գոյություն չուներ: Մեծ շինարարների, նկարիչների և աստղագետների հետնորդները տրոհվել էին թույլ պրիմիտիվ ցեղերի, խոսում էին տարբեր բարբառներով, զանազանվում էին հագուստով և սովորույթներով, իսկ իրենց ընդհանուր փսոտահեղ պատմության մասին միայն աղոտ հիշողություններ էին պահպանել: Ճիշտ է, նրանք դարձյալ դավանում էին իրենց հին կրոնը, բայց բավականին ազավաղված ձևով:

Նոր թագավորության քաղաքները իրենց հերթին ընկղմվեցին ջունգլիների խորքերում՝ ինչպես ծովի անդունդում: Քաղաքների գոյության մասին գիտեին միայն հնդկացիների պրիմիտիվ ցեղերը, որոնք այդ ավերակներում իրենց կրոնական ծեսերն էին կատարում:

Նշանդրեք անձրևի աստծու հետ

— Մինչոր, մենք տեղ ենք հասել:— Խառնածնի բամբ ձայնը որոտալով արձագանքեց դիշերային լոռիթյան մեջ:

Մեքսիկական թավամազ ձիուկները մեխվածի պես կանգ առան և իսկույն, գլուխները կախելով, ննջեցին:

Խորը քնից հանկարծ վեր կացած երիտասարդ ամերիկացին օրորվեց և թամբից կրնկներ, եթե ընկերը նրան չպահեր: Աչքերը բացելով, նա քարացավ՝ իր առջևում բացված կախարդական տեսարանից:

Նրա առջև կանգնած էր անտառի մուգ կապույտ պատը, իսկ ծառերի կատարներից վեր, կարծես ամպերից քշվելով, լուսնի լույսով ողողված սպիտակին էր տալիս մայաների շինությունը. բուրգի գագաթին կանգնած էր մի ինչ-որ տաճար կամ պալատ:

Այդպես քսանհինգամյա էդվարդ Հերբերտ Թոմփսոնը 1885 թվականին հասավ մայաների ամենամեծ և հզոր քաղաքը, որի մասին բազմապիսի առասպելներ էին պատվում:

Լուսաբացին Թոմփսոնը անկողնուց վեր թռավ, արագ մի բաժակ սուրճ խմեց և անմիջապես բարձրացավ առաջին պատահած բուրգի գագաթը: Դիմացը երևացող փլատակների համայնապատկերի տեսարանից հագենալով, նա սկսեց ուշադրությամբ հեռուն դիտել: Ուրախ մի բացականչություն դուրս թռավ նրա կրծքից: Ծառերի արանքից, արծաթե աչքի նման, փայլփլում էր ջրի բոլորակ հայելին:

— Սուրբ ջրհորը, անձրևի աստծու օթևանը,— ասաց նա մեքսիկացուն:

Տեղացու թուխ, ուռած դեմքը բարեհոգի ժպիտից լայնացավ:

— Այո, սինյոր, սուրբ ջրհորը... Մարդիկ տարբեր բաներ են հորինում նրա մասին... Ոմանք ասում են, որ տարվա որոշ ժամանակ նրա ջուրը արյուն է դառնում: Մյուսները տեսել են, թե ինչպես նրա խորքից շուրջպար բռնած լացող աղջիկներ են դուրս գալիս: Այդ ժամանակ անտառի թավուտում հնչում է անտեսանելի քրմերի երգը, սրինգների նվագը և թմբուկների թնդյունը:

Մինչդեռ բացվում էր նոր օրը:

Մի անգամ առավոտյան, — իր հուշերում գրում է Թոմփսոնը, — կանգնած էի տանարի տանիքին ճիշտ այն պահին, երբ արևի առաջին ճառագայթները վարդագույն ներկեցին հեռավոր հորիզոնը: Առավոտյան լոռիթյունը խորհրդավոր էր թվում: Գիշերային աղմուկը դադարել էր, իսկ վաղորդյանը դեռ չէր ծնվել: Նրկինֆը և գետինը, թվում էր, թե շունչը պահած ինչ-որ բանի էին սպասում: Այնուհետև շողշողալով ու հուրհրատելով երևաց մեծ կլոր Արեգակը, և հույն պահին շուրջն ամեն ինչ սկսեց երգել, աղմկել, ծլվլալ:

Քոչունները նյութերին և միջատները գետնին սկսեցին երգել արևի հիմեր: Ինքը բնությունն է սովորեցրել նախնապարյան մարդուն երկրպագել արևին, և մինչև այժմ մարդը սրտի խորքում հետևում է այդ հին պաշտամունքին:

Որոշ ժամանակից հետո եկվորները ցած իջան զառիթափ աստիճաններով և նեղ արահետով գնացին դեպի ջրհորը: Այն շատ մռայլ տեսք ուներ, և վարմանալի չէ, որ բնիկների մոտ սնտափ վախ էր առաջացնում: Զառիկող ժայռոտ ափերը քսանհինգ մետր բարձր էին ջրից: Սև ջրի մեջ լողում էին ջրիմուռներ, տերևներ և փտած ծառաբներ: Իջեցնելով խորաշափը, Թոմփսոնը համոզվեց, որ ջրհորի խորությունը մոտավորապես քսանհինգ մետր է:

Ափին երևում էին զոհարանի փլատակները, որտեղից ճամփան տանում էր դեպի բուրգի գագաթի հսկայական տաճարը:

Հանգամանորեն ուսումնասիրելով ջրհորի ժայռոտ ափերը, Թոմփսոնը նստեց քարին և սկսեց նորից մտորել իր գիտարշաձի մասին: Նա գրգռանից հանեց եպիսկոպոս Գիեզո դե Լանդայի հաղորդումներով գրքույկը և կրկին կարդաց արդեն բազմիցս կարդացած նախադասությունը. «Եթե այս երկիրը երբեքս ոսկի է ունեցել, ապա նրա մեծ մասը պետք է լինի Չիչեն Իցայի ջրհորի հատակին»:

Ի տարբերություն ացտեկների կրոնի, մայաների կրոնը մեզմ էր և համարյա անարյուն: Իրենց բազմաթիվ աստվածներին մայաները ծաղիկներ և մրգեր էին նվիրաբերում: Սակայն կար մի բացառություն. երբ երաշտ էր լինում, քրմերը, հավատալիքների համաձայն, ջրհորի հատակին ապրող անձրևի աստծու՝ Չակ-Մոլլի զայրույթը մեղմելու և գուլթը շարժելու համար նրան որպես հարսնացու էին ուղարկում ամենագեղեցիկ աղջկան: Հարսնացուի համար մարդիկ օժիտ չէին խնայում, ջուրն էին նետում թանկարժեք զարդեր և ամենաբազմապիսի տնային կաբասիներ:

Դե Լանդայի հաղորդած տեղեկություններին թերահավատությամբ էին վերաբերվում, այդ պատմությունը համարելով փաստական հիմքից զուրկ, ոտմանտիկ ժողովրդական լեգենդ:

Սակայն երիտասարդ Թոմփսոնը անմիջապես հավատաց այդ լեգենդին: Դե Լանդայի հիշյալ տողերը ազդել էին նրա վառ երևակայության վրա և այնպես հմայել, որ նա որոշեց ջրհորի առեղծվածը պարզել տեղում: Մանոթները թեթևակի քմծիծաղ էին տալիս նրա երևակայության վրա, բայց նա մեկնեց Յուկատան, որպեսզի մշակի մայաների հին գանձերը ջրհորի հատակից հանելու պլանը:

Մինչ խառնածինը կրակ էր վառում և ճաշ պատրաստում, Թոմփսոնը զոհասեղանի քարին նստած, ջրհորի հորձանուտին նայելով, փորձում էր իր երևակայությամբ վերականգնել անձրևի աստծու պատվին կատարվող արարողության ամբողջ ընթացքը:

Ահա շքեղ հագուստներով պճնված թագավորի, քրմերի և մեծատոհմիկների գլխավորութեամբ բուրգի աստիճաններով ցած է իջնում թափորը: Նրա կենտրոնում տանում են ամուր փակված դեսպակը, որի մեջ գտնվում է աստծու դեռատի ընտրյալը:

Սրինգների և թմբուկների նվագակցությամբ, ներբողներ երգելով թափորը շարժվում է ճանապարհով: Կանգ է առնում զոհարանի մոտ և լուռ սպասում, մինչև հորիզոնում կերևա արևի կարմիր սկավառակը և նրա առաջին ճառագայթները կցուլան ջրի մակերևույթին:

Այդ պահին քրմերը դեսպակից դուրս են բերում գունատ, վախեցած աղջկան, նրան շքեղ տոնական թիկնոց են հագցնում, իսկ գլխին ծաղկեպսակ դնում: Աստծու ընտրյալի հայտնվելուն պես բազմությունը ողջույնի ճիչեր է արձակում, սրինգները գեղգեղում են, իսկ թմբուկների որոտը տեղատարափ կարկուտի աղմուկ է հիշեցնում:

Քրմերի երգից և աղոթքներից հետո մեռելային լուսություն է տիրում: Չորս քուրմ բարձրացնում են աղջկան և թափով ջուրը նետում: Անձրևի աստվածը իր թագավորությունն է ընդունում նոր սիրեցյալին: Զոհից հետո ջրհորի մեջ են նետում մանյակներ, ապարանջաններ, զարդատուփեր, սանրեր, ճարմանդներ, հարուստ զարդանախշերով կավե սկահակներ և ամաններ:

Կհաջողվի՞ արդյոք այդ սև, դարշահոտ հորձանուտից հանել խորհրդավոր գանձերը: Թոմփսոնը եկավ այն համոզման, որ դա միայն հնարավոր է հատուկ պատրաստած հողահան սարքի և ջրասուզակային զգեստի օգնությամբ: Իսկ դրանք շատ մեծ միջոցներ են պահանջում:

Միացյալ Նահանգներ վերադառնալով, Թոմփսոնը սկսեց զեկուցումներ կարդալ համալսարաններում և զիտական ամենաբազմապիսի կոնֆերանսներում, մինչև որ ի վերջո անհրաժեշտ միջոցներ հավաքեց: Հետո նա մեկնեց Բոստոն, որտեղ փորձառու մասնագետների ղեկավարությամբ ուսումնասիրեց ջրասուզակային գործը և այդ մասնագիտության մեջ որոշ հմտություն ձեռք բերեց, շնայած ֆիզիկապես թույլ մարդ էր:

Թոմփսոնը հատկապես մեծ հույսեր էր կապում գործարանում պատվիրած հատուկ շերեփի հետ: Այն կազմված էր տասմետրանոց կայմից, ատամնավոր եզրեր ավանցող դուլլից, վերահան սարքից, պողպատե ճոպանից և ճախարակից:

Յուկատանում նա՝ բանվորներ վարձեց, որոնց թվում՝ Բահամյան կղզիներում աշխատած մարգարտորս և ջրասուզակ մի հույնի: Նրանց հետ միասին նա կրկին հայտնվեց Չիչեն Իցայում:

Զրհորը յոթանասուն մետր տրամագիծ ուներ, ուստի ամբողջ հատակը հեռագոտելու մասին խոսք անգամ չէր կարող լինել: Թոմփսոնը լուծեց այդ խնդիրը բավական հնարամիտ ձևով: Մարդու մարմնի մոտավոր ձև տված ծառի բունը կապեց պարանով և ջուրը նետեց այնքան ան-

գամ, մինչև որոշեց, թե որտեղ պետք է ընկած լինեին զոհերը: Այնտեղ էլ նա գործի գրեց իր շերեփը:

Ատամնավոր դույլը դուրս էր հանում ձյուլի պես սև տիղմ, փտած ճյուղեր, ծառի քայքայված բներ, իսկ մի անգամ նույնիսկ հանեց յագուարի կմախք և քարայծի ոսկորներ՝ անտառային ողբերգության համր վկայություններ: Արևը անողոք այրում էր. ափին վեր էին բարձրանում անտանելի գարշահոտություն արձակող ցեխի ու աղբի բլուրներ:

Աշխատանքը չէր ընդհատվում ոչ մի րոպե, բայց որևէ արդյունք չէր տալիս: Սակայն մի օր հայտնվեց հաջողության առաջին նախագուշակը: Սև ցեխի մեջ գտնվեցին ինչ-որ խեժանյուլի սպիտակադեղնավուն կտորներ: Կրակի վրա տաքացնելիս դրանք հարբեցնող քաղցրավուն բուրմունք էին արձակում: Թոմփսոնը չէր կասկածում, որ գտել է զոհաբերության ժամանակ քրմերի օգտագործած բուրումնավետ խունկը:

Շուտով գտածոները հայտնվեցին՝ ինչպես առատության եղջյուրից: Յուրաքանչյուր դույլ որևէ իր էր դուրս բերում՝ զարդեր, սկահակներ, նիզակներ, դանակներ կամ գավաթներ՝ պատրաստված օբսիդիանից և հասպիսից: Դե կանդայի հաղորդման վերջնական հաստատումն էր ջրհորի հատակից հանված աղջկա կմախքը:

Թոմփսոնը ցնծության մեջ էր: Նա հիշեց այն բոլոր խոչընդոտները, որ հաղթահարել էր հաջողության ճանապարհին, բոլոր հիասթափություններն ու նվաստացումները, որ կրել էր զանազան մարդկանցից, որոնք իրեն խաբեբա կամ անուղղելի երազող էին համարել: Իսկ այժմ նա կատարել էր հնագիտական կարևորագույն հայտնագործություններից մեկը Ամերիկայում:

Հետագա որոնումները նա որոշեց շարունակել ջրասուզակի զգեստով: Իր ստորջրյա արկածները և ապրումները նա այնքան վառ և դրամատիկ է նկարագրում, որ ավելի լավ է խոսքը տանք հենց իրեն:

Քանի դեռ կանգնած էի սանդուղիի առաջին աստիճանին, մեկը մյուսի հետևից ինձ մոտեցան անձնակազմի բոլոր անդամները, իմ հավատարիմ բնիկները: Դեմֆի խիստ արտահայտությամբ նրանք թափահարեցին ձեռքս, իսկ հետո, եա գնալով իրենց տեղերը, սկսեցին սպասել ազդանշանի: Դժվար չէր կոանել նրանց մաքեր. նրանք ինձ հրածեշա էին տալիս, այլևս հույս չունեին ինձ տեսնել այս աշխարհում: Ես բաց թողեցի բռնակը և արճնի պես սուզվեցի ջրի հատակը, իմ ետևից թողնելով արծաթափայլ պղպջակների շղթա: Ես դեռ չէի հասցրել տասը ոտնաչափ սուզվել, երբ ջրի դեղին գույնը փոխվեց կանաչի, իսկ հետո՝ մուգ ծիրանագույնի: Այնուհետև զարհուրելի խավարի մեջ ընկա: Օղի ուժեղացող նեշումից ականջներս անտանելի ցավում էին: Ես կուլ տալու շարժում արեցի

և բացեցի օդի կափույրները: Ականջներումս «ֆֆ, ֆֆ» հիշեցնող խշշոց լսվեց, և ցավը դադարեց: Նախֆան հատակին հասնելը ստիպված էի մի ֆանի անգամ կրկնել այդ: Սուզվելու ժամանակ ունեցա մի տարօրինակ զգացում ևս: Թվում էր, թե արագ կորցնում եմ ֆաշս, և երբ ի վերջո իմ ոտների տակ հայտնվեց ֆարե մեծ կոթողի հարթ եզրը, որը մի ժամանակ կանգնած է եղել ջրհորի մոտի ֆանդված հուշարձանի վրա, ինձ թվաց, թե ես լրիվ անկշռելի դարձա: Ես բոլորովին չէի զգում իմ զգեստի ծանրությունը, այնպիսի զգացողություն էր, կարծես ուսիցս ձկան ֆուչիկ էր կապած:

Բոլորովին յուրահատուկ զգացում պատեց ինձ, երբ գիտակցեցի, որ առաջին կենդանի էակն եմ, որը ոչ միայն թափանցել է այստեղ, այլ նաև հույս ունի ողջ ու անվնաս ետ վերադառնալ: Հետո մոտս իջավ հույներ, և մենք իրար ձեռք բռնեցինք:

Շերեփը տիղմի մեջ վեց մետր բարձրությամբ՝ ուղղահայաց պատերով միջանցք էր ֆորել... Այստեղ ու այնտեղ, կարծես շամիչը պուդինգի մեջ, տիղմից ամենատարբեր շափերի ժայռաբեկորներ և ֆարեր էին դուրս ցցվել: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ վիճակում էինք մենք մթության մեջ, ցեխի ալիքներում տնտղում էինք կրային հատակի նեղները և ծերպերը, որոնելով այն առարկաները, որոնք չէր կարողացել հանել հողահան սարքը: Բացի դրանից, ժամանակ առ ժամանակ այդ զարհուրելի մթության մեջ մեզ վրա էին ընկնում ջրի հորձանֆով տեղահան եղած ֆարե մեծ բեկորներ: Եվ այնուամենայնիվ գործերն այնֆան վատ չէին, որֆան կթվար առաջին հայացֆից: Ճիշտ է, ֆարի ծանր բեկորները ամեն ռոպե կարող էին մեր գլխին ընկնել, և մենք ոչ կարող էինք դրանք անենել, ոչ էլ արգելֆ հանդիսանալ դրանց ընկնելուն, սակայն ֆանի դեռ մեր խոսաֆողները, օդապարկերը, ֆրկապարանները և մենք ինֆներս պատից պատկանելի հեռավորության վրա էինք գանվում՝ հարաբերական անվտանգության մեջ էինք:

Այդ շրջանի այժմյան բնակիչները գտնում են, որ սուրբ ջրհորի խավար խորֆերում մեծ օձեր և զանազան հրեշներ են լինում... Ես սզդունների գիրկը շրնկա, բայց արժե, որ պատմեմ այնանեղ պատահած մի դեպֆի մասին: Մենք երկուսով, ես և հույներ, այնպիսի հաֆշտակությամբ էինք ֆորֆրում հատակի նեղֆր (որը շատ հարուստ էր գտածոներով), որ մոռացել էինք սովորական նախազգուշական միջոցների մասին: Հանկարծ ես զգացի, թե ինչպես մի ծանր բան պարուրող շարժումներով սեղմում է ինձ հատակին: Ինչֆոր հարթ և լարժուն բան ուժգնորեն ինձ աֆղմի մեջ էր խրում: Արյունը ֆառացիորեն ստոեց երակներումս: Հետո ես զգացի, որ հույներ ինձ օգնության հասավ: Միացյալ ուժերով մեզ

հաջողվեց ազատվել այդ փորձանքից: Դա ծառի փուսած բունն էր, որը ջրի մեջ սուզվելիս, ուղիղ ընկել էր վրաս, երբ ես փռվել էի ջրհորի հատակին:

Որոշումների արդյունքները ուղղակի ապշեցուցիչ էին և լրիվ հաստատեցին այն ավանդությունը, որ ջրի մեջ աղջիկներ են գցել:

Ջրհորից հանվեցին հազարավոր ամենաբազմապիսի առարկաներ՝ ուլունքներ, ապարանջաններ, թասեր և աստվածների հասափսե արձանիկներ, քանդականախշ սսկե վահաններ, դանակներ և օբսիդիանից հիանալի հղկված հայելիներ, բայց, ամենակարևորը՝ դեռատի կանանց գանգեր:

Գտնված իրերի մեծ մասը ջարդված էր: Դա բացատրվում է նրանով, որ ըստ մայաների հավատալիքների, առարկաները նույնպես հոգի ունեն, ուստի դրանք նախքան ջուրը նետելը զրկում էին կյանքից՝ զոհասեղանին խփելով: Դրա շնորհիվ առարկաների հոգիները կարող էին ավելի հեշտ ծառայել իրենց տիրուհուն անձրևի աստծու թագավորությունում:

Երիտասարդ կանանց գանգերի մեջ Թամփսոնը անսպասելիորեն գտավ մի գանգ, որը, թերևս, պատկանել էր ծերունու:

Ո՞ւմն է եղել այդ գանգը: Մի՞թե անձրևի աստծուն քուրմ է զոհաբերվել: Հաստատապես ո՛չ: Ոչ ավանդությունները, ոչ ժամանակագրությունները ոչինչ չեն ասում այդպիսի զոհաբերությունների մասին:

Հնարավոր է, որ նրան ջուրն են գցել թշնամու ոազմիկները Մայապանի, Չիչեն Իցայի և Ուշմալի միջև տեղի ունեցող եղբայրասպան պատերազմների ժամանակ: Այդ ենթադրությունը նույնպես քննադատության չի դիմանում: Անհավանական է, որ այն ժամանակ, երբ ամբողջ քաղաքը կործանվում և ամայանում էր, ոազմիկները միայն մի հոգու ջուրը գցեցին և այն էլ ինչ-որ ծերունու:

Ամենաճշմարտանմանը մեզ թվում է երրորդ ենթադրությունը, աղջկա ետևից իրեն ջուրն է նետել հուսահատ հայրը: Չէ որ հնդկացիների հին երգերից մեկում ասվում է.

Մարավից շորանում են եգիպտացորենի կողրերը,
Չակ-Մոռլն է քեզ կանչում, աղջիկս,
Դայց առատ, քան անձրևի շիթերը,
Կթափվեն իմ դառն արցունքները...

Նոր Աշխարհի Պոմպեյը

Ացտեկների Տեսկոկո քաղաք-պետության թագավորները արվեստի եռանդուն հովանավորներ էին, և նրանց արքունիքը մշակութային կյանքի աշխույժ կենտրոն էր: Այնտեղ թագավորներից մեկը հուշակվեց

որպես ժողովրդական մեծ բանաստեղծ և մեծարվում էր բոլոր ացտեկների կողմից:

Թագավորական այդ տոհմի ուղղակի հետնորդն էր արքայազն Իկստլիլտոչիտլը, մի արտասովոր մարդ, որն այնպես տիրապետեց իսպաներենին, որ Մեքսիկայի նահանգապետը նրան իր թարգմանիչը և քարտուղարը դարձրեց:

Իկստլիլտոչիտլը իսպաներեն գրեց իր երկրի ընդարձակ պատմությունը, որտեղ պատմեց այն մարդկանց մասին, որոնք մինչ ացտեկների հայտնվելը Մեքսիկայում, դեպի երկինք խոյացող բուրգերով հսկայական քաղաքներ էին կառուցել այնտեղ:

Սակայն իսպանացիները նրան չհավատացին և այդ բոլորը հեքիաթների կարգը դասեցին: Չէ որ ամբողջ երկրում այդ իբրև թե հարուստ քաղաքների ավերակների հետքն անգամ չկար: Ճիշտ է, 1885 թվականին Ֆրանսիացի Դեզիրե Շարնեն, գանձեր որոնելու նպատակով երկրում շրջելիս, Հիդալգո նահանգի Տուլա դե Ալիենդե փոքրիկ քաղաքի շրջակայքում բուրգի հետքերի հանդիպեց, սակայն իսպանացիները ճուլնիսկ այդ դեպքում գլխի չընկան, որ դա կարող է տուտեկների մայրաքաղաք Տուլայի ավերակները լինել, որի մասին շատ համոզված գրել է ացտեկ արքայազնը:

Դրությունը փոխվեց միայն 1940 թվականին, երբ մեքսիկական հնագետները տուտեկների հին բնակավայրի տեղում կանոնավոր պեղումներ սկսեցին:

Պարզվեց, որ Մեխիկո քաղաքից ութսուն կիլոմետր հեռավորության վրա, թփուտների և հողի շերտի տակ ընդարձակ ավերակներ են թաքնված: Այնտեղ հայտնաբերվեցին արևի և լուսնի աստվածներին նվիրված երկու մեծ բուրգ, բազմաթիվ արձաններ, խորաքանդակներ, սյուներ, ինչպես նաև թրծած կավից շրատար խողովակների լայն ցանց: Ճատ հետաքրքիր էր նաև քարե նստարաններով մարզադաշտը, որը վկայում է, որ գնդակախաղը Կենտրոնական Ամերիկայի առանց բացառության բոլոր հնդկացի ցեղերի ավանդական սիրած խաղն է եղել:

Այժմ ացտեկ պատմաբանին այլ կերպ սկսեցին նայել և նրա ամենաաննշան հաղորդումն իսկ գիտնականների աչքում արժանահավատություն ձեռք բերեց: Ի դեպ, նրանից մենք իմանում ենք, որ տուտեկները իրենց մայրաքաղաքը կառուցել են 648 թվականին, իսկ այնտեղից անհայտ պատճառներով հեռացել են 1051 թվականին: Նրանք ունեին գիր և մաթեմատիկա, ստեղծել էին լուսնային օրացույց և հիանալի շինարարներ էին: Նրանց կրոնը և օրենսդրությունը մեղմաբարո էին, իսկ թագավորները հայտնի էին իրենց իմաստնությամբ: Պատմվում էր նաև, որ տուտեկները իբրև թե խաչասերման եղանակով զանազան գույների թել ունեցող բամբակ էին աճեցրել:

Տուտեկների մյուս քաղաքը մեքսիկացի հնագետները գտան այժմյան

Սան Խուան նահանգում: Այն Թեոտիխուական էր կոչվում և, ինչպես երևում է ավերակներից, քսան քառակուսի կիլոմետր տարածություն էր զբաղում: Հարթաքանդակներով և որմնանկարներով ծածկված շքեղ պալատներից բացի, այնտեղ եղել են նաև մի քանի հսկայական բուրգեր: Ինչպես հաստատում է Իկստլիլտոչիտլը, արևի և լուսնի բուրգերի վրա ոսկե խորհրդանիշներ են եղել, որոնց ողորկած մակերեսը գիշեր Է-ցերեկ պայծառ լույս էր անգրադարձնում, որպես փարոս ծառայելով ուխտագնացների համար:

Ինչպես հնդկացիների մյուս քաղաքներում, Թեոտիխուականում նույնպես գլխավոր դեկորատիվ թեման փետրավոր օձն էր՝ մորուքավոր սպիտակ աստժո խորհրդանիշը: Բացի դրանից, այնտեղ երևան են գալիս նաև այլ, ինքնօրինակ թեմաներ: Այսպես, օրինակ, մի շարք որմնանկարներ պատկերում են անձրևի աստժո կյանքը, ինչպես նաև դրախտը, որտեղ ուրնիս հանգուցյալները մարգագետնում գնդակ են խաղում:

«Արևի բուրգի» ստորոտում ձգվում է այսպես կոչված «Մահվան ճանապարհը»: Նրա երկարությամբ գտնվել են բազմաթիվ գերեզմաններ՝ մեռածների աճյուններով, խճանկար դիմակներով, թրծակավից գրոտեսկային ոճի գլուխներով և հարուստ զարդանախշված կավե ամանների բեկորներով:

Թեոտիխուականը ամայացել է մեր թվականության տասներորդ կամ տասնմեկերորդ դարում: Պատճառը բնակիչների կողմից անտառների ոչնչացումն էր, որի հետևանքով հողը լրիվ ամլացել է, ինչի մասին, ի դեպ, այժմ էլ վկայում են շրջակայքի բոլորովին մերկ բլուրները: Տուտեկները տեղափոխվեցին Յուկատան, որտեղ ձուլվեցին տեղի մայաների ցեղի հետ:

Տլակոլուլա հովտում, մեքսիկական Օախակա քաղաքից հարավ-արևելք երեսուն կիլոմետր հեռավորության վրա, հողի հաստ շերտի տակից պեղվել են սապոտեկների մայրաքաղաք Միթլի ավերակները: Այդ ավերակների մասին գիտեին դեռ ացտեկները և դրանք անվանում էին «տրամության վայր»: Այդպիսի քաղաքներում սովորաբար հանդիպող բուրգերից և պալատներից բացի, հատուկ ուշադրության է արժանի Ֆալլոսյան հսկայական սյուներով «Սյունազարդ դահլիճը»:

1931 թվականին մեքսիկացի հնագետ Ալֆոնսո Կասոն արտասովոր հայտնագործություն կատարեց: Օախակո նահանգում, Մոնտե Ալբանայում (Սպիտակ լեռ) պեղումներ կատարելիս, նա հայտնաբերեց խորհրդավորության մշուշով պատած մի քաղաք, որը, հնագետների կարծիքով, Միթլից շատ առաջ եղել է սապոտեկների մայրաքաղաքը: Դա ավերակների ընդարձակ կույտ էր՝ բազկացած հսկայական տաճարներից, պալատներից, հիերոգլիֆներով և աստվածներ պատկերող հարթաքանդակներով սալաքարերից, արձաններից և արտակարգ գեղեցիկ խեցեգործական իրերից:

Սակայն Մոնտե Ալբանան հռչակվեց գլխավորապես այնտեղ գտնված գանձերի շնորհիվ: Բազմաթիվ հին գերեզմաններում գտնված կմախքները վարդարված էին հիանալի հղկված լեռնային բյուրեղապակուց, ոսկուց, հասպիսից, մարգարտից, սաթից, մարջանից, օբսիդիանից, սադափից և յագուարի ատամներից պատրաստած թանկագին զարդերով: Մանյակներից, ճարմանդներից, ականջօղերից, ապարոշներից, ապարանջաններից և մատանիներից բացի, այնտեղ գտնվել են նաև ծխախոտատուփեր, բազմագույն փետուրներով հովհարներ, ինչպես նաև ճշգրիտ մոդելավորված դեմքերով ոսկե դիմակներ: Գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ տոլտեկները այդ քաղաքից սապոտեկներին դուրս են քշել XII դարում:

Հնագիտական հետազոտությունների շնորհիվ մենք այժմ գիտենք, որ արդեն մեր թվականությունից մի քանի դար առաջ Կենտրոնական Ամերիկայում բնակվում էին բազմաքանակ և բարձր զարգացում ունեցող ժողովուրդներ, որ նրանց պատմությունը հարուստ է ողբերգական իրադարձություններով, երբեմն մղձավանջային երևույթներով:

1942 թվականին հնագետ Ա. Գ. Վերրիլը Պանամայում պեղեց այսպես կոչված կոկլենների մշակույթի ավերակները: Հազար շորս հարյուր քառակուսի կիլոմետր տարածությունը խիտ ծածկված էր գերեզմաններով, արձաններով, տաճարներով և պարզապես անհավատալի քանակությամբ խեցեղենով ու տնային գործածության իրերով և առարկաներով, որոնց կույտերի բարձրությունը երբեմն հասնում էր մինչև վեց մետրի:

Այնտեղ ամենազարմանալի հնագիտական հուշարձանը երկու գետերի միջև հարյուր ակր տարածություն զբաղեցնող «Հազար աստվածների տաճարն» է: Հարյուրավոր արձանները և վերից վար գունազարդված հարթ քանդակներով և հիերոգլիֆներով ծածկված բազալտե սյուները դրված են կանոնավոր քառանկյուն ձևով: Սյուները ամենաբազմազան կտրվածքներ ունեն՝ քառակուսի, կլոր, ութանկյուն և ձվածիր:

Բոլոր արձանները նայում են դեպի արևելք: Դրանք ոչ միայն մարդկանց են պատկերում, այլ նաև Պանամայում ապրող թռչուններին, սողուններին և բոլոր շորքոտանի կենդանիներին: Մարդկանց քանդակապատկերները, բացի մանյակներից և հատուկ գլխարկներից, ոչ մի հագուստ չեն կրում:

Անհայտ քանդակագործի հատիչով պատկերված տեսարանները աչքեցնում են իրենց մղձավանջայնությամբ: Քանդակներից մեկի վրա պատկերված են թիկունքներով իրար կպած «Սիամի երկվորյակները», մյուսում յագուարը թաթը դրել է գետնին տապալված տղամարդու վրա կամ հոշոտում է երեխային: Շատ հաճախ հանդիպում են քանդակներ, որոնք պատկերում են գանգուր մորուքները շոյող պատկառազու տղամարդկանց:

Մոտակա քարհանքերը, որտեղից քաղաքի բնակիչները կարող էին շինանյութ բերել, գտնվում են գետի մյուս ափից ավելի քան տասը կիլոմետր հեռավորության վրա: Այգալիսի միակտոր քարերի տեղափոխումը այժմ էլ հեշտ բան չէ: Իսկ ի՞նչ ասել այն հեռավոր ժամանակների մասին, երբ փոխադրական ոչ մի միջոց չկար և ամեն ինչ արվում էր մարդու ֆիզիկական ուժով: Միայն բաղմամբիվ մարդկանց միացյալ ուժերով հնարավոր էր այդ կիկլոպյան աշխատանքը կատարել: «Հազար աստվածների տաճարը» կառուցվել է կազմակերպված և զարգացած հասարակության շատ սերունդների ջանքերով:

Սյունների մոտ դրված էին լավ տաշած և հղկած թափանցիկ ծիրանաքարի կամ դեղին ու կարմիր հասալիսի սալեր: Դրանց վրա թափված էին կիսաքարացած, ածխացած փայտի հետ խառնված մարդկային ոսկորների ու ատամների կտորտանքներ, որից կարելի է եզրակացնել, որ դա եղել է զոհարան, որտեղ աստվածներին մարդկային զոհեր են մատուցել:

Տաճարի շրջակա հողերը անբերրի էին և մշակության համար ոչ պիտանի: Իսկ ինչպե՞ս կարող էր այնտեղ այդքան ըրազմամարդ հասարակություն գոյություն ունենալ: Պատասխանը դժվար չէր գտնել: Հողը մի ժամանակ բերրի է եղել, և այն անապատ է դարձրել Կորդիլիերի ստորոտից ոչ հեռու վեր քարձրացող Գուակամայո հրաբխի մոխիրը:

Հրաբխի խառնարանը մինչև այժմ էլ ճեղքված է, լեբկ ու մրտտված: Նրա ընդերքից խուլ դղրդյուն է լսվում, գոլորշու քուլաները և տաք ջուրը դուրս են ժայթքում, իսկ շրջակայքը ծածկված է հրաբխային մոխրի շերտով: Ամռանը ամբողջ երկիրը վեր է ածվում արևից այրված անապատի, իսկ անձրևների ժամանակ՝ անանցանելի ճահճի:

Մի շարք հանգամանքներ խոսում են այն մասին, որ Պանամայի ավերակները վերաբերում են հեռավոր ժամանակներին: Ավերակներում մեկից մինչև երեք մետր հաստության հողի շերտ է կուտակվել: Մեքսիկական հնագետները բարդ հաշվումներով, որոնք այստեղ բերելու կարիք չկա, հաշվարկել են, որ մեկ մետր հաստությամբ շերտի առաջացման համար առնվազն հազար երկու հարյուր տարի պետք է անցնի:

Դրանից հետևում է, որ պանամական այդ քաղաքը վերջնականապես լքվել է մոտավորապես VII դարում, բայց երեք մետրանոց շերտով ծածկված մասերը ամայացել են դեռևս մեր թվականությունից հազար յոթ հարյուր տարի առաջ:

Իր կործանման պահին այդ քաղաքը, անկասկած, շատ հին է եղել: Եթե նույնիսկ միահոծ քարի զանգվածների տեղափոխմամբ և շարմամբ հազարավոր բանվորներ են զբաղվել, ապա քաղաքի կառուցումը չէր կարող ընդամենը մի քանի սերնդի գործ լինել:

Այդ ավերակներում ամենազարմանալիս խեցիների հսկայական քանակությունն է: Դրանք թափված են ամենուրեք, բայց ամենամեծ

կուտակումը գտնվում է տաճարի քառասնկյունում, արձանների և սյու-
ների մոտ:

Ինչպե՞ս բացատրել այդ աներևակայելի քանակության խեցիների
առկայությունը: Առեղծվածի գաղտնիքը հնագետները գտել են սյուների
և արձանների վրա: Այնտեղ ջարդված կճուճները բազմաթիվ հետքեր էին
թողել: Ամենահավանականն այն է, որ կրոնական ծեսը պահանջում էր
աստվածներին բրուտազործական առարկաներ զոհաբերել:

Այդ սովորության հնուսթյան մասին է վկայում այն հանգամանքը, որ
սի քանի տեղ խեցիների շերտը մինչև վեց մետրի է հասնում: Այն հնա-
գետներին հնարավորություն տվեց հետադոտել այդ անհայտ մշակույթի
զարգացման ընթացքը: Ամենաներքևի շերտում գտնվել է շատ պարզ
գծային զարդանախշերով խեցեղեն, իսկ վերին շերտերում՝ զարմանա-
լիորեն գեղեցիկ ջնարակով և հմտորեն կատարված զարդանախշերով
կճուճներ: Դարերի ընթացքում խեցեգործությունը բարձր կատարելության
է հասել այստեղ:

Մի անգամ հնագետները աննկարագրելի հուզմունք ապրեցին: Սև-
փական աչքերին չհավատալով, նրանք խորաքանդակներից մեկի վրա
փղի որոշակի պատկեր տեսան: Սխալի հնարավորությունը բացառվում էր:

Ճիշտ է, Կենտրոնական Ամերիկայում փղեր ապրել են, բայց նրանք
մոտավորապես տասը հազար տարի առաջ բնաջնջվել են: Թեոտիխուա-
կանից ոչ հեռու Թեպեխպան անունով մի փոքրիկ քաղաք կա: 1947 թվա-
կանին այնտեղ հնդկացի որսորդի ոսկորների հետ միասին փղի ոսկոր-
ներ են գտնվել: Հետազոտությունները ցույց են տվել, որ գտածոն պատ-
կանում է մեր թվականությունից առաջ տասնհինգերորդ հազարամյակին:

Իսկ ինչպիսի՞ հրաշքով Պանամայի նախաքնակչությունը կարող էր
փղի մասին իմանալ: Պատասխանը կարող է միայն մեկը լինել. կամ
քաղաքը մեր թվականությունից տասը հազար տարի առաջ գոյություն է
ունեցել, կամ բնակչությունը ծովագնացության միջոցով ուղղակի կապ
է պահպանել Արևելքի հեռավոր երկրների հետ:

Այդ ժողովրդի մասին մենք քիչ բան կարող ենք ասել: Հայտնի է
միայն, որ դա իսաղաղասեր ժողովուրդ էր, որի ապացույցն են շատ քիչ
քանակությամբ գտնված զենքերը, որ՝ նրա մշակույթը զարմանալիորեն
նման է մայաների մշակույթին, որ նա երկրպագում էր արևին և, ինչպես
Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի բոլոր ժողովուրդները, հա-
վատում էր փետրավոր օձին: Խորաքանդակները ցույց են տալիս, որ այդ
ժողովրդի տղամարդիկ եղել են բարձրահասակ, մկանուտ, կլոր գանգով
և մարմնի կազմվածքով նման չէին հնդկացիներին:

Իսկ ինչպիսի՞ աղետ է տեղի ունեցել և կործանել այդ ծաղկուն, կեն-
սակայուն մշակույթը, որն այդպես հանկարծ անհետացել է, իբենից
հետո միայն քարի հսկայական կույտ թողնելով: Այդ հարցին պատաս-
խանում են իրենք՝ փլատակները:

Հուլիսի 2-ին հաստիճանների նման կոտորտված և ցիրուցան հղած հսկայական սյուների, կարծես հսկաների ձեռքով շարդած և պատվանդաններից ցած գլխոված քանդակաթղթերը, գլխիվայր շուռ տված արձանները, ալիքաձև ծամոս հղած հողը, հրաբխային մոխրի շերտերը՝ արդյո՞ք այս բոլորը չեն վկայում ուժեղագույն երկրաշարժի մասին:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ է տեղի ունեցել: Տասը կիլոմետր հեռավորության վրա գտնվող Գուակամայո հրաբուխը հանկարծ արթնացել է իր հավերժական քնից, որոտացել և կրակի շատրվաններ ժայթքել: Երկիրը հարբածի նման օրորվել է: Առաջին ցնցումից հետո փրկված, սարսափահար բնակիչները խելակորույս վազել են դեպի տաճար, որպեսզի զայրացած աստծու գուժը շարժեն մեծ քանակությամբ մարդկային զոհեր մատուցելով:

Նրանց աղերսանքները տեղ չեն հասնում: Երկիրը ալեկոծված ծովի նման ցնցվում և երբեում էր, հրաբուխը դրդում և որոտում էր՝ շիկանալուց սպիտակած մոխրով ծածկելով ամեն ինչ: Այն բնակիչները, որոնք քարի զանգվածների տակ չէին ճգմվել կամ թունավոր գոլորշիներից թունավորվել, փախան ջունգլիների խորքը և խառնվեցին հնդկացիների վայրի ցեղերին:

Հսկայական պանամական երկրում, ուր հազարավոր տարիների ընթացքում աղբյուրի նման հորդում էր տաղանդավոր ժողովրդի կյանքը, տիրեց գերեզմանային լուսթյուն:

«Ոսկեզօծ մարդու» գանձերը

1536 թվականի մարտ ամսին իսպանացի ճանապարհորդների մի խումբ Կալիֆոռնիայի ծոցի մոտ արտասովոր արկածի հանդիպեց: Հուլիսի 2-ին գոռգոռալով և ձեռքերը թափահարելով, նրանց ճանապարհը Լադոնց մի մարդ, որին ուղեկցում էին երկու հնդկացիներ: Իր մորուքով և գզուզ մազերով նա նման էր աստվածաշնչական նահապետի:

Նա կցկտուր պատմեց, որ իր նավը Ֆլորիդայի ափերի մոտ խորտակվել է և ամբողջ անձնակազմից միայն ինքն է փրկվել: Այդ ժամանակից սկսած նա ամերիկյան ամբողջ մայրցամաքը կտրելով անցնում է դեպի արևմուտք, օգտվելով հնդկացի ցեղերի հյուրընկալությունից, մինչև որ հասնում է Խաղաղ օվկիանոսի ափը՝ Կալիֆոռնիա:

Իսպանացիների վրա ամենամեծ տպավորությունը գործեցին նրա պատմած հրաշքները Սիբոլիի յոթ քաղաքների գոյության մասին, որոնք իբր գտնվում են հյուսիսում ինչ-որ տեղ: Նրանց բնակիչները իբր ապրում են շափյուղայից կառուցված պալատներում և անհաշիվ ոսկի ունեն:

Առասպելական քաղաքների լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ Յվրոպայում: Դրանք բազմաթիվ արշավանքների նպատակակետ դարձան, որոնցից ամենախոշորը կազմակերպեց Ֆրանսիսկո Վասկես դե Կորոնադոն: Սակայն ոսկու, շափուղայի և փիրուզի փոխարեն Կորոնադոն Արիզոնայում գտավ հնդկացիական մերկ ցեղերի կավածեփ խղճուկ խրճիթներ:

Միբուլիի յոթ քաղաքները զուտ երևակայութեան կամ երագողների պատրանք դուրս եկան:

Հարավամերիկյան մայրցամաքի խորքերում իբրև թե պետք է գոյութիւն ունենար առասպելական էլզորադոն, մի քաղաք, որն ամբողջութեամբ կառուցված էր ոսկուց և արևի ճառագայթների տակ այնպես էր շողջողում ու հուրհրում, որ երևում էր մեծ հեռավորութեանից: Իսկ քաղաքի բնակիչները քայլում էին զարդերի և հավկիթի մեծութեան զմրուխտների ծանրութեան տակ կորացած:

Էլզորադոն կախարդել և գերել էր բազմաթիվ թափառական ասպետների, խաբեբանների և քախտախնդիրների երևակայութեանը: Համարյա հարյուր տարի հազարավոր մարդիկ, որոնք լուր էր երևակական քաղաքը, աննկարագրելի դժվարութեաններ և տանջանքներ են կրել, մահացել հիվանդութեաններից, թունավոր միջատների խայթոցներից և ուղեգնացիների հնդկացիների թունավոր նետներից:

1536 թվականին երիտասարդ իսպանացի Գոնսալո Հիմենես դե Կեսադան 875 զինվորներից կազմված արշավախմբի գլուխն անցած, ուղևորվեց էլզորադոն որոնելու: Հրամանատարը հագել էր արծաթով ասեղնագործած սև թավշյա զգեստ և արջնած պողպատից սաղավարտ դրել գլխին: Նրա սպաները զուգված էին ծիրանագույն մետաքսի զգեստներով և փարթամ փետրափնջերով զարդարված գլխարկներով: Զինվորները անխտիր պողպատե զրահ էին հագել:

Հարավային Ամերիկայի ջունգլիներում, իսկ հետո Անդերի երկնահաս լեռնանցքներով կատարած արշավը իսկապես դժոխային էր: Հիվանդութեանների, մահվան և դասալքութեան հետևանքով հոյակապ բանակը կիսով չափ մաղվեց: Հրամանատարի, սպաների և զինվորների գոնազեղ հազուստներից միայն ցնցոտիներ էին մնացել:

Միայն մի քանի ամիս հետո ուժասպառ կոնկիստադորների առջև առկայծեց առաջին հույսը: Հնդկացիների հետ ունեցած բազմաթիվ ընդհարումներից մեկից հետո նրանց ուղեգնացիները եղան զմրուխտե և ոսկե զարդերը: Դա միայն գրգռեց նրանց ախորժակը և կրկնապատկեց ջանքերը: Բայց արդեն այդ ժամանակ արշավախմբից մնացել էին միայն երկու հարյուր ուղորմելի ուղեգնացիներ, որոնք ավելի մուրացկանների էին նմանվում:

Անդերի բարձր լեռներում, ներկայիս Կոլումբիայի սահմաններում, նրանց ճանապարհը կտրեց չիբչա ցեղի հնդկացիների բանակը: Ընդհա-

րումը կարճ, բայց վճռական էր: Հնդկացիները իրենց նիզակներով և պարսատիկներով չէին կարող դիմադրել հրացաններով զինված իսպանացիներին: Եկվորների հաղթանակը անվիճելի էր:

Զիբչաների երկրում էր գտնվում ուղղաբերձ ժայռոտ ափերով եզրապատված Գուլատավիտա լիճը: Իսպանացիներն այնտեղ ճամբար դրեցին ու սկսեցին թալանել ոսկին: Երբ ոսկին սպառվեց, սկսեցին ցեղերի ավազներին տանջել, որպեսզի իմանան, թե որտեղ են թաքցրել ոսկու ենթադրյալ գանձերը: Սակայն միակ պատասխանը, որը տալիս էին խոշտանգվողները, լճի խորքը ցույց տվող ձեռքի շարժումն էր: Հավանաբար, պետք է որ այնտեղ գտնվեր ցեղի ամբողջ ոսկին:

Մի անգամ առավոտյան հնդկացիների թափորը սրինգների և թըմբուկների նվագակցությամբ, երգելով և պարելով, շարժվեց դեպի լիճը: Թափորի կենտրոնում պատգարակի վրա տանում էին ցեղի թագավորին:

Լճի ափին թագավորին պատգարակից հանեցին, լրիվ մերկացրին և, մարմնին խեժ քսելով, առատորեն ծածկեցին ոսկու փոշով: Ոսկեզօծ մարդը, արևի տակ փայլելով, նստեց նավակը, լողաց լճի կենտրոնը և ջրի մեջ սուզվեց:

Որոշ ժամանակ հետո նա ջրի մակերես դուրս եկավ արդեն ոսկուց մաքրված և հնդկացիների ողջույնի ճիշերի ուղեկցությամբ ափ վերադարձավ: Ծիսակատարության վերջում, ի դարմանք իսպանացիների, լճի մեջ ոսկյա թանկարժեք զարդերի, մանյակների, ասլարոշների, ապարանջանների, մատանիների անձրև տեղաց: Բոլոր գանձերը սուզվեցին ջրի հատակը:

Այդ ծիսակատարության հիմքում, ինչպես իսպանացիները թարգմանչից իմացան, շիբչաների հին ավանդությունն էր ընկած:

Վաղուց, շատ վաղուց, Սիպա թագավորը իր կնոջ սիրեկանին ցցին նստեցրեց, իսկ կնոջն ստիպեց ուտել նրա մարմինը: Այդ դաժանությունից սարսափած կինը վերցրեց իր դստերը և լիճը նետվեց, որտեղ այդ ժամանակից ի վեր ապրում է իր ամուսնու՝ փետրավոր օձի մոտ:

Այդ ժամանակից սկսած ամեն տարի, այդպիսին է քրմերի երգի բովանդակությունը, շիբչա ցեղի թագավորները ըստ ավանդության լճի մեջ են սուզվում, որպեսզի զոհաբերվող ոսկով և զմրուխտներով ներում աղերսեն նախահոր դաժան արարքի համար:

Քանի որ այդ սովորույթը գոյություն ունի արդեն մի քանի դար, ապա լճի հատակի գանձերը պետք է գերազանցեին ամեն մի երևակայություն: Ուշագրավ է, որ շիբչաները իրենց ոսկու հանքերը չունեին: Նրանք ոսկին հարևաններից էին ստանում, փոխարենը տալով կարտոֆիլ, եգիպտացորեն, լոբի, իսկ ամենից շատ՝ զմրուխտ, որով շատ հարուստ էին նրանց լեռները: Շղթայաձև փոխանակման շնորհիվ շիբչաների զմրուխտները հասնում էին Պանամայի կոկլե ժողովրդին և նույ-

նիսկ մինչև Մեքսիկա, որտեղ Կորտեսը շատ ուրիշ զմրուխտների հետ միասին ձեռք բերեց հավկիթի մեծության մի զմրուխտ:

Մի անգամ թանկարժեք իրեր որոնելու ընթացքում իսպանացիները հասան Գուաուապիտա լճից դեպի արևելք ընկած Տունյա գյուղը և այնտեղ մի արտասովոր տեսարանի հանդիպեցին. տների, հողաթմբերի վրա թղթի հաստության ոսկե մեծ թերթեր էին կախված: Քամուց ծփացող ոսկու թերթերը արձակում էին տավղի հնչյուններ հիշեցնող նուրբ ղնգոց:

Քրմերը նուրբ ալանջողեր և բազմագույն փետուրներով ապարոշներ էին կրում: Բոլոր բնակիչների հագուստները ընկույզի մեծության զմրուխտներով էին զարդարված: Նրանց քթից ոսկե գրոտեսկային զարդեր էին կախված, որոնք ծածկում էին բերանը և ձայնին մետաղային տարօրինակ երանգ տալիս:

Կոնկիստադորները երկու տարի թափառում էին այդ երկրում, թալանելով ինչ որ պատահի: Խիմենես Կեսադայի վկայությամբ, նրանք այնքան ոսկի հավաքեցին, որ կարող էին մի մեծ սենյակ մինչև առաստաղը լցնել, բացի դրանից նրանք հափշտակեցին մեծ արծեք ունեցող 1185 զմրուխտ:

Այդ թալանչիական արշավանքների ժամանակ ծովի մակերևույցից 2645 մետր բարձրության վրա նրանք հիմնեցին Բոգոտա քաղաքը՝ Կոլումբիայի ներկայիս մայրաքաղաքը:

1539 թվականի փետրվար ամսին լուր տարածվեց իսպանական ինչ-որ անհայտ բանակի մոտենալու մասին: Պարզվեց, որ նրա պարագլուխն է փորձված կոնկիստադոր, ուժեղ և հանդուգն Սերաստիան դե Բենալկասարը, որի երակներում մավրիտանական կրակոտ արյուն էր հոսում: Սրան նույնպես Անդեր էր բերել էլզորադոյի համբավը:

Բենալկասարի կյանքը լի էր ամենաբազմապիսի արկածներով:

Սկսել է նա որպես իշապան: Մի անգամ էլը ճահճուտն է ընկնում, և զայրացած Բենալկասարը բռունցքի մի հարվածով սպանում է խեղճ անասունին: Խուսափելով պատժից, նա փախչում է Կադիքս, որտեղ վարձվում է Ամերիկա մեկնող նավի վրա: Թափառելով Կենտրոնական ու Հարավային Ամերիկայում, նա 1534 թվականին հիմնում է Լեոն և Կիտո քաղաքները: Այնտեղ գերի հնդկացուց իմանում է «ոսկեղօծ մարդու» մասին և անուղղելի ստահակներից ջոկատ կազմելով, շտապ արշավանքի է դուրս գալիս:

Երկու բանակները լրիվ մարտական պատրաստականությամբ կանգնել էին իրար դիմաց: Ընդհարումը ուր որ է պետք է բռնկվեր հնդկացիների աչքերի առաջ, երբ հանկարծ, ի զարմանս բոլորի, ջունգլիներից հայտնվում է սաստիկ նիհարած ձիերի վրա նստած իսպանացի թափառաշրջիկների երրորդ բանակը:

Այն գլխավորում էր շիկամորուս գերմանացի Նիկոլաուս Ֆեդեր-

մանր: Նա այն մարդկանց գործակալն էր, ովքեր գերմանական կայսրից վասալական սեփականություն էին ստացել Վենետուելան: Չիրշա ցեղի ոսկու մասին իմանալով, Ֆեդերմանը շորս հարյուր մարդուց բաղկացած ջոկատի ղուլխն անցած շարժվեց արևմուտք՝ դեպի Անդեր: Համարյա երեք տարի արշավախումբը գնում էր ջունգլիներով, պայքարելով ռադմատենչ հնդկացիների և մալարիայի դեմ: Հիվանդությունները և մարտերը այն աստիճան արյունաքամ արին նրա ջոկատը, որ երբ նա հայտնվեց Գուատավիտա լճի մոտ, միայն ուժասպառ եղած հարյուր մահապարտ էին մնացել:

Հարված բանակցություններից հետո երեք պարագլուխները որոշեցին պայքարից հրաժարվել, իսկ շիբչաների վասալական պատկանելության հարցը ներկայացնել Իսպանիայի թագավորի տնօրինությանը: Սակայն նրանք մահացան Իսպանիայում, այդպես էլ չիմանալով վճիռը:

Համաձայնությունը, որին եկան ավազակները, շիբչաներին ոչ մի լավ բան չբերեց: Ամբողջովին կողոպտված, շղթայված, նրանք ստրկացվեցին և շուտով լրիվ բնաջնջվեցին: Չնայած հնդկացիներից խլած զարդերի գեղարվեստական արժեքին, կոնկիստադորները այդ բոլորը ոսկու ձուլակտորներ դարձրին:

Սակայն լճի հատակի գանձերը դեռևս մնում էին:

1580 թվականին լիմացի վաճառական Անտոնիո Սեպուլվեդան դրանց շահագործման իրավունք ստացավ: Նա շատ հնարամտորեն գործի անցավ: Մի քանի հարյուր հնդկացի վարձելով, նա հրամայեց ժայռոտ ափից ջրանցք բացել, որպեսզի լճից ջուրը հեռացնեն: Շուտով ափին թանձր տիղմ հայտնվեց, որտեղ, ինչպես շամշահատիկները խմորի մեջ, բազմաթիվ զմրուխտներ և ոսկե իրեր էին երևում:

Լճի հատակը խոր ձագարի ձև ուներ, ուստի, որպեսզի կենտրոնին հասնեն, որտեղ, հավանաբար, գտնվում էր գանձերի գլխավոր մասը, անհրաժեշտ էր ջրի մակարդակը էլ ավելի իջեցնել: Մինչդեռ այն ժամանակ, երբ գտնվեց զմրուխտներով զարդարված հիանալի գավազանը, Սեպուլվեդայի միջոցները սպառվեցին: Թագավորական գանձապետները բռնագրավեցին նրա գտած գանձերը, իսկ ինքը մահացավ աղքատանուցում: Նրա գտած թանկարժեք իրերը այսօր գտնվում են Կոլումբիայի թանգարանում:

Կոլումբիական արխիվային փաստաթղթերի համաձայն, XVII և XVIII դարերի ընթացքում բազմաթիվ փորձեր են ձեռնարկվել շիբչաների գանձերը հանելու նպատակով: Սակայն այն ժամանակվա տեխնիկայի մակարդակի պայմաններում լիճը չէին կարող այնքան ցամաքեցնել, որ հնարավոր լիներ հասնել տղմոտ հատակի ամենախոր տեղը, որտեղ, իհարկե, ընկել էր թանկարժեք իրերի ամենամեծ քանակությունը:

XIX դարում շիբչաների գանձերը կրկին մեծ աղմուկի տեղիք տվին գերմանացի հայտնի աշխարհագրագետ և ճանապարհորդ Ալեքսանդր

Հումբոլդտի շնորհիվ, որը դեռ պատանի հասակում երազել էր գտնել էլզորագոյի գանձերը:

1801 թվականին նա հասավ Բոգոտա, որտեղից արշավախմբով ուղևորվեց դեպի շիրջանների լիճը: Նա կազմեց լճի ճշգրիտ քարտեզը և հաշվարկեց, որ լճի հատակում պետք է որ առնվազն հիսուն միլիոն ոսկյա զարդեր գտնեն:

1912 թվականին Անգլիայում լճի շահագործման համար բաժնետիրական ընկերություն կազմակերպվեց երեսուն հազար ֆունտ ստերլինգ դրամագլխով: Այդ արդիական ոսկի որոնողները որոշեցին լիճը լրիվ ցամաքեցնել և ջորիներով Անդերի վրայով հսկայական շոգեպոմպեր տեղափոխեցին այնտեղ:

Մի քանի շաբաթվա լարված աշխատանքից հետո լճի մակարդակը նախկինի համեմատությամբ իջավ տասներկու մետրով և փոքրիկ լճի շափեր ընդունեց: Հնդկացի բանվորները թանձր զարշահոտ տիղմից սկսեցին բահերով մեծ քանակությամբ զմրուխտներ և ոսկյա զարդեր հանել: Թվում էր, թե ի վերջո լիճը ստիպված կլինի տալ նախանձախնդրությամբ պահպանող իր գանձերը:

Սակայն մինչև կհաջողվեր իսկական հատակին հասնել, նոր անսպասելի դժվարություն առաջացավ: Արևի ազդեցության տակ տիղմը մի ակնթարթում ցամաքում և բետոնի նման ամրանում էր, որի դեմ նույնիսկ արդի տեխնիկան անզոր գտնվեց: Անգլիացիները ստիպված էին հրաժարվել հետագա շահագործումից:

Այդպիսով հարյուր հազարավոր, իսկ հնարավոր է՝ միլիոնավոր պատմական և գեղարվեստական մեծ արժեք ունեցող ոսկե առարկաներ առաջվա նման հանգրվանում են Գուատամալիտա լճի խորքերում: Անկասկած մոտիկ ապագայում կվերսկսվեն դրանք հանելու փորձերը նորագույն տեխնիկայի կիրառման շնորհիվ: Սակայն այժմ, գիտության ներկայիս մակարդակի պայմաններում, դրանք արդեն բախտախնդիրների անիմաստ ազահուսթյան զոհ չեն դառնա: Հնագետների հոգատար հսկուչությամբ դրանք կտեղափոխվեն թանգարանները, փառաբանելով շիրջանների բնաջնջված ցեղը:

Հազարավոր գաղտնիքների երկրում

Ինչպես բխում է նախորդ գլուխներից, Կենտրոնական և Հարավային Ամերիկան հետազոտող հնագետները կարող են հպարտանալ իրենց կատարած պեղումների հարուստ արդյունքներով: Սակայն, ըստ էության, մենք դեռևս քիչ բան գիտենք այն ժողովուրդների մասին, որոնք մինչև սպիտակ մարդու այնտեղ հայտնվելը բնակվել են այդ շրջաններ-

րում: Նրանց պատմությունը դեռևս ծածկված է գաղտնիքի քողով: Մենք չգիտենք այդ տաղանդավոր ժողովուրդների ծագման մասին, անհայտ է նրանց հասարակական և մշակութային կյանքի սկիզբը, նույնիսկ չենք կարող ասել, թե ինչու և ինչպես են նրանք բնաջնջվել:

Հնագետներին այստեղ հանգիպեց իր տեսակի մեջ, թերևս, եզակի մի դեպք, երբ սովորաբար պերճախոս մշակութային շերտերը այստեղ ընդհանրապես չուում են այդ քաղաքակրթությունների աստիճանական դարգացման, բազմադարյա աճի և հասունացման մասին: Գտածոներից դատելով, կարելի է ասել, որ այդ քաղաքակրթությունները հայտնվել են անմիջապես արդեն կատարյալ ձևերով և նույնքան անսպասելի էլ անհետացել:

Մայաների դպրությունը պետք է դասել մարդկության ամենազարմանահրաշ նվաճումների կարգը. այն կարող է միայն բազմադարյա դարգացման պտուղ լինել: Սակայն արձանագրությունների մեջ այդ դարգացման հետքն անգամ չկա: Նույնը կարելի է ասել նաև հնդկացիների այլ նվաճումների՝ աստղագիտության, մաթեմատիկայի, արվեստի կամ շինարարության մասին:

Միայն մի բան կարելի է կասկածից վեր համարել. ամերիկյան մայրցամաքի բոլոր ժողովուրդները ինչպես ռասայական, այնպես էլ մշակութային տեսակետից իրար հետ սերտորեն կապված էին: Այդ մասին են վկայում նրանց հավատալիքներում և սովորություններում եղած ղուգագիպությունները: Բոլոր հնդկացիները տաճարները կառուցում էին բլրագերի ձևով, բարձրությունների վրա, երկրպագում էին լուսնին և Աբեգակին, ինչպես նաև հավատում էին մորուքավոր սպիտակ ասածու մասին առասպելին, որի խորհրդանշանը փետրավոր օձն էր: Նրանց մոտ կային նաև, աշխարհում այլևս ոչ մի տեղ չհանդիպող, ընդհանուր սնտտիապաշտություններ: Այսպես, օրինակ, նրանք ապրում էին աշխարհի կրթմանման ճակատագրական մշտական վախով, որը պետք է տեղի ունենար հիսուներկուամյա ցիկլերից մեկի վերջում: Նրանց ժամանակագրություններում, օրացուցային հաշվարկներում, ավանդություններում և մարգարեություններում կարևոր դեր է խաղում տասներեք թիվը, որը սրբադան և երջանկաբեր էր համարվում:

Մեքսիկայի բոլոր հին ժողովուրդները, ինչպես երևան հանեցին Պալենկեի և մյուս քաղաքների ավերակներում կատարած պեղումները, գիտեին և պաշտում էին խաչի նշանը: Նրանց կրոնում կային խոստովանություն, ապաշխարություն, մանուկների մկրտություն հիշեցնող ծեսեր և հազորդության նման ինչ-որ բան՝ նրանք ուտում էին եգիպտացորենի ալյուրից թխած աստվածների արձանիկներ:

Բազմաթիվ տեսակետներից բարձր դարգացած այդ ժողովուրդները անիվ և բրուտի դուրգ չեն հնարել, ոչ մի բեռնակիր կենդանի չեն ընտելացրել (բացառությամբ Անդերի հնդկացիների, որոնք ընտանի էին դարձ-

րել ուղտայծերին): Թեև պղնձի, ոսկու և արծաթի մշակման գործում նրանք արտասովոր վարպետության էին հասել, բայց երկաթ չէին հայտնաբերել, որը ավելի քան ասորիական է թվում, որովհետև Աֆրիկայում նույնիսկ զարգացման ամենաստորին աստիճանի վրա կանգնած ցեղերը ծովորել էին այն ձուլել:

Այդ հասուն մշակույթների հանկարծակի հայտնվելը միայն մի բացատրություն կարող է ունենալ. հնդկացիները ամերիկյան մայրցամաքի բնիկներ չէին, այլ այնտեղ հայտնվել էին որպես արտագաղթողներ՝ իրենց ուսուցիչ բազմաթիվ մշակութային նվաճումներով հանդերձ:

Իսկ որտեղի՞ց կարող էին եկած լինել նրանք:

Գիտնականները երեք ենթադրություն են առաջ քաշում:

Որսի հետամուտ որոշ վաչկատուն ցեղեր կտրել անցել են Սիրիի լայնարձակ տարածությունները և մի օր կանգ են առել Բերինդի նեղուցի առջև: Այն ընդամենը հիսուն կիլոմետր լայնություն ունի, ուստի անամպ օրերին ջրային արգելքի մյուս կողմում պարզ եղևացել է Ալյասկան: Հրապուրիչ խոստումներով լի անհայտ երկիրը տեսնելով, որսորդները որոշել են ինչ գնով և լինի հասնել այնտեղ:

Կայսակներով նեղուցն անցնելն այն ժամանակ մեծ դժվարություն չէր ներկայացնում, ինչպես հիմա: Զրի մակարդակը զգալիորեն ցածր էր, ուստի Ալեուտյան կղզիները երկու մայրցամաքները իրար միացնող համարյա անընդմեջ շղթա էին կազմում:

Որպես այդ տեսության հաստատում՝ մյուսների հետ միասին բերվում է նաև այն փաստարկը, որ շատ հնդկացիների դեմքեր մատնում են նրանց մոնղոլական ծագումը: Սակայն ավելի կարևոր է այն, ինչը հայտնաբերեց մայաների գրի գիտակ և այդ լեզվի քերականության ստեղծող սովետական ազգագրագետ Յու. Վ. Կնորոզովը: Նա պարզեց, որ մայաների գիրը իր հիմքում չի տարբերվում հին շինական նշաններից:

Գիտնականների մյուս խումբը գտնում է, որ հնդկացիները ամերիկյան մայրցամաք են եկել Օվկիանիայից կամ արդեն գոյություն չունեցող ինչ-որ արշիպելագից: Սակայն կարո՞ղ էին արդյոք մեծ թվով հնդկացիներ այդպիսի հսկայական ծովային տարածություններ անցնել բույսերից հյուսված, պարաններով կապված, արմավենու բներից պատրաստած պարզունակ լաստերով:

Այդ տեսության կողմնակիցները հարցին պատասխանում են հետևյալ ձևով:

Այո՛, դա հնարավորության սահմաններում է եղել, քանզի անհերքելիորեն ապացուցված է, որ Զատկի կղզին մնացորդն է մեծ արշիպելագի, որը համեմատաբար վերջերս է ընկղմվել խաղաղ օվկիանոսի խորքերը: Այդ արշիպելագը զգալի տարածության վրա ձգվում էր դեպի ամերիկյան մայրցամաքը: Բացի դրանից, օվկիանոսում քամիները գերազանցապես այդ նույն ուղղությամբ են փչում: Հետևաբար, բավական էր նրանց համ-

քին հանձնվել, Թրպեսզի մի կղզուց մյուսը լողալով, ի վերջո հասնեն Ամերիկա:

Որո՞չ հայտնագործություններ բավական համողիչ խոսում են այդ տեսություն օգտին: Օրինակ, պարզվել է, որ ամերիկյան ցեղերի տասնյակ բառեր ոչ միայն նման են Օվկիանիայի բարբառների բառերին, այլ ավելին, միևնույն նշանակությունն ունեն:

Հնագետները ավելացրին նաև իրենց փաստարկները. Կալիֆոռնիայի նախապատմական գերեզմաններում գտնվել են այնպիսի քարից պատրաստված կացիներ, որը միայն խաղաղ օվկիանոսի կղզիներում է հանդիպում:

Վերջում անհրաժեշտ է ասել, որ ըստ աղգագրագետների ուսումնասիրությունների, մաշկի գույնով, դիմագծերով և ուսայական մի շարք այլ հատկանիշներով հնդկացի ցեղերը շատ են հիշեցնում Օվկիանիայի բնակիչներին:

Ճշմարտությանը ամենից մոտ է թվում գիտնականների երրորդ խմբի կարծիքը, որոնք հիշյալ երկու տեսությունների մեջ ոչ մի հակասություն չեն տեսնում: Նրանք պնդում են, որ հնդկացիների մեջ ուսայական տիպերի տարբերությունն արդեն ցույց է տալիս, որ դարերի ընթացքում հնդկացի ցեղերի գաղթը երկու ճանապարհով էլ տեղի է ունեցել, այսինքն՝ թե Բերինգի նեղուցով և թե խաղաղ օվկիանոսի կղզիներով:

Բոլորովին այլ տեսակետ են արտահայտում այն գիտնականները, որոնք պնդում են, որ հնդկացիները եկել են արևելքից, այսինքն Նվրոպայից, բնակեցրել են ամերիկյան մայրցամաքը, իսկ հետո պարզունակ լաստերով լողալով անցել են խաղաղ օվկիանոսը և բնակեցրել Օվկիանիայի կղզիները:

Այդ գիտնականների թվին է պատկանում նորվեգացի Թուր Հեյերդալը, որը, ցանկանալով ապացուցել ծովային այդպիսի ճանապարհորդության հնարավորությունը, բալս ծառի բնից լաստ պատրաստեց և մի քանի ընկերների հետ լողալով անցավ խաղաղ օվկիանոսը:

Համաշխարհային մամուլը շատ հետաքրքիր հաղորդումներ հրատարակեց Թուր Հեյերդալի հնագիտական հայտնագործությունների մասին: Ցանկանալով ամրապնդել իր տեսակետը, Հեյերդալը ուղևորվեց Չատկի կղզի, որը հայտնի է իր բազմաթիվ հսկայական արձաններով, որոնք դարեր առաջ այնտեղ կանգնեցրել էին արդեն բնաջնջված ինչ-որ խորհրդավոր բնակիչներ:

Ռանու Ռարակ հրարխի լանջերին նորվեգացին հողի տակից հանեց մարդկանց պատկերող հսկայական քարե արձաններ, որոնց կրծքին քանդակված էին պարզված առագաստներով նավեր: Այդ արձանների վրայի մյուս զարդանախշերը իրենց ոճով և կատարման ձևով անկասկած հիշեցնում էին Պերուի արվեստը: Բացի դրանից, լեռնալանջերում գտնվել են

եղրապատված սանդղավանդներ, որոնք նույնպես հանդիպում են Անդերթի լանջերին՝ ինկերի թագավորությունում:

Այդ շատ կարևոր հայտնագործությունը վկայում է այն մասին, որ մի ժամանակ ինկերը գաղութացրել են Զատկի կղզին: Սակայն այդ փաստը կանխավ չի լուծում հնդկացիների ծագման հարցը, քանի որ կարող է գաղթային տարբեր տեսությունների ապացույց հանդիսանալ:

Այն հարցին, թե հնդկացիները երբ են հայտնվել ամերիկյան մայրցամաքում, հնագետների պատասխանը դարձյալ ենթադրությունների ոլորտից դուրս չի գալիս: Անվիճելի կարելի է համարել միայն այն, որ Պանամայում կոկլե ցեղի մշակույթին պատկանող քաղաքը մեր թվականությունից երկու հազար տարի առաջ արդեն գոյություն է ունեցել: Կարեւոր նշանակություն է ստացել այնտեղ գտնված փղի պատկերը, ամենայն հավանականությամբ դա վկայում է այն մասին, որ մեր թվականությունից տասը հազար տարի առաջ արդեն, երբ Ամերիկայում դեռևս փղեր կային, մարդիկ այնտեղ քաղաքներ են կառուցել:

Այդ տարեթիվը պարզելուն որոշակի շափով օգնեց Մեխիկո քաղաքի ճայրամասում բազալտի և քարացած լավայի բեկորների հսկայական կույտի տակ գտնվող Կուիկուիլկո բուրգի հայտնաբերումը: Շրջակա գյուղերի հետ միասին բուրգը նույնպես տարերային աղետի է ենթարկվել: Մոտակայքում գտնվող, այժմ արդեն հանգած Ախուակո և Շիթլի հրաբուխները մի օր ամբողջ շրջակայքը ողողել են տասը մետր հաստությամբ ունեցող լավայի հեղեղով:

Ցանկանալով որոշել, երբ է տեղի ունեցել այդ աղետը, հնագետները դիմեցին երկրաբաններին, որոնք ուսումնասիրելով լավան, պարզեցին, որ ժայթքումը տեղի է ունեցել առնվազն ութ հազար տարի առաջ:

Եթե նրանց հաշվարկները գիտականորեն հիմնավորված են (որոշ երկրաբաններ դրանք կասկածի տակ են առնում), ապա կոկլեների մշակույթը պետք է որ լինի աշխարհի ամենահին մշակույթը, շատ ավելի հին, քան Միջագետքի և Եգիպտոսի մշակույթները:

Ծանոթագրություններ

Ազամեմնոն՝ հին հունական Արգոս (Պելոպոնես) քաղաքի թագավոր, հույների առաջնորդը Տրոյական պատերազմում:

Աղամս Զոն Փաուչ (1819—1892)՝ անգլիացի աստղագետ, Երկնային մեխանիկայի բնագավառում նրա հիմնական աշխատանքը Լուսնի դարավոր արագացման մեծության տեսական որոշումն է: 1845 թ. Լեբրիեից անկախ, մաթեմատիկական հաշվարկներով որոշել մինչ այդ անհայտ Նեպտուն մոլորակի գերքը:

Ադրիանոս Պալլոս էլիոս (76—138)՝ Հռոմի կայսր, ստրկատիրական արիստոկրատիայի դրածո Անտոնինոսների դինաստիայից:

Աթենաս Պալաս՝ հին հույների դիցարանության մեջ պատերազմի և հաղթանակի, իմաստության ու գիտելիքների, արվեստների ու արհեստների դիցուհի: Համարվել է Աթենք քաղաքի հովանավորուհին: Աթենքում Քանվոդ Աթենասի տաճարը՝ Պարթենոնը, հին հունական արվեստի մեծագույն հուշարձանն է:

Աբրիդեսներ՝ Միքենեի Աթրես թագավորի որդիներ Ազամեմնոնը և Մենելայոսը:

Ամենեմհետ III (մ. թ. ա. 19-րդ դ. վերջ)՝ Միջին թագավորության Եգիպտոսի փարավոն: Նրա կառավարման ժամանակ կատարվել է եռանդուն շինարարություն, ավարտվել են ջրարբիացման աշխատանքները Ֆայումում:

Ամենհոտեպ I (մ. թ. ա. 16-րդ դ. կես)՝ Նոր թագավորության Եգիպտոսի փարավոն, Ցահմոս I-ի ժառանգը:

Ամենհոտեպ II (մ. թ. ա. 15-րդ դ. առաջին կես)՝ Եգիպտոսի փարավոն, Թութմոս III-ի որդին: Արշավանքներ է կատարել դեպի Ասորիք և Պաղեստին, զավթել հսկայական քանակությամբ ստրուկներ ու արծեքներ: Նվաճված երկրներում դաժանորեն ճնշել է դիմադրության բոլոր փորձերը:

Ամենհոտեպ III (մ. թ. ա. 15-րդ դ. կես)՝ Եգիպտոսի փարավոն, Թութմոս IV-ի որդին: Ամենհոտեպ III-ի օրոք Եգիպտոսը գտնվել է իր հզորության գագաթնակետին: Նրա գահակալման ժամանակ երկիրը լի պատերազմել: Նրա օրոք Լուքսորում կառուցվել են Ամոն աստծու տաճարը և իր իսկ հոգեհանգստյան տաճարը թագավորի հսկայական արձաններով՝ Շեմիոնի կոթողներով:

Ամենհոսեպ IV (էհնաթոն)՝ մ. թ. ա. 15-րդ դարի վերջի և 14-րդ դարի սկզբի Եգիպտոսի փարավոն, Ամենհոսեպ III-ի որդին: Ամենհոսեպ IV-ը պետական նոր կրոն է հռչակել Աթոն աստծու (Ամոնի փոխարեն) պաշտամունքը, հեռացել է Եգիպտոսի մայրաքաղաք Թեբեից, կառուցել նոր մայրաքաղաք՝ Ախեթաթոնը և ընդունել նոր անուն՝ էհնաթոն: Նրա օրոք Եգիպտոսը սկսել է կորցնել իր իշխանությունը Ասորիքի և Պաղեստինի վրա: էհնաթոնի մահվան պատճառը հայտնի չէ:

Անուրխա՝ մահվան հին եգիպտական աստված, մեռածների պահապանը:

Աշմունեն՝ ժամանակակից քուշ ԱՄՀ՝ում, Կահիրեից նեղոսով 300 կմ հարավ, Եգիպտոսի հնագույն քաղաքներից (մ. թ. ա. IV հազ.):

Աշուրբանիպալ՝ Ասորեստանի թագավոր (մ. թ. ա. 7-րդ դ. կես): Նվաճել է Բաբելոնը, Ելամը: Պատմության մեջ է մտել որպես հին գրավոր հուշարձաններ հավաքող: Նրա հրամանով նինվեհում ժողովվել են պատմական, կրոնական և գիտական գրքերի տասնյակ հազարավոր ընդօրինակումներ ու բնագրեր: Նինվեի տեղում (Քույունջիքի բլուր) կատարված պեղումները աշխարհին տվեցին ասորեստանյան արվեստի նմուշներ ու Աշուրբանիպալի շափազանց արժեքավոր դրադարանը:

Ապելլես՝ մ. թ. ա. 4-րդ դ. երկրորդ կեսի հույն ականավոր գեղանկարիչ, Ալեքսանդր Մակեդոնացու պալատական նկարիչը: Նկարել է Ալեքսանդր Մակեդոնացու դիմանկարները: Հնում մեծ համբավ է վայելել ծովից դուրս եկող Վեներային (Աֆրոդիտին) պատկերող նրա նկարը, որը չի պահպանվել:

Ապոլլոն՝ հին հունական դիցարանության մեջ արևի, լույսի աստվածը, գիտությունների, պոեզիայի, երաժշտության և երգեցողության հովանավորը: Հունական գաղութներից Ապոլլոնի պաշտամունքը թափանցել է Հռոմ: Մ. թ. ա. 31 թ. կառուցվել է Ապոլլոնի տաճարը՝ ամենաճոխը Հռոմում:

Ավեստա՝ պարսիկների սուրբ գիրքը, որը կազմվել է մեկ հազարամյակի ընթացքում (մ. թ. ա. մոտ 9-րդ դ. — մ. թ. 3-րդ դ.): Պահպանվել է Ավեստայի միայն շնչին մասը, մեծ մասը ոչնչացվել է մակեդոնացիների և արաբների կողմից Մերձավոր Արևելքը նվաճելու ժամանակ: Ավեստայի բովանդակությունը կազմում են կրոնական վարդապետությունը, աղոթքները, պաշտամունքի, փիլիսոփայության, գիտության, տիեզերարանության, աստղագիտության, բժշկության, պատմության, բարոյականության և իրավունքի հարցերը:

Ատաիկա՝ Աթենք կենտրոնով մաթզ Հին Հունաստանում:

Ատաիկոս՝ շենքի ճակատամասի ցածր վերնապատ: Սովորաբար նախատեսված է հարթաքանդակի կամ վիմագրության համար:

Արբալետ՝ նետողական զենքի տեսակ, կատարելագործված նետաղեղ:

Արխանոս Ֆլավիոս (մ. թ. 1-ին դ. վերջ—2-րդ դ. երկրորդ կես)՝ հույն պատմագիր և գրող: Քաղաքական հայացքներով՝ կայսրության կողմնակից: Մեզ է հասել նրա «Ալեքս»

¹ Ներկայումս ԵԱՀ՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետություն: (Սան. հայ. թարգմ.)

սանդրի Անարասիս» աշխատությունը (7 դիրք), որը Թլեքսանդր Մակեդոնացու արշավանքների պատմության կարևորագույն աղբյուրն է:

Ացտեկներ՝ Մեքսիկայի առավել մեծաքանակ հնգկացի ժողովուրդ: Շուտ հնագիտության տվյալներով հաստատվող ավանգազրույցի, ացտեկները եկել են հյուսիսից և հաստատվել Մեխիկոյի հովտում մ. թ. 12-րդ դարում: 1325 թ. հիմնադրել են Տենոչտիտլան քնակավայրը (ժամանակակից Մեխիկոն), իսկ հետո դուրս են մղել մնացած ցեղերին և նվաճել Կենտրոնական Մեքսիկան:

Աֆայացիներ՝ Հոմերոսի մոտ հունական ցեղերի ընդհանուր անվանումը:

Աֆիլես՝ Տրոյական պատերազմի հույն հերոս:

Բագիլիկ՝ իր երկայնքով երկշարք կամ քառաշարք սյուներով կառույց:

Բագումֆ՝ Ցուլի համաստեղությունում գտնվող գալակտիկական ցրված աստղակույտ: Հունական դիցարանության մեջ Ատլաս տիտանի յոթ դուստրերը, որոնք փախչելով որսորդ Օրիոնից, վերածվել են նախ աղավնիների, իսկ հետո աստղերի:

Բենի Հասան՝ գյուղ ԱՄՀ-ում, Նեղոսի աջ ափին, Կահիրեից մոտավորապես 280 կմ հարավ:

Բերոսոս (մ. թ. ա. մոտ 350—280)՝ քարեդոնացի պատմիչ, որը հունարեն լեզվով գրել է Բաբելոնի պատմությունը:

Բոզոտա՝ Կոլումբիայի մայրաքաղաքը: Գտնվում է Արևելյան Կորդիլիերների արևմուտքյան լանջի լեռնային գագաթնորոշությունում: Քաղաքը 1538 թ. իսպանացիներն են հիմնադրել հնգկացի լիրչաների հնագույն մշակույթի կենտրոնի շրջանում, լիրչաներ, որոնք այդպես են կոչվել հնգկացիների առաջնորդի անունով:

Բուրասքիս (Բուրասթ, ժամանակակից Թել Բասթա, ԱՄՀ)՝ մ. թ. ա. III հազարամյակի եգիպտական հնագույն քաղաք, կատվի կամ կատվի գլխով կնոջ կերպարանքով պատկերված Բասթ դիցուհու պաշտամունքի կենտրոնը:

Գալբա Սերվիոս Սուլպիկիոս (մ. թ. ա. մոտ 3—մ. թ. 69)՝ Հռոմի կայսր (69): Ներոնի օրոք կառավարել է Տերակոնյան Իսպանիան (հռոմեական պրովինցիան): Ներոնի մահից հետո զինվորների կողմից հռչակվել է կայսր և հաստատվել սենատի կողմից, բայց սպանվել է:

Գալիսոն՝ մական, թագավորական իշխանության խորհրդանիշներից:

Գեմմա՝ բազմազան սյուժեներով փորագրված պատկերներ ունեցող տարրեր տեսակի քարեր: Կատարել են համայնիկների, կնիքների, զարդերի դեր: Հնադարյան արվեստի և մշակույթի ուսումնասիրման արժեքավոր աղբյուր են:

Դանայա՝ հունական դիցարանության մեջ հեքիաթային հերոս Պերսեսի մայրը:

Դավիդ Ժակ Լաի (1748—1825)՝ ֆրանսիացի գեղանկարիչ, ֆրանսիական բուրժուական հեղափոխության ակտիվ գործիչ, Լուվրում ազգային թանգարան կազմակերպելու նախաձեռնող:

Դարեն III Կոռնովանոս՝ Հին Պարսկաստանի թագավոր (մ. թ. ա. 336—330): 335 թ. նվաճել է Եգիպտոսը: 333 թ. Իսոս քաղաքի մոտ (Հին Կիլիկիա՝ Փոքր Ասիայում), Միջերկրական ծովի Իսկենդերոն ծոցի ափին մղված ճակատամարտում պարտություն է կրել Ալեք-328

սանդր Մակեդոնացուց:՝ մակաւումաբարեց հետո վատել է Արևելյան Իրան և պնտեղ սպանել է իր սատրապի կողմից:

Դաֆնա՝ անտիկ դիցարանության մեջ Բոսալիայում գետի աստված Պենեյոսի դուստրը:

Դեզալոս՝ հույն առասպելական շինարար և նկարիչ, Իկարոսի հայրը: Կիպրոսում լարիրինթոս է կառուցել Մինոտավրոս հրեղի համար: Հնագույն որոշ շինութուններ ու արձաններ հաճախ վերագրվել են Դեզալոսին:

Դիոգորոս Սիկիլիացի (մ. թ. ա. մոտ 80—29)՝ հույն պատմագիր, հայտնի է «Պատմական գրադարան» երկով (40 գիրք), ուր շարադրվում է համաշխարհային պատմութունը հնագույն ժամանակներից մինչև մ. թ. ա. I դ. կեսը: Շատ հետաքրքիր են Միցիլիայում ստրուկների բարձրացրած ապստամբության մասին տեղեկութունները:

Դիոնիսյան տոն՝ հանդիսութուններ ի պատիվ գինու, խաղողագործության և զվարճության աստված Դիոնիսոսի՝ Հունաստանում և Բաքոսի՝ Հռոմում:

Դիոնիսոս (Բաֆոս)՝ անտիկ դիցարանության մեջ գինեգործության, զվարճության աստված: Բաքոսի ուղեկցուհիները կոչվել են բաքոսուհիներ, իսկ նրա պատվին կատարվող տոնախմբութունները՝ բաքոսատոներ:

Դիորիտ՝ գրանիտանման խորքային լեռնապար:

Դյուբուա էմեն (1858—1940)՝ հուլանդացի մարդարան, Ամստերդամի համալսարանի երկրաբանական լաբորատորիայի պրոֆեսոր և դիրեկտոր:

Դյուբե Ալբրեխտ (1471—1528)՝ գերմանացի մեծ գեղանկարիչ, փորագրիչ և գծանկարիչ, Վերածննդի դարաշրջանի մշակույթի խոշորագույն ներկայացուցիչ:

Դոմիցիանոս Տիտոս Ֆլավիոս (51—96)՝ Հռոմի կայսր 81 թվականից, Ֆլավիոսների դինաստիայից վերջինը: Իր իշխանութունն ամրապնդել է սենատի իրավունքների հսղվին: Սպանվել է դավադրության հետեանքով:

Դորիական ոճը ճարտարապետության մեջ ընութագրվում է անզարդ խոյակներ ունեցող սյուներով:

Դորիացիներ (դորյանք), սկզբնապես Միջին Հունաստանի մարզերում բնակութուն հաստատած հին հունական հիմնական ցեղերից: Մ. թ. ա. 12 դ. սկսվել է դորիացիների գաղթը Հունաստանի հարավ-արևմուտք և կղզիները:

Ելեփանտինե՝ Նեղոսի (Ասուանի մոտ) կղզու հունարեն անվանումը:

Եվրիպիդես (մ. թ. ա. մոտ 480—406)՝ հույն դրամատուրգ: Եվրիպիդեսի դրամաների հերոսներն օժտված են հակասական բնավորութուններով, այդ պատճառով նրան համարում են հոգեբանական դրամայի նախահայր: Առավել նշանակալից են նրա «Մեդեա», «Թիգեսիան Ավլիսում», «Օրեստես» և այլ ողբերգութունները:

Եվրոպա՝ հունական դիցարանության մեջ Փյունիկիայի թագավորի դուստրը, որին առևանգել է ցուլի կերպարանքով նրա մոտ ծովափ եկած Զևսը: Եվրոպայի առևանգման սյուժեն օգտագործել են արվեստի բազմաթիվ վարպետներ:

Երեմիա՝ Հին կտակարանի այսպես կոչված մեծ մարգարեներից երկրորդը: «Երեմիայի ողբը» անհայտ հեղինակի գրած սգո պոեմ է, որտեղ արվում է Երուսաղեմի ավերման (մ. թ. ա. 586 թ.) ողբը:

Ձեռն Կաթինցի (Կիպրոս կղզի, մ. թ. ա. մտա 336—264)՝ ստորկենների դպրոցի հիմնադիրը Աթենքում: Ուսուցանել է, որ ըարոյականութունը պետք է հիմնված լինի բնության իմացության վրա:

Զրգաշտականություն՝ հետո Արևելքի որոշ ժողովուրդների կրոնը: Այդպես է կոչվել հիմնադրի՝ Զրադաշտի անունով, որը Ավեստայում հանդիս է դալիս որպես իրական անձնավորություն: Զրադաշտականությունը, հավանաբար, առաջացել է մ. թ. ա. VII դարում: Այդ կրոնի հիմքը երկու սկզբունքների՝ ըարու և շարի պայքարն է:

Էդիլ՝ մ. թ. ա. 5-րդ դարից սկսած՝ ընտրովի պաշտոնատար անձ Իտալիայի քաղաքներում: Էդիլի պարտականություններն են եղել քաղաքում կարգուկանոնի պահպանումը, բնակչությանը մթերքներ մատակարարելը:

Էլ Ամառնա՝ գյուղ, որը դանվում է Կահիրեից 300 կմ հարավ, էհնաթոնի հիմնադրած Ախեթաթոն մայրաքաղաքի տեղում:

Էնեյաս՝ Տրոյական պատերազմի հերոս, Տրոյայի Պրիամոս թագավորի ազգականը:

Էպիացիաներ՝ հին հունական երեք (հոնիացիներ, դորիացիներ, էոլիացիներ) հիմնական ցեղերից մեկը: «Իլիականի» հերոս Աքիլլեսը էոլիացի է:

Էպիկուր (մ. թ. ա. 341—270)՝ հույն ականավոր մատերիալիստ փիլիսոփա, լուսավորիչ: Նրա ուսմունքն ուղղված է եղել ճակատագրի մասին ուսմունքի գեմ, նպաստել է մարդու ազատությանը: Գլխավոր երկը «Բնության մասին» աշխատությունն է (37 դիրք):

Էտրուսկներ՝ Հին Իտալիայի հիմնական ցեղի հոմեական անվանումը:

Էրոս՝ սիրո աստվածը հունական դիցարանության մեջ:

Թեքե՝ եգիպտական Ուասեթ (մ. թ. ա. III հազ.) քաղաքի՝ մ. թ. ա. 21—11 դդ. եգիպտոսի մայրաքաղաքի հունարեն անվանումը: Մ. թ. ա. 84 թ. ավերվել է Պտղոմեոս X-ի դեմ բարձրացված ապստամբության ժամանակ: Թեքեի տարածքում կան Հին Եգիպտոսի տաճարների ու դամբարանների փլատակներ (Կառնակ, Լուքսոր):

Թեոդոսիոս I Տլավիոս (346—395)՝ Հռոմի կայսր (379—395): Քրիստոնեությունը հայտարարել է պետական կրոն, դաժանորեն հալածել է հեթանոսության կողմնակիցներին: Նրա օրոք Ալեքսանդրիայում հրկիզվել է պողաբիրության աստված Մերապիսի տաճարը, ըստ որում ոչնչացել է Ալեքսանդրիայի նշանավոր գրադարանի մեծ մասը:

Թեսևս՝ հույն հերոս, Աթենքի էգեյոս թագավորի որդին: Հին աշխարհում Թեսևսը համարվել է պատմական դեմք: Նրա կենսագրությունը գրել է Պլուտարքոսը:

Թուրմոս I (մ. թ. ա. 16-րդ դ. երկրորդ կես)՝ Եգիպտոսի փարավոն: Նրա ռազմական արշավանքների հետևանքով եգիպտական զորքերը հասել են Եփրատ գետը:

Թուրմոս II (մ. թ. ա. 16-րդ դ. երկրորդ կես)՝ Եգիպտոսի փարավոն, Թուրմոս I-ի որդին, շարունակել է հոր աշխատանքները դեպի Նուբիա և Ասորիք:

Թուրմոս III (մ. թ. ա. 16-րդ դ. վերջ—15-րդ դ. սկիզբ)՝ Եգիպտոսի փարավոն, Թուրմոս II-ի որդին: Թագավոր է դարձել տակավին երկյա ժամանակ և իշխանությունից հեռացվել է Թուրմոս II-ի կանանցից մեկը՝ Հաթշեպսութի կողմից, որն իրեն փարավոն է հռչակել ու կառավարել շուրջ 20 տարի: Հաթշեպսութի մահից հետո Թուրմոս III-ը արվեստի և տեղծագործությունների վրայից ջնջել է ավել նրա նկարները, իսկ արձանագրություններից՝ անունը:

Քուկիդիդես (մ. թ. ա. մաս 480—400)՝ հույն խոշորագույն պատմագիր, «Պատմութեան Պելուպոնեսական մարտին» երկի հեղինակ:

Իբերիական թերակղզի՝ Պիրինեյան թերակղզի:

Իբակե՝ կղզի Հոնիական ծովում, Ոդիսսեոսի հայրենիքը: «Վերագարձ Իթակե» արտասահյաությունը նշանակում է վերագարձ հայրենիք:

Իո՝ անտիկ դիցարանության մեջ Արգոսի թագավորի դուստրը, Զևսի (Յուպիտերի) սիրուհին: Զևսի խանդոտ կինը Իոյին գարձրել է կով և նրան ստիպել թափառելու աշխարհ հով մեկ:

Իսիդա (Իզիդա)՝ Հին Եգիպտոսի դիսավոր դիցուհին, պտղաբերության, մայրության, կյանքի և առողջության հովանավորուհին:

Լակեդեմոն-Սպարտա՝ ստրկատիրական քաղաք-պետություն (պոլիս) Հին Հունաստանում (Պելոպոնես):

Լեզա՝ հունական դիցարանության մեջ Սպարտայի թագավորի կինը, որը հռչակված է եղել իր դյուրիշ գեղեցկությամբ:

Լիկուոր՝ պեռական ամենացածր պաշտոններից մեկը Հին Հունում:

Լուվեյ Պերգիվալ (1855—1916)՝ ամերիկացի աստղագետ, Մարս մոլորակի հետազոտող:

Լուգալգաքսի՝ սկզբում Ումա քաղաքի կառավարիչ, իսկ հետո ամրոջ Շումերի թագավոր մ. թ. ա. 24-րդ դարում: Պարտության է մատնել Լագաշի թագավոր Ուրուկագինային:

Լուխար (հին եգիպտերեն՝ Իպիթ)՝ քաղաք ԱՄՆ-ում, որը հայտնի է հին եգիպտական արվեստի հուշարձաններով:

Լևերիե Ուրբեն փան ֆոգեֆ (1811—1877)՝ ֆրանսիացի ականավոր աստղագետ, որը կյանքի մեծ մասը նվիրել է մոլորակային աղյուսակների հաշվարկմանը: 1845 թ. Ուրանի ուղեծրի ուղղությամբ հաշվարկել է մինչ այդ անհայտ նեպտուն մոլորակի դիրքը, որն այնուհետև հայտնաբերվել է նրա նշած տեղում:

Խարթում՝ Սուզանի հանրապետության մայրաքաղաքը:

Խեքեր՝ մ. թ. ա. II—I հազարամյակներում Փ. Ասիայի կենտրոնական և արևելյան մասերում և Հյուսիսային Ասորիքում բնակություն հաստատած ցեղերի ընդհանուր անվանումը:

Խոտիներ՝ մ. թ. ա. III հազարամյակում Ասորիքում և Պարսկաստանում ապրած հին ցեղեր:

Կամեա՝ փորագրված քար, հաճախ տարաշերտ, ուլիեֆային նկարով: Օգտագործվում է իբրև զարդ: Հայտնի է մ. թ. ա. 4-րդ դարից:

Կամպանիա՝ պատմական մարզ Միջին Իտալիայում: Հնում հռչակված է եղել արգավանդությամբ:

Կտանակ՝ գյուղ ԱՄՆ-ում, որը հայտնի է Հին Եգիպտոսի մայրաքաղաք Թերեի մոտ գտնվող Ամոնի մեհյանի փլատակներով:

Կառլոս V (1500—1558)՝ «Հռոմեական սրբազան կայսրության» կայսր (1519—56)։ Կայսրության կազմի մեջ են մտել բազմաթիվ տիրույթներ Հին և Նոր (Մեքսիկա, Պերու) աշխարհներում։ Բուրգունդյան վիճելի տիրույթների և Իտալիայի համար բազմաթիվ պատերազմներ է մղել Ֆրանսիայի դեմ։

Կառարյան մարմարն արդյունահանվում է Կառարա քաղաքի մոտ (Կենտրոնական Իտալիա) գտնվող քարհանքերում։ Հատկապես հռչակված է սպիտակ մարմարը։

Կիկլադներ՝ կղզիախումբ էգեյան ծովում։

Կինարարիս՝ ժամրային սնդիկ, կարմրերանգ միներալ։ Հումք է ներկեր պատրաստելու համար, որոնք կիրառվել են դեռևս Հին Եգիպտոսում, մ. թ. ա. մոտ 5-րդ դարում։

Կիրկե՝ առասպելական էա կղզու կախարհուհին, որը Ողիսեսի ուղեկիցներին խոզ է դարձրել։ Կիրկեն մի տարի Ողիսեսին պահել է կղզում։

Կլավդիոս (մ. թ. ա. 10—մ. թ. 54)՝ Հռոմի կայսր (41—54), Հուլիոս-Կլավդիոսների դինաստիայից։ Ձգտել է իր իշխանությունն ամրապնդել սենատի իրավունքները սահմանափակելու հաշվին։ Թունավորվել է իր կնոջ՝ Ագրիպինայի կողմից, որը գահն ազատել է որդու՝ Ներոնի համար։

Կլիտարեոս՝ մ. թ. ա. 4-րդ դ. հույն պատմիչ, Պարսկաստանի պատմության վերաբերյալ երկերի հեղինակ և Ալեքսանդր Մակեդոնացու կենսագիր։ Հնում բարձր են գնահատվել Կլիտարեոսի երկերի զրական արժանիքները, երկեր, որոնք կենսագրական ժանրի օրինակ են ծառայել։

Կյուրոս II Մեծ՝ պարսից թագավոր (մ. թ. ա. 558—530)։ Նվաճել է Փոքր Ասիայի բազմաթիվ պետություններ, այդ թվում Բաբելոնը։ Նվաճված երկրներում վերականգնել է տաճարները, իսկ բռնի կերպով Միջագետք քված ժողովուրդներին թույլ է տվել վերադարձալու հայրենիք։ Ձոհվել է Միջին Ասիա կատարած արշավանքի ժամանակ։ Նրա մահից հետո կառավարել է որդին՝ Կամբյուսեսը։

Կոյաբզեզներ՝ թանկարժեք քարից կամ ջնարակապառ թրծակավից պատրաստած բզեզներ։ Կատարել են համայնիների, զարդերի դեր։

Կոնկիստադորներ՝ 15—16-րդ դդ. Հարավային և Կենտրոնական Ամերիկայում հսկայական տարածքներ զավթած իսպանացի նվաճողներ։

Կոպան՝ մայաների առավել նշանակալից քաղաքներից, որը գտնվում է Հոնդուրաս հանրապետության արևմտյան մասում։ Կոպանում առավել հետաքրքրական են բազմաթիվ տաճարների ավերակները։

Կոբրոսյան ոճը ճարտարապետության մեջ բնութագրվում է փորագրված տերևներով զարդարված սկահակաձև խոյակների ունեցող սյուներիով։

Հաբեթական լեզուներ՝ Միջերկրական ծովի ավազանի և Մերձավոր Արևելքի շրջանի եախահնդեվրոպական լեզուների խումբ։

Հադես (Հաիդես, Պլուտոն)՝ հին հունական դիցարանության մեջ ստորգետնյա աշխարհի աստվածը։

Համուրապի (մ. թ. ա. 18-րդ դ. առաջին կես)՝ Բաբելոնի թագավոր։ Համուրապիի հրապարակած օրենքները մեզ են հասել Շոշում (Շուղթեն քաղաքի մոտ) պեղումներ կատարելու ժամանակ գտնված մի մեծ քարակոթողի վրա սեպագիր նշաններով փորագրված։

Հեյալներ՝ հողատեր ավագանուց հետո ոտրկատերերի երկրորդ դասային խումբը Հին Հոմում:

Լեկկել Էոնստ (1834—1919)՝ գերմանացի բնախույզ, Չ. Դարվինի հետևորդը, բնապատմական մատերիալիզմի պրոպագանդիստ:

Լելեսպոնոս՝ Դարդանելի նեղուցի հունարեն անվանումը:

Լելիոպոլիս (հունարեն բառացի՝ «արևի աստծո քաղաք», հին եգիպտերեն՝ Իունու, ժամանակակից՝ էլ Մաթարիա, Կահիրեից ոչ հեռու), Եգիպտոսի հնագույն քաղաքներից (մ. թ. ա. IV հազ.): Համարվել է սրբազան քաղաք, գերագույն Ռա աստծո բնակատեղի: Հելիոպոլիսում է գտնվել «Նեղոսաշափը»՝ Նեղոսի ջրի մակարդակը շարժելու համար նախատեսված քարակերտ կառույցը:

Լերակլիոն՝ քաղաք Կրետե կղզու հյուսիսային ափին: Լերակլիոնից հարավ գտնվում են հին Կնոսոս քաղաքի ավերակները:

Լեռոզոս (մ. թ. ա. մոտ 490—420)՝ հույն պատմագիր, որին անվանել են «պատմահայր»: Հեղինակն է «Հույն-պարսկական պատերազմների պատմության»: Հերոդոտի աշխատությունը հնության աշխարհագրական, ազգագրական և սլատմական հարուստ նյութեր է բովանդակում:

Լիպարեոս (մ. թ. ա. 2-րդ դ.)՝ հույն խոշորագույն գիտնական, աստղագիտության հիմնադիրներից, առաջինն է այն դրել գիտական հիմքի վրա: Լիպարեոսը կազմել է ավելի քան հազար աստղերի դիրքի աստղացուցակը, որոնք ըստ փայլի նրա կողմից ստորաբաժանվել են աստղային վեց մեծությունների:

Լիֆուսներ՝ մ. թ. ա. շուրջ 1700 թ. Առաջավոր Ասիայից Սուեզի պարանոցով Եգիպտոս ներխուժած ասիական ցեղախումբ:

Լոնիացիներ՝ հունական հիմնական ցեղախմբերից: Անվանումը ստացել է առասպելական հերոս Հոնից, ցեղի նախահորից:

Լորապոլլոնիս (մ. թ. 4-րդ դ.)՝ եգիպտացի գրող, որը դպտերեն գրել է «Հիերոգլիֆիկա» աշխատությունը՝ եգիպտական հիերոգլիֆների մասին: Այդ աշխատությունը մեզ է հասել 15-րդ դարում կատարված հունարեն թարգմանությամբ: Առանձին հիերոգլիֆներ ճիշտ ընթերցելու հետ միասին Հորապոլլոնիոսը սխալմամբ պնդել է, թե եգիպտական բոլոր հիերոգլիֆները իմաստային նշաններ (գաղափարագրեր) են:

Լուեմնեք (մ. թ. ա. 14-րդ դ. կես)՝ Եգիպտոսի փարավոն: Ճանաչվել է որպես առաջին օրինական փարավոն Ամենհոտեպ III-ից հետո, որովհետև էհնաթոնն ու նրա երեք հաջորդները (Սմենքարա, Թուֆանհամոն և էյե) համարվել են «ախեթաթոնցի հանցագործներ»: էհնաթոնի օրոք Հորեմհեբն ապրել է Եգիպտոսի հյուսիսում:

Լուլավո (1217—1265)՝ Չինգիզ խանի թոռը, 13—14 դդ. Իրանում և Միջագետքում կառավարած Հուլավյան դինաստիայի հիմնադիր:

Լուրդդա Ալեքսանդր (1769—1859)՝ գերմանացի ականավոր բնախույզ և ճանապարհորդ: Հինգ տարի ապրել է Ամերիկայում, որից հետո գրել է «Ճանապարհորդություն Նոր աշխարհի արևադարձային մարզերում, կատարված 1799—1804 թվականներին» աշխատությունը: Լուրդդայի անունով են կոչվել մի քանի լեռներ Կենտրոնական Ասիայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, լիճ և գետ՝ ԱՄՆ-ում, սառցադաշտ՝ Գրենլանդիայում, խառնարան՝ Լուսնի վրա:

Հուստինիանոս I (483—565)՝ Բյուզանդիայի կայսր (527—565): Ձգտել է վերականգնել Հռոմեական կայսրության երբեմնի հզորությունը, այդ նպատակով հրապարակել է կայսերական հրովարտակաների ժողովածու (Հուստինիանոսի օրենսգիրքը), ժողովրդական զանգվածներից պահանջելով հնազանդություն:

Ճաշան՝ մեջքի և լանջի ձևով փոս ընկած և ուսերին ու կողքերից ճարմանդներով միացած երկու թիթեղներից կազմված պաշտպանական հանդերձանք:

Մաթուսաղա՝ աստվածաշնչական նահապետ, որն իբր ապրել է 969 տարի: Հասարակ անուն է դարձել երկարակեցությունը բնորոշելիս:

Մաննաթրն՝ Նյու Յորքի կենտրոնական մասը, որը գտնվում է Մանհաթրն կղզում, Հուդզոնի գետաբերանում:

Մաբե՝ Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան մարզերում ապրած ժողովուրդ: Առաջին անգամ հիշատակվում են մ. թ. ա. 9-րդ դ. ասորեստանյան տարեգրություններում:

Մառնիկա Յան (1838—1893)՝ լեհ ականավոր գեղանկարիչ, նկարել է պատմական սյուժեներով նկարներ: «Գրյունվալդի ճակատամարտը» նկարը մտնում էնտալ կտավ է, որը փառաբանում է տևտոնյան զավթիչների նկատմամբ սլավոնական և մերձբալթյան ժողովուրդների տարած հաղթանակը:

Մաբկոս Ավրեխոս (121—180)՝ Հռոմի կայսր 161 թվականից: Իր կառավարման զրեթե ամբողջ շրջանն անց է կացրել պատերազմներում:

Մաբս՝ պատերազմի աստվածը Հին Հռոմում:

Մարցիալիս Մաբկոս Վալերիոս (մոտ 40—102)՝ հռոմեացի բանաստեղծ: Գրել է շուրջ հազար հինգ հարյուր էպիգրամ, որոնք մեզ ծանոթացնում են հռոմեական հասարակության տարբեր խավերի կենցաղաձևին:

Մեանդր (Փոքր Ասիայում գտնվող ոլորապտույտ Մեանդր գետի անունով)՝ պարույրներով բեկյալ կամ կոր գծի ձևով զարդանախշ:

Մեգարոն՝ հին հունական տների գլխավոր սենյակը:

Մեևանդրոս (մ. թ. ա. մոտ 343—391)՝ հույն-դրամատուրգ, կենցաղային կատակերգության խոշորագույն ներկայացուցիչ: Մեզ է հասել նրա միայն մեկ՝ «Համառը» կատակերգությունը:

Մեևելայոս՝ Տրոյական պատերազմի հերոս: Միքեևիի (Պելոպոնես) թագավոր Ագամեմնոնի կրտսեր եղբայրը:

Մերկուրիոս (հուն. Հերմես)՝ անտիկ դիցաբանության մեջ աստվածների սուրհանդակը, առևտրի, ճանապարհորդների, պանդուխտների հովանավորը: Մ. թ. ա. 5-րդ դ. Հռոմում կառուցվել է Մերկուրիոսի տաճարը: Հերկուլանումում գտել են Մերկուրիոսի անդրին:

Մերեևպա (Մերեևպտան)՝ մ. թ. ա. 13-րդ դ. երկրորդ կեսի Եգիպտոսի փաբավոն, Ռամզես II-ի որդիներից: Երկրպագել է Մեմփիսի Պտահ աստծուն:

Մեբբա՝ մահմեդականների սրբազան քաղաքը Սաուդյան Արաբիայում:

Միստերիաներ՝ կրոնական գաղտնի ծիսակատարություններ, որոնց թույլատրվել է մասնակցել միայն հազորդվածներին: Սովորաբար ծիստերիաների ժամանակ ծեսերը մաու ուղվել են սրբազան անքիի դրամատիկական ներկայացումների ձևով:

Միտանի՝ վաղ ստրկատիրական տերության (մ. թ. ա. 16—13-րդ դդ.) Վերին Միջագետքում (ժամանակակից Սիրիա)։

Միֆեեն՝ հին հունական քաղաք Պելլոպոնեսում։ Կրետե-միջինյան մշակույթի կենտրոններից մեկը մ. թ. ա. 17—11-րդ դարերում։

Միֆերին (Մենքատրա)՝ մ. թ. ա. III հազ. սկզբի Եգիպտոսի փարավոն, Քեփրենի հաջորդը։ Միքեթինի բուրգի (թարձր. 66 մ.) գտնվում է Գիզա գյուղի մոտ, Քեոփոի և Քեփրենի բուրգերի կողքին։

Մոլոֆ՝ Հին Փյունիկիայի և Կարթագենի կրոնում ձմեռվա արևի աստվածը, որին մարդկային զոհեր են մատուցվել։ Ժամանակակից լեզվում փոխաբերական իմաստով նշանակում է շատ զոհեր պահանջող գործ։

Մամամեդ Ալի (1769—1849)՝ Եգիպտոսի կառավարիչ (1805—48), մինչև 1952 թ. կառավարած դինաստիայի հիմնադիր։ Իր կառավարման ժամանակ ստեղծել է եգիպտական կանոնավոր բանակ։

Յահմոտ I (մ. թ. ա. 16-րդ դ.)՝ Նոր թագավորության ժամանակաշրջանի Եգիպտոսի փարավոններից։ Այդ փարավոնի կառավարմամբ սկսվում է փարավոնների XVIII դինաստիան։

Յունգ Քոման (1773—1829)՝ անգլիացի ֆիզիկոս, բժիշկ, աստղագետ, լույսի արևային տեսության ստեղծողներից։ Ջրաղվել է հնագիտությանը և եգիպտական հիերոգլիֆների վերծանմամբ։ Երաժշտության և գեղանկարչության գիտակ։

Յուպիտեր (Չևս)՝ երկնքի, որոտի ու կայծակի աստվածը անտիկ դիցաբանության մեջ։

Նաբոնիդ՝ Բաբելոնի վերջին թագավորը (մ. թ. ա. 555—538)։

Նաբուգոդոնոսոր II՝ Բաբելոնի թագավոր (մ. թ. ա. 604—562)։ Իրեն է ենթարկել Ասորիքը, Պաղեստինը, Փյունիկիան։

Ներոնիթ՝ քաղաք Իրաքում, որի մոտ պեղվել է հին ասորեստանյան Քալաթ քաղաքը։

Ներսէ Կլավդիոս Կեսար (37—68)՝ Հռոմի կայսր 54 թվականից։ Ինքնասիրահարված դաժան բռնապետ։ Նրա զոհերի թվում են եղել մերձավոր ազգականները, ներառյալ մայրը, և բազմաթիվ ականաձոր մարդիկ։

Նեֆերտիտի՝ թագուհի, փարավոն Ամենհեթապ IV-ի (էհնաթոնի) կինը։ Նրա ծագման մասին աղբյուրներ չկան։ Ենթադրություն է արվել, որ նա Միտանիի արքայադուստրն էր։ Ներկայումս կան նրա եգիպտական ծագման մասին տեղեկություններ. նրա ստնտուն եղել է էհնաթոնի մերձավորներից մեկի կինը։ Թագուհու անունը եգիպտական է։ Հնարավոր է, որ Նեֆերտիտին եղած լինի էհնաթոնի ապօրինի զույրը՝ Ամենհեթապ III-ի դուստրը։

Նիկոլայի Միխայիլ Վասիլևիչ (1848—1917)՝ ռուս պատմաբան, ռուսական ասուրագիտության հիմնադիր։ Ընդհանուր պատմության դոկտոր։ Իրել է սեպագեզ զրի ծաղմ սն ուսումնասիրության սկիզբը։

Նովարոնոս՝ կառավարիչ, Եգիպտոսի մարզի՝ Նոմոսի փոխարքա։

Նոր քարի դար՝ քարի դարի վերջին դարաշրջանը։ Նոր քարի դարի սկիզբը համարում են կավե ամանների գյուտը, վերջը՝ վաղ մետաղագործությունը։

Նուբիա (եգիպտերեն՝ Քաշ, Քուշ, անտիկ հեղինակների մոտ՝ Նեղոսյան Եթովպիա)՝ երկիր Նեղոսի հովտում, Եգիպտոսից հարավ։

Ողիսես՝ Հոնիական ծովի Իթակե կղզու առասպելական թագավոր:

Պանթեոն՝ ամենադից տաճար: Հռոմում Հուլիոսների տոհմի աստվածություններին նվիրված տաճար: Կառուցվել է Ադրիանոս կայսեր օրոք (մ. թ. 2-րդ դ.): 7-րդ դարից քրիստոնեական եկեղեցի է և ազգային դամբարան (այստեղ թաղված է Ռաֆայելը):

Պավսանիաս (մ. թ. 2-րդ դ.)՝ հույն գրող, «Հելլադայի նկարագրությունը» աշխատության (10 գիրք) հեղինակ, աշխատություն, որը Միջին Հունաստանի և Պելոպոնեսի ճարտարապետության և արվեստի առավել տեսարժան հուշարձանների մի յուրօրինակ ուղեցույց է:

Պելասգներ՝ մայրցամաքային Հունաստանի բնակչությունը հույներից առաջ:

Պելոպոնես՝ առասպելական հերոս Պելոպսի կղզին:

Պետրի (Պիտրի) Ֆլինդերս Ուիլյամ Մաթյու (1853—1942)՝ անգլիացի եգիպտագետ, Եգիպտոսում պեղումների գիտական եղանակի հիմնադիր:

Պլինիոս Ավագ (23—79)՝ հռոմեացի գրող, գիտնական և պետական գործիչ, նույնպես գրող և պետական գործիչ Պլինիոս Կրտսերի հորեղբայրն ու հոգեհայրը: Պլինիոս Ավագի պահպանված «Բնական պատմություն 37 գրքով» աշխատությունը անտիկ աշխարհի բնագիտական գիտելիքների հանրագիտարան է: Զոհվել է Վեզուվի ժայթքման ժամանակ:

Պլուտարխոս (մոտ 45—127)՝ հույն գրող և փիլիսոփա: Գլխավոր երկը՝ «Զուգակշիռք»-ը, անտիկ կենսագրական ժանրի գագաթնակետն է: Մեզ են հասել պատմական և գրական արժեքավոր հուշարձան ներկայացնող 50 կենսագրություններ:

Պոմպայոս (Ժաննա Անտուանետա Պուսոն, 1721—1764)՝ կյուրովիկոս XV-ի հոմանուհին, որը մեծ ազդեցություն է ունեցել պետական գործերի վրա:

Պոստիկ՝ սյունաշարի վրա պահվող ծածկ:

Պտան՝ հին եգիպտական կրոնում երկնքի աստվածը, ամենայն գոյի արարիչը: Մեմփիսի գլխավոր աստվածը, արհեստների ու արվեստի հովանավորը:

Պտղոմեոս (մ. թ. 2-րդ դ.)՝ հույն աստղագետ, աշխարհագրագետ, լուսագետ: Նրա «Ալմագեստ» աշխատությունը (13 գիրք) մինչև Կոպեռնիկոսի աշխատանքների երևան գալը եղել է աստղագիտական բոլոր գիտելիքների շարադրանքի օրինակ:

Պտղոմեոս V Եպիփան՝ Եգիպտոսի փարավոն (մ. թ. ա. 204—180), այն գինաստիայի ներկայացուցիչը, որի բուրբ 14 թագավորները կրել են Պտղոմեոս անունը:

Պրիամոս՝ Տրոյայի վերջին թագավորը:

Պրեստրականներ՝ Հռոմի կայսրերի պալատական գվարդիան:

Ջոսեր (Ջեթ)՝ Եգիպտոսի Հին թագավորության ժամանակաշրջանի փարավոններից (մ. թ. ա. III հազ.)՝ Նրա օրոք սկսվել է բուրգերի շինարարությունը: Ջոսեր փարավոնի աստիճանավոր բուրգը կառուցվել է Սաքարայից ոչ հեռու, Կահիրեից հարավ:

Ռամզես (Ռամսես) II՝ մ. թ. ա. 14-րդ դ. վերջի, 13-րդ դ. սկզբի Եգիպտոսի փարավոն: Սեթի I-ի որդին: Ռամզես II-ի օրոք Եգիպտոսը նոր թագավորության ժամանակաշրջանում հզորության է հասել վերջին անգամ:

Ռամզես. (Ռամսես) III՝ մ. թ. ա. 12-րդ դ. Եգիպտոսի փարավոն: Նա ստիպված է եղել հեռ մղելու Միջերկրական ծովի ափարևակ ժողովուրդների, այսպես կոչված «ծովի

ժողովուրդներին՝ հարձակումները Ստոբին Եգիպտոսի դեմ: Սպանվել է դավադրութեան հետևանքով:

Սամնիտյան պատերազմներ (մ. թ. ա. 343—290)՝ կենտրոնական Իտալիայում դիր-
իշխանություն հաստատելու համար Հռոմի և այլ ցեղերի հետ դաշինք կնքած սամնիտների
միջև մղված պատերազմները: Երեք պատերազմից հետո հաղթել են հռոմեացիները:

Սամնիտներ՝ մ. թ. ա. II հազ. վերջին Իտալիայի կենտրոնական մասում բնակություն
հաստատած հին իտալիկյան ցեղեր:

Սապոտեկներ՝ Մեքսիկայի հնդկացիների գլխավոր ազգություններից: Մինչև իսպանա-
ցիների հայտնվելը ստեղծել են ինքնատիպ մշակույթ, որի կենտրոնը եղել է Մոնտե Ալ-
բան հին քաղաքը:

Սարգոն II (մ. թ. ա. 8-րդ դ. վերջ) Ասորեստանի թագավոր: Կառուցել է նոր գա-
հանիստ Գուր Շարուկինը, այժմ՝ քաղաք Խորասբադ:

Սարգոն Հին I՝ մ. թ. ա. 24-րդ դ. Աքքադ թագավորության հիմնադիրը: Ըստ ավան-
գազրույցի, սիրել է Քիշ քաղաքի ժողովրդական ստորին խավերից: Նվաճել է Միջագետքի
բոլոր քաղաք-պետությունները, հասել է Ելամ, Ասորիք, Փ. Ասիա:

Սաֆարա՝ բնակավայր Կահիրեից և Եգիպտոսի հին մայրաքաղաք Մեմփիսից ոչ հե-
ռու: Սաքարայի մոտ մի մեծ գերեզմանատուն կա:

Սեթ I (մ. թ. ա. 14-րդ դ. հրկրորդ կես)՝ Եգիպտոսի փարավոն: Վերսկսել է էհնա-
թոնի օրոք Ասորիքում և Պաղեստինում Եգիպտոսի կորցրած տիրույթները հետ վերադարձ-
նելու փորձերը:

Սենեկա Լուկիոս Անենյոս (մ. թ. ա. մոտ 4— մ. թ. 65)՝ հռոմեացի փիլիսոփա, գրող
և պետական գործիչ, ներոնի դաստիարակը: Մեղադրվելով ներոնի դեմ նյութված դավա-
դ, ությանը մասնակցելու մեջ, ինքնասպան է հղել:

Սեֆենենրա (մ. թ. ա. 17-րդ դ. վերջ)՝ Եգիպտոսի XVII դինաստիայի նախավերջին
փարավոնը:

Սիրիոս (հունարեն կիզիչ)՝ ամենապայծառ աստղը: Գտնվում է Մեծ Շան համաս-
տեղությունում: Արեգակին ամենամոտ աստղերից է:

Սոդոմ և Գոմոր՝ ըստ աստվածաշնչական ավանդազրույցի, հին պաղեստինյան քա-
ղաքներ, որոնք աստված կործանել է, բնակիչներին պատժելով անառակության համար:

Սոֆոկլես (մ. թ. ա. մոտ 497—406)՝ հույն մեծ դրամատուրգ, որն ստեղծել և զար-
գացրել է հունական դասական ողբերգությունը: Նա ներմուծել է բեմիքեր և դադարել է
որպես դերասան հանդիս գալ իր պիեսներում: Հիմնական ողբերգություններն են՝ «Անտի-
գոնես», «Էդիպ արքա», «Էլիկտրա», «Էդիպը կոլոնում»:

Ստաբիա՝ հին քաղաք Իտալիայում (Կամպանիա): Վեզուվի ժայթքման ժամանակ
ավերվել է Պոմպեյի և Հերկուլանումի հետ:

Ստոբիզմ՝ հին աշխարհի փիլիսոփայական նշանակալից հոսանքներից: Մազել է
մ. թ. ա. 4-րդ դ. Աթենքում՝ որպես ստրկատիրական դեմոկրատիայի ճգնաժամին փիլիսո-
փայության հակադրման և Աթենքի քաղաքական ինքնուրույնության կորստի հետևանք:
Ստոիկները հանգում են այն հետևության, որ առանձին անհատներ չեն կարող ազդել
հասարակական զարգացման ընդհանուր օրինաչափության վրա: Ուսմունքի անվանումն
առաջացել է հունարեն «տաճար» բառից, ուր տեղի են ունեցել նրանց ժողովները:

Սարգսն (մ. թ. ա. մոտ 63—20)՝ հայն աշխարհագրագետ և պատմագիր: Նրա «Աշխարհագրություն» աշխատությունը (17 դիրք) Եվրոպայի և Ասիայի բազմաթիվ երկրների պատմության և աշխարհագրության արժեքավոր սկզբնաղբյուր է:

Սուլլա Լուկիոս Կոռնելիոս (մ. թ. ա. 138—78)՝ Հին Հռոմի զորավոր և պետական գործիչ, առաջին անսահմանափակ դիկտատորը:

Սֆեյան դարպաս՝ Տրոյայի դարպասը:

Վեզիր (վիզիր)՝ մինիստրների տիտղոս մահմեդական բազմաթիվ պետություններում:

Վեներա (Աֆրոդիտե)՝ անտիկ դիցաբանության մեջ գեղեցկության, սիրո և պաշարերության դիցուհին, Յուպիտերի (Զևսի) դուստրը:

Վեսպասիանոս Տիտոս Ֆլավիոս (9—79)՝ Հռոմի կայսր (69—79), Ֆլավիոսների դինաստիայի հիմնադիրը, Տիտոս կայսեր հայրը: Կլավդիոս և Ներոն կայսրերի օրոք գրավել է հրամանատարական բարձր պաշտոններ:

Վինկելման Յոհան Իոհան (1717—1768)՝ անտիկ արվեստի գերմանացի պատմաբան: Իտալիայում եղել է Պոմպեյի և Հերկուլանումի պեղումների ականատեսը: Իր տպավորությունները նկարագրել է «Հերկուլանումում կատարված հայտնագործությունների մասին նամակներ»-ում: Վինկելմանի հիմնական աշխատությունը «Հնության արվեստի պատմություն» երկն է:

Վիտելիոս (15—69)՝ Հռոմի կայս (69): Ներոնի օրոք եղել է զորահրամանատար Աֆրիկայում և Գերմանիայում: Ներոնի մահից հետո զինվորները նրան կայսր են հռչակել, նա գրավել է Հռոմը, բայց եգիպտական և ասորական զորքերը կայսր են հռչակել Վեսպասիանոսին, որի դիմ մղված պայքարում Վիտելիոսը զոհվել է:

Վուլլի Չարլզ Լեոնարդ (1880—1960)՝ անգլիացի հնագետ, Եփրատի ափին, Ամառնայում, Ուրում, Թուրքիայում կատարված բազմաթիվ պեղումների մասնակից:

Տակիտոս Պորլիոս Կոռնելիոս (մոտ 55—120)՝ վաղ կայսրության շրջանի հռոմեացի լոռոյագույն պատմագիր և պետական գործիչ:

Տիտոս Ֆլավիոս Վեսպասիանոս (39—81)՝ Հռոմի կայսր (79—81)՝ Ֆլավիոսների դինաստիայից: Հուդայական պատերազմում (66—73) եղել է հռոմեական զորքերի հրամանատարը, 70 թ. ավերել է Երուսաղեմը:

Տիրիբոս՝ հին հունական քաղաք Արգոլիսյան ծոցի արևելյան ափին, Միքենեի մոտ: Միքենյան մշակույթի կենտրոններից:

Տլասիլալա՝ Մեքսիկայի նահանգներից, սրը գտնվում է Մեքսիկական ծոցի հարավարևելքում:

Տոտունակներ՝ Մեքսիկայի հիմնական ժողովուրդներից, Մ. թ. 15-րդ դ. նվաճվել են ացուակների կողմից, տուրք են վճարել նրանց:

Տրիբեմա՝ եռաշարք թիերով նավ:

Տրոյա (Իլիոն)՝ հին քաղաք Փոքր Ասիայում, Դարդանելի նեղուցի մոտ:

Տրոյական պատերազմ՝ մ. թ. ա. 13—12 դդ. Տրոյայի դիմ հույների մղած պատերազմը: Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմները Տրոյական պատերազմի մասին պատմող առաջին աղբյուրներն են: Համաձայն առասպելի, պատերազմի առիթը եղել է

Տրոյայի թագավոր Պրիամոսի որդի Պարիսի կողմից գեղեցկուհի Հեղինեի՝ Սպարտայի թագավոր Մենելայոսի կնոջ առևանգումը:

Ուրուկագինա՝ Հին Միջագետքի շումերական լագաշ քաղաքի կառավարիչ, իսկ ավիլի ուշ՝ թագավոր (մ. թ. ա. 24-րդ դ.):

Փիբրդիլի՝ Լոնդոնի կենտրոնական փողոցներից:

Փյունիկիա՝ հին երկիր, որը գտնվել է ժամանակակից Սիրիայի և Լիբանանի տարածքում:

Քալաֆ՝ քաղաք Ասորիստանում, Տիգրիսի ձախ ափին, հիմնադրել է Սալմանասար I-ը մ. թ. ա. 13-րդ դ. կեսին:

Քաղաքացիներ՝ սեմական ցեղ, որը մ. թ. ա. II հազ. վերջում եկել է, հավանաբար, Արարիայից ու բնակութուն հաստատել Պարսից ծոցի առափնյա ճահճոտ վայրում:

Քեոփս (Քուփոս)՝ Եգիպտոսի փարավոն (մ. թ. ա. III հազ. սկիզբ): Հայտնի է վիթխարի բուրգով, որ կառուցել է ներկայիս Գիզա գյուղի մոտ, Կահիրեից ոչ հեռու: Բուրգի բարձրությունը 146,5 մ. է: Քեոփսի մահից շատ շանցած բուրգը կոչուպովել է, իսկ նրա մոմիան՝ ոչնչացվել:

Քեփրեն (Քեփրա)՝ Եգիպտոսի փարավոն (մ. թ. ա. III հազ. սկիզբ), Քեոփսի հաջորդը: Քեոփսի բուրգի կողքին իր համար նույնպես բուրգ է կառուցել 138,5 մ. բարձրությամբ: Բուրգի մոտ գտնվում է առյուծի մարմնով և մարդու գլխով մի վիթխարի ժայռակերտ սֆինքս:

Քսենոփոն (մ. թ. ա. մոտ 430—355)՝ հույն գրող, Սոկրատեսի աշակերտը: Քսենոփոնի աշխատությունները պատմական արժեքավոր աղբյուրներ են:

Քսերքսես I՝ մ. թ. ա. 5-րդ դ. պարսից թագավոր, Գարհհ I թագավորի որդին: 482 թ. ավերել է Բաբելոնը: Պարտություն է կրել հունա-պարսկական պատերազմում և սլալատական դավադրության հետևանքով սպանվել:

Օգոստոս Գայոս Օկտավիոս՝ Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանոս (մ. թ. ա. 63—մ. թ. 14)՝ Հռոմի կայսր (մ. թ. ա. 27—մ. թ. 14), Հին Հռոմի պետական իռոչորագույն գործիչներից մեկի՝ Հուլիոս Կեսարի (մ. թ. ա. 100—44) ծոռնակից ազգականը: Մ. թ. ա. 30 թ. Եգիպտոսը վերածել է հռոմեական պրովինցիայի և դարձել անսահմանափակ դիկտատոր Օգոստոս (մեծ, սրբազան) տիտղոսով: Նրա իշխանության հինարանը բանակն էր Օգոստոսի կառավարումը համընկել է հռոմեական գրականության, արվեստի ծաղկման հետ (սուկիդար)՝ Վիրգիլիոսի, Հորացիոսի, Օվիդիոսի ստեղծագործությունը):

Օրոն Մարկոս Սալվիոս (32—69)՝ Հռոմի կայսր (69): Ներոնի մահից հետո պրետորականները կայսր են հռչակել Օթոնին, բայց գահի մյուս հավակնորդ Վիտելիոսի դեմ մղված պայքարում նա պարտություն է կրել և ինքնասպան հղիլ:

Օմբոս (ժամ. Կոմ Օմբո, ԱՄՀ)՝ գյուղ Ասուանից 30 կմ հեռավորության վրա:

Օրեստես՝ Ագամեմնոնի և Կլիտեմնեստրայի որդին:

Օրբոմենոս՝ քաղաք Միջին Հունաստանի Թեովտիայի պատմական մարզում: Օրբոմենոսում և Թեբեում մ. թ. ա. III և II հազարամյակներում առաջացել են Թեովտիայում պետական առաջին կենտրոնները:

Օսիրիս (Օզիրիս)՝ մեռնող և հարություն առնող բնության եգիպտական աստված, ստորգետնյա աշխարհի տիրակալը:

Օսկեր՝ Հարավային Իտալիայի և Միջին Իտալիայի մի մասի հին իտալիկյան ցեղերի ընդհանուր անվանումը, որոնք հայտնի են մ. թ. ա. II հազ. վերջից:

Ֆելլան՝ նստակյաց գյուղացի երկրագործ:

Ֆորում՝ ժողովրդական ժողովների համար նախատեսված հրապարակ:

Ֆրանցիսկ I (1494—1547)՝ Ֆրանսիայի թագավոր (1515—47), Վալուանների դինաստիայից: Կարլոս V-ի դեմ պատերազմներ է մղել Եվրոպայում գերիշխանութուն հաստատելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԳԵՏՔԻ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄԵՋ

Նեապոլցի ուխտավորը	7
Սեպագիրն սկսում է խոսել	11
Մենավոր ժայռի արձանադրությունը	14
«Հազար ու մեկ գիշեր»-ի երկրում	22
Բռնակալի քմահաճույքը: Հեղափոխությունը և սեղումները	28
Լեյարդը հայտնաբերում է կործանված նինվեն	35
Շումերները ներխուժում են պատմության մեջ	38
Ուր մի ժամանակ խշշացել են արմավենիների պուրակները	44
Լաշվարդից և ոսկուց կերտված երկնաթիռ՝ տաճարը	48
Թաքնված գանձերն ու մոխրակույտերը	51
Ամենահին դյուցադնավեպը	54
Ջրհեղեղի հետքերով	60
Թե ինչպես մի արձանադրություն օղնեց քացահայտելու թագավորի դադունիքը	64
«Բարեբեր երկրի հերոսը» և փոքրիկ արքայադուստրը	69
Թագավորները միայնակ չեն մեռել	72
Տաղվահարուհիները, եղերամայրերը և թաղումից ուշացած սպասուհին	77
Աստվածային կալվածքների վարձակալները	82

ՓՄԱՎՈՆՆԵՐԻ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Քար, որ թանկ էր ադամանդից	93
Շամպոլյոնը հիերոգլիֆների վերծանող	98
Արքաների հովիտը, սրբազան ցուլերը և սֆինքսները	106
Բուրգերի գաղտնիքները	114
Փարավոնների հետմահու հողսերը	121
Խոռվարար փարավոնը և վրիժառու քրմերը	129
Թութանհամոնի դամբարանի հայտնաբերումը	149

ԷԳԵՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԲՆՈՐՐԱՆՈՒՄ

Պատանհկության երազանքներին հավատարիմ մնացած մարդը	161
Պրիամոսի ամրոցը	189
Ադամեմնոնի ոսկե դիմապատկերը	177
Մինոտավրոսի լաբիրինթոսում	187
Պատմության հայտնադորձած մայրցամաքները	201

ՊՈՄՊԵՅ ԵՎ ՀԵՐԿՈՒԼԱՆՈՒՄ

<i>Ողջ-ողջ թաղված քաղաքներ</i>	213
<i>Մարմարե սյուների հովանու տակ</i>	225
<i>Ինչպես աշխատելիս կանդեսցրած ժամացույց</i>	236

ՄԵԾ ՕՁԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

<i>Թե ինչպես կորտեսը նվաճեց ացտեկների երկիրը</i>	245
<i>Մարդկային սրտեր լափողների վախճանը</i>	266
<i>Կույր գիտնականը հայտնագործում է կործանված քաղաքակրթությունը</i>		
<i>Սպասելով աշխարհի կործանմանը</i>	283
<i>Ջունգլիների կանաչ ծովում խորտակված նավը</i>	290
<i>Մեծ օձի թագավորությունում</i>	297
<i>Նշանդրեք անձրևի աստծո հետ</i>	305
<i>Նոր աշխարհի Պոմպեյը</i>	310
<i>«Ոսկեզօծ մարդու» գանձը</i>	316
<i>Հաղար դադունիքների երկրում</i>	321
<i>Ծանոթագորություններ</i>	326

ՋԵՆՈՆ ԿՈՍԻԴՈՎՍԿԻ

ԵՐԲ ԱՐԵՎԸ ԱՍՏՎԱԾ ԷՐ

Գիտագեղարվեստական ակնարկներ

Գլխորդական միջին և բարձր տարիքի համար

ЗЕНОН КОСИДОВСКИЙ

КОГДА СОЛНЦЕ БЫЛО БОГОМ

Научно-художественные очерки

Для среднего и старшего школьного возраста

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1987

Խմբագիր՝ Ջ. Մ. Ղազարյան

Նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Բ. Խաճակյան

Տեխ. խմբագիր՝ Ն. Պ. Սաֆյան

Վերստուգող սրբագրիչ՝ Է. Ա. Սեդրակյան

ИБ № 101

**Հանձնված է շարվածքի 21. 07. 1987 թ.։ Ստորագրված է տպագրության 17. 12. 1987 թ.։
Տորմատ 60×90¹/₁₆։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրու-
թյուն՝ բարձր, պայմ. տպ. 21,5 մամ., հրատ. 22,27 մամ., 4 ներդիր։ Տպաքանակ՝ 40.000։
Պատվեր՝ 2125։ Գինը՝ 1 ս. 20 կոպ.։**

«Արևիկ» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

**ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական
կառնիստի Հակոբ Մեղակարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։**

**Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств,
полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.**

